This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԿՐՏՍԵՐՈՅՆ ԱՆԱՔԱՐՍԵԱՅ

ՅԵԼԼԱԴԱ

ՀԱՏՈՐ Գ.

GRAD
EDEN
3166
Bul
V

GRAD
EREN
166
11 01 43
v.3

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ
ԿՐՏՍԵՐՈՅՆ ԱՆԱՔԱՐՍԵԱՅ
ՅԵԼԼԱԴԱ

ԳՐԵԱԼ ԴԻՄԱՌՆՈՒԹԵԱՄԲ

Ի Յ. Յ. ՊԱՐԹԷԼԷՄԻԱՅ

ԵՒ ԹԱՐԳՄԱՆԵԱԼ

Ի Հ. ԵՂՈՒԱՐԴԱՅ Վ. ՀԻՒՐՄԻՒԶԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

— 3 —   5450.

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ
1844. ՌՄՂԳ

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

[redacted]

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԿՐՏՍԵՐՈՅՆ ԱՆԱՔԱՐՍԵԱՅ

ՅԵԼԼԱԴԻԱ

ԳԼՈՒԽ ԻԹ

Վասն մատենադարանին աթենացւոյ ուրումն, և իմաստասիրական մատենից :

ՅԱՌԱՋ քան զամս իբր երկերիւր Պիսիստրատայ կառուցեալ էր մատենադարան աշխարհամուտ, զոր ապա Քսերքսէս բարձեալ տարաւ զայն ՚ի Պարսս [1] : Իսկ յաւուրս իմ բազումք յաթենացւոց ժողովեցին մատեանս, այլ փարթամագոյն քան զամենեցուն Եւկղիդեայն էր ժողով մատենից [2], զորս առ ՚ի հարցն էր ժառանգեալ. և արժանի իսկ էր ժառանգութեանն, քանզի գիտէր զյարգ նորա :

[1] Աւլ. Գել. գիրք Զ. գլ. 17.

[2] Աթեն. գիրք Ա. գլ. 2. էջ 3:

Ի մտանելն անդր ապշութիւն ընդ բերկրութեան կալաւ զիս. զի կայի 'ի մէջ գերահանճար արանցն Յունաց, յաւէժ կենդանեացն 'ի գիրս իւրեանց՝ որ շուրջ զինև զետեղեալ կային: Լռութիւն նոցա յաճախէր յիս զմեծարանս, որպէս առաջի Թագաւորաց ամենեցուն երկրի 'ի մի վայր ժողովելոց՝ ոչ այնպէս պատկառէի: Սուղ ինչ զկայ առեալ, ասեմ. Ոչա՜ղ, 'ի քանի՜ք դիտութեանց վերջացեալ գտանին Սկիւթք: Այլ ապա յաճախ եւս հարկ եղև ինձ ասել, թէ քանի՜ք դիտութիւնք են անօգուտք մարդկան:

Սէ զամենայն նիւթոց, յորս գրէին մատեանք, ճառեմ առանձնաւոր. մաշկ այծենի կամ կաշի խոյոյ 'ի սկզբանն[1], և ապա ազգ ազգ կտաւոց 'ի կիր արկանն[2]. և յետ այնորիկ յաճախեաց թուղթ պղտուեայ, որ են կեղևք ներքինք եղեգնաձև բուսոյ՝ որ աճէ յաղտիւրս Եգիպտոսի, կամ 'ի ճահիճս թողեալս յողողմանէ Նեղոսի: Տոմս զալարածոյ յօրինեալ յայնմանէ, կախեն պիտակ 'ի ծայրին՝ դրոշմեալ 'ի նմա զանուն մատենին: Ի մի եւեթ զէմն պրտուոյն գրեն, բաժանեալ զայն առ հեշտի ընթեռնլեաց յէջս կամ 'ի գաւազանս*:

1 Երոդոտ. գիրք Է. գլ. 58:

2 Պլին. գիրք ԺԳ. գլ. 11. հտ. 1. էջ 689: Քէյլիւս, հաւաք. հնութեանց, հտ. Ե. էջ 76:

* Որպէս է տեսանել 'ի ձեռագիր մատեանսն որ կան 'ի 'ի Հերկուլանոն:

Օրինակողք արուեստի՝ պարապեն համապազ 'ի գաղափարել զգիրս, որ անկանին 'ի ձեռս նոցա. և այլք դարձեալ առ 'ի վարժս հմտութեան վաստակեն 'ի նոյն։ Դեմոսթենեայ, որպէս ինքն իսկ ասէր զիս, ութիցս զվէպսն Թուկիդիդեայ գաղափարեալ էր՝ առ 'ի կրթել 'ի տիպս կերպարանաց բանից մատենագրին[2]։ Նոյնպէս բազմանման օրինակք, այլ վասն ծախուցն* քանզի ձեռագիրք են՝ ոչ երբէք յաճախեն 'ի ձեռս ամենեցուն, նմին իրի և յամր ծաւալին գիտութիւնք։ Մատեանք տարաշխարհիկք, և որք զդժուարահասանելեաց ճառեն գիտութեանց՝ դժուարագիւտք են։ Պղատոնի, թէպէտ և ծանօթք բազումք էին նորա յԻտալիա, հազիւ զգիրս ինչ իմաստասիրականս եղև 'ի ձեռս բերել, ընդ երից հատորոց ճառից Փիլողայոսի հատուցեալ հարիւր մնաս[3]։

Գրավաճառաց աթենացւոց ոչ զնոյն հոգս մարթ էր յանձին բերել, և ոչ ձեռն նոցա բաւական էր 'ի ծախսն։ Սովորութիւն էր նոցա հաւաքել զգիրս ևեթ զբօսանաց, յորոց և 'ի գաւառս մերձաւորս յղէին, է զի և առ գաղթականս Յոյնս բնակեալս առ ծովեզերբք Սկիւթեանն Պոնտո-

1 Պոլիտեկ. գիրք Է. գլ. 33. յօդ. 211։

2 Ղուկիան. ընդդէմ տգիտ. յօդ. 4. հտ. 3. էջ 102։

* Ի մեռանել Սպեւսիպպեայ աշակերտին Պղատոնի, Արիստոտէլ տուեալ զգիրս նորա՝ որ սակաւ ինչ էին թըւով, երից քանքարաց։ (Դիոգ. Լայերտ. գիրք Խ. յօդ. 80. Աւլ. Գել. գիրք Գ. գլ. 17։)

3 Դիոգ. Լայերտ. յԱրքիտ. գիրք Ը. յօդ. 85։ Աւլ. Գել. գիրք Գ. գլ. 17։

տի[1] ։ Եւրին մատենագրութեան յաճախեաց զշահաւետութիւն վաճառականութեան մատենից , և կրթեցան Յոյնք յամենայն ազգի ազգի տեսակս բանասիրութեան . որպէս 'ի միտ առնուլ է 'ի տեղեկութեանցն , զոր զմատենադարանէն Եւկղիդեայ տայ ։

Սկիզբն յիմաստասիրականացն առնեմ մատենից ։ Հնագոյնք 'ի նոսա էին յաւուրց Սողոնի , որ յառաջ քան զամս իբր երկերիւր և յիսուն պայծառանայր ։ Հելլենաց 'ի սկզբանն էին դիցաբանք , և իմաստասէրք առ նոսա ոչ էին . քանզի քերթողաց զհետազօտութիւն էիցս անտես արարեալ , զառասպելս և զնանրահաւատ կրօնս տիրապետեալս ռամկին հաւաքեալ 'ի տաղս իւրեանց պանծացուցանէին ։ Եւս յաւուրս օրէնսդրիս և 'ի ժամանակս յիսներորդի ողոմպիադին* յանկարծակի իմն կերպարանափոխ եղէն միտք . Թաղէս և Պիւթագոր արկին զհիմունս իմաստասիրութեան իւրեանց . Կադմոս միլետացի գրեաց արձակ բանիւ զպատմութիւն . Թեսպիս զառաջին կերպարանն ետ ողբերգութեան , և Սոսարիոն զկատակերգութեան ։

Թաղէս միլետացի 'ի Յոնիոյ , մի յեօթանեցունց իմաստնոցն Ելլադայ , ծնաւ յառաջնումն ամի երեսներորդի հինգերորդի ողոմպիադին[2] ** ։

1 Քսենոփ . արշաւ . Կիւր . գիրք Է . էջ 412 ։

* Իբր 580 ամօք Ն . Ք . ։

2 Ապողոդ . առ Դիոգինեայ լայերտ . գիրք Ա . յօդ . 38 ։ Քորսինի տարեգր . ատտիկ . հտ . 3 . էջ 56 ։

** Իբր 640 ամօք Ն . Ք . ։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Ելից նախ փառօք զպարտս պաշտամանցն, յորս աղնուականութիւն և իմաստութիւն ածէին զնա. և ապա Հարկ վարժից ստիպեաց զնա ուղևորել ընդ ազգս օտարս։ Եւ 'ի դառնալն իւրում տուեալ զանձն բոլորովին 'ի խուզարկութիւն բնութեան, Հիացոյց զԵլլադաս՝ գուշակելով զնուաղումն արեգական[1], և կրթեաց զնա յերկրաչափական և յաստեղաբաշխական մակացութիւնս՝ զորս ուսեալն էր յԵգիպտոս[2]։ Եկեաց նա ազատ, վայելեաց խաղաղութեամբ 'ի Համբաւ իւր, և գոՀութեամբ զրաւեաց զկեանս*։ Սա 'ի մանկութեան ստիպեալ 'ի մօրէ իւրմէ ամուսնանալ, և ապա յետ բազում ամաց դարձեալ 'ի նոյն յորդորեալ, զառաջինն պատճառեցաւ՝ թէ չև ևս Հասեալ էր ժամ նորա, և ապա՝ զի տարաժամ էր[3]։

Սորա բազում պատասխանիք պատմին, զորս չկամիմ անյիշատակ առնել. զի զկերպարանս իմաստասիրութեան նորա յանդիման առնեն, և ցուցանեն՝ թէ իմաստունք ժամանակին քանի ճշգրտիւ կշռէին Հարցուածոց զպատասխանիս։

Օ ի՞նչ գեղեցկագոյն. — Տիեզերքս աստուածագործք։ — Օ ի՞նչ յարձակագոյն. — Միտն բովանդակիչ ամենայնի։ — Օ ի՞նչ Հզօրագոյն.

1 Երոդոտ. գիրք Ա. գլ. 74։ Կիկեր. յղ. ըղձ. գիրք Ա. գլ. 49. Հտ. 3. էջ 41։ Պլին. գիրք Բ. գլ. 12. Հտ. 1. էջ 78։

2 Դիոգ. Լայերտ. գիրք Ա. յօդ. 14 և 27։ Պայլեի պատմ. աստեղաբաշխ. նախնեաց էջ 196 և 489։

* Իբր 548 ամօք Ն. Ք.։

3 Դիոգ. Լայերտ. գիրք Ա. յօդ. 26։

— Հարկին ամենայաղթ ։ — Ո՞ր ինչ դժուարա-գոյն. — Ճանաչել զանձն ։ — Ո՞ր ինչ դիւրագոյն. — Խրատել զայլս ։ — Ո՞ր ինչ դժուարադէպ. — Բռնաւոր հասեալ ՚ի ծերութիւն ։ — Ո՞ր ինչ խը-տիր ընդ կեանս և ընդ մահ. — Եւ ոչ ինչ ։ — Ընդէ՞ր ապա չմեռանիս. — Զի նոյն է կեալ և մեռանել ։ — Ո՞ր ինչ ՚ի թշուառութեան սփո-փումն. — Թշնամի թշուառագոյն ։ — Ո՞ր ինչ առ-անաստգիւտ կեանս կարեւոր. — Չառնել զոր յայլս ոք պարսաւիցէ ։ — Ո՞ր ինչ առ երանելի կեանս պէտք. — Մարմին առողջ, գոյք ՚ի լիութիւն բա-ւականի, միտք հրահանգեալ՝, այլովքն հանդերձ ։

Չիք ինչ բազմահռչակ քան զանուն Պիւթա-գորի, և չիք ինչ անծանօթ քան զհանգամանս կենաց նորա [1] ։ Եղեւ աշակերտեալ նորա ՚ի ման-կութեան առ ոտս Թաղեսի և Փերեկիդեայ սկիւ-ռացւոյ, և ապա կացեալ նորա ընդ երկար յԵգիպ-տոս, և ընդ վերնագաւառս Ասիոյ ուղևորեալ, կամ տեղեկացեալ որոց անդ գիտութիւնքն բար-գաւաճէին ։ Խորհուրդք կրօնիցն եգիպտացւոց խորինք, և երկար և ձիգ մտածութիւնք իմաստ-նոցն արևելեայց յիւրեանս ձգեցին զեռանդուն միտս նորա, և զանյեղլի բարս նորա խստակրօ-նութիւն՝ զոր յոլովագոյնք ՚ի նոցանէ յանձին բե-րէին ։

1 Դիոգ. Լայերտ. գիրք Ա. յօդ. 35, 36 եւն ։

2 Նոյն անդ. գիրք Ը. յօդ. 1 ։ Փաբրիկ. մատեն. յուն. հտ. 1. էջ 455 ։ Պրուք. պատմ. ի-մաստս. հտ. 1. էջ 994 ։

Ի դառնալն իւրում եգիտ զհայրենիսն իւր նուաճեալ 'ի Պոլիկրատայ բռնաւորէ[1]. և տարապադէմ խոյս տուեալ 'ի ծառայութենէ, բնակեցաւ 'ի Կրոտոն յԻտալիա: Եւ էր յայնժամ Կրոտոն քաղաք աւաղելի. քանզի բնակիչք նորա ընկճեալք 'ի Լոկրեցւոց՝ վերջացեալ էին 'ի սպառ յիմաստից քաջութեան, և ոչ այլ ինչ Թշուառութեան իւրեանց գտեալ սփոփանս՝ զառածանէին 'ի զեղխութիւն: Ձեռն էարկ Պիւթագոր 'ի կանգնել զկործանս նոցա, դարձուցանելով յառաջին առաքինութիւնսն: Աղաւտք նորա և օրինակք այնպէս վաղվաղեցին զնորոգումն ուղղութեան ազգին, մինչև կանանց կրօտոնացւոց յորդորեալ 'ի ճարտարխօսութենէ նորա՝ նուիրել 'ի մի 'ի մեհենից զմեծագին զարդս իւրեանց, որովք պճնէինն[2]:

Եւ ոչ շատացեալ յաղթանակաւն այնուիկ, խորհեցաւ մշտնջենաւորել զայն, վարժելով ըզմանկտին յիմաստս՝ որ զյաղթանակն զայն ետուն կանգնել նմա: Մտաւ ածեալ զի չիք ինչ հզօրագոյն զօրավիգն պետութեան քան զուղղութիւն բարուց, և իւրաքանչիւր ումեք՝ քան զհրաժեշտ 'ի խնդրելոյ զիւրն, երկնեաց կարգս ինչ կրթութեան, որով հոգւի 'ի զգայութեանցն ծառայութենէ ազատացեալ՝ յարդարի ընդունակ ճշմարտութեան. և վասն այն զհռչակաւոր աղանդն սահմանեաց, որ մինչև 'ի ժամանակս յայ-

[1] Ստրաբ. գիրք ԺԴ. էջ 638: Դիոգ. լայերտ. գիրք Ը. յօդ. 3:

[2] Յուստին. գիրք Ի. գլ. 4:

տածիկ տեւէ՝ փառաւորեալ 'ի մէջ աղանդոց իմաստասիրաց [1], զորմէ յետոյ լիցին մեզ բանք *:

Մերձ 'ի վախճան կենաց իւրոց յալեւորեալ ծերութեան՝ վիշտ եղեւ նմա տեսանել զվաստակս իւր եղծեալ գրեթէ 'ի սպառ 'ի նախանձուէ գլխաւորաց կրօտոնացւոց: Նա ստիպեալ 'ի փախուստ՝ շրջեցաւ քաղաք 'ի քաղաքէ [2], մինչեւ մահուն զրաւ արարեալ թշուառութեանց նորա՝ լռեցոյց զնախանձ, եւ հաստոյց անուան նորա զփառս՝ զոր յիշատակ հալածանաց նորա տարապայման յաճախեաց:

Յոնիականն վարժարան սկիզբն 'ի Թաղեսէ էառ, իտալականն 'ի Պիւթագորայ. յերկուց սոցա եւ այլք կազմեցան, եւ արք մեծամեծք յամենեսին կացին: Զորոց հաւաքեալ Եւկղիդեայ զգրուածսն, բաշխեալ էր յայլ եւ այլ աղանդս իմաստասիրութեան:

Զհետ ճառից ինչ Թաղեսի, որ թերեւս չիցեն իսկ նորա [3], զետեղեալ կային մատեանք այնոցիկ՝ որոց զվարդապետութիւն նորա աւանդեալ էր միմեանց, յաջորդելով յառաջնորդութիւն վարժարանին: Արք էին Անաքսիմանդր [4], Անաքսիմենէս [5], Անաքսագոր՝ որ նախ զիմաստասիրու-

1 Պղատ. յղ. հատ. գիրք Ժ. հտ. 2. էջ 600:

* Ի գլուխն ՀԵ:

2 Պորփիւր յղ. վարուց Պիւթագոր. էջ 31:

3 Պլուտ. յղ. պատմ. հտ. 2. էջ 403: Դիոգ. Լայերտ. գիրք Ա. յօդ. 23:

4 Դիոգ. Լայերտ. գիրք Բ. յօդ. 2: Սուիդ. 'ի բառն Ἀναξίμ.

5 Փաբրիկ. մատեն. յուն. հտ. 1. էջ 814:

թիւն ուսոյց յԱթէնս [1], և Արքեղայոս վարժապետ Սոկրատայ [2]: Ողջմտութեան աշխարհի, զգօնութեան էից, զերկրաչափութեան և զաստեղաբաշխութեան ճառեն մատեանք նոցա:

Այլ զհետ գայլոց ճառք զրեթէ առ հասարակ բարոյականք. քանզի Սոկրատ և աշակերտք նորա առաւել 'ի տեսութիւն բնութեան մարդոյ քան տիեզերաց պարապեցին: Սոկրատայ չիք այլ ինչ գրուած, բայց միայն առ Ապողոն երգեալ օրհնութիւնն, և առակք ինչ Եզովպոսի տաղաչափեալք 'ի նմանէ 'ի բանտին [3]: Պատի առ Եւկղիդեայ զերկասէին զայսոսիկ գրուածս նորա, և որ ինչ յաշակերտաց նորին երկասիրեալ ճառք. որ զրեթէ առ հասարակ զխօսակցութեան պայմանաւ յօրինեալ են, և Սոկրատ 'ի նոսա նախաբարբառ. զի առ 'ի բովանդակել զվարդապետութիւնս նորա գրեցան ճառքն: Տեսի զգրուցատրութիւնս Պղատոնի, և զերեցագոյնս քան զնոսա զԱղէքսամենեայ [4], զՔսենոփոնի, զԵսքինեայ [5], զԿրիտոնի [6], զՍիմոնի [7], զԳլաւկոնի [8], զՍիմմիա-

1 Արիստոտ. յղ. հոգւոյ գիրք Ա. գլ. 2. հտ. 1. էջ 620: Կղ. աղեքս. յաճախապատ. գիրք Ա. էջ 352:

2 Դիոգ. լայերտ. գիրք Ա. յօդ. 16:

3 Պղուտ. յղ. զօրութեան Աղեքս. հտ. 2. էջ 328: Կիկեր. յղ. ճարտ. գիրք Դ. գլ. 16. հտ. 1. էջ 294: Պղատ. 'ի Փեդոն. հտ. 1. էջ 60: Դիոգ. լայերտ. գիրք Բ. յօդ. 42:

4 Արիստոտ. առ Աթենէոսի գիրք ԺԱ. գլ. 15. էջ 505:

5 Դիոգ. լայերտ. գիրք Բ. յօդ. 61: Աթեն. գիրք ԺԳ. էջ 611:

6 Դիոգ. լայերտ. անդ. յօդ. 121:

7 Նոյն անդ յօդ. 122:

8 Նոյն անդ յօդ. 124:

տայ [1], զԿեբեայ [2], զՓեդոնի [3], և զԵւկղիդեայ [4] որ 'ի Մեգարա զվարժարանն կանգնեաց, ուր արդ Եւբուղիդէս աշակերտ նորա վարժապետէ ։

Յիտալական վարժարանին բազմագոյնք յոյժ կացին մատենագիրք քան 'ի յոնիականին [5]. զի բաց 'ի ճառից ինչ, որ համարին Պիւթագորայ՝ այլ ոչ հաւաստեաւ [6], էին յԵւկղիդեայ մատենագրութիւնք գրեթէ ամենայն մատեանք իմաստասիրաց՝ որք հետևողք եղեն աղանդոյ նորա, կամ փոփոխմունս ինչ արարին 'ի նմա ։

Որպիսի ոք Եմպեդոկղէսն էր ակրագանդացի, որում բնակիչք մեծի այնր քաղաքին մատուցին զԹագ, իսկ նա լաւագոյն համարեցաւ հաւասարութիւն 'ի նոսա հաստատել [7] ։ Ի ի ճառակեալ հանճարոյ՝ որ զնա մերձ Հոմերի կացուցանէր, գեղով բանաստեղծութեան պճնեաց զկարի իսկ իմանալի ճառս . և այնքան հռչակեալ, մինչև յողիմպիական խաղս զՅունաց ամենեցուն յինքն ձգել զաչս [8] ։ Ասէր նա ցակրագանդացիս, թէ դուք յօրանայք 'ի զրգանս՝ ոպ թէ առ վաղիւ մեռանելոց իցէք, և շինէք ապարանս՝ իբր թէ անմահք իցէք [9] ։

1 Դիոգ. Լայերտ. գիրք Բ. յօդ. 124 ։

2 Նոյն անդ յօդ. 125 ։

3 Նոյն անդ յօդ. 105 ։

4 Նոյն անդ յօդ. 108 ։

5 Յամբղիք. վարք Պիւթագոր. էջ 215 ։

6 Հերակղ. առ Դիոգինեայ Լայերտ. գիրք Ը. յօդ. 6 ։ Պլուտ. յղ. զօրութեան Աղեքս. հատ. 1. էջ 729 ։ Փաբրիկ. հատ. 2. էջ 328 ։ Ղուկիան. մատեն. յուն. հատ. 1. էջ 460 ։

7 Դիոգ. Լայերտ. գիրք Ը. յօդ. 72 ։ Արիստոտ. առ նմին յօդ. 63 ։

8 Դիոգ. Լայերտ. անդ յօդ. 66 ։

9 Նոյն անդ յօդ. 63 ։

Որպիսի ոք և Եպիքարմոսն էր, այր հանճարեղ համագոյն յոլովագունիցն 'ի սիկեղացւոց[1], ընդ որ Հիերոն արքայ ծանրացաւմն եղև վասն տրգեղ ինչ բանից առաջի թագուհւոյն խօսելոյ[2], և որ 'ի թշնամութիւն իւր զայլ իմաստասէրս ձգեաց՝ նշաւակելով զգաղտնիս ազանդոց նոցա 'ի կատակերգութիւնս իւր[3]։ Որպիսի ոք Ոկեղոսն էր ղուկանացի և Տիմէոս լոկրեցի, մատենագիրք ոչ յոյժ նշանաւորք՝ այլ ներհունք և համառօտախօսք քան զառաջինսն։ Որպիսի ոք Արքիտամն էր տարենտացի, հռչակաւորն մեքենականին կարեւոր հնարագիտութեամբ[4]. որպիսի ոք Փիլողայոսն էր կրոտոնացի, մի յառաջնոցն 'ի Յոյնս՝ որք համարեցան զերկիր հոլովական զտիեզերօք[5]. որպիսի ոք Եւդոքսն էր, զոր բազում անգամ տեսի առ Պղատոնի, և էր նա երկրաչափ և աստեղաբաշխ և բժիշկ և օրէնսդիր միանգամայն[6]։ Թող զԵկփանտոս և զԱլկմէոն և զՀիպպասոս և զհոյլս նախնեաց և արդեաց, որ անմիշոյլք կեցեալ յետ մահուն իւրեանց պայծառացան։

Առ միում 'ի դարանաց անտի զկայ առի, զի էր 'ի նմա կարգ իմաստասիրական մատենից գրելոց 'ի կանանց, որ բազմագոյնք 'ի նոցանէ զՊիւ-

1 Կիկեր. տուսկուլ. գիրք Ա. գլ. 8. հտ. 2. էջ 238։ Նոյն յղ. քաղ ճառա. գլ. 12. հտ. 1. էջ 345։

2 Պղուտ. առակ. հտ. 2. էջ 175։

3 Յամբլիք. վարք Պիւթագոր. գլ. 36. էջ 215։

4 Դիոգ. լայերտ. գիրք Ը. յօդ. 83։

5 Նոյն անդ յօդ. 85։

6 Նոյն անդ յօդ. 86։

թագորայ ունէին զաւանդն [1]։ Գտի անդ զճառս իմաստութեան Պերիկտիոնեայ [2], յորում ընդազանցութիւն լուսաւորագոյնս փայլէ. և որպէս վկայեցան ինձ Եւկղիդէս, մեծարէր զայն յոյժ Արիստոտէլ, և կարևոր համարէր առնուլ անտի տեղեկութիւնս զբնութենէ էից և զօրակութեանց նոցա [3]։

Եւ յաւել դարձեալ Եւկղիդէս, զի յիտալական վարժարանէն առաւելագոյն ծաւալեցաւ լոյս ընդ աշխարհ քան 'ի յոնիականէն, այլ սակայն ծայրայեղ զառածաւ 'ի մոլորութիւնս՝ յորոց պարտ էր ուսողի նորա զգոյշ կալ։ Զի երկոքին որք մեծամեծք աղանդապետք կացեալ, երկաքանչիւր զնկարագիր հանճարոյ իւրեանց դրոշմեցին յաղանդն իւրեանց։ Քանզի Թաղէս խորագնին էր մտօք, և եղեն նորա աշակերտք՝ որք պարզ տեսութեամբ խելամուտ եղեն բնութեան. և վեհձան արարին աղանդոյ նորա, կացեալ 'ի վարժարանէ նորա Անաքսագոր ողջմտագոյն յաստուածաբանութեան, և Սոկրատ ամբիծ 'ի բարոյականին։ Իսկ Պիւթագոր եռանդուն մտօքն զաստուածարելոց ոմանց հաստատեաց աղանդ, որք 'ի սկզբանմն ոչ այլ ինչ տեսին ընդ տիեզերս՝ բայց համեմատութիւնս և ներդաշնակութիւնս, և

1 Յամբլիք. վարք Պիւթագորայ էջ 218։ Փաբրիկ. մատենադ. յուն. հտ. 1. էջ 524։

2 Ստոբ. յղ. առաքինու. ճառ. 1։ Փոտ մատենադ. էջ 373։

3 Փրանկ. Պատրիկ. հակաճառ. ճեմակ. հտ. 2. գիրք Բ. էջ 197։ Անտ. Քոնթի բացատր. Պարմեն. էջ 20։

ապա կեղծեաց 'ի կեղծիս մնացածիցն անցեալ, զԵդեսականն կանոնեցին վարժարանն յԱստալիա, և զկարի իսկ իմաստալէն 'ի նմա բնազանցութիւն: Զի որք 'ի վարժարանէ աստի կացին իմաստասէրք, կրկին ազգք են նոցա. կիսոց որպէս Թէոփանեայ, Պարմենիդեայ, Մելիսեայ և Զենոնի բնազանցութեան պարապեալ, և այլոց որպէս Լեւկիպպեայ, Դեմոկրիտեայ, Պրոտագորայ, այլովքն հանդերձ, պարապեալ բնաբանութեան[1]:

Եդեսական վարժարանին առաջնորդ եկաց Թէոփանէս Կողոփոնացի 'ի Յոնիոյ[*]: Սա հալածեալ 'ի հայրենեացն, զոր տաղիւք պանծացուցեալն էր, չոգաւ բնակել 'ի Սիկիլիա. ուր երգովք տաղիցն ընդ փողոցս, որպէս սովորութիւն էր նախնի իմաստասիրաց[2], հայթայթէր զպարէնս ընտանեացն: Դարուէր և զխաղս բախտի. և յանդգնանել զնա ուրուք յայն սակս որպէս զերկչոտ և զկարճամիտ, ասէ. Ոչ գործ, ընդ որ մեծայ ինձ ամաչել, երկչոտ եմ քան զամենայն մարդիկ[3]:

Աշակերտ նորա Պարմենիդէս 'ի միջէ 'ի վաղեմի և 'ի փարթամագոյն ազգատոհմից եղեացւոցն էր[4]: Օրէնս այնպիսիս գերազանցս ետ նա հայրենեացն, զի դատաւորք ամի ամի երդմնի առնեն զամենայն այր քաղաքացի 'ի պահպանութիւն

1 Բրուք. պատմ. իմաստ. հտ. 1. էջ 1143:

* Ծնեալ իբր 556 ամօք Ն. Ք: (Բրուք. պատմ. իմաստ. էջ 1144:)

2 Դիոգ. լայերտ. գիրք Թ. յօդ. 18:

3 Պլուտ. յղ. անարժան ամօթ. հտ. 2. էջ 530:

4 Բրուք. անդ էջ 1157:

օրինացն այնոցիկ [1]։ Այս առա ձանձրացեալ 'ի պատուոյ և յիշխանութենէ, եւ զանձն բոլորովին յիմաստասիրութիւն, և կատարեաց զաւուրս իւր 'ի լռութեան և 'ի տեսութիւնս մտաց։ Յոլովագոյնք 'ի մատենից նորա չափաւ են գրեալ [2]։

Զենոն Եղէացի աշակերտ էր նորա և որդեգիր [3]. սա զբռնաւոր յազատ քաղաքի տեսանելով տիրացեալ, դաւ ընդ հաւանախոհս գործեաց նմա, և սպանաւ՝ ոչ յայտնելով զդաւակիցս իւր [4]։ Սա զժողովուրդն մեծարէր իբրև զանձն. և անտասանելի 'ի վտանգս գոլով, չհանդուրժէր զըրպարտութեան. քանզի ասէր, թէ անհնար է ինձ չզգալ չարախօսութեան՝ ցորչափ չիցեմ անզգայ բարեաց առացելոց զինէն [5]։

Եղեն յիմաստասիրաց, մանաւանդ յեղէական աղանդոյն, որք զյանձանձանս իւրաց պետութեան յանձն առին. որպէս Պարմենիդէս և Զենոն [6]։ Եղեն և այլք, որք զօրավար կացին. Մելիսոս առաջնորդ տարենաւացուոց զօրաց կացեալ, տարաւ բազում յաղթութիւնս [7]. և Արքիտաս, ա-

1 Պլուտ. ընդդէմ Կողոտ. հտ. 2. էջ 1126։ Սպեւսիպպ. առ. Դիոգինեայ Լայերտ. գիրք Թ. յօդ. 23։

2 Դիոգ. Լայերտ. գիրք Թ. յօդ. 22։

3 Նոյն անդ յօդ. 25։

4 Նոյն անդ յօդ. 26։ Կիկեր. տուսկուլ. գիրք Բ. գլ. 22. հտ. 2. էջ 294։ Վաղ. Մաքս. գիրք Գ. գլ. 3։

5 Դիոգ. Լայերտ. անդ յօդ. 29։

6 Նոյն 'ի Պարմ. և 'ի Զենոն։

7 Եղիան. զան. պատմ. գիրք Է. գլ. 14։ Արիստոքս. առ. Դիոգ. Լայերտ. գիրք Ը. յօդ. 82։

շակերտ Պարմենիդեայ, յաղթեաց աթենացւոց 'ի նաւամարտի [1] : Սոքրատէս, և որ համագոյն սոցին այլովքն՝ զորս լռեմ, չեն ինձ կամք ցուցանել՝ զի իմաստասիրութիւն կարիցէ յարդարել արս քաղաքավարս և զօրավարս քաջս, այլ զի արքա և նոքա կարող են պատրաստել յիմաստասիրութիւն: Լևկիպպոս, աշակերտ Զենոնի, խոտորեցաւ յօրինաց վարժապետին [2], և աշակերտեաց իւր զԴեմոկրիտոս աբդերացի 'ի Թրակիոյ: Դեմոկրիտոս ճոխ էր 'ի ծնողաց [3], այլ զմասն ինչ ևեթ 'ի հայրենի ընչիցն կալաւ իւր՝ առ 'ի շրջել համագոյն Պիւթագորայ առ ազգս՝ զորս Յոյնք առ խուժադուժս ունէին, այլ առ նոսա էին ուսմունք գիտութեանց: Ի դառնալ նորա յուղևորութենէ, մի յեղբարց նորա որ 'ի մասնէ ժառանգութեան նորա մեծացեալ էր, հայթայթեաց ըղպէտս նորա՝ որում կարևորն ևեթ այնուհետև պիտոյ էր: Եւ առ 'ի զերծանել 'ի պատուհասէ օրինացն՝ որ հրամայէր թողուլ անթաղ զայր քաղաքացի վատնող հայրենի ժառանգութեանն, ընթերցաւ Դեմոկրիտոս 'ի լուր աբդերացւոց ճառս ինչ՝ որով զմեծարանս և զզարմացումն նոցա յինքն ձգեաց [4]: Եւ կատարեաց նա զաւուրս իւր 'ի խոր առանձնութեան, բարեբաստիկ կե-

1 Եղիան. զան. պատմ. գիրք Է. գլ. 14: Պլուտ. 'ի Պերիկղ. հա. 1. էջ 166. և ընդդէմ Կողոտ. հա. 2. էջ 1126:

2 Պրոկլ. պատմ. իմաստաս. հա. 1. էջ 1171:

3 Նոյն անդ. էջ 1177: Դիոգ. Լայերտ. գիրք Թ. յօդ. 36:

4 Դիոգ. Լայերտ. անդ. յօդ. 39:

Նոքա. զի զկարևորագոյն խղձս իւր կարող էր ընուլ յամենայն ժամ, հրահանգելով զանձն իմացական տեսութեամբք, և զայլս գրովք:

Պրոտագորաս[1] աղքատ ծնողաց էր որդի, և 'ի ծառայական գործս պարապեալ. բայց Դեմոկրիտոս ծանեաւ զնա և աշակերտեաց, և պարզեալ ընդարձակեաց զհանճար նորա: Սա նոյն ինքն է մի յերևելի իմաստակացն Աթենայ, ուր բնակէրն. սա օրէնս ետ բնակչաց Թուրիոն քաղաքի յԻտալիա[2], գրեաց գիրս իմաստասիրական, և ամբաստանեալ յանաստուածութիւն՝ աքսորեցաւ յԱտտիկեայ, և մատեանք նորա խստիւ ընդ ամենայն տունս որոնեալ, հրապարակաւ հրձիգ եղեն:

Ոչ գիտեմ 'ի հանգամանաց ժամանակին եթէ 'ի բնէ մնաց մարդկան պատահեն դէպքս այս, ընդ որ միշտ զարմանամ: Ո՛ ի այն ինչ ուրեք հանճար ինչ կամ զօրութիւն մնաց 'ի վեր երևեալ, վաղվաղակի յաճախեն անդ և այլք, որք թերևս ոչ յերևան գային՝ եթէ առաջինն այն ոչ 'ի վեր երևէր: Կադմոս և Թալէս 'ի Միլետոն, Պիւթագոր յԻտալիա, Պարմենիդէս յԷղէա քաղաքէ, Լևկիպոս և Սոկրատ յԱթէնս, գոգցես իմն ստեղծին յայլ և այլ գաւառս յայնոսիկ զազգս ազգս հանճարոց՝ նախանձաւորս 'ի գերազանցել քան զնախատիպս իւրեանց: ՅԱբդերա իսկ քա-

1 Պրուք. պատմ. իմաստաս. հտ. 1. էջ 1200:

2 Հերակղ. առ. Դիոգ. լայերտ. գիրք Թ. յօդ. 50:

ղաք փոքրիկ, հռչակեալ ցարդ ապշութեամբ մը-
տաց բնակչացն[1], այն ինչ եկաց Դեմոկրիտոս՝
Պրոտագորաս անդէն 'ի վեր երևեցաւ. և սմա 'ի
նմին քաղաքէ կացցէ յաջորդ Անաքսարքոս, որ
այժմէն զգերահանճար մտացն տայ զնշանակս[2]:

Ի մատենագիրս, որ գրեցին զիմաստասիրու-
թենէ, ոչ է պարտ անփոյթ առնել և զՀե-
րակղիտոս եփեսացի, խրթին վասն դժուարիմաց
բանիցն կոչեցեալ[3]: Նորա այս տխուր ընդու-
թեամբ, և անհանդուրժելի ամբարհաւաճու-
թեամբ, 'ի սկզբանն առնէր չզխտել ամենևին ինչ,
և տակաւ ամենագէտ զանձն վարկանէր[4]: Եփե-
սացիք խնդրէին ինքեան հասարակապետութեան
իւրեանց զնա կացուցանել, այլ նա հրաժարեաց՝
ցասուցեալ ընդ նոսա, զի զՀերմոդոր բարեկամն
իւր աքսորեալ էր նոցա[5]: Այլ 'ի խնդրել նոցա
օրէնս 'ի նմանէ, ասէ. Կարի յոյժ ապականեալք
էք[6]: Այս գժպհի լեալ ամենեցուն, մեկնեցաւ
յԵփեսոսէ. և խոյս տուեալ 'ի մեծածակայ լե-
րինս, խոտաճարակ լինէր անդ, բերկրանս մտացն
արարեալ՝ ատել յամենայն սրտէ զմարդիկ:

Եւրիպիդեայ զճառս ինչ Հերակղիտոսի մա-

1 Կիկեր. յղ. բնութեան դից. գիրք Ա. գլ. 43. հտ. 2. էջ 433: Յովենաղ Երգիծ. 10. տող. 50:

2 Դիոգ. լայերտ. գիրք Թ. յօդ. 58:

3 Կիկեր. յղ. կատար. գիրք Բ. գլ. 3: Սենեկա Թուղթ 12: Կղ. աղեքս. յաճախաց. գիրք Ե. էջ 676:

4 Դիոգ. լայերտ. գիրք Թ. յօդ. 5:

5 Նոյն անդ յօդ. 2 և 6:

6 Նոյն յօդ. 2:

3 2

տուցեալ Մոկրատայ յընթերցումն, նա իբրև ըն-թերցաւ զայն՝ ասէ. Որ ինչ փոքր 'ի շատէ 'ի միտ առի, բարւոք է և ամենալաւ. իցէ արդեօք և մնացեալն նոյնպէս, այլ վտանգ է անդնդասուզ 'ի նմա լինելոյ՝ որում չիցէն աջողակ որպէս զլո-ղորդ դեղոսացի [1]:

Սոյդ մատեանս արանցս նշանաւորաց էին և այլ յոլով մատեանք աննշանից: Այս մինչդեռ ու-րախ լինէի ընդ Եւկղիդեայ վասն բազմութեան մատենիցն, եմուտ 'ի դիւան անդր այր ոմն պատ-կառելի դիմօք և տեսօք և հանդարտութեամբ. վարսք նորա զուսովքն անկեալ, թաց 'ի գլուխ, և պսակեալ մրտենեաւ: Այս. էր նա Կալլիաս կատարողապետ կամ քրմապետ դիցն Դեմե-տերեայ, մտերիմ բարեկամ Եւկղիդեայ. որում Եւկղիդէս ծանոյց զիս պատուասիրաբար համ-դերձ գովութեամբ: Վայրիկ մի խօսեցեալ ընդ նմա, դարձայ 'ի գրեանս անդր. և այնու մտա-դիւրութեամբ անցանէի ընդ նոսա, մինչև Կալ-լիասայ զգալ զայն, և հարցանել ցիս՝ եթէ կա-միցիս տեղեկանալ բովանդակելոց 'ի դասս դի-տութեանցն: Որում եռանդեամբ պատասխա-նեալ, ասեմ. Օ պատասխանի զոր ոմն 'ի նախ-նեացն իմոց ետ Սողոնի [2], զնոյն տամ. Ո՛չ ինչ իսկ թողի զՍկիւթս, և ընդ բազում այնչափ

1 Դիոգ. Լայեր. գիրք Բ. յօդ. 22: Նոյն գիրք Թ. յօդ. 11: Սուիդ. 'ի բառն Δηλ.

2 Ղուկիան. 'ի մրցմանսն յօդ. 14. հա. 2. էջ 892:

լայնածաւալ աշխարհս անցի, դիմնագրաւեալ մերկաց Մաքսիմեանն Պոնտոսի, եթէ ոչ առ 'ի գալ այսր և կրթել 'ի մէջի ձերում յուսումն. Հաստատեալ եմ չելանել 'ի տեղւոջէ աստի, մինչև անցեալ ընդ գրեանս իմաստնոց ձերոց. զի ոչ ինչ երկեայիմ՝ եթէ գտնն 'ի նոսա իմաստք կարևորք 'ի բարեպաշտութեան մարդկան։ Վերա-տեցաւ Կալլիաս ընդ խորհուրդս իմ, թերևս և զլթացաւ իսկ, որպէս 'ի խօսիցն իսկ նորա յայտ է՝ որ առաջի կայ մեզ։

ԳԼՈՒԽ Լ.

Դարձեալ 'ի նոյն մատենադարանն, և Կալլիասայ քննադատութիւն Դեմետրեայ ճառուք զառաջին պատճառաց։

Այս ասէ ցիս Կալլիաս. Խուէր ինձ 'ի տես-լեան գնալ ընդ ճանապարհ բազմամբոխ, 'ի խը-ռուռն ծերոց և տղայոց, արանց և կանանց, յամե-նայն կարգէ։ Այս գնայաք մեք իբր յարշաւս աշա-կերտաւք, կիսոց զաղաղակ ցնծութեան հարկա-նելով, իսկ այլք ծանրաթախիծք 'ի վշտացն և 'ի ձանձրութենէ. Ոչ գիտէի ուստի գայի և յո՛ գնայի, և հարցանէի զամբոխ ուղեկցացն իմոց։ Կէսք ասէին ցիս՝ թէ և մեք չգիտեմք, այլ զհետ բազմութեանս գնամք և կարապետեմք որոց ըղ-

հետն գան։ Այլք ասէին. Ո՞ր փոյթ է զճանա-
պարհն գիտելոյ. մղիմք յայլոց, և պարտ է մեզ
մղել զայլս։ Նաև իմաստնագոյնք 'ի նոցանէ ա-
սէին. դատապարտեալք 'ի դից յասպարէզս յայս՝
հնազանդիմք հրամանաց նոցա, ոչ 'ի մնոտի ու-
րախութիւն և ոչ 'ի տարապարտ ցնծութիւն
խռամբս միտեալք։ Այս մինչ պապատասեալն էի ընդ-
ուղխս բազմութեանն վարեալ, լուայ բարբառ՝
որ ասէր. Ե՛կ զհետ լուսոյ և ճշմարտութեան։
Դիմեցի խնդութեամբ զհետ բարբառոյն. և
առն ուրումն կալեալ զձեռանէ իմմէ, եցոյց ըզ-
կապ աչաց իմոց, և ած զիս յանտառ ուրեմն նսե-
մաստուեր, ուր ոչ ինչ առաւել քան զառաջինն
տեսանէի։ Կորուսաք զհետս ուղւոյն՝ ընդ որ գը-
նայաքն, և գտաք ամբոխս մոլորելոց իբրև զմեզ։
Առաջնորդք նոցա 'ի հանդիպելն միմեանց՝ զայլն
'ի կռիւ, յափշտակել կամելով 'ի միմեանց զհե-
տևողս։ Այն 'ի ձեռս նոցա ջահք, յորոց բոցք
ակնախտիղք երբեք երբեք հատեալ՝ շլացուցա-
նէին զմեզ։ Յազումն փոխեցի առաջնորդս, բա-
զում անգամ զահավէժ անկայ, և բազում այն
էր՝ զի պարիսպք անթափանցք խափանէին զգը-
նացս իմ. և անդ առաջնորդացն իմոց անտես
լեալ, թողուին զիս յարհաւիրս յուսահատու-
թեան։ Սաստկաբեկ լեալ, ստրջացայ զի թո-
ղի զճանապարհն՝ ընդ որ բազմութիւնն գնայր.
և մինչդեռ 'ի ստրջմանս յայս էի, զարթեայ։

Արդ լո՛ւր ինձ որդեակ. ընդ բազում դարս կե-

ցինն մարդիկ 'ի տգիտութեան, յորում ոչ ինչ տարբերէին միւսք նոցա. քանզի չառաջացեալք նո-սեմ առանձնութեամբքն՝ զորս ընկալեալ էր նո-ցա յառաջնոցն զլինելութենէ էից, ունէին զայն առանց հետազօտելոյ գիտել զառանելն։ Նաև իբր յերկերիւրոց ամաց հետէ ապաժոյժք իմն բերին 'ի խելամտութիւն զաղտնեաց բնութեան, որ և ոչ 'ի միտս նոցա անկեալ էին յառաջնագոյն. և նորոգս այս ախտակրութիւն մնաց փոխանա-կեաց մոլորութիւնս ծանուանս ընդ ծանուանց մտաց հաճութեանց։

Նախահաւանեցին միւսք՝ իբրև առին խորհել մեծամեծս զԱստուծոյ և զմարդոյ և զտիեզերաց. զի չիք ինչ որ յայնպիսի բարձր կարծիս զամբարձէ և 'ի մեծամտութիւն ածիցէ զմարդ՝ որպէս ըն-կուզարկութիւն բնութեան։ Այս ցանկութիւն մնաց ոչ ինչ նուազ քան զորտին սաստիկ և ան-յագ, կամեցաւ չափել զմայր, համանել 'ի խորս անքաւին, և հետևել ընդ պարունակ շղթային որ յանսահման ոլորտս իւր բովանդակէ զէքս առ-հասարակ։

Նախնեաց իմաստասիրացն մնացեալք ուսուցիչք եթէ առանց զարդուց, և սահմանօք և հետևա-նօք համագոյն երկրաչափից* առանձնէն զմարդա-պետութիւնն. այլ մեծութիւն բովանդակելոյ 'ի նոսա գիտութեանցն վսեմագոյնս յարդարէ

* Որպէս է տեսանել յՈկեղոս Լուկանոս և 'ի Տիմէոս Լոկրեցի։

վճռոսա . որպէս զի անդէն 'ի գլուխ գլոցն ազդել մեծարանս, խոստանալով ճառել զընութենէ և զերկնից և զերկրէս և զհոգւոյ աշխարհիս ։ Դե-մոկրիտոս զմի 'ի ճառիցն իւրոց սկսանի մեծա-պատուամս այսպէս . Զտիեզերաց առաջի կայ ինձ ճառել[1] ։

Յանցանել քո ընդ բազմախուռն ժողով մա-տենիցդ, ուր 'ի նաեմնատուեր մթան փայլէն պայծառագոյն ճառագայթք, ուր ցնորք աղճա-տանաց խառն են ընդ խորին իմաստութեան, ուր զօրութիւն և տկարութիւն մարդկեղէն մտաց միանգամայն գան 'ի յայտ, յուշ լիցի քեզ որ-դեակ՝ զի պղնձի քօղով ծածկի ընութիւն, և զի զօրութիւն ամենայն մարդկան և անցելոց դարուց առ հասարակ չկարեն զծայր մի նորին 'ի վեր առնուլ, և զի գիտութիւն իմաստասիրին սահմանի 'ի նկատել զծայր ևեթ գաղտնեացն, և իմաստութիւն նորա՝ 'ի յարգել զայն պատկա-ռանօք ։

Ոյցէն յաւուրս մեր՝ որք ուրացան կամ յերկ-բայս արկին զգոյութիւն աստուածութեան, զայն որում միաբանութիւն ամենայն ազգաց 'ի սկզբ-բանէ և այսր վկայէ[2] ։ Ոմանք յայտնապէս յու-րաստ կան յայնմանէ, այլք սահմանօքն իւրեանց եղծանեն զայն . զի որք զէութիւն անբաւ Ա՟ին

1 Կիկեր . ակադ . 2 . գլ . 23 . հա . 2 . էջ 31 ։ գիրք Ա . գլ . 3 . հա . 1 . էջ 434 ։

2 Արիստոտ . յղ . երկնից ,

հետազօտէն, կամ զպատճառս գործոց նորա հը-
նարին տալ, մոլորին ամենեքեան։

Եթէ հարցանիցես զնոսա՝ թէ զի՞նչ է Աս-
տուած, պատասխանեն. Որոյ չիք սկիզբն և վախ-
ճան[1]։ — Հոգի սուրբ է[2]։ — Միւթ է ամենա-
նուրբ, օդ է[3]։ — Հուր է իմացական[4]։ — Ան-
խառնս է[5]։ — Եւ այլք՝ թէ ոչ աշխարհս է, այլ
շունչ աշխարհիս. զի Աստուած ընդ սմա է որ-
պէս հոգի ընդ մարմնոյ միացեալ[6]։ — Միակ
պատճառ[7]։ — Պատճառ բարւոյ, որպէս նիւթն
չարին[8]։ — Ամենայն ինչ հրամանի նորա մնայ.
մերկապարանոց կայ ամենայն ինչ առաջի աչաց
նորա[9]. զամենայն 'ի ձեռն սպասահարկուաց գոր-
ծէ։ . . . Երկիր պագ Աստուծոյ, որդեակ, և մի՛
զննութիւն նորա հետազօտեր։

Եթէ խնդրիցես 'ի նոցանէ՝ թէ զի՞նչ են տիե-
զերք, պատասխանեն. Ամենայն ինչ որ կանս՝

1 Թաղէս առ. Դիոգինեայ Լայերտ. գիրք Ա. յօդ. 36։

2 Անաքսագոր. առ. Արիստոտէլի յղ. հոգւոյ, գիրք Ա. գլ. 2. հտ. 1. էջ 621։ Կիկեր. յղ. բնութեան գից, գիրք Ա. գլ. 11. հտ. 2. էջ 405։

3 Դիոգ. Ապողոն. առ. Կիկեր. անդ գլ. 12։ Անաքսիմ. առ. Կիկերոնի անդ գլ. 10։

4 Պիւթագ. առ. Պրոքքերայ, հտ. 1. էջ 1077։ Դեմոկր. առ. Պլուտարքեայ յղ. անդորր. իմաստս. գիրք Ա. գլ. 7. հտ. 2. էջ 881։

5 Արիստոտ. առ. Կիկերոնի անդ գլ. 13։ Հերակղ. պոնտ. առ. Կիկերոնի անդ։

6 Թաղէս առ. Պլուտարքեայ անդ։ Պիւթագոր. առ. Կիկերոնի անդ գլ. 11։

7 Քսենոփան. առ. Կիկերոնի ակադ. 11. գլ. 33. հտ. 2. էջ 49։

8 Տիմ. լոկր. առ. Պղատոնի, հտ. 3. էջ 93։ Պղատ. 'ի Տիմ. էջ 43։ Նոյն յղ. հասա. հտ. 2. էջ 273։

9 Պղատ. անդ։

մշտնջենակացք են, ապա աշխարհս 'ի յաւիտենից է[1]: — Իսկ այլք՝ թէ ոչ աշխարհս, այլ նիւթն 'ի յաւիտենից է[2]: — Նիւթոյ, որ ամենայն կերպարանաց է ընդունակ, ոչ գոյր յատուկ կերպարան[3]. միանակերպ էր և բազմակերպ, և անբաւ կերպարանաց ունակ. զի ոչ այլ ինչ է նիւթ, բայց ջուր[4], օդ[5], հուր[6], տարերք[7], յօդուած հիւղէից[8], և անբաւ բազմութիւն անսապական տարերաց և հոմասեռ անհատ մասնկանց՝ յորոց թանձրացեալ յօղին ամենայն տեսակք: Նիւթս այս 'ի համապարփակ վիճին կայր անշարժ. մինչք հաղորդեցին 'ի նա շարժումն, և երևեցան տիեզերք[9]: — Իսկ այլք՝ թէ չէր անշարժ, այլ խառն 'ի խուռն շարժէր. և յԱստուծոյ էութենէ հաղորդեալ 'ի նա մասն, ուղղեաց զշարժումն նորա, և եկաց աշխարհս[10]: — Ա

1 Ոկեղոս. Լուկանոս 'ի սկզբան: Դիոդ. գիրք Ա. էջ 6: Պղատ. Նախկին պատմ. հա. 1. էջ 387:

2 Արիստոտ. յղ. երկնից, գիրք Ա. գլ. 10. հա. 1. էջ 447:

3 Տիմ. Լոկր. առ Պղատոնի, հա. 3. էջ 94: Պղատ. 'ի Տիմ. անդ էջ 51, և այլուր:

4 Թաղէս առ Արիստոտելի բնագանց. գիրք Ա. գլ. 3. հա. 2. էջ 842: Պլուտ. անդորր. իմաստաս. գիրք Ա. գլ. 3. հա. 2. էջ 875:

5 Անաքսիմ. և Դիոգ. առ Արիստոտելի անդ: Պլուտ. անդ:

6 Իպպ. և Հերակղ. առ Արիստոտելի անդ:

7 Եմպեդոկղ առ Արիստոտելի անդ:

8 Թեմ. առ Դիոգինեայ Լայերտ. գիրք Թ. յօդ. 44: Պլուտ. անդ էջ 877:

9 Անաքսագ. առ Արիստոտելի յղ. երկնից, գիրք Գ և Դ. հա. 1. էջ 477, և զհնի: Նոյն առ Պլուտարքեայ յղ. անդորր. իմաստաս. գիրք Ա. գլ. 3. հա. 2. էջ 876: Նոյն առ Դիոգինեայ Լայերտ. յԱնաքսագ. գիրք Բ. յօդ. 6:

10 Տիմ. Լոկր. առ Պղատոնի, հա. 3. էջ 95: Պղատ. 'ի Տիմ. էջ 34:

այնպէս. այլ մարմինք անհատք խառն ՚ի խառն վարէին ՚ի դատարկի, և ըստ դիպաց յօդուածոց նոցա եղեն արգասիք տիեզերքս[1]:— Եւ այնպէս. այլ յերկուց ևեթ տարերաց ամենայն ինչ յօդեցան, և կամ. ՚ի հողոյ, և ՚ի հրոյ՝ որ է շունչ նորա[2]:— Եւ այնպէս. այլ ՚ի չորեսին տարերս հարկ է յաւելուլ զսէր՝ որ յօդէն զնոսա, և զատելութիւն՝ որ զատանէն[3]: . . . . Ո՞վ որդեակ, մի ծախեր զաւուրս քո ՚ի խնդրել զպատճառս տիեզերաց, այլ ՚ի լնուլ որպէս պարտն է զվայրն փոքրիկ՝ զոր ՚ի նմա զբաւես:

Իսկ եթէ հարցանիցես նոցա՝ թէ զի՞նչ է մարդ, պատասխանեն. ՙՆորանշան երևոյթք և ներհակք անհաշտելիք որ ՚ի տիեզերս, նոյնք և ՚ի մարդուն են՝ որ նորին համառօտագիծն է պատկեր[4]: Մասն որ ՚ի նմա յամենայն ժամանակի յորձորձեալ հոգի և միտք, յարաշարժ է[5]:— Ծխու է նա ինքնաշարժ[6]:— Շունչ յատակ, այլ մասն յամենայն նիւթոյ:— Եթէ այդպէս իցէ, բայց զնիւթս ճանաչիցէ[7]:— Օդ է ամենանուրբ[8].

1 Պղուտ. յղ. անդորր. իմաստասա. գիրք Ա. գլ. 4. հտ. 2. էջ 878:

2 Դարմեն. տա. Արիստոտելի բնագանց. գիրք Ա. գլ. 8. հտ. 2. էջ 847:

3 Եմպեդ. տա. Արիստոտելի անդ գլ. 4. էջ 844:

4 Վարք Պիւթագորայ տա. Փոտայ, էջ 1317:

5 Թաղէս տա. Պղուտարքեայ անդ գիրք Դ. գլ. 2. հտ. 2. էջ 898:

6 Պիւթագ. տա. Պղուտարքեայ անդ: Քսենոկր. տա. նմին յղ. Նախատ. հոգ. հտ. 2. էջ 1012: Արիստոտ. յղ. պերճախօս. գիրք Զ. գլ. 3. հտ. 1. էջ 243:

7 Արիստոտ. յղ. հոգւոյ, գիրք Ա. գլ. 2. հտ. 1. էջ 621:

8 Պղուտ. անդ գլ. 3:

— Հուր թափանցիկ [1]. — բոց հատեալ յարեգակնէ [2]. — մասն արփւոյ [3]. — Ջուր ամենաթեթեւ [4]. — խառնուածն տարերաց բազմաց [5]: — Իսկ այլք՝ թէ հոգի է յօդուած գնտաձև և հրային անհատ մասնկանց, համգոյն այնմ որ 'ի շող արեգականն յուզին հողամասունք [6]. էակ պարզ: — Եւ այլք դարձեալ՝ թէ ոչ պարզ, այլ յօդուածոյ՝ բաղադրեալ 'ի բազում մասանց և 'ի բազմապատիկ ոյժակաց հակառակաց [7]: — Արիւն է որ գընայ յերակունս մեր [8]: Հոգի համասփիւռ կայ 'ի մարմնի: — Իսկ այլք՝ թէ ոչ 'ի մարմնի, այլ յուղեղն եւեթ է կայեանն նորա: Այլք թէ ոչ յուղեղն, այլ 'ի սրտի. և այլք դարձեալ՝ թէ ոչ 'ի սիրտն [9], այլ 'ի ստոծանւոջ [10]: — Հոգի կորնչի ընդ մարմնոյ: — Ոչ, այլ անցանէ յայլ մարմին: — Ոչ, այլ 'ի հոգի տիեզերաց խառնի [11]: . . . . Արդեաւ, ուղղեա զշարժմունս հոգւոյդ, և մի փոյթ լիցի քեզ գիտել զէութիւն նորա:

1 Արիստոտ. յղ. հոգւոյ, գիրք Ա. գլ. 2. հա. 1. էջ 621:

2 Եպիքարմ. առ Վարրոնի յղ. լատին բարբառոյ, գիրք Դ. էջ 17.

3 Պիւթագ. առ Դիոգին. Լայերտ. գիրք Ը. յօդ. 28:

4 Իպպոն. առ Արիստոտելի անդ. էջ 620:

5 Եմպեդ. առ Արիստոտելի անդ. էջ 619:

6 Դեմոկր. և Լեւկիպ. առ Արիստոտելի անդ. առ Ստոբէոսի ծաղկաքաղ բնաբ. գիրք Ա. էջ 93: Պղատ. յղ. անգորր. Տիմէոս. գիրք Դ. գլ. 2. հա. 2. էջ 898:

7 Արիստոտ. անդ: Պղատ. անդ. գլ. 3 և 4:

8 Կրիտիաս առ Արիստոտելի անդ. էջ 621: Մակրոբ. յղ. երազ. Սկիպ. գիրք Ա. գլ. 14:

9 Եմպեդ. առ Կիկերոնի տուսկուլ. գլ. 9. գիրք Ա. հա. 2. էջ 239:

10 Պղատ. անդ. գլ. 5. էջ 899:

11 Նոյն անդ. գլ. 7: Կիկեր. տուսկուլ. անդ:

Ահաւասիկ քեզ համագումար պատկեր կարծեաց, յորս մտաբերեցին իմաստասէրք զկարեւորագոյն խնդիրս: Յաճախութիւն մտածութեանց նոցա՝ չքաւորութեան իսկ են հաւաստիք. և շեղջակոյտ մատենիցս զոր տեսանես՝ կարծեցեալ գանձք բարձրագոյն գիտութեանց, են սաւանողք հակառակաբանութեանց և մոլորութեանց՝ առիթք կորանաց: Մ՛ի կարծիցես գտանել 'ի նոսա, ոչ վարդապետութիւն ինչ՝ որ ինքն իւր համաձայն իցէ, և կապակցեալ ամենայն մասունք նորա ընդ իրեարս. ոչ մեկնութիւն բացայայտ, և ոչ լուծմունս լաւ իւրաքանչիւրոց 'ի սքանչելեաց բնութեան: Մատենագիրք այսոքիկ գրեթէ առ հասարակ անիմանալիք են, զի յոյժ են համառօտք, և զի առ երկիւղի ստախելոյ ընդ կարծիս բազմաց՝ քօղարկեն զվարդապետութիւն իւրեանց այլասացութեամբք և իւրեանց օրինացն հակառակաբանելով. և զի դարձեալ անիմանալի իսկ ցանկան լինել՝ առ 'ի խոյս տալ յանակնկալ կամ յանլուծանելի դժուարութեանց:

Բայց սակայն եթէ չև ևս շատ համարեալ զանվանողականութիւն բանից նոցա զոր լսար, կամիցիս հարեւանցի ինչ տեղեկանալ աղանդոց նոցա, յապուշ լիցիս ընդ խնդիրս նոցա զոր անդէն առ սեամս բանիցն 'ի ներքս ածեն, թէ արդեօք մի ինչ պատճառ իցէ տիեզերաց, և չկարիցե՞ն գոլ բազումք. եթէ իցէ միակ, արդեօք շարժո՞ւն

իցէ թէ անշարժ. իսկ եթէ իցեն բազումք, սահմանաւո՞րք իցեն թէ անսահմանք. այլովքն համագերձ[1]։

Մանաւանդ զլինելութենէ աշխարհի բաղկացուցանեն զճառս, և հնարին գտանել զպատճառս անհնարին բազմութեան սեռից և անհատից՝ զորս բնութիւնն առաջի առնէ մեզ։ Տեսակք և որակք մարմնոց փոփոխին անդադար և եղծանին և նորոգին, այլ բաղկացուցողին նիւթն կայ միշտ անեղծ։ Արթ է բաժանել զայն մտօք և ստորաբաժանել յանբաւս, մինչև ցհասանել 'ի պարզ էակ՝ յորմէ տիեզերք և մարմինք իւրաքանչիւր յօդին[2]։ Նախնորդք յոնիական աղանդոյն, և յայլոց ևս աղանդոց իմաստասէրք ոմանք զհետ եղեն գտանելոյ զէակս զայս պարզ և անբաժին։ Կէսք 'ի տարր ջրոյ համարեցան զայն[3], այլք 'ի տարր օդոյ. և կէսք յաւելլին 'ի սոսա և զհող և զհուր, և այլք դարձեալ համարեցան՝ զի 'ի զանազան սկզբնական նիւթոյն 'ի յաւիտենից գոյին անբաւ մասունք անշարժք, որոց իւրաքանչիւր այլ և այլ ձևք էին և տեսակք. յորոց օդական մասանցն 'ի մի հաւաքեալ՝ կատարեցին զտարր օդոյ, և յոսկեղէն մասանցն կազմեցաւ ոսկի, և այլ ամենայն ինչ յանձնիւր տեսակացն[4]։

1 Արիստոտ. յղ. բն. լսելեաց, գիրք Ա. գլ. 2. հտ. 1. էջ 316։

2 Նոյն. բնաղանց. գիրք Ա. գլ. 3. հտ. 2. էջ 842։

3 Նոյն անդ։ Պլուտ. յղ. անդորր. իմաստասէր. գիրք Ա. գլ. 3. հտ. 2. էջ 875։

4 Արիստոտ. անդ. էջ 843։

Այս ամենայն աղանդք յածէին զնիւթական և զկրաւորական պատճառօք էից. այլ ոչ յամե- ցին իմաստասէրք հասու լինել՝ զի հարկ էր միւս ևս յաւելուլ պատճառ ներգործական յառա- ջնոյն։ Հրոյ տարր թուեցաւ բաւական դիպող ՝ի բաղադրել և ՝ի լուծանել զմարմինս. այլք նկա- տեն ՝ի մասնկունս սկզբնական նիւթոյն սիրելու- թիւն իմն և ատելութիւն, բաժանիչ նոցին և յօդիչ անընդհատաբար[1]։ Բայց մեկնութիւնքս այսոքիկ, և որ սոցին սոյս յաջորդեցին, չեղեն բաւական ՝ի բովանդակել զամենայն այլակեր- պութիւնս էից, և հարկ եղև խոստովանիլ յայլ ևս պատճառս ընթանալ, և կամ նկուն լինել ՝ի դժուարութեանցն. հանդոյն ընկչաց, որ անկիրթ ՝ի կռիւ դիմագրաւիցեն. որոց դոյզն յաղթա- նակք որովք մտախարին՝ բախտին են արգա- սիք[2]։

Կարգ և գեղ, որ ամենայն ուրեք երևին ընդ- տիեզերս, ստիպեցին զնոսա այնուհետև դիմել առ պատճառ իմացական։ Երիցագոյնք յիմաս- տասիրաց յոնիական աղանդոյն վաղ իսկ ծանեան զայն[3]. բայց Անաքսագոր, թերևս յԵրմոտիմեայ առեալ, համարեցաւ զայն օտար ՝ի նիւթոյ, և ասաց յայտնապէս՝ զի ամենայն ինչ ՝ի սկզբանէ

1 Եմպեդ. առ Պլուտար- քեայ յղ. անդորր. իմաս- տաս. գիրք Ա. գլ. 3. հատ. 2. էջ 878։

2 Արիստոտ. բնազանց. գիրք Ա. գլ. 4. հատ. 2. էջ 844։

3 Նոյն անդ գլ. 3. հատ. 2. էջ 843։ Կիկեր. յղ. բնութ. դից, գիրք Ա. գլ. 10. հատ. 2. էջ 405։

'ի մշտնջենաւոր նիւթն էր, և զի իմացականութեան ազդեալ 'ի նա շարժումն՝ ած զայն 'ի կարգ:

Մինչև յոնիական աղանդոյն հասու լեալ ճշմարտութեանս այսմիկ որ վաղեմի աւանդութիւնն էր ազգաց, Պիւթագոր կամ մանաւանդ աշակերտք նորա, զի անհնարին իմն է զաւշակել զկարծիս նորանշան առնն՝ թէպէտ և չև ևս բազում ժամանակք են զի եկաց, պիւթագորեանք առեալ համարեցան զաշխարհ նիւթ ընչաւոր, և շունչ 'ի նմա համատարածիւ և անլուծանելի 'ի նմանէ զիմացականութիւն՝ որ վարէն զայն, իբր պատճառ ամենայն էից, իբր հուր թափանցիկ և բոց յաւակ, և իբր զօրութիւն՝ որոյ ընդ խառնուածեալ զնիւթ, և սանձահարեալ ունի զայն [1]: Այս քանզի էութիւն նորա անզննելի է զգայութեանց, ոչ զգալի բարբառով՝ այլ իմանալեաւ առցուք նկարագրել զայն: Կոչեսցուք զիմացականութիւնն կամ ներգործական պատճառ տիեզերաց միակ, զի միշտ նոյն իսկ է անփոփոխ. զնիւթն զկրաւորական պատճառ՝ երկեակ, զի կերպս 'ի կերպս է փոփոխելի. իսկ զաշխարհ կոչեսցուք երրեակ, զի իմացականութեան և նիւթոյ է արգասիք:

Բազումք յաշակերտացն Պիւթագորայ յաւելին ըստ պիտոյից և այլ բացատրութիւնս, այլ գրեթէ միշտ 'ի թիւս կացուցանելով զպատկե-

[1] Յուստին. մկ. Ճառ. ընդդէմ հեթան. էջ 18:

թիւնս՝ որոց գիտութիւն վերածէր զնոսա 'ի ծանօթութն էից, զի համարէին զյատկութիւնս զայնոսիկ գտանել յարգասիս ձայնաւոր մարմնոց¹: Այլ եւ զլար քնարի բաժանեցեալ յերկուս և յերիս և 'ի չորս մասունս, կէսք իւրաքանչիւր զութեակ բոլորիցն իւրեանց հնչէին. երրեակ քառորդք զքառորդն, երկու երրեակք զհնգեակն: Այս ութեկին համեմատութիւն է որպէս 1 առ 2, քառորդին՝ որպէս 3 առ 4, և հնգեկին՝ որպէս 2 առ 3: Ի կարևոր տեսութենէ աստի թիւքս 1, 2, 3, 4, առին անուանակոչել սրբազան քառեակ:

Այս են համեմատութիւնք պիւթագորականքն², և այս են օրէնքն յոր հաստատեալ կայր կարգ երաժշտութեան ամենայն ազգաց, և մանաւանդ այն զոր Պիւթագոր եգիտ առ Յոյնս, և ած 'ի կատարումն իւրովք հնութեամբքն:

Ըստ գիտնոցս լաւ այսպիսիկ, որ եգիպտացւոցն էին արդեօք, յայտնի եղև զի օրէնք երաժշտական ներդաշնակութեան անցեալ իք են, և զի 'ի ընէ հաստատեալ կան անձնահանճելի քանակք և միջոցք առտնձնանաց ձայնի: Այլ ընդդէր բնութիւնն՝ միօրինակ յամենայն 'ի գործս իւր՝ ոչ զնոյն օրէնս կալաւ 'ի յօրինուած տիեզերաց առ հասարակ: Այս տեսութիւն ծագեաց ըստ մեծ

¹ Արիստոտ. բնազանց. գիրք Ա. գլ. Ե. հատ. Զ. էջ 848:

² Բուսսիէ յիշատ. վասն երաժշտ. հնախնեաց, էջ 39:

'ի միտս զգաստս, որք հեռի յամենայնէ ժուժկալութեամբ և խոկմամբ դիւրապատրաստք էին 'ի հիացումն, և այնոցիկ որք երկիւղածութեամբ զօր ամենայն պարապեին ժամս ինչ երաժշտութեան, մանաւանդ առ 'ի կրթել զձայն իւրեանց 'ի ձիգս ելևէջս[1] :

Ոչ յամեցին Թիւքս այս 1, 2, 3, 4, ոչ միայն երաժշտական կարգաւորութեանն գոլ բաղկացու տարերք[2], այլ և բնագիտութեան և բարոյականին : Ամենայն ինչ համեմատութեամբ վճարէր և ներդաշնակութեամբ. ժամանակն, արդարութիւն, բարեկամութիւն և իմաստութիւն կային 'ի համեմատութիւնս Թուոց[3] :

Էմպեդոկղէս չորս տարերս համարի, Ջուր, օդ, երկիր և հուր. այլև 'ի պիւթագորականաց քառեակ զօրութիւնս 'ի հոգւոյ մերում նկատեն[4], և ամենայն առաքինութիւնք 'ի մեզ 'ի չորից գլխաւորաց սերին : Եւ քանզի սրբազան քառեակին բաղկացու Թիւք գումարին 'ի տասն, վասն այնորիկ գերակատար Թիւս այս[5] համարեալ

1 Պղուտ. յղ. բարոյ. առաքինու. հտ. 2. էջ 441 : Արիստիդ. Կուինտիլ. յղ. երաժշտ. գիրք Գ. հտ. 2. էջ 116 : Բոետ. յղ. երաժշտ. գիրք Ա. գլ. 1. էջ 1373 :

2 Սեքստոս Եմպիրիկոս ընդդէմ Թուաբ. գիրք Դ. յօդ. 2. էջ 331 :

3 Արիստոտ. բնազանց. գիրք Ա. գլ. 5. հտ. 2. էջ 845 : Դիոգ. Լայերտ. 'ի պիւթ. գիրք Ը. յօդ 33 :

4 Պղուտ. յղ. անդորր. իմաստաս. գիրք Ա. գլ. 3. հտ. 2. էջ 877 :

5 Արիստոտ. առաջարկ. յօդ. 15. հտ. 2. էջ 752 : Պղուտ. անդ էջ 876 :

հարկ արար պարունակս տասն յերկինս ձգել, թէպէտ և չիցեն աւելի քան զինն[1] ։

Իսկ որք անձնաւոր զտիեզերս համարեցան Պիւթագորեանքն, ոչ կարացին այլազգ զշարժմանս երկնից մեկնել և զտարակայութիւն արփայոյն մարմնոց յերկրէ, բայց 'ի ձեռն ատրձանաց ազդեցութեան հոգւոյ նորա 'ի միջակէտէ 'ի շրջապատն[2] ։ Զի եթէ բաժանեսցես զվայրն զայն անբաւ յերեսուն և 'ի վեց պարունակս, կամ մանաւանդ եթէ ստեղծանիցես մտօք լար իմն ձգեալ ծայր 'ի ծայր ընդ միջակէտ երկրի, և բաժանեսցես զայն յերեսուն և 'ի վեց մասունս՝ միով աստիճանաւ ձայնի կամ կիսով ըղմանն իւրաքանչիւր չափեալ, գտցես զերաժշտական սանդուղս տիեզերական հոգւոյն[3] ։ Արփայքն մարմինք զետեղեալ կան յիւրաքանչիւր աստիճանս սանդղոցս, տարակայք յերերաց ըստ համեմատութեան հնչեկին և այլոց համաձայնութեանց ։ Շարժմունք նոցա ըստ նոցին համեմատութեանց ուղղեալ, գործեն ներդաշնակութիւն քաղցր և աստուածային ։ Մուսայիցն պարկաց յատուեղս զետեղեալ են աթոռք, և նոքա ուղղեն զդաշնակաւոր շրջագայութիւն երկնայնոց պարունակացն, խնամակալք մշտնջենաւոր և

1 Արիստոտ. բնաղանց. գիրք Ա. գլ. Ց. հտ. 2. էջ 845.

2 Տիմ. լոկր. առ. Պղատոնի հտ. 3. էջ. 96 ։ Պղատ. 'ի Տիմ. էջ 36 ։

3 Գաւթէօ, ծանօթ. 'ի Տէմէոս 'ի պատմութիւն նախկին պատմ. հտ. 2. էջ 97 ։

զմնացեալ համաձայնութեանցն, որ 'ի լռութեան և եթ կրից լսելի լինին, և որք անապական խնդութեամբ ընուլին զհոգի Պիւթագորայ, որպէս ասի զնմանէ բան[1]:

Համեմատութիւնս զորս կէսք խնդրէին հաստատել 'ի տարակայութեան և 'ի շարժման երկնային պարունակաց, այլք մտաբերեցին գտանել 'ի քանակ աստեղաց կամ 'ի տրամագիծ ծրին զոր գործեն[2]:

Ոմանք տիեզերաց եղծանեն զյօրինուածս զայս. այլ 'ի յօրինել սորա այնոքիկ յոյժ ընդաղօտ ճանաչէին. իսկ իբրև յայտնագոյն ծանուցան, դժուարին էր այնուհետև հրաժարել 'ի հրապուրանաց գեղոյ կարգաւորութեանն՝ զոր ցնորք մտաց ծնան և գեղազարդեցին:

Ոչ ինչ նուազ մտացածին և անհիմնականն ևս է միւս ևս պատճառ ազդեցական մածեալ 'ի պիւթագորականաց բազմաց: Որ ըստ Հերակղիտեայ Եփեսացւոյ[3], մարմինք համապազ ծխեն և հոսեն. բաղկացու մասունք նիւթոյն ցնդին անդադար, տեղի տուեալ այլոց մասանց՝ որ ապա և նոքա սպառին մինչև 'ի լուծումն բոլորին, զոր կացուցանեն միութեամբն[4]: Այս շարժումն ան-

1 Եմպեդ. առ Պորփիւրի յղ. վարուց Պիւթագոր. էջ 35: Յամբղիք. գլ. 15. էջ 52:

2 Պղուտ. յղ. Նախաստ. հոգւոյ, հտ. 2. էջ 1028:

3 Արիստոտ. յղ. երկնից, գիրք Գ. գլ. 1. հտ. 1. էջ 473: Նոյն բնազանց. գիրք Ա. գլ. 6. հտ. 2. էջ 847. գիրք. ԺԱ. գլ. 4. էջ 957:

4 Պղատ. 'ի խրախճ. հտ. 3. էջ 207:

զգալի, այլ խորհականն և հասարակաց բնաւից էից նիւթականաց, այլայլէ հանապազ զօրակ նոցա, և փոփոխէ զնոսա յայլ էակս՝ որ կերպարանօք վեր 'ի վերոյ ևեթ նմանին առաջնոցն ։ Ուր որ ինչ յերէկն էր, ոչ ևս նոյն ես այսօր. և որ ինչ 'ի սերկեան աւուր, ոչ ևս առ վաղիւ [1] ։ Վասն նմանութիւնք Ոսեսեայ, որ դեռ ևս պահէր առ մեզ, այլ բարդուցեալ անդադար փոփոխեցան կազմք նորա ։

Արդ ո՞ր ասոյց և յարատևական գիտութիւն մարթի կալ յայսպիսում անհաստատութեան իրաց, յայսպիսի ուղխս սրընթացս, և 'ի մակընթացութեան և 'ի տեղատուութեան յեղյեղուկ մասանց էից ։ Որպէս զչափ առնուլ կարիցես զմեծութեան, որ անդադար աճէ և նուազէ [2] ։ Ապա ուրեմն և գիտութիւնք մեր, համանգոյն զիտելեացն փոփոխականք, չմարթէին հաստատուն և անյեղլի գոլ, և չմարթէր մեզ հասու լինել ճըշմարտութեան և իմաստութեան, եթէ ոչ բնութիւնն իմքենին յայտնէր մեզ զհիմունս գիտութեան և առաքինութեան ։

Նա ինքն վերակեցուցեալ զմեզ 'ի զօրութենէ նկատելոյ զանհատս իւրաքանչիւր, ետ մեզ 'ի դասս դասս նկատել զնոսա, ամփոփանաւոր զմեզ 'ի տեսութիւն նախատիպ կերպարանաց էից [3] ։

1 Եպիքարմ. առ Դիոգենեայ Լայերտ. 'ի Պղատ. գիրք Գ. յօդ. 11 ։

2 Նոյն անդ յօդ. 10 ։ Պղատ. 'ի Թեէտ. հտ. 1. էջ 152 ։ Ցանկացք. գլ. 29. էջ 136 ։

3 Պղոտ. յղ. անդորր. իմաստաս. գիրք Ա. գլ. 3. հտ. 2. էջ 877 ։

Քանզի արդարև փոփոխելիք են զգալիքս, այլ հասարակաբար նկատեալ մարդ և ծառ և սեռք և տեսակք ոչ կրեն ինչ փոփոխումն. ապա ուրեմն տեսութիւնքս այսոքիկ անփոփոխելիք են, և ոչ է պարտ նկատել զնոսա որպէս լոկ տեսութիւնս մտաց անէնթակայս, այլ իսկապէս էութիւնս իրաց[1]: Նոյնպէս ծառ, և խորանարդդ զոր տեսանես, պատկերք են խորանարդին և ծառոյ՝ որ 'ի յաւիտենից գոն յիմանալի աշխարհին, 'ի գերապայծառ և 'ի գերամաքուր կայեանն՝ ուր բնակեն էութեամբ արդարութիւն, գեղեցկութիւն, առաքինութիւն և նախատիպք ամենայն էից և տեսակաց:

Նաև զի՞նչ ազդեցութիւն մարթիցի ունել թուոց և համեմատութեանց նոցա 'ի տիեզերս: Ներդաշնակութիւնն հաւասարիւ 'ի մասունս նիւթոյն, ըստ Պիւթագորայ ներգործէ հանապազ՝ 'ի պէսպէս կերպարանս և 'ի ձև փոփոխեալ զնոսա, խնամելով զյաջորդական արագ նորոգումն էից, եղծանելով զանհատս և պահպանելով ըզտեսակս. այլ հարկաւորեալ յամենայնի, որպէս կէսք կարծեն, ուղղել զմեծաքանչ գործս իւր ըստ մշտնջենակաց համեմատութեան թուոց. կամ որպէս այլք վարկանին, ըստ յաւիտենական գաղափարաց էից, որ են նման որպէս նախատիպք ձեռագործի: Ըստ նմին օրինակի պարտ է իմանալ

1 Պղատ. 'ի Պարմ. հտ. 3. գլ. 3. հտ. 1. էջ 422: էջ 132, 135: Կիկեր. Ճառք.

նոյ անձկացոյց կալ 'ի մի յերկուց աստի իրաց. 'ի յարդարել 'ի հոգւոջ իւրում զներդաշնակութիւնն զարմանալի որ ընդ տիեզերս է, և 'ի սաբանել յանձին իւրում զառաքինութիւնս՝ զորոց նկատէ զաստուածային էութիւնն :

Ահա զցան և ցիր բանս մատենիցդ 'ի մի ածեալ, ջանացայ պարզել քեզ զկարծիս պիւթագորականաց ումանց. այլ մթին է յոյժ և խորին վարդապետութիւն Թուոցդ, և ճարակ պարապորդ մտաց, որպէս զի 'ի բազմախուռն կարծիս պառակտել բազմաց :

Այլք զանազանեն զթիւս 'ի գաղափարաց և 'ի տեսակաց [1]. այլք նոյնս համարին զնոսա ընդ տեսակս, վասն բովանդակելոյ նոցա այլ և այլ անհատս [2] : Ոմն զթիւս զատ 'ի մարմնոց ասէ կալ, և այլ ոմն՝ թէ 'ի մարմինս անդ կան [3] : Ո՛երթ թուի նշանակել զտարր տարածութեան, գոլով զոյացութիւն կամ սկիզբն և ծայր մարմնոց՝ որպէս կէտք գծից և մակերևութից և ամենայն քանակի [4]. և մերթ զտեսակ ևեթ սկզբնական տարերաց [5] : Զոր օրինակ տարր հողոյ ունի զտեսակ քառակուսւոյ, իսկ հուր՝ օդ և ջուր զայլաձև եռանկեանց. և այլ և այլ ձևքս այսոքիկ բաւական

[1] Արիստոտ. բնազանց. գիրք ԺԱ. գլ. 1. հտ. Զ. էջ 953 :

[2] Պղատ. 'ի Փիլեբ. հտ. Զ. էջ 18 :

[3] Արիստոտ. անդ գլ. Զ. էջ 953 :

[4] Նոյն անդ գիրք Ե. գլ. 1 և 8. գիրք ԺԲ. գլ. 3 :

[5] Նոյն անդ գիրք ԺԲ. գլ. Ե :

են 'ի մեկնել զարգասիս բնութեան [1]: Եւ համառօտ իսկ ասացեալ, բառս այս խորհրդաւոր յաճախ եւս ըստ կամի նշանակէ զբնութիւն կամ զէութիւն սկզբնական տարերաց, կամ զտեսակս նոցա, կամ զհամեմատութիւնս, եւ կամ դարձեալ զգաղափարս կամ զնախատիպս մշտնջենակացս ամենայն էից:

Բայց մեզ դիւր, զի Պիւթագոր ոչ զօրութեամբ թուոց ասէր լեալ զամենայն, այլ ըստ համեմատութեան թուոց [2]: Իսկ ոմանք յաշակերտաց նորա [3] հակառակ այսր բացայայտ ասացուածոյ տալով թուոց իսկապէս գոյութիւն եւ ծածուկ զօրութիւն, համարեցան զնոսա պատճառս բաղկացուցիչս տիեզերաց, այլ զի անփոյթք եղեն 'ի պարզել եւ 'ի բացատրել զկարծիս իւրեանց, թողցուք զնոսա 'ի նմին յաննշմարելի մթութեան:

Մթութիւն եւ ներհակք, որ 'ի մատեանսդ յայդոսիկ ընդ առաջ լինին ընթեռնլեաց, յառաջ գան նախ 'ի խաւարէ՝ որով միշտ պաշարեալ կացցեն իմաստքն 'ի նոցանէ յուզեալք: Երկրորդ՝ յայլ եւ այլ նշանակութենէ բառից, էակ, ունելին, պատճառ, տարր, գոյացութիւն, եւ այլ ամենայն բառից՝ յորոց իմաստասիրականն նոցա կազմի

1 Տիմ. լոկր. առ Պղատոնի. հտ. 3. էջ 98:

2 Թէան. առ Ստոբէոսի ծաղկաքաղ բնաբ. գիրք Ա. էջ 27:

3 Արիստոտ. յղ երկնից, գիրք Գ. գլ. 1. հտ. 1. էջ 474: Նոյն բնազանց. գիրք Ա. գլ. 5 եւ 6. հտ. 2. էջ 845 եւ 848:

բարբառ[1]: Երրորդ՝ 'ի սեթևեթից որով երե-
ցագոյնք 'ի բնախօսաց պաճուճեն զվարդապե-
տութիւնս իւրեանց. քանզի 'ի չափ տաղի զձայնս
գրելով, առ երևակայութիւն բարբառին յաճախ
քան առ միտս[2]: Այլ չորրորդ՝ 'ի զանազանութե-
նէ ոճոյ բանից որ 'ի վարժարանս ուրեք կային:
Նազուանք յաշակերտացն Պիւթագորայ 'ի խըն-
դրել զպատճառս էից՝ անհնարոյց եղեն յէութիւն
գաղափարաց, որ 'ի միտս մեր են, և 'ի զգալի
աշխարհէ անցին յանզգաստից յիմանալին. և նո-
րածին գիտութիւն բնազանցութեան Նախամե-
ծար եղև այնուհետև քան զբնաբանականն: Այլ
վասն զի չև ևս հաստատեալ էին օրէնք խիստ
տրամաբանութեն՝ որ խափանէ զմիտս 'ի մոլորու-
թեանց[3], փոխանակեաց բանն իշխանաբար զվը-
կայութիւն իւր ընդ վկայութեան զգայու-
թեանցս: Նորութիւնն որ միշտ յառանձնաւո-
րութիւն բերի[4], ամենայն ուրեք ընծայէ զբազ-
մութի՛ և զփոփոխմունս. իսկ բանն որ հասարա-
կաբար սիրէ նկատել զամենայն, ամենայն ուրեք
գտանէ միութիւն և անշարժութիւն. և 'ի թը-
ռիչս հիացման երևակայութեան[5] զերաստիճա-

1 Արիստոտ. Բնազանց. գիրք Ե. գլ. 1, 2, ևն. հտ. 2. էջ 883, ևն: Նոյն յղ. հոգւոյ, գիրք Ա. գլ. 7. հտ. 1. էջ 627:

2 Նոյն նշանք օգ. գիրք Բ. գլ. 3. հտ. 1. էջ 555:

3 Նոյն բնազանց. գիրք Ա. գլ. 6. էջ 848: Նոյն անդ. գիրք ԺԱ. գլ. 4. էջ 957:

4 Նոյն անդ. գիրք Է. գլ. 16. էջ 324:

5 Պարմենիդ. առ Սէքստ. Եմպիրիկ. ընդդէմ տրամաբ. գիրք Է. էջ 392:

նեալ յիմանալեաց յիմանալիս, հասանէ մինչև 'ի բարձրութիւն դրութեան՝ յոր և խորագնին միտք դժուարաւ յառել կարեն ։

Մանաւանդ յեղէական վարժարանին արուեստ կամ համարձակութիւն հակաճառութեան զամենայն հնարս 'ի կիր արկ ։ Նոյն կրկին ազգք տեսութեանց սահմանեցան. միումն ենթակայ՝ մարմինք համդերձ զգալի որակօքն, իսկ միւսումն՝ գոյութիւն անենթակայ ։ Նստի յառաջ եկին կրկին ոճք. մին հաստատեալ 'ի վկայութիւն բանին և ճշմարտութեան՝ որպէս ասի, միւսն 'ի վկայութիւն զգայութեանց և կարծեաց ¹. և երկաքանչիւր գրեթէ զնոյն կալան շաւիղ ։ Իմաստասէրք որ յառաջագոյն վկայութեամբ զգայութեանցն վարեցան, կարծէին 'ի ձեռն երկուց ներհակաց յառաջ ածել բնութեանն զարգասիս, որպէս 'ի ձեռն հողոյ և հրոյ, այլովքն համդերձ ։ Հանգոյն իմն և իմաստասէրք որք բանին և եթ վկայութեամբ վարեցան, նկատէին 'ի տեսութիւնս մտաց իւրեանց զգոյութիւն և զչգոյութիւն, զսահմանաւորն և զանսահմանն, զմին և զբազումն, զդադարն և զկոճատ ², այլովքն համդերձ ։

Մնայր դժուարութիւն մեծ յենթակացուցանել զիմանալի տեսակսն, և 'ի միաբանել զբնազանցութիւն ընդ բնազննութեան ։ Իսկ այնպիսի

¹ Արիստոտ. յղ. բն. լսելեաց, գիրք Ա. գլ. 6. հտ. 1. 322 ։

² Նոյն բնաղանց. գիրք Ա. գլ. 8. էջ 846. գիրք ԺԲ. գլ. 1. էջ 971 ։

մթին բանիւք զմիաբանութիւնս զայս հնարեցան առնել, զի դժուարին իսկ է 'ի միտ առնուլ՝ եթէ բնազանցօրէն թէ բնազննաբար ճառիցեն։ Տեսանիցես Պարմենիդեայ մերթ բառնալ զամենայն ստեղծմունս և եղծմունս էից 'ի միջոյ [1], և մերթ վիճել՝ զի հող և հուր պատճառք իցեն ամենայն արգասեաց [2]։ Գտցես և զայլս որք անմիաբանելի համարին զզգայութիւնս ընդ բանին, և մնացին ևեթ տեսութեան միտ եդեալ՝ վարկանին զզգալիքս առ աչօք երևոյթս, և աղբիւրս անսպառս պատրանաց և մոլորութեանց։ Մինչև միոյ ուրումն 'ի նոցանէ ասել. Չիք ինչ ուրեք. և եթէ գոյր ինչ, չէր մարթ գիտել զայն. և եթէ մարթէր գիտել, չէր մարթ զգալ զայն [3]։ Իսկ այլոյ ուրուք 'ի միտ եդեալ՝ զի չէ պարտ մերժել ինչ և ոչ հաստատել, թերահաւատէր ընդ բանս իւր, և նշանացի խօսէր [4]։

Պարտ է ինձ յաւելուլ և օրինակ զձևոյ տրամաբանութեան նոցա, և առնում զայն 'ի Քսենոփանեայ՝ որ եղէական աղանդոյն եկաց պետ։ Ի չգոյէ գոյանայ, ասէ, և ոչ ինչ [5]։ Նոյն օրի-

1 Արիստոտ. յղ. երկնից, գիրք Գ. գլ. 1. հտ. 1. էջ 473։

2 Նոյն բնազանց. գիրք Ա. գլ. Ց. էջ 847. յղ. բն. լսելեաց, գիրք Ա. գլ. 6. հտ. 1. էջ 321։

3 Գործիա առ Արիստոտելի, հտ. 1. էջ 1248։ Իսոկր. Հեղինէ ներբ. հտ. 2. էջ 118։

4 Արիստոտ. բնազանց. գիրք Դ. գլ. Ց. հտ. 2. էջ 878։

5 Նոյն յղ. Քսենոփան. հտ. 1. էջ 1241։ Կիկեր. յղ. բնութեան դից, գիրք Ա. գլ. 11. հտ. 2. էջ 406։ Գաթէօ, պատմութիւն նախկին պատճ. հտ. 1. էջ 231։

Նոցա այսմիկ, զոր ամենայն աշակերտք նորա հաստատեն, զհետ գայ՝ զի որ ինչ էն, 'ի յաւիտենից է. և որ 'ի յաւիտենից է՝ անսահման է, ոչ ունելով սկիզբն և վախճան. և որ անսահմանն է՝ միակ է, զի եթէ միակ չէր՝ հարկ էր նմա բազում լինել, և բազումքն լինէին միմեանց սահման, և ոչ ևս լինէր նա անսահման. իսկ միակն միշտ նոյն է։ Արդ էն միակ և անսահման և միշտ նոյն՝ պարտի անշարժ գոլ, զի չմարթի խլրտել նմա ոչ 'ի դատարկի՝ որ չէն ինչ, և ոչ 'ի լիութեան՝ զոր իւրեն լնու։ Պարտ է նմա և անփոփոխ գոլ. զի թէ մարթէր և դոյզն ինչ կրել նմա փոփոխումն, պատահէր ինչ 'ի նմա որ չգոյր յառաջագոյն, և եղծանէին օրէնքն կարևոր՝ թէ 'ի չգոյէ գոյանայ և ոչ ինչ[1]։

Արդ յանսահման էակս յայս որ բովանդակէ զամենայն, և որում կից է անմեկնելի իմացականութիւն և յաւիտենականութիւն[2], չիք յօդուած ինչ մասանց, ոչ զանազանութիւն տեսակաց, ոչ աճումն, և ոչ եղծումն[3]։ Այլ եթէ մարթ իցէ միաբանել զանփոփոխութիւնս զայս ընդ յարափոփոխ բնութեան էից։ Փոփոխութիւնքն այնոքիկ առաջօք են, ասէր Քսենոփանէս. տիեզերք

1 Բրուք. պատմ. իմաստաս. հա. 1. էջ 1148։

2 Արիստոտ. բնագանց. գիրք Ա. գլ. 5. էջ 847։ Դիոգ. լայերտ. գիրք Թ. յօդ. 19։ Սեքստ. Եմպիրիկ. պիւռոնական կարգադր. գիրք Ա. գլ. 33. էջ 59։

3 Արիստոտ. յղ. երկնից, գիրք Գ. գլ. 1. հա. 2. էջ 473։

ընծայեն մեզ տեսարան շարժման. տեսարանն կայ, այլ շարժումն նորա զգայութեանցս մերոց են արգասիք: Իսկ Զենոն ասէր, թէ չիք և անհնարին իսկ է շարժումն. և ցուցակութիւն բանիցն այնպիսի ածէր, ընդ որ զարմանային և կակէին հակաճառքն [1]:

Տես ինձ արդ, որդեակ, որպիսի խաւարամած լոյս ծագեցին յաշխարհ արքն դերահռչակք, որոց թուէր զաւամբ ածեալ զմտութիւն [2]: Բանն՛ կորանաց լինէր առիթ իմաստասիրական մակացութիւն, եթէ երկբայութեամբք սկսեալ [3] 'ի նորանշան վճիռս յայտնիկ զկայ առնայր: Բայց զվճռօղան անքասիր արասցուք. քանզի բազումք 'ի նոցանէ ճշմարտասէրք էին, և կարծէին 'ի յայտ բերել զճշմարտութիւն՝ հրաժարեցուցանելով զգիտութիւնս 'ի նիւթոյ, և մոլորեցան վստահացեալք 'ի բանն՝ զորոյ ոչ գիտէին զսահմանս: Իսկ իբրև սպառեալ զմոլորութիւնս՝ առաւել իմաստնացան, եւտուն զանձինս նովին եռանդեամբ 'ի նոյն խնդիրս, քաջադէպս զնոսա համարեալ 'ի կրթել զմիտս, և 'ի ճշգրտել զտիպս իրաց 'ի միտս:

Դարձեալ և պարտ է ասել համարձակ, զի և յոգունք յիմաստասիրաց աստի, անարժանք

1 Արիստ. յղ. բն. լսելեաց, գիրք Զ. գլ. 14. հա. 1. էջ 395: Նոյն յղ. պերճախօս. գիրք Ը. գլ. 8. հա. 1. էջ 274:

2 Նոյն բնազանց. գիրք Ա. գլ. 2. էջ 841:

3 Նոյն անդ. գիրք Գ. գլ. 1. էջ 858:

պատկառելի անուանն, 'ի փորձ ևեթ զօրութեան իւրեանց մտին յասպարէզ առ 'ի կանգնել յաղթանակ յամօթ յաղթողին և պարտելոյն առհասարակ ։ Այլ քանզի բանին՝ կամ մանաւանդ բանականի արուեստին հանգոյն այլոց արուեստից եղև տղայութիւն, սահմանք տարտամք և խառնավար իմաստք բառից աջողակ կամ կորովի ըմբռնացն զէնս նորանորս կազմէին միշտ ։ Գրեթէ հասարակ մեք յաւուրսմն, յորս 'ի ցոյց համանշանակ մարթելոյ զոլ բառիցս փ և ճաղամ, վիճեալ պնդէին՝ զի դու մի զոլով իբրև մարդ, երկու իցես իբրև մարդ և երաժիշտ [1] ։ Այլ մնոտի և անտեղի խնդիրքս այսոքիկ անգոսնէին արդ, իմաստակաց ևեթ պահեալ ։

Մնայ ինձ բացատրել քեզ և այլ իմն կարծիս, զարմանաւորութեամբն և համբաւով կարծողացն երևելի ։

Ռամիկն ոչ այլ ինչ տեսանէ շուրջ զերկրաւս յորում բնակէ, բայց զխորանաձև յարկս զայս՝ լուսապայծառ 'ի տունջեան, և աստեղազարդ 'ի գիշերի. անդ սահմանին նմա տիեզերք ։ Այլ ըստ իմաստասիրաց ոմանց անսահմանն են տիեզերք. և գրեթէ յաւուրս մեր յայն անբաւութիւն ածեալ, մինչև պակնուլ մտաց ընդ այն ։

Համարեցան նախ բնակիչս 'ի լուսնի, և զաստեղս մի մի աշխարհս զոլ. և զաշխարհս դար-

[1] Պղատ. 'ի Փիլեբ. հտ. Գ. էջ 14 ։

ձևալ անկթիւ, զի և ոչ մի 'ի նոցանէ եղբ կամ սահմանն է այլոց ¹ : Այր ասպարէզ լայն և ընդարձակ բանայ առաջի մարդկեղէն մտաց : Ընթա ընդ այն յամենայն յաւիտեանս, զգեցիր զթևս արուսեկին, թռիր յերևակն և ընդ արփին որ 'ի վերոյ քան զնա տարածեալ, և գտցես միշտ նորանոր պարունակս, նորանոր գունտս, և աշխարհս զմիմեամբք կուտակեալ : Ամենայն ուրեք գտցես զանսահմանն, 'ի նիւթն, 'ի վայրն, 'ի շարժմանն, 'ի թիւ աշխարհացն և աստեղաց՝ որ են նոցա 'ի զարդ. և յետ բիւրիցս բիւրուց ամաց հաշիւ կէտ մի յանբաւականաւալ սահմանս բնութեան ծանիցես : Ապա, քանզի յաճախեաց այսուիկ յաչս մեր բնութեանն մեծութիւն. և եթէ արդարև հոգիս մեր ընդ տեսութիւնս մտաց իւրոց ընդարձակի, և հաւաստարէ իմն իրաց որոց հասու լինի, քանզի 'ի դէպ է նմա մեծամտել՝ զի 'ի խորս յայսոսիկ անհուն եհաս :

Յակ իմ լի եղեալ զարմացմամբ, ասեմ. Այո 'ի դէպ իցէ նմա մեծամտել. և զմէ, ձայն ծերունւոյդ պատկառելի : Մինչ իմ ընկճիմ յերեսաց անսահմանն մեծութեանն, առ որով ամենայն ինչ 'ի չիք դառնան. դու, ես, և ամենայն մարդիկ ոչ ևս ինչ թուին յաչս իմ, այլ ճճիք խորատայգք

1 Քանոնք. առ Դիոգինեայ լայերտ. գիրք Թ. յօդ. 19 : Պլուտ. յղ. անդորր. իմաստաս. գիրք Ա. գլ. 3. հա. 2. էջ 875. գլ. 5. էջ 879. գիրք Բ. գլ. 13. էջ 888 : Կիկեր. յղ. կատար. գիրք Բ. գլ. 31. հա. 2. էջ 136 : Ցիշատ. բանաս. կաճառ. հա. 9. էջ 10 :

յովկիան անդրա. ուր Թագաւորք և աշխարհակալք ոչ ինչ ընդհատ են յայլոց մարդկանէ, բայց զի կամին ինչ առաւել քան զնոսա յուզեն զջուրցն յորս Թաղեալ կան: Օպասասիկ լսելով Կալլիսթայ՝ հայեցեալ յնա, և վայրիկ մի զմտաւ իւր յինքն ամփոփեալ, կալաւ ապա զձեռանէ իմ մէ և ասէ. Ո՛հ որ նշմարէ զանսահմանն, որդեակ, հաղորդ է մեծութեանն որ պակուցանէ զքեզ: Այս յաւաջ ածեալ զբանսն, ասէ.

Ի ձեռագէտս ոլք զամենայն կեանս իւրեանց պարապեցին յեղծանել և 'ի ստեղծանել զաշխարհս, Լեւկիպպոս և Դեմոկրիտոս հերքեալ 'ի բաց զԹիւս, զտիպս իրաց, զերաժշտական համեմատութիւնս, և զամենայն կազմածս մեքենայից զոր բնազանցութեան մինչև ցայնժամ կանգնեալն էր, ոչ այլ ինչ պատճառս էից ընկալան ըստ օրինակի իմաստասիրաց ոմանց, բայց զդատարկութիւն և զհիւլեայ. և զհիւլեայն իսկ յամենայն զերազանցութեանցն կապտեալ, զձև և զշարժումն եթէ Թողին նմա[1]: Ըստ նոցին իսկ բանիցն Լեւկիպպեայ և Դեմոկրիտեայ:

Անսահման են տիեզերք, անԹիւ աշխարհք 'ի նմա բնակեն, և յորձանք որ համապազ ծնանին և կործանին և անդրէն դարձեալ գոյանան[2]: Արդ

1 Մոշեմ. 'ի Քուտուորթ. գլ. 3. յօդ. 18. հտ. 1. էջ 30: Բրուք. պատմ. իմաստ. հտ. 1. էջ 1173:

2 Դիոգ. Լայերտ. գիրք Թ. յօդ. 30, 45: Նոյն անդ յօդ. 44: Բրուք. անդ էջ 1175: Պաթէօ, պատմ. էջ 363:

ոչ եթէ մասք ինչ գերագոյն իշխեն մեծամեծ յեղափոխութեանցս, այլ ամենայն ինչ մեքենական և պարզ օրինօք ներգործի 'ի բնութեան։ Նմանիս գիտել թէ որպէս մի յաշխարհահացս կազմիցի. զմտաւ ած մատոյնս մարմնոց անթիւս, միանջենակացս, անբաժինս, անայլայլելիս, ամենադամնս 'ի ձև և 'ի քանակ, որ խառն 'ի խուռն օձանելով երթևեկեցեն յանհուն դատարկութեան[1]։ Որդ 'ի յանձախ և յուժգին բաղխմանէ նոցա ընդ միմեանս ստուարագոյնք 'ի մասանց միղեալ վարին 'ի մի ուրեք, գործելով միջակէտ յորձանացն. իսկ նրբագոյնք շուրջ 'ի բաց խուսեն, այլ քան զայլս տարակացք։ Այս յանցանել ժամանակաց աստղինք կազմեն զհող և ըղջուր, և նրբագոյնք զօդ և զհուր։ Հուր 'ի թափանցիկ և 'ի թեթև զնտակաց յօդեալ պատի զերկրաւ իբր զպարունակ լուսաւոր. օդ յուզեալ միանջենաւոր հաստատելը մասնականց մարմնոց որ 'ի ստորէ 'ի վեր ամբառնան, ուղխ իմն գործի սրընթաց, և ուղխօրէն ձգէ ընդ իւր զաստեղս՝ որ մի ըստ միոջէ կազմին 'ի ծոց նորա[2]։

Զամենայն ինչ 'ի բնաբանութեան որպէս 'ի բարոյականին մարթ է մեկնել մեքենական յար և նման օրինօք, առանց ինչ իմացական պատ-

1 Արիստոտ. յղ. ծննդ. գիրք Ա. գլ. 1. հտ. 1. էջ 493։ Նոյն յղ. երկնից, գիրք. գլ. 4. էջ 478։ Կիկեր. յղ. բնութեան դից. գիրք Ա. գլ. 24. հտ. 2. էջ 416։

2 Պլուտ. յղ. անդորր. իմաստաս. գիրք Ա. գլ. 4. հտ. 2. էջ 878։

ճառի ։ Ի հիւղեայցն յօդուածոյ կազմի գոյացութիւն մարմնոյ . անդստին 'ի ձեւոյ նոցա և 'ի դասակարգէ յառաջ գան ցուրտ և տօթ , գոյնք և ամենայն այլակերպութիւնք բնութեան[1] . անդստին 'ի շարժմանէ նոցա գոյանան և փոփոխին անդադար և եղծանին էքս ։ Այլ քանզի կարևոր իսկ է շարժումն նոցա , նմին իրի և բաշխս կոչեմք զայն և ճակատագիր[2] ։ Զգացմունք մեր և գաղափարք ներգործին 'ի մեզ յաղօտ պատկերաց՝ որ յէից իւրաքանչիւր դիմեն 'ի զգայարանս մեր[3] ։ Հոգիս մեր վախճանի ընդ մարմնոյ[4] . զի է նա համազօր հրոյ յօդեալ 'ի նուրբ գնտակաց՝ զորոց լուծանէ մահ զյօդուած[5] ։ Այլ վասն զի չիք ինչ իրապէս 'ի բնութեան բաց 'ի հիւղեայց և 'ի դատարկութենէ[6] , հարկ է ապա խոստովանել՝ զի առաքինութիւնք կարծեօք են թէ զանազանին 'ի յոռութեանց[7] ։

Երկիր պագ Աստուծոյ , որդեակ , և ողբա առաջի նորա զմոլորութիւնս մարդկեղէն մտաց , և

1 Արիստոտ . բնազանց . գիրք Ա . գլ . 4 . հտ . 2 . էջ 845 ։ Դիոգ . Լայերտ . գիրք Թ . յօդ . 72 ։

2 Ստոբ . 'ի ծաղկաքաղ բնաբ . գիրք Ա . գլ . 8 . էջ 10 ։

3 Դիոգ . Լայերտ . անդ . յօդ . 44 ։ Պլուտ . յղ . անդորր . իմաստաս . գիրք Դ . գլ . 8 . էջ 899 ։ Կիկեր . յղ . բնութեան դից , գիրք Ա . գլ . 38 . հտ . 2 . էջ 429 ։

4 Պլուտ . անդ . գլ . 7 ։

5 Արիստոտ . յղ . հոգւոյ , գիրք Ա . գլ . 2 . հտ . 1 . էջ 619 ։

6 Սեքստ . Եմպիրիկ . պիւռոնական կարգադր . գիրք Ա . գլ . 30 . էջ 54 . գիրք Է . էջ 399 ։

7 Քուտուորթ . յղ . արդար . և զգօն . յօդ . 2 . հտ . 2 . էջ 629 ։ Պրուք . պատմ . իմաստ . հտ . 1 . էջ 1199 ։

ուխտս զիր նախ լինել առաքինի գէթ որպէս զի-մաստասէրսն՝ որոց վարդապետութիւն նկրտէր յերգծումն առաքինութեան ։ Ո՛չ է ոչ 'ի մատեանս անծանօթս բազմաց, և ոչ 'ի ստեղծս ցնորից մը-տաց կամ եռանդեան ոգւոյ կամ ըղձից հանճա-ւոյ ուսանելի է զկերպարանս բարոյականին՝ զոր ունէին նոքա, այլ 'ի գնացս նոցա և 'ի գիրս՝ յորս զերծք յամենայն կրից զճշմարտութիւն ևեթ խնդրեին, և ուր ոչ յայլ ինչ ուշ եդեալ բայց յօգուտ հասարակաց, մատուցանեն բարոյակա-նին և առաքինութեան զհարկ մեծարանացն՝ որ յամենայն ժամանակի և առ ամենայն ազգս ըն-ծայի նոցա ։

ԳԼՈՒԽ ԼԱ.

Ի նոյն մատենադարան աթենացւոյն յաղագս աստեղաբաշ-խութեան և աշխարհագրութեան ։

Եւ վախճանեալ զբանս իւր Կալլիաս մեկ-նեցաւ ։ Եւ ասէ ցիս Եւկղիդէս . Ի բազմաց հե-տէ խոյզ և խնդիր առնեմ մատենիցն Պետրոնի հիմերացւոյ 'ի Սիկիլիա . զի սա ոչ միայն բազում աշխարհս մուծանէ, այլ և զթիւ նոցա իշխէ սահ-մանել[1] ։ Եւ գիտիցես քանի՛ աշխարհք են ըստ նորա կարծեացն . հարիւր ութսուն և երեք ։ Ըստ

1 Պլուտ. յղ. Թերութեց պատգամաց, հա. Զ. էջ 422 ։

օրինակի եգիպտացւոց համեմատէր նա զանխե-
զերս եռանկեան[1], վաթսուն աշխարհս 'ի կողմն իւրաքանչիւր զետեղեալ, և մէն մի յերեսին ան-կիւնս ։ Ըստ օրինաց շարժման, որով ազգք ինչ կաքաւուց չափին առ մեզ, աշխարհացս այսոցիկ յուշիկ շրջագայեալ՝ հասանեն առ միմեանս, և փոխանակեն 'ի տեղի իրերաց ։ Միջոց եռանկեանն է վայր ճշմարտութեան . անդ համեմատութիւնք և նախատիպք էից՝ որ եղեն և որ լինելոց են՝ կան հաստահիմն անշարժք . և շուրջ զպարզ եա-կօքս կան յաւիտեանք, յորոց բղխեալ ժամանակ որպէս անսպառ վտակ հոսէ և բաշխի 'ի հոյլս աշխարհացն[2] ։

Ի պիւթագորական կարգաւորութենէ թուոց ունիմ սկիզբն կարծիքս այս . և ինձ թուի . . . Այս մինչ դեռ նա զայս ասէր, ընդմիջեցի և ա-սեմ . Դուք իմաստասէրքդ ոչ ինչ երկբայիմ, զի նախ քան զյաճախել զթիւ բազմախուռն աշ-խարհացդ՝ տեղեկացեալ գիտէին զամենայն որ ինչ 'ի մերումս յայսմիկ կան . և չգուցէ իսկ ար-դեօք զերկնաւոս մերով մարմին, զորոյ ոչ զննեալ իցէ նոցա և սահմանեալ զէութիւն, զչափ, զձև և զշարժումն ։

Աւկղիդէս ասէ . Յայժմ իսկ քեզէն 'ի միտ առցես զայն ։ Ձևեա 'ի միտս քո բոլորակ կամ անուաձև ինչ, որոյ շրջանակ քսանևութիցս մեծ

1 Պղուտ. յիսիս և յՈսիր. հտ. 2. էջ 373 ։

2 Նոյն յղ. Թերութեանց պատգամաց, հտ. 2. էջ 122 ։

լոյծ քան զերկիր, և ամփոփիցէ 'ի ծոց իւր հնար ամենայն : Ի կենդանեաց անասնոյն, որոց տրամադրեալ հաւասար է երկրայնոյս, ճառագայթեն ուղիղք լուսոյ 'ի լուսաւորել զաշխարհս [1] : Այս է նկարագիր արեգական : Իսկ զլուսնոյ զնոյն խնա, համարեալ զչըմբռնելութիւն նորա իննեւտասանեպատիկ մեծ քան զերկիրս [2] : Նայագայլայատագոյն եւս պարզեցից քեզ. Հրայլին մնացունք որ ամենանման յերկրէս՝ համահաւասարեալ 'ի տունջեան 'ի մի կէս երկնից՝ կազմեն անոր զարեգակն, և 'ի գիշերի 'ի բաղումն կէսն՝ փոխելով յատուեղս : Նայց զի սողոխքս այսորքիկ հրայլինք ղիւրատապարաք են՝ նորոգլին համապատաղ, պատրաստել մեզ օր ըստ օրէ նոր արև 'ի տունջեան, և յիւրաքանչիւր գիշերի աստեղս նորս [3] : Որով եղև երբեմն առ 'ի չգոյէ ճարակի չլուսաւորել արեգական զամենօրեայ մի ժամանակ [4] : Այնն իրի և պատի նա զերկրաւ. զի եթէ անշարժ էր, փոյթ սպառէին սողոխքն՝ որովք ճարակի [5] :

Նակ իմ պշուցեալ զարմացմամբ ընդ երեսս Նուկղիդեայ, ունէկն ոնէր նմա. և իբրև վախճա-

1 Պլուտ. յղ. անդորր. իմաստաս. գիրք Բ. գլ. 20. հտ. 3. էջ 889 : Ստոբ. ծաղկաքաղ բնաբ. գիրք Ա. էջ 55 :

2 Պլուտ. անդ գլ. 25. էջ 891 :

3 Պղատ. յղ. հաս. գիրք Զ. հտ. 2. էջ 498 : Պլուտ. անդ գլ. 24. էջ 890 : Քսենոփ. առ. Ստոբէոսի ծաղկաքաղ բնաբ. գիրք Ա. էջ 54 : Պրոկղ. պատմ. իմաստաս. հտ. 1. էջ 1154 :

4 Պլուտ. անդ. Ստոբ. անդ էջ 55 :

5 Արիստոտ. նշանք օդ. գիրք. Բ. գլ. 2. էջ 551 :

նեաց զբանսն, ասեմ. Լուեալ եմ զմիոջէ յաղգաց Մարգիտոյ այնպէս թանձրամիտ գոլ, զի անդր քան զքառեակն թիւ համարել ոչ կարէ[1]. միգուցէ 'ի նմանէ զօտարացուցիչս զայսոսիկ բերես ինձ զխոսութիւնս : Եւկղիդէս ասէ. Ոչ այդպէս, այլ բազումք յերևելագոյն իմաստասիրացն մերոց աւանդեն զայսոսիկ. և ընդ նոսին Անաքսիմանդր և Հերակղիտոս, յորոց երիցագոյնն երկերիւր ամաւ յառաջ քան զմեզ եկաց : Յետ նոցա և այլ կարծիք եղեն, ոչ իբրև զառաջինսն անտեղիք, բայց դարձեալ անստոյգք, և կէսք յայնցանէ խոտելեցուցին զամբոխսն : Անաքսագոր որ ընդ հարս մեր եկաց, ուսուցանէր՝ թէ լուսին երկիր է համագոյն իմն մերումս, և արեգակն վէմ հրացեալ. վասն որոյ կասկած ամպարշտութեան լեալ զնմանէ, հալածեցաւ յԱթենայ[2] : Քանզի ռամիկն զերկոսին լուսաւորսն աստուածս համարէր. և կրտսերագոյնք յիմաստասիրաց երբեք երբեք համաձայնելով նմա[3], ամբոքեցին զնորա հաւատ վրէժխնդրութիւն որ ներէ զամենայն որոց ողոքէին զնա :

Հարցի զնա, և ասեմ. Եւ ուստի՞ յայտ է, զի լուսինն իբրև զերկիրս իցէ : Եւկղիդէս ասէ. Ոչ

1 Արիստոտ. առաջարկ. 15. հտ. 2. էջ 752 :

2 Քսենոփ. յիշատ. գիրք Դ. էջ 815 : Պղատ. պատասխ. հտ. 1. էջ 26 : Պլուտ. յղ. սնապաշտութն, հտ. 2. էջ 169 : Դիոգ. լայերտ. գիրք Բ. յօդ. 8 :

3 Պղատ. յղ. օր. գիրք Է. հտ. 2. էջ 821, և այլուր :

է յայտ, այլ կարծիք են. քանզի այսպէս ուրուք գուշակեալ զբծացն որ 'ի նմա երևին, թէ մարթի նոցա ստուերս զոլ լերանց, եթէ գուցեն 'ի նմա լերինք, ասուի այլք առնն հաստատել՝ թէ իցեն 'ի լուսնի լերինք և ձորք, գետք, դաշտք և բազմութիւն քաղաքաց[1]: Ապա յետ այնորիկ պարտ էր հաստատել՝ թէ ոչք բնակիչք քաղաքացն էին: Ըստ Քսենոփանեայ հանգոյն մերում է նոցա կենցաղ[2]. և ոմանք յաշակերտացն Պիւթագորեայ համարէին գեղեցկագոյն քան զմերս զոլ զտունկս որ անդ, և զկենդանիս ստուարագոյնս հնգետասանապատիկ քան զմերս, և զաւուրն հնգապատիկ երկայնագոյն[3]: Իսկ ես ասեմ. Անշուշտ ապա և հանճար բնակչացն անդ հնգետասանապատիկ գերազանց քան զերկրականացս իցէ. անխորժելի ինձ այս կարծիք: Այլ քանզի բնութիւն ճոխագոյն է բազմակերպ զանազանութեամբ քան սեռիւք էից, հաճոյ թուի ինձ բաշխել յայլև այլ մոլորակս ազգս մարդկան՝ որ միով և երկու և երիւք և չորիւք զգայարանօք առաւելուցուն քան զմեզ. և ապա համեմա-

1 Պլուտ. յղ. անդորր. իմաստս. գիրք Բ. գլ. 13 և 25. հտ. 2. էջ 888 և 891: Ստոբ. Ծաղկաքաղ բնաբ. գիրք Ա. էջ 60: Աքիլլ. Տատ. Ներած. առ Պետաւիոսի, հտ. 3. էջ 83: Կիկեր. ակադ. 2. գլ. 39. հտ. 2. էջ. 51: Պրոկղ. 'ի Տիմ. գիրք Դ. էջ 283:

2 Քսենոփան. առ Լակտանտիոսի կարգադր. գիրք Գ. գլ. 23. հտ. 1. էջ 253:

3 Պլուտ. անդ գլ. 30. հտ. 2. էջ 892: Ստոբ. անդ: Եւսեբ. պատրաստ. աւետ. գիրք ԺԵ. էջ 849:

տեալ զՀանճար նոցա ընդ այնոսիկ որ յԻտալիա պայծառացան, Թշուառագոյնս յոյժ զատանեմ առ նոքօք զՀոմերոս և զՊիւթագոր։ Եւկղիդէս ասէ. Դեմոկրիտոս խնայեաց զփառս նոցա 'ի Թշնամանաղիր զուգակշռոյդ. և խելամուտ ար- դեօք գոլով գերազանցութեան մարդկան սեռիս, նոյն ամենայն ուրեք համարեցաւ զանհասս նո- րա։ Ուստի ըստ նորին կարծեաց, համաքունք իրերաց մարդիկ և նովին կենցաղով ձաՀաւո- րեալք ամենայն ուրեք բնակեմք, յերկրի աստ, 'ի լուսնի անդ, և յամենայն աշխարհս որ ընդ տիեզերս իցեն [1]։

Օչէս խնամակալս մոլորակաց կերպարանեմք Հեծեալ 'ի կառս, զի պատուականագոյնք են առ մեզ կառք։ Ահա եգիպտացիք 'ի նաւս զնոսա կա- ցուցանեն, զի զբեթէ ամենայն երթևեկ նոցա ընդ Նեղոս է [2]. վասն որոյ Հերակղիտոս զարե- գակն և զլուսին նաւաձևս կերպարանէ [3]։ Այլ ես երկարապատում առնեմ զխօսս և զյախուռն կարծիս զձևոյ աստեղաց. այժմ զբեթէ ամենե- քեան միաբանին գնտաձևս գոլ նոցա [4]։ Ահա զչա- փոյ նոցա, ոչ բազում ինչ ժամանակք են՝ զի

1 Կիկեր. ակադ. Դ. գլ. 17. Հտ. Դ. էջ 25։

2 Կուպերոս Հարպոկր. էջ 14։ Քէյլքիւս, Հաւաք. Հնու- թեց, Հտ. 1։ Մոնֆոքոն. մեկն. Հնութեանց յաւել. Հտ. 1։

3 Պլուտ. յղ. անդորր. իմաստաս. գիրք Բ. գլ. 22 և 27։ Աքիլլ. Տատ. Ներած. գլ. 19. առ Պետաւիոսի, Հտ. 3. էջ 82։

4 Արիստոտ. յղ. երկնից. գիրք Բ. գլ. 8. Հտ. 1. էջ 461. գլ. 11. էջ 463։

Անաքսագոր զարեգակն մեծագոյն քան զՊեղոպոնէս համարէր, և Հերակղիտոս ոչ ինչ աւելի քան զոտնաչափ մի զտրամագիծ նորա [1]:

Սենեկ. Խոստովանես զիս 'ի հարցանելոյ զչափուց այլոց մոլորականցն. այլ գտանես ծանօթք իցեն իւրաքանչիւր նոցա կայեանք յերկինս: Աւելորդէս աստ. Յոյժ աշխատ եղեն իմաստասէրք մեր 'ի սահմանել զկայս նոցա, և յայլ և այլ հերձման կարծիս: Կէսք 'ի վերոյ քան զերկիր զետեղեն զլուսին, զփայլածու, զարուսեակ, զարեգակն, զհրրատ, զլուսընթագ և զերևակ. 'ի սոյն եղեն կարծիս 'ի սկզբանէ եգիպտացիք [2] և քաղդէացիք [3], և Պիւթագոր զսոյն վարեմի կարգաւորութիւն եմոյծ յԻտալիա [4]: Այլ որ այժմս առ մեզ հասարակաց կարծիք՝ այսպէս կարգաւորեն զմոլորակս. լուսին, արեգակն, փայլածու, արուսեակ, հրատ, լուսընթագ և երևակ [5]: Ի հուչակ անուանն Պղատոնի, Եւդոքսեայ և Արիստոտելի [6] մեծարի կարգաւորութիւնս այս, թէպէտ և վեր 'ի վերոյ ինչ զանազանի 'ի միւսմէն:

1 Պլուտ. յղ. անդորր. իմաստասս. գիրք Բ. գլ. 21. հտ. էջ 890:

2 Դիոն. պատմ. հռոմ. գիրք ԼԷ. էջ 124:

3 Մակրոբ. անուրջք Սկիպ. գլ. 19: Ռիչչիոլի ալմաճ. գիրք Թ. էջ 280:

4 Պլին. գիրք Բ. գլ. 22. հտ. 1. էջ 86: Կենսոր. յղ. աւուր ծննդ. գլ. 13: Պլուտ. յղ. ծննդ. հոգ. հտ. 2. էջ 1028: Ռիչչիոլի անդ. գլ. 2. էջ 277:

5 Պղատ. 'ի Տիմ. հտ. 3. էջ 38: Նոյն յղ. հասա. գիրք Ժ. հտ. 2. էջ 616: Պլուտ. յղ. անդորր. իմաստասս. գիրք Բ. գլ. 15: Նոյն յղ. աշխարհն առ Արիստոտելի, հտ. 1. էջ 602:

6 Պրոկ. 'ի Տիմ. գիրք Դ. էջ 287:

Բանզի խոնիր զանազանութեանն է 'ի գիւտս մինչ և եթ եգիպտացւոցն, զոր Յոյնք հնարին յեղանակաւ իմն յափշտակել 'ի նոցանէ ։ Աստեղաբաշխք եգիպտացիք խելամուտ եղեն, զի փայլածուն և արուսեակն անմեկնելիք յարեգականէ [1], զնոյն շարժումն ընդ նմա գործելով, պատին ևս զնովաւ անդադար [2] ։ Ըստ Յունաց, Պիւթագոր նախ գիտաց՝ զի աստղն Հերայ կամ Աստղկան բազմափայլ՝ որ 'ի մուտս արեգականն ծագէ զիշերավար, նոյն ինքն է երևեալն յելս արևու [3] ։ Այլ վասն զի պիւթագորականք և այլոց աստեղաց և մոլորակաց զնոյն ընծայեն կրկնակ երեւումն, ապա ոչ 'ի խելամտութենէ անտի որ ընծայի Պիւթագորայ 'ի պարծանս՝ ծանուցաւ արուսեկին շուրջ զարեգականբ հոլովումն ։ Այլ ըստ գիւտից քրմացն եգիպտացւոց հարկ է արուսեկին և փայլածուի մերթ 'ի վերոյ և մերթ 'ի ներքոյ արեգական երևել, և մարթ իսկ է առանց իրիք անտեղութեան ընծայել նոցա զկրկնակ դիրսն [4] ։ Աան որոյ եգիպտացիք ոչ ինչ փոփոխումն արարին 'ի վաղնջական կարգաւորութիւն

1 Տիմ. լոկր. առ. Պղատ. հտ. 3. էջ 96 ։ Կիկեր. անուրջք Սկիպ. հտ. 3. էջ 412 ։

2 Մակրոբ. անուրջք Սկիպ. գլ. 19 ։

3 Դիոգ. լայերտ. գիրք Գ. յօդ. 14 ։ Փաւորին. առ նմին, գիրք Թ. յօդ. 23 ։ Ստոբ. ծաղկաքաղ բնաբ. գիրք Ա. էջ 55 ։ Պլին. գիրք Բ. գլ. 8. էջ 75 ։ Յիշատ. բանաս. կաճառ. հտ. 14. էջ 379 և 478 ։

4 Մակրոբ. անուրջք Սկիպ. գլ. 19 ։ Պայլեի, աստեղաբաշխ. նախն. էջ 170 ։

մոլորակացն յաստեղացոյց պատկերս իւրեանց [1]։

Կարծիք նորանշանք 'ի վարժարանին Պիւթագորայ 'ի վեր երևեցան։ Գտցես դու 'ի մատեանս յայս Նկետասայ սիրակուսեցւոյ, զի ամենայն ինչ անշարժ կայ յերկինս, աստեղք, արեգակն, և լուսին իսկ գլխովին. և երկիր միայն շուրջ զիւրև արագ հոլովմամբն գործէ յայս մեր զայն ամենայն երևոյթս աստեղաց [2]։ Բայց նախ զանշարժութիւն լուսնի ոչ է մարթ միաբանել ընդ յեղմունս իւր. և դարձեալ՝ զի եթէ երկիր շրջէր զառանցիւքն, մարմինք ձգեալք 'ի գեր 'ի վեր բարձրութիւն, ոչ 'ի նոյն տեղի ուստի ձգեցանն՝ դարձեալ 'ի վայր անկանէին. այլ զի 'ի նոյն տեղի միտեալ իջանեն, փոքր իսկ իրացն յայտ առնէ [3]։ Նա թող զայս, ամպարշտութիւն է իշխել վրդովել յանշարժ հաստատութենէն [4] զերկիր, որ յամենայն ժամանակի համարեցաւ միջակէտ աշխարհի, որբարան դից, բագին, զօդ և կապ միութեան էից [5]։

Դարձեալ և 'ի Ճառս յայս Փիղողայոս կապտեալ յերկրէ զանկապտելի յառաջամամնութիւնն, հրոյ ընծայէ զնոսա։ Նա հուրս այս առ-

1 Ցիշատ. կաճառ. գիտութեց, ամ 1708. պատմ. էջ 110։

2 Թէոփր. առ Կիկեր. ակադ. 2. գլ. 39. հատ. 2. էջ 51։ Դիոգ. լայերտ. գիրք Ը. յօդ. 85։

3 Արիստոտ. յղ. երկնից, գիրք Բ. գլ. 14. հատ. 1. էջ 470։

4 Պղուտ. յղ. կերպար. որ 'ի լուսնին երևի, հատ. 2. էջ 923։

5 Տիմ. լոկր. առ Պղատոնի, հատ. 3. էջ 97։ Ստոբ. ծաղկաքաղ բնաբ. գիրք Ա. էջ 51։

փայլին վառարան եղեալ տիեզերաց, 'ի միջակէտ անդր նորին ունի զտեղի. և շուրջ զնովաւ հոլովլին անդադար պարունակք տասն. անմոլար աստեղացն, արևուն, լուսնին և հնգից մոլորակացն*, երկրիս, և միւս ևս երկրի որ աներևոյթ է աչաց մերոց՝ թէպէտ և ոչ ինչ հեռի 'ի մէնջ [1]: Այլ և լոյս արեգականն իւր ինչ է, այլ եկամուտ. զի հանգոյն իմն հայելւոյ կամ բիւրեղեայ գնտի զհրոյն արփայնոյ ցոլացուցանէ 'ի մեզ անդրադարձ զճառագայթս [2]:

Իսկ կարգաւորութիւնս այս, զորմէ Պղատոն ուրեք ուրեք սորջանայ՝ զի ոչ սովլին վարեցաւ կարծեօք 'ի գիրս իւր, ոչ 'ի փորձս ինչ հաստատեալ է՝ այլ 'ի ճահաւորութիւն ևեթ: Զի որպէս համախոհք նորա ասեն, հրոյ յստակագոյն գոլով քան զհող՝ պարտ է նմա 'ի միջոցի տիեզերաց որպէս 'ի պատուականագոյն տեղւոջ զկայ առնուլ [3]:

Այլ էր բաւական զկարգ ևեթ մոլորակացն սահմանել. պարտ էր և զայն ցուցանել՝ թէ որչափ տարակացք 'ի միմեանց զշրջագայութիւնն

* Յառաջ քան զՊղատոն և յաւուրս նորա մոլորակ աստեղս իմանային զփայլածու, զարուսեակ, զհրատ, զլուսնթագ և զերևակ:

1 Ստոբ. ծաղկաքաղ բնաբ. գիրք Ա. էջ 51: Պլուտ. յղ. անգորր. իմաստաս. գիրք Գ. գլ. 11 և 13. էջ 895:

2 Պլուտ. անդ. գիրք Բ. գլ. 20. էջ 890: Ստոբ. ծաղկաքաղ բնաբ. գիրք Ա. էջ 56: Աքիլլ. Տատ. Ներած. գլ. 19. առ Պետաւիոսի, հտ. 3. էջ 81:

3 Արիստոտ. յղ. երկնից, գիրք Բ. գլ. 13. հտ. 1. էջ 466:

առնիցեն։ Նոյն աւասիկ Պիւթագոր և աշակերտք նորա զամենայն ցնորս մնաց իւրեանց սպառեցին։

Մոլորակք, քանզի ընդ արեգական և լուսնի եօթն են թուով, եօթնաղի 'ի նոցանէ կոչեցաւ։ Պտղոմէոս իսկ զի քնարս այս 'ի կրկին քառաղեաց կցորդի՝ միացեալ միջնորդաւ միով աստիճանաւ, որք 'ի յարանձայն ազգ երաժշտութեան զայս կարգ ընծայեն հնչմանց. ու, րէ, մի, ֆա, սօլ, լա, սի։ Արդ այսպէս համարեալ՝ զի ու զլուսին ցուցանիցէ, րէ ցուցանէ զփայլածու, մի զարուսեակ, ֆա զարեգակն, սօլ զհրատ, լա զլուսընթագ, սի զերեւակ։ Արդ խորհր տարակայութեան լուսնի՝ որ է ու, 'ի փայլածուէ՝ որ է րէ, գտանի կէս աստիճան. և ընդ փայլածուն կամ ընդ րէ և ընդ արուսեակն կամ ընդ մի՝ աստիճան մի. այս ինքն զի տարակայութիւն արուսեկին 'ի փայլածուէ գտանի կրկնապատիկ տարակայութեան փայլածուին 'ի լուսնոյ։ Այս է առաջին քնարն երկնային։

Յաւելան ապա ոմանք լարս երկու առ 'ի ցուցանել զտարակայութիւն երկրի 'ի լուսնոյ, և զերեւակին յանմոլար աստեղաց։ Համաձայնեցան երկոքին քառաղիքն՝ յորոց նորա այս յօղէր քնար, և յարդարեցան ըստ զանազանութեան ազգի երաժշտութեան՝ որ 'ի կարգ ձայնիցն գործէ համեմատութիւնս աննմանս յարաձայնին։ Հաւասիկ օրինակ նորոյ քնարիս[1].

[1] Պլին. գիրք Բ. գլ. 22։

Տարակայութիւն ընդ երկիր և ընդ լուսին .	աստիճան մի ;
Ընդ լուսին և ընդ փայլածու . . .	կէս աստիճան.
Ընդ փայլածուն և ընդ արուսեակ . .	կէս աստիճան.
Ընդ արուսեակն և ընդ արև	մի և կէս աստիճան.
Ընդ արեգակն և ընդ հրատ	աստիճան մի.
Ընդ հրատն և ընդ լուսընթագ . . .	կէս աստիճան.
Ընդ լուսընթագ և ընդ երևակ . . .	կէս աստիճան.
Ընդ երևակ և ընդ անմոլար աստեղս .	աստիճան և կէս :

Բայց քանզի աստիճանքս այսորիկ տան եօթնձայնս փոխանակ վեցից՝ որովք ութեակն կատարի, երբեմն առ բարեյարմար և համաձայնութիւն՝ բարձին աստիճան մի 'ի տարակայութենէ երևակին, թողեալ կէս աստիճան ևեթ ընդ նա և ընդ հաստատուն աստեղս խառն[1]. Նոյնպէս և ընդ արուսեակն և ընդ արև : Այլ այլ և փոփոխմունք եղեն յաստիճանսն 'ի զետեղել զարեգակն 'ի վայր քան զարուսեակն և զփայլածու, փոխանակ զետեղելոյ զնա 'ի վերոյ նոցին[2] :

Արդ առ 'ի հաշիւ տարակայութեան արփային մարմնոց, ետուն աստիճանաց իւրաքանչիւր հարիւր քսանևվեց հազար ասպարէզս[3]. և 'ի ձեռն այսր չափոյ դիւրին եղև առնուլ զչափ ընդարձակութեանն, որ ընդ երկիր և ընդ պարունակ անմոլար աստեղացն անջրպետէ : Բայց միջոցս այս անձկանայ և ընդարձակի ըստ առաւել կամ նը-

1 Կենսոր. յղ. աւուր ծննդ. գլ. 13 :
2 Աքիլ. Տատ. Ներած. գլ. 17. առ Պետաւիոսի, հտ. 3. էջ 80 :
3 Պլին. գիրք Բ. գլ. 21. հտ. 1. էջ 86 :

ւաղ պատկառ կալցի օրինաց ինչ երաժշտական համեմատութեանց ։ Ըստ յառաջագրեալ սանդղոցս՝ տարակայութիւն աստեղաց յարեգակնէ , և արեգականն յերկրէ , ունին զհամեմատութիւն հնգերորդին կամ երից աստիճանաց և կիսոյ ․ այլ ըստ այլազգ հաշուոյ երկոքին իսկ անջրպետքս գտանին երից և եթ աստիճանաց , այս ինքն երեքարիւր եօթանասուն և ութ ասպարիզաց [1] ։

Զգաց Եւկղիդէս զի տաղտկութիւն էր ինձ լսել , և ընդ քիմս ժպտելով՝ ասէ ․ Տաղտկալի թուին քեզ բանքս ։ Եւ ես ասեմ ․ Ա՛յո ․ մի թէ հարկ իցէ բնութեան փոխել զիւր օրէնսն ըստ հաճոյս ձեր ․ կեսք յիմաստասիրաց ձերոց միձեալ պնդին՝ զի հուր յստակագոյն է քան զհող , և վաղ ընդ փոյթ պարտի երկիրս տեղի տալ նմա և մեկնել՚ի միջակիտէ աշխարհի ։ Եւ թէ այլք զփառաւորն երաժշտութիւն կամ զկշռաձայնն նախամեծար առնիցեն , հարկ է արփային մարմնոց նոյնհետայն հեռանալ կամ մերձենալ միմեանց ։ Եւ զի՛նչ արք զիտնաւորք զայսպիսեաց զմտաւ ածիցեն ցնորից ։ Եւկղիդէս ասէ ․ Մ՛երթ համարին զայնոսիկ [2] խաղս մտաց , և մերթ ելս հնարից այնոցիկ՝ որք փոխանակ ուսանելոյ զմտութիւն էից՝ կամին գուշակել զայն ։ Ա՛յլ ես օրինակաւս այսուիկ ջանացայց ցուցանել քեզ , զի աս-

1 Պղին․ գիրք Բ․ գլ․ 21․ 2 Նոյն անդ ։
հտ․ 1․ էջ 86 ։

տեղաբաշխութիւն յաւուրս հարցն մերոց դեռ 'ի տղայութեան էր, և զարդիս իսկ ոչ ինչ աւելի զարգացեալ:

Ասեմ. Այլ են ձեր չափաբանք, որ տքնին հանապազ 'ի քննել զշրջանս մոլորակաց, և 'ի խնդրել զտարրակայութիւն նոցա յերկրէս[1]. ոչ ինչ երկբայիմ զի նոյնք և 'ի վաղնջուց ժամանակս լեալ են ձեր. արդ զի՞նչ շահ 'ի գիշերաջան տքնութեանցն նոցա եղև: Եւկղիդէս ասէ. Ճ՛առս բազում արարաք, այլ զննութիւնս կարի սակաւս, և սակաւագոյն յոյժ գիւտս: Եթէ իցեն ինչ առ մեզ ստոյգ գիտութիւնք զշրջանաց աստեղաց, ամենայն եգիպտացւոց և քաղդէացւոց են վաստակք[2]. 'ի նոցանէ ուսաք կազմել զցուցակս տօնից տարեկանաց և զժամանակի հնձոց և սերմանեաց և գործելոյ զերկիր: Ի նմա և զել և զմուտ գլխաւոր աստեղաց նշանակեմք, և զյեղյեղակս ամառայնոյ և ձմեռայնոյ, և զգարնայինն և զաշնայինն հաւասարականութիւնս, և զյեղմունս օդոց գուշակելով[3]: Բազումք 'ի տումարաց աստի հաւաքեալ կան առ իս. կէսք վաղեմիք յոյժ, այլք այլոց նահանգաց երկրի պատկա-

1 Քսենոփ. յիշատ. գիրք Դ. էջ 814: Արիստոտ. յղ. երկնից, գիրք Բ. գլ. 14. հտ. 1. էջ 470:

2 Երոդոտ. գիրք Բ. գլ. 109: Եպին. առ Պղատոնի, հտ. 2. էջ 987: Արիստոտ. անդ. գլ. 12. հտ. 1. էջ 464: Ստրաբ. գիրք ԺԷ. էջ 806:

3 Թէոն. զմիւռն. նոյն Արատ. էջ 93: Դիոդ. գիրք ԺԲ. էջ 94: Պետաւ. երկնաբան. հտ. 3:

նաւորք. բայց է ինչ յամենեսին 'ի նոսա զարմանալի, զի զձմերականն և զամառայինն փոփոխմունս և զգարնայինն և զաշնայինն հաստատակաւորութիւնս ոչ 'ի նոյն աստիճան աստեղատանց կենդանաբերին հաստատեն: Այլ պատճառք վրիպակիս այսմիկ կարծեմ շարժումն ինչ յաստեղս գոլ, ցայժմ անծանօթ[1], կամ զոգխոտութիւն աստեղափոխացն:

Ի յօրինուած ցուցակացս այսոցիկ յերկուց դարուց հետէ պարապեն աստեղաբաշխք մեր, Կղէոստրատ տենեդացի՝ որ յԻդա լերին զաստեղափոխութիւնն առնէր, Մատրիկետաս մեթիմնեցի՝ որ 'ի Լեպետիմնեան լերին, Փայինոս աթենացի՝ որ 'ի Լիկաբետոս բլրին[2], Դոսիթէոս, Եւկտեմոն[3], Դեմոկրիտոս[4], և այլք զորս աւելորդ է թուել մի ըստ միոջէ: Դժուարութիւն մեծ, կամ մանաւանդ միակ խնդիր դըժուարալոյծ այն էր, ածել զտօնս տարեկանս 'ի նոյն յեղանակ, և 'ի նոյն օր՝ պատուիրեալ 'ի հրամանաց դից և յօրինաց[5]: Վասն որոյ պարտ էր սահմանել ճշգրիւ զչափ տարւոյ, զարեգակնայնոյն

1 Ֆրերէ ճառ. ժամանակագր. էջ 183: Գայլէի, աստեղաբաշխ. Նախնեաց, էջ 191 և 421:

2 Թէոփր. 'ի բառն περί Σημ. առ Սկալիգերայ յղ. ուղղ. գիրք Բ. էջ 72:

3 Պտղոմ. յղ. երև. յերկնային. էջ 83:

4 Դիոգ. Լայերտ. 'ի Դեմոկր. գիրք Թ. յօդ. 48: Կենսոր. յղ. աւուր ծննդ. գլ. 18: Սկալիգ. անդ. էջ 167:

5 Գեմին. սկզբունք աստեղաբաշխ. գլ. 6. առ Պետաւիոսի, հտ. 3. էջ 18:

և զլուսնականին , և միաբանել զնոսա ընդ միմեանս , որպէս զի ծնունդք լուսնի՝ յորս կատարին հանդէսք տօնից մերոց՝ հանդիպեսցին ՚ի գլխաւոր կէտս տարւոյ ՚ի սկիզբն յեղանակաց ։

Բազում ինչ ընդունայն փորձք՝ հորդեցին Ճանապարհ Մետոնի աթենացւոյ ։ Յառաջնումն ամի ութսներորդի եօթներորդի ողիմպիադին * ամսովք իբր տասամբք նախ քան զպեղոպոնեսական պատերազմն [1] , Մետոն օգնականութեամբ Եւկտեմոնի զոր յառաջ յիշատակեցաք՝ [2] դիտեալ զկէտն ժամանդիտակ ամառնամտին , եգիտ զիննևտասներեակն շրջան արեգակնային ամաց , որ բովանդակէ երկերիւր երեսուն և հինգ ամիս լուսնի . զի ՚ի լրման իննևտասներեկին՝ արեգակն և լուսին գրեթէ ՚ի մի կէտ երկնից հանդիպին ։

Բայց թէպէտ և կատակերգուք երգիծանէին զնա [3] , պայծառ յաղթութիւն պսակեաց զձգունըս նորա [4], մանաւանդ թէ զգործս . քանզի ասեն առեալ նորա զշրջանս զայս յազգաց , որ ՚ի ժամանակին յայնմիկ հմուտք էին քան զմեզ յաստեղաբաշխութիւն ։ Եթէ այսպէս և եթէ այն , աթենացիք ետուն քանդակել ՚ի ժողովետղն ՚ի Պնիքս յորում զժամանդիտակ կէտս հասարակօ-

* Ն. Ք. 432 ամք ։ Ի յետկոյս մատենիս ՚ի տեղեկութիւնս . Թիւ Ա ։

1 Թուկիդ . գիրք Բ . գլ . 2 ։

2 Պտղոմ . ՚ի մեծի շարադրածին աստեղաբ . գիրք Գ . էջ 63 ։

3 Արիստոփ . ՚ի Հաւսն , տող 998 ։

4 Արատ . ՚ի բանն Διοσημ . էջ 92 ։ Պարաղ . անդ ։

բութեանցն և գլեղլեղակաց[1] ։ Տարեմուտն նոցա հանդիպէր յառաջագոյն 'ի ծնունդ լուսնին յետ ձմերայնոյ յեղյեղակին, և սահմանեցաւ սկսանել յետ այնորիկ զամն 'ի ծննդեան յետ ամառնամուտ յեղյեղակին[2], և յայնժամ Ողըմպիքն կամ աւագագոյն խնճոյք կային յԱթէնս[3] ։ Բազմագոյնք յայլոց ևս ազգաց Ելլադայ փութացան 'ի կիր առնուլ զհաշիւս Մետոնի[4]. և նոքօք արդ յօրինէին ցուցակք՝ որ 'ի բազում ուրեք քաղաքս կախէին զսեանց, յեղանակաւ իմն յանդիման առնելով ընդ ամ ինն և տասան զկարգաւորութիւն երկնից և զդէպս տարւոյն ։ Ոչ են 'ի նմա ըստ իւրաքանչիւր ամի կէտք սկզբան յեղանակաց, և ըստ աւուր աւուր գուշակութիւնք յեղման օդոց[5] ։

Մինչև ցայս վայր զննութիւնք աստեղաբաշխիցն Յունաց 'ի կարևոր կէտս ամփոփին և յեղումս աստեղաց. այլ ոչ 'ի սմա է տիրապէս աստեղաբաշխութիւն. պարտ է նմա ընդ երկար կրթութեամբ հասու լինել շրջանաց արփայլին մարմնոց[6] ։

Նաղդքս, որ յառաջ քան զամն ինչ վախճանե-

1 Փիլոք. 'ի Պարապմունսն Արիստոփանեայ, 'ի Հաւուն, տող 998 ։ Եղիան. զան. պատմ. գիրք Ժ. գլ. 7 ։ Սուիդ. 'ի բառն Μέτων.

2 Պղատ. յղ. օր. գիրք Զ. հա. 2. էջ 767 ։

3 Տոտուէլ. յղ. շրջանաց, Ճառ. 3. յօդ. 35 ։

4 Դիոդ. գիրք ԺԲ. էջ 94 ։

5 Թէոն. գիտւոն. յԱրատո. երևութ. էջ 93 ։ Սալմասիոս, հրատ. 'ի Պլին. էջ 740 ։

6 Եփին. առ. Պղատոնի, հա. 2. էջ 990 ։

ցաւ, եբաց նոր ասպարէզ։ Բազում ժամանակս եղեալ նորա յԵգիպտոս, և փոքր 'ի շատէ գողացեալ զգաղտնիս քրմաց աշխարհին, ած առ մեզ զգիտութիւն շարժման մոլորակաց[1], և աւանդեաց զայն 'ի բազում գիրս իւր։ Ահա 'ի վերայ սեղանոյդ կան ճառք նորա, մակագրեալն Հայելի, և որ յաղագս Արագութեան արփային մարմնոց[2], և Շրջին անուանեալ երկրի, և Երևոյթքն[3]։ Մտերիմ բարեկամ էր նա ինձ, և զմոլելոյ իմն 'ի սէր աստեղաբաշխութեան խօսէր ընդ իս բանըս․ զի ասէր ցիս՝ թէ Յանձն առնում հանդերձ վտանգաւ իսկ արկանիցն Փայետոնի՝ հուպ լինել յարեգակն, առ 'ի գիտելոյ զձև նորա և զչափ[4]։

Ես ասացի ցԵւկղիդէս․ Զարմանամ զի Յոյնքդ հանդերձ այդչափ հանճարովդ կարօտացայք գնալ 'ի տար աշխարհ 'ի խնդիր գիտութեց առ այլ ազգս։ Եւկղիդէս ասէ․ Կասկածեմ թէ չիք մեր հնարագիտութիւն, այլ զգիւտս այլոց տուեալ է մեզ գեղեցկացուցանել և 'ի կատարումն ածել։ Ո՞ գիտէ թէ գուցէ երևակայութիւն խոյզ և խափան լիցէ զարգացման գիտութեանց։ Դարձեալ զի և սակաւ ժամանակք են յորմէ հետէ մեր զաչս յերկինս դարձու-

1 Սենեկա, խնդ. բն. գիրք Է. գլ. 3։

2 Սիմպլիկ. գիրք Բ. էջ 120։

3 Իպպարք. յերև. երկնաբան. էջ 98։

4 Պլուտ. հա. 2. էջ 1094։

ցեալ է, ուր եգիպտացիք և քաղդէացիք 'ի բա-
զում այնչափ դարուց հետէ, որ չհաւատալի իմն
թուի, հանապազորդեն 'ի հետազօտել և 'ի չա-
փել զընթացս երկնից: Արդ սահմանք աստե-
ղաբաշխութեան 'ի զննութիւնս հաստատին.
զի որպէս 'ի բազում յայլ գիտութիւնս, նոյն-
պէս և 'ի սմա ճշմարտութեանց իւրաքանչիւր
կարապետէ խուժան մոլորութեանց. և լաւ է
կանխել նոցա, որպէս զի յամօթ լեալ պարտու-
թեամբն՝ մի ևս անդրէն 'ի վեր երևեսցին: Եւ-
դարձեալ՝ կամիցիս զի 'ի նպաստ քեզ մասն եղէց
գաղտնեաց սնափառութեան մերոյ. յորմէ հետէ
գիւտք այլոց ազգաց մուծան յՀելլադա, որպէս
որդեգիրս զնոսա ունիմք, և ընդ հարազատ որ-
դիս հաւատարեմք զնոսա, և մերթ նախամեծար
իսկ առնեմք:

Իսկ ես ասեմ. Չկարծէի զի որդեգրութեան
շնորհ այնչափ ընդարձակիցի: Այլ թողեալ
զաղբերակն գիտութեանց ձերոց, կարիցես տալ
ինձ զմասանց այժմու աստեղաբաշխութեանց
հասարակաբար տեղեկութիւն: Յայնժամ Եւ-
կղիդեայ առեալ գունդ մանեկաւոր, զմանեկացն
իւրաքանչիւր եցոյց ինձ զպէտս:

Ապա պարզեաց առաջի իմ երկնացոյց պատ-
կեր, յորում տեսի զգլխաւոր աստեղս 'ի տունս
տունս բաժանեալ, և ասէ ցիս. Աստեղքս ա̃մ
զմի տիւ և զմի գիշեր առածեալ զառանցիւք
երկնից, յարևելից յարևմուտս շրջին 'ի նոյն տե-

ղի ։ Նաց ՚ի շարժմանէ աստի, են և արեգական և լուսնի և հնգեցունց մոլորակաց շրջանք յարևմտից յարևելս ՚ի սահմանեալ ժամանակի ։

Արեգակն անցանէ ընդ 360 աստիճանս ծրի խաւարման ՚ի տարւոջ, որ ըստ Մետոնի [1] ունի աւուրս 365 և $\frac{5}{19}$ մասունս աւուր * ։

Շրջան լուսնի տևէ զաւուրս 29, ժամս 12, և 45 մանրամասունս և այլն. որով երկոտասան շրջանաց նորա գումարին աւուրք 354, և սուղ ինչ աւելի քան զերրորդ մասն աւուր [2] ՚ի քաղաքական ամս մեր և ՚ի լուսնականն ամսոց առնեմք զկոտորակս զայս, և համարիմք երկոտասան ամիսս **, յորոց կէսք երեսնօրեայք են, այլք ունին զաւուրս քսանևինն, միահամուռ աւուրք երեքարիւր յիսուն և չորք ։ Այլ զքաղաքական զամս զայս միաբանեմք ընդ արեգակնայինն ՚ի ձեռն եօթանց աւելեաց ամսոց, զոր ՚ի շրջան ինննևտասներեակ ամաց յաւելումք յերրորդ, ՚ի հինգերորդ, յութերորդ, ՚ի մետասաներորդ, յերեքտասաներորդ, ՚ի վեշտասաներորդ, և յիննևտասներորդ ամին [3] ։

Նշեմ. Նախ ամն այն բաղկացեալ յերեքարիւր

1 Գեմին. սկզբ. աստեղաբաշխ. առ. Պետաւիոսի, հտ. 3. էջ 23 ։ Կենսոր. յղ. աւուր ծննդ. գլ. 19 ։ Տոդուէլ, յղ. շրջանաց, ճառ. 1. յօդ. 5 ։

* Ցեռկոյս մասանինս ՚ի տեղեկութեան. Թիւ Բ ։

2 Պետաւ. յղ. գիտ. ժամանակաց, գիրք Բ. գլ. 10 և 13. էջ 58 և 62 ։

** ՚Ի վերջնում մասնի գրոցս գտցեն զայս խնդրողք ՚ի ցանկս աստիճանեան ամսոց ։

3 Տոդուէլ, անդ յօդ. 35 ։

և 'ի վաթսուն աւուրց, կարճ քան զարեգակնայինն և երկայն քան զլուսնականն, որ առ վաղնջուց ազգս վարի, և զոր ընտիրք 'ի մատենագրաց ձերոց աւանդեն[1], իբր սահմանեցաւ այն, ասա ինձ, և առ ի՞նչ առ ձեզ իսկ չև ևս է խափանեալ[2]: Եւկղիդէս ասէ. Ո՞ր եգիպտացիս սահմանեցաւ այն ըստ տարեւոր շրջանի արեգական, զոր 'ի սկզբանն կարի սուղ չափեցին[3]. իսկ առ մեզ ըստ տևողութեան երկոտասան շրջանաց լուսնի երեսնօրէից առ հասարակ[4]: Յետոյ յաւելին եգիպտացիք յարեգակնային ամն իւրեանց զաւուրս հինգ, և վեց ժամս. իսկ մեք բարձաք 'ի մերմէ լուսնական տարւոյս զաւուրս վեց, որով մնացին աւուրք 354, միով երբեմն աւելի:

Կրկնեալ անդրէն ասեմ. Այլ 'ի գիտել ձեր զթերութիւն չափոյ տարւոյդ, պարտ էր ձեզ խափանել զայդ: Եւկղիդէս ասէ. Ոչ ևս վարիմք նովաւ 'ի յանձանձանս իրաց պետութեան և իւրաքանչիւր ուրուք շահու. այլ յիրս դուզնաքեայս ստիպէ հին սովորութիւն նախամեծարել երբեմն զհամառօտութիւն քան զճշգրտութիւն հաշուոյ, առանց ուրուք խաբելոյ նովաւ:

Լուեմ զխնդիրս զոր արարի Եւկղիդեայ ըզ-

1 Հերոդոտ. գիրք Ա. գլ. 32:
2 Արիստոտ. պատմ. կենդան. գիրք Զ. գլ. 20. հտ. 1. էջ 877: Պլին. գիրք ԼԴ. գլ. 6. հտ. 2. էջ 644:
3 Հերոդոտ. գիրք Բ. գլ. 4:
4 Գեմաւ. յղ. գիտ. ժամանակաց, գիրք Ա. գլ. 6 և 7: Ցոռուէլ, յղ. շրջան. ճառ 1. յօդ. 14:

տումարէ աԹենացւոց. զայն եւեԹ ասացից որ ինչ ինձ զբաժանմանէ տուրնջեան ասաց: Ի բաբելացւոց, ասէ, ուսաք բաժանել զայն յերկոտասան մասունս[1] մեծամեծս կամ փոքունս ըստ փոփոխման յեղանակաց: Մասունքս այսոքիկ կամ ժամք, որպէս սկսանին արդ կոչել[2], ըստ ամնոց նշանակին 'ի ժամացուցակ գործւոջ երկայնուԹեամբ ստուերաց՝ որ համեմատին ժամուցն[3]: Զի որպէս գիտես իսկ, 'ի յայտնի ինչ ամենեան ստուեր ցուցակին երկայնեալ այսչափ ինչ ոտնաչափս յառաջ և յետոյ քան զմիջօրեայն, ցուցանէ զժամ աւուրն*. Նմին իրի 'ի ժամաչափ լինել միմեանց 'ի վաղորդայն կամ ընդ երեկս, պայմանեմք զչափ ստուերին, զոր օրինակ զտասն կամ զերկոտասան ոտնաչափ[4]. ուստի և սովորուԹիւն է առ մեզ հարցանել զժամուց աւուրն՝ Թէ զի՞նչ ստուերք իցեն[5]: Այլ տես զի ստրուկք մեր ստէպ երԹևեկեն 'ի հրապարակն դիտել զժամ աւուրն 'ի ժամացոյցն հասարա-

1 Երոդոտ. գիրք Բ. գլ. 109:

2 Քսենոփ. յիշատ. գիրք Դ. էջ 800:

3 Սկալիգ. յղ. ուղղ. ժամանակի, գիրք Ա. էջ. 5: Պետաւ. զան. ճառք, գիրք Է. գլ. 9. հտ. 3. էջ 145:

* Յետակոյս մատենիս 'ի տեղեկուԹիւնսն. Թիւ Դ:

4 Արիստոփ. 'ի Ժողով. տող 648: Մենանդ. առ Աթենեոսի, գիրք Զ. գլ. 10. էջ 243: Եւբուղ. առ Աթենեոսի, գիրք Ա. գլ. 7: Հեսիւք. 'ի բառն Δωδεκ. Նոյն և Սուիդ. 'ի բառն Δεκάπ. Պողիտեւկ. գիրք Զ. գլ. 8. յօդ. 44:

5 Արիստոփ. առ Պողիտեւկեայ, գիրք Թ. գլ. 5. էջ 46:

կաց, և պատմել մեզ[1]։ Եւ չէ ինչ այս դժուարին, այլ դիւրագոյն ևս ինչ խնդրի, և արդէն իսկ կազմին ժամացոյցք կրելիք[2]։

Բայց թէպէտ և մետոնեանն շրջան ճշգագոյն քան զայլսն է՝ որ յառաջ քան զայն եղեն, այլ յաւուրս մեր ծանուցաւ՝ զի և սա կարօտ է ուղղութեան։ Եւդոքս ըստ հաշուի աստեղաբաշխից եգիպտացւոց եցոյց մեզ, զի արեգակնային ամին են աւուրք 365 և ¼, որով զտանի նուազեալ քան զմետոնեան ամն միով եօթանասուն և վեցերորդ մասամբ[3]։

Հաւաստի եղև և այս, զի 'ի յեզերականս ամառայնոյ և ձմեռայնոյ արեգակն ոչ զամենայն օր կշիռ 'ի նոյն կէտ ընդ ոլորտս երկրի զելն և զմուտն առնէ[4]. և աստի 'ի միտ առին, զի և ընթացից արեգական համագոյն լուսնի և այլոց մոլորակաց է լայնութիւն[5], և զի 'ի տարևոր իւրում շրջանին ոչ անխոտոր ընթանայ ընդ ծիրն խաւարման, շեղեալ 'ի հասարակածէն աստիճանս իբր քսանևչորս[6], այլ զարտուղի և նա յայս կոյս և

1 Աթէն. գիրք Թ. գլ. 17. էջ 406։ Կասաւբ. անդ։ Եւստաթ. յԻլիակ. գիրք ԻԴ. էջ 1349։ Հիսիւք. 'ի բառն Περάτρ.

2 Աթէն. գիրք Դ. գլ. 17. էջ 163։ Կասաւբ. անդ։ Պոկկիաւդոս յիշատ. Պեղոպոն. հտ. 1. էջ 50։

3 Գեմին. սկզբ. աստեղաբ. առ Պետաւիոսի. հտ. 3. էջ 23։ Ստրաբ. գիրք ԺԷ. էջ 806։ Պայլեի, պատմ. աստեղաբաշխ. նախնեաց, էջ 237։

4 Սիմպլիկ. յաղ. երկնից, գիրք Բ. էջ 120։

5 Արիստոտ. բնագանց. գիրք ԺԴ. էջ 1002։

6 Եւդեմ. հռոդ. առ Փաբրիկիոսի 'ի մատենագար. յուն. հտ. 2. էջ 277։

յայն ընդ լայնութիւն կենդանաբերին ։

Մոլորակաց իւրաքանչիւր այլ և այլ չափ է երագութեան ընթացից, և ամք զանազանք[1] ։ Եւդոքս 'ի դառնալն իւրում յԵգիպտոսէ յաւելել մեզ գիտութիւնս զընթացից նոցա[2] ։ Փայլածուին և արուսեկին շրջան կատարի ընդ արեգական, Հրատին յերկուս ամս, Լուսընթագին յերկոտասան, և Երևակին յերեսուն[3] ։

Աստեղք ընդ կենդանաբեր կամարն թափառեալք ոչ շարժին իւրովի, այլ ձգեալք 'ի բարձրագոյն պարունակաց, կամ 'ի նոցունց իսկ յորս բևեռեալ կան ։ Ութ ևեթ պարունակք երբեմն համարէին. հաստատուն աստեղացն, արեգականն, լուսնականն, և հնգից մոլորակացն[4] ․ այլ ապա 'ի յայտնել այլ ևս շարժմանց ինչ նոցա, յաւելաւ թիւ պարունակացն ։ Եւ իւրաքանչիւր նոցա ընդ մէն մի պարունակ հարկ թուեցաւ ունել շրջան, ոչ վասն այլ իրիք՝ բայց զի կատարելաձև է բոլորակ[5] ․ զորմէ 'ի դէպ համարիմ լսել, զի մի զկարծեաց իմաստասիրաց ճառիցեմ՝ փոխանակ առաջի առնելոյ քեզ զօրէնս բնութեան ։

Լուսնի չիք իւր լոյս առանձինն, այլ լուսաւորի յարեգակնէ[6] ։ Յորժամ կշիռ դէպ արեգականն

1 Տիմ· լոկր· յղ· հոգւոյ առ Պղատոնի, հտ· 3· էջ 97 ։ Պղատ· 'ի Տիմ· էջ 39 ։

2 Սենեկա, խնդ· բն· գիրք Է· գլ· 3 ։

3 Արիստոտ· առ Սիմպլիկիոսի. էջ 120 ։ Նոյն յղ· աշխարհի, հտ· 1· էջ 612 ։

4 Տիմ· լոկր· յղ· հոգւոյ, էջ 96 ։

5 Սիմպլիկ· յղ· երկնից, էջ 120 ։

6 Պլուտարք· առ Դիոգ· լայերտ· գիրք Ը· յօդ· 27 ։

պատահիցէ, չծագէ առ մեզ արեգակն. իսկ յոր-ժամ երկիրս խորոց ընդ մէջ նոցա անկանիցի, խաւարի լուսինն[1]: Այլ եւ խաւարել լուսնի եւ արեգական զարհուրեցուցանէ զժողովուրդն, եւ գուշակեն նոքա աստեղաբաշխք զժամ խաւարմանն: Ուսուցանէ եւ եւս աստեղաբաշխութիւն՝ զի են աստեղք ոմանք ստուարագոյնք քան զերկիր[2]. այլ ընդ արեգականն ինքնապատիկ մեծ քան զլուսինն ունել տրամագիծ, որպէս Եւդոքսն վիճեալ պնդի, երկքայութիւն է ինձ[3]:

Երկնեալ անդրէն ասեմ. Եւ ընդէ՞ր զվարսամն ոչ ընդ մոլորակ աստեղս կարգիցես: Եւկղիդէս ասէ. Բազումք յիմաստասիրաց ընդ մոլորակս կարգեցին զնոսա, ընդ որս եւ Անաքսագոր եւ Դեմոկրիտոս եւ ոմանք յաշակերտացն Պիւթագորի[4]. այլ համձարեղք այսուիկ քան թէ գիտունք ճանաչին: Բոլորութիւնք ծանուանք կր-ցորդեալք ընդ կարծիս նոցա յայտ առնեն, զի չեն արգասիք աստեղադէտ հետազօտութեանց: Անաքսագոր եւ Դեմոկրիտոս համարին զգիսա-

Գարմեն. առ. Պլուտ. 'ի Կողոտ. հտ. 2. էջ. 1116: Անաքսագ. առ. Պղատոնի 'ի Կրատ. հտ. 1. էջ 409: Պղատ. յղ. հասս. գիրք Ժ. հտ. 2. էջ 616:

1 Արիստոտ. յղ. երկնից, գիրք Բ. գլ. 13. հտ. 1. էջ 466:

2 Նոյն անդ. գիրք Ա: Նոյն նշանք օդ. գլ. 3. հտ. 1. էջ 529:

3 Արքիմեդ. յԱրան. էջ 451: Պոյլեի, պատմ. աստեղաբաշխ. նախնեաց, էջ 238:

4 Արիստոտ. նշանք օդ. գիրք Ա. գլ. 6. հտ. 1. էջ 534: Պլուտ. յղ. [illegible]. իմաստասս. գիրք Գ. գլ. 2. հտ. 2. էջ 893:

յորս ընդ լուսաւորութեան կենդանաւորութեանն :

Մաղդարեալոյ խորհրդածելոյ այլ և այլ ըստ է երրորդութեան ընթացից , և անց դամանդակաց[1] : Նախադրո 'ի դասանակ խորտոմ յԱստղիկոտաւէ յաւէր ասեր գիտութեան զընթացից նոցա[2] : Փայլածուքն և արտաքսելիքն շրջան կատարել ընդ արեգական , հրատեն յերկրա ամն , լուսնթացին յերկրասուտակն , և երևութիքն յերկրաւոն[3] :

Նաւորուք ընդ կենդանակերպ կանուրն Թալաւերութ ոչ շարժելն խորհրդն , այլ ձգերում 'ի բաղձրագոյն արտաքնակայց , կամ 'ի նոյնոց խնկ յորս ընթացեալ կամ : Այլ և ելե արտաքնակք երկնեն հաստատեալն հաստատունական տիեզերաց, արեգակնային լուսնակայնան , և հեղելոց մոլորակաց[4] . այլ սակս 'ի յաղթելոյ այլ ևս շարժմանց ինչ նոցա , յաւելում Թիւ արտաքնակաց : Նա խորհրդածիւր նոցա ընդ մէջն մի արտաքնակ հարկ Թուեցաւ ունել շրջան , ոչ վասն այլ ինչ՝ բայց զի կատարելագոյն է բոլորակ[5] . զոր մէջ 'ի դէպ հաւանական լուել , զի մի զկարծեաց խմաստասիրաց Հայաստանի փոփոխանակ առաջի առնելոյ քեզ զորէնս բնութեան :

Յունաց չիք ևս լոյս առամնձին , այլ լուսաւորի յարեգակնէ[6] : Յորժամ կշիռ դէպ արեգակնան

1 Տիմ. լոկր. յղ. հոգւոյ աւ. Գղատոնի, հա. 3. էջ 97 : Գղատ. 'ի Տիմ. էջ 39 :

2 Սենեկա, խնդ. բն. գիրք Է. գլ. 3 :

3 Արիստոտ. առ. Սիմպղիկիոսի. էջ 120 : Նոյն յղ. առ. խարհե, հա. 1. էջ 612 :

4 Տիմ. լոկր. յղ. հոգւոյ, էջ 96 :

5 Սիմպղիկ. յղ. երկնից, էջ 120 :

6 Պլուտարք. առ. Դիոգ. լայերտ. գիրք Ը. յօդ. 27 :

պատահիցէ, չծագէ առ մեզ արեգակն. իսկ յորժամ երկիրս խորոց ընդ մէջ նոցա անկանիցի, խաւարի լուսինն[1]: Այլ եւ խաւարել լուսնի եւ արեգական զարհուրեցուցանէ զժողովուրդն, եւ գուշակեն նմա աստեղաբաշխք զժամ խաւարմանն: Ուսուցանէ եւ եւս աստեղաբաշխութիւն՝ զի են աստեղք ոմանք ստուարագոյնք քան զերկիր[2]. այլ ընդ արեգականն իննապատիկ մեծ քան զլուսնին ունել տրամագիծ, որպէս Եւդոքսն վիճեալ պնդի, երկբայութիւն է ինձ[3]:

Կրկնեալ անդրէն ասեմ. Եւ ընդէ՞ր զվարսամն ոչ ընդ մոլորակ աստեղս կարգիցես: Եւկղիդէս ասէ. Բազումք յիմաստասիրաց ընդ մոլորակս կարգեցին զնոսա, ընդ որս եւ Անաքսագոր եւ Դեմոկրիտոս եւ ոմանք յաշակերտացն Պիւթագորի[4]. այլ համձարեղք այսուիկ քան թէ գիտունք ճանաչին: Մոլորութիւնք ծանունք կցորդեալք ընդ կարծիս նոցա յայտ առնեն, զի չեն արգասիք աստեղադէտ հետազօտութեանց: Անաքսագոր եւ Դեմոկրիտոս համարին զգիսա-

Պարմեն. առ. Պլուտ. ՚ի կողոտ. հտ. 2. եջ. 1116: Անաքսագ. առ. Պղատոնի ՚ի Կրատ. հտ. 1. եջ 409: Պղատ. յղ. հաս. գիրք Ժ. հտ. 2. եջ 616:

1 Արիստոտ. յղ. երկնից, գիրք Բ. գլ. 13. հտ. 1. եջ 466:

2 Նոյն անդ. գիրք Ա. Նոյն նշանք օդ. գլ. 3. հտ. 1. եջ 529:

3 Արքիմեդ. յԱրան. եջ 451: Գոյլէի, պատմ. աստեղաբաշխ. նախնեաց, եջ 238:

4 Արիստոտ. նշանք օդ. գիրք Ա. գլ. 6. հտ. 1. եջ 534: Պլուտ. յղ. անձանց. իմաստասէ. գիրք Գ. գլ. 2. հտ. 2. եջ 893:

ւորս կցորդութիւն երկուց մոլորակաց, որ կարի մերձաւորութեամբն առ միմեանս՝ թուէին մարմին մի ։ Յաւելու և Դեմոկրիտոս հաւաստիս, զի 'ի բաժանել նոցա անդրէն 'ի միմեանց, փայլեն յերկինս աստեղք նորք մինչև ցայնժամ անծանօթք ։ Իսկ պիւթագորեանց երևի դնել միակ գիսաւոր, որ երբեք երբեք երևի, և դարձեալ ընկղմի 'ի լոյս արեգական [1] ։

Արկնեալ անդրէն ասեմ. Իսկ զինչ տացես պատասխանի քաղդէացւոց [2] և եգիպտացւոց [3], որ զի քաջ աստեղագէտք են՝ ոչ ոք ժխտել կարէ, և նոքա առ հասարակ համարին գիսաւորաց ունել շրջան ։ Եւկղիդէս ասէ. Ի քաղդէացւոց աստեղաբաշխից կէսք պանծան գիտել զընթացս գիսաւորաց, այլք համարին զնոսա յորձանս ինչ հիւթոց՝ յարագ շարժմանէն բորբոքեալ [4] ։ Բռաջնոցն կարծիք ոչինչ աւելի է քան զկարելին, զի և ոչ զայլոցն եղծանէ զկարծիս ։ Իսկ աստեղաբաշխք եգիպտացիք թագուցին զկարծիս իւրեանց, 'ի հարցանելն 'ի մերոց իմաստասիրաց թէ իցէ՞ն համախոհք քաղդէացւոցն ։ Եւդոքս ոչ ինչ իսկ ասաց զնոցանէ ոչ 'ի բանս իւր և ոչ 'ի գիրս [5] . և իցէ՞ արդեօք կարծելի թէ քուրմք եգիպտացւոց անձանց իւրեանց պահեցին զգիտութիւն ընթացից գիսաւորացն ։

1 Արիստոտ. Նշանք օդ. գիրք Ա. գլ. 6. հտ. 1. էջ 534 ։
2 Սենեկա, խնդ. բն. գիրք է. գլ. 3 ։ Ստոբ. Ծաղկաքաղ բնաբ. գիրք Ա. էջ 63 ։
3 Դիոդ. գիրք Ա. էջ 73 ։
4 Սենեկա անդ. ։
5 Նոյն անդ. ։

Բազում և այլ խնդիրս արարի Եւկղիդեայ, և յամենայնի գտի հերձուածս կարծեաց, որով և անյայտութիւն ճշմարտին[1]։ Հարցի զծրէ կաթին, և ասաց ցիս, թէ իցէ այն ըստ Անաքսագորայ կուտակութիւն աստեղաց, որոց լոյս նուաղեալ է 'ի ստուերէ երկրիս, որպէս թէ ստուերք երկրիս մինչև յաստեղս հասանիցեն. կամ թէ ըստ Դեմոկրիտեայ՝ յայն կողմն երկնից իցեն աստեղք բազումք յոյժ մանունք և մերձաւորք միմեանց, որոց նուաղ ճառագայթք խառնեալ յիրեարս՝ լինագոյն արձակեն նշոյլ[2]։

Եւ յածեալ շրջեալ ընդ երկինս՝ դարձայք անդրէն յերկիր, և ասեմ ցԵւկղիդէս. Ի բազում երկայն երկնաչու ճանապարհորդութեանցս չեղև մեզ կարևոր ճշմարտութեանց ինչ հասու լինել. լաւ իցէ մեզ չմեկնել 'ի բնակութենէս մերմէ. զի պարտ է մարդոյ քաջահմուտ գոլ տանն յորում բնակէ։

Եհարց ցիս Եւկղիդէս՝ թէ ո՞րպ մարթի մեծագանգուած երկրիս կալ 'ի վերայ օդոց 'ի հաստատութեան։ Ասեմ. Ընդ այդ ոչ ինչ են ինձ զարմանք. կացցէ արդեօք որպէս աստեղք և մոլորակք կան։ Եւկղիդէս ասէ. Այլ նոքա առ 'ի չանկանելոյ՝ բևեռեցան 'ի պարունակս բիւր-

1 Ստոբ. ծաղկաքաղ բնաբ. գիրք Ա. էջ 62։

2 Արիստոտ. նշանք օդ. գիրք Ա. գլ. 8. հտ. 1. էջ 538։ Պլուտ. յղ. անգորր. իմաստասս. գիրք Գ. գլ. 1. հտ. 2. էջ 893։

զաձև Թափանցիկս ամրագոյնս, և համահոլով ընդ նոսա շրջին. այլ զմեզ չիք ինչ նեցուկ՝ յոր երկիրս յենուցու. և իբր ոչ ընկղմի 'ի լոյծ տարերն՝ որ շուրջ պատէն զնովաւ: Ոմանք ասեն՝ Թէ ոչ ամենուստ շրջապատեն օդք զերկիր, այլ է սա իբրև զլեառն որոյ հիմունք կամ արմատք անզննդալիր հաստատեալ կան ամբաւածաւալ 'ի վայրի [1], և 'ի ծագ լերինն բնակեմք յակատանի: Այլք տափարակ զառ 'ի ներքոյս երկրի վարկանեն, որպէս զի լայնանիստ 'ի վերայ օդոյ բազմիցի, և 'ի վերայ ջուրց մարԹիցի կալ: Այլ Թող զայն՝ զի գրեԹէ հաւաստի ցուցեալ է երկրիս գնտաձև գոլ, եԹէ 'ի վերայ օդոյ համարիցին նմա կալ՝ կարի տկար հիմունս դնեն նմա. իսկ եԹէ 'ի վերայ ջուրց, յե՞ր վերայ ջուրքն կայցեն [2]: Բնագիտք մեր այլ իմն հնարս գտին յառաջ քան զաւուրս զայսոսիկ առ 'ի փարատել զամենայն երկիւղ: Զի ասեն՝ Թէ 'ի տիեզերական օրինաց մղեալ ամենայն մարմինք ծանունք դիմեն 'ի մի կէտ, և կէտն այն է միջակէտ տիեզերաց, կեդրոն երկրիս [3]. պարտ է ապա ամենայն մասանց երկրի կուռ զմիմեամբք պնդիլ առ 'ի մերձենալոյ 'ի միջակէտն, և ոչ երբէք օձտել 'ի բաց [4]:

Աստի 'ի միտ առնուլ է, զի մարդկան շուրջ

1 Արիստոտ. յղ. երկնից. գիրք Բ. գլ. 13. հա. 1. էջ 467:

2 Նոյն անդ:

3 Նոյն անդ էջ 470:

4 Պղատ. 'ի փեդոն. հա. 1. էջ 109:

զերկրաւ բնակեալ, և մանաւանդ հակոտնէիցն անուանելոց[1], մարթի կալ անվտանգ՝ յոր կոյս և բնակիցեն։ Իսկ ես ասեմ. Եւ համարիցիս թէ արդարև գուցեն հակոտնեայք՝ ընդդիմոտունք մեզ։ Եւկղիդէս ասէ. Զգիտեմ զայդ. զի թէպէտ և մատենագիրք բազումք գծագրեալ թողին մեզ զձև երկրի[2], այլ չև ևս ոք ընդ ոլորտս նորա շրջեցաւ, և հազիւ դոյզն ինչ մասն երեսաց նորա ծանօթ է մեզ։ Ծիծաղել՝ ի դէպ է ընդ յանդուգն վճիռ նոցա, որով առանց իրիք հաւաստեաց սահմանեն զերկիր շուրջ պատեալ յովկիանոս ծովէ, և զԵւրոպէ համարին հաւասար Ասիոյ[3]։

Հարցի և ասեմ. Որչափ ինչ կողմանք երկրի ծանօթք են Յունաց։ Իսկ նա առ պատմիչս զորս ընթերցեալ էր իմ՝ յղէր զիս. այլ ՚ի յոյժ թախանձելն իմ զնա, ասէ. Պիւթագոր և Թաղէս բաժանեցին նախ զերկինս ՚ի հնգեակ գօտիս. երկու ՚ի նոցանէ ցրտայինք, երկու բարեխառն, և այրեցական գօտին որ ձգի ընդ հասարակածն[4]։ Ոչ բազում ժամանակք են, զի Պարմենիդէս զնոյն բաժանումն և զերկրաւ էած[5]. որ ահաւասիկ գծեալ կայ զգնտաւդ։

Սակաւ ինչ մասն երեսաց երկրի բնակելի է

1 Դիոգ. լայերտ. գիրք Գ. յօդ. 24. գիրք Ը. յօդ. 26։

2 Արիստոտ. Նշանք օդ. գիրք Ա. գլ. 13. հա. 1. էջ 545։

3 Հերոդոտ. գիրք Դ. գլ. 8 և 36։

4 Ստոբ. Ծաղկաքաղ բնաբ. գիրք Ա. էջ 53։

5 Ստրաբ. գիրք Ա. էջ 94։

մարդկան, զի սառնասառոյց ցրտութիւն և թօ-ցակէզ տօթ անբնակ առնեն զկողմանս երկրի մերձ 'ի բևեռս և 'ի հասարակածն [1]. 'ի բարեխառնն ահանգս յաճախեալ է բնակութիւն նոցա։ Բայց սխալեն որք յաշխարհացոյց պատկերս բոլորակաձև սահմանեն զմասն երկրի զմարդաբնակ. զի յոյժ անձկագոյն են բնակեալ 'ի մարդկանէ սահմանք երկրի 'ի հիւսիսոյ 'ի հարաւ քան յարևելից յարևմուտս [2]։

Ի հիւսիսոյ եւքսինեանն Պոնտոսի կան ազգք սկիւթացւոց, յորոց կէսք գործեն զերկիր, այլք անկայուն վարեն կեանս թափառականք ընդ լայնատիփուռ սահմանս տէրութեան իւրեանց. և անդր ևս քան զնոսա բնակեն այլ և այլ ազինք, յորս և մարդակերացն ազգ։ Այլ նոքա, ասեմ, չեն կիւթացիք։ Պիտեմ, ասէ. զի և ոչ պատմիչք մեր խառն 'ի խուռն ինչ զնոցանէ աւանդեն [3]։ Ի վերոյ քան զազգն խուժադուժ՝ ասեն լինել անապատ անհուն [4]։

Ընդ արևելս աշխարհակալութեամբքն Դարեհի ծանուցան ազգք, որ մինչև ցՀնդկս տարածանին։ Յայնկոյս գետոյս ասեն լինել երկիր ընդարձակ հաւասար միւսոյ մասին Ասիոյ [5]։

1 Արիստոտ. Նշանք օդ. գիրք Բ. գլ. Ե. հա. 1. էջ 562։ Դիոգինի. և Անաքսագ. առ. Սոտբէոսի ծաղկաքաղ բնաբ. գիրք Ա. էջ 34։

2 Արիստոտ. անդ։

3 Հերոդոտ. գիրք Դ. գլ. 18։

4 Նոյն անդ գլ. 17։

5 Կտեսիաս առ. Ստրաբոնի, գիրք ԺԵ. էջ 689։

Դոյզն ինչ կողմն աշխարհին Հնդկաց նուաճեալ ընդ ձեռամբ Թագաւորացն Պարսից, մատուցանէ նոցա հարկս ամի ամի մեծագանձս 'ի փողի ոսկւոյ[1]: Այլն ամենայն անծանօթ է մեզ:

Ընդ արեւելեան հիւսիս 'ի վեր քան զկասպիական ծով են ազգք բազումք, որոց անուանքն առ մեզ անուանիք: Կէսք 'ի նոցանէ զամիս վեց անընդհատ՝ ասի թէ ննջեն[2], եւ կէսք միականիք են[3], եւ այլք դարձեալ նոխազոտունք[4]: Այսպիսեաց աստի զրուցաց 'ի միտ առցես՝ թէ որպիսի ինչ տեղեկութիւնք իցեն մեզ զաշխարհէն:

Ընդ արեւմուտս մինչեւ ց՚Հերակլի արձանսն հասանք, եւ աղօտ ինչ գիտութիւն է մեզ զազգացն բնակելոց 'ի ծովեզերս Սպանիոյ * . իսկ միջերկրայք աշխարհին բնաւին անծանօթք են մեզ[5]: Անդր եւս քան զարձանսն ատլանտականն ծաւալեալ ծով, հասանէ մինչեւ ցարեւելեան կողմանս Հնդկաց՝ որպէս թուի[6]: Անդր տիւրացւոցն եւեթ եւ կարքեդոնացւոց յաճախեն նաւք, եւ նոցին իսկ ոչ իշխելով հեռանալ 'ի բաց 'ի ցամաքէ. քանզի անցեալք ընդ կիրճն, կէսք իջանեն ընդ հարաւ եւ քերեն զափամբք Ափրիկեայ, այլք դառնան ընդ հիւսիս՝ երթալ փոխանակել զվաճառս իւրեանց ընդ անագի կասիտերեան ** կղզեաց, որոց վայր

1 Հերոդոտ. գիրք Գ. գլ. 94:
2 Նոյն գիրք Դ. գլ. 25:
3 Նոյն գիրք Գ. գլ. 116:
4 Նոյն գիրք Դ. գլ. 25:
* Սպանիա:
5 Ստրաբ. գիրք Ա. էջ 93:
6 Արիստոտ. յղ. երկնից, գիրք Բ. գլ. 14. էջ 479:
** Բրիտանեան կղզիք:

անծանօթ է Յունաց[1]։

Բազումք բազում ինչ փորձ փորձեցին ընդ-
արձակելոյ ընդ հարաւ զաշխարհագրական տե-
ղեկութիւնս։ Հրամանաւ Նեկոսի, որ յառաջ
քան զամն իբր երկերիւր թագաւորեաց յԵգիպ-
տոս, սակայն նաւաց ոմանց փիւնիկեցի նաւա-
տեօք մեկնեալ 'ի ծոցոյ Արաբիոյ, և պատեալ
զԱփրիկէաւ, և յետ երկուց ամաց դարձեալ ան-
դրէն յԵգիպտոս ընդ կիրճն Կադիր *[2]։ Այ-
այլոց ևս նաւորդաց սակայն շրջեալ ընդ այն կողմն
երկրի[3]. այլ թէ ճշմարիտ իսկ իցեն նաւարկու-
թիւնք նոցա, չեղեն ինչ յօգուտ։ Չէր մարթ
վաճառականութեան յաճախել զերկայն և զտա-
ժանաւոր ծովագնացութիւնս դժուարադէպ յու-
սով։ Ապա յարևելեան և յարևմտեան ծովեզերս
ևեթ Ափրիկեայ յաճախէին երթևեկք, ուր և
գաղթականք բազումք 'ի Կարքեդոնէ բնակեցին
'ի կողմն արևելից։ Նաև զմիջերկրայց աշխարհին
պատմեն զի է անդ ճանապարհ որ 'ի Թեբայիդայ
մինչև ցՀերակլի արձանսն ածեալ հաստուցանէ[4]։
Այլ ազգս մեծամեծս սակայն լինել անդ, այլ ա-
նուանք ևեթ նոցա ծանօթ են մեզ. և քեզէն իսկ
'ի միտ առցես ըստ նախ ասացելոցս, զի ոչ ար-

1 Հերոդոտ. գիրք Գ. գլ. 115։ Յիշատ. բանաս. կաճառոյն, հտ. 19. էջ 158։

* Որ այժմ կոչի Կադիքս։

2 Հերոդոտ. գիրք Դ. գլ. 42։ Յիշատ. բանաս. կաճառոյն, հտ. 28. էջ 309։

3 Ստրաբ. գիրք Բ. էջ 98։

4 Հերոդոտ. գիրք Դ. գլ. 181։ Յիշատ. բանաս. կաճառոյն, էջ 303։

դեռք յայրեցականն ընտանեացն 'ի գաւառն :

Զաւրաւանքն մեր պշրճապատ երեքին առեն լինել քառասուն բիւր սպառազինաց [1]. չկամիմ թէ եցէ հաշիւն անխաւլ, այլ զի քառորդ մի շրջապատի նորա հազիւ ծանօթ է մեզ՝ ընդ այս չկը ինչ երկբայութիւն :

ԳԼՈՒԽ ԼԲ.

Վասն Արտաւազդայ :

Եւ յետ բանիցս այսոցիկ 'ի վաղիւ անգղր լուր եղև, թէ Արտաշիսպարս կիւրենացի հասեալ է յԱթէնս . և իմ չէր տեսեալ զնա : Յետ մահու վարժապետին իւրոյ Սոկրատայ շրջեցաւ նա ընդ ազգս բազումս , և հուշակեցաւ յոյժ անուն նորա [2] : Բազումք համարեցան զնա ազանդապետ , և ամբաստանեցին զնա՝ զի զայլանդակ կցորդութիւնն հնարէր առնել առաքինութեանց ընդ յոռութիւնս , այլ զհանճար նորա գովեցին ամենեքին :

Ընդ հասանելն յԱթէնս , եբաց անդ վարժարան [3] . և ես խառն 'ի խուռն ամբոխեալ անգղր 'ի ներքս մտի . և առանձինն իսկ տայա եղև ինձ

1 Արիստոտ. յղ. երկնից, գիրք Բ. գլ. 14. հա. 1. եր 472 :

2 Դիոգ. Լայերտ. յԱրիստ. գիրք Բ. յօդ. 79: Վիտրուվ. յառաջաբ. գիրք Զ. եր 102 :

3 Դիոգ. Լայերտ. յԱրիստիպ. գիրք Բ. յօդ. 62 :

խօսել ընդ նմա. և որ ինչ զկարծեաց նորա և զկենացն զխտացի զհանգամանս, գրեթէ նորին իսկ բանիւքն զօղեմ աւասիկ[1]:

Մինչ մանուկն էի, ասէ, համբաւ Սոկրատայ ձգեաց զիս զհետ[2], և զեղ խրատուց նորա կաքաւ զիս առ նմա. այլ զի պահանջէր նա դժուարինս 'ի վեր քան զիմ կար, խորհեցայ առանց խոտորելոյ յօրինաց նորա՝ գտանել այլ ուղի իմումն պատշաճեալ զօրութեան, ընդ որ դիւրագոյն յեզրն ցանկալի իցէ ինձ հասանել:

Յաճախ իսկ ասէր նա ցմեզ, զի առ 'ի չգիտելոյ զէութիւն և զհանգամանս իրաց որ արտաքոյ մեր են, հասանէ մեզ հանապազ զբարին չար համարել և զչարն բարի[3]: Նա խրատս այս զարհուրեցուցանէր զհեղգութիւն իմ. զի շուրջ պատեալ յերկիւղալեաց և 'ի ցանկալեաց, հարկ էր ընտրել զնոսա առանց հայելոյ յերեւոյթ նոցա բազմավրէպ, և 'ի վկայութիւն զգայութեանցս խաբեպատիր:

Խորհեցայ յանձն իմ, և անհաս ինձ թուէր միտումն այն 'ի հեշտալիս և 'ի վշտալեաց խորշումն՝ զոր բնութեան անկեալ է 'ի սիրտ իմ՝ առհասարա չէայ ստոյգ և զգալի ազդեցութեան կամաց

1 Մենցիոս յԱրիստիպ: Պրուկ. պատմ. իմաստ. հտ. 1. էջ 584: Յիշատ. բանաս. կաճառոյն, հտ. 26. էջ 1:

2 Պլուտ. յղ. հերոսացն. հտ. 2. էջ 516: Դիոգ. Լայերտ. յԱրիստիպ. գիրք Բ. յօդ. 68:

3 Քսենոփ. յիշատ. գիրք Գ. էջ 777. գիրք Դ. էջ 798: Պղատ. 'ի Մեն. հտ. 2. էջ 88:

իւրոց՛ ։ Ո՛չ եթէ մեղանչականք իղձքս այս էին, ընդէ՞ր իսկ զայնասիկ անկեաց նա ՚ի յիս. իսկ եթէ անմեղանչականք, ընդէ՞ր չուղղեցէն զընտրութիւն իմ ։

Սակաւիկ մի յառաջ տեսի նկարեալ ինչ ՚ի Պարրասեայ, և լուայ նուագս ինչ յարդարեալս ՚ի Տիմոթեայ. պարտ էր ինչ գիտել ինձ զի՞նչ երփն երփն երանգոցն իցէ և ձայնից զանազանութիւն, զի մի տարապարտ զմայլեալ գտանէի [1], և չէ՞ր ինձ մարթ առնել դատաստան՝ զի երգն այն և նկար [2], գէթ առ իս, արդարև պիտանիք էին ։

Նոյնպէս ուսայ դատել զամէն ըստ բերկրութե՛ և ըստ վշտաց՝ զոր ազդէին յիս, խնդրել որպէս պիտանիս զախորժելիսն [3], և խորշել որպէս ՚ի վնասակարաց՝ որ զներհակսն ազդէին յիս ։ Նոյն ՚ի միտ առ, զի ՚ի բաց թողեալ զզգացմունս վշտալիս և որք անզգայեցուցանէին զհոգի, այլ ամենայն ազդմունք մեղմականք՝ որ յուզէին զնա առանց աշխատ առնելոյ, անընդհատ յաջորդութեամբն իւրեանց յարդարէին ըստ իս զմարդկան բարօրութիւն. զոր և առ ՚ի բացատրել զբերկրանս այնր կենաց՝ կոչեմ հեշտութիւն [4] ։

Վասն ուղղութեան առեալ ինձ զայս ազդմունս ներքինս, զերկեակ ազգ շարժմանցս՝ զորոց ասացի, զամենայն ինչ ապա ինձ համեմատեմ. յայլ ամե-

1 Դիոգ. Լայերտ. յԱրիստիպ. գիրք Բ. յօդ. 88 :

2 Կիկեր. ակադ. 2. գլ. 24. հտ. 2. էջ 32 :

3 Դիոգ. Լայերտ. անդ. յօդ. 86 :

4 Կիկեր. յղ. կատար. գիրք Բ. գլ. 6. հտ. 2. էջ 107 :

նոյն մասունս տիեզերաց առ անձինս եւեթ օգուտ պատկանիմ, եղեալ կեդրոն և չափ ամենայնի[1]։ Որպէս թէպէտ և յոյժ չքեղ է ինձ կայեանս, չկարեմ յանդորրու կալ անդ առանց վարելոյ ըստ հանգամանաց ժամանակին և տեղւոյ և անձանց[2]։ Այլ քանզի չկամիմ վշտանալ, ոչ 'ի ստրջանաց և ոչ 'ի կասկածանաց, 'ի բաց մերժեմ 'ի մտաց իմոց զխորհուրդս անցելոցն և հանդերձելոց, և 'ի մերձակայն բոլորովին կեամ[3]։ Ի սպառել զաերկրութիւնս 'ի միում նահանգի, 'ի միւս յայլ անցանեմ 'ի հուռձս. և թէպէտ օտար առ ամենայն ազինս[4], չեմ և ոչ ումեք թշնամի. վայելեմ 'ի բարութիւնս նոցա, և օրինաց նոցա պատկառ կամ։ Այլ եթէ չիցեն իսկ օրէնք, առն իմաստասիրի պարտ է զգուշանալ 'ի վրդովելոյ զկարգ հասարակաց յանդուգն մձռամբք կամ խառն 'ի խուռն գնացիւք[5]։

Հաւասարիկ յայտնեմ քեզ զծածուկս իմ, նշաւակելով 'ի միասին և զայլոցն զրեթէ ամենեցուն։ Պարտք և պատշաճք միաբանութեան մարդկան են յաչս իմ տուրևառք հանապազորդ. քայլ մի ոտին ոչ փոխեմ, առանց ակն ունելոյ շահաւէտ փոխարինին. վաճառականն լինիմ մտաց

1 Դիոգ. Լայերտ. յԱրիստ-տիպ. գիրք Բ. յօդ. 98։
2 Նոյն անդ յօդ. 66։ Ով-րատ. գիրք Ա. Թուղթ 17. տող 23։
3 Աթեն. գիրք ԺԲ. գլ. 11. էջ 844։
4 Քսենոփ. յիշատ. գիրք Գ. էջ 736։
5 Դիոգ. Լայերտ. անդ յօդ. 68։

խնոց և հիւանդութեանց և խնամոց և բարերարու-թեանց . ոչ ինչ անփութացիմ առ նմանէն իմ . մե-ծարեմ զնոսա ուր պատահիմ, և սպասաւորեմ նո-ցա յորժամ կարեմ . չխափանեմ զպահանջմունս նոցա , և զկարիս նոցա անքաւիր առնեմ : Այլ չեն ինչ նոքա ապաշնորհք , և բազմաշահ տօկո-սեօք դառնան զլուխք 'ի գոգս իմ :

Բայց միայն պարտ վարկայ հերքել 'ի բաց. զձևան զայնոսիկ , որ կոչին ազնուականութիւն խնամոց և վսեմ զնացք : Ողջեն իմ աշակերտք , և պահանջէի 'ի նոցանէ վարձս . զարմացաւ ընդ այն վարժարանն Սոկրատայ , և բողոք իսկ ե-բարձ , ոչ զմտաւ ածեալ՝ զի տապալէր այնու զա-զատութիւն վաճառաշահութեան :

Յառաջնումն նուագի յանդիման լինելոյ իմն Դիոնիսեայ արքային սիրակուսացւոց , եհարց նա ցիս՝ թէ առ ինչ գաս : Այլ ես ետու պատաս-խանի . փոխանակել զպարգևս քո ընդ գիտու-թիւնս իմ , և զպէտս իմ ընդ քոյդ [1] : Հաճեցաւ նա ընդ առևտուրն , և մեծարեաց զիս առաւել քան զայլ իմաստասէրս՝ յորոց շուրջ պատեալն էր [2] :

Հարցի յայնժամ զԱրիստիպպոս , և ասեմ . Այլ ճշմարիտ իցէ , զի մեծարանքն այն զնախանձ նոցա 'ի քեզ ձգեցին : Արիստիպպոս ասէ . Ո՛վ դժնդակ կիրքդ այդ էին 'ի նոսա , չգիտեմ . այլ

1 Դիոգ. Լայերտ. յԱրիս-տիպ. գիրք Բ. յօդ. 77 : Որվ-բառ. Թուղթ 17. գիրք Ա. տող 20 :

2 Դիոգ. Լայերտ. անդ. յօդ. 66 :

ես զզուշացեալ եմ անձին ոչ միայն 'ի մեղանաց, այլ և յամենայն բռնաւոր կրից, որովք որք զգածենն՝ անձանց առաւել քան այլոց գործեն աղէտս[1]: Չիք իմ նախանձեալ երբէք, բայց միայն ընդ մահ Սոկրատայ[2]. և վրէժ չիք իմ յումեքէ խնդրեալ, բաց 'ի միօջէ որ թշնամանէրն զիս, որում ասացի անխռով. Տեղի տամ ատի, զի թէ դու կարիցես ժայթքել բանս թշնամանաց, կարեմ և ես չլսել զայնս[3]:

Իսկ բարեկամութիւն, ասեմ, որպիսի՞ ինչ թուի քեզ: Արիստիպպոս ասէ. Բարեկամութիւն գեղեցիկ է համայն և փառաւոր քան զամենայն պարգևս երկնից. բերկրութիւնք նորա ցանկալիք, այլ ահագինք արկածք նորա: Այս թուեցի՞ քեզ իմաստութիւն դնել զանձն 'ի վտանգ կորստեան, որոյ վիշտք դառնացուցանեն զմնացուած կենաց մարդկան: Պատմեցից քեզ երկու ինչ, և 'ի միտ առցես քանի՞ զգուշութեամբ բերիմ յիղձս բարեկամութեան:

Մինչ էի ես յԱդգինա կղզւոջ, լուայ զի Սոկրատ սիրելի վարժապետն իմ դատապարտեալ կայր 'ի բանտի, և պատուհաս մահուն յետ ամսօրեայ ժամանակի կատարելոց էր, և հրաման էր աշակերտաց նորա գնալոյ առ նա[4]: Եթէ մարթէր ինձ առանց իրիք անպատեհութեան գնալ

1 Դիոգ. լայերտ. յԱրիս-տիպ. գիրք Բ. յօդ. 91:
2 Նոյն անդ յօդ. 76:
3 Նոյն անդ յօդ. 70:
4 Պղատ. 'ի փեդոն. հտ. 1. էջ 59: Դեմետր. յղ. պերճախօս. գլ. 306:

խզել զշղթայս 'ի նմանէ, դիմէր յօգնութիւն
նորա. այլ չէր ձեռնհաս օգնել նմա, նմին իրի
և կացի անդ յԵգինա: Ո՞չ իմ օրէնս եղեալ է
անձին, զի ուր թշուառութիւն բարեկամի ա-
պստամբ է 'ի հնարից' խնայեմ զանձն 'ի վշտաց
տեսանելոյ զկիրս թշուառութեան նորա:

Աշակերտակից էր ինձ Սկզբինէս առ ոտս Սո-
կրատայ վեհագոյն վարժապետին, և մտերիմ բա-
րեկամ. սիրէի զնա վասն առաքինութեցն, թերևս
և վասն բարութեանցն զոր արարեալ էր ընդ իս[1],
և վասն առաւել հաճելոյ նորա ընդ իս քան ընդ
Պղատոն[2]: Այլ 'ի գժտել մեր ընդ միմեանս,
ասէ ոմն ցիս. Եւ ո՞ւր է բարեկամութիւնն, որով
կապեալն էիք ընդ միմեանս: Իսկ ես ասեմ. ՙՆն-
ջէ, այլ 'ի կամս իմ է զարթուցանել զնա: Եւ
երթեալ առ Սկզբինէս, ասեմ. Անգիտացաք
երկոքեան. այլ կարծիցես զիս անուղղայ, և ան-
արժան ներելոյ թողութեան: Իսկ նա ասէ.
Յաղթես ինձ յամենայնի, Արիստիպպէ. ես անի-
րաւեցի, և դու նախ խոնարհիս առ իս[3]: Եւ համ-
բուրեցաք ընդ միմեանս, և զերծայ 'ի դոյզն ինչ
դժկամակութենէն որ գժտեցուցանէրն զմեզ:

Յայնժամ ասացի. Ապա ուրեմն, թէ ոչ սխա-
լեմ, պարտ է ըստ օրինացդ քոց առնել բարեկա-
մութիւն ըստ պատշաճից ևեթ, անկարեկիր ընդ

1 Դիոգ. լայերտ. յԱրիս-տիպ. գիրք Բ. յօդ. 61:
2 Նոյն անդ յօդ. 60:
3 Պլուտ. յղ. բարկ. հա. 2. էջ 462: Դիոգ. լայերտ. անդ յօդ. 82:

[illegible] բարեկամաց ։ Ընդ որ վարանեալ նորա, [illegible] ասէ. Ընթերցե՞ր... զԵւրիպիդեայն ասպա[illegible]ից, զոր Փեդրայն իւրում տայ բարբառել. Դու ասես զայդ, և ոչ ես[1] ։

Բայց Քրիստոսիպպեայ գիտելով զի արհամարհեալ էր յաչս աթենացւոց, պատրաստ կայր հանապազ ՚ի պատասխանել կշտամբանացն զոր առնէին նմա, և ստիպէր զիս պատճառս տալ նմա ջատագովելոյ զանձն ։ Ասեմ. Ամբաստանեն զքեզ յեղեռն սոսկալի, զի սպաս արարեր բռնաւորի ։ Նա ասէ. Ասացի քեզ վասն որոյ իրաց եղև ինձ գնալ յարքունիս Սիրակուսայ. Ի՛ էին արքունիքն իմաստասիրօք, իւրաքանչիւր ուրուք պէտ մակացութեանն զանձն ընծայեցուցանելով. իսկ ես զտանելի առի զշէնս առանց ՚ի բաց մերկանալոյ զուղղութիւն ։ Գովէի զլաւութիւնս նորա, զչարութիւնսն ոչ գովելով և ոչ պարսաւելով. զի և չէր իսկ ինձ անկ ։ Գիտէի ևեթ զի դիւրագոյն էր համբերել նոցա, քան ուղղել զնոսա ։

Ներող և համբոյր բնութեամբ ձգէի յանձն զմոլորութիւն նորա, և ճարտար հանճարաբանութեամբք որ երբեք երբեք յաջողէին ինձ՝ զբօսացուցանէի զնա ։ Ոչ երբեք դրժեցի ճշմարտութեան ՚ի հարցանել նորա զիս զկարևորաց. և առ ՚ի յայտ առնել նմա զմեծութիւն պարտուց իւրոց, և որպէս զի զգանութիւն բարուց իւրոց

1 Եւրիպիդ. յիպպող. տող 352 ։

ամենահաւատարեալ նուաճէր, ասէր յաճախ 'ի լուր նորա, զի այր գիտուն այնչափ ինչ ընդհատ է 'ի տխմարէ՝ որչափ երիվար դիւրասանեալ յանսանձելոյն[1]: Այլ ոչ զտեսչութենէ էին բանք, խօսէր ընդ նմա համարձակ, էր զի եւ յանդուգն: Յաւուր միում յաղաչել ինձ առ նա վասն միոյ ուրուք 'ի բարեկամաց իմոց, եւ յոչն լսելի լինել, անկայ առ ոտս նորա: Եւ որոց վասն այնր եպերէինն զիս՝ ասեմ. Եւ իցե՞ն ինձ յանցանք խոնարհել յոտս նորա, եթէ յոտս անդ իցեն նորա լսելիք[2]:

Դէպ եղեւ երբեմն զի Թախանձէի շնորհս ինչ 'ի նմանէ. եւ նորա ոչ լսելով ինձ, Պղատոնի առնէր շնորհս՝ որ հրաժարէրն յայնմանէ. յայնժամ ասեմ համարձակ. Աչ 'ի վտանգ արկանէ արքայ զմեծութիւն իւր, պարգեւելով որոց հրաժարեն, եւ ժխտելով որոց խնդրեն[3]:

Խնդիրս առաջի առնէր մեզ յաճախ, եւ ապա կարճեալ զբանս մեր՝ ինքնին փութայր տալ զլուծումն: Ի միում աւուրց ասէ ցիս. Խնդիր 'ի մէջ առցուք, սկսիր դու: Եւ ես ասեմ. Քաջ է, ես սկսայց՝ զի դու կատարեսցես, եւ ուսուսցես ինձ զոր ուսանելն կամիս: Եւ դժուարեցաւ ընդ այն, եւ յընթերցս խոնարհագոյն քան զամենեսին ետ արկանել ինձ բարձ: Իսկ 'ի վաղիւ

1 Դիոգ. Լայերտ. գիրք Բ. 'ի բանն 'Αρίστιπ. յօդ. 69:

2 Նոյն անդ յօդ. 79: Սուիդ. էջ 965:

3 Պլուտ. 'ի Դիոն. հատ. 1.

անդր եհարց զնա զայնմանէ, և ես ասեմ. Հաճեցաւ արքայ զյետոյն տեղւոյն վայրիկ մի նախամեծար առնել[1]:

Յաւելը դարձեալ, և ասեմ. Ապերեն զախորժակս քո յինչս, 'ի շուք, 'ի խնճոյս, 'ի կանայս, յիւղս անուշունս, և յամենայն ազգի ազգի սպաս զգայութեանց[2]: Պատասխանի ետ Արիստիպպոս, և ասէ. Զախորժակս այդոցիկ 'ի ծնէ յանձինս բերելով, համարիմ զբնութեան և զբանին միանգամայն կատարել զհրաման՝ չափով զնոքօք եկեալ. վայելեմ 'ի բերկրանս կենցաղոյս, և դիւրաբար հրաժարեմ յայնցանէ: Յարքունիս Դարեհի զգենուլ ծիրանիս[3], իսկ այլուր մերթ ասուիս միլետացի, և մերթ խարազն զգեցեալ[4]:

Դիոնեսիոս ըստ իւրաքանչիւր պիտոյից խնամէր զմեզ. Պղատոնի պարգևէր դիրս, իսկ ինձ արծաթ[5]. այլ ոչ յամէր այն առ իս մինչև ցժանգոտել զձեռս իմ: Աստ երբեմն գնել կաքաւ մի յիսուն դրամականաց. և 'ի զայթակղել ոմանց ընդ այն՝ ասեմ. Ո՞չ ապաքէն գնէիք դուք զանկի՛ միոջ: Ասեն. Այո: Այլ ես ասեմ. Այթէ դուք զանկլի միոջ գնէիք զայն, ոչ ինչ աւելի քան զդանկ մի յարգէին առ իս յիսուն դրամականքիրոք[6]:

1 Եգեսանդ. առ Աթենէոսի, գիրք ԺԲ. գլ. 11. էջ 544: Դիոգ. Լայերտ. գիրք Բ. յօդ. 73:
2 Աթեն. գիրք ԺԲ. գլ. 11. էջ 544:
3 Դիոգ. Լայերտ. անդ յօդ. 78:
4 Նոյն անդ յօդ. 67: Պլուտ. յղ. զօրութեան Աղէքս. հտ. 2. էջ 330:
5 Դիոգ. Լայերտ. անդ յօդ. 81:
6 Նոյն անդ յօդ. 66:

Պատրաստեալ իմ զումար ինչ արծաթոյ վասն ուղեւորելոյ 'ի Լիբիա, իբրեւ ոչ կարէր ստրուկն իմ որ կրէրն զայն՝ հասանել ինձ զհետ, ետու թողուլ 'ի Ճանապարհի զմասն ինչ դժուարակիր ծանու բեռինն[1]։

Յարկածից ուստեք կործանեցան ամրապատան ապարանք իմ, որ յոյժ սիրելի էին ինձ. եւ մինչ-դեռ մի 'ի բարեկամաց իմոց հնարէր սփոփել զիս, ասեմ ցնա. Պփոխեա զի երրեակ այլ ապարանք են իմ, եւ առաւել ուրախ եմ յորս ժառանգեմն քան տրտում ընդ կորուսեալն։ Մանկանց է լալ եւ ընկենուլ 'ի բաց զձնաւ իսկ խաղալիկս, 'ի բառնալ ուրուք 'ի նոցանէ զմին[2]։

Զօրէն խստակրօն իմաստասիրաց ինքնամատոյց լինիմ բախտին իբրեւ զգուշտ, զոր ըստ հաճոյս իւր գիտէ նա, այլ չկարիցէ զառամբ ածել զայն՝ կառաւն ձեռին 'ի նմա ոչ դոլով։ Ոչ է առ իս զկայ առեալ բազմի, ձեռն կարկառեմ առ նա. եթէ թեւածեալ թռանի յինէն, թողում 'ի նա զպարգեւսն՝ բառնալ տանել ընդ իւր[3]։ Հանգոյն է նա յեղյեղուկ կնոջ, որոյ անձնահաճ ախորժակք երբեք երբեք զլռսանս ածեն ինձ, այլ միշտ ոչ երբեք։

Յառատաձեռնութենէ Պփոնեսեայ էին ինձ

1 Դիոգ. լայերտ. գիրք Բ. յօդ. 77։ Ովիտ. գիրք Բ. երգիծ. 3. տող 100։

2 Պլուտ. յղ. անդորր. հոգւոյ, հա. 2. էջ 469։

3 Ովիտ. գիրք Գ. տաղերգ. 29. տող 63 եւ 64։

սեղան բազմախորտիկ, զգեստք պայծառք, և բազմութիւն սորկաց: Ամաստասէրք բազումք. նախանձայոյզք խստակրօն բարուց, պարսաւէին զիս զէմ յանդիմանն'. իսկ ես ծաղրածութեամբ տայի նոցա պատասխանի: Ի միում աւուրց Պողիքսենոս, որ զպարառութիւն առաքինութեանց կարծէր յանձին իւրում բերել, ետես զի էին առ իս կանայք երեք գեղեցիկք, և պատրաստութիւն մեծ ընթրեաց, և եհեղ անդ զամենայն զատանութիւն նախանձուն իւրոյ: Իսկ ես տեղի ետու նմա բարբառելոյ, և առաս հրաւիրեցի զնա կալ ընդ մեզ յընթրիս: Ընկալաւ ըզհրաւէրն, և յայտ արար զի թէպէտ և չախորժէր ընդ ծախս, այլ ախորժելի էին նմա կոչունք և հրապոյրք[2]:

Չկարեմ յայտնագոյնս արդարացուցանել ըզվարդապետութիւն իմ քան գործովք իմովք. արդ լուր: Դիոնեսիոս ետ ածել կանայս երիս գեղեցիկս, և պատուէր ետ ինձ ընտրել զմի 'ի նոցանէ. իսկ ես զերեսեան ևս ածի առ իս պատճառանօք, զի չար եղև յոյժ Պարիսի նախամեծար առնել զմի ոք յերից դիցուհեաց: Այլ զճանապարհայն ածեալ զմնաւ՝ զի հրապոյրք գեղոյ նոցա ոչ արժեն զաներկրութիւն յաղթելոյ անձին, արձակեցի զնոսա 'ի տունս իւրեանց, և մնի խաղաղութեամբ

[1] Քսեն. յիշատ. էջ 733: յօդ. 69: ԱԹեն. գիրք ԺԲ. էջ 544:
[2] Դիոգ. Լայերտ. անդ. Դիոգէն. Լայերտ. գիրք Բ. յօդ. 78:

՚ի տուն իմ[1] ։

Յայնժամ ասեմ. Քրիստոսիպակէ, շրջես ընդ դրախտս իմ. անջան իմն կարծէի զիմաստասիրու-թիւն քո, և զի ջատագովն որք հեշտութեան մար-թէր շաղկել զանձն համարձակ յամենայն դըր-գանս զգայութեանց ։ Քրիստոսիպակս ասէ. Եւ ո՞րպէս կարծէիր զի այր որ կարևորագոյն քան զամենայն զբարոյականսն վարկանի զուսումն[2], ապախտ արարեալ զերկրաչափութիւն և զայլ զիտութիւնս՝ զի չեն ինչ կարևորք յօգնութիւն բարուց[3], իմաստասէր որ՝ յորմէ ոչ առնթ հա-մարեցաւ Պղատոն ՚ի կէր առնուլ բազում իմաստս և միթոս[4], և աշակերտ ընդ Սոկրատայ վարժեալս պոռնկութեան կարգեալ իցէ ՚ի բազում քաղաքս Իտալիայ, առանց ուսոյն յանձն իւր ձգելոյ զգա-ստուրս և զքաղաքացիս զկարի իսկ եղծազործս ։ Նոյն հեշտութեան, որով կոչեմ զանկրկութիւն սոսկի որ յարդարէն զբարեկենդանութիւն մեր, խոյծէ զունկն ծանծաղամտաց, որք զբանիւք պա-տառեալ՝ ոչ խելամուտ իմաստիցն ։ Սոյք իմաս-տասէրք, մոլացեալ զանէր արդարութեան, ձեռն-տու եղեն Թիւր կարծեացն. և զուցէ սոսնք յա-շակերտացն իւրոց արդարացուցեն զկարծիսն, ոչ ՚ի չափու կացեալ. այլ բարուք իմաստ փոխեցին ՚ի

1 Աթէն. գիրք ԺԲ. գլ. 11. էջ 544 ։ Դիոգ. Լայերտ. գիրք Բ. յօդ. 67 ։

2 Դիոգինէ. Լայերտ. անդ. յօդ. 79 ։

3 Արիստոտ. բնագանց. գիրք Գ. գլ. 2. հատ. Յ. էջ 860 ։

4 Թեոպոմպ. առ Աթէ-նէոսի, գիրք ԺԱ. էջ 508 ։

յոռութիւն այնու զի զառածանիցին նովաւ ո-մանք 'ի մոլորութիւն [1] ։

Ահաւասիկ պարգևեցի քեզ զվարդապետութիւն իմ. համարիմ միակ գործի բարեկենդանութեան զկիրս որ մեղմով յուզին 'ի սիրտս մեր, և կամիմ զի նուաճեսցին 'ի յարուցանելն աղմուկ և անկարգութիւն[2] ։ Այլ չիք իսկ մեծ ևս արիութիւն, քան դնել սահմանս զրկանաց և վայելից միանգամայն ։

Անտիսթենէս 'ի միասին ընդ իս լսէր զդաս Սոկրատայ. տխուր էր նա բնութեամբ և խիստ, իսկ ես զուարթ և ներող ։ Տարագիր արար նա զամենայն բերկրանս, և ոչ իշխեաց զուպարել ընդ կիրս որ ներգործեն 'ի մեզ զախորժ նուաղումն. այլ ինձ օգտակարագոյն թուեցաւ յաղթել նոցա՝ քան 'ի նոցանէ 'ի փախուստ դառնալ ։ Առ բողոքոյ նոցա, ձգեցի զնոսա որպէս ստրուկս զհետ իմ 'ի ծառայութիւն և յօգնութիւն 'ի բառնալ զբեռան կենաց ։ Հակառակ միմեանց կալաք շաւիղ, և ահաւասիկ արգասիք ձգանց երկաքանչիւրոցս. Անտիսթենէս բարեբաստիկ զանձն վարկաւ, զի համարէր զինքն իմաստուն. իսկ ես իմաստուն զանձն վարկանիմ, զի եմ բարեբաստիկ[3] ։

1 Արիստոտ. առ Կիկերոնի յղ. բնութեան գից, գիրք Դ. գլ. 31. հտ. 2. էջ 812 ։

2 Դիոգ. Լայերտ. գիրք Բ. յօդ. 75 ։

3 Պալթէօ, յիշատ. բանաս. կաճառոյն, հտ. 26. էջ 6 ։

Նշանացեն թերեւս յետինքն, թէ Սոկրատ եւ Արիստիպպոս բանիւք եւ գործովք խոստովանեցին երբեմն 'ի հասարակաց սովորութենէ. այլ յաւելցեն իսկ, թէ դուզնաքեայ համարձակութեանցն փոխարէն ծաղրեցին զայս մեծ յիմաստասիրութիւն ¹:

ԳԼՈՒԽ ԼԳ.

Գրգռութիւնք կրտսերոյն Դիոնեսեայ արքային Սիրակուսացւոց ընդ Դիոնի քեռայն իւրում, և ուղեւորել Պղատոնի 'ի Սիկիլիա *:

ՅՈՐՄԷՀԵՏԷ էի յԵղլադա, շրջէի ընդ գլխաւոր քաղաքս նորա, և տեսեալ իսկ էր իմ զամենայն հանդէսս մեծամեծս՝ որ խմբէին առ այլ և այլ ազգս Յունաց: Այլ ոչ շատացեալ ընդ հարեւանցի արշաւանսն, խորհուրդ կալայ ընդ Փիլոտասայ՝ այց առնել հետազօտութեամբ ընդ ամենայն գաւառս, սկսեալ 'ի Հիւսիսոյ:

Յերեկոյէ ուղեւորութեանս մերոյ Ապողոդոր և Փիլոտաս ածին զիս յընթրիս 'ի տուն Պղատոնի. և էին 'ի տան անդ Սպեւսիպպոս քեռորդի նորա, և բազումք յառաջնոց աշակերտաց նորա, և Տիմոթէոս զօրահռչակեալն յաղթութեամբք: Եւ ասացաւ մեզ, զի Պղատոն խօսէր առանձինն

¹ Կիկեր. յղ. պատաշաճ. գիրք Ա. գլ. 41:

* Ի յետկոյս մատենիս 'ի տեղեկութիւնն. Թիւ Դ:

ընդ Պօղոսի սիրակուսացւոյ՝ որ այն ինչ հասեալ էր 'ի Պեղոպոնեսեայ, և որ յառաջ քան զամս վեց տարագիր 'ի հայրենեացն պանդխտեալ էր ընդ երկար յԱթէնս ։ Վայրիկ մի յետոյ եկն առ մեզ, և թուէր ինձ Պղատոն նեղեալ յոյժ և տագնապեալ. այլ վաղ 'ի սովորականն իւր դարձեալ 'ի զուարթութիւն, հրամայեաց պաշտել զընթրիս ։

Վայելուչք էին և պատշաճք ամենայն սպասք սեղանոյն ։ Տիմոթեայ, որ ոչ այլ ինչ 'ի բանակի լսէր բայց զխաղացից զօրաց, զպաշարմանէ և զճակատ տալոյ, և ոչ այլ ինչ յակումբս աթենացւոց՝ բայց զնաւավարութենէ և զհարկաց, ցանկալի էին յոյժ ճառք բարձրապատումք առանց ճամարտակութեան, և հրահանգիչք առանց ձանձրութեան ։ Երբէք երբէք յոգւոց հանեալ, ասէր. Երանի քեզ ով Պղատոն[1] ։ Եւ 'ի ներումն խնդրել Պղատոնի վասն անպաճոյճ ընթրեացն, ասէր Տիմոթէոս. Ընթրիք ակադեմականք պատրաստեն նինջ քաղցր, և քաղցրագոյն ևս արթնութիւն[2] ։

Ելեաք 'ի բազմականաց վաղագոյն մեկնեցան, և Պօղոս եւ զհետ նոցա ։ Զարմացեալ էաք ընդ հանդարտութիւն նորա և ընդ խօսս, և ասէ ցմեզ Պղատոն. Ես այժմ հաւանի 'ի բանաւորութենէ. Թերևս եկեսցեն աւուրք՝ զի ազատու-

1 Եղիան. զան. պատմ. գիրք Բ. գլ. 10 ։

2 Նոյն անդ. գլ. 18 ։ Աթէն. գիրք Ժ. էջ 419 ։

թիւն հալածեսցէ զնա ։

Եւ տեսեալ զնա Տիմոթէոս մեկնել զբանն, ասէ. Ինձ յոյժ մեծարոյ է Պղատոն, այլ զպատճառս աքսորանաց նորա չգիտացի երբէք հաւատալ, խառն 'ի խուռն ինչ գիտեմ զշփոթիցն որ յաւելն յարքունիս 'ի Սիրակուսա ։ Պղատոն ասէ. Այսր յոյժ 'ի մօտոյ ականատես եղէ ես շփոթիցն այնոցիկ. յառաջագոյն զայրանայի ընդ մոլեգնութիւն և ընդ անիրաւութիւն ամբոխին 'ի ժողովըս ուրեք առ մեզ. որչափ ևս զարհուրելի իցեն և բազմավտանգ չարարուեստ հնարք, որ 'ի վերին երեսս զխաղաղութիւն կեղծաւորեալ՝ եռան անդադար 'ի ներքոյ շուրջ զաթոռով ։ Ի բարձրագոյն կայսն՝ յեղեռն հաւնարի ճշմարտախօսել, և յոճիր մեծ՝ ախորժելի առնել թագաւորի ըղճշմարտութիւն. սիրելութիւն անպարտ առնէ անդ զապիրատն, և անսիրելութիւն մեղապարտ զառաքինին ։ Մարթէր մեզ յաղթութիւն ածել զարքայն Սիրակուսայ, այլ խոտորեցուցին զնա արք անարժանք ։ Ոչ զբախտ Պղատոնի ողբամ, այլ զՍիկիլիոյ առ հասարակ ։

Ի բանից աստի յաճախեաց և ևս 'ի մեզ ցանկութիւն տեղեկանալոյ իրացն. և Պղատոնի զիջեալ 'ի թախանձանս մեր, սկսաւ պատմել այսպէս. Յառաջ քան զամն իբր երեսուն երկու* պատճառք երկարապատումք յոյժ ածին զիս 'ի

* Իբր 389 ամաւ Ն. Ք. ։

Սիկիլիա՝։ Աշրէցն Դիոնեսիոս թագաւորէր յայն- ժամ. և դուք ինքնին գիտէք զի սա նորացոյց իւրով հանճարովն լեալ զարհուրելի, զամենայն կեանս իւր պարապեաց 'ի կաշկանդել 'ի շղթայս զազգս մերձաւորս և զիւրն։ Անգթութիւն նորա յառաջադէմ գոգցես նկրտէր զոյգ ընդ իշխա- նութեանն, որ եհաս մինչև 'ի ծագ բարձրութեն։ Ապշեաց նա զիս առ ինքն, և փոխարէն խոստ- մանցն ակն ունէր յինէն մարդահաճութեան. այլ չեհաս այնմիկ։ Լռեմ զարտմնութիւն նորա զոր արհամարհեցի, և զվրէժխնդրութիւնն յորմէ մազապուր եղէ[2]։ Ի մտի եդեալ էր իմ լռել զանի- րաւութիւնս նորա մինչև ցկեանս իւր. այլ արդ առանց այլոց իսկ նախատանաց զարշելի է յիշա- տակ նորա առաջի ամենայն ժողովրդոց։

Այլ եղև ինձ յայնժամ ստացուած գերապանծ իմաստասիրութեան Դիոնի, այն որ այժմն ել 'ի բաց։ Զքոյր նորա զԱրիստոմաքէ Դիոնեսիոս ընդ այլում ումեք 'ի միասին նոյնօրին հարսնացոյց իւր. և Իպպարինեայ հօր նորա ժամանակս բա- զում կացեալ էր իշխան հասարակապետութեան 'ի Սիրակուսա[3]։ Զրուցատրութիւնն որ եղև ինձ ընդ մանկանն Դիոնի՝ դարձուցէ զքաղաքն զայն յազատութիւն, եթէ իցէ բարեբախտ[4]։

1 Պղատ. Թուղթ 7. հտ. էջ 960։
3. էջ 324 և 326։ Դիոդ. լայ- 3 Նոյն անդ էջ 959։
երտ. գիրք Գ. յօդ. 18։ 4 Պղատ. անդ էջ 326 և
2 Պլուտ. 'ի Դիոն. հտ. 1. 327։

Մ՚իտք նորա գերազանց բացան անդէն առ սկզբնածագ ճառագայթս գիտութեան, և վառեալ ՚ի սաստիկ սէր առաքինութեան, հրաժարեցին անդանդաղ յամենայն ախտից որ նուաստացուցանէինն զնա ։ Նա այնու մտադիւրութեամբ զզժկամակս ծանուցանս յանձն էառ հանդերձ անյողդողդ հաստատութեամբ, որպէս ոչ զոք ՚ի մանկտւոյն տեսեալ էր իմ հանգոյն նմին ։

Յայնմ հետէ հեծէր ընդ ծառայութիւն հայրենեացն[1]. այլ յուսով ազդելոյ զիմաստս առաքինութեանցն իւրոց ՚ի բռնաւորն՝ որ ոչն կարէր կասել ՚ի սիրոյ նորա և ՚ի ծառայութենէ[2], եկաց մնաց առ նմա, և ոչ դադարէր ՚ի խօսելոյ ընդ նմա համարձակ, և զլեղծ արքունեացն արհամարհէր զոխութիւն[3] ։

Զրկեցաւ ապա Պետրոնիոս ՚ի կենաց*, լի արհաւրօք, տագնապեալ ՚ի կասկածանաց, և թշուառական հանգոյն ժողովրդեանն՝ որ զամն երեսուն և ութ ընդ թագաւորութեամբ նորա թշուառացեալ էր[4] ։ Նա ընդ այլ որդիսն եթող զհամանուն իւր, զոր էր ծնեալ նմա Պորիս մի յերկուց կանանց նորա, որ և կալաւ զաթոռն հայրենի[5] ։ Զայն ժամ պատեհ գտեալ Պետրոնի, աշխատ եղև ՚ի բարեբաստութիւն Ափկիլոյ.

1 Պղատ. Թուղթ 7. հտ. 3. էջ 324 և 327 ։
2 Նեպ. ՚ի Դիոն. գլ. 1 ։
3 Պլուտ. ՚ի Դիոն. հտ. 1. էջ 960 ։
* Ն. Վ. 367 ամբ ։
4 Նոյն անդ. էջ 961 ։
5 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 384 ։

խօսէր զմանուկ արքայն, և ասէր. Հայր քո նե-
ցուկ իշխանութեան իւրոյ կալաւ զնաւատորմն
աՀարկուս որ ընդ քոյով ձեռամբ են, և զախուր
մի խուժադուժ Թիկնապահաց որ շուրջ կան զքև.
և Համարէր նոքօք իբր ադամանդեայ շղթայիւք
պարաւանդել զամենայն մասունս պետութեանն.
այլ խաբէր։ Ո՛չ իսկ, որպէս եսն կարծեմ, զօդ-
անլուծանելի 'ի կցորդել զնոսա, բայց միայն ար-
դարութիւն Թագաւորի և սէր ժողովրդեան։
Այս յաւելոյր դարձեալ. Բանն կորանաց իրք իցեն,
եթէ պերճ և պայծառ ծիրանեօք եւեթ և ար-
քունեօք 'ի վեր իցես քան զայլս, և յետինն 'ի
ժողովրդենէ քումմէ զլեսցէ զքեզ զիտու-
թեամբք և իմաստուք առաքինութեան [1]։

Այս ոչ միայն խրատեաց զԹագաւորն, այլ և
յանձանձանօք խնամէր զիրս աշխարհին. և բա-
րեգործելովն յաճախէր իւր ոսոխս[2]։ Ի զուր եղեն
առ ժամանակ մի ամենայն ջանք նոցա, այլ ոչ
յամեցին ընկղմել զԹագաւորն յես անճթալի
ախտս[3]։ Այլ զի ոչ ևս բաւական էր Պիտոն Հակա-
ռակ կալ նոցա, մինայր այնուհետև պարապոյ. և
եգիտ Հնարս սիրելի առնելոյ զիս Թագաւորին։
Իսկ որ յամենայն բաղձանս իւր սաստիկն էր Թա-
գաւորն՝ բազում զիրս գրեաց առ իս Հարկեցու-
ցիչս, և Թախանձէր զիս Թողուլ զամենայն, և

1 Պլուտ. 'ի Դիոն. Հտ. 1. էջ 962։
2 Թուղթ Դիոն. առ Պղա- տոնի, Հտ. 3. էջ 309։
3 Պլուտ. անդ էջ 960։

վաղագոյն փութայ 'ի Սիրակուսա: Յաւելոյր և Դիոն յիւրումն՝ մի՛ յամել ինձ և վայրկեան մի, մինչդեռ զոյր յոյս կացուցանելոյ զիմաստասիրութիւն յաթոռ, և թէ Դիոնեսիոս կազմ և պատրաստ կայր առ բարին, և ազգականք նորա յօժարագոյնս· նպաստամատոյցք լինէին 'ի բարւոքն հաստատել զնա[1]:

Խորհեցայ ուշի մտօք 'ի գրեալսն. չվստահէի 'ի խոստմունս մանկանն՝ որում ծայրայեղ մտաթէր փոփոխել 'ի վայրկենի. այլ պատրաստ էր ինձ թերահաւատել և ընդ կատարեալ իմաստութիւնն Դիոնի, և ապախտ առնել զբարեկամն 'ի կարևոր վտանգին: Մի՛ թէ մի՛ այնորիկ տուեալ էր իմ զանձն յիմաստասիրութիւն, զի 'ի կարդալ նորա առ իս՝ մատն լինէի նմա[2]: Դարձեալ և զայն իսկ ոչ ծածկեցից, զի յուսայի յարդիւնս ածել զերկնեալն 'ի միտս իմ զլաւագոյն կարգ տեսչութեանն, և թագաւորեցուցանել զարդարութիւն 'ի տէրութեան արքային Սիկիլիոյ[3]: Այսոքիկ եղեն պատճառք ուղևորութեան իմոյ*, բնաւ ինչ օտարք յայնցանէ զոր պարսաւադէտք չարախօսեցին զինէն[4]:

Իսկ գտի ես զարքունիս Դիոնեսեայ յուզեալ

1 Պղատ. Թուղթ 7. հա. 3. էջ 327: Պլուտ. 'ի Դիոն. հա. 1. էջ 962: Եղիան. զան. պատմ. գիրք Դ. գլ. 18:

2 Պղատ. անդ, էջ 328:

3 Պղատ. անդ. էջ 327: Դիոգ. լայերտ. գիրք Գ. յօդ. 21:

* Իբր 364 ամաւ Ն. Ք:

4 Պղատ. անդ: Թեմիստ. ճառ. 23. էջ 285: Դիոգ. լայերտ. գիրք Գ. յօդ. 8:

'ի հերձուածս և յաղմուկս շփոթի, և զԴիոն դժնդակ զրպարտութեանց կացեալ նշաւակ [1] ։ Յայն բան Սպեւսիպպոս քեռորդի Պղատոնի ընդ-միջեալ, ասէ. Ո՞ւր զմեծարանսն որ արարան քեռւոյ իմում 'ի հասանել նորա անդր, և զյա-ջողութիւնսն որ եղեն նմա անդ, չհամարձակի նա ինքնին պատմել [2] ։ Յիջանելն 'ի նաւէ անտի ընկալաւ զնա Թագաւորն, և հեծուցեալ զնա 'ի կառս շքեղս ածեալս 'ի չորից սպիտակ երիվարաց, ած զնա յաղթանակաւ ընդ մէջ անթիւ ժողո-վրդոց որ ծածկէին զծովեզրն ։ Նաև հրաման ետ զի դրունք արքունեացն բաց կացցեն նմա հանա-պազ. և մատոյց զոհս 'ի գոհութիւն դիցն՝ վասն բարերարելոյ նորա Սիկիլիոյ ։ Աղաղակի աւա-գանին ամենայն դիմեաց ընդ առաջ ուղղութէ, տարագրեցին զեղխութիւն 'ի սեղանոց իւ-րեանց, և փութային ուսանել զձևս երկրաչափա-կանս գծեալս 'ի վարժապետացն 'ի փոշւոյ՝ որ 'ի գաւիթս արքունեացն իսկ ցանեալ կայր ։

Ժողովուրդն զարմացեալ ընդ արագ փոփո-խումն, արծարծանէր 'ի յոյս. և Թագաւորն դիւ-րալուր ևս զանձն ընծայեցուցանէր առ բողոք նոցա ։ Քաջալերէին այնու զի եմուտ նա 'ի կարգ քաղաքայնոցն Աթենայ [3], ազատագունին քան

1 Պղատ. Թուղթ 7. հտ. 3. էջ 329 ։

2 Պլուտ. 'ի Դիոն. հտ. 1. էջ 963 ։ Պլին. գիրք Է. գլ. 30. հտ. 1. էջ 392 ։ Եղիան. զան. պատմ. գիրք Դ. գլ. 18։

3 Դեմոսթ. Թուղթ Փիլիպ. էջ 115 ։

զամենայն քաղաքս Ելլադայ, և զի 'ի պաշտամունս դից մինչ քարոզն զսովորութեան աղօթան մատուցանէր վասն կենաց բռնաւորին, նորա ցասուցեալ ընդ բռնաւորութեանն անուն՝ ընդ որ յառաջն ոչ դժկամակէր, աղաղակեաց անդէն. Դադարեա յանիծիցդ[1] ։

Ընդ այն բարբառ զահի հարան կուսակիցք բռնաւորութեան. և Փիլիստոս էր առաջնորդ նոցա, այն որ զպատմութիւն պատերազմացն Սիկիլիոյ արար, և այլ հանգոյն նմին գիրս ։ Երիցոյն Դիոնեսեայ աքսորեալ էր զնա 'ի սահմանաց տէրութեան իւրոյ. այլ զի այր ճարտարախօս էր և յանդուգն, դարձուցին զնա յաքսորանացն՝ հակառակ կալ Պղատոնի[2] ։ Ընդ հասանել նորա յաճախեցին դառն զրպարտութիւնք զՊղատոնէ. կասկածելի եղև հաւատարմութիւն նորա, և ամենայն բանք նորա և գործք թիւրեալ կամակորէին ։ Եթէ խրատ տայր կազմել 'ի խաղաղութեան զզօրս և զնաւս, ասէին՝ թէ տկարացուցանէ զիշխանութիւնն արքունի առ 'ի փոխել զթագն 'ի քեռորդիս իւր 'ի համահայր եղբարս արքային ։ Եւ եթէ խրատէր զսան իւր՝ խոկալ յօրէնս իմաստուն տեսչութեան, ասէին թէ թագաւորն ոչ ևս է իշխան՝ այլ աշակերտ Ակադեմեայ, այլ իմաստասէր դաստապարտեալ մինչև

1 Պլուտ. 'ի Դիոն. հտ. 1. էջ 963 ։

2 Պլուտ. անդ, էջ 962 ։ Նեպ. 'ի Դիոն. գլ. 3 ։

ցկեանս 'ի կոյզ և 'ի խնդիր մտացածին բա-
րեաց [1]:

Նա Պղատոնի յառաջ ածեալ զբանն ասէ. Ո՛չ զայլ ինչ իրաց 'ի Սիրակուսա ձառն արկեալ խո-վեցին, բայց զիմաստասիրութիւն հակառակա-մարտ կացուցանելով աթոռոյ, և զհոյլս ախտից հակառակամարտ իմաստասիրութեան: Մերա-տանեցայ և ես Նպատամասնոյց առաջնումն, և իբր թէ համարձակութեամբս իմով առաջի թա-գաւորին՝ լարէի նմա որոգայթ: Ապաքէն ձայնա-կից լեալ Պլատոնի խրատէի զնա, զի եթէ կամէր ընդ փառս իւր և ընդ հաստատութիւն իսկ իշխանութեանն՝ պարտ էր նմա պատրաստել իւր զանձս առաքինի բարեկամաց, առ 'ի վստահա-նալ 'ի նոսա զաւագութիւնս և զգործս աշխար-հին [2], պարտ էր կանգնել վերստին զքաղաքս Յունաց կործանեալս 'ի Կարքեդոնացւոց, և տալ նոցա օրէնս համձարեղս՝ խնդրելով պարապ դար-ձուցանելոյ զնոսա յառաջին ազատութիւնն. և՝ պարտ էր դարձեալ դնել սահման իշխանու-թեանն իւրոյ, և լինել թագաւոր ժողովրդեան իւրոյ և ոչ բռնաւոր [3]:

Երբեք երբեք խոնարհեալ թուէր թագա-ւորն 'ի խորհուրդս մեր. այլ կանխակալ կաս-կածանք նորա ը՟ մտերիմն իմ բարեկամ, զրգռեալ

1 Պղատ. Թուղթ 7. հա. 3. էջ 332 և 336:

էջ 333: Պլուտ. 'ի Դիոն. հա. 1. էջ 962, և այլուր:

2 Պղատ. Թուղթ 7. հա. 3.

3 Պղատ. Թուղթ 3. հա. 3. էջ 315, 319: Պլուտ. անդ:

հանապազ 'ի նեննգաւոր սաղմոսաց, ոչ տեղի տային 'ի սրտէ նորա ։ Յառաջին ամիս բնակութեան իւրոյ 'ի Սիրակուսա զամենայն փոյթ 'ի մէջ առի փարատել զայնոսիկ 'ի մտաց նորա. բայց ոչ միայն չկարացի օգնել, այլ և որ ըստ օրէ տեսանէի զնա ցրտացեալ 'ի սիրոյ Դիոնի [1] ։

Եւ նա դադարեալ էր պատերազմն ընդ Կարքեդոնացիս. և թէպէտ հարևանցի ինչ գործէին նոքա ասպատակս, այլ հարկ էր· զբաւ առնել թշնամութեանն ։ Դիոն առ 'ի յորդորել զզօրավարս թշնամեաց 'ի սէր խաղաղութեան, գրեաց առ նոսա՝ խնդրելով գիտել զպայմանս հաշտութեան, որպէս զի կարասցէ անշարժ 'ի միջի հաստատել զխաղաղութիւն ։ Նամականին, չգիտեմ որպէս, եհաս 'ի ձեռս արքայի. 'ի խորհուրդ կոչեաց վաղվաղակի զՓիղիստոս, և պատրաստեալ զվրէժխնդրութիւն ընդ խորամանկ պատրանօք, կեղծաւորեցաւ հաշտել ընդ Դիոնի, և մեծապարգև մեծարեալ զնա՝ ած 'ի ծովեզր, և անդ ցուցեալ նմա զնամականին չարաշշուկ՝ կշտամբեաց զնա իբր տիրադաւ, և ոչ տուեալ նմա տեղի պատասխանւոյ՝ հրամայեաց հանել զնա 'ի նաւ, և առ ժամայն մեկնեցաւ նաւն 'ի բաց [2] ։

Պակեաւ Սիկիլիա իբր 'ի ձայթիւն ամբարհա-

1 Պղատ. Թուղթ 7. հտ. 3. էջ 329 ։

2 Պղուտ. 'ի Դիոն. էջ 962 ։ Պղատ. անդ ։

րութեան, և արհաւիրք կալան զամենայն բարեկամս Պիոնի. երկիւղ էր անկանելոյ զմեօք շանթիցն, և համբաւ մահու տարածեցաւ զինէն ընդ Սիկիլիա: Բայց զհետ դառնաշունչ մրրկին յաջորդեաց յանկարծ խորին խաղաղութիւն. զի առ քաղաքավարութեան եթէ առ ամօթոյ, ոչ գիտեմ, յղեաց թագաւորն Պիոնի արծաթ բազում. զոր նա ոչ ընկալաւ[1]: Այլ ոչ միայն չարար ինչ խստութիւն ընդ բարեկամս աքսորելոյն, այլ և զամենայն խնամ կալաւ 'ի փարատել զերկիւղ նոցա[2]. և մինաւանդ ջանայր սիրել զիս, և աղաչէր զիս կալ մնալ առ իւր: Այլ թէպէտ աղաչանք նորա խառն էին ընդ սպառնալիս, և զգուանք նորա ընդ սրտմտութեան, այլ ես հաստատուն զպայմանս զայս առաջի եդի, կամ դարձ Պիոնի և կամ ինձ հրաժեշտ: Այլ ոչ կարացեալ խոնարհեցուցանել զիս 'ի կամս իւր, ետ ածել զիս 'ի միջնաբերդն ուր էին արքունիք իւր, և պատուէր արձակեաց ամենայն ուրեք, զի ուր և գտանիցեն զիս փախուցեալ՝ ածցեն 'ի Սիրակուսա. և նաւապետաց պատուէր հրամանի 'ի վերայ եդաւ չընդունել զիս 'ի նաւս իւրեանց, բայց միայն ինքնագիր հրովարտակաւ արքայի:

Ի գերութեան կայի և 'ի զգուշութեան, այլ խնամք նորա և սէր յաճախէին առ իս[3]: Յան-

1 Թուղթ Դիոն. առ Պղա- էջ 329:
տոնի, հտ. 3. էջ 309: 3 Նոյն անդ էջ 330:
2 Պղատ. Թուղթ 7. հտ. 3.

կայր մեծարանաց առ յինէն և բարեկամութեան, և ոչ ևս հանդուրժէր ընդ նախամեծար լինել Դիոնի առ իս քան զինքն, մերթ բռնի պահանջելով և մերթ ողոքանօք հայցելով զնախապատուութի՛ւ։ Հանապազ կայր 'ի թատր նորատեսիլ․ մերթ սրտմտութիւն, մերթ աղերս, մերթ թշնամանք և մերթ արտասուք փոխանակէին[1]։ Այլ զի օր ըստ օրէ յաճախէին զրոյցք մեր ընդ միմեանս, զհամբաւի հարաւ՝ իբր թէ չէր այլ ոք բաց յինէն մտերիմ և սիրելի թագաւորին։ Այլ համբաւս այս խորամանկութե՞ն Փիղիստեայ և համախոհից նորա հաստատեալ, ձգեաց յիս զատելութիւն ժողովրդեան և զզօրականին, և համարեցայ ես պարտաւոր անկարգութեանց թագաւորին և ոչ բարւոք խնամելոյ զիւրս աշխարհին։ Այլ ես ամենևին անպարտ էի յիրացն․ զի բաց 'ի սկզբնաւորութենէ օրինաց ինչ, յոր անդրստին յօրէ հասանելոյ իմոյ 'ի Սիկիլիա աշխատեղէ[2], զգուշացեալ էի չխառնել ամենևին յիրս հասարակաց 'ի ժամանակին իսկ՝ յորում մարթ էր ինձ բաժանել զբեռն զայն ընդ մտերիմ բարեկամին իմոյ։ Զնա կորուսի․ Դիոնեսիոս անձնատուր լեալ էր անդրէն 'ի ձեռս մարդելուզաց բազմաց շռայլելոց 'ի զեղխութիւն․ և մարթ էր ինձ յայնպիսում ժամանակի խրատել զմանուկ անհանճար՝ որ իշխել կարծէր, այլ իշխէին նմա

1 Պլուտ․ 'ի Դիոն․ հտ․ 1․ էջ 964։

2 Պղատ․ Թուղթ 3․ հտ․ 3․ էջ 316։

խորհրդականք չարք և ոչ ինչ նուազ քան զինքն անհանճարք ։

Դիոնեսիոս ’ի կշիռ ոսկւոյ ցանկայր ստանալ զիմ բարեկամութիւն ․ այլ ես առաւելագոյն խնդրէի զինս ․ կամէի զի խելամուտ լինէր ’ի վարդապետութիւնս իմ, և իշխէր անձին իւրում՝ առ ’ի կարող լինելոյ իշխել այլոց ․ այլ նմա իմաստասիրութիւն ըստ այնմ ևեթ մասին հաճոյ է՝ որ զմիտսն հրահանգէ, զի մարթի նովաւ պայծառանալ նմա ։ Ի ջանալ իմում ածել զնա յիմաստութիւն անդր որ ուղղիչն է շարժմանց հոգւոյ, շիջանէր եռանդն նորա, և նեղեալ տաղնապէր ’ի լսել ինձ ։ Զգացի զի պարապեալ էր սիրտ նորա ընդդէմ յարձակմանց իմոց, քանզի սաղրեալ էին նմա զի ’ի հաւանել բանից իմոց յաջողէր անվրէպ դարձ և յաղթանակ Դիոնի[1] ։

Բնութեան պարգևեալ նմա միտս խորագնին, ճարտարխօսութիւն զարմանալի, սիրտ դիւրազգաց, իղձս առատաձեռնութեան, և միտումն ’ի լաւութիւնս, ժխտեալ է նմա զանյողդողդ բարս ․ և դաստիարակութիւն անխնամ ամենևին[2] ժանտացուցեալ զբողբոջս առաքինութեանց նորա, ծնուցեալ է ’ի նմա թերութիւնս՝ որք ըստ բախտի տկարացուցանեն զախտս նորա ։ Խիստ է նա, այլ ոչ հանապազ, և դոռոզ առանց մեծա-

1 Պղատ. Թուղթ 7. հտ. 3. էջ 330 ։

2 Պլուտ. ’ի Դիոն. հտ. 1. էջ 961 ։

րոց զանձն ընծայեցուցանելոյ ։ Ո՞ր վատութեան զատութիւն և զնենգ 'ի կիր արկանէ, և զաւուրս ողջոյն կայ յարբեցութեան և 'ի հեշտութիւնս ։ Այժմէ հաստատութիւն ևս էր նմա, անագորոյն զտանէր քան զամենայն մարդիկ ։ Զգիտեմ 'ի նմա այլ զօրութիւն բաց յանմեղկելի յամառութենէ, որով պահանջէ զի ամենայն ինչ յեղյեղուկ կամաց իւրոց հնազանդեսցի ․ պատճառք, կարծիք, ախորժակք, պարտին առ հասարակ հպատակել զխտութեան նորա յորժամ կամիցի ։ Տեսի ես զնա խոնարհեալ 'ի նուաստութիւն և 'ի վատութիւն առ 'ի չհանդուրժելոյ Թշնամանաց մերժելոյ ուրուք զկամս նորա կամ ընդդիմաքանելոյ ։ Ոչ առ այլ ինչ զակատեալ է նա արդ խելամուտ լինելոյ զաղտնեաց բնութեան, բայց զի մի ինչ ծածկիցի յինքենէ ։ Յայն սակս իսկ և կարի դժպհի է նմա Պիոն, զի զնացիւքն իւրովք և խրատուք հակառակի կամաց նորա ։

Մինչ դեռ ես խնդրէի 'ի զուր զրաւ առնել աքսորանաց նորա և իմոյս, մարտ պատերազմի զըրգռեալ՝ յաճախեաց նմա հոգս ։ Այլ զի ոչ ևս դոյլին նմա պատճառանք արգելլոյ զիս առ իւր, հրամանն ետ ինձ մեկնելոյ ։ Այլ դաշինս իմն ընդ միմեանս եդաք ․ զի ես խոստացայ նմա դառնալ առ նա զհետ խաղաղութեան պատերազմին, և նա խոստացաւ ինձ դարձուցանել յայնժամ զՊիոն ։ Այլ 'ի լինել խաղաղութեան՝ աղդ արար նա առ մեզ ․ առ Պիոն գրեաց յամէ ևս դառնալ,

իսկ առ իս՝ փութալ հասանել առ ինքն՝ ։ Պատասխանի ետու նմա անդէն, զի չնէրէր հասակն իմ վտանգել զանձն յերկայն ուղևորութիւնն, և զի ինքն դրժէր խոստմանն՝ ազատ էի և ես յիմմէս ։ Ընդ այս պատասխանի ոչ ինչ նուազ քան զԹագաւորն տրտմեցաւ Դիոն[2] ։ Իմ 'ի մտի եդեալ էր մի ևս խառնել յիրս նոցա, այլ Թագաւորն առաւել ևս յամառեալ էր 'ի խորհուրդս իւր․ ամենայն ուստեք հնարէր ստիպել զիս, գրէր առ իս հանապազ իւրովի և 'ի ձեռն բարեկամաց իւրոց որ էին 'ի Սիկիլիա, և իմաստասիրաց իտալական վարժարանին ։ Արքիտաս առաջնորդ սոցա երթեալ էր առ նա[3]․ և ազդ արար ինձ, որում և այլք վկայէին գրով, զի Թագաւորն դարձեալ վառեալ էր 'ի սէր իմաստասիրութեան, և զի եթէ ոչ վաղվաղէի 'ի դարձ՝ հասանէր վտանգ ամենեցուն որ 'ի սահմանս նորա պարապէին յիմաստասիրութիւն ։ Դարձեալ և Դիոն ստիպէր զիս թախանձանօքն ։

Բայց Դիոնեսիոս չդարձուցէ երբէք զԴիոն, զի երկնչէր 'ի նմանէ․ և ոչ երբէք լցի նա իմաստասէր, զի խնդրէ երևել իմաստասէր[4] ։ Ոմտաւածէր զի առաջի ճշմարիտ իմաստասիրացն յաճախէին նմա պարծանք յուղևորութենէ իմմէ, և հրաժարելն իմ 'ի նախատինս էր նմա ։ Այս

1 Պղատ. Թուղթ 3. հտ. 3. էջ 317. Թուղթ 7. էջ 338 ։
2 Նոյն Թուղթ 7. էջ 338 ։
3 Նոյն անդ ։
4 Նոյն, Թուղթ 2. հտ. 3. էջ 312. Թուղթ 7. էջ 338 ։

էին զանխուլ պատճառք այնու փութով հեռա-նալ լինելոյ նորա ինձ։

Ոչ 'ի դէպ թուեցաւ ինձ հակառակ կալ միա-բան խորհրդոյ բազմաց. զի մարթէր ինձ ըստ-գտանելի լինել, իբր անտես առնելով զմանուկ արքայն որ երկրորդ անգամ ձեռն կարկառէր յիս առ 'ի կանգնել 'ի գլորմանէն, մատնելով 'ի տրտմութիւն նորա զբարեկամն իմ որ էին 'ի տար աշխարհին, և ապախտ առնելով զօգուտ Դիոնի՝ ընդ որում բարեկամութիւն և առ-ընչականութիւն և շնորհապարտութիւն կը-ցորդէր զիս 'ի բազում ժամանակաց[1]։ Ոսոխաց նորա խափանեալ էր զհասս նորա[2], և հալածէին զնա առ 'ի զրգռել յապստամբութիւն. և բազմա-ցուցանէին զյանցանս նորա առաջի թագաւո-րին, առ 'ի յարդարել զնա անողոքելի։ Վասն ո-րոյ գրէր առ իս թագաւորն[3]. Խօսեսցուք ընդ միմեանս նախ զիրացն Դիոնի. անտես արարից զամենայն որ ինչ և կամիցիս, այլ յուսամ զի ոչ անիրաւս ինձ կամիցիս։ Իսկ եթէ ոչ գայցես, ոչ լուայց աղերսանաց քոց զնմանէ։

Քաջածանօթ էր ինձ Դիոն, զի զամենայն բար-ձրութիւն առաքինութեան բերէ նա յանձին, և զի խաղաղութբ̃ տարաւ նա ամենայն բռնու-թեանց. այլ եթէ ժպրհէին յանիրաւութիւնս առ

1 Պղատ. Թուղթ 2. հտ. 3. էջ 328։

2 Նոյն Թուղթ 3. հտ. 3. էջ 318։ Պլուտ. 'ի Դիոն. հտ. 1. էջ 965։

3 Պղատ. Թուղթ 7. էջ 339։ Պլուտ. անդ.

ընկճելոյ զնա, հարկ էր ուղխից արեան լուանալ զթշնամանսն ։ Մինչ արիական վէհ կերպարանս բերէ նա զամենայն գեղ մտաց և սրտի[1] ։ Այն նորա 'ի Սիկիլիա մեծութիւնք անբաւ[2], և կուսակիցք անթիւք յաշխարհին․ և Դիոնադաս համբաւ այնպիսի, զի մարթ է նմա զինուորել ընդ իւրև զկարի քաջ պատերազմողս[3] ։ Տեսանէի չարիս մեծամեծս մտալուտ 'ի վերայ հասեալ Սիկիլիոյ, և թերևս մարթէր ինձ խափանել զայն կամ յամեցուցանել ։

Յոյժ դժուարին եղև ինձ թողուլ անդրէն զանզբաղական կեանս իմ, և յեօթանասնամենի ուրեմն գնալ ղիմագրաւել գոռոզ իշխանին՝ որոյ հաճոյք հանգոյն իմն ծովուն՝ ընդ որ առաջի կայր ինձ նաւել, մրրկալիցք են ։ Այլ չիք առաքինութիւն անվիշտ, և ոչ անգործ իմաստասիրութիւն ։ Սպեւսիպպոս կամեցաւ գալ ընդ իս, և ես ընկալայ զնուէրն[4], յուսացեալ զի գեղով հանճարոյն յանկուսցէ զթագաւորն, եթէ զօրութիւն բանիցս իմոց ոչ կարասցէ յաղթահարել զնա ։ Յուղի անկեալ այնուհետև, հասի յաջողութեամբ 'ի Սիկիլիա* ։

Ընծացաւ թագաւորն և դշխոյն հանդերձ ա-

1 Պղատ․ Թուղթ 7․ էջ 336։ Դիոդ․ գիրք ԺԶ․ էջ 410։ Նեպ․ 'ի Դիոն․ գլ․ 4։

2 Պղատ․ անդ, էջ 347։ Պլուտ․ 'ի Դիոն․ հտ․ 1․ էջ 960։

3 Պղատ․ անդ․ էջ 328։ Պլուտ․ անդ, էջ 964։

4 Պղատ․ Թուղթ 2․ հտ․ 3․ էջ 314։ Պլուտ․ անդ, էջ 967։

* Ի սկիզբն ամին 361 Ն․ Ք։

մենայն ազգատոհմին աղքատին [1]: Բնակու-թիւն ինձ պատրաստեալ էր նորա 'ի պարտէզ ար-քունեացն [2]. և յառաջնումն անդ նուագի զբու-ցատրութեանս մերոյ ընդ միմեանս՝ եղև առաջի նորա, զի քան զաշխին մերում ընդ համանեան իմ 'ի Աերակլուսս հարկ էր նմա վախճան տանել աք-սորանացն Պղինի: Պատասխանի ետ Թագա-ւորն և ասէ. Պղինն ոչ է աքսորեալ, այլ հեռա-ցուցի զնա յարքունեաց [3]: Իսկ ես ասեմ. Ա՛յլ արդ ժամ է մերձեցուցանելոյ զնա անդրէն, և զարձուցանելոյ 'ի նա զինչս իւր՝ որ մատնեալ կան 'ի ձեռս այլոց յափշտակողաց [4]: Ո՛ երկուց զայս-ցանէ բազում անգամ և յերկար մէջ եղեն մեզ. և երբեք երբեք հնարէր պատրով և պարգևօք յուսացուցանել զիս 'ի սիրոյ բարեկամին իմոյ, և հաւանեցուցանել զիս ընդ մերժումն նորա [5]. այլ ես հրաժարէի 'ի պարգևացն՝ ընդ որս հարկ էր ինձ փոխանակել զպատիւ և զբարեկամութիւն:

Սկսա 'ի հետազօտել խնամով զսիրտ նորա և զկամս առ իմաստասիրութիւն [6], սկսաւ ձայնս 'ի մէջ արկանել զզաղտնեաց բնութեան, և մանա-ւանդ յաղագս չարեացն պատճառի: Տուեալ էր նո-րա 'ի պէտս թագաւորականաց որ էին յԻտալիա, զի իմ բազում ժամանակս պարապեալ էր 'ի խնդիրս

1 Գրեգ. 'ի Դիոն. հտ. 1. էջ 965:
2 Գրեգ. Թուղթ 7. հտ. 3. էջ 349:
3 Գրեգ. անդ. էջ 338:
4 Նոյն, Թուղթ 3. հտ. 3. էջ 317:
5 Նոյն, Թուղթ 7. էջ 333 և 334:
6 Նոյն անդ, էջ 340:

յայս. և վասն այնր իսկ ստիպեաց զիս 'ի դարձ[1] : Բռնադատէր զիս բացատրել ինչ ինչ 'ի կարծեաց իմոց, և ես ոչ հրաժարեցի. այլ պարտ է ինձ ասել և զայն, զի ոչ ինչ ցանկալի էին այնոքիկ Թագաւորին[2], այլ առաւել ցանկայր նա ճանաչտակել զմարկպարագլի ինչ խնդրոց՝ զորս 'ի բերանոյ այլոց ումանց իմաստասիրաց գողացեալ էր :

Բայց ես անդրէն ստէպ դառնայի, թէպէտ և 'ի զուր, 'ի հնարս հաշտութեան Թագաւորին ընդ Պղատոնի՝ որ 'ի յաջողութեան իւրոց աշխարհին կարեւորն էր, և յոր առաւել քան յամենայն ինչ ուշ ունէր : Այլ ոչ ինչ նուազ քան զԹագաւորն ես ինքնին տաղտկացեալ 'ի ժտութենէ, սկսայ ստրջանալ ընդ ուղևորութիւն իմ ընդունայն և տաժանաւոր : Ամառնային էր ժամանակն, և խորհեցայ չկորուսանել զպատեհ դարձի. և յայտնեալ Թագաւորին զխորհուրդ իմ, ասեմ. Ոչ է մարթ ինձ կեալ յարքունիս Թագաւորի, որ զհետ մըտեալ հալածէ զբարեկամն իմ[3] : Ամենայն հրապոյրս 'ի կիր էարկ նա առ 'ի խափանել զիս, մինչև խոստանալ ինձ յուղարկել զիս միով 'ի պատերազմիկ նաւուց իւրոց. այլ զի մարթէր նմա յապաղեցուցանել զկազմութիւն նորա, եդի ես 'ի միտ նաւարկել նաւաւ՝ որ նախ առաջին զառագաստ ձգիցէ :

[1] Պղատ. Թուղթ 7. հտ. 3. էջ 338 : Պլուտ. 'ի Դիոն. հտ. 1. էջ 965 :
[2] Պղատ. անդ. էջ 341 :
[3] Նոյն անդ. էջ 345 :

Յետ երկուց աւուրց եկեալ առ իս, ասէ ՚․ Վասնզի տարաձայնութեան մերոյ իրքն Դիոնի միայն են պատճառք, հարկ է մեծարել զայն․ ահա զայս խնդ ՚ի շնորհս քո առնեմ ընդ նմա․ կացցէ ՚ի Պեղապոնէս մինչև ժամանակ դարձի նորա սահմանեցի ընդ նմա, ընդ իս, ընդ քեզ և ընդ թարգմանս քո ։ Խոստացայ նմա քեզ մի ևս հակառակել իշխանութեան իմում, զնոյն խոստումն առնէ և առ թարգմանս քո և առ իւրոյն, և ամենեքին ՚ի միասին երաշխաւոր լիցին նմա ։ Այնչ նորա ածցեն յԵլլադա, և սահմանեսցեն ում և կամիցիք, և նա ընկալցի զհաւանս, և մի կարասցէ ձեռն արկանել ՚ի զլուխ արծաթոյն առանց ձերոյ հրամանի․ զի ոչ վստահիմ թողուլ ՚ի ձեռին նորա օձան մեծատակար լինելոյ իմոյ ։ Բայց պարտ է քեզ զամ մի ևս կալ առ իս․ և ՚ի մեկնելդ քում, ՚ի ձեռս քո յանձնեսցուք զարծաթնթն ։ Յուսամ զի հաճ գտցի նա ընդ այս․ և դու հաճ լիցես, աղէ ասա ։

Միշտ էր ինձ ընդ առաջարկութիւնն, և խնդրեցի ժամ տալ ինձ օր մի ՚ի խորհել ։ Այլ քաջ կշռեալ զօգուտ և զվնաս, ասեմ․ Հաճոյ են ինձ պայմանքդ, միայն եթէ հաճեսցի ընդ դոսա և Դիոն ։ Հաստատեցաւ ապա խորհուրդս այս, գրել երկաքանչիւրոցս առ Դիոն, առանց ձեռն արկանելոյ առ ժամն յինչս նորա ։ Այս երկրորդ դաշն էր զոր եդաք ընդ նմա․ այլ ոչ առաւել

¹ Պղատ․ Թուղթ 7․ հտ․ 3․ էջ 346 ։

քան զաստուածայինն պահեցաւ երկրորդս այս ¹ ։

Մինչ այս մինչ այն, ժամանակ նաւարկու-
թեանն էանց, և մերձեցան առ հասարակ նաւք ։
Չկարէր խոյս տալ ՚ի պարտիզէն զանխուլ ՚ի պա-
հապանացն, որոց զգուշութիւն դրանն յանձն
էր ։ Մնացաւորն ընդ ձեռամբ ունելով զնա, սկսա-
նէր համարձակ յայտնել զխորհուրդս իւր. ՚ի
միում աւուրց ասէ ցնա. Ոչ յուշ եղև մեզ մի ՚ի
պայմանաց դաշինն, զի զկէս միայն զընչիցն Պիոնի
պարտ է ինձ յղել, զմիւս կէսն պահելով որդւոց
նորա՝ զոր ինձ անկ է հայրաբար յանձանձել, զի
Մերոպէ մայր նորա քոյր իմ է ² ։ Նաև ես զայն
միայն եսու պատասխանի, մնալ պատասխանւոյն
Պիոնի առ աստուածին զրեանն, և ապա զրով դառ-
ձեալ զեկուցանել նմա և զայն պայմանն ։

Նաև նորա ժպրհեալ անպատկառ վաճառէր զին-
չըս Պիոնի. զկէսս եւ բաժ կամի ՚ի վաճառ՝ ում
և կամեցաւ, առանց հարցանելոյ զնա, և առանց
լսելոյ զբողոք իմ ։ Ծանրանայր ինձ օր ըստ օրէ
մնալ անդ, և դէպք անակնկալ յաճախեցին ըղ-
խտութիւնն մինչև ՚ի սպառ ։

Թիկնապահք նորա զայրացեալք՝ զի կամէր
նուաճել զԹոշակ ծերադունիցն ՚ի նոցանէ, հատին
ամբոխիւ ՚ի ստորոտ միջնաբերդին՝ որոյ ամրա-
փակ էին դրունք ։ Պատանեակք նոցա և մանրամ-
բոխ աղաղակ և պատրաստութիւնք ՚ի յարձա-

¹ Պղատ. Թուղթ 7. հտ. 3. էջ 347 ։ ² Նոյն անդ ։

կուսին այնպէս զարհուրեցուցին զԹագաւորն, զի առաւել քան զոր խնդրէինն՝ խոստացաւ տալ նոցա [1] ։ Ո Հերակղիոսեայ, որ մի յառաջնոցն էր 'ի սիրակուսացն, եղև կասկած առաջնորդ խռովութեանն զօրոյ. և փախեաւ նա 'ի քաղաքէն, և 'ի ձեռն ազգականացն՝ որոց համարձակութիւն էր առաջի Թագաւորին, փարատեաց զկասկածանսն 'ի մտաց նորա ։

Յետ աւուրց 'ի զգնալն իմում 'ի պատրոնիզին [2], մտին անդր Պիոնեսիոս և Թէոդոսոս՝ զոր էր նորա կոչեալ առ ինքն ։ Խօսեցան վայրիկ մի ընդ միմեանս, և մատուցեալ առ իս Թէոդոսոս ասէ. Խնդրեցի և ընկալայ 'ի Թագաւորէն վասն Հերակղիոսեայ ազգականին իմոյ տալ պատասխանի առնել վասն իւր, և զի եթէ չկամիցի զնա արքայ 'ի սահմանս իւր՝ կարասցէ գնալ 'ի Պեղոպոնեա համադերձ կնաւն և որդւով և ստացուածովք ։ Վասն որոյ 'ի դէպ համարեցայ կոչել այսր զՀերակղիոսս, և առաջի կայ ինձ գրել և ես առ նա. այլ իցէ նմա անվտանգ կալ 'ի Սիրակուսա և շուրջ 'ի սահմանս նորա, ասա Պիոնեսիէ ։ Եւ Թագաւորն ասէ. Անվտանգ է, այլ և 'ի տան քում մարթի բնակել նմա անկասկած ։

Իսկ 'ի վաղիւ անդր մտին առ իս Թէոդոսոս և Եպիքիոս, տրտմութիւն և արհաւիրք 'ի դէմս նոցա նկարեալ, և ասէ ցիս Թէոդոսոս. Պղատոն,

1 Պղատ. Թուղթ 7. հա. 2 Նոյն անդ ։
3. էջ 348 ։

լուար դու երէկ զխոստումն Թագաւորին. և արդ լսեմք զի շրջին ամենայն ուրեք զինուորք ՚ի խնդիր Հերակղիդեայ, ունել զնա: Ոչ է ժամն դանդաղելոյ, եկ ընդ մեզ ՚ի պալատն. Չոգայ զհետ նորա. և իբրև յանդիմանն եղաք Թագաւորին, կարկեալ կացին նոքա անշարժ՝ իջուցանելով զարտասուս: Ասեմ ցԹագաւորն. Թէպէտ և խոստացար, այլ տակաւին կասկածեն դոքա՝ Թէ զուցէ Հերակղիդեայ վտանգ ինչ դիպեսցի ՚ի Սիրակուսա, քանզի հանդերձեալ է այսր հասանել: Ի եղև Թագաւորն բարկութեամբ, և շրջեցաւ դէմ երեսաց նորա. յայնժամ Եւրիպիոս և Թէոդոս անկան յոտս նորա, և ՚ի Թանալ նոցա զձեռս նորա աղաչանօք, ասեմ ցԹէոդոս. Անհոգ լերուք, ոչ է մարթ արքայի դրժել խոստմանն իւրում: Եւ Թագաւորն բարկացեալ դիմօք ասէ. Իմ չիք ինչ երբէք տուեալ խոստումն: Եւ ես ասեմ. Վկայ են դիք զի եսուր, վասն որոյ դոքա բողոքեն չդրժել խոստմանդ: Եւ Թիկունս դարձուցեալ նոցա, գնացի ՚ի բաց [1]: Թէոդոսեայ այլ ինչ ևս իրացն չկարացեալ զտանելոյ, արդ ասաց գաղտ Հերակղիդեայ՝ որ մնացաւ եղև ՚ի ձեռաց զօրականացն:

Նաև այնուհետև Դիոնեսեայ ոչ ևս ՚ի չափու կացեալ, մոլեգնօրէն յարձակէր զինչս Դիոնի [2]: Եւ հանէ զնա յազգատոհմացն, և արգել խոր-

1 Պղատ. Թուղթ 7. հտ. 3. էջ 349:

2 Պղուտ. ՚ի Դիոն. հտ. 1. էջ 966:

տիւ մի ամենք 'ի բարեկամաց իմոց մերձենալ առ իս, և մի ինձ մատչել առ նոսա։ Հանապազ պատմէին ինձ զանգատս նորա և կշտամբանս և սպառնալիս[1]․ և ոչ առ այլ ինչ դէպ լինէր ինձ անցանել զնա, բայց 'ի կրել զամն երդիծանս և հեղգնութիւնս անարգանաց[2]։ Իմանալի Թագաւորք, և ըստ օրինակի նոցին դրանիկք առ հասարակ, 'ի մտի եդեալ զի ամենայն վաստակք մեր 'ի սիրելութեան նոցա կայցէ, ոչ ևս յարգեն զանկեալս 'ի սիրոյ իւրեանց։ Այդ եղև ինձ զի կեանք իմ 'ի վտանգի կային․ քանզի արքայական բռնաւորին սպառնացեալ էր, 'ի հանդիպելն ինձ՝ արկանել զիս 'ի կենաց։

Հնարս գտեալ, զեկուցի Արքիտասայ և այլոց բարեկամաց իմոց 'ի Տարենտոն զվտանգն[3]։ Օր 'ի նախ քան զգնալն իմ 'ի Սիկիլիա, Թագաւորին խոստացեալ էր նոցա՝ Թողուլ զիս 'ի կամս իմս մեկնել անտի, և նոքա երաշխաւոր լեալ էին առ իս բանից Թագաւորին[4]․ նմին իրի 'ի նոցանէ խնդրեցի օգնութիւն։ Ավաղվաղակի հասին հրեշտակք 'ի Տարենտոնէ․ և յետ տալոյ զպատգամն՝ զոր 'ի պատրուակ հրեշտակութեանն պատճառանէին, յաջողեցաւ նոցա առնուլ վասն իմ հրաման ազատութեան։

Դարձ արարեալ 'ի Սիկիլիոյ, ելի 'ի նաւէ յԱ֊

1 Պղատ. Թուղթ 7. հա. էջ 350։
2 Նոյն, Թուղթ 3. էջ 319։
3 Նոյն, Թուղթ 7. հա. 3. էջ 349։
4 Պլուտ. 'ի Դիոն. հա. 1. էջ 965։ Դիոգ. Լայերտ. 'ի Պղատ. գիրք Գ. յօդ. 11։

զիս, և չոգայ յողխմխական տօնս խաղուցն, ուր Պփոնի խոստացեալն էր մնալ ինձ [1]: Պատմեցի նմա զամենայն իրս ուղևորութեան իմոյ, և վախճանեալ զբանս իմ, ասեմ. Արդ 'ի միտ առ թէ որչափ ինչ զօրէ իմաստասիրութիւն 'ի սիրտ Թագաւորին Սիրակուսայ:

Առանձնեալ Պփոնի ընդ նոր Թշնամանան զոր յանձն իմ ընդունէր, ասէ զայրացեալ. Ոչ ես 'ի վարժարան իմաստասիրութեան 'ի դէպ է ածել զՊփոնեսիոս, այլ 'ի վարժոց Թշուառութեան. և առաջնորդեսցիս նմա անդր: Այլ ես ասեմ. Կատարեսցի որ ինչ ինձ անկն էր. և եթէ կարող իսկ էի զէն առնուլ, ոչ զինուորէի ընդդէմ Թագաւորի՝ ընդ որում բնակակից եղէ և սեղանակից և հաղորդ զոհից, որ ոչն լուաւ չարախօսելոյ ոսոխացն իմոց, և խնայեաց 'ի կեանս իմ՝ մինչ կարէրն բառնալ զայն. և որում բազում անգամ խոստացեալ է իմ չտալ ումեք ձեռն ընդդէմ իւր: Եթէ եկեսցեն աւուրք, զի 'ի հաշտութիւն կամիցիք խօսել ընդ միմեանս, և միջնորդ խնդրիցէք զիս, պատրաստ եմ մտադիւրագոյն սպասաւորել ձեզ. այլ ցորչափ յաւեր և 'ի կործանումն խորհիք, մի ակն ունիցիք յինէն ոչ խրատու և ոչ օգնականութեան [2]:

Այս գրեալ պէսպէս պատճառանօք կալայ զնա անդորձ. այլ ապա ասէ ցիս Համարձակ.

1 Պղատ. Թուղթ 7. հա.   2 Նոյն անդ:

Կամ է արդ հասանելոյ յօգնութիւն հայրենեաց . գլխաւորք 'ի բնակչաց Սիրակուսա, պատառեալք 'ի ծառայութենէ, մինչ հասանելոյ խնդրոյ անձինս առ 'ի խորտակել զլուծն : Եւ եցոյց նմա զնամականսն իւրեանց . ոչ զօրս խնդրէին եւ ոչ նաւս, այլ զանուն եւեթ նորա՝ զի օրէն լիցի նոցա ձեռն ամբառնալ, եւ զանեսիլ նորա՝ առ 'ի համախմբել զնոսա[1] : Զեկուցանեն նմա եւ եա, զի կլինի նորա ոչ եւս կարացեալ կալ հակառակ սպառնալեաց եւ սպառնութեանն Թագաւորին, յանձն առեալ է անձնամատնեալ ընդ այլսն[2] : Աճեալ է այսուհետեւ չափ չարեացն . Դիոն դառնայ 'ի Պելոպոնես՝ զօրաժողով լինել, եւ ընդ կազմել սպառազինութեանն՝ դիմեաց 'ի Սիկիլիա :

Զայս ամենայն պատմեաց մեզ Պղատոն . եւ մեր հրաժարեալ 'ի նմանէ, 'ի վաղիւ անդր յուղի անկաք գնալ 'ի Տփոլիս :

ԳԼՈՒԽ ԼԴ.

Ուղեւորել Անաքարսեայ 'ի Բէովտիա . եւ յաղագս տրոփոնեան պատգամատեղւոյն, եւ վասն Եսիոդեայ եւ Պինդարոսի :

Չիք ինչ ամենեւին վտանգ ուղեւորելոյն ընդ Ատտիկա . ամենայն ուրեք 'ի գլխաւոր քաղաքս եւ

1 Պղուտ. 'ի Դիոն. հտ. 1. 2 Նոյն անդ էջ 966 :
էջ 967 :

ընդ արահետ ճանապարհս են օթևանք[1] . այլ կողոպտին ուղևորք 'ի զօշաքաղութենէ անխնայ պահանջողաց ։ Եւ զի գրեթէ ընդ ամենայն աշխարհն խիտ առ խիտ լերինք և բլուրք են, 'ի հուպ վայրս ուղևորին կառք, և անդ իսկ անուաւր գելս 'ի կիր արկեալ[2] ։ Իսկ 'ի հեռաւոր վայրս ջորեօք հարկ է ուղևորել[3], սորուկս կարաւանկիրս ածելով զհետ[4] ։

Հիւրասէրք են Յոյնք առ հասարակ . 'ի վերայ այսորիկ և 'ի գլխաւոր քաղաքս կան հիւրընկալք հոգաբարձուք եկաց ։ Կէսք 'ի նոցանէ սոսկականք են, վաճառականութեան կամ ասպնջականութեան զօղիւ կցորդեալք ընդ սոսկական այլոց քաղաքաց ։ Եւ կէսք զհասարակաց թերեւս դէմս, իբր հազարապետք քաղաքի ուրուք կամ ազգի՝ հրովարտակաւ 'ի նմանէ կացեալք, համդերձ հաւանութեամբ ժողովրդեանն յորմէ են[5] ։ Իսկ կէսք դարձեալ զայլոց ուրուք քաղաքի ունին զհոգ, յանձանձելով և զքաղաքակցացն իւրեանց զիրս[6] ։

Հիւրընկալ ուրուք 'ի քաղաքաց ասպնջականէ զհրեշտակս նոցա, ամենայն ուրեք ընկերէ նոցա,

1 Պղատ. յղ. օր. գիրք ԺԱ. էջ 919 ։ Եսքին. յղ. մրէդ. հրեշտ. էջ 410 ։

2 Աթէն. գիրք Գ. էջ 99 ։

3 Եսքին. 'ի Կտեսիփ. էջ 440 ։

4 Նոյն. յղ. մրէդ. հրեշտ. էջ 410 ։ Կասաուբ. 'ի Թէոփր. գլ. 11. էջ 103 ։ Տիւփոռ., անդ. էջ 385 ։

5 Թուկիդ. գիրք Բ. գլ. 29. գիրք Ե. գլ. 59 ։ Քսեն. պատմ. յուն. գիրք Ա. էջ 432 ։

6 Ցոն. առ Աթենէոսի, գիրք ԺԴ. էջ 603 ։ Դեմոսթ. 'ի Կալլիպ. էջ 1099 և 1101 ։

և համբաւոյն իւրում պատուապատման լինի 'ի յաջողութիւն գործոց նոցա [1] ։ Պարծեալ և ուղևորաց բնակչաց այնր քաղաքի, պատրաստէ զամենայն դիւրութիւն յոր ձեռնհաս լինէ ։ Ի բազում քաղաքս Եւրոպայ եղև մեզ զփորձ առնուլ նորատեսիցս. և ուրեք ուրեք արք ստակականք իւրեանց կամովին պատրաստեալ զպէտս մեր [2], առ 'ի զամենայն շնորհս առաջի աթենացուց՝ որոց զործակալք ցանկալին լինել, և առ 'ի վայելել 'ի զնոսին իւրեանց յԱթէնս 'ի շնորհս պաշտամանն, մնանել 'ի ժողով հասարակաց, առընթեր կալ պաշտամանց կրօնիցն և հանդիսից խաղուց [3], այլովքն հանդերձ ։

Յերրորդում աւուր հարիւրորդի յիններորդի ողիմպիադին 'ի սկիզբն ամառանն մունիքիոնի* մեկնեաք յԱթենայ, 'ի նմին երեկոյի հասաք յՄեգարա. և էր ճանապարհն անհարթ, այլ ուրեք ուրեք հովանաւոր 'ի ծառղենեաց [4] ։ Ի մէջ սահմանաց Ելևսինոյ և Կորնթեայ կառուցեալ կայ Մեգարայ քաղաք, հեռի 'ի ծովէ ասպարէզս իբր քսան [5] ։ Անդ էին յոյժ պահանջք մարքոց, և պարէնք իսկ բնակչաց քաղաքին մարքն [6] ։ Դըժուարահամբոյրք են քաղաքացիքն և զօշաքաղք ։

1 Քսեն. պատմ. յուն. գիրք Ե. էջ 870 ։ Եւսեբ. յեգիպտ. գիրք Գ. էջ 408 ։

2 Թուկիդ. գիրք Գ. գլ. 70 ։

3 Սէնգ. Քառոլ, յղ. գաղ. թարգմ. էջ 89 ։

* Ն. Ք. 387 ամաց. 'ի գարնայնի ։

4 Դիկէարք. յղ. Յունաստ. յաշխարհագր. հա. Բ. էջ 11 ։

5 Ստրաբ. գիրք Թ. էջ 403 ։

6 Դիկէարք. անդ ։

Մերձ ՚ի քաղաքս անդր առ աղբերբք ականակիտ ջրոյ [1], է մեհեան Ամփիարաւեայ՝ միոյ ՚ի զօրավարաց պատերազմին Թեբայ ։ Զի որ անդ հըմայէրն, համարեցաւ յետ մահուն տալ հրամանս պատասխանւոյ ։ Որք միանգամ հանդերձեալք իցեն գնալ հարցանել զնա, պարտ է նոցա զաւուրս երիս հրաժարել ՚ի գինւոյ, և ժամս քսան և չորս յամենայն ճաշակաց [2] ։ Զենուն ապա նոխազ առ դրօշելով նորա, և զմորթ նորա տարածեալ անդ ՚ի գետնի՝ ննջեն ՚ի վերայ նորա ։ Այս ասի բան, թէ աստուածն երեւեալ նոցա յերազի՝ տայ նոցա զհրամանս պատասխանւոյ ։ Բազում սքանչելիս ՚ի մեհենի անդ ասեն գործեալ. բայց բժշկութիւնք յոյժ զակատեալ են զհետ դիցն պատգամաց, և չիք հաւատալ բանից նոցա ։

Հեռի ՚ի տեղւոջէն երեսուն ասպարիզաւ, ՚ի վերայ միոյ ՚ի բլրոց [3] Տանագրա քաղաք կառուցեալ կայ, որոյ գեղեցկատեսիլ են շինուածք. բազումք ՚ի նոցանէ արծնեալ այրեցական նկարուք և անդաստակօք զարդարեալ. և երկիրն զնովաւ ոռոգեալ ՚ի Թերմոդոն գետոյ փոքուէ [4], ծածկի ձիթենեօք և այլ ևս ազգի ազգի ծառովք ։ Անդ է ազնուագոյն գինի Բեովտիոյ, այլ ցորեան սակաւ բերէ երկիրն ։

Բայց թէպէտ և բնակիչք քաղաքին ձոխք են,

1 Լիվ. գիրք ԽԵ. գլ. 27 ։
2 Փիլոստրատ. վարք Ապողոն. գիրք Բ. գլ. 37. էջ 90 ։
3 Դիկէարք. յղ. Յունաստ. աշխարհագր. հտ. 2. էջ 12 ։
4 Երոդոտ. գիրք Թ. գլ. 43 ։

ոչ է առ նոսա զեղխութիւն, և ոչ որ նորին ար-
գասիքն են անօրէնութիւնք: Ապականձոտս զնոսա
ասեն գոլ[1]. բայց մեք այլ ինչ ՚ի նոսա ոչ տե-
սաք, այլ անկեղծութիւն, սէր արդարութեան
և հիւրասիրութիւն, և փոյթ ձեռն տալոյ թշուա-
ռաց՝ զորս ստիպէ հարկն քաղաքաց ՚ի քաղաքս շըր-
ջել պանդխտութեամբ: Ատեան նոքա զդատաւորու-
թիւն, զարշելի ՚ի գօշաքաղութէ, և հաճք և հա-
ւանք են ընդ բախտ իւրեանց. և չիք ընդ ամենայն
Ափռովտիա տեղի անքոյթ քան զայն ՚ի հաստա-
հատութենէ[2]: Փուր ինձ զի և զաղտնեաց ա-
ռաքինութեան նոցա եղէ հասու. զի զերկրա-
գործութիւն նախամեծար առնեն քան զամենայն
արուեստս:

Այնպէս բազմամեծարք դից, զի հեռի ՚ի բնա-
կութենէ մահկանացուաց կանգնեն նոցա մե-
հեանս[3]: Ճամարին Ճերմեայ կեցուցեալ զքա-
ղաք իւրեանց ՚ի սրածութենէ, շուրջ եկեալ զնով
վաւ նոխազ ՚ի յուս. վասն որոյ ՚ի նոյն ձև պատ-
կերի դրօշեալ զնա ՚ի մեհենին, յաւուր տօնի
նորա առնեն զյիշատակ արարողութեանն՝ կա-
ցուցեալ փոխանակ նորա չքնաղագեղ զոք պա-
տանի[4]: Քանզի համարէին Յոյնք ընդունելի ես
գոլ դից զպաշտամունս ընծայեալս ՚ի ձեռն մանկ-
կըտւոյ, և գեղեցկութեան յաճախել զյարգ.
նուիրացն:

1 Դիկէարք. յղ. Յունաստ. յաշխարհագր. էջ 18:
2 Դիկէարք. անդ. էջ 13:
3 Պաւսան. գիրք Թ. գլ. ԻԲ. էջ 753:
4 Նոյն անդ. էջ 752:

այս կարգ էր հանդիսին առ պղատէացիս ։

Ի ծագել առաւօտու՝ փող հրաւիրակ ազդ առնէր 'ի չու, և երևեցին կառք բարձումք զհետ միմեանց լի պսակօք և ոստովք մրտենեօք ։ Ապա ցուլ սեաւ, և զհետ նորա մանկտի՝ բարձեալ ղաւխուրանս կաթին և գինւոյ և ազգի ազգի իւղս անուշահոտս ։ Եւ ապա իշխանապետ պղատէացւոց ծիրանազգեաց, անօթ 'ի միում ձեռին և 'ի միւսումն սուսեր ։ Անցանէր հանդէսն ընդ մէջ քաղաքին. և 'ի հասանել 'ի ճակատուն տեղի աւազանին առեալ ջուր 'ի մերձակայ աղբերէն՝ լուանայր զշիրիմն կամ զսիւնս կանգնեալս 'ի վերայ գերեզմանացն, և ցանէր զնոքօք անուշահոտութիւն, և զոհէր զզուարակն. Եւ յետ մատուցանելոյ զաղօթս Արամազդայ և Հերմեայ, հրաւիրէր 'ի խառնելիս քաւութեան զհոգիս պատերազմողացն անկելոց 'ի ճակատամարտին. և լցեալ բաժակ գինւով, հեղոյր մասն ինչ 'ի բաժակէն՝ ասելով 'ի նոյն բարձր. Բաժակս այս վասն քաջացն, որք 'ի վերայ ազատութեան Ելլադայ ետուն զանձինս 'ի մահ ։

Յետ ճակատամարտին Պղատեայ բնակիչք քաղաքիս միաբանեալ ընդ աթենացիս, ընկեցին զլուծ թեբացւոց՝ որք հիմնադիրս քաղաքին համարէին զանձինս[2], և որք յայնմհետէ անհաշտ թշնամիք եղեն պղատէացւոց ։ Եւ այնչափ յա-

1 Պլուտ. յԱրիստիդ. հտ. 1. էջ 332 ։

2 Թուկիդ. գիրք Գ. գլ. 61 ։

Ճախնաց առաքելութիւն նոցա, մինչև 'ի պեղոպոնեսական մարտին միաբանեալ նոցա ընդ սպարտացիս՝ յարձակել 'ի Պղատիէս, և կործանել զքաղաքն 'ի սպառ[1]: Նոյն ապա ընդ հուպ շինեցաւ. և զի միշտ յաթենացիսն հակամիտէր, վերստին աւերեալ զայն թեբայեցւոց աներեցին յառաջ քան զամն եօթնևտասն[2]: Եւ արդ մեհեանք ևեթ քաղաքին կան անկործան խնայեալք 'ի յաղթականէն, և տունք սակաւք, և օթևան մեծ 'ի բնակութիւն եկելոցն անդր 'ի մատուցումն զոհից: Երկերիւր ոտնաչափ է երկայնութիւն նորա, և լայնութիւն նոյնչափ. և բնակարանք բազում յոյժ են 'ի նմա 'ի վայրայարկն և յառաջնում յարկին[3]:

Տեսաք մեք զմեհեանն Աթենասայ կանգնեալ յաւարէն Պարսից, որ առաւ 'ի Մարաթոն: Պողիգնոտի 'ի նմա նկարեալ է զպարծ Ոդիսեայ 'ի սպանմանն իւր, և զկոտորած տռփողացն Պենելոպեայ. և Ոնասեայ դարձեալ զառաջինն ապատակն արգիւացւոց 'ի Թեբէ[4]. և նկարքս այսոքիկ կան անեղծք որպէս դեռ ևս նկարեալք[5]: Իսկ պատկեր դիցուհւոյն հսկայաձև՝ Փիդիասայ ձեռին դրոշեալ է, փայտակերտ ոսկիազօծ, այլ դէմք նորա և ձեռք և ոտք կճեայք[6]:

1 Թուկիդ. գիրք Գ. գլ. 68:
2 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 362:
3 Թուկիդ. անդ:
4 Պաւսան. գիրք Թ. գլ. 4. էջ 718:
5 Պլուտ. յԱրիստիդ. հա. 1. էջ 231:
6 Պաւսան. անդ:

Տեսաք 'ի մեհենին Արտեմեայ զԵւքիդասայ պղատացւոյ զշիրիմն. և պատմեցաւ մեզ պատ-ճառ լեալ 'ի դիցն առ Յոյնս յետ պարտութեանն Պարսից՝ անցուցանել զհրակ մեհենին, քանզի պղծեալ էր 'ի խժիցն, և առնուլ վերստին 'ի Դելփեայ 'ի մատուցումն զոհիցն յայնմհետէ. Նմին իրի և ամենայն ուրեք շուրջանակի շիջուցին զհուր: Եւ վաղվաղակի Եւքիդաս երթեալ 'ի Դելփիս, էառ հուր 'ի բագնէն, և առ օրին քա-ջապինդ ընթացիւք դարձեալ 'ի Պղատէա նախ քան զմուտս արեւու՝ վայրկեան մի յետոյ անկաւ մե-ռեալ[1], առասպարէզս հազար 'ի միում աւուր հե-տևակագնաց լեալ: Եւ ոչ ոք զարմասցի ընդ ան-հնարին երագընթացութիւնն, եթէ գիտիցէ ըզ-Յունացն ասպարիզականն կրթութիւնն յընթացս, և զի յոլովից 'ի քաղաքաց են սուրհանդակք[2] սո-վորք յընթանալ 'ի միում աւուր ուղի ամբաւ[3]:

Անցաք ապա ընդ առաւօտն Լեւկտրա և ընդ Թեսպիէս քաղաքս, զորոց աւերածք մեծամեծք անմո-հացուցին զանուանս: Ի մերձ 'ի Լեւկտրա յառաջ քան զամս քանի մի մղեցաւ ճակատա-մարտն բազմաղէտ, որ զիշխանութիւն սպար-տացւոցն փլոյզ. իսկ Թեսպիէս 'ի միասին ընդ Պղատէայ 'ի վերջին պատերազմունս կործանե-

[1] Պլուտ. յԱրիստիդ. հտ. 1. էջ 331:

[2] Հերոդոտ. գիրք Զ. գլ. 106:

[3] Լիւ. գիրք ԼԱ. գլ. 24: Պլին. գիրք Է. գլ. 20. հտ. 1. էջ 386: Սոլին. գլ. 1. էջ 29: Ցիցերոն. բանաս. կաճառ. հտ. 3. էջ 316:

ցաւ [1]: Ի սրբազան եւեթ յիշատակս խնայեցին անդ Թեբացիքն, յորս երկու ինչ առաւել զաչս մեր յիւրեանս ձգէին. Մեհեանն Հերակլեայ, որոյ քրմուհին սպասաւոր 'ի կուսութեան կայր մինչև 'ի սպառ [2]. և պատկերն Երոսի՝ զոր կէսք այլ ընդ այլոյ առնեն ընդ Աերոյն պատկերի: Եւ էր պատկերն վէմ անկերպարան, որպէս այն ինչ 'ի լեռնէ հատեալ [3]. զի այսպէս 'ի վաղ ժամանակս ածէին կուռս 'ի պաշտօն հասարակաց:

Զոգայք երեկօթեալ յԱ՛սկրա, հեռի 'ի Թեսպեայ տասապարէզս իբր քառասուն [4]. վայր անբնակելի յանմարդային և 'ի ձմերային [5], այլ անդ եղեն խանձարուրք Եսիոդեայ: Եւ 'ի վաղիւ անդր հասաք ընդ ուղի անձուկ յանտառն նուիրեալ Մուսայից [6]. և յեկանելն անդր զկայ առաք առ աղբերըն Ագանիպպաւ, և ապա առ անդրեան Լինոսի Նախնոյ քերթողին Յունաց, որ յայրի ուրեմն [7] իբր 'ի փոքրիկ մեհենի կանգնեալ կայ: Յաջ և յահեակ տեսիլ անձնահաճոյ ընծայէին խորշիթք դաշտականացն խիտ առ խիտ 'ի վերայ բլրոց կառուցեալք [8]:

Մ՛տաք ապա 'ի ծառաստանս վայելչագեղ ճեմելիս, ուր յամենազուարճ ալքաննիս Մ՛ուսայի

1 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 362 և 367:
2 Պաւսան. գիրք Թ. գլ. 27. էջ 763:
3 Նոյն անդ էջ 761:
4 Ստրաբ. գիրք Թ. էջ 409:
5 Եսիոդ. գործք, տող 638:
6 Ստրաբ. անդ էջ 410:
7 Պաւսան. անդ գլ. 29. էջ 766:
8 Նոյն անդ գլ. 31. էջ 771:

ցըն Թուէր մեզ հասեալ ։ Քանզի անդ զօրութիւն նոցա և ազդեցութիւն յայտնագոյն պատմի յարձանացն որք զանայի վայրսն զարդարեն , և շունչ իմն և հոգի ընծայեն նոցա ։ Անդրիք Մուսայիցն դրօշեալք յայլ և այլ ձևաւորաց՝ ստէպ ընդ առաջ լինէին աչաց ․ ահա Ապողոն ընդ Հերմեայ յերգ քնարի մինձելով [1] , և անդ քաջաց քերթողաց և երաժշտաց դեռ ևս զսիւգ կենդանութեան շնչելով , Թամիրեայ , Արիոնի , Եսիոդեայ և Որփէոսի՝ զորով պար առնուն ամբոխ գազանաց , 'ի քաղցրաձայն երգոց նորա զգօնացեալք [2] ։

Ռուրջանակի կանգնեալ կան եռոտանիք արղընձիք բազումք , ազնուական մրցանակք հանճարաց պսակելոց 'ի մեծն քերթութեան և երաժշտութեան [3] , և 'ի նոցունց յաղթականացն 'ի վայրս անդր նուիրեալք ։ Երևելի է 'ի նոսա Եսիոդեայն կալեալ 'ի Քաղկիս Եւբիոյ [4] ։ Յառաջ ժամանակաւ Թեսպացիք ամի ամի զնոյին յանտառ անդր դիցանուէր՝ բաշխել զմրցանակս զայսոսիկ , և կատարել տօնս 'ի պատիւ Մուսայից և Սիրոյ [5] ։

Ի մերձակողմն անտառին ընդ ձոր ծաղկաւէտ հոսէ վտակն Պերմէս , և աղբերք Իպպոկրենեայ և Ագանիպեայ ․ զի անդ պատմեն պատմուոյն

1 Պաւսան. գիրք Թ. գլ. 30. էջ 767։
2 Նոյն անդ էջ 768։
3 Նոյն անդ էջ 771։
4 Եսիոդ. գործք, տող 658։
5 Պաւսան. անդ։

՝Նարկիսեայ անշնչացեալ ՝ի տարփանաց, ՝ի ջուրսըն անդ խաղաղս նկատելով զպատկեր իւր՝ մինչև ՝ի սպառ պշուցեալ [1] :

Նաւք մեք յայնժամ յՈղիկոն լերին, որ յոյժ հռչակաւորն է վասն անապականութեան օդ[illegible] և ջուրցն առատութեան, և հովտացն լիութե[illegible] և զովարար հովանեաց, և սաղարթագեղ վաղեմի ծառոց որ ծածկեն զնա : Տեսականք որք մերձ անդր բնակեն, պատմէին մեզ՝ զբանջարս վայրաց այնպէս առողջարարս գոլ, զի և իժից ճարակեալ զայնս՝ մերկանան զչարութիւն թունիցն : Այլ քաղցր յոյժ և ախորժահամ թուէին նոցա պտուղք ծառոցն, և մանաւանդ անմեռուկն՝ անդրրաքնէ ՝ի Յունաց անուանեալ :

Մուսայիցն անդ է աթոռ. վէպք առասպելը եւթ աւանդեն զնոցանէ անտեղիս, այլ անուանք նոցա զսկիզբն նոցին յայտ առնեն : Զի որպէս թուի, քերթողքն առաջինք հիացեալք ընդ գեղ տեղեաց, կարգային յօգնութիւն զյաւերժահարսունս անտառաց, գետոց և զաղբերաց, և տեղի տուեալ ախորժական այլաբանութեան՝ որ մեծարէին յայնժամ յամենեցունց, եդուն նոցա անուանս ըստ իւրաքանչիւր ազդեցութեան յերկս մտաց : Ի սկզբան երիս եւեթ ծանեան Մուսայս, զՄեղետի, զՄնեմէ, և զԱյիտէ [2] . այս ինքն են ծոախոհութեան՝ որով յօրինեին քերթածք, չէ

[1] Պաւսան. գիրք Թ. գլ. [2] Նոյն անդ գլ. 28. էջ 765:
29. էջ 766. գլ. 31. էջ 773:

շղթայեալն՝ որով յաւերժանան վաստակք քաջու-
թեան, և երգ՝ որով արտասանէին։ Իսկ զարդա-
նալ արուեստի տաղից, անձնաւորեցան տիպք
կերպարանաց նոցա և արձանիք. բազմացան թիւ
Մուսայից, և անուանք եղան նոցա պատկանա-
ւորք ՚ի գեղ բանաստեղծութեան, ՚ի ծնունդ
նորա գերաշխարհիկ, ՚ի քաղցր բարբառ նորա,
՚ի զբօսանս և ՚ի զուարթութիւն զոր ընծայէ,
յերգս և ՚ի կաքաւս որ յաճախեն զշուք նորա,
և ՚ի փառսն որովք պսակի*։ Այլ ապա յաւելան
Շնորհք՝ որոց պարտ է վայելուչ յօրինել զքեր-
թուածս, և Սէր՝ զորովք յաճախ յածի բանա-
ստեղծութիւն[1]։

Այլ ծնունդ մնացածին էակքս այսոքիկ յերկիրս
խուժադուժ ՚ի Թրակիա, ուր ՚ի խոր տգիտու-
թեան յանկարծ ՚ի վեր եղևեալ պայծառացան
Որփէոս և Լինոս և աշակերտք նոցին։ Պատուէին
անդ Մուսայք ՚ի լերինն Պիերիոյ, և անտի տա-
կաւ ընդարձակեալ զպաշտաման իւրեանց՝ տիրեցին
՚ի Պինդոս և ՚ի Պառնաս և յՀելիկոն, ՚ի վայրս
առ հասարակ անմայրս, ուր նկարիչք բնութեան
շուրջ պատեալ ՚ի բազմազուարճ պատկերաց՝
աստուածածարեալ զնոյրն։

Մեկնեալք ՚ի զուարճալի վայրացն, հասանք
՚ի Լիբադիա՝ կառուցեալ առ ստորոտ լերին, ուս-
տի Հիպոկրինէ վտակ բղխեալ՝ բազում ուրեք զարհա-

* Ցեսակոյս մասանենքս ՚ի տե-
ղեկութիւնն. Թիւ Ե։

1 Եսիոդ. ծննդաբան. գլխ. տող 64։

վէժ անկանի [1] ։ Միայն ուրեք ընդ քաղաքն կանգնեալ կան արձանք մեծագործութեան և կիրթ ախորժակաց բնակչացն [2], յորոց 'ի գլխին զբօսանք. այլ փութայցաք տեսանել զայրն Տրոփոնիոսի՝ զմի 'ի բազմահռչակ պատգամատեղեացըն որ էին յԱխայա ։ Բայց ոչ կարացաք իջանել անդր առ անզգուշութեան Փիլաստայ ։

Բանգլի յընթրիս ուրեք առ միում 'ի գլխաւորաց քաղաքին, ուր ձայնք անկան զսքանչելեաց որ 'ի բազմախորհուրդ այրին գործէին, Փիլաստա երկբայելով խմն ասաց՝ թէ 'ի սքանչելեաց անտի յոլովք արգասիք են բնութեան ։ Յաւել ևս պատմել, և ասէ. Էի ես երբեմն 'ի միում ուրեք 'ի մեհենաց, և թուէր հօսել քրտանց 'ի պատկերէ դիցն, և ամբոխն աղաղակէր՝ հրաշք են. այլ առաջ գիտացի, զի կերտեալ էր պատկերն 'ի փայտէ՝ որ երբեք երբեք տամկանայ [3] ։ Զայս իբրև ասաց, այլագունեցան դէմք միոյ 'ի բազմականացն, և յետ սակաւ միոյ ել արտաքս. զի էր նա մի 'ի քրմաց Տրոփոնեայ ։ Նա խորհրդակից եղեն մեզ այլք մի մատնել զանձինս վրէժխնդրութեան նորա, և մի իջանել 'ի գետնափորն՝ որոյ աղաւնոյ շաւիղք քրմացն ևեթ ծանօթք էին * ։

1 Պաւսան. գիրք Թ. գլ. 39. էջ 789 ։ Ուէլըր, գիրք Դ. էջ 327 ։ Սփոն. հտ. 2. էջ 50 ։ Փոքոք. հտ. 3. էջ 158 ։

2 Պաւսան. անդ.

3 Թէոփր. բուսաբ. գիրք Ե. գլ. 10. էջ 541 ։

* Յետակոյս մատենիս 'ի սեզեկութիւնն. թիւ Ջ ։

Իբրև աւուրք սակաւք 'ի վերայ անցին, ապա եղև մեզ զի մի 'ի Թեբացւոց հանդերձեալ էր իջանել յայրն. և ճանապարհ արարեալ ընդ լեռնակողմն հանդերձ ոմամբք 'ի բարեկամաց մերոց, և ապա բազմութիւն Լեբադացւոց յաւելան 'ի մեզ, հասաք վաղվաղակի 'ի մեհեան Տրոփոնեայ կառուցեալ յանտառի՝ որ նմին ինքեան դիցն է նուիրեալ [1]: Պատկեր նորա, որ 'ի կերպարանս Ասկղեպեայ դրոշեալ, Պրաքսիտեղեայ ձեռին է գործ:

Տրոփոնիոս ճարտարապետ էր արուեստիւ, և միաբանութեամբ Ագամեդեայ եղբօր իւրոյ կառոյց զմեհեան Դելփեայ: Այլ կէսք պատմեն գործեալ 'ի նմա գողուղի ելս, առ 'ի բառնալ գիշերայն զգանձս որ աւանդէին 'ի մեհեան անդր. և թէ Ագամեդեայ ըմբռնեալ 'ի ծուղակ որ լարեալ էր նմա, Տրոփոնիոս առ 'ի խափանել զամենայն կասկածանս՝ զգլխատեաց զնա. և յետ սակաւ միոյ ընկլաւ յանդունդս՝ պատառելով երկրի ընդ ոտիւք նորա [2]: Այլք պատմեն, զի եղբարցն երկոցունց 'ի կատարել զկառուցումն մեհենին՝ խնդրեալ յԱպողոնէ տրիտուր, և աստուածոյն խոստացեալ տալ նոցա զայն յետ եօթն աւուրց, յաւուրն եօթներորդի վախճանեցան 'ի ննջելն քաղցր 'ի քուն [3]: Այլ ինչ նուազ պատուակ-

1 Պաւսան. գիրք Թ. գլ. 39. էջ 789:

2 Նոյն անդ գլ. 37. էջ 785:

3 Պինդար առ Պլուտարքոսի յղ. մխիթ. հտ. 2. էջ 109:

տէն 'ի միմեանց կարծիք յաղագս Տրոփոնեայ աստուածական ընդունելոյ պաշտօն. այլ դիւրեթէ ամենայն պաշտամանցն Յունաց սկիզբն անհասանելի իմն է, և ընդունելին հետազօտել զայն։

Ոճանապարհան որ 'ի Լիբադեայ երթայ յայրն Տրոփոնեայ, են խիտ առ խիտ մեհեանք և անդրիք։ Նա գետնափոր այրն սուղ ինչ 'ի վերոյ քան զանտառն մեհենականն՝ անդաստանակ իմն երկեւի նախ շրջափակեալ 'ի սպիտակ կճեայ սիւնակաց, յորոց վերայ կանգնեալ կան կոթողք պղնձիք ¹։ Ներսի են մուտք 'ի ծերպ ուրեմն կառածոյ, ութ կանգուն 'ի բարձրութիւն, և չորք 'ի լայնութիւն, և անդ է դուռն այրին՝ յոր ընդ սանդուղս իջանեն։ Այլ 'ի խորս սանդղոցն անձուկ են յոյժ էջք, և հարկ է զոտս նախ 'ի ներքս արկանել, և ապա բազում աշխատութեամբ զիրանն. և ընդ մտանել անդր՝ ուղխօրէն իմն սահմանք մինչև 'ի յատակ այրին ձգեալ վայրաբերին։ Նոյն զօրութիւն և յետոյն դարձեալ մինչ զնոսա գլխ'ի վայր 'ի վեր. և փոխանորդ մեղսաքաւսանն 'ի ձեռին կալեալ նոցա, չկարեն զդէմ ունել բռնութեան զօրեացն՝ որ մղեն զնոսա յետս և 'ի մուտս։ Այլ քուրմք առ 'ի փարատել զամենայն կասկած հարստահարութեան՝ օձիւք լի ասեն լինել զքարայրն, և զի զփոխանորդն զայն մեղու

¹ Պաւսան. գիրք Թ. գլ. 39. էջ 791։ Փիլոստր. վարք Ապոլոն. գիրք Ը. գլ. 19։

պարտ է արկանել նոցա խանձ՝ զի մի մեղիցեն[1] ։

Պղիշերային ևեթ 'ի քարայր անդր մարթ է մտանել, և բազում պատրաստութիւնք են և քննութիւնք մտելոցն ։ Ավեբացին որ համոզերձեալն էր առնուլ հրաման պատասխանւոյ, կոչէր Տերսիղոս. և էր նորա կացեալ զաւուրս ինչ 'ի խորան մի նուիրեալ Բաղդի և Ոգւոյ բարւոյ, մտանելով 'ի ցուրտ բաղանիս, և հրաժարեալ 'ի գինւոյ և յամենայնէ որ 'ի մատենի օրինացն արգելեալ էր, և կերակրելով 'ի զոհիցն զորս ինքն մատուցանէր[2] ։

Ի մուտս արեգական զենու նոխազ մի. և լեր-դամհմայից զննեալ զընդերս նորա և զայլոց պատարագացն յառաջագոյն մատուցելոց, գուշակեցին ընդունելի լեալ Տրոփոնեայ զպատարագն Տերսիղոյ, և զի համոզերձեալ էր առնուլ նմա հրամանս պատասխանւոյ զորոց հարցանէրն ։ Ածին զնա յեզր գետոյն Երկինեայ, ուր մանկունք երկու երեքտասանամեայք օծին զնա իւղով, և հեղին զնովաւ ջուրս սրբութեան ։ Անտի ածաւ 'ի մերձակայ աղբիւրսն Լեթեայ և Մնեմոսինեայ. զի առաջինն մոռացումն ածէ անցելոց, իսկ երկրորդն տպաւորէ 'ի միտս զամենայն որ ինչ յայնմ անդ տեսանէ և լսէ ։ Նոյն մուծաւ միայնակ 'ի խորան մի ուր է վաղեմի պատկեր Տրոփոնեայ. առ որ Տերսիղոյ աղօթս մատուցեալ, անց յառաջ

1 Պարապ. Արիստոփ. յԱմպսն, տող 508 ։

2 Պաւսան. գիրք Թ. ԽԷ 790 ։

'ի քաղաքըն կոյս՝ զգեցեալ կտաւի : Այլ մեք զհետ նորա գնասցուք յաղօտ նշոյլ ջահիցն որ առաջի նորա ածէին . և եմուտ նա յայրն , աներեւոյթ եղեւ յաչաց մերոց [1] :

Այլ մինչ դեռ դէտանէին կալեալ մնայաք դարձի նորա , լուեաք խօսից այլոց ևս եկելոց 'ի գնէին . յորոց բազումք լեալ էին յայրին : Աչօք պատմէին և ոչ մի ինչ տեսեալ անդ , այլ ընկալեալ ըղձրատմանս պատասխանւոյ 'ի բարբառ կենդանի . այլոց ընդ հակառակն չէր ինչ լուեալ , բայց միայն տեսիլս ինչ նոցա երևեալ տարակուսանացն լուծիչս : Մի 'ի Լեբադացւոց , Թոռն Տիմարքեայ և աշակերտ Սոկրատայ , պատմեաց մեզ որ ինչ անցք ընդ հաւրն իւրում անցեալ էին . և էր լուեալ նորա զայն 'ի Սիմեայ Թեբայեցւոյ իմաստասիրէ , որ յայր և նմին զրուցեալն 'ի Տիմարքեայ աւանդեալ էր նմա [2] : Այլ էր բանիցն Տիմարքեայ օրինակ այս .

Չոգայ հարցանել զընտանեակ ոգւոյն Սոկրատայ զՏրոփոնիոս . և էր զառաջինն անդ յայրին խաւար անհնարին էր , և կայր ժամս ձիգս անկեալ յերկիր՝ պաղատանս մատուցանելով Տրոփոնեայ , 'ի քուն թէ յարթուն՝ ոչ գիտեմ : Այլ ահա լուայ հնչմունս քաղցրալուրս , այլ չգայր 'ի նոսա բարբառ յօդաւոր . և տեսի կղզիս մեծամեծս բազում պայծառացեալս ճաճանչագեղ , յարա-

[1] Պաւսան. գիրք Թ. էջ 790 :

[2] Պլուտ. յղ. դիւին Սոկրատայ, Հտ. Բ. էջ 590 :

փոփոխս տեղի 'ի տեղւոջէ, և շրջշրջէին անդադար գոյնք նոցա, և նկարեանք սաստկէին զնկարեանսն, և ծփէին ընդ ծով որ երկուստեք հոսէր ուղխս հրեղէնս : Այլ բանային առ նմա անդունդք անյատակք, յորմէ ծուխք թանձրախիտք դիզադէզ ամբառնային, և 'ի խորոց անտի լսելի լինէին մռնչիւնք կենդանեաց խառն 'ի խառն ընդ ձիչս մանկանց և ընդ հեծութիւնս արանց և կանանց :

Մինչդեռ յայս ամենայն արհաւրաց սասանեալ էր անձն իմ, եղև առ իս ձայն տխուր, և ասէ. Տիմոթէ, զի՞ հարցանես : Այլ ես խռովեղեալ էի, ասեմ. Ո ամենայն եակ, [illegible]նութք աստուածոյ զարմանալիք թուին ինձ : Այլ ասէ ցիս ձայնն որ խօսէր. Այդ զիք զոր նշմարեսդ 'ի բացի, են վերնագաւառք՝ որոց իշխեն զիք. այլ քեզ հրաման է շրջել ընդ սահմանս Պերսեփոնեայ որ ընդ մեռեալս են տէրութեամբ, անջրպետեալք 'ի նոցանէ Ստիքսեաւ : Հարցի և ասեմ. Այլ Ստիքսըն զինչ իցէ : Այլ ձայնն ասէ ցիս. Ճանապարհ է որ ածէ 'ի դժոխս, և շաւիղ որ բաժանէ ընդ լոյս և ընդ խաւար :

Այլ պատմեաց ինձ զծնունդ և զփոփոխումն հողւոց. զի որ մեղօքն շաղախեալ իցեն, ասէ, անկանին՝ որպէս տեսանես՝ 'ի վիհ, և պատրաստին 'ի վերստին ծնունդ : Պատասխանի ետու և ասեմ. Տեսեալս եթէ տեսանեմ յեղերս անդընդոցդ յուղեալ, որ կէսք այդր 'ի վայր իջանեն, և կէսք 'ի վեր ամբառնան : Այլ նա ասէ

ցիս. Աստեղքդ այդոքիկ հոգիք են, և երրեակ ազգ է դոցա. որք միանգամ՝ ի հեշտութիւնս ընկղմեալ՝ խաւարեցուցին զլուսական լոյս մտացն. որք մերթ ընդ ախտս և մերթ ընդ բանին պատերազմեալ ոչ սուրբք և ոչ պիղծք են՝ ի սպառ. և որք բանին հետ հնազանդեալ՝ զնախատիպն իւրեանց անապակեղծ կալան զպատկեր: Առաջինքն են աստեղքդ որ թուին անկցեալք. երկրորդքն՝ աստեղքդ աղօտացեալք մառախլաւ, զոր թուի՝ ի բաց փարատել նոցա. իսկ երրորդքն՝ աստեղքդ լուսաճաճանչք, որ գեր՝ ի վերոյ քան զայլսն ամբառնան: Դոքա յետինքդ են որք ընտանեակք մարդկան, որ յորդորեն զբարեբաստիկս՝ ի մահկանացուաց զաստուածամերձս:

Այլ ես սուղ ինչ զայսոսիկ պարզաբանեալ, առաջ առէ. Արդեակ, առաւել ես յետ երից ամսոց խեղամուտ լինիս բանիցս այսոցիկ. առ այժմ գնա խաղաղութեամբ. և զայս ասացեալ, լռեաց: Իսկ ես դարձայ տեսանել՝ թէ ուստի գայր ձայնն. այլ անդէն և անդ ցաւք սաստիկ անկեալ զգլխովն իմով խուշտանգէին զիս, յորմէ նուաղեցայ իսկ. և իբրև լինէր ինձ անձին զգալ, գտայ ստորաքոյ այրին: Զայս մինչև ցայս վայր Տիմարքեայ պատմեալ էր. և թոռն նորա յաւել, զի ՚ի դառնալն նորա անդր յԱթէնս՝ զբաւեցաւ յետ երից ամսոց ՚ի կենաց, որպէս պատգամին գուշակեաց:

Զամենայն զգիշերն զայն, և զայգոյ աւուրն

զմտան ինչ, լռեալք վէպս այսպիսիս · որոց բաղդաւ-
տութեամբ եղև մեզ 'ի միտ ածնուլ, զի քուրմք
մեհենին ընդ զողուզի մուսա 'ի քարայրին սպըր-
դեալ, բռնութեամբ և ուրուարար պատրանօք
յուզեալ աղմկէին զցնորս մտաց եկեղոցն 'ի խըն-
դիր պատասխանւոյ ։

Մտեալքն անդր մերթ առաւել և մերթ նուազ յամեն 'ի ներքս[1] · և են որք զտիւ մի և զերկուս զիշերս կան անդ[2] ։ Ոմն ընդմիջեցաւ, և Տերախդաս չև ևս եռեալ, և մեք դեգերեալք զայրիւն ։ Ժամ մի 'ի վերայ անցեալ, և ահա դիմէր ամբոխն 'ի շրջափակին կոյս · և մեք զհետ երթեալ տեսաք զթեբայեցին, և զքուրմն որ ձեռն տայրն նմա, և բազմեցուցանէին զնա յաթոռ Մնեմոսինեայ · քանզի անտի պարտ էր նմա ասել որ ինչ եստեսն և լուաւ ընդ երկրաւն ։ Նա էր նա զարհուրեալ, և աչք նորա ապակայծեալ՝ չճանաչէին զոք · և բարբառս ինչ ընդհատս 'ի շրթանց նորա ժողովեալ՝ որպէս պատգամս դիցն, ապա ածին զնա իւրքն 'ի խորան հրեշտակին բարւոյ և Բախտին ։ Ընդ տակաւ ուշաբերեալ զգաստացաւ[3], այլ խառն 'ի խուռն ինչ և եթ տիպք տեսլեացն յայրի անդ ծնուցին 'ի միտս նորա, և թերևս ոչ ինչ այլ՝ բայց արհաւիրք տագնապին · զի ոչ է մարթ հարցանել զատուածն զայն անպա-

1 Պաւսան. Արիստոփ. կրաաայ, հտ. 2. էջ 590 ։ յԱմպան, տող 508 ։
2 Պլուտ. յղ. գիւմն Սո. 39. էջ 792 ։
3 Պաւսան. գիրք Թ. ԻԼ.

տուհաս ։ Ընդարձակագոյնք 'ի մօտերոյն յայր անդր զամենայն աւուրս կենաց իւրեանց կեան 'ի տխրութեան՝ ոչ երբէք զուարթացեալք ․ որով յառակս պատշաճեցաւ ասել զկարի տխուր մարդկանէ, իբր յայրէն Տրոփոնեայ ելեալ[1] ։ Ի բազում այնչափ պատգամատեղիս որ են 'ի Բէովտիա, ոչ ուրեք այսպիսի թանձր և նշանակ գործի խաբէութիւն, սակայն և ոչ ուրեք այնչափ յաճախեն եկաւորք ։

Իջեալք 'ի լեռնէն, յետ աւուրց յուղի անկաք գնալ 'ի Թեբէ ։ Նա անցաք ընդ Բէովտեա, ուր 'ի վեր քան զամենայն ինչ պաշտի գաւազանն դարբնեալ 'ի Հեփեստեայ՝ պատուիրանաւն Արամազդայ ․ զոր Պեղոպս կալաւ նախ, և 'ի Պեղոպեայ յաջորդութեամբ Ատրէոս և Թիեստոս և Ագամեմնոն ։ Ոչ 'ի մեհենի ուրեք, այլ 'ի տան միոյ ուրուք 'ի քրմաց պաշտի գաւազանն այն ․ և զօրհանապազ զոհս մատչին նմա, և սեղան բազմախորտիկ[2] ։

Ի Բէովտեայ անցաք 'ի Թեբէ, ճանապարհ արարեալ ընդ անտառս, ընդ բլուրս, ընդ անդաստանս բերրիս և ընդ բազում վտակս ։ Թեբէ, մի 'ի մեծամեծ քաղաքաց Յունաց, պատեալ է պարսպաւ, և աշտարակօք ամրացեալ ։ Ընդ եօթն դրունս են մուտք 'ի նա[3] ․ և շրջապատ

1 Պարբաղ ․ Արիստոփ ․ 40 ․ էջ 793 ։ յԱմպան, տող 108 ։
2 Պաւսան ․ գիրք Թ ․ գլ ․
3 Նոյն անդ գլ ․ 8 ․ էջ 727 ։

նորա * քառասուն և երեք ասպարէզ ¹ ։ Մ՛իջնաբերդն կառուցեալ կայ 'ի բլրի, ուր նախնի բընակիչք Խմերայ զտեղի կալան. և անտի բղխէ աղբիւր ջրոյ, զոր անդստին 'ի վաղ ժամանակաց ընդ գետնափոր ջրանցս ածին 'ի քաղաքն ² ։

Շուրջ զքաղաքաւն գնան գետք կրկին, և մարգագետինք և բուրաստանք յօրինեն զարդ ։ Փողոցք նորա ոչ են ուղղորդք, որպէս և ամենայն իսկ հնոց քաղաքաց ³ ։ Ի հրաշակերտս որովք զարդարին շինուածք հասարակաց՝ են անդրիք չքնաղք. 'ի մեհենին Հերակլեայ պակեայ ընդ հսկայաձև պատկեր նորին դրօշեալ յԱ՛լկամենեայ, և ընդ նահատակութիւնս նորա դրօշեալս 'ի Պրաքսիտեղեայ ⁴. և 'ի մեհեան Իսմենեանն Ապողոնի զարմացեալ կացի ընդ պատկեր Հերմեայ քանդակեալ 'ի Փիդիայ, և ընդ Ա՛թենասայն 'ի Սկոպայ ⁵ ։ Եւ վասն զի ականաւորաց ես ումանց Թեբայեցւոց էին անդ անդրիք, խնդրէի զՊինդարայն. և պատասխանի ետուն ինձ՝ թէ չիք նորա անդրի, այլ ահաւասիկ Կորիննին՝ որ քաջ քան զամենայն երգիչս յաւուրս իւր եկաց ։ Մ՛ատեայ առ նա, և ընթերցայ յարձանագրին՝ Կորիննա որ զհայրենիսն պայծառացոյց ⁶ ։

* Յետկոյս մատենիս 'ի տեղեկութիւնս. Թիւ Է ։

1 Դիկէարք. յղ. Յունաստ. յաշխարհագր. տող 98. էջ 7 ։

2 Նոյն անդ. էջ 15 ։

3 Նոյն անդ ։

4 Պաւսան. գիրք Թ. գլ. 11. էջ 732 ։

5 Նոյն անդ գլ. 10. էջ 730 ։

6 Աթեն. գիրք Ա. գլ. 15. էջ 19 ։

Ի մեհեան Խամենեանն Ապողոնի ընդ եռոտանիւն պղնձիւ բաղուած է միւս ևս ոսկեղէն, նուիրեալ անդր 'ի Կրեսոսայ արքայէն Լիւդացւոց [1]: Եւ այլքն նուէրք են ժողովրդոց կամ իւրաքանչիւրոց ումանց. և ծխին 'ի վերայ նոցա բուրմունք խնկոց. և զի գեղեցկաձևք են՝ յաճախեն զարդս մեհենաց:

Որպէս 'ի յոլովագոյնս 'ի քաղաքաց Ասիացւոց, է և 'ի Միւղէ տեսարան [2], և կրթարան մանկանց [3], և հրապարակ մեծ. և շուրջ զհրապարակաւն մեհեանք, և այլ բազում շինուածք, որոց պատուարք ծածկեալ են 'ի գինւոյ՝ զորս Թեբացիք կողոպտեցին յաթենացւոց 'ի ճակատամարտին որ 'ի Դեղիոն: Եւ 'ի մնացորդաց գերապանծ աւարին կառուցին 'ի նմին տեղւոջ կամարայարկ գաւիթ հոյակապ, զարդարեալ բազմութեամբ պղնձի պատկերաց [4]:

Ռազմանմարդ է յոյժ քաղաքն *, և բնակիչք նորա յերիս դասս որոշեալ են որպէս յԱթէնս. առաջին դաս՝ քաղաքայնոցն, երկրորդ՝ եկացն բնակելոց 'ի քաղաքին, և երրորդ՝ ստրկացն [5]: Աջկողքին պառակք յաճախագոյնս ընդ միմեանս դրդուեալ, յարուցին ամբոխ մեծ յաշխարհին [6]. կէսք համախոհութեամբ սպարտացւոց նուազ

1 Երոդոտ. գիրք Ա. գլ. 92:
2 Լիվ. գիրք ԼԳ. գլ. 28:
3 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 366:
4 Նոյն գիրք ԺԲ. էջ 119:
* Ցեռակոյս մատենիս 'ի տեղեկութիւնն. թիւ Ը:
5 Դիոդ. գիրք ԺԴ. էջ 495:
6 Թուկիդ. գիրք Գ. գլ. 62: Արիստոտ. յղ. հասա. գիրք Ե. գլ. 3. հա. 2. էջ 388:

իշխանս կամելով, այլք օգնականեալ յաթենացւոց՝ կուսակիցք կալով ռամկաց պետութեան[1]։ Յամենաց ինչ հետէ յետնոցս այսոցիկ հզօրագոյն գտեալ[2], ռամիկն ունի զամենայն իշխանութիւն[3]։

Թեբէ ոչ միայն պատճէշ է Բէովտիոյ[4], այլ և մայրաքաղաք նորին 'ի դէպ է կոչել զայն։ Նա ինքն է առաջնորդ մեծի նիզակակցութեանն գլխաւոր քաղաքաց Բէովտիոյ. որէն է ամենեցուն արձակել հրեշտակս յաշխարհաժողովն, ուր ուղղին իւրք ազգին, չորիցս 'ի քննութիւն առեալ յայլ և այլ խորհրդեան[5]։ Պահապանութիւնք մետասան քաղաքին անդ անուանեալ բէովտարքեաք[6]. ազգն տայ նոցա զիշխանութիւնն, և նովաւ զօրութիւն մեծ է նոցա 'ի խորհուրդս, և զրեթէ միշտ նոցա անկ է զօրավարել[7]։ Եթէ մշտնջենաւոր էր իշխանութիւնն, բազմավտանգ մարթէր լինել. նմին իրի մահապարտք գտանին բէովտարքեաք, եթէ ոչ 'ի լրանալ ամին 'ի բաց դնեն զիշխանութիւնն, թէպէտ և կացցեն 'ի գլուխ յաղթող բանակաց և մերձք 'ի կանգնել զօրութիւնս մեծամեծս[8]։

Քաղաքք իւրաքանչիւր 'ի Բէովտիա պահանջեն, և իրաւունք իսկ են նոցա կալ ինքնիշխան.

1 Պլուտ. 'ի Պեղոպ. հտ. 1. էջ 280։

2 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 388։

3 Դեմոսթ. 'ի Ղեպտին. էջ 556։ Պողիբ. գիրք Չ. էջ 488։

4 Դիոդ. անդ. էջ 342։

5 Թուկիդ. գիրք Ե. գլ. 38։ Դիոդ. անդ. էջ 389։ Լիվ. գիրք ԼՋ. գլ. 6։

6 Թուկիդ. գիրք Դ. գլ. 91։

7 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 368։ Պլուտ. 'ի Պեղոպ. հտ. 1. էջ 288։

8 Պլուտ. անդ, էջ 290։

այլ թերացեալք ընդդէմ ճգանց նորա և այլոց ազգաց Եգիպտացւոյ կացեալ, ոչ երբէք թողին զնոսա ազատս ամենեւին [1]։ Որ ՚ի վերոյ քաղաքաց՝ զորս Թեբեանք հիմնեցին՝ զնոյն վարեն զիշխանութիւն, զոր մայրաքաղաքք ՚ի վերայ գաղթականաց իւրեանց [2]. իսկ այլոց ընդդէմ կացուցանեն զզօրութիւն [3], որում կարի յաճախ պատահէ գեր ՚ի վերոյ կալ ամենայն իրաւանց, կամ զծառանգութիւն՝ որ բարեբերին է քան զամենայն։ Կործանեցին զԹեսպիեա և զՊղատէա վասն յետս կալոյ նոցա ՚ի բռնաւորական նիզակակցութենէ [4], որոյ Թեբեանք են այժմ ուղիղք, և որում մարթ է աւելի քան զերկուս բիւրս զօրաժողով լինել։ Նա այնչափ եւս առաւել անհարկու է զօրութիւն նոցա, որչափ Բովոտացիք գրեթէ առհասարակ քաջք են և պատերազմողք և խորոխտք յաղթութեանցն՝ զոր առաջնորդութեամբն Եպամինոնդայ կալան։ Յոյժ կորովիք ՚ի բնէ գոլով, և ՚ի հրահանգս կրթարանաց յաճախելն զկորով մարմնոյ [5]։

Երկիր բնակութեան նոցա արգաւանդահող է քան զԱտտիկէ [6], և բերէ ցորեան առատ և առատ [7]. և նաւահանգստիցն բարեբաստիկ վայրք բանան

1 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Զ. էջ 594։ Դիոդ. գիրք ԺԵ. էջ 355, և այլուր։
2 Թուկիդ. գիրք Գ. գլ. 61 և 62։
3 Քսենոփ. անդ, էջ 579։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 62։
4 Քսենոփ. անդ, գիրք Ե. էջ 558։ Դիոդ. գիրք ԺԵ. էջ 389։
5 Դիոդ. գիրք ԺԲ. էջ 119. գիրք ԺԵ. էջ 341 և 366։
6 Ստրաբ. գիրք Թ. էջ 400։
7 Պլին. գիրք ԺԸ. հա. 2. էջ 107։

առաջի նոցա զտուրևառիկ շահաւէտութիւն, աստի ընդ Իտալիա, ընդ Սիկիլիա և ընդ Ափրիկէ. և անտի ընդ Եգիպտոս, ընդ Կիպրոս կղզի, ընդ Մակեդոնիա և ընդ Եղլեսպոնտ[1]:

Բայց 'ի համաշխարհական տօնիցն՝ զորս խըմբեն 'ի միասին 'ի Կորնթեա մերձ 'ի մեհեանն Աթենասայ[2], են և քաղաքաց իւրաքանչիւր տօնք յաճախաւորք, և բազումք ևս 'ի Թեբացւոց սահմանեալք՝ որոց եղէ իսկ ականատես. այլ ես զմի ևեթ 'ի բազմաց յիշատակեցից, որ 'ի տօնի սարդենեաց պաշտի արարողութիւնս այս: Հանդէս իմն կամ Թափօր տեսի զի հասանէր 'ի մեհեանն Իսմենեանն Ապողոնի: Որմի աստուածոյն տարևոր ժամանակաւ սահմանի իշխանութիւն, և ընդ գեղոյ կերպարանացն պարտ է նմա ունել և զմանկութիւն և զազնուականութիւն[3]: Նստէր նա 'ի հանդիսին, պսակ ոսկի 'ի գլուխ, և ոստ սարգենի 'ի ձեռին, վարսքն զուսովքն գեղածփեալք, և զգեցեալ պատմուճան շքեղ[4]: Զհետ նորա գայր պար օրիորդաց, ոստ դափնոյ և 'ի ձեռին նոցա, և երգէին զօրհնութիւնս: Յաջ զակնանց նորա ոմն երիտասարդ գնայր առաջի նորա, բարձեալ 'ի ձեռին ոստ երկայնաձիւղ ձիթենւոյ՝ պատեալ ծաղկամբք և տերևովք դափնոյ, և 'ի ծայր նորա գունդ պղնձի պատկեր

1 Ստրաբ. գիրք Թ. էջ 400.

2 Նոյն անդ, էջ 411: Պլուտ. հա. Զ. էջ 774: Պաւսան. գիրք Թ. գլ. 34. էջ 778:

3 Պաւսան. անդ, գլ. 10. էջ 730:

4 Պրոկղ. Ծաղկաքաղ առ. Փոտայ, էջ 988:

արեգական ։ Զգնդէ անօտի կախեալ կային և այլ ևս բազում գնդակք ոսկիք 'ի ձև այլոց աստեղաց , և նարօտք երկքարիւր վաթսուն և հինգ ծիրանեգոյնք' 'ի թիւ աւուրց տարւոյ . և այլ գունդ փոքրագոյն քան զառաջինն ընդ նովաւ կայր 'ի տիպ լուսնի ։ Զի որովհետև Ապողոնի' այս ինքն է արեգական կատարէին տօնք , ախոյենական այնուհետև նշանակէր գերազանցութիւն նորա քան զայլ աստեղս առ հասարակ ։ Իսկ էին տօնքն այն սահմանեալ վասն յաղթութեան կանգնելոյ ընդդէմ բնակչաց քաղաքին Արնեայ ։

Յօրէնս թեբացւոց են ինչ ինչ արժանի յիշատակի . զի ոչ է օրէն ամբառնալ յաւագութիւն զայր քաղաքացի , որոյ չիցէ հրաժարեալ 'ի տասն ամաց հետէ 'ի դուգնաքեայ տուրևառից[1] ։ Տուգանք էն նկարչաց և քանդակագործաց, եթէ անպատեհս ինչ գործիցեն պատկերս[2] ։ Իսկ դարձեալ արգելուն օրէնք թողուլ 'ի բացի զտղայս նորածինս[3] , որպէս սովորութիւն է 'ի քաղաքս ուրեք Եղլադայ[4] ։ Պարտ է հօր մանկանն յանձնման առնել զնա դատաւորին , և ցուցանել զի չէ բաւական ձեռն իւր 'ի սնուցանել զնա . և դատաւորն տայ զնա դիւրագնի, որ ոք 'ի քաղաքայնոց խնդրիցէ գնել զնա, որ և ապա ընդ ստրուկս իւր ունի զնա[5] ։ Օրէն է առ թեբացիս տալ

1 Արիստոտ. յղ. հատ. գիրք Գ. գլ. 5. հա. 2. էջ 344 ։

2 Եղիան. զան. պատմ. գիրք Դ. գլ. 4 ։

3 Նոյն անդ, գիրք Բ. գլ. Է.

4 Գեա. յղ. օր. 'ատորիկ. էջ 144 ։

5 Եղիան. անդ ։

փրկանաւ զգերին կալեալ 'ի պատերազմի, եթէ միայն չիցէ ծնեալ 'ի Լակոնիա. զի զծնեալսն անդ սպանանեն[1]:

Այսօր են օրէնք յԱտտիկէ, իսկ 'ի Լակոնիա կարի թանձունք[2], թէպէտ և Աթենացն ևեթ լեառն բաժանէ ընդ նոսա: Այլ զանազանութիւնս այս օդոց թուի զմտացն և ներգործել 'ի բնակիչս երկուց գաւառացն, հաւաստի առնելով զտեսութիւն իմաստասիրաց ոմանց զզօրութենէ նահանգաց[3]: Քանզի Լակոնացիք գրեթէ առ հասարակ վերջացեալ զտանելին յարագատութենէ և յաշխուժութենէ հօգւոյ՝ որով բնաւորեալ են աթենացիք. այլ թերևս զաստիարակութե նոցա տալի է զայս քան թէ բնութե: Ոչ առ տգիտութե իւրեանց և տխմարութե թուին թանձրամիտք և ապուշք[4]. զի առաւել 'ի հրահանգս մարմնոյ քան մտաց պարապեն[5], նմին իրի և չիք առ նոսա ճարտարխօսութիւն[6], ոչ վայելուչ կարգաւորութիւն բանից[7], ոչ հմտութիւնք՝ որ յառմիտեանս թղթելոյ[8], և ոչ տարապ յանկուցող՝ որ կրթութեանն են արգասիք քան բնութեան:

1 Պղուտար. գիրք Թ. էջ 740:

2 Կիկեր. յղ. Ճակատագր. գլ. 4. հտ. 3. էջ 101:

3 Իպպոկր. յղ. օդոյ ջրոյ և տեղ. գլ. 58. և այլն: Պղատ. յղ. օր. գիրքն. հտ. 2. էջ 747:

4 Պինդ. ողիմպ. 6. տող 152: Դեմոսթ. յղ. պսակ. էջ 479: Կիկեր. յղ. Ճակատագր. գլ. 9. հտ. 3. էջ 101:

5 Նեպոս յԱղկիբ. գլ. 11:

6 Պղատ. 'ի Իպպիաս. հտ. էջ 182:

7 Ղուկիան. 'ի Յովն. ողջերդ. հտ. 2. էջ 679: Պարապ անդ:

8 Ստրաբ. գիրք Թ. էջ 401:

Նայց մինչ կարծեսցէ զՍոփոկլէս անուանէր լեալ և աւուլ յարանց հանճարեղաց. քանզի բազում թերացիք յաճախեցին փառս վարժարանին Սոկրատայ[1]: Նշանաւորն ոչ ինչ նուազ պայծառացաւ գիտութեամբք, քան նոցա պատերազմի աջողակութեամբ[2]: Տեսի ես անդ յուղեորեն իմում այս ներհուն ոչ տակաւս, ընդ որս և զՆաքսիս և զԱփոխսիողոր՝ որք զմեկայս Սպարտայ նորոգ մատենագրեցին: Պարմենեալ և Նախոդ և Կորինոս և Պիւնդար բիովլոտացիք էին:

Նախող եթող համբաւ մեծ և մատեանս գերապանծս: Անաքսինակակլեց Հոմերի զնա համարեալ[3], կարծեցին ոմանք զնմանէ՝ թէ ոչ նմին կացեալ. բայց Հոմերի չմարթէր ունել ուսոյս: Ամողաբանութեան դիւցն քերթեալ 'ի նմանէ, որպէս զբազմաց նախնի մատենագրաց Յունաց դիցաբանութիւնս, են հիւսք իմն առասպելաց կամ անհասանելի այլաբանութեանց:

Ազգք բնակեալք մերձ յՀելիկոն հայրենի աւանդութեան այլ ինչ ոչ ընծայեն նմա գրուած, բաց 'ի թղթոյ միոջէ զոր առ Պերսէս եղբայր իւր գրեաց[4] առ 'ի յորդորել զնա 'ի գործ: Օրինակ առաջի դնէ նմա զհայրն իւրեանց, որ առ 'ի հայթայթել զպէտս ընտանեացն՝ բազում անգամ զկեանս իւր եդ 'ի վտանգ 'ի նաւ մի վա-

1 Դիոգ. լայերտ. գիրք Բ. յօդ. 124:
2 Նեպոս յԵպամ. գլ. 2:
3 Դիոդ. գիրք ԺԵ. 42
403:
4 Երոդոտ. գիրք Բ. գլ. 53: Արտոնեան մէծք, գլուխ 29 և 30:

Ճառականն, և 'ի ծերութեան մեկնեալ 'ի Սրումնոյ քաղաքէ Նեողեայ՝ եկն բնակել մերձ յԱշղեկոն[1] ։ Նախորդ ոչ միայն խրատս ողջամիտս զպատուց մարդկան[2], և սրտառուչս զանխրատութենէ նոցա 'ի գիրս յայս 'ի ներքս մուծանէ, այլ և պատուէրս բազումս զերկրագործութենէ[3] յոյժ կարևորս, վասն չև ես ուրուք 'ի ժամանակին յայնմիկ աւանդելոյ գրով զօրէնս արուեստին[4] ։

Ոչ շրջեցաւ նա ընդ աշխարհ[5], այլ մինչև յալիս ծերութեան պարապէր 'ի քերթութիւն[6] ։ Նշանակ բանից նորա ընտիր և ներդաշնակ քաղցր է 'ի լսելիս[7], և բերէ յինքեան զնախնին պարզութիւն, որ ոչ այլ ինչ է՝ բայց համեմատութիւն առաջարկութեանն ընդ իմացուածս և ընդ ասացուածս ։

Նախորդ գերազանցեաց յաղագս քերթութեան, յորում իմաստք ոչ յոյժ բարձունք խնդրին[8] . իսկ Պինդար 'ի բարձրագոյն քերթութեան[9] ։ Պինդար յաւուրս արշաւանացն Քսերքսեայ արքայծառանայր[10] . և եկեաց նա զամս իբր վաթսուն-

1 Եսիոդ. աւուրք և գործք, տող 633 ։
2 Պղատ. յղ. հաս. գիրք Ե. էջ 466 ։ Կիկեր. առ Բրուտոն, գիրք Զ. Թուղթ 18. հա. 7. էջ 213 ։
3 Եսիոդ. անդ, տող 383 ։
4 Պլին. գիրք ԺԴ. գլ. 1. հա. 1. էջ 705 ։
5 Պաւսան. գիրք Ա. գլ. 2. էջ 6 ։
6 Կիկեր. յղ. ծեր. յօդ. 7. հա. 3. էջ 301 ։
7 Դիոն. ալիկ. յղ. նախնե. մատեն. հա. 5. էջ 419 ։
8 Կուինտիլ. կարգադր. գիրք Ժ. գլ. 1. էջ 629 ։
9 Նոյն անդ, էջ 631 ։
10 Պինդար խաթմ. 8. տող. 20 ։ Պարապ. անդ ։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 22 ։

և հինգ[1] ։ Վարժապետք այլ և այլ եղեն նմա ’ի վարժս քերթութեան և երաժշտութեան, և մանաւանդ Միրտէ կին նշանաւոր աջողութեամբք հանճարոյ, և հռչակաւոր ևս վասն ունելոյ ընդ աշակերտս իւր զՊինդար և զգեղաւորն Կորիննա[2] ։ Սոքա աշակերտակիցք երկու կարեցան ընդ միմեանս սիրով արուեստից, թէ արդեօք ո առաւելուն ևս իւիք ։ Պինդար մանկագոյն գոլով քան զԿորիննա, խորհրդակից իւր ունէր զնա. և ուսեալ ’ի նմանէ՝ զի պարտ է զարդարել զքերթածս առասպելեօք, այսպէս միում ’ի տաղիցն արար սկիզբն. Ո՞ պարտ իցէ ինձ երգել, զԻսմենոս գետ թէ զյաւերժահարսնն Մելիա կամ զԿադմոս կամ զՀերակլէս և կամ զԴիոնիս. և իւրաքանչիւր սոցա՝ այլովքն հանգերձ, յաւել մակդիրս ։ Ընդ որ Կորիննայ ժպտեալ, ասէ. Ձեռաւ քո զպարկ լի ցորենով՝ սերմանել յածու մի փոքրիկ, փոխանակ ցանելոյ անողլի ձեռամբ զհատս սերմանց, անդէն յառաջնում քայլափոխի ամացեր զամփանդակն յերկիր[3] ։

Վարժեցաւ նա յամենայն ազգի ազգի քերթածս[4]. և առաւելագոյն ստացաւ պարծանս երգովքն, զորս ’ի խնդիրս այլոց արար յօրհնու-

1 Թոմ. յղ. Պենդ. ։ Քորիննի, տարեգր. առտոիկ. հա. Զ. էջ 56 ։

2 Սուիդ. ’ի բառն Κορίν. և ’ի բառն Πίνδ.

3 Պղուտ. յղ. փառաց Աթէն. հա. Զ. էջ 347 ։

4 Սուիդ. ’ի բառն. Πίνδ. Փաբրիկ. մատեն. յոյն. հա. 1. էջ 550 ։

թիւս դից եւ 'ի պանծացուցանել զգուպարայաղթ նահատակս Ապողոյ, որ թերեւս դժուարագոյն է քան զամենայն երգս տաղից ։ Զի պարտ է քերթողին զխնդրեալ հարկ ներբողիցն ունել պատրաստ 'ի պայմանեալ աւուրն ։ Նոյնք միշտ առաջի կան նմա պատկերք 'ի նկարագրել, եւ 'ի վտանգի կայ միշտ առաւելազանց կամ նուազ քան զառաջարկութիւնն գտանելոյ ։ Բայց Պինդարայ այնպիսի էին խանդք, զի խոյզս այսուքիկ եւ խութք չխափանէին զնա, եւ անդր եւս քան զկշիռ ական մնաց մերոց ձգէին սահմանք տեսութեան նորա ։

Ոգի նորա կորովի եւ անընդհատ՝ յախուռն եւ խորախտ եւ սաստիկ շարժմամբքն 'ի վեր երեւի ։ Եթէ զդիս առաջի կայցէ նմա երգել, ամբառնայ որպէս զարծուի մինչեւ յաթոռ նոցա ։ Իսկ եթէ զմարդիկ, յարձակի յասպարէզ անդր որպէս ամեհի երիվար ։ եւ ուղխօրէն իմն ընդ երկինս եւ ընդ երկիր հոլովէ պատկերս վսեմս, այլաբանութիւնս յանդգունս, իմաստս զօրաւորս, եւ վճիռս լուսաճաճանչս [1] ։

Այս առ ինչ ուղխս այս երբեմն զթումբս պատառեալ, եւ անդրէն 'ի ծոր իւր ամփոփի ։ եւ զայրագին եւս վերստին զեղեալ, միւսանգամ անդր դառնայ կատարել խաղաղ զընթացս իւր ։ Զի զոր օրինակ առիւծ բազում անգամ ընդ

[1] Ովրատ. գիրք Դ. տաղ. գագր. գիրք Ժ. գլ. 1. Էջ երգ. 2 ։ Կուինտիլ. կար. 631 ։

ապաւինող շաւիղս յարձակեալ ոչ դադարէ մինչև ըմբռնիցէ զորմն , այսպէս և Պինդար զայրագին զՀետ մտանէ տառաչարկութեանն՝ որ մերթ երևի և մերթ աներևոյթ լինի աչաց նորա ։ Պէտէ սլանայ զՀետ փառաց , առ ըղձի ակներև կացուցանելոյ զայն ․ և եթէ 'ի նախատական զորս նեղբարողէ՝ ոչ պայծառ նշողեն փառք , հետազօտէ 'ի նախնիս նոցա և 'ի հայրենիս և 'ի սահմանադիրս խաղուց՝ ուր և նշողիցեն Ճառագայթք , զորս գաղտնածածուկ իմն արուեստիւ խառնէ ընդ այնոսիկ՝ որովք պսակէ զգլուցագոնս իւր ։ Ի տեսիլ նոցա անկանի իմն 'ի ցնորս՝ ոչ ինչ իւիք խափանեալ ․ համբուռնակէ զփայլումն նոցա Ճառագայթից տունջեայինն աստեղն [1] ․ և զընկալուչ նոցա կացուցանէ 'ի ծագ բարեբաստութեանն [2] ։ Այլ եթէ մեծութիւնք ընդ գեղոյ կցորդեալ իցեն 'ի նմա , յաղթող անդր Աքմէոնդայ բազմեցուցանէ զնա [3] ․ և առ 'ի պարապել զնա յամբարտաւանութենէ՝ յիշեցուցանէ նմա անդէն առնմին , զի մահկանացու զգեցեալ է մարմին , և զգեստ վերջին լիցի նմա երկիր ընդ հուպ [4] ։

Այս բարբառ անսովոր համեմատ էր ոգւոյ ժամանակին ․ յաղթութեամբք զորս այն ինչ կալեալ էր Յունաց ընդդէմ Պարսից՝ և ևս հաստատեալ էին 'ի կարծիս ․ զի չիք ինչ որ զարխական վեհ համարձակութիւն ազդիցէ 'ի հոգի , որ-

1 Պինդ. ողիմպ. 1. տող. 7 ։
2 Նոյն անդ , տող 157 ։
3 Նոյն իսթմ. 5. տող 18 ։
4 Նոյն նեմ. 11. տող 20 ։

պէս զպանծալի վկայութիւնս հաստատակաց գո-
վութեան։ Պինդարոս զիրս ժամանակին 'ի ձահ
առեալ, և կուսակութեամբ զօրաւոր աստուա-
ծոց և բազմափայլ ձևոց՝ թուէր իմն իբր յամ-
պոց որոտալով ասել պետութեանց Ելլադայ.
Մ՛ի շիջուցանէք զհուրն դիւցական լուցեալ 'ի
հոգիս մեր, արծարծեցէք զեռանդն բարենա-
խանձ, յորդեցէք զամենայն ազգի ազգի վաս-
տակս, մնացէք արութեանց և մեծագործու-
թեանց յայնցանէ՝ որ վասն փառաց կեան։ Եւ
առ Յոյնս ժողովեալս 'ի դաշտս Ողիմպեայ ասէր.
Տեսէք զնահատակսդ, որպիսի խիստ աշխատանս
յանձն առնուն առ 'ի ստանալ տերևս ինչ ձիթե-
նւոյ առաջի ձեր. և զի՞նչ ապա չգործիցէք ուր
զվրէժ հայրենեաց խնդրել առաջի կայցէ։

Զարդիս իսկ հանդիսատեսք պայծառ տօ-
նախմբութեանցն Ելլադայ, որ 'ի ժամ յաղթա-
նակին տեսանեն զնահատակն, և ուղեկից լինին
նմա 'ի մտանելն 'ի քաղաք ծննդեան իւրոյ, որք
լեն զաղաղակն շուրջ զնովաւ հնչեալ, և զձայն
սքանչանաց և ցնծութեան խառն ընդ անուանս
նախնեաց նոցա որք զնոյն պարծանս կալան, և
ընդ անուանս դից խնամակալաց՝ որք շնորհեցին
հայրենեաց իւրեանց զյաղթութիւնն զայն,
ամենեքին ասեմ նոքա փոխանակ զարմանալոյ
ընդ աշխոյժս և ընդ խանդս մտաց Պինդարայ,
համարեսցին արդեօք զքերթածս նորա հան-
դերձ ամենայն վսեմութեամբն յոյժ ստորև քան

զուարթութիւն մտաց իւրեանց ։

Պինդարոսի յաճախագոյնս ընթեռնեալ 'ի գով-մնացումն ընդ հովեչարժ և ընդ մեծաշուք տե-սիլս, հաղորդ զուարթ հասարակաց ազդեցութեան մտաց ․ և 'ի նկարագրութիւնս իւր խառնեալ զայն , եկաց գովաբան և բաշխող փառաց ․ որով ամենայն առաւելութիւնք տաղից նորա աճեցու-ցան , և առին կերպարանս վսեմութեան ։ Պէտ եղև նմա և զարքայս մեծազօրս և զանուշանս քա-ղաքացիս պանծացուցանել ․ բայց յերկոսին եւ ոչ զմարդ նկատեալ , այլ զյաղթող ։ Պատճա-ռանօք դիւրատաղտուկ ընութեան մարդկան ընդ գովութիւնս՝ որ ոչ իւրեանց պատկանին [1] , չյա-մէ յանձնական առաքինութիւնս նահատակացն ․ այլ զի առաքինութիւնք արքայից են փառք նոցա , գովէ զբարեգործութիւնս նոցա [2] , և ցուցանէ որ ինչ մարթ է նոցա բարեգործել ․ Երա՛նք , ասէ , արդարք յամենայն գործս ձեր , և ճշմա-րիտք յամենայն 'ի բանս * ․ գիտասջի՛ք զի բիւրք բիւրուց կան ձեզ դէտք , և թէ և ինչ թերու-թիւն լիցի ձեզ աղխտաբեր [3] ։ Այսպիսի էին գո-վութիւնք Պինդարայ ․ ոչ շռայլէր նա դրուատիս ,

1 Պինդ․ պիւթ․ 1 ։ տող 160 ․ պիւթ ․ 8 ․ տող 473 ․ խմթմ․ 5 ․ տող 65 ․ նեմ․ 10 ․ տող 37 ։

2 Նոյն ․ ողիմպ ․ 1 ․ տող 18 ․ ողիմպ ․ 2 ․ տող 10 և 180 ։

* Բանքն Պինդարայ , որով զիմաստս զայսոսիկ բացատրէ ։

տացեն զկերպարանս ինչ քա-ջայանդուգն աստացուածոյնո-րա , զի ասէ ․ Առաջնորդե-ցէք զեկաւ արդարութեան , դարբնեցէք զլեզու ձեր 'ի սալ ճշմարտութեան ։

3 Պինդ․ պիւթ․ 1 ․ տող 165 ։

և ոչ ամենեցուն հանճարէր անկ յօրինել զդրուատիս : Վասնզի դրուատիք, ասէր, են վարձք բարեգործութեանց [1]. Հեզիկ ցօղովն նոցա աճեն առաքինութիւնք, որպէս տունկք ՚ի ցօղոյ երկնից [2]. այլ լռելոյ ևեթ անկ է զովել զառաքինիս [3] :

Բայց թէպէտ և դժուարինք են յոյժ տաղք Պինդարայ, և խառն ՚ի խուռն կերպարան բանից նորա յերևմանն, այլ յամենայն դէպս պատուեցան : Ամբոխն զարմանայ ընդ այնս՝ առանց հասու լինելոյ իմաստիցն [4]. այնու ևեթ զի պատկերք կենդանատիպք արագ արագ յաչս նորա փայլականաբար ցոլանան, և բառք մեծավայելուչք և քաղցրահնչողք բախեն ստէպ զլսելիս նորա և թմբրեցուցանեն : Այլ դատաւորք հանճարեղք զքերթող տաղիցն այնոցիկ նախապատիւ ՚ի քնարերգակ քերթողս միշտ դասեցին [5], և այժմէն իսկ իմաստասէրք զվճիռս նորա ՚ի կիր արկանեն, և մեծարեն զվկայութիւն նորա [6] :

Մարթ էր ինձ մանրապատում ասել զխիտ առ խիտ գեղեցկութիւնս տաղից նորա, այլ ես շատ համարեցայ ասել զազնուական իմաստիցն՝ որ շունչ իմն և հոգի տաղիցն նորա են : Լիցի

1 Պինդ. Իսթմ. 3. տող 11 :
2 Նոյն. Նեմ. 8. տող 68 :
3 Նոյն Նեմ. 11. տող 22 :
4 Նոյն Ողիմպ. 2. տող 153 :
5 Ովրատ : Կուինտիլ : Ղոնգին : Դիոն. Ալիկ : Ցիցերոն. բանաս. կաճառոյն, հտ. 15. էջ 369 :
6 Պղատ. ՚ի Մենն. հտ. 2. էջ 81. յղ. հաս. գիրք Ա. էջ 331 :

լինի ապա զնորայն երկրորդել. Նմին լինի նետք թաղումն 'ի ձգել, այլ ես զայն ընտրեցի՝ որ դրոշմ պատուականն 'ի նպատակ անդր տպաւորէ [1] ։

Նոյա լինի ասել սակաւուք զկենաց նորա և զբարուց. զգլխաւոր տեղեկութիւնս առ այս 'ի կիր առի 'ի գրոցն, զոր նորին իսկ գրեալ ասեն թերթացիկք, անձամբ զանձին 'ի նմա նկարագրելով։ «Ես երբեմն, զի զօշաքաղութիւն ոչ շաղախեր զբարբառ քերթողականն [2] ։ Նոյլ տարք թող շլացուցին այլք 'ի ձաձանչ ոսկւոյ, և լայնածաւալ ընդարձակեցին զսահմանս կալուածոց իւրեանց [3] ։ Ոչ արգոյ են լինի մեծութիւնք, եթէ ոչ ուղղեալք և պճնեալք առաքինութեամբք. տքօք զանմահականն կարօղ եմք ժառանգել զփառս [4] ։ Նոյն խորհուրդս իմ և ընդ բարբառ չիք խոտիր։ Սիրելի են լինի բարեկամք, և ատելի չարականն. այլ չհալածեմ զսա զինուք զրպարտութեանց և երգիծանաց [5] ։ Նախանձուն չզօտեալ յիս այլ ինչ՝ բայց միայն զարհամարհանս, կորակոր 'ի բաց դառնայ. և 'ի քէն վրիժու լքեալ թողում զնա 'ի քաղցկեղ իւր, որ ճարակէ 'ի սիրտ նորա [6] ։ Ոսկիկար ձիչ երկչոտ և նախանձոտ ճնճղկի ոչ կասեցուսցեն երբէք զդանդաղուգն

1 Պինդ. ողիմպ. 2. տող 149. պիւթ. 1. տող 84։
2 Նոյն իսթմ. 2. տող 15։
3 Նոյն. նեմ. 8. տող 63։
4 Նոյն ողիմպ. 2. տող 96. պիւթ. 3. տող. 195. անդ 5. տող 1։
5 Պինդ. իսթմ. 6. տող 105։
6 Նոյն նեմ. 7. տող 100. պիւթ. 2. տող 154 և 155։

զնացս արծուոյ ընդ օդս [1]։

Ի զբօսանս և 'ի ծուփս խնդութեան և վշտաց՝ որ իբրև զալիս անցանէին 'ի վերայ մանկանացուաց, ո՞ յուսալ կարիցէ վայելել յանշարժ բարեբաստութեան[2]։ Ածուցի զաչս իմ շուրջանակի, և տեսի զի բարեբաստագոյն են կեանք 'ի չափաւոր գոյս քան յայլ կենցաղս, և ողբացի զբաղդ հզօրաց, և խնդրեցի 'ի դից՝ մի ընկճել զիս ընդ ծանրութեամբ այնպիսւոյ յաջողութեան[3]։ Ընթանամ ընդ անկամակոր շաւիղս, հաճ և հաւան ընդ բախտ իմ, և սիրելի քաղաքայնոց իմոց[4]․ ամենայն ցանկութիւն իմ է հաճոյ լինել նոցա․ առանց հրաժարելոյ յազատութենէ ասելոյ համարձակ որ ինչ ինձ համեստ թուի կամ ոչ այնպիսի[5]։ Յայսպիսի յօժարութիւնս սրտի մերձիմ խաղաղութեամբ 'ի ծերութիւն[6]․ և երանի ինձ, եթէ հասեալ 'ի տխուր վախճան կենացս՝ թողուցում որդւոց իմոց զպատուականագոյն 'ի ժառանգութիւնս զժառանգութիւն բարի անուան„[7]։

Կատարեցան իղձք Պինդարայ, և եկեաց նա 'ի ծոց խաղաղութեան և փառաց։ Ո՛ք թէպէտ և թեբացիք պարտաւորեցին զնա 'ի տուգանս վասն գովելոյ նորա զաթենացիս զոսոխս նոցա[8],

1 Պինդ. պիւթ. 2. տող 168. Նեմ. 4. տող 68։
2 Նոյն նեմ. 3. տող 138։
3 Նոյն ողիմպ. 2. տող 62. Նեմ. 7. տող 81։
4 Նոյն պիւթ. 11. տող 76։
5 Պլուտ. յղ. Նախատա. Հոգւոյ, հտ. 2. էջ 1030։
6 Պինդ. նեմ. 8. տող 64։
7 Նոյն իսթմ. 7 տող 58։
8 Նոյն պիւթ. 11. տող 76։

և հնչիցս 'ի վէմս քերթողաց պատուեցան տաղք Կորիննայ քան զՊնդարայն[1], այլ զհետ վաղանցուկ մրրկացն յաջորդէին հուպ ընդ հուպ տիւք զուարթք։ Աթենացիք և ամենայն ազգք Յունաց մեծապատիւ մեծարեցին զնա. և Կորիննա իսկ ինքնին զպարտութիւն խոստովանեցաւ առաջի համձարոյ նորա[2]։ Ի Դելփիս 'ի պիւթեան խաղսըն, բռնադատեալ 'ի Թախանձանաց յոգնախուռն բազմութեան տեսողաց, պսակեալ տաղդենեօք բազմէր յաթոռ բարձրութեան[3]. և առեալ քնար, հնչեցուցանէր նուագս զմայլելիս ընդ որ յամենայն կողմանց հնչէին բարբառք սքանչանաց, և որովք գեղեցկագոյնս զարդարէին տօնքն։ Այլ 'ի կատարել զոհիցն, քուրմն Ապողոնի հրաւիրէր զնա հրապարակաւ 'ի ճաշն դիցանուէր. քանզի հարցկէին երևելի իմն և նորասքանչ պատուով պատուիրեալ էր համել նմա բաժին յերախայրեաց, որ նուիրէին 'ի մեհեանն[4]։

Արկադացիք սիրողք են յոյժ երաժշտութե՛, և զբեթէ ամենեքեան ուսանէին նուագել սրնգաւ[5]։ Յորմէ հետէ յաղթանակեցին 'ի Լևկտրա, մեղեդանագոյնս զանկատիւն 'ի խնջոյս[6]։ Հայց գերմանկ է

1 Եղիան. զան. պատմ. գիրք ԺԳ. գլ. 25։
2 Փոտիկ. մատեն. յուն. հտ. 1. էջ 578։
3 Պաւսան. գիրք Ժ. գլ. 24. էջ 858։
4 Նոյն գիրք Թ. գլ. 23. էջ 775։
5 Արիստոփ. յԱքարն. տող 863։ Պարսատ. անդ. տող 862։ Պոլիբ. գիրք Դ. յօդ. 65։
6 Պոլիբ. առ Աթենէոսի, գիրք Ժ. գլ. 4. էջ 418։

նոցա, և ունդք և միրգք առատ, և ոդք վայրի և ձկունք բազում յոյժ՝ մինչև ածել անտի յԱթէնս [1]:

Ձմեռն 'ի Սկիւթիա սաստիկ է յոյժ, և 'ի Խմբէ գոգցես իմն անհանդուրժելի [2]: Ձիւն, հողմն և չքաւորութիւն փայտի դժնեայ առնեն զձմականութիւն նոցա 'ի ձմերայնի, որչափ ախորժելի է յամառայնի քաղցրախառնութեամբ օդոցն 'ի շունչ, և ցրտագին զովութեամբ ջուրցն՝ որ առատ են անդ, և զուարճալի տեսլեամբ դաշտացն՝ որ դալարագեղք երկարատևեն [3]:

Խմբացիք քաջասիրտք են, աստահակք, յանդգդունք և մնափառք. 'ի ցասմանէ 'ի Թշնամանս արագ անցանեն, և յարհամարհութենէ օրինաց 'ի մոռացօնս մարդասիրութեան: Առ դոյզն ինչ շահ օգտի գործեն անիրաւութիւնս դժնդակս, և առ Թեթև ինչ պատճառանաց 'ի սպանութիւնս անկղխտանան [4]: Կանայք նոցա յաղթանդամք են և կայտառք, և բազումք քան զսակաւ խառնեաշք. սիգաճեմք են, և զարդք նոցա ազնուականք: Արտաքոյ 'ի փողոցի ծածկեն զերեսս իւրեանց, զաչս եւեթ Թողեալ 'ի բաց. և զհիւսս վարսիցն ժողովեալ ամփոփեն զգլխով. և կօշիկս ծիրանիս նեղագալըշապարս ագանեն, որպէս զի ընաւ իսկ անկօշիկս երևել: Զայն նոցա քաղցր է յոյժ և

1 Արիստոտ. յԱքարն. առաղ 873: Եւսթաղ. առ Աթենեոսի, գիրք Բ. գլ. 8. էջ 47:
2 Կոլումէլ. յղ. Երկրագործ. գիրք Ա. գլ. 4:
3 Դիկէարք. յղ. Ցուցանամի, յաշխարհագր. էջ 17:
4 Նոյն անդ, էջ 18:

խանդաղատելի , իսկ արանցն խիստ և անախորժ՝ համեղոյն իմն բարուց նոցա ¹ ։

Նա յոյժ 'ի բարուց աստի ընդհատք են մանւկտին մարտիկ , որ սրբազան զունդն կոչի ² ։ Ոչ ի են նոքա պատանիք երեքարիւր սննդակիցք , դաստիարակեալք 'ի միջնաբերդին 'ի զանձուց աշխարհին ։ Զայն նուիրաշնակ սրնգի ուղղէր զհրահանգս նոցա , եւ և զզբօսանս . և զի մի քաջութիւն նոցա զառածանիցի 'ի մոլեկան կատաղութիւն , խնամոտ ազնուականս և զօրաւորս ազդեալ տպաւորեն 'ի հոգւոյ նոցա ։

Իւրաքանչիւր ոք 'ի մարտկաց ընտրէ 'ի գնդէն զմի ոք իւր համհարզ , կալ ընդ նմա անմեկնելի ։ Ամենայն ցանկութիւն իւր է 'ի հաճոյ լինել նմա և մեծարգոյ , և կցորդ զբօսանաց նորա և աշխատութեանց 'ի մարտի ։ Եթէ մարթ իցէ իսկ ումեք 'ի նոցանէ ոչ ակն ածել յանձնէ , սակայն անմարթ է նոցա չպատկառել 'ի բարեկամէն , որոյ առաւել քան զամենայն տանջանս դժնդակագոյն է նոցա , և զովեստ նորա սիրելի քան զամենայն բարութիս ։ Ամլին զերաշխաւորհիկ իմն կցորդութեանն զնահ քան զնախատինս լռու[illegible]լին , և քան զամենայն շահ օգտի նախամեծար առնեն զփառս ։ Ի խուռն սատակեցեալ պատերազմի մի 'ի մարտկաց աստի 'ի վերայ երեսաց կործանեալ յերկիր , իբրև եստես զթշնամին առ կռան՝ զի ձգէր զսու-

1 Դիկէարք . յղ . Ցուծաստ . յաշխարհագր . էջ 16 և 17 ։
2 Պղուտ . 'ի Պելոպ . հտ . 1 . էջ 287 ։

սեր , ասէ ․ Կա՛ց մնա վայրիկ մի ։ Եւ յոտն կա-ցեալ՝ Ախեա արդ , ասէ , զսուսերդ 'ի սիրտ իմ ․ զի մի ամաչեսցէ յոյժ բարեկամն իմ , կարծելով թէ 'ի փախստի իցեմ սպանեալ ։

Յառաջ ժամանակաւ երեքարիւր մարտիկք բաղ-խեցին ըստ զումարտակաց 'ի գլուխ գնդից գնդից բանակին ․ բայց Պեղոպիդաս 'ի բազում պատե-րազմունս զօրավար կացեալ , եւ համագունդ գնդոսս մղեալ 'ի ճակատ , նոքօք գրեթէ զամե-նայն յաղթութիւնս ետ կանգնել թեբայեցւոց ընդդէմ սպարտացւոց ։ Փիլիպպոս 'ի Քերոնէա եբեկ զգունդս զայս մինչեւ ցայնժամ աննկուն , եւ 'ի ճակատամարտին տեղւոջ տեսանելով տապաստ անկեալ զմանկտին թեբայեցի , ծածկեալ փառա-նօք վիրօքն , եւ կուռ զմիմեամբք մածեալ անշարժ յիւրաքանչիւր կայիցն , չկարաց ժոյժ ունել ար-տասուաց , վկայեալ 'ի տեսիլ ամենեցուն զառա-քինութիւն նոցա եւ զքաջութիւն [1] ։

Նպաքէն ազգաց իւրաքանչիւր եւ քաղաքաց եւ ազգատոհմից են յոռութիւնք ինչ եւ թերու-թիւնք բռնագոյնք , համգոյն ախտից հիւանդու-թեան ածանցականք որդւոց յորդիս , յամենա ա-ռաւել եւ յամենա նուազ սաստկութեամբ ։ Նմա է ստգտանել նոցա զմիմեանս , եւ ստգտանողն յա-ռակս իսկ պատշաճել ։ Որպէս առ բէովտացիս համարի նախանձուն ունել զբնակութիւն իւր 'ի

1 Պղուտ․ 'ի Պեղոպ․ հտ․ 1․ էջ 287 ։

Տանակրա, զօշաքաղութեան յՈրոպա, կռուասիրութեան ՚ի Թէսպիէս, բռնութեան ՚ի Թէբէ, անյագ ցանկութեան յԱնթեղոն, կեղծ փութոյ ՚ի Կորոնէա, սնապարծութեան ՚ի Պղատէա, և ապշութեան յԱղիարտ [1] :

Մեկնեալ ՚ի Թեբայ, անցաք առ եզերբ լճին մեծի որ անուանեալ կոչի Կղիկա . գետք որ շուրջ զքաղաքաւն առոգանեն զերկիրն՝ անդր յանգին : Նոտի ուղևորեցաք զԿոփայիս լճիւ, զորով չեղև մեզ հարևանցիկ առնել :

Ըփոմոլիա որպէս զծոց իմն ծովու լայնատարր, շուրջ պատի ՚ի լերանց՝ որ բլրաձև բարձամբք կցորդեալ ընդ միմեանս կազմեն այլ և այլ գօտիս : Նա այլ ևս լերինք ընդ միջերկրայս աշխարհին ձգին . և գետք որ ՚ի նոցանէ իջանեն, զրեթէ առ հասարակ ժողովին ՚ի Կոփայիս լիճ, որ շրջաբերի երեքարիւր և ութսուն ասպարէզս [2], և չիք նորա և չէ իսկ մարթ թէ իցէ ջրադարձ երևելի . և եթէ ոչ բնութեանն, կամ մանաւանդ ճարտարութեան մարդկան կազմեալ էր նմա զողուղի ջրանցս՝ ողողանէին ջուրք ընդ հուպ զԸփոմոլիա [3] :

Ի կողմն մերձաւորագոյն ՚ի ծով՝ երրեակ խորշք են լճին ընդարձակեալք մինչև ՚ի ստորոտս Պտովայ լերին, որ ՚ի միջոցին կայ ընդ ծովն և ընդ լիճ : Ի խորս խորշից ուրաքանչիւր են ջրանցք, որ ընդ բովանդակ լայնութիւն լերինն հատեալ

1 Դիկէարք. յղ. Յունաստ. յաշխարհագր. էջ 18 :

2 Ստրաբ. գիրք Թ. էջ 407 :

3 Նոյն անդ, էջ 406 :

անցանեն, են որ երեսուն ասպարէզս, և են որ առաւել ևս յոյժ[1]: Նա 'ի պեղել և 'ի մաքրել զպղինս են ուրեք ուրեք 'ի լերինն գուբք, որ անյատակք թուէին մեզ: Որ 'ի տեղի անդր ոք երթայցէ, զարհուրի ընդ դժուարութիւն գործոյն, և ընդ գանձուն և ընդ ժամանակին ծախսեալ յայն: Այլ մեծ ևս զարմանք, զի վաստակքն այնոքիկ՝ անյիշատակք 'ի վէպս և յաւանդութիւնս՝ վաղնջականք յոյժ պարտին գոլ, թէպէտ և 'ի վաղեմի դարուն յայնոսիկ չգոյր 'ի Միտիլ-նիա պետութիւն՝ բաւական 'ի խորհել և 'ի կատարել զմեծ գործն:

Այլ այս որպէս և է, այլ ջրանցքս այնոքիկ կարօտեն մեծի խնամոց, և զարդիս կարի անխնամ լեալ*. բազմագոյնք 'ի նոցանէ խցեալ են, և երևի լճին զեղեալ ընդարձակել շուրջանակի զերեսօք դաշտին: Այլ աներկբայելի իսկ թուի, զի ջրհեղեղն կամ մանաւանդ յորդութիւն ջուրց՝ որ յաւուրս Ովգիգեայ ողողեցին զՄիտիլինիա՝ 'ի խցանելոյ ջրանցիցս պատահեալ իցէ:

Այլ անցեալք ընդ Ասպոնտ և ընդ այլ քաղաքս ինչ լոկրեցւոց, հասաք 'ի պահակն Թերմոպիլեայ: Սարսափ զոսկերօքս իմովք խլրտեալ ընթանայր 'ի մուտս հուշակաւոր կրճին, ուր Յոյնք

[1] Սարգս. գիրք. Թ. էջ 406: Ուէլըր. օրագր. էջ 466:

* Յաւուրս Աղեքսանդրի այր մի քաղկեդոնացի յանձն էառ մաքրել զայնս: (Սարգս. գիրք Թ. էջ 407: Սոկր. 'ի բանն Ա՚Ձդ.)

չորեքհազար զաւուրս բազում կասեցուցին ըղպարսկախումբ զանթիւ ճամբարն, ուր և Լեւոնիդաս, երեքհարիւրովք սպարտացւովք որոց զօրավարէրն, կորեաւ։ Ընձուկ է կիրճն, աստի բարձրաբերձ լերամբք պարսպեալ, և անտի ծովով, որպէս զայս 'ի նախաշաւիղ գրոցս նկարագրեալ է *։

Բազում անգամ անցաք մեք ընդ այն, և ընդ ջերմուկսն ես շրջեցաք՝ յորոց կիրճն այն զանուանն կալաւ Թերմոպիլէ[1]։ Տեսաք մեք զբլրակն, ուր ընկերքն Լեւոնիդայ անկացան յետ անկանելոյ քաջին[2]. և ընդ շաւիղս նոցա ցմիւս ծայր կրճին[3] չոգաք մինչև 'ի խորանսն Քսերքսեայ, ուր խորհէինն խողխողել զնա յանդիմանն բանակին։

Բազում ինչ իրք անդանօր յուշեալ աղմկէին զխորհս մեր. ծովն երբեմն ներկեալ յարեան ազգաց, լերինք երկնաբերձք, խոր ամայութիւն շուրջանակի, յիշատակ բազում այնքան քաջութեանցն՝ զորս տեսիլ վայրացն առաջի առնէր մեզ, և զորովագին կարեկցութիւն ընդ տառապանս առաքինութեան։ Այլ մինչ դեռ այն ամենայն 'ի զարմացումն կամ 'ի փղձուկ հարկանէր զմեզ, և ահա գտաք առ շիրիմն՝ զորս Ամփիկտիոնայ ատենին կանգնեալ էր յահա ասացեալս բլրի[4]։

* Յառաջնում մասանն գրոցս, յէջ 219։

1 Հերոդոտ. գիրք Է. գլ. 176։

2 Նոյն անդ, գլ. 225։

3 Պղուտ. յղ. չար. Հերոդոտ. հտ. Բ. էջ 866։

4 Հերոդոտ. անդ գլ. 228։

Որ են մահարձանք փոքրիկք 'ի պատիւ երեքարիւրոց սպարտացւոցն, և այլ և այլ գնդիցն Յունաց՝ որ անդ ետուն պատերազմ: Մատուցեալ ընթերցաք 'ի միումն, որ նախ առ ական դիպաւ, զի էր գրեալ այսպէս. «Աստ ընդ երեքարիւր բիւրուն Պարսից չորեքհազար Յոյնք 'ի Պեղոպոնեսայ մարտեան»: Մատեաք և առ միւս այլ, և զՍիմոնիդեայ տողսն 'ի նմա ընթերցաք. «Զրոյց զմէնջ տար 'ի Սպարտա, ո՛ հիւր, զի դնիմք աստ հնազանդեալք օրինաց իւրոց սրբոց՝»: Քանի՜ ազնուական խորհրդովք, և որպիսի՜ մեծախոհութեամբ զայսոսիկ աւանդեցին արդեօք հարք որդւոց: Չիք յիշատակ իսկ Լեւոնիդայ և երեքարիւրոց մարտակցաց նորա յերկրորդումն յայսմիկ արձանագրի. զի և ոչ կասկած ումեք 'ի միտս անկանէր, թէ գուցէ անուանք նոցա մոռասցին ժամանակաւ: Պատահեցի Յունաց բազմաց, որք զանուանս նոցա 'ի բերանոյ աւանդէին միմեանց[2]: Տեսի և միւս ևս արձանագիր 'ի Մեգիստեաս սպարտացի կիւսահմայ, յորում գրեալ էր զնմանէ, թէ կանխագէտ լեալ մօտալուտ արկածիցն՝ յանձն էառ զմահ քան զշատալիք փախուստ[3]: Մերձ 'ի մահարձանն է և ախոյեան 'ի Քսերքսեայ կանգնեալ, որ պատուելոցն առաւելագոյն գործէ փառս քան յաղթողաց:

1 Երոդոտ. գիրք Է. գլ. 228: Ստրաբ. գիրք Թ. էջ 429: Կիկեր. տուսկուլ. գիրք Ա. գլ. 42. հտ. 2. էջ 268:

2 Երոդոտ. անդ, գլ. 224:

3 Նոյն անդ., գլ. 228:

ԳԼՈՒԽ ԼԵ.

Ուղեւորել Անաքարսեայ ընդ Թեսաղիա *, եւ յաղագս Ամփիկ-տիոնացն եւ մոգաց. եւ վասն Աղեքսանդրի արքային փերե-ացւոց, եւ տեմպեան հովտին:

ՅԵԼՍ Թերմոպիլեայ կրճին են մուտք 'ի Թեսաղիա: Զգաւառս զայս, յորում է Մագնեսիա եւ այլ եւս գաւառք փոքրիկք՝ այլ ազգ իւրաքանչիւր անուանակոչեալք, յարեւելից սահմանէ ծով, 'ի հիւսիսոյ Պիւցընկէց լեառն, յարեւմտից Պինդոս, եւ 'ի հարաւոյ Էտաս լեառն: Ի միջնջենաւոր ամբարտակաց սոցա մեկնեալ այլ եւս գօտիք լերանց եւ բլրոց, զեռան ընդ միջերկրայս աշխարհին: Եւ ուրեք ուրեք ոլորտացեալ զպտղաւէտ անդաստանօք, առնեն նոցա ձեւովն եւ շրջապատիւ զընդարձակատարր կրկեսացն շուրջ տեսանելեաց՝ բերել զնմանութիւն: Շուրջանակի զդաշտիւքն 'ի վերայ բարձանց ամբառնան քաղաքք մեծափարթամք. եւ ոռոգանեն զաշխարհն գետք, յորոց բազումք բերանացեալ յանգին 'ի Պենեոն, որ ընդ հովիտն հռչակաւոր անցեալ ընդ Տեմպէ՝ հոսէ 'ի ծով:

Ոչ բազում ինչ ասպարիզօք հեռի 'ի Թերմոպիլեայ՝ հասաք յԱնթեղա աւան փոքրիկ, ա-

* Յամառայնի 357 ամին Ն. Ք:

1 Պլին. գիրք Դ. գլ. 8. հատ. 1. էջ 199:

նուանի Դեմետրեայ մեհենաւն, և վասն ամփիկտիոնեան ատենին անդր ամի ամի ժողովելոյ [1]։ Եթէ մարդասիրութիւն՝ որ սահմանելոյ ժողովոյս եղև պատճառ՝ ոչ հարկաւորէր տեղի տալ փառասիրութեան իշխանաց ազգաց, օգտակարագոյն քան զամենայն ժողովս լինէր ատեանս այս, նմին իրի և քան զամենայն սահմանադրութիւնս չքնաղ և գեղեցիկ։ Ամենք յԱմփիկտիոնէ ատեն զայն սահմանեալ, որ շուրջ զվայրօքն թագաւորէր [2]. իսկ այլք յԱկրիսեայ արքայէն արգիւացւոց [3]։ Այլ այն հաւաստի իսկ է, զի 'ի վաղնջուց ժամանակաց երկոտասան ազգք բնակեալք 'ի հիւսիսակողմն Եղլադայ [4]* դորացիք, յոնիացիք, փովկիսացիք, թեսաղացիք, այլովքն հանդերձ, ուխտ եդին ընդ միմեանս խափանել զաղէտս՝ զոր զհետ իւր առեալ ձգէ պատերազմ։ Սահմանեցին արձակել ամի ամի հրեշտակս 'ի Դեղփիս, և զանօրէնութիւնս գործեալս ընդդէմ մեհենին Ապողոնի որում երդուանն, և զամենայն անիրաւութիւն գործեալ ընդդէմ իրաւանց ազգաց որոց ինքեանք պաշտպան կային, ածել յատեան անդր. և զի դարձեալ միում միում յերկոտասան ազգաց իցեն կրկին քուեայք 'ի

1 Երոդոտ. գիրք Է. գլ. 200։ Յիշատ. բանաս. կաճառ. հտ. 3. էջ 191։

2 Ոքսոնեան վէմք, դար 5։ Թէոպոմպ. առ Հարպոկր. 'ի բառն Ἀ'μφικτ։ Պաւսան. գիրք Ժ. գլ. 8. էջ 815։

3 Ստրաբ. գիրք Թ. գլ. 420։

4 Եսքին. յղ. վրէպ հրեշտ. էջ 413։ Ստրաբ. գիրք Թ. էջ 420։ Պաւսան. անդ։

* 'Ի վերջկոյս մատենիս 'ի տեղեկութիւնս. Թիւ Թ։

ձեռն հրեշտակաց իւրաքանչիւր, և խոստանալ ամենեցուն զկատարումն վճռոց մեծափառ ատենին ։

Եւ հաստատեցին զուխտն երդմամբ, որ յայնմ հետէ նորոգի միշտ. և էր օրինակ երդմանն այս. Երդնումք մի զոք 'ի քաղաքաց ամփիկտիոնականացն կործանել, և մի զաղբիւրս կարևորս պիտոյից նոցա դարձուցանել մի 'ի խաղաղութեան և մի 'ի պատերազմի. և եթէ այլ ոք յազգաց մոտաբերեսցէ յայն, խաղալ 'ի վերայ նորա, և աւերել զքաղաքս նորա. և եթէ ամպարիշտք բառնայցեն ինչ 'ի նուիրաց մեհենին Ապողոնի, երդնումք՝ ոտիւք և ձեռօք և բանիւ և ամենայն զօրութեամբ խնդրել վրէժս 'ի նոցանէ, և յամենայն գործակցաց անօրէնութեան նոցա [1] ։

Ատեանս յայս կայ մինչև ցայսօր 'ի նոյն օրէնս որպէս և սահմանեցաւն. իշխանութիւն նորա տարածեցաւ ընդ ազգս՝ որ զաղթեալ 'ի հիւսիսոյ Ելլադայ, և ոչ յետս կացեալ յամփիկտիոնեան դաշնակցութենէն, ածին ընդ իւրեանս 'ի նոր բնակութիւնն զիրաւունս մտանելոյ 'ի ժողովն և տալոյ զվարկ իւրեանց [2] ։ Որպիսիք են սպարտացիք, երբեմն բնակիչք Ովսաղիոյ, որոց փոխեալ զբնակութիւն իւրեանց 'ի Պեղոպոնես, կալան զիրաւունս միոյ յերկոցունց քուէիցն՝ որ անկ էին համազգեացն իւրեանց դորացւոց ։

1 Էսքին. յղ. վրէպ հրեշտ. էջ 413 ։

2 Յիշատ. բանաս. կաճառ. հտ. 21 ։

Որպէս և քուէայք կրկին՝ որ 'ի սկզբանէ՝ անկ էին յոնիացւոց՝ բաժանեցան ապա յաթենացիս և 'ի գաղթականս նոցա բնակեալս 'ի փոքրն Ասիա[1] : Բայց թէպէտ և ոչ է մարթ քուէիցն յաշխարհաժողովն անդ առաւելուլ քան զքսան և չորս, այլ թիւ հրեշտակացն ոչ է սահմանեալ. և է երբեմն զի աթենացիք երիս և չորս արձակեն հրեշտակս[2] :

Վաղուցն ամփիկտիոնեան գումարի գարնայնոյն 'ի Դեղփիս, և աշնայնոյն յԱնթեղա աւան[3] : Անդր խռնի ամբոխ բազում 'ի գնելն. և 'ի սկիզբն համախմբին մատչին զոհք վասն խաղաղութեան և բարեկենդանութեան Յունաց : Բայց 'ի յանցանաց յիշատակելոց յերդմանն՝ զոր 'ի ներքս ածի, յատենի անդ դատին և վէճք ազգաց ընդ ազգս զգահերիցութենէ յաշխարհախումբ հանդէսս զոհից, և կամ յետ յաղթութեան՝ զփառս հասարակաց կամելով միոյ ուրուք յազգաց իւր սեփականել[4] : Նա այլ ևս դատք ածին անդր քաղաքականք և եղեռնականք[5], այլ մանաւանդ բռնութիւնք գործեալք ընդդէմ իրաւանց ազգաց[6] : Հրեշտակք ազգաց քննեն զդատաստանն, և ատեանն տայ զվճիռն ըստ բազմութեան թուոցն

1 Եսքինէս, յղ. վրէպ. հրեշտ. էջ 413 :

2 Եսքին. 'ի Կտեսիփ. էջ 446 :

3 Ստրաբ. գիրք Թ. էջ 420 : Եսքին. անդ :

4 Դեմոսթ. 'ի Նէէր. էջ 877 : Կիկեր. յղ. գիւտից, գիրք Բ. հտ. 1. գլ. 23. էջ 96 :

5 Ցիշտա. բանաս. կաճառ. հտ. Յ. էջ 405 :

6 Պլուտ. 'ի Կիմ. հտ. 1. էջ 483 :

արկելոց, և տուգանս արկանէ ազգացն յանցուցելոց։ Այլ ժամանակ 'ի վերայ եղեալ, միաանգամ ժողովլի ատեան, և կրկնապատկին տուգանքն[1]։ Այլ եթէ հեստէ ոք, օրէն է ատենին կոչել յօգնութիւն վճռոյն և զինուորել ընդդէմ հեստելոյն զամենայն ամփիկտիոնեան նիզակակցութիւնն, որ մասն մի մեծ է Յունաստանի։ Օրէն իսկ է նմա մերժել զհեստեալն յուխտէ նիզակակցութեանն, կամ 'ի հաղորդութենէ միաբանութեան մեհենին[2]։

Այլ ազգք հզօրք ոչ միշտ հնազանդին վճռոց նորա, որպէս 'ի սպարտացւոցն իսկ արդի անհնազանդութենէն յայտ է։ Զի 'ի խոր խաղաղութեան բռնակալեալ նոցա զմիջնաբերդ քաղաքին Թեբայեցւոց, 'ի բողոքել աւագանւոյ քաղաքին յաշխարհաժողովն, դատապարտեցան նոքա 'ի տուգանս հինգհարիւրոց քանքարաց, և ապա հազարաց։ Այլ նոքա ստունգանեցին վճռոյն, անիրաւ համարեալ զայն[3]։

Նհաւլինք ևս են դատակնիքք տուեալք 'ի նմանէ ընդդէմ ազգաց անիրաւելոց մեհենին Դեղփեայ. և զօրականն նոցա դժկամակութեանն բռնի մղի 'ի պատերազմ, զի մահու պատուհասեալ զրկի 'ի թաղմանէ, եթէ զէն 'ի ձեռին գերեացի 'ի թշնամեաց[4]։ Որ հրաւէր աշխարհա-

1 Դիոդ. գիրք ԺԶ. էջ 430։

2 Պլուտ. 'ի Թեմիստ. հա. 1. էջ 122։ Պաւսան. գիրք Ժ. գլ. 8. էջ 816։

3 Դիոդ. գիրք ԺԶ. էջ 430։

4 Նոյն անդ, էջ 417 [illegible]։

ժողովոյն 'ի վրէժխնդրութիւն բազմաց՝ մտադիւրագոյնս դիմեն ամենեքին, զի համարին հաղորդք ամպարշտութեան, նպաստամատոյցք և ներողք նմին ։ Այլ 'ի դէպսն յայնոսիկ երկիւղ է ազգաց յանցուցելոց, զի ընդ անէծսն ընդ որովք փակէինն՝ խառնեսցին և հնարք քաղաքավարութեան իշխանաց, որք դշահ օգտի իւրեանց ընդ կրօնիցն կցորդեն 'ի սպասաւորութիւն փառասիրութեան իւրեանց ։

Այլ մեկնեալք յԱնթեղայ՝ մտաք յաշխարհն տրաքինացւոց. և տեսաք շուրջանակի զբազմութիւն երկրագործաց պատաղեալ 'ի ժողովել զեղբերոսն ազնիւ, որ աճէ 'ի լերինն Իդայ [1] ։ Իղձք տեսանելոյ զՀիւպատ քաղաք՝ ձգեցին զմեզ ընդ ճանապարհ որ երթայր անդր. զի ասէին վհուկս բազումս լինել 'ի Թեսաղիա, և մանաւանդ 'ի քաղաքի անդ [2] ։ Այլ տեսաք իսկ անդ զբազումս 'ի կանանց ժողովրդեան, որոց կարծէին ունել զօրութիւն նահանջելոյ զարեգակն, և զլուսին յերկիր իջուցանելոյ, յարուցանելոյ և ցածուցանելոյ զմրրիկս, դարձուցանելոյ զմեռեալս 'ի կեանս, և զկենդանիս յուղարկելոյ 'ի գերեզմանս [3] ։

Այլ ուստի արդեօք կարծիք այսպիսիք ։ Ոյք 'ի նոր ինչ իրաց կարծեն այսոցիկ առեալ պատ-

1 Թէոփր. բուսաբան. հա. Զ. էջ 523 ։
գիրք Թ. գլ. 11. էջ 1063 ։
2 Արիստոտ. յԱմպան, տող
Պղին. գիրք Լ. գլ. 1.

3 Եմպեդ. առ. Դիոգ. լայերտ. գիրք Ը. յօդ. 59 ։
Վիրգիլ. մշակ. 8. տող 69 ։

ճառս, զՄիգդայոնիկէ ուր կին Թեսաղացի ասեն կացեալ 'ի յետին դարս, որոյ ունեալ զժամանակ խաւարմանց լուսնի՝ դիւթական զօրութեան ընդ ծայրս զարփայլին երեւոյթն. և անտի կարծեցաւ կախարդանաց իշխել 'ի վերայ օրինաց բնու-թեան: Բայց զայլմէ ևս ումեմնէ կնոջէ Թեսա-ղացւոյ աւանդեն կացեալ 'ի դարս դիւցազանց, և իշխեալ լուսնի[1]. և բազում իսկ ցոյցք են 'ի վաղնջուց ժամանակաց մնացանելոյ վհկութեան Ախղատս:

Բայց մեզ ոչ ինչ փոյթ լեալ հետազօտելոյ զսկիզբն արուեստին, խնդրեսցուք գիտել զարգա-սիսն՝ որչափ ժամանակս եղաք 'ի Հիւպատ: Ընծին զմեզ առ պատուաւորս ունմնս տխմարս և վատըն-ւերս, որք բժժանս կախարդանաց խոստանային առնել ընդդէմ խածուածոյ կարճաց և իժից[2], և շիջուցանելոյ և անգործ առնելոյ զբազ ցան-կութեան նորասէր ամուսնաց, և խաշնամահ արկանելոյ և կոտորած 'ի պարս մեղուաց[3]: Տե-սաք զոմանս 'ի նոցանէ, որոց պատկերս մոմեղէնս գործեալ՝ անփծակուրս զնոսա առնէին, և առ-զամբք զփրոս նոցա ծակոտէին, և դնէին զնո-սա 'ի տեսիլ այլ և այլ ուրեք ընդ քաղաքն[4]: Եւ որք միանգամ զկերպարանս իւրեանց 'ի ձեւս յախոսինկնկատէին, զարհուրեալք՝ իբր թէ հարկ

1 Սեննեկա 'ի Հերկուլ. Ե. տէո, տող 525:

2 Պլատ. յՆուկթիգեմ. հատ. 1. էջ 390:

3 Երոդոտ. գիրք Բ. դլ. 181: Պլատ. յղ. օր. գիրք ԺԱ. հատ. 2. էջ 933:

4 Պլատ. անդ:

էր նոցա մեռանել, էր երբէք զի երկիւղիւն այնուիկ կարծէին 'ի կենաց:

Յանկարծակի 'ի վերայ հասաք մեք 'ի կանանց անտի, մինչ արագ արագ հոլովէրն զաղօրեակ[1], և զանիմանալիս բարբառէր: Թանզի կամէր[2] դարձուցանել զմանուկն Պողիկլետ, որ 'ի բաց արձակեալ էր զՍաղամիս զմի 'ի կանանց հռչակաւորաց 'ի քաղաքին: Որ 'ի քաջահմուտ լինել խրացն կարգաւ, պարգևս ինչ տուաք Սիկաղեայ, զի այս անուն էր վհկին, և յետ աւուրց ինչ առէ ցմեզ. Սաղամիս չլսէ առաջնոց հմայիցն իմոց, յաւելից նմա այլ յերեկոյիս. և դուք կացեալ 'ի Թագստի, տեսջիք և լուիջիք զամենայն: Այս ըստ ժամադրութեանն հասաք անդէն, մինչ Սիկաղէ զհանդերձանս խորհրդոցն պատրաստէր: Այս էին շուրջ զնովաւ՝ տաք սարդենեաց, և տունկք խնկահոտք, և 'ի տախտակս պղնձիս դրոշմեալ տառք անծանօթք, և զեղմն խաշինն ծիրանանեդկ, ընեռք կորզեալք 'ի կախաղանէ դեռ ևս արիւնաշաղախք, գլուխք մարդկան կիսակերք 'ի գազանաց վայրենեաց, և կտորակք մատանց և ընչաց և ականջաց ծայրատեալք 'ի դիականց, ընդերք զոհից, և շիշ լի արեամբ բռնաւախհիրկ մեռելոյ, և պատկեր Եկատեայ մոմեղէն սպիտակ և սեաւ և թատրային՝ խաղտացան 'ի

1 Պինդ. պիւթ. 4. տող. 380: Պարապ. անդ.: Ապող. Արգոն. գիրք Ա. տող 1139:

2 Ղուկիան. 'ի պոռնիկ. հա. 3. էջ 288:

3 Թէոկրիտ. գեղջն. 2: Ապուլ. այլակերպ. գիրք Գ. էջ 54:

ձեռին և զամբար և սուսեր օձապատ[1]. զար-ձեւալ և անօթք լցեալք աղբերականն ջրով, և կա-թանք արջառոյ և լեռնայինն մեղու, աղօրեակ ղիւթականն, զործիք պղնձիք, հերք 'ի վարսից Պողիկլեսայ, և 'ի քղամիդից համադերձի նորա կտ-տորակ[2], և բազում այլ ինչ սպասք: Յորս մինչ-դեռ պշուցեալ կայաք, և ահա ազդ եղև շշունջ հասանելոյ Սաղամեայ:

Իսկ տուաք 'ի սենեակ մի մերձակայ. և մտեալ թեսաղուհին զեղանին ըն մոլեգնութեանց և տուփանօք, բողոք արտասուց կալեալ զսարդփա-ծուէն և զմհկէն, և ապա արարողութեանցն սկիզբն եղև: Պարտ է նոցա համեմատ սասաջար-կութեանն գոլ, զի ազդողագոյնք իցեն:

Մինկաղէ եհեղ բազում անգամ 'ի վերայ ըն-դերաց զոհիցն ջուր քաւութեան խառն ընդ կա-թին և ընդ մեղու. և ապա առեալ զհերս Պո-ղիկլեսայ՝ հիւսեաց, և հանգոյցս բազմադիմի գործեաց 'ի նոսա. և խառնեալ զնոսա ընդ խունկ ինչ, ընկէց 'ի կրակարանս բորբոքեալ[3]: Պարտ էր Պողիկլեսայ անդէն 'ի նմին վայրկենի երևել 'ի միջի անդ առ ոտս սիրուհւոյն, ձգեալ յանդիմա-դիմակաց զօրութենէ:

Սաղամիս 'ի ժամանակաց ինչ հետէ ընծայ-եալ էր 'ի խորհուրդս արուեստին. և իբրև շատ

1 Եւսեբ. պատմութ. ա-ւետ. գիրք. Ե. գլ. 14. եր 202:

2 Թէոկրիտ. գեղոն. Դ:

3 Ապուլ. Այլակերպ. գիրք Դ. եր 55:

ակն կալեալ՝ եւ 'ի դերև , ասէ . Արդ ինձէն իսկ
դիւթեցից . օգնեա՛ ինձ , Միկադէ , 'ի կիրս իմ .
ածս ինձ այսր զանօթդ քաւութեան , խնց զդա
բորբոքեա [1] : Լուսատուդ գիշերոյ , ծագեա 'ի մեզ
լոյս բարերար . եւ դու շահապետդ դժոխոց , որ
շուրջ գաս զշիրմօք եւ 'ի վայրս թաղեալս յարե-
նէ մահկանացուաց , ահաւորդ Եկատէ , երեւեա՛ց ,
եւ հմայքս լիցին զօրաւորք որպէս զՄեդեայն եւ
զԿիրկեայ : Միկադէ , ցանեա զաղդ 'ի հուր [2] ,
եւ ասա . Զյանես ցին ոսկերք Պողիկլետայ , եւ սիրտ
զդուժ անսին ըմբռնեսցի 'ի տարփանս , որպէս սաղ-
ղենիս այս սպառեալ 'ի բոցոյ , եւ որպէս մոմս
այս հալեալ 'ի հրոյ [3] : Շուրջ զայցէ զմնակու-
թեամբս իմով որպէս զանիւս զայս շրջեալ զա-
ռանցիւքն : Արկ բռնալիր 'ի հուրդ զթեփ , հա՛ր
զանօթսդ պղնձիս : Ահա լսեմ զկաղկանձել
շանց . յելս ուղւոյդ հասեալ կայ Եկատէ . քեզ
ասեմ , հա՛ր , եւ զխտացէ նա 'ի շաւիղս հարուա-
ծոյդ՝ զի զօրութիւն երեսացնորա ազդի 'ի մեզ :
Ահա հողմք ոչ եւս շնչեն , 'ի բազում խաղաղու-
թեան են տիեզերք , եւ սիրտ իմ միայն 'ի յոյզս ,
եղուկ ինձ [4] : Աստուածուհիդ ահաւոր Եկատէ ,
'ի փառս քո խառնեմ զխառնելիս՝ հեղեալ երկե-
կին , անխծեալ լիցին անէծս երրեակ Պողիկլե-
տայ ստարասէր տարփանքն . լքցէ 'ի բաց զնա-

1 Թէոկրիտ . գեղօն . 2 :
2 Հենա . 'ի Թէոկրիտ . գե-
ղօն . 2 . տող 18 :
3 Թէոկրիտ . անդ , տող 28 :
Վիրգիլ . մշակ . 8 . տող . 80 :
4 Թէոկրիտ . անդ :

խանձողքն իմ, որպէս Թէսէոս զԹշուառն Արիադնէ ։ Օ հզօրագոյնն 'ի դիւԹական դեղոցս փորձեցուք. լեսեալ զմողէսդ յանկանսի, և շաղեալ ընդ ալեր, խառնել Պողիկլէտայ ընկալելի ։ Եւ դու Միկաղէ, ա՛ռ զհոյզ բանջարոցդ, և երԹ ընդ այսր ցօղել զայդ զսեմօք նորա ։ Եւ եԹէ ամենայն զօրուԹեանցս այսոցիկ չտացէ տեղի, զդժնդակագոյնսն եւս 'ի գործ արկից, և մահուամբ նորա զիջցի վրէժխնդրուԹիւն իմ՚ ։ Եւ զայս ասացեալ, խոյս ետ Սաղամիս ։

Յայս ամենայն արարողուԹեանց, զորս նկարագրեցի, կցորդէր Միկաղէ երբեք երբեք ձևս խորհրդական բանից[2], զորս ոչ արժան համարիմ ածել այսր. զի 'ի խաղատալուր և 'ի խանգար բառից շարամդրեալ, ոչ բերեն իմաստս ։

Մնայր մեզ տեսանել զհանդէս մեռելակոչուԹեան ։ Պատուիրեաց մեզ Միկաղէ գնալ գիշերայն 'ի բացեայ 'ի քաղաքէն յամայի ուրեք 'ի գերեզմանս ։ Եւ գտաք զնա անդ պատրաստեալ 'ի պատրաստուԹիւն. քանզի փոս հատեալ[3], կուտէր շուրջանակի բանջարս և ոսկերոտի և նշխարս մարդկեղէն մարմնոց, պաճուճապատանս ասուիս և մոմեղէնս և յալերէ զանգեալ, հերս զԹեսաղացւոյ ուրումն մեզ ծանօԹի՝ զոր կամէրն երևեցուցանել մեզ ։ Եւ լուցեալ կրակ, և հոսեցու-

1 Թէոկրիտ. գեղջն. 2. տող 18 ։
2 Եղիոդ. ԵԹիոպ. գիրք Զ. էջ 293 ։
3 Հոմեր. Ոդիս. գիրք ԺԱ. տող 36 ։ Ովրատ. գիրք Ա. երգիծ. 8. տող 22 ։

ցեալ 'ի փոս անդր զարիւն սեւակնիգն ոչխարի զոր ընդ լուր ածեալ էր, կրկնէր և երեքկնէր հեղուլ քաւութիւնս, կարդայր առ դիս, և ձեւ ինչ բանից զաշն ձայնիւ յեղյեղէր: Երբէք երբէք երթեւեկէր ձեպընթաց բուռ և հերարձակ, անէծս ահագինս կարդալով, և բարձրաձիչ կանչիւք՝ որ մատն եղեն նմա: Քանզի հասին 'ի վերայ նորա խնդրակք արձակեալք յաւագանւոյն, որք 'ի բազմաց հետէ հետապօտէին զնա. և կալեալ ածին զնա 'ի բանտ: Ի վաղիւ անդր հնարէալք զերծուցանել զնա, այլ խրատ ետուն մեզ թողուլ զնա յարժանահաս պատիժս պատուհասից[1], և խոյս տալ 'ի քաղաքէն:

Նախատեալ է առ Յոյնս արուեստն որով վարէին, և ժողովուրդն զարշի 'ի վհկաց՝ պատճառս ամենայն թշուառութեանցն զնոսա վարկուցեալ: Համարի կրկնել նոցա զգերեզմանս, առ 'ի ծայրատել զդիւակունս[2]. և յիրաւի իսկ բազմագոյնք 'ի կանանց անտի դժնդակագոյն անօրէնութեանց են գործօնեայք, և մահացու դեղով քան թէ դիւթութեամբ սպասաւորին: Ամին իրի զրեթէ ամենայն ուրեք խստանան 'ի վերայ նոցա դատաւորք: Մինչ դեռ յԱթէնս էր՝ տեսի զմի 'ի նոցանէ դատապարտեալ 'ի մահ. և ազգականք նորա գործակիցք եղեալ նմին, զնոյն կրեցին պա-

1 Ղուկիան. յէշն, հա. Զ. տող 538: Ապուլ. Ապա-
2. էջ 622: կերպ. գիրք Բ. էջ 33 և 35:
2 Ղուկան. Փարսաղ. գիրք

տուհաս [1] ։ Բայց օրէնք արգելուն չզեղծանել ևեթ սնոտի արուեստին ՝ ներելով զդիւթութիւնս առանց դեղատուութեան, և որք յօգուտ մարդկան գործիցին ։ Ոչ յաճախ ևս վարէին սոքօք 'ի բժշկել զկամնատս [2] և զգլխացաւս [3] , և զազգի ազգի ախտս հիւանդութեանց [4] ։ Պարծեալ և իղձք հրամանաւ աւագանւոյն կոչեն զոգիս մեռելոց և հաշտ առնեն զնոսա [5] ։ Այլ զմեռելակոչութիւնս երկարապատում արարից 'ի ճառս ուղևորութեան իմոյ 'ի Լապոնիա ։

Ի Հիւպատեայ չոգաք 'ի Լամիա, և յառաջ անցեալ ընդ աշխարհն վայրենի ընդ առապարս և ընդ խորտաբորտս հասաք 'ի Թեսալոնիկէ, ուր յանդիման եղև մեզ մի 'ի չքնաղագոյն տեսարանաց Եւրոպայ [6] ։ Քանզի քաղաքս այս կայ 'ի վերայ ընդարձակատարր տաշտաձև հովտի, որոյ տեսիլ անակնկալ հիացուցանէ զտեսօղս ։ Ընդ 'ի ձախ և 'ի գեղապանծ դաշտին են քաղաքք բազումք, անդ է և Փարսաղա՝ մի 'ի մեծամեծ և 'ի փարթամ քաղաքաց Թեսաղիոյ ։ Ուր իջեցաք մեք ընդ նոսա, տեղեկացեալք ըստ կարի աւանդութեանց նոցա և կարգաց տեսչութեան, և բարուց և սովորութեանց բնակչացն ։

1 Դեմոսթ. յԱրիստոկ. էջ 840 ։ Փիլոքոր. առ. Հարպոկրատեայ 'ի բառն Θεωρ.
2 Դեմոսթ. անդ ։
3 Պղատ. 'ի Քարմ. հա. 2. էջ 155 ։ Նոյն 'ի խրախճ. հա. 3. էջ 202 ։
4 Պինդ. պիւթ. 3. տող 91 ։ Պլին. գիրք ԻԸ. գլ. 2. հա. 2. էջ 444 ։
5 Պլուտ. յղ. մխիթ. հա. 2. էջ 109 ։
6 Լիւ. գիրք ԼԲ. գլ. 4 ։

Զաչս ուրուք շուրջանակի զվայրօքն ածեալ խելամուտ լինի անդէն, զի էին երբեմն բնակեալ անդ գրեթէ ըստ թուոյ լերանցն եւ հովտաց ազգք կամ ցեղք։ Որոց պատսպարեալ ամուր պատնէշօք, հանապազօր 'ի վերայ նոցին յարձակմանց կամ մարտնչելով 'ի պահ, եղեն արիք եւ յանդգունք· եւ 'ի զգօնանալ բարուցն նոցա, Իսաւրիա օթեւան եղեւ դիւցազանց, եւ Թաւր քաջայաղթ արութեանց։ Նոր Կեսաւրոյքն եւ Լամպիթայք 'ի վեր երեւեցան, անուանի արգիւնական նաւաստիքն պարզեցին զառագաստ, անդ Հերակղէս մեռաւ եւ ծնաւ Աքիլլէս, անդ եկեաց Պիրիթօոս, եւ անդր 'ի տար աշխարհաց դիմէին արք պատերազմողք հանդիսանեալ 'ի մարտի։

Աքայեցիք, Եւտողացիք, Դորացիք՝ յորոց սերեցան Սպարտացիք, եւ այլ եւս ազգք հզօրք Հելլադայ 'ի Իսաւրիա առին սկիզբն։ Ազգք 'ի նմա արդ երեւելիք են բնիկ Թեսաղացիքն, Ետացիք, Փթիովտացիք, Մալիացիք, Մագնեսացիք, Պեռեբացիք, այլովքն հանդերձ։ Յառաջ ժամանակաւ ընդ թագաւորօք կային, այլ ապա կրեցին եւ նոքա զայլեղափոխութիւնս մեծազօր եւ սակաւաւոր պետութեանց· եւ այժմ բազմագոյնք 'ի նոցանէ ընդ նուաղ իշխանօք կան[1]։

Ի դէպս ուրեք քաղաքք գաւառաց իւրաքանչիւր կամ ազգաց արձակէին հրեշտակս 'ի ժողով, խորհուրդ 'ի մէջ առնուլ զիրաց աշխար-

1 Թուկիդ. գիրք Դ. գլ. 78։

հէն[1]. այլ վճիռք ժողովոցս այսոցիկ նոցա ևեթ
հրամայեն, որոց ստորագրեալն իցեն վճռոցն։ Ա-
ռավել ոչ միայն գաւառք իւրաքանչիւր ինքնիշխանք
են, այլ և քաղաքք իւրաքանչիւր գաւառաց։ Ո՛ր
օրինակ եւտացւոցն գաւառ 'ի չորեքտասան վիճա-
կըս բաժանեալ[2], բնակիչք միոյ 'ի վիճակացն ա-
զատք են չերթալ ընդ այլս 'ի պատերազմ[3]։ Նա յս
առաւելագունից ազատութի տկարացուցանէ զգա-
ւառս իւրաքանչիւր՝ խափան լեալ համախմբու-
թեան զօրութեանց նոցա. և այնչափ յամեցու-
ցանէ զհաստատութիւն հասարակաց խորհրդոց,
մինչև դադարել նոցա յաճախ 'ի գումարելոյ ժո-
ղովս[4]։

Միջակակցութիւն բնիկ թեսաղացւոցն հզօ-
րագոյն է քան զամենեցուն, բազմութեամբ քա-
ղաքացն որ են ընդ նովաւ, և միաբանութեամբ
մագնեսացւոցն և պեռեբացւոց՝ որք գրեթէ 'ի
սպառ նուաճեալ կան ընդ նովաւ[5]։

Այն և այլ ևս քաղաքք ազատք, որ ոչ պատ-
կանին և ոչ միում ումեք յազգաց. և առ յոյժ
տկարութեանն ոչ զօրելով անձնուազերծ ունել
զիշխանութիւն իւրեանց, միաբանեալ կան ընդ
այլ երկուս կամ երիս քաղաքս մերձաւորս՝ համ-
գոյն իւրեանց մենաւորս և տկարս[6]։

1 Թուկիդ. գիրք Դ. գլ. 78։ Լիւ. գիրք ԼԵ. գլ. 31. գիրք ԼԶ. գլ. 8։
2 Ստրաբ. գիրք Թ. էջ 434։
3 Դիոդ. գիրք ԺԲ. էջ 598։
4 Լիւ. գիրք ԼԴ. գլ. 51։
5 Թէոփ. առ Աթենէոսի, գիրք Զ. էջ 265։
6 Ստրաբ. գիրք Թ. էջ 437։ Լիւ. գիրք ԽԲ. գլ. 53։

Որ ձեռն պատրաստ կայ թեսաղացւոց կազմել վեցհազար հեծեալս, և բիւր մի հետևակաց[1]. թող զաղեղնաւորս նոցա քաջաձիգս, զորս մարթէ նոցա յաճախել ըստ կամի. զի 'ի մանկութենէ սովորի ազգն յաղեղնաւորութիւն[2]։ Չիք ինչ հռչակաւոր քան զհեծելազն թեսաղացի[3], ոչ համբաւոյն ևեթ ահարկու, այլ զի և ամենեցուն իսկ վկայելով անհնարին իմն է զդէմ ունել զօրութեան նորա։

Նշանաւորեն՝ նոցա նախ ձմլեալ 'ի դանդաղանաւանդս զկզակ երիվարի, և մղեալ զնա 'ի պատերազմ. և անտի առեն լեալ կարծիք՝ ձիախառն մարդկան գոլոյ երբեմն 'ի Թեսաղիա, որ Կենտաւրոսքն կոչէին կամ Հիպոցուբք[4]։ Նշանաւորեալքս այս յայտ առնեն, եթէ ոչ աւելի ինչ՝ գէթ զի 'ի վաղնջուց ժամանակաց գոյր հեծելութիւն առ թեսաղացիս. և ախորժակք նոցա 'ի հրահանգս ձիավարութեան սրբազանեալ իմն են արարողութեամբն որ 'ի հարսանիս նոցա կատարի։ Զի յետ զոհիցն և այլոց օրինաւոր արարողութեանց, ընծայէ փեսայն հարսին իւրում երիվար մի 'ի զէն և 'ի զարդ պատերազմի կազմեալ[5]։

Թեսաղիա բերէ զինի և ձէթ և միրգս ազգի

1 Քսեն. պատմ. Յուն. գիրք Զ. էջ 581 : Իսոկր. յղ. խաղաղ. հա. 1. էջ 420 :

2 Քսեն. անդ : Սողին. գլ. 8 :

3 Պաւսան. գիրք Ժ. գլ. 1. էջ 799 : Դիոդ. գիրք ԺԶ. էջ. 435 : Լիւ. գիրք Թ. գլ. 19 :

4 Պլին. գիրք Է. գլ. 56. հա. 1. էջ 416 :

5 Էղիան. յղ. հողուոյ, գիրք ԺԱ. գլ. 34 :

ազգի. արգասաւորահող է յոյժ երկիրն, որպէս զի հնձել երկրագործին զգալարի ցորենոյ կամ արածել 'ի նմա խաշինս՝ զի մի կանուխ քան զժամանակն յոճ կացցէ: Հունձք անդ գրեթէ միշտ առատք են, այլ բազում այն է զի որոմնք 'ի նոսա ճարակին: Յայլ և այլ նաւահանգիստս, և մանաւանդ 'ի Սեբայն և 'ի Փթիովտիայն, բարձեալ տանին սայլիւք ցորեան բազում յոյժ; ուստի 'ի տար աշխարհս ածեն: Իսկ վաճառականութիս այս, որ բերէ զանձս յոլովս, շահաւէտագոյն ևս այնու է աշխարհին՝ զի զիւրին է նմա ածանել զայն և յաճախել և ևս բազմութե՛ սորկացն իւրոց, որ կոչին Պենեստք: Նախամագոյնք 'ի նոցանէ սերեալ իջանեն 'ի պեռեբացւոց անտի և 'ի մագնեսացւոց, զորս Թեսաղացիք նուաճեալ՝ արկին 'ի կապանս, զնեբհակախոհութե մարդկեղէն մնաց բացայայտակի յանձինս բերեալ զտարացոյց: Իսկ զի Թեսաղացիք առաւելագոյն արդեօք քան զամենայն ազգս Յունաց պանծան յազատութիւն[3], և նոքա նախ ածին զՅոյնս 'ի գերութի. հանգոյն նոցին և սպարտացիք վրէժխնդիրք ազատութե, զնոյն ետուն օրինակ Իլոտաց[4]:

Պենեստք բազում անգամ ապստամբեցին[5].

1 Թէոփր. բուսաբան. գիրք Ը. գլ. 10:

2 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Զ. էջ 581: Լիւ. գիրք ԼԹ. գլ. 25:

3 Եւրիպիդ. յԱղկեստ. տող. 677:

4 Թէոփ. առ Աթենէոսի, գիրք Զ. գլ. 18. էջ 265:

5 Արիստոտ. յզ. հաւա. գիրք Բ. գլ. 9. հա. 2. էջ 328:

և յոգնախուռն բազմութիւն նոցա յաւելու միշտ կասկածանս, և օրէնն է տեարց նոցա շահել նոքօք՝ վաճառելով զնոսա այլոց ազգաց Ասիացւոյ: Այլ այն մեծ ևս ամօթոյ իրք են՝ տեսանել զայս զօշաքաղս, զի զստրուկս այլոց գողացեալ, և զքաղաքացիս իսկ ազատս յափշտակեալ, շղթայակապս ածեն բարձեալ ՚ի նաւս՝ զորս ցանկութիւն շահու ձգէ ՚ի Թեսաղիա [1]:

Տեսի և յԱրնէ քաղաքի ստրուկս, որոց դիւրագոյն են կեանք. և տէրքն նոցա ՚ի Բիովտացւոց անտի, որք եկին բնակել յաշխարհի անդ. և ապա ՚ի Թեսաղացւոց ՚ի բաց հալածեալ, բազմագոյնք ՚ի նոցանէ դարձան ՚ի բնիկ աշխարհն իրեանց. իսկ այլոց ոչ կարացեալ թողուլ զբնակութիւն իւրեանց, դաշն եդին ընդ յաղթողս իրեանց՝ լինել նոցա ՚ի ծառայս, բայց միայն զի մի մեղիցեն կենաց իւրեանց, և մի ՚ի տար աշխարհ փոխեսցին: Այս յանձն առին գործել զերկիր, հատուցանելով ամի ամի զհաս կալուածոցն. և բազումք ՚ի նոցանէ փարթամագոյնք են արդ քան զտեարս իւրեանց [2]:

Թեսաղացիք ասպնջականեն զօտարս բազում հոգաբարձութեամբ, և մեծարեն զնոսա առատութեամբ [3]: Զեղխութիւն ակներև ՚ի զգեստս

1 Արիստոփ. ՚ի Պղուտ. գիրք ԺԲ:
տող 520: Պարապ. անդ: 3 Քսենոփ. պատմ. Յուն.
2 Արքեմ. առ Աթենէոսի, գիրք Զ. էջ 579: Աթեն.
գիրք Զ. էջ 264: Թուկիդ. գիրք ԺԴ. գլ. 5. էջ 624:

նոցա և 'ի բնակարանս տեսանի [1], զմնափառ պերճանաց և զխորախճանաց զհետ զակատեալ են. սեղանք նոցա չքնաղ և ցանկալի իրօք և շռայլութեամբ պատրաստին, և վարձակք յաճախեալք 'ի խնճոյս չեն ինչ նոցա հաճոյ՝ եթէ ոչ գրեթէ 'ի սպառ զքօղ պատկառանաց մերկանայցեն [2]:

Յոռունք են և անհանգիստք [3], և դժուարին է յոյժ հնազանդել զնոսա, որպէս զի զբազումս 'ի քաղաքաց նոցա տեսի պատառակտեալս յիւրեանս [4]: Պղծողք ամբաստանին զօլ բանիցն իւրեանց որպէս զամենայն բարգաւաճեալ ազինս, և դիւրապատրաստք 'ի լքանել զնիզակակիցս [5]: Ընդդի դաստիարակութեան նոցա յաւելլով 'ի բարս նոցին մտահաճութիւնս և խաբէութիւնս մտաց, վազվաղէ զնոցա զեղծումն. և օրինակք արագ 'ի վերայ հասեալ՝ դիւրեն զոճիրս, և ազատութիւն 'ի պատուհասէ զառածանէ զնոսա 'ի պտահակութիւն [6]:

Ի վաղնջուց ժամանակաց հետէ պարապեցին նոքա 'ի քերթութիւն, և հայրենակիցս իւրեանց պանծացեալ կոչեն զԹամիրիս և զՕրփէոս և զԼինոս, և զայլս բազումս որք 'ի դարս դիւցազանց փառակիցք նոցա կացին. այլ յետ այնր ժա-

1 Պղատ. 'ի Կրիտ. հտ. 1. էջ 53: Աթէն. գիրք. ԺԴ. գլ. 23:

2 Աթէն. գիրք ԺԴ. գլ. 9. էջ 607:

3 Լիւ. գիրք ԼԴ. գլ. 51:

4 Իսոկր. Թղթ. 2. առ Փիլ. հտ. 1. էջ 451:

5 Դեմոսթ. ողինթ. 1. էջ 4: Նոյն յԱրիստոկր. էջ 743:

6 Պղատ. 'ի Կրիտ. անդ:

մանակի ոչ մատենագիր ոք և ոչ ձեռագէտ անուանի եկաց 'ի նոսա ։ Յառաջ քան զամս իբր հարիւր և յիսուն Սիմոնիդէս եգիտ զնոսա անզգայս գեղջս տաղերգն իւրոց[1] ․ այլ 'ի յետին ժամանակս հլու ևս գտանս վարժից Գորգիայ հռետորի ։ Նայց տակաւին նախամեծար առնեն զձոռոմ ճարտարխօսութիւն, յորում Գորգիաս անուանի եկաց, և որ ոչն կարաց ուղղել զմոլորութիւնս մտաց նոցա զօրինաց արդարութեան և առաքինութեան[2] ։

Յոյժ ախորժելի են առ նոսա և արգոյ հրահանգք կաքաւուց, մինչև զկարի ազնուական պաշտամունս կաքաւս յորջորջել, և ուրեք ուրեք զօրավարք և դատաւորք կոչին կաքաւապետք կամ պարագլուխք[3] ։ Աշխուժութիւն նոցա միջակ է դորացւոյն և յոնիականին, և ըստ բարուց և ըստ բնաւորութեան ազգին Ճահաւորի՝ մերթ զվստահութիւն յանձնապաստանութեան 'ի ներքս ածեալ և մերթ զմեղկութիւն հեշտութեան[4] ։

Արդ է օրէնն հաւորսաց ըմբռնել զարագիլ. և անմարթ էր ինձ գիտել զիրս զայս, եթէ ոչ 'ի վերայ սպանողաց նորա նոյն պատուհասք կային՝ որ ինչ մարդասպանից[5] ։ Նոր նորանշան օրէնսն

1 Պղուտ. յղ. ունկնդր. քերթ. հտ. 2. էջ 15 ։

2 Պղատ. 'ի Կրիտ. հտ. Նոյն 'ի Մենն. հտ. 2. էջ 70 ։

3 Ղուկիան. յղ. պարուց ։ Ղուկիանոս ածէ արձանագիր զԹեսաղացւոյ ումեմնէ արարեալ զայս մեծ օրինակի. «Իլատիոնի, որ բարւոքն կաքաւեաց 'ի մարտի, ժողովուրդն կանգնէ պատկեր» ։

4 Աթեն. գիրք ԺԴ. էջ 624 ։

5 Պլին. գիրք Ժ. գլ. 23 ։ Սոլին. գլ. 46 ։ Պղուտ. յԻսիս և յՈսիրիս, հտ. 2. էջ 380 ։

զարմացեալ՝ հարցաք զվասն էրն. և տուաւ մեզ պատասխանի, զի արագլաց սրբեալ էր զԹեսաղիա յահագին օձիցն որ հարկանէին զմանկունս. և եթէ չէին օրէնքս այս, հարկ էր բնակչացն մեկնել զնալ յաշխարհէն[1], որպէս 'ի բազմութենէ խլրդից հարկ եղև խոյս տալ բնակչաց միոյ յայլոց քաղաքաց Թեսաղիոյ, զորոյ ոչ ես յիշեմ զանունն[2]:

Իշխանութիւն իմն եկաց յաւուրս մեր 'ի Փերէս պերճ և պայծառ, այլ վաղանցուկ յոյժ: Լիկոփրոն զհիմունս նորա էարկ[3], և յաջորդ նորա Յասոն կանգնեաց զնա ահարկու Ելլադայ և ազգաց հեռաւորաց: Բազում ինչ զարմանալիս լուայ զառնէս զայսմանէ, որպէս զի 'ի դէպ համարիմ համառօտել որ ինչ արարն և զոր առնելն կարող էր:

Յասոնի էին ամենայն քաջութիւնք անկաւորք 'ի կանգնել զմեծագոյն պետութիւն: Կանխաւ վարժեալ էր նորա գունդ մի վեցհազար թիկնապահաց, զորս հանապազօր հրահանգէր 'ի զէնս, և յինքն յանկուցանէր զնոսա, պարգևս քաջացն ընձեռելով, զարմանելով զխօթացեալսն անդադ-խնամով, և զվախճանեալսն յուղարկելով փառօք[4]: Պարտ էր զինուորելոցն 'ի գունդ անդր՝

1 Արիստոտ. յղ. սքանչ. ունկնդր. հտ. 1. էջ 1152:
2 Պլին. գիրք Ժ. գլ. 29. էջ 455:
3 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Բ. էջ 461: Դիոդ. գիրք ԺԴ. էջ 300:
4 Քսենոփ. անդ, գիրք Զ. էջ 580:

բերել յանձին զփորձ քաջութեան, և անվեհեր արիութի՛ որպիսի ինքն 'ի նահատակութիւնս և 'ի վտանգս մարտի ցուցանէր ։ Լուայ 'ի ծանօթից նորա, զի կորովի էր յոյժ մարտնչօղ, բաւական 'ի տոկ ամենայն աշխատութեանց, և հզօր 'ի կռուել առ ոսոն զամենայն խոչ և զխութ ։ Աէքնոյ և ոչ այլոց ինչ կարեաց կենցաղոյս հպատակէր, յորժամ գործ ինչ նմա առաջի կայր. անզգայ կամ մանաւանդ անմատոյց իսկ էր հրապուրանաց հեշտութեան. խոհական, ոչ ձեռներէց լինելով 'ի գործ՝ առանց վստահութեան ընդելից իւրացն յաջողութի՛. Ճարտար որպէս զԹեմիստոկղ 'ի գուշակել զխորհուրդս Թշնամեացն, և 'ի Թագուցանել 'ի նմանէ զիւրսն, և 'ի փոխանակել զօրութեան զխորագիտութիւն կամ զդաւ[1]. և զի երկարեմ, զամենայն ինչ ընծայէր նա փառասիրութեան իւրում, և ոչ ինչ շահուածոյ բախտի ։

Հանդերձ ողքիմբք և իշխանութիւն նորա քաղցր էր 'ի վերայ ժողովրդեան[2]. և սէր բարեկամութեան այնպիսի, զի իբրև Տիմոթէոս զօրավար աթենացւոց՝ ընդ որում զօղիւ ասպընջականութեան կցորդեալ էր՝ ամբաստանեցաւ յատենի ժողովրդեան, Յասոնի 'ի բաց մերկացեալ զպատաս արքունի՝ եկն յԱթէնս, և որպէս հասարակապատիւ ոք խառնեալ ընդ բարեկամս

1 Կիկերոն, յղ. պատշաճից, գիրք Ա. գլ. 30. հա. 3: 2 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 373:

անբաստանելոյն՝ օգնեաց Թախանձանօք 'ի կե-ցուցանել զնա ¹ ։

«Յուսաձեալ զոմանս յազգաց, և ընդ այլս կը-ռեալ ղաշինս նիզակակցութե, յայտնեաց զխոր-հուրդս իւր գլխաւորաց 'ի Թեսաղացւոց անտի ² ։ Առաջի արար նոցա զվատթարել զօրութեան սպարտացւոց 'ի ճակատամարտին Լեւկտրայ, և զանբաւականութիւն Թեբայեցւոց 'ի ժուժկալել ընդ երկար, և զզօրութիւն աթենացւոց ամփո-փեալ 'ի ծով և մերձ 'ի կործանումն յերեսաց նաւատորմիցն կառուցանելեաց 'ի Սիկելիա ։ Յաւել և ևս, զի 'ի ձեռն աշխարհակալութեանց և նիզակակցութեանց դիւրին էր նոցա ինքնա-կալել Ելլադա, և զՊարսիցն կործանել զինք-նակալութիւն, որոց այն ինչ նշաւակեալ էր տկարութի արշաւանօքն Ագեսիղայոսի և կրտ-սերոյն Կիւրոսի ։ Ամենեցուն միտք 'ի բանից աստի վառեալ, ընտրեցին զնա զօրագլուխ և սպարապետ ամենայն Թեսաղականնիզակակցու-թեան, և վաղվաղակի եկաց 'ի վերայ երկուց բիւրուց հետևակաց, և առաւելագունից քան զերիս հազարս հեծելոց, և յօգնախուռն ամբո-խի մեկնակազէն զօրաց ³ ։

Ի ժամանակին յայնմիկ Թեբայեցիք խնդրէին 'ի նմանէ օգնութիւն ընդդէմ սպարտացւոց ⁴ . և

1 Դեմոսթ. 'ի Տիմոթ. էջ 1075 ։ Նեպ. 'ի Տիմոթ. գլ. 4 ։
2 Քսեն. պատմ. Յուն. գիրք Զ. էջ 580 ։
3 Նոյն անդ, էջ 583 ։
4 Նոյն անդ, էջ 598 ։

թէպէտ ընդ փովկիացիսն տայր պատերազմ, առեալ զընտիրս 'ի զօրացն՝ չու արար փայլակնաբար, և գրեթէ ամենայն ուրեք կանխեալ քան զհամբաւ չուոյն՝ եհաս առ Թեբայիւ, մինչ ճակատեալ կային ընդդէմ սպարտացւոց: Նա ոչ կամեցեալ ոչ զասա և ոչ զնոսա զօրացուցանել յաղթութեամբ, զի երկաքանչիւրոցն ևս զօրութիւն վնասակար էր իւրոց խորհրդոցն, հարկեցոյց զնոսա դուլ առնել զինուց: Իսկ ինքն փութացեալ 'ի Փովկիս, յաւեր դարձոյց զաշխարհն. և յետ այլոց ևս արագայաղթ արութեց՝ դարձաւ լի փառօք 'ի Թեբէս. և բազումք յազգաց ցանկային և թախանձէին նիզակակիցք լինել նմա:

Մերձ 'ի վերայ կային տօնք պիւթեան խաղուցն, և խորհուրդ կալաւ Յասոն ածել անդր զզօրս իւր [1]: Կէսք ասէին՝ թէ իշխել կամի ժողովոյն, և վերակացու խաղուցն կալ. այլ զի և հնարս անսովորս 'ի կիր արկանէր առ 'ի հասթայթել զուռճիկ զօրաց [2], կասկած կալան դեղփացիք՝ թէ 'ի կողոպտել գայր զգանձս մեհենին, և հարցին զդիսն՝ թէ որպէս զսեղանակապտութիւնն խափանել կարասցեն. և Ապողոն ետ պատասխանի՝ յինքն զհոգն զայն ապաստան առնել: Եւ յետ աւուրց սպանաւ Յասոն 'ի գլուխ բանակին դաւակցութեամբ եօթանց պատանեաց,

1 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Զ. էջ 600:

2 Պողիեն. 'ի մարթանսն, գիրք Զ. գլ. 1:

ոչ համդուրժելով նոցա՝ որպէս պատմեն՝ ընդ խստութիւն զօրավարին[1] ։

Այլք 'ի Յունաց ուրախ եղեն ընդ մահ նորա, զի երկնչէին ընդ կորուստ ազատութեան իւրեանց . այլք տխրեցան, զի յուսացեալ կային յառաջադիմութիւնս խորհրդոց նորա[2] ։ Անգիտեմ եթէ Յասոն յանձնէ՞ խորհրդակից եղև Յունաց՝ միաբանութեամբ ածել պատերազմ 'ի վերայ Պարսից, թէ խրատեալ յումեքէ յիմաստակացն՝ որք 'ի ժամանակաց ինչ հետէ պարծանս իւրեանց համարէին գրով և ճառիւք յաշխարհաժողովս Եղլադայ առաջարկել զխորհուրդըն զայն[3] ։ Բայց հնարաւոր իսկ էր խորհուրդն . և եթէ իրացն վկայեցին այսմ. զի տեսի ես ապա զՓիլիպպոս մակեդոնացի, զի օրէնս տայր Եղլադայ . և յետ դարձին իմոյ 'ի Սկիւթիա գիտացի, զի որդւոյ նորա կործանեալ էր զինքնակալութիւնն Պարսից ։ Իւրաքանչիւր իսկ զշաւղացն Յասոնի չոգեան զհետ, որ թերևս չէր ինչ ընդհատ քան զՓիլիպպոս աջողութեամբ մնաց, և ոչ քան զորդի նորա ժրութեամբ 'ի գործ ։

Զհետ ամաց ինչ վախճանելոյ նորա հասանք մեք 'ի Փերէս, քաղաք մեծ յոյժ, շուրջ պատեալ 'ի պարտիզաց[4] ։ Յուսայաք գտանել անդ

¹ Վաղ. Մաքս. գիրք Թ. գլ. 10 ։

² Նոյն անդ ։

³ Փիլոստր. յղ. վարուց իմաստակաց, գիրք Ա. էջ 493 ։ Խոսկր. համաթեն. հտ. 1. էջ 209 ։

⁴ Պողիբ. գիրք ԺԻ. էջ 756 ։ Լիւ. գիրք ԼԴ. գլ. 6 ։

հետս ինչ զպայծառութեանն որով նշողէրն յաւուրս Յասոնի . այլ իշխէր անդ Աղեքսանդր , տեսարան իմն կացուցեալ յԱպողոս՝ նոր ինձ ամենեւին , զի չեւ եւս տեսեալ էր իմ բռնաւոր զոք : Գահոյք , յորոց վերայ բազմէրն , դեռ եւս ծխէին ջերաջերմ արեամբ նախորդացն իւրոց թաթաւեալ . զի Յասոն , որպէս ասացի , 'ի դաւաճանաց սպանաւ . եւ երկոքին եղբարք նորա Պողիդոր եւ Պողիփրոն յաջորդեալ նմա , Պողիփրոն սպան զՊողիդոր[1] , եւ ինքն եւս վաղ սպանաւ յԱղեքսանդրէ , որ յամաց իւր մետասանից բռնակալէր 'ի Փերէս[2] իբրեւ հասաք մեք անդր :

Ի սիրտ անգութ բռնաւորին չգոյր ինչ 'ի բարւոյն մասանց , այլ կիրք զարհուրելիք թանձրամած յախտս համակեալ . դրժող դաշանց , վատ եւ տաղտուկ 'ի պատերազմ , եւ ոչ առ այլ ինչ իրիք ցանկայր նա աշխարհակալութեան՝ բայց 'ի յագուրդ ագահութեան իւրոյ , 'ի լրումն հաճոյիցն , եւ 'ի շռայլել զանձն 'ի պղծալից հեշտութիւնս[3] :

Գումարտակ մի տարագրելոց սրիկայից լցեալ անօրէնութեամբք , այլ ապաժամանն 'ի չարութիւն նորա , լեալ նմա 'ի զինուորս եւ 'ի թիկնապահս՝ խուժան աւերանաց զաշխարհաւն իւրով եւ զսահմանակիցօքն զեղոյր : Ամուտ նա նոքօք 'ի մի 'ի նիզակակից քաղաքաց , եւ համախմբեալ պատճառանօք զբնակիչս քաղաքին 'ի հրապարակ՝ եւ սրակոտոր

1 Քսենոփ . պատմ . Յոյն . գիրք Զ . էջ 600 :

2 Դիոդ . գիրք ԺԵ . էջ 374 :

3 Պլուտ . 'ի Պելոպ . հտ . 1 . էջ 293 :

առնել զնոսա, և զտունս նոցա մատնեաց յաւար [1]: Յաջողեցին 'ի սկզբան զէնք նորա. այլ ապա պարտեալ առաջի Թեբայեցւոց միաբանելոց ընդ բազում յազգաց Թեսաղիոյ [2], յետոյն եւեթ այնուհետև 'ի ժողովուրդս բռնանայր: Զկէսս կենդանւոյն տայր թաղել [3], զայլս արջենեաւ կամ կնձենեաւ ծածկեալ տայր արձակել 'ի վերայ նոցա բարակս որսականս: Զբօսնոյր 'ի կրատանս նոցա, և ձիւք նոցա և եւս յաւելուլն խըստացուցանել զսիրտ նորա: Սակայն յանկարծ ուրեմն 'ի փղձուկ հարեալ 'ի զնին ողբերգութեանն Եւրիպիդեայ տրովացւոց կանանցն, ել վաղվաղակի 'ի տեսարանէն. ամօթ համարեալ գոռովիլ առաջի այլոց ընդ աղէտս Եկաբայ և Անդրոմաքեայ, որ անխնայ ակամբ զնուրոց ժողովրդեանն տեսանէր զարեան ձապաղիս [4]:

Փերեսացիք կէին հանապազօր յարհաւիրս, 'ի վհատութեան՝ յոր մղէն ծայրայեղ չարիք, և որ յաւելուած աղխտից գործէ: Հառաչել իսկ յայտնապէս ոչ համարձակէին, և խղճք սրտից նոցա առ ազատութիւն՝ վախճանէին 'ի յուսահատութիւն ապիկար: Իսկ Աղեքսանդր տագնապեալ յարհաւրաց որովք զայլս զարհուրեցուցանէրն, ժառանգէր զբաժինս բռնաւորի՝ ատեցող այլոց և ատելի լեալ: Նշմուկ և խէթք և

1 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 385: Պլուտ. 'ի Պելոպ. հատ. 1. էջ 293: Պաւսան. գիրք Զ. էջ 463:

2 Դիոդ. անդ, էջ 390:

3 Պլուտ. անդ:

4 Էլիան. զան. պատմ. գիրք ԺԴ. գլ. 40: Պլուտ. անդ:

տագնապք որովք տանջէրն սիրտ նորա , յայտնի երեւէին յաչս նորա՝ Թէպէտ և անգթութեան պատրուակեալ. և ամենայն ինչ յաւելոյր նմա կասկածանս : Գողայր յերեսաց Թիկնապահացն , և 'ի կնոջէն իսկ իւրմէ 'ի Թեբեայ զգուշանայր , զոր մոլեգնախառն սիրով սիրէր , եԹէ որէն իցէ սէր կոչել զմոլեգնութիւնն՝ որով զհետ իւր 'ի քարշ ածեալ ձգէրն զնա : Օ ցիշերս 'ի բարձու պալատանն կայր 'ի վերնատան , յոր ընդ սանդուղս ելանէր . և զմուտս վերնատանն պահէր շուն գամփռ , ոչ յայլոց խնայելով բայց 'ի Թագաւորէն և 'ի դշխոյն , և 'ի ստրուկն դարմանիչ իւր : Նուրր ընդ երեկս ամբանայր , սուսերամերկ առաջի նորա գնալով ստրկին և հետազօտելով զամենայն խորշս վերնատանն [1] :

Յաւելից պատմել և զայս ինչ , ընԹերցանելեացն Թողեալ խելամտել 'ի նոյն : Եւդեմոս կիպրացի ուղեւորելով 'ի քաղաքէն աԹենացւոց 'ի Մակեդոնիա , անկեալ կայր հիւանդագին 'ի Փերէս [2] : Եւ վասն զի բազում անգամ տեսեալ էր իմ զնա առ Արիստոտելի՝ որում բարեկամն էր , զամենայն խնամս ըստ կարի իմում կալայ զնմանէ 'ի հիւանդութենէն : Եւ իբրեւ գիտացի զի բժշկացն հատեալ էր յոյս զկենաց նորա , նստայ առ մահիճն , և էր երեկոյ : Եւ նորա կարեկցեալ

1 Կիկեր · յղ · պատշաճ · գիրք Զ · գլ · 7 · հտ · 3 · էջ 233 : Վաղ · Մաքս · գիրք Թ · գլ · 13 :

2 Արիստոտ · առ Կիկերոնի · յղ · հմայ · գիրք Ա · գլ · 25 · հտ · 3 · էջ 22 :

ընդ թախծութիւն իմ, կարկառեաց յիս զաջ իւր եւ ասէ նուաղ ձայնիւ. Ունիմ ինչ յայտնել քեզ գաղտնիս 'ի մտերմութիւն քո վստահացեալ, զոր վտանգ է ինձ յայտնել այլում: Յաւուրս յայսոսիկ երեւեցաւ ինձ 'ի տեսլեան գիշերոյ երիտասարդ մի չքնաղագեղ, եւ յայտնեաց ինձ զի կեցից 'ի հիւանդութենէ աստի, եւ յետ հնգից ամաց դարձայց 'ի հայրենիս իմ. եւ 'ի հաւատարմութիւն բանիցն յաւել, զի բռնաւորին յետ աւուրց ինչ հասանելոց էր վախճան: Յորս ինձ առ տագնապ ցաւոցն համարեցայ ցնորել Եւդեմեայ, եւ դարձեալ ընկղմեալ կայր 'ի տրտմութեան:

Եւ ահա 'ի վաղիւ անդր ընդ առաւօտն զարթեաք 'ի յաճախ աղաղակէ ամբոխին. զի ասէին թէ մեռաւ, եւ ոչ եւս է բռնաւորն, սպանաւ 'ի ձեռաց դշխոյին: Ընթացաք վաղվաղակի յարքունիսն, եւ տեսաք անդ զդիակն Աղեքսանդրի մատնեալ 'ի թշնամանս սինլքոր խուժանին՝ որ զնա առ ոտն կոխէր[1], եւ ցնծութբ հռչակէր զքաջութի դշխոյին: Զի նա ինքն առաջնորդ լեալ էր դաւոյն, յատելութենէ բռնաւորութեան եթէ 'ի վրէժխնդրութիւն անձին՝ ոչ գիտեմ: Քանզի կէսք ասեն՝ թէ Աղեքսանդր խորհէր արձակել զնա 'ի բաց, եւ այլք թէ եւս սպանանել զԹեսաղացի զոմն երիտասարդ սիրելի նմին[2], եւ

1 Պլուտ. 'ի Պելոպ. հտ. 1. էջ 298: Կուինտիլ. գիրք Ն. գլ. 1. էջ 410:

2 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Զ. էջ 601:

այլք դարձեալ թէ Պեղոպիդաս անձք ինչ յառաջ անկեալ 'ի ձեռս Աղեքսանդրի, և 'ի ժամանակի գերութեանն յանդիմանման լեալ դշխոյին՝ խրատեալ էր զնա ազատել զհայրենիս իւր, և երևել արժանի ընկեր ազգատոհմին', զի էր նա դուստր Յասոնի: Այլցի ոք զայս որպէս և ախորժէ. բայց Թեբեայ զխորհուրդն զայն եղեալ 'ի մտի՝ ազդ արար եղբարցն իւրոց, Տիսի-
1. փոնեայ Պիթողայոսի և Լիկոփրոնի, զի խորհէր բռնաւորն սպանանել զնոսա. և յայնմ հեռուէ խորհուրդ կալան ինքեանք իսկ սպանանել զնա:

Յերեկէ թագոյց զնոսա Թեբէ յարքունիս'. և բռնաւորն 'ի նմին երեկոյի արբեալ գինի յոյժ, ելանէ 'ի վերնատունն, և անկեալ 'ի վերայ անկողնոյ՝ թմբրի: Իսկ դշխոյին իջեալ փութանակի, և զատրուկն հանդերձ շամբն 'ի բաց կացուցեալ, դառնայ անդրէն ընդ դաւաճանսն, և յափշտակէ զսուսերն կախեալ զբարձէ մահճացն: Ընդ դաւաճանացն թողանայր քաջութի. այլ 'ի սպառնալ դշխոյին զարթուցանել զԹագաւորն՝ եթէ այլ ևս վատասրտէին, անկան 'ի վերայ բռնաւորին, և հարին զնա 'ի հարուածս բազումս:

Փութացայ իրազեկ առնել զԱւղեմս, և ոչ ինչ զարմանք թուեցան նմա իրքն: Հաստատեցաւ նա յառողջութի, և յետ հնգից ամաց կո-

1 Պլուտ. 'ի Պելոպ. հա. 1. 2 Նոյն անդ:
էջ 297:

րեաւ 'ի Սիկիլիա։ Բայց Արիստոտելի զբուցատրութիւն իմն արարեալ ապա զՀոգւոյ յանուն բարեկամին իւրոյ [1], ցուցանէր զտեսիլն ամենայն մտաւամբք կատարեալ՝ դարձ 'ի Հայրենիսն Համարեալ զմեկնել նորա յերկրէ աստի [2]։

Պաւսանիասն թողեալ առ ժամանակ մի զգի առնուլ փերեսացւոց, ապա բաժանեցին յիւրեանս զգերագոյն իշխանութիւն. և այնչափ բռնացեալ, մինչև հարկ լինել ժողովրդոց յետ ամաց ինչ ուղևորութե իմն 'ի Խեսաղիա՝ կոչել զՓիլիպպոս մակեդոնացի յօգնութի [3]։ Որոյ եկեալ հալածեաց ոչ միայն զբռնացեալսն 'ի Փերէս, այլ և որ յայլ քաղաքս կային բռնաւորք։ Այլ բարերարութեամբս այսուիկ այնպէս յինքն յարեցոյց զԹեսաղացիս [4], զի կրեթէ յամենայն պատերազմունս գնացին զհետ նորա, և օգնական եղեն նմա 'ի յաղթութիւն խորհրդոցն *։

Այլ անցեալք ընդ մերձակայ վայրս շուրջ զքաղաքաւն փերեսացւոց, և ընդ նաւահանգիստ նորա՝ որ կոչի Պագասա՝ հեռի 'ի քաղաքէն իննսուն ասպարիզաւ [5], շրջեցաք ապա ընդ հարաւային կողմանս Մագնեսիոյ. և ապա դարձաք ընդ հիւսիս, ունելով յաջմէ զգօտիս լերինն Պեղիոնի։ Օք-

1 Պլուտ. 'ի Դիոն. հա. 1. էջ 967։

2 Կիկեր. յղ. հմայ. գիրք Ա. գլ. 25. հա. 3. էջ 23։

3 Դիոդ. գիրք ԺԶ. էջ 418։

4 Իսոկր. Ճառ. առ Փիլիպպ. հա. 1. էջ 238։

* Տես 'ի ԿԱ գլուխ գրոցս 'ի պատճէն Թղթոյն գրեալ 'ի չորրորդում ամի հարիւրերորդի վեցերորդի ողիմպիադին։

5 Ստրաբ. գիրք Թ. էջ 436։

ւարձակ են վայրքն քաղցրախառնութեամբ օդոյ նահանգին և բազմակերպ տեսարանօքն, և հովտացն բազմութեամբ, մանաւանդ 'ի հիւսիսակողմն, որք 'ի Թևոց լերանցն Պեղրմնի և Ասայ կազմեալք ։

Ի միում ուրեք 'ի զառհաւանողից Պեղրմնի լերին կառուցեալ կայ մեհեան Արամազդայ. և հուպ առ նմին այրն հուշակաւոր, ուր ասեն Որմզդի երբեմն բնակեալ[1], յորմէ զանուանն իսկ զմնորդացուն կրէ ։ Ելաք անդր 'ի վեր ընդ հանդիսի մանկտւոյ, որ ամի ամի գնան անդր 'ի միջնջէ 'ի մերձակայ քաղաքաց՝ մատուցանել զոհս վեհագունին դից ։ Այսպէս և ամառն խոր էր, և տօթ սաստիկ 'ի ստորոտս լերինն, հարկ եղև մեզ գտանել հանգոյն նոցին զովութեան. զի 'ի բարձու լերինն է ցուրտ դժնդակ, այլ զուարճութիւն նորա մեղմէ տեսիլն վսեմ՝ զոր ընծայեն աստի կատարուտակ դաշտք ծովուն, և անտի արօտք Աեսաղից ։

Եղևին և նոճ և մայրի և այլ ևս ազգի ազգի ծառոց բազմութիւն ծածկեն զլեառնն, և բանջարք խոտոց ախտաբուժք՝ որ յաճախագոյն սպաս մատուցանեն բժշկութեան[2] ։ Տեսաք մեք անդ ազգ արմատոյ հոռևան իբրև զԹիւմ, որում օձասպան ասեն ունել զօրութիւն, և բժշկել 'ի խածուածոյ օձից՝ խառն ընդ գինւոյ ճաշակեալ[3] ։

1 Վենդ. ալիւթ. 4. առդ 181 ։ Դիկկէարք. յաշխարհագր. հա. 2. էջ 29 ։

2 Դիկկէարք. անդ, էջ 30 ։ Թէոփր. բուսաբան. գիրք Դ. գլ. 6. էջ 367 ։

3 Դիկկէարք. անդ, էջ 28 ։

Նամոդ և Թաւփ՝ որոյ արմատ դեղ է ստնա-ռութեան, և կեղև նորա բժշկէ զխիթս, և տերևք զցաւս աչաց[1]: Այլ Ճարտարութիւն դեղոցն խառնման միում և եթ պահեալ է ազգատոհմի, որ համարի որդի 'ի հօրէ ընկալեալ զայն աւանդութեամբ անդստին 'ի նախնոյն իւրմէ 'ի Քիրոնէ մարդաձիոյ: Իբր ոչ եթէ առ շահ ինչ օգտի զդեղագործութիւնն առնելով, այլ պարտ անձին վարկուցեալ ձրի դարմանել զհիւանդս որ դիմեն առ նա:

Յետ թագաւորութեան մանկտւոյն իջեալք 'ի լեռնէն, հրաւիրեցաք 'ի ճաշ՝ յոր հանդիսի Թափօրոյն լինէր վախճան: Ուր տեսաք ազգ. ինն պարու պահեալ ազգաց ոմանց Թեսաղացւոց, զարԹուցիչ արիութեան և ժրութեան դաշտականաց[2]: Մի ոմն 'ի մագնեսացւոց 'ի մէջ անցեալ ասպարազէն, դնէ յերկիր զզէնս իւր, և ձևացուցանէ զշարժումն և զձևացս երկրագործի՝ որ յաւուրս պատերազմի սերմանիցէ և հերկիցէ զերկիր: Երկիւղ 'ի դէմս նորա տպաւորեալ, յայս կոյս և յայն զաչս իւր յածեալ տեսանէ զմի 'ի զինուորաց Թշնամեաց՝ որ խնդրէ 'ի վերայ հասանել: Յափշտակէ անդրէն զզէնս իւր, յարձակի 'ի վերայ նորա, պարտէ զնա, և կապեալ զհետ եզանցն՝ վարէ զնա առաջի իւր: Այլ զայս ամ շարժմունս կատարէ 'ի չափ ոտին 'ի ձայն սրնգի:

1 Դիկէարք. յաշխարհագր. հտ. Բ. էջ 30:

2 Քսենոփ. արշաւ. Կիւր. գիրք Զ. էջ 371:

Ապա յառաջ անցեալ հասաք 'ի Սիկիւոնին քաղաք, որ 'ի ստորոտ Սասայ լերին կառուցեալ 'ի բլրի՝ հայի 'ի բարելից դաշտավայրս : Նախապատկանութիւն օդոյն և ջուրցն առատութիւն մի 'ի բազմազուարճ բնակութեանցն աշխարհին Հել-լադայ կացուցանեն զնա ¹ : Նաւի մինչև 'ի Լարիսսա բերրի է երկիրն և բնակաւէտ. և ընդ մերձենալ 'ի քաղաքն յաճախեն վայրք զուարճալիք : Յիրաւի իսկ մի 'ի բազմափարթամ քաղաքաց Թեսաղիոյ համարի Լարիսա. և զարուարձանեալս նորա պճնէ Պենէոս, շուրջ զպարսպաւք նորա ականակիտ ալեօքն հոսեալ ² :

Ի Ամինտորայ իջաք ագանել, և ընկալաւ նա զմեզ ամենայն մեծարանօք՝ որ ակնկալելի էր 'ի նախնի բարեկամութենէ հօր նորա Փիլոտայ ընդ մեզ, և փութայաք գնալ 'ի Տեմպէ : Հովիտք բազումք են 'ի կողմանսն Տեմպէ անուանակոչեալք, այլ զանիկն Տեմպէ կազմեն Ողիմպ և Օսսա լերինք յիրեարս մերձեալ, և ընդ այն է 'ի Թեսաղիոյ 'ի Մակեդոնիա արահետ : Ամինտոր կամեցաւ գալ ընդ մեզ. և վարձեալ նաւակ, մտաք անդր ընդ արշալոյսն՝ նաւել ընդ Պենէոս 'ի հընգետասաներորդում աւուր ամսեան մետագիտնիոնի * : Հուպ ընդ հուպ յանդիման եղեն մեզ Փաղաննա, Գիրտոն, Ելատիա, Մոփսիոն, Օ-

¹ Լիւ. գիրք ԽԲ. գլ. 54 :
² Պլին. գիրք Դ. գլ. 8. հտ. 1. էջ 200 :

* Ի տասներորդում աւուր ամսեան օգոստոսի, 357 ամօք Ն. Ք :

մօղիս, և այլ ևս քաղաքք, կէսք 'ի գետեզերըն կառուցեալք, այլք 'ի մերձակայ բլուրս [1]: Նոյն անցեալք ընդ գետախառնուրդն Տիտարեսեայ, որոյ ջուրք պղտորագոյնք են քան զՊենէոսի [2], հասեալք 'ի Պենէոս՝ որ հեռի է 'ի Լարիսայ իբր հարիւր և վաթսուն ասպարիզօք [3]: Նոյն թողուք զնաւակն, զի անտի հովիտն սկսանի, և անձկանայ գետն ընդ լերանցամէջս Ոսսայ՝ որ կայ յաջմէ, և Ողիմպեայ՝ որ յահեկէ, և բարձրութիւն նոցա սուղ ինչ աւելի քան զտասն ասպարէզ* :

Ըստ վաղնջուց աւանդութեան 'ի սասանութենէ երկրի հատանին փեռեկեալ լերինքն, և տուեալ անցս ջուրց որ ողողեալ ծածկէին զդաշտավայրս [4]: Այլ այն հաւաստի իսկ է, զի 'ի խնուլ զկիրճն զայն՝ ոչ ևս իցեն անցք Պենէոսի. քանզի երկիրն՝ ընդ որ գետս այս հոսէ, ընդունելով յինքն 'ի գնացս իւր և այլ գետս բազումըս, տակաւ 'ի գետեզերացն 'ի վեր ամբառնայ մինչև 'ի բլուրսն և 'ի լերինս որ շուրջ զգաւառաւն կան: Լուաք իսկ, զի եթէ Թեսաղացւոց չէր հնազանդեալ Քսերքսեայ՝ առնոյր նա զՊենէնոս, կանգնել առ թումբ անտեղիտալի հոսանաց գետոյն [5]: Կարևոր է յոյժ քաղաքն՝ տեղւոյն

1 Լիւ. գիրք ԽԲ. գլ. 61:
2 Հոմեր. Նշխար. Ձ. տող. 754: Ստրաբ. գիրք Թ. էջ 441:
3 Լիւ. գիրք ԼԶ. գլ. 10:
* Յետկոյս մատենիս 'ի տեղեկութիւնս. Թիւ Ժ:
4 Երոդոտ. գիրք Է. գլ. 129: Ստրաբ. գիրք Թ. էջ 430:
5 Երոդոտ. անդ, գլ. 130:

ամրութեամբ, և է դուռն Մեսադլոյ 'ի կողմանէ աշխարհին մանկերդոնացւոց, որպէս Մերմնակիլէ 'ի կողմանէ աշխարհին փոկկիսացւոց։

Այս տարածանի հովիտն յարևելս հիւսիսի[1]․ երկայնութիւն նորա քառասուն ասպարէզ, և ընդարձակագոյն լայնութիւն նորա իբր երկու ասպարէզ և կէս․ այլ ուրեք անձկանայ, իբր ոչ ինչ աւելի քան զհարիւր ոտնաչափ[2]։

Ծառք սաղարթագեղք զարմանալիք կաղամախ և սօսի և հացի ծածկեն զլերինան[3]․ և առ ստորոտովք նոցա բղխեն աղբերք ջուրց մաքուրք իբրև զբիւրեղ․ և ընդ մէջ ծայրից նոցա բարձանց սահեալ անցանեն օդք զովարարք հեշտալիք 'ի շնչել։ Իսկ զնացք գետոյն զրեթէ ամենայն ուրեք խաղաղ, և ուրեք ուրեք գկղզեկօք ոստոնք փարեալ՝ մշտադալարս զնոսա գործէ։

Բարայրք ներգործեալք 'ի կողս լերանցն, և գետեզերք երկուստեք դալարագեղ ծածկեալ, զոգցես իմն պատսպարանք պատրաստեալ կան հանգստեան և զբօսանաց։ Այս առաւել յաճախէին 'ի մեզ զարմանք ընդ հանճարեղ կարգաւորութիւն զարդուցն, որովք պճնեալ վայրքն․ զի այլուր արուեստ ջգնի նմանել բնութեան, իսկ անդ կամի իմն բնութիւն նմանել արուեստի։ Սարդենիք և ազգ ազգ թփոց կազմեն անձեռա-

1 Պլին. գիրք Դ. գլ. 8. պաւսան. գիրք Գ։ հտ. 1. էջ 200։ Լիւ. գիրք ԽԴ. գլ. 6։

2 Պլին. անդ։ Եղիան. զան.

3 Թէոփր. բուսաբան. գիրք Դ. գլ. 6։

գործ կամարս և Թատրոնս , նախանձ գեղեցիկ բերեալ ընդ ծառաստանս տնկեալս 'ի սորոտ Ողիմպեայ լերին ։ Պորգոյ իմն օրինակաւ ծածկէ բաղեղն զժայռս , և պատառիճք զբունովք ծառոց սողոսկեալ՝ զգեցուցանեն զնոսա [1] , և կողերք նոցա հիւսեալք ընդ միմեանս՝ կախին որպէս զզըրասանգս և իբրև զձօձանակս ։ Այլ համառօտիւ իսկ ասացեալ , ամենայն ինչ 'ի չքնաղ վայրսն յաւելու շուք գեղապանծ . ամենայն աւստեք պարարին աչք , և հոգին կենդանանորոգ զուարթանայ ։

Ոչ ինչ են զարմանք զի Յոյնք , եռանդունք զգայութեամբք , և բնակեալք 'ի Ջերմայոտ նահանգս , յիմարին 'ի տեսիլ և 'ի յիշատակ իսկ չքնաղագեղ հովտին ։ Ի համառօտագիծ պատկերս յայս , զոր ահա նկարագրեցի , պարտ է յաւելուլ և զգարնայնոյն կիտուածս ծաղկանց՝ որովք հովիտն այն ծածկի , և զդալարալից բազմերամ անհամար Թռչնոցն որ անդ գեղգեղեն [2] , անմայութեան վայրացն և քաղցրախառնութեան եղանակին մատուցանելով նոցա նուագս գողտրիկս և յոյժ խանդաղատեալս ։

Այս գնայաք մեք մեղմաքայլ ընդ գնացս Պենէոս գետոյ , և աչք իմ Թէպէտ ձգեալ'ի բազում այլ ինչ զուարճալի տեսարանաց՝ 'ի գետ անդր

1 Եղիան . ձան . պատմ. 2 Պլին . գիրք Դ . գլ . 8 . գիրք Գ . գլ . 1 ։ Պլին . գիրք հտ . 1 . էջ 200 ։ Փ.Պ. . գլ . 44 . հտ . 2 . էջ 41 ։

ստէպ ղատնայլին ։ Մ՚եւլթ զցոլս ալեաց նորա նըշմարէի ընդ մէջ սաղարթաց՝ որ զեզերբք նորա առնեն հովանի՛, և մերթ ՚ի գետեզրն մառուցեալ՝ զխաղաղ ընթացս ալեացն նկատէի, որ զոգցես լինի օգնեալք իրերոց՝ անձիգն և անխռով զործելին զեւրեանց ասպարէզն ։ Ասեմ ցԱմինատր. Ա. յայտնի է սուրբ և խաղաղ հոգի. առաքինութիւնք ՚ի նոսա յիրերաց ծնանեին, և գործակիցք են միմեանց. և սուրբք յառութեանց ստորք ՚ի նոցունց՝ պայծառագոյնս ևեթ զնոսա գործեն ներհական ։ Այլ Ամինատր ասէ ցիս. Այժմ իսկ և զպատկեր փառաւորութեանն տեսցես, համդերձ դժնդակ արգասեօքն ։

Այլ տարաւ զիս ՚ի կատարն մի Սոսայ լերին, ուր Տիտանեանցն ասեն մարտուցեալ ընդ դիս ։ Անդ ուղիս լինի սորընթաց դահավիժի ՚ի ձոր քարաժայռ, թափով հոսանացն զժայռանն դղրդելով ։ Այլ հասաք ՚ի տեղի մի, ուր կոհակք ջրոյն բըռնադատեալ, ձգնէին յանցս. և բաղխեալք ընդ միմեանս՝ փրփրադէզ ՚ի վեր ամբառնային, և անկանէին մանչելով ՚ի վիհ՝ ուստի յորձանապտոյտ մոլեգնագոյնս անդրէն յիրեարս յորձակեալ խորտակէին ցնդեալք ընդ օդս ։

Այլ մինչդեռ պակուցեալ կայի ընդ ահագին տեսիլն, ամբարձի զաչս իմ և տեսի, և ահա լերինք աստի և լերինք անտի ամբառնային առ իրեա նսեմաստուերք, անջրդիք, և ակօսաձև խորաձոր

¹ Պլին. գիրք Դ. դլ. 8. հտ. 1. էջ 200։

մինչև 'ի բարձունսն սեպացեալք ։ Օլանջիւք նո-
ցա առնուք Թանձրադանդաղք ընդ մէջ տխուր մայ-
րեացն տատանելին, կամ զառնել ոստովքն Թան-
ձրամածեալ կայլին ։ Տեսի 'ի սոսորև զընուԹիւն
եղծեալ. լերինք փլուզեալք՝ ծածկելին աւերակօք
իւրեանց, ժայռս եւեԹ ընծայելով 'ի տեսիլ սպառ-
նալից և խառն 'ի խուռն շեղջակուտեալս զմի-
մեամբք ։ Այլ որ զօրուԹիւն խզեաց զգօղ մեծա-
զանգուած բլրոցն. հողմք ամեհիք հիւսիսոյ,
եԹէ դղորդումն երկրի 'ի հիմանց, կամ Թէ մե-
ծասաստ վրէժխնդրուԹիւն դիցն ընդդէմ հսկայ-
ից, ոչ գիտեմ ։ Այսպէս 'ի ձոր անդր ահաւոր
տեսցեն աշխարհականք զնկարագիր աւերմանցն՝
զոր ածեալ զեղուն զաշխարհաւ ։

ՓուԹացաք մեկնել 'ի վայրացն, և հնչիւն
ներդաշնակաւոր լարից[1], և խանդաղատելի եւս
ձայնք երգոց ձգեցին զմեզ յիւրեանս. քանզի
հասեալ գայր Թափօր կամ նուիրակուԹիւն
դեղփացւոցն, զոր յիններեակ ամն արձակեն 'ի
Տեմպէ[2] ։ Քանզի համարին Ապողոնի եկեալ 'ի
քաղաք իւրեանց պսակ 'ի գլուխ և ուղէշ 'ի ձե-
ռին 'ի սարդենեաց հովտին. և 'ի յիշատակ այ-
նորիկ արձակեն զնուիրակուԹիւնն, որում եղաք
ականատես ։ Չընտիր մանկտւոյն դեղփացւոց
կազմէր հանդէսն. որք առ եղերբք Պենէոսի զե-

1 Պլուտ. յղ. երաժշտ. հտ. Գ. էջ 1136 ։ Յիշատ. բանաս. կաճառոյն, հտ. 13. էջ 220 ։

2 Եղիան. զան. պատմ. գիրք Գ. գլ. 1 ։

տոյ ուղղեալ բազկին, մատուցին անդ զոհ շքով մեծաւ. և հատեալ ոստս 'ի սարդենւոյ անտի որով Սկյութին էր պսակեալ, անկան 'ի ջու երգով օրհնութեամբ։

Յետ հովտին յանդիմանն եղև մեզ տեսարան չքնաղագոյն. դաշտ բնակաւէտ և ծառախիտ, ուր գետն լայնաձոր և խաղաղագոյն 'ի գնացս, բազմապատոյտ կամակորութեամբն ոչ ևս զմեզ' այլ զբազում գետոց բերէ զկերպարանս։ Ասպարիզօք ինչ 'ի բացեայ երևի ծոցն Թերմայեան, և անդրր ևս նշմարի ցամաք կողմն Պալենէ, և 'ի հեռաստանէ լեառնն Աթոս' եզր մեծավայելուչ տեսարանին։

Խորհէաք դառնալ ընդ երեկս 'ի Գոննոս, այլ մրրիկ սաստիկ հարկեցոյց զմեզ կալ զգիշերն զայն 'ի տան Թեսաղացւոյ ուրումն առ ծովեզերըն, որ մարդասիրութբ ընկալաւ զմեզ։ Նա էր նորա լեալ ժամանակս ինչ յարքունիս արքային Կոտիւսայ. և մինչդեռ բազմեալ էաք յընթրիս, պատմեաց մեզ զհանգամանս ինչ իրացն նորա անծանօթս։

Սէ. Չիք 'ի Թագաւորս Թրակիոյ փարթամ և բարեկեցիկ և զեղխ քան զԿոտիւս. 'ի վերայ այլոց բազում ուստեք հասից, գան նմա ամի ամի քանքարք աւելի քան զերկերիւր 'ի նաւահանգըստից որ են նորա 'ի Քերսոն'[1]. սակայն հազիւ մեծութիւնք գանձուց նորա բաւեն 'ի սպաս խա-

1 Դեմոսթ. յԱրիստոկր. էջ 743։

հաւատութեանցն ։ Ամարայնի գեղջերեալ շրջի ար-
քունեօքն ընդ անտառս, ուր են ծառաստունք
ձեմելիք. և ՚ի գտանել ուրեք առ վտակաւ տե-
սիլ զուարճալի կամ հովանի զովարար, անդ
զկայ առեալ շուայտի ՚ի խնջոյս զեղխութեան ։
Այս արդ մոլի ՚ի ցնորս խիղճ՝ որ կարեկցութեան
ևեթ արժանի էր, եթէ յիմարութիւն զուգա-
կցեալ ընդ զօրութեան չվայրենացուցանէր զկիրս
յանդգնութիւն ։ Պղատոնիցեան ումեմն տարփիցի. Աթե-
նասայ տարփացեալ է ։ Հրաման ետ նախ միում
՚ի սիրուհեաց իւրոց զա̃ն անուանս Ա̃ծուհւոյն
կրել. այլ և ես այնու պատրանօքն բորբոքեալ ՚ի
ցանկութիւն, խորհեցաւ ածել կնութեան զնոյն
ինքն զաստուածուհին ։ Հանդերձեցան հարսա-
նիքն շքով մեծաւ յոյժ, յոր և ես իսկ հրաւի-
րեցայ անդր. և մինչ դեռ դէտ ակն կալեալ սպա-
սէր նա հարսինն, զինէհարեալ արբեցաւ ։ Այս-
մերձ ՚ի վախճան խնջոյիցն մի ՚ի Թիկնապահաց
նորա երթեալ պատուիրանաւ նորա ՚ի վրանն՝
ուր առագաստն պատրաստեալ էր, դարձաւ և
եբեր զլուր՝ զի չև ևս հասեալ էր Աթենաս.
և Թագաւորն նետահար սպան զնա ։ Զհետ նո-
րա միւս ևս ՚ի Թիկնապահաց զնոյն օրինակ սպա-
նաւ ։ Բայց երրորդին խրատեալ օրինակաւ ա-
ռաջնոցն, եկն և պատմեաց՝ տեսեալ զդիցուհին
յառագաստին, և զի վաղ իսկ հասեալ՝ սպասէր
արքային ։ Զայն իբրև լուաւ Թագաւորն, կա-
կածեալ Թէ գուցէ զրուցաբերն սիրելի լեալ

էր հալածման՝ զայրագին 'ի վերայ նորա յար-ձակեցաւ, և կեղեքեաց զայրն ձեռօք իւրովք[1]:

Զայսոսիկ պատմեաց մեզ Թեսաղացին: Իսկ յետ սակաւ միոյ Հերակլիդէս և Պիթոն եղբարք դասակից լեալ ընդդէմ Կոտիւսայ, զրկեցին զնա 'ի կենաց: Աթենացիք շնորհապարտք երբեմն նոցին և ապա դժգոհեալք ընդ նոսա, 'ի սկըզբանն թագաւորութեան նորա հրամայեցին նմա պսակ ոսկի և զքաղաքացւոյ կարգ և պատիւ տանել. իսկ յետ մահու նորա զնոյն պատիւս և պարգևս սպանողաց նորա ետուն[2]:

Դադարեաց մրրիկն 'ի գիշերին, և զարթեաք՝ և ահա հանդարտեալ էր ծովն, և երկինք պայծառացեալք: Դարձաք 'ի հովիտն, և տեսաք զհանդերձանս տօնիցն՝ զոր Թեսաղացիք ամի ամի կատարեն 'ի յիշատակ սասանութեան երկրի, որով բացան անցք ջուրցն Պենեայ, և երևեցան գեղապայծառ դաշտք Լարիսայ:

Բնակիչք Գոննոսի և Ոմողեայ և այլոց մերձաւոր քաղաքաց հասանէին 'ի հովիտ անդր զհետ միմեանց. բուրմունք խնկոց ծխէին շուրջանակի, և գետն ծածկեալ էր 'ի նաւակաց որ երթևեկէին անընդհատ: Ի ծառաստանս, 'ի դալարուտս, յեզերս գետոյն, 'ի կղզեակս, և առ աղբերբք որ 'ի լերանցն բղխէին, ամենայն ուրեք պատրաստեալ էին սեղանք: Եւ այս ինչ առանձինն տօ-

1 Աթեն. գիրք Ժ.Բ. գլ. Ց. էջ 531:

2 Դեմոսթ. յԱրիստոկր. էջ 744:

նոցա է, զի և ասորականք սոսա ընդ տէրութեամբ խառ-նէին, մանաւանդ զի և սպասաւորքն 'ի տերանցն. և զնորոգ իշխանութիւն այնու համարձակութեամբ 'ի կիր արկանէին, մինչև երբեմն զառածանել 'ի ժառանգութի. սակայն և այնու զխնձոյս ուրախութեանն յաճախեն: Ի բերկրանս սեղանոյ յաւելան պար և երաժշտութիւն և բազում այլ ևս հրահանգք, ընդ ժամս ձիգս զեղխելոց երկարաձգեալ:

Ի վաղնջուց անտի դարձեալ մեք 'ի Կարնոս, և յետ աւուրց ինչ դէպ եղև մեզ կալ 'ի զմին ա-զորելոյ ցուց: Իսկ յայլ քաղաքս Տիգրանայ տեսեալ էր իմ զայն[1], այլ լարխացիք ճարտարապետք են յայնմ քան զայլ ազգս Յունաց: Ի բացավայրս քաղաքին էր ասպարէզ մարտին. արձակեցին զուարակս բազումս, և հեծեալք ընդ թուոց զուարակացն զհետ մտեալ նոցա մորակէին զնոսա սլաքաձև խթանաւ:

Հեծեալք իւրաքանչիւր մէն մի վարեն զուարակ՝ առ երի նորա արշաւեալ, մերթ մղելով զնա և մերթ խոցս տալով 'ի նմանէ. մինչև պարտասեցուցեալ զնա, բուռն հարկանեն զեղջերացն, և յերկիր զնա տապալեն, առանց իջանելոյ յերիվարէն: Ի զի և զփոփոխերախ զայրացնեալ զազանն, յոտարեն իսկ ուժգին՝ զգետնեն յանդի.

1 Պլին. գիրք Ը. գլ. 45. Եթենայ. գիրք Ժ. էջ 498: Հա. 1. էջ 472: Սուետոն. Սալմաս. 'ի Պոլլիոն. էջ 286: 'ի Կղաւդ. գլ. 21: Եղիոդ.

մանն անթիւ բազմութեան ՚ի վանս կացելոցն՝ որ զյաղթանակ նոցա դրուատեն ։

Տեսչութիւն քաղաքիս է ՚ի ձեռս սակաւուց ումանց դատաւորաց ընտրելոց ՚ի ժողովրդենէ, որք պարտ համարին փայփայել զնա, և փոխանակել ընդ անձնահաճ կամաց նորա զբարին իւր և զօգուտ[1] ։

Հանճարին բնապատումք, զի յորմէ հետէ բացան անցք ջուրցն լճացելոց բազում տարեօք զքաղաքաւն, օդք նորա անապականք եւս իցեն և ցրտագոյնք, երկու ինչ ունելով կարծեացն իւրեանց պատճառս. մի՝ զի յառաջագոյն տածիչ էր երկիրն ձիթաստանեաց, և արդ ոչ են ձիթենիք անդ խստութեան ձմերայնի տևեն. և միւս ևս՝ զի այգիք պաղին անդ յաճախ ՚ի ցրտոյ, որ յառաջ այսպիսի ինչ ոչ դիպէր[2] ։

Այս էին աւուրք աշնայնոյ. և քանզի բարեբաստ է յոյժ աշունն ՚ի Թեսաղիա և երկարաւուն[3], շրջեցաք ուրեք ուրեք ՚ի մերձակայ գեօղս նորա մինչև եհաս ժամ մեկնելոյ մերոյ անտի ։ Այս խորհուրդ կալեալ անցանել ընդ Սպերքիոս, յուղի անկաք ՚ի Գոմփի քաղաք կառուցեալ ՚ի ստորոտ Պինդեայ լերին ։

1 Արիստոտ. յղ. հասա. գիրք Ե. գլ. 6. հտ. 2. էջ 394 ։

2 Թէոփր. յղ. պատճ. բուս. գիրք Ե. գլ. 20 ։

3 Նոյն բուսաբան. գիրք Գ. գլ. 7 ։

ԳԼՈՒԽ ԼԶ.

Ուղևորել Անաքարսեայ յԵպիրոս, յԱկառնանիա և յԵտոլիա. և վասն Դոդոնեայ պատգամատեղւոյն, և զլեւկադեան սարին վազք:

ՊԻՆԴՈՍ լեառն բաժանէ ընդ Թեսաղիա և ընդ Եպիրոս. և անցեալք ընդ այն ՚ի վերայ քան զԳոմփի[1], մտաք յաշխարհն Աթամանաց: Անդ Թէև մեզ անդ գնալ ՚ի պատգամատեղին Դոդոնեայ, որ ոչ ինչ հեռի է ՚ի տեղւոջէն. այլ քանզի ընդ ձիւնախաղաղ լերինս հարկ էր անցանել, և ձմեռն խիստ սաստիկ է յերկրին[2], և զի պատգամատեղիս այնչափ էր տեսեալ ՚ի Դելփիս՝ մինչև տաղտկանալ մեզ և ոչ ևս ցանկալ տեսանելոյ, խորհեցաք գնալ դէպ ուղիղ յԱմբրակիա ընդ կարճոյ ճանապարհ, այլ ընդ դժուարուս[3]:

Քաղաքս այս հաստատուած ՚ի Կորնթացւոց գաղթեալք, առ Ամբրակեաւ * համանուն ծոցոյն կառուցեալ կայ[4]: Յարևմտից նորա հոսէ Արեթոն

1 Լիւ. գիրք ԼԲ. գլ. 14:

2 Հոմեր. Եղիակ. Գ. տող 750:

3 Լիւ. անդ. գլ. 15:

* Ծոցս այս այն իսկ է, յորում առաջս հռչակաւոր ճակատամարտն Ակտիոնի մղեցաւ: Դոյցէն խնդրողք զնեղագիծ պատկեր նորա և զերկարագրութիւն ՚ի գիրս յիշատակաց ճեմարանական կաճառոյն. հտ. 32. եր 513:

4 Ստրաբ. գիրք Է. եր 325:

գետ, և յարևելից միջօրէականն կայ 'ի բլրի։ Ընդարձակ պարտիզաց նորա են ապարանքը իւր քաղաքն և չորք[1]. առ 'ի ներքս՝ մեհեանք և այլ ևս գեղեցիկ կերտուածք ձգեն յիւրեանս զաչս անցորդաց[2], իսկ արտաքոյ դաշտք բազմածաւալք բազմաբերք[3]։ Զաւուրս ինչ եղեալ անդ, անդէկացաք մեր 'ի վերոյ ինչ զԼակոնիկեայ։

Լեառն Ակինդոս յարևելից, և 'ի հարաւոյ անհիւրընկալանն ծով անջրպետեն իմն ընդ Լակոնիա և ընդ այլ աշխարհաւն Լակոնիայ։ Պարիսք բարձրագոյնք լերանց ծածկեն զմիջերկրայս աշխարհին, և 'ի ծմերգեայս նորա զուարճալի անտառաւորք են և պտղալից դաշտավայրք[4]։ Ի գետոյ որ զաշխարհն առողանեն՝ անուանի է Եւրոտաս, որ 'ի հանգնումն իւր անկանի ծովակին. և Լակոնիոյ, որոց ջուրք անապատանք են 'ի ճաշակ[5]։ Նոյն է և մայրն անուանեալ Նորինա կամ Նելինա, աւասիկ առողինք առավանդանիչք օդոց եղանեն[6]։ Ի կերպարանաց տառի անդուոյն յայտնի է, զի անդ եղին հիմք զգածոյս։ Օր 'ի մարմնոյ ժամանակս անդր քան զԼակոնիա չէր ընդ արևմուտս այլ անկեալ ծանօթ, նախնի իսկ և հանրաքեպ գաւառ առաւելոց։ Նա ընդ հեռանալ եղերաց երկրի ընդ մուտս արևու,

1 Լիւ. գիրք ԼԸ. գլ. 4։

2 Դիկեարք. յաշխարհագր. հա. 2. էջ 3։

3 Պոլիբ. հատուածք, գլ. 27. էջ 827։ Լիւիոս. անդ, գլ. 3։

4 Ստրաբ. գիրք Է. էջ 324։

5 Պաւսան. գիրք Ա. գլ. 17. էջ 40։

6 Նոյն. գիրք Թ. գլ. 30. էջ 768։ Պլին. գիրք Դ. գլ. 1. էջ 188։

փոփոխեցան վայրք դժոխոց, մերթ յԱստղիս և մերթ յԱպեռիա, այլ միշտ 'ի կողմն՝ ուր թուէր տուընջեան չիջանել:

Ասիրոյ նաւահանգիստք բաղումք են քաղաղեալք. և բերէ երկիրն ընդ այլ բերս և ձիան թեթևընթաց, և զարդ զամիռայից 'ի պահպանութիւն հօտից, և որք հանդոյն իմն եղկիրացւոց՝ առ դոյզն ինչ իրաց բերդին 'ի կատարողութիւն[1]. Այն անդ և չորքոտանիք ոմանք անտառականք մեծութեանք. որպէս զի մարթել յոտին կալով կամ սակաւ ինչ խոնարհեալ կթել զկաթն կովաց, որք յոյժ առատաբերք են կաթին[2]:

Լուայ զի 'ի սահմանս Աքաւնացւոց է աղբիւր, որոյ աղի են ջուրք. և առ 'ի հանել 'ի նմանէ զաղն, եռացուցանեն զայն. և ջրոյն 'ի գոլորշի ցնդեալ, մնայ աղն սպիտակ իբրև զձիւն[3]:

Իսկ 'ի զաղթականաց ումանց Յունաց որ 'ի կողմանս կողմանս Ասիրոյ բնակեն, են յաշխարհի անդ չորեքտասան ազգք վայրենիք, բազմագոյնք 'ի նոցանէ խուժադուժք, սիրեալք յաւանս[4]: Կէսք 'ի նոցանէ 'ի ժամանակս ժամանակս կայցեն ընդ զանազան կարգօք տեսչութեան. իսկ այլք, որպէս մողոսացիք, իբր յհնումն զարուց հեռաց հնազանդին թագաւորաց անդրատին 'ի նմին ալ-

1 Եղիան. յղ. կենդան. գիրք Գ. գլ. 2: Սուիդ. 'ի բառն Μολοσ.

2 Արիստոտ. պատմ. կենդան. գիրք Գ. գլ. 21. հա. 1. էջ 812:

3 Նոյն. Նշանք օդ՝. գիրք Բ. գլ. 3:

4 Թէոփ. առ Սարդապոնի, գիրք Է. էջ 323:

զատոհմէ։ Իսկ ազգատոհմն այն մի 'ի վաղնջա-
կանացն է և յերևելագունից Իսպարտայ, սերեալ
'ի Պիւռոսէ որդւոյ Աքիլլեայ. և զաւակք նորա
որդի 'ի հօրէ ժառանգեցին զաթոռն, որ եկաց
միշտ անդրդուելի։ Իմաստասէրք ամենք զպատ-
ճառս երկարատևելոյ պետութեան իմանան զանձ-
կութիւն գաւառացն, որ էին երբեմն ընդ նոքաւ.
քանզի համարին ըստ նուազագոյն զօրութեան իշխա-
նաց՝ նուազ 'ի նոսա գոլ զփառասիրութիւն և
զձգտումն 'ի զօրութիւն։ Սովորութիւն իմն
անյեղլի հաստատուն ունի զպետութիւնն. զի 'ի
թագաւորել արքային՝ ժողովի ազգն 'ի մի 'ի գըր-
խաւոր քաղաքաց. և յետ օրինաւոր պաշտամանց
կրօնիցն՝ երդնուն թագաւորն և ժողովուրդն
յանդիման բազմաց, նա՛ 'ի թագաւորել ըստ օրի-
նաց, և սոքա 'ի պահպանել զթագաւորութիւն
նորա ըստ նոցին օրինաց։

Սովորութիւնս այս յանցեալ դարու սկիզբն
կալաւ, և արար փոփոխումն մեծ 'ի կարգ տեսչու-
թեան և 'ի բարս ժողովրդոց[1]։ Մի 'ի թագա-
ւորացն նոցա եթող 'ի մեռանելն իւրում որդի մա-
նկին. նոցա ոչ էին կարևորագոյն քան զդաստիա-
րակութիւն արքայի մանկանն համարեալ, յանձն
առարին զայն արանց իմաստնոց. որք խնամ կա-
լան դաստիարակել զնա ազատ յամենայն զրգա-
նաց և 'ի մարդահաճութենէ։ Ծծին զնա յԱթէնս

[1] Պլուտ. 'ի Պիւռ. հտ. 1. էջ 383։ Ցուստին. գիրք
ԺԷ. գլ. 3։

և անդ 'ի հասարակաց պետութեան ուսեալ զպարտս իշխանաց և ժողովրդոց առ միմեանս, 'ի դառնալն իւրում եւս օրինակ մեծ, առեալ ժողովրդեանն. Արարի է իշխանութիւնս, կամիմ սահմանել զայն: Այս կացոյց իւր ատեան խորհրդոց և օրէնս և դատաստանս: Այսպէս քաղաքաւարեցին գիտութիւնք և արուեստք խնամովք նորա. և մողոսացիք 'ի սէր նորա գրաւեալ, և 'ի վայրենի բարուցն զգօնացեալ, կալան 'ի մէջ խուժադուժ ազգաց եպիրացւոց զգերակայութիւն՝ զոր գիտութիւնք մատուցանեն:

Ի հիւսիսային կողմանս Եպիրոսի է քաղաքն Դոդոնէ, ուր է մեհեան Արամազդայ, հնագոյն քան զամենայն դաբիրայս Ելլադայ[2]: Ընդաստին 'ի ժամանակաց, յորում աղօտ իմն էր առ բնակիչս երկրին դիցակրօնութիւն, դաբիրն այն կայր, և աչք նոցա 'ի հանդերձեալսն ձգտէին հետազօտք. զի է և է իսկ ցանկութիւն կանխագիտութեան մի 'ի վաղնջական ախտից մարդկեղէն մտաց, և մի 'ի դժնդակագոյնիցն: Յոր և միւս այլ յաւելում ոչ ինչ թեթեւագոյն առ Յոյնս լեալ մոլութիւն, իմանալոյ պատճառս գերբնականս՝ ոչ միայն արգասեաց բնութեան, այլ և սովորութեանց և սահմանադրութեանց՝ որոց անծանօթ է սկիզբն: Որ ընդ կարգս աւանդութեանց նոցա ոք անցանիցէ, գտանէ զամենայն ինչ 'ի հրաշից առեալ պատճառս. հարկ էր ապա-

2 Երոդոտ. գիրք Բ. գլ. 52:

քէն և Դոդոնեայ պատգամաւորեղւոյն հանգոյն իմն ունել ակնածեալ, և ահա այսպէս քրմուհիք մե-հենին աստուածեան զայն¹ ։

Աղաւնիք երկու Թխատեսակք Թռուցեալք յե-գիպտականն Թեբայիդայ, չուեալ ասեն՝ մին 'ի Լիբիա, և միւսն 'ի Դոդոնէ ։ Որ 'ի Դոդոնէ ե-կացն, դադարեալ 'ի կաղնւոջ՝ յստակ բարբառով պատուէր ետ կանգնել 'ի տեղւոջն զատեան Արա-մազդայ ։ Զնոյն պատգամ և միւսն լիբէացւոց ետ ․ և համաձայնեցան երկաքանչիւր պատգամարանք յերեսաց դից ։ Բայց Թէպէտ և այսպիսիք առաս-պելք, այլ զգոյշ ճշմարտութեան իրացն ունէին յիմնարանս ․ քանզի առ քուրմս եգիպտացւոց ա-ւանդութիւն է, քրմուհեաց երկուց փիւնիկեան առեւանգութիւնս նոցա բերեալ երբեմն 'ի Դո-դոնէ և 'ի Լիբիա ․ և 'ի լեզու հին եգիպտացւոց՝ նոյն և մի բառ նշանակէ զաղաւնի և զկին պա-ռաւ² ։

Դոդոնէ առ ստորոտով Տոմարայ լերինն կայ, ուստի բղխեն աղբիւրք բազումք անսպառք³ ։ Նա-մանայն փառք նորա և մեծութիւնք յեկացն է տաճարաց, որք զիմեն անդր առնուլ հրաման պա-տասխանւոյ ։ Մեհեանն Արամազդայ և որ շուրջ զնովաւ գաւիթքն զարդարեալ արձանիւք յանթիւ

1 Երոդոտոս, գիրք Բ․ գլ․ 55 ։

2 Ստրաբ․ յաշխարհագր․ գիրք Է․ հա․ 2․ էջ 103 ։ Սերուիոս, 'ի մեկն․ Վիրգիլ․ 9․ տող․ 13 ։

3 Ստրաբ․ գիրք Է․ էջ 328 ։ Թէոպ․ առ Պլինեայ, գիրք Դ․ գլ․ 1 ։

բարեպաշտութեանէ անզգայեաց և նուիրաց, որ զերեթէ յամենայն աշխարհաց երկրի էին անդր նուիրեալ[1]: Այնչ նշանաւոր ամենայնի էր անտառն մեհենականն անխուլ խոխոր կաղնեբերքն, յորոց միջն կոչէր զխուցականն կամ մարգարէականն, զոր կրօնաւորութիւն ժողովրդոց 'ի բարեխնամող զարդուց տրդատագանեաց[2]:

Ոչ լինել հեռի 'ի մեհենէն է աղբիւր, որ զոհ-ջրառութ ցամաքէր զօրհանապազ, և 'ի հասարակ գիշերի յորդէ առատագոյն. այլեւս զի որ բոց օրէ առնել ջուրցն և նուազել, մինչեւ յերկայքեան չիւրմն առնէրա ծայրայեղ փոփոխմանն: Յաւելուն և այլ իմն զնմանէ զարմանահրաշ. զի ջրոյն զՋահս բորբոքեալս յանկարծակի անդր շիջուցանելով, զշիջուցեալսն ևս բորբոքանէ 'ի մերձեցուցանել 'ի ջուրսն զոյգն իմն 'ի բացէ[3]*: Տանուտաւան Պղնձեայ Ճահիճք էին, այլ եւ երկիրն զերեթէ առ հասարակ բերրի է յոյժ, և բազմերամն խաշանց Ճարակաւորք 'ի գեղեցիկ արօտսն շրջին[4]:

Քրմուհիք երեք կային անդ առաւ զհրամանս պատասխանատուութեան դիցն[5]. այլ բէովտացւոց արժան է առնուլ զայնս 'ի քրմաց պաշտօնէից մեհենին[6]:

1 Պողիբ. գիրք Դ. էջ 331. գիրք Ե. էջ 358:

2 Պաւսան. գիրք Ը. էջ 643:

3 Պլին. գիրք Բ. գլ. 103. հտ. 1. էջ 120: Մելա, գիրք Բ. գլ. 3:

* Ցեակցոյ մնացեալն 'ի ան-զեկուցիւնն. Թիւ ԺԱ:

4 Ասիոդ. առ Ստրաբոնի, գիրք Է. էջ 328: Եսքիլ. 'ի Պրոմեթ. Սոփոկլ. 'ի Տրաքին. տող 1183:

5 Հերոդոտ. գիրք Բ. գլ. 55: Ստրաբ. գիրք Է. էջ 329:

6 Ստրաբ. գիրք Թ. էջ 402:

Իշխանցն հարցեալ երբեմն նորա զդխան վասն առաջիկայ պատերազմին, առին պատասխանի 'ի քրմուհւոյն՝ թէ Ամպարշտեցարուք և յաղթեսջիք ձեզ։ Այս կասկածեալ զի կուսակից թշնամեացն էր հարցուկն, արկին զնա անդէն 'ի հուր. զի ասէին, Եթէ ստէ քրմուհին, մահապարտ է. իսկ եթէ խօսի զճշմարտութիւն, հնազանդեցաք նմա 'ի գործել զամպարշտութիւն։ Իսկ այլոց երկուց քրմուհեացն պարտ վարկուցեալ ջատագով կալ եղկելւոյն, ասէին՝ թէ պատգամ դիցն էր բիովտացւոց բառնալ զեռոտանին նուիրեալ 'ի մեհեան իւրեանց, և բերել յԱրամազդայն 'ի 'ի Դոդոնէ։ Այս յայտնեաց հաւանեցաւ մինչև տալ հարցկին հրաման պատասխանւոյ բիովտացւոց։

Նաւորաց օրինակօք յայտնեն դիք զգաղտնիս իւրեանց քրմուհեաց մեհենին։ Ի զի 'ի սրբազան անտառին կալով քրմուհեաց առ դիւցական կաղնեաւն[1], լսել զշրշիւն տերևոց նորա շարժելոց 'ի զեփիւռից կամ 'ի ճարճատութիւն ոստոցն բախելոց 'ի մրրկէ. և է զի զկայ առեալ առ աղբերբ՝ որ առ արմամբ կաղնւոյն բղխէ[2], 'ի լուր խոխոջմանց յորձնեռամողն ալեաց նորա փախրստելոց, և քաջ 'ի միտ առեալ զաստիճանս և զկցորդութիւն ձայնիցն՝ որ հնչեն 'ի լսելիս իւրեանց, զու-

1 Համեր. Ոդիս. գիրք ԺԴ. տող 328։ Եսքիւղ. 'ի Պրոմ. տող 831։ Սոփոկլ. 'ի Տրաքին. տող 174։
2 Սերուիոս, յԵնէականն Վիրգիլ. գիրք Գ. տող 466։

շակեն նոքօք զհանդերձեալսն, մեկնելով զնոսա ըստ կանոնաց՝ զոր ինքեանց սահմանեալ է, և յաճախագոյն ևս ըստ ցանկութեան հարցողացն։

Օնոյն օրինակ գուշակեն և 'ի զօղանջիւն բախ-ման յերկաթս անօթոց պղնձեաց կախելոց շուրջ զմեհենաւն[1]. որ զի խիտ առ խիտ կան զետե-ղեալ, միոյն ևեթ բաղխմամբ՝ համայն անօթոցն բազմութիւն շարժեալ ղօղանջեն։ Այլ քրմուհւոյն ուշ եդեալ խառնաձայն և եղանակի և նուագման ձայնիցն, բազում ինչ 'ի խառնաձայն ղաշնակու-թենէ առնու գուշակել։

Այլ ոչ այսչափ միայն, այլ և սիւնք կրկին մերձ 'ի մեհեանն անդր կանգնեալ կան[2]. 'ի վերայ միոյ 'ի նոցանէ է անօթ պղնձի, և 'ի վերայ միւ-սոյն պատկեր մանկան, և խարազան ճապուկ 'ի ձեռին նորա յերից շղթայից մանուանց պղնձեաց, և կոճակք 'ի ծայրս նոցա։ Այլ վասն զի յաճախ են հողմք 'ի Դոդոնէ, զրեթէ միշտ անընդհատ բաղխեն շղթայք զանօթն՝ հնչիւն առնելով ձիգ[3]. և քրմուհիք չափմամբ ամանակի հնչմանն յարմարեն զայն 'ի պէտս իւրեանց։

Է և այլ օրինակ հարցանելոյ զդիս վիճա-կաւ. քանզի պիտակս կամ վարկս 'ի սափորի ե-դեալ, հանեն ըստ բախտի։ Դէպ եղև սպար-

1 Մենեգ. առ Ստեփ. 'ի բառն Δωδών. ծաղկաքաղ 'ի Դոդոնի: Եւստաթ. յՈդիս. գիրք ԺԴ. հտ. 3. էջ 1760:
2 Արիստոտ. առ Սուիդ.
3 Փիլոստր. պատկեր. գիրք Բ. գլ. 34. էջ 859: Ստրաբ. յաշխարհագր. գիրք Է. հտ. 2. էջ 10:

տացուց 'ի դիմերն ուրեք 'ի պատերազմ՝ հարցանել ըստ ամէն օրինակի զդէս վասն երեց արշաւանէին. և կատարել արքայէին Մողոսաց տատուցեալ 'ի սեղան անսպր յորոց մերոյ սափորին կայր, կործանեաց զայն, և զմիջնակին ցրուեաց: Յայնժամ քրիստոնէից դարձի հարեալ ապաշխարեաց, փութալ սպառնացեալ յաղագս ձեռն զփրկութիւն խոստովանեալ 'ի բաց եղեալ զջանակութիւն յաղթութեանն: Այս հրեշտակային զարդերում 'ի Սմարանա, զուժեցին զայն. և արհամարհը համարոյն այնմ չէին երբէք լեալ 'ի պատերազմին այդքին[1]:

Պատգամքն բաղումք զողջմեամբ հաղորդէին պահէին առ աԹենացիս. զմի յայնցանէ ասեմ, առ 'ի քաղաքացեայ առնել ողջախոհ լինել նմա. « Ասա հրամանն պատասխանւոյ քուրմին Աստուածոյն աԹենացւոց այս: Ջնջ ժամանակ զոհից և հրեշտակութեան, և ընդդէմ տաղաւարացն. յղեցէք վաղաղադիսն հրեշտակս, որք ընդ նաւէիւ աւհանենեալս 'ի ժողովրդեանն բերցեն Աստուածոյն երկնալինի ակոսաձիգս, և ընդ միում միում յեղանակն ոչխարս կրկին. և Պրիամեայ նաւիգեղ բաղդին պղնձի և եզն մի և այլ զոհս »[2]: Այս էր Պրիամէ զաւառ Արկնից. և ընդ նաև Աստուածոյ բաժանէ զխոստմնկին՝ որ ծխէին 'ի մեհեանն 'ի Պադմէ[3], փառաւորութեան նորա օգնելով 'ի յաջողութիւն զոհից և նաւիրաց մատուցանն:

1 Կիկեր. յղ. հմայ. հա. 2 Դեմոսթ. 'ի Միդ. էջ 611:
3. գիրք Ա. գլ. 31. էջ 30: 3 Ստրաբ. գիրք Է. էջ 329:

Զայս ամենայն պատմեցին մեզ յԱմբրակիա: Բայց ձմեռն մերձենայր, և հանդերձեալք մեկնել 'ի քաղաքէն. և գտեալ նաւ մի վաճառականի՝ որ գնայր 'ի Նաւպակտոն քաղաք կառուցեալ 'ի ծոց Կորնթոսայ, մտաք անդր ընդ այլ ուղեկիցս. և 'ի հաստատել պարզութեան օդոցն, ելաք 'ի նաւահանգստէն Ամբրակիոյ: Ընդ աւուր եղև մեզ անդէն ցամաքն կղզին Լեւկադեայ, որ ընդ նեղուց մի անձուկ յոյժ կցորդի ընդ ցամաքի: Տեսաք մեք անդ նաւաստիս, որք առ 'ի չսպասելոյ զցամաքաւ կղզեաւն՝ զօրութեամբ բազկի ածէին զնաւն ընդ ցամաքն յայնկոյս ներքին[1]: Այլ զի ստուարագոյն էր նաւս մեր, խորհուրդ կալաք քերել զարևմտեան ափամբք Լեւկադեայ, և հասաք 'ի ծայր անդր նորա ուր սարուանդ բարձրաբերձ ամբառնայ ուղղորդ սեպացեալ, և 'ի կատար սորին մեհեան Ապողոնի, զոր նաւաստեաց 'ի հեռուստ նշմարեալ՝ ողջունեն: Անդ յանդիմանն եղև մեզ տեսարան քան զամենայն տեսիլս ահարկու[2]:

Բազմութիւն նաւակաց շուրջ պատեալ կային զստորոտովք հրուանդանին, և ամբոխ բազում ձգնէին 'ի ծայր անդր նորա հասանել. կէսք առ մեհեանն զկայ առնուին, այլք ընդ սեպս ժայռից սողակէին, լինել ականատես նորանշան տեսլեանն: Շարժմունք նոցա ոչ առ-

1 Թուկիդիդէս, գիրք Գ. գլ. 81: 2 Ստրաբ. գիրք Ժ. էջ 452:

կածից մինչ էին զուժկանք. և մինչ գնա անձր-կեւան 'ի զնին կայաք, և ահա տեսաք 'ի միում 'ի սեպոց ժայռին զռադռամն յանկարծակի անուր, զի բուռն հարեալ զառնէ միաչէ մղեցին զնա 'ի ծով. և հնչեաց յամենեցունց աղաղակ ցնծութեան, որ 'ի վերայ լերինն և որ 'ի նաւակսն կային: Իսկ այրն ընկեցիկ շուրջ պատեալ էր փետրովք, և թռչունք 'ի նա կապեալ էին՝ որ թևօքն սաւառնելովք յամեցուցանէին զանկումն նորա: Այն մինչ եհաս նա 'ի ծով, և ահա ամենապատրաստ հասին նմա նաւակք յօգնութիւն. և առեալ զնա 'ի ծովէ, զամենայն խնամս գթոյ բարեկամութեան արարին ընդ նմա[1]: Իսկ ինձ 'ի սկզբբանն այնպէս պակուցեալ, զի աղաղակեցի և ասեմ. Այսպէս խաղ առնէք զկենօք մարդկան, ո անողորմք: Այլ որք 'ի նաւսին էին ընդ իս՝ զուարճանային ընդ պակուցումն իմ և ընդ ցասումն: Սաապա մի ոմն, քաղաքաւ Ամբրակեցի, ասէ ցիս. Սովորութիւն է ժողովրդեանս ամի ամի 'ի ամէն աւուր կատարելով զտօն Ապողոնի, նուիրել աստուածոյն զոհ քաւութեան, որպէս զի ամենայն պատիժք պատուհասից սպառնացեալք 'ի վերայ ազգին՝ 'ի գլուխ զոհելոյն թափեսցին: Վասն որոյ ընտրեն զայր մի մահապարտ, և զոհն ուրեք պատահէ նմա հեղձանել յալիսն. այլ 'ի կեանս 'ի վտանգէն՝ աքսորի անդարձ 'ի սահմանացն Լեւկադեայ[2]:

[1] Ստրաբ. գիրք Ժ. էջ 452: [2] Նոյն անդ:

Այս յաւել ամբարտաւանեցին. Մնացել եւս յոյժ զարմանալիս, եթէ զխոտեցեալ ողորմութ լինել Նորածեալն կարծիքն էին առ Սոյնս. քանզի հանելին դեղ հզօր 'ի բժշկութիւն մոլեգնութեան սորա վարդել ընդ Նեստոր[1]: Բաժանումն 'ի ատարկուծխոյ չարափառութեան ելեալ 'ի Նեստորէ, եւ 'ի նորա այգւոյ եկեալ, եւ զօրհս 'ի մեհեկեանն Պարսպանի մնացացեալ, եւ եղեալ ախտ անողորմ հասեալ զամենեսին 'ի ծով, զանհնարին 'ի վախճանց այսոր մնացեալն անխոհ: Այս առաւելեաց բժշկութիւն լինել անհնարին յախտացեալս որովք լցեալ էին. եւ թէպէտ զայլս, պատասխանն զեղծանուցեալ ուսմունք որ էր 'ի Բաթսամայն քաղաքէ, զի առ ամենայն ուխտն բազմացեալ 'ի ստամբակս, չարեաց անդ ընդ վարդապետն Հանդիպին յարձակաթեւ[2]: Նալ բաղդանոց ոչ զգուշացեալ 'ի մեղանել զԹադեւոս զանհնարին անսկզբնական, զբեթէ առ հասարակ կորեան, եւ յաճախել խաղ կանոնաց եղեն ձեռամբք ողորմելիք վարդապետն:

Այս խաղ ատեաներն անդ 'ի Նեստոր զգեւորեզանն Մշակապետք բազմաձեռնական դշխոյին Կլաւդեայ, այն որ զբարոզ ապաւինութեանն 'ի Ձանկաստանեաց Սարգսիսեայ գործոյ[3]: Այսպէս վարեալ սատանի աստուածութ 'ի սէր ուրանալ պատանաց, եւ զի նա ոչ փոխադարձէր խաղ զանէ, եհաս 'ի վերայ Նորա մինչ ննջէր, եւ խլեաց զաչս Նորա: Այս առաւ

1 Գողոտ. Հեփեստ. առ. փոքոյ, էջ 491:

2 Նոյն անդ:

3 Եւագրիոս, գիրք Ը. գլ. 87:

Թափիծք մեռելոյն · խղձի և յուսահատութիւն վարկեցին զնոսա 'ի Լեւկադ, և անդ յանկանս կորեան՝ հանդերձ ամենայն ճղամբք այսոց 'ի վերայ լերինն[1]:

Այսն և երկրորդն Սաղամանայ երկու վախճան. քանզի քերեալ 'ի Փաւանեն տարափանօքն խաղեն, զխեղդեալ այսր 'ի ափափումն մեզնայն, և երկու ըն-թաց[2]: Յարափածից սորա այնպէս անհամեմատ լեալ վարկին ընդ Լեւկադ, մինչ զգետին ող եա ա-մեք 'ի տարափանօսոյ նանանել անհամեմատ ա-ափց նոցա:

Այս յառաջ կոյս նաւարկեալ տեսանք յանդէ զԹափեանն և զԷրեփաղեննեան կղզիս, և յանհե-կէ զծովեզերս Ակարնանիոյ: Յակարնանիսս են քաղաքք ոմանք երևելիք[3], և քաղաքութիւն անուր անուր տասնից[4], և այլք քաղաքաց այլազգաց Մասակամենսաք 'ի մի նախաւանաւորութիւն: Այլ զգետին միշտ 'ի պատերազմի կամ ընդ Աւանանացիս խաբեանց եսոտաղաքիս, զորս անձնագրեալ 'ի նաւանէ Մակեդոնաց զերս: Այս են ահաստանեաց Հառաստա-նիքե 'ի բանս խաբեանց, և յայժ նաւանանանորդն-դիրք ազատութեան[6]:

Այս անցեալք առ ափաղեան՝ առք Մակեդոնաց քա-ղանացեալ Թառկի 'ի ծով, քերելսար զորն աղջոյն

1 Պտղոմ. Հեփեստ. առ Փոտայ, էջ 491:

2 Մեծամեծք առ Սողոմոնի, գիրք Ժ. էջ 452:

3 Թուկիդիդ. գիրք Բ. գլ. 102:

4 Դիոդոր. գիրք ԺԹ. էջ 708:

5 Ստրաբ. գիրք Է. էջ 331:

6 Պոլիբ. գիրք Գ. էջ 289:

զծովեզերեայս Ակառնանեաց[1] : Յետողիա են գաւառք աղգաստանեալք , և ընդակէ անտառ աղգ պատեալ պատ-մամբ : Նմա և այլ ժողովուրդք են 'ի նոսին . և բազ-մագոյնք 'ի նոցանէ ոչ են ընտիր Յոյնք , և անունք 'ի նոցանէ զհետս խժդժութեան բարուց յերեւեան , խառնեալ 'ի բազմաց զծուապատառս , և հանելեալք զոլով , և յանապատաստակս առանձ ընտանեցաւք[2] : Նոյն անձնեցանն 'ի մի օրէնս հասարակապետութեան միաբանեալ կառավարեն նախագահութեան հզօր արարեալ զախայե-ցւոցն և զԹեսաղացւոց և զԱկառնանացւոց : Նմա ամի 'ի ժողովել զանձինս հրեշտակք յեկեղեցին չեւրոցն արձակեցաւ 'ի Թերմոն քաղաքը , ընտրել իւրեանց գլխաւոր 'ի առաջնութիւն[3] : Սակայն երկե-լիք , խորդք և ամերք և խռովն բազմանութիւն մա-ծառայեց և հանգստացուցէք յաճախեն զշաւք և զմասն ժողովոցն[4] :

Նշանաւորեալք ոչ էին այն անձինք 'ի գաւառաց նախ-զանկանկցութեամբ և յուխտից . յորմէ հետեւէ զզգե-ցու պատմելպատ յերկրորդին աղգս առհամանակիցն նոցա , Թողուն վասն Թաւալեալ երկաբանելու 'ի մե-ծամաց , և այլս հրաւիրեալ 'ի մերձոյ նոցա յառերգա-ւածին զօրութ նոցա և կոչէին զայն առաւ առա-ջաց[5] : Չխառնայր աղջկան նոցա յաճախ ընդ

1 Դիկէարք . յաշխարհագր . Յունաստ . տող 63 . էջ 5 : Սկիւղ . յաշխարհագիրս , էջ 14 :

2 . Թուկիդիդէս , գիրք Գ . գլ . 94 :

3 Ստրաբ . գիրք Ժ . էջ 493 : Պոլիբ . Ծաղկաքաղ . հրեշտ . գլ . 74 . էջ 895 :

4 Պոլիբ . անդ , գիրք Ե . էջ 387 :

5 Նոյն անդ , գիրք ԺԷ . էջ 746 :

ծով, որպէս և ակնարկանացիքն և ըմպելեացք Ո-
զորք. զի առ ընտանեկիցս այնր կողմանն ծանօթերկերացն ոչ ինչ անմխրատութիւն հասանօղի կամ՝ նախատանէք երրադասկութիւնն այն ։ Նայոքիկ հերոք են բա- րուց նախնեաց հոլլենացն. վասն այսորիկ իսկ և 'ի ժամանակի խաղաղութեան ոչ երրեքե զենեն զգէնս 'ի բաց ։ Նահագիքեր են հեծեալք նոցա 'ի զինուոր առ զուծող պատերազմ, այլ 'ի ձիավարել անսղելի ոչ այլանդխելք. իսկ թեառաջնոյն պարտիմն հաշւառակ նոցին անտնիկեքն ։

Յարևելից կողմն Սքեղջաս գետոց զառանցն ու- ոկրածանք, եւ և 'ի կողմն հիւսիսոյ մինչև 'ի գետն՝ Սպերքէոս 'ի Մելիակիս ։ Ի ծայրս ևեթ՝ եր- կայնաձիգ առահմանաց երկրին Թուփի զառանցն անդրապարտեալ 'ի վայրս՝ զոր առ հմանեն գետքն երկրքին, Սքեղջաս յարևմտից, և յարևելից Սպերքոս. բանզի յայլ կողմանս Եւբէացւոց անծաւ նօթ առնեն զայլ վայրս ։

Զառաջս չորս նաւարկեալ, հասանք 'ի Պարա- պակասն քաղաքն՝ կառուցեալ 'ի տափարակ վայրին, յաշխարհակին ըմպելեաց Մէլեաց ։ Նա ծովեզերեայն է մերձ հեռ Պնփիոդամի, և հուպ առ նաւքն վերա այլ Նաւակական՝ ըն նաւիրոք ։ Այս տեղաց անուն այլա ռեխնա, որ զայլն խնդրեն յաստուածահոյն դարձեալ ամուսինս ։ Ի վաղիւ անդր վարձեցաք

1 Թուկիդ. գիրք Ա. գլ. 5։
2 Գոռգի. գիրք Դ. էջ 278։
3 Սենեկայ, յաշխարհա. գիրս, հա. 1. էջ 12։
4 Սփոն. ուղևորութիւն, հա. 2. էջ 18։
5 Պաւսան. գիրք Ժ. էջ 898։

նաւ մի փոքր, որ ած զմեզ 'ի Պագէ նաւահանգս-
տէն Մ'եգարիդեայ, և անտի անցաք յԱ'թէնս։

ԳԼՈՒԽ ԼԷ.

Ուղևորիլն Անաքարսեայ 'ի Մ'եգարա, 'ի Կորնթոս, 'ի Սիկիոն և յԱքայիա։

Յետ ձմերելոյն յԱ'թէնս, մեկնեցաք ժամ 'ի ժամ ուղևորելոց մերոցն։ Ընդ Հիւսիսայինն դու-
ռսն Եղևսինայ չոգեալ, մեկնեք մեզ անցանել և ընդ տեղերագնացութեանն. և 'ի Հասանել աւուրց զատկաւորաց՝ անկաք յաւելի*։

Այլ անցեալք ընդ Եղևսինի քաղաքաւ, ղօղմէ յե-
ւոյ լեռին մեզ բանք, մտաք 'ի Մ'եգարիդ՝ որ բաժանէ ընդ սահմանս աթենացւոց և կորնթացւոց։
Էին անդ քաղաքք և ատանոք աւանք. Մ'եգարա, որ
է մայրաքաղաքաց նորա, կցորդէր երբեմն ընդ Նի-
սեայ նաւահանգստաւն երկոքումբք երկայնաձիգ
պատուարաք. այլ յառաջ քան զամս իւր Հա-
րևուր, ընտանիքն քաղաքականք պայման Համաձայնեցան կոր-
ծանել զնոսա[1]։ Ընդ բաղադրեալ ժամանակս կայցեն
անդ թագաւորք[2], և ապա յաղթողեաց ռամկա-
պետութիւն. այլ իբրև Ճարտարապետութեամբ Հաստատ

* Ցամանեան մարդոյ, 356 էջ 392։
ամաւ Ն. Ք.։ 2 Պաւսան. գիրք Ա. գլ.
1 Թուկիդիդէս, գիրք Դ. 39. էջ 95։ Դ.
գլ. 109։ Սորասոն, գիրք Է.

կայց առ 'ի հաճոյ լինել ամբոխին՝ հրամայութեանցն զնոսա զգուշանալ զկնչս փարթամ քաղաքացեաց, այնուհետեւ կացցեն նուաղ իշխանք[1]. եւ յաւուրս մեր ռամկին անպղծին կողմաւ զիշխանութիւն[2].

Քաղաքս այս մասն էր երբեմն տէրութեանն աթենացւոց[3]. եւ յիշելով նոցա զայս՝ ցանկային վերստին ունել զայն, զի 'ի կարեւոր ժամանակի մարթի լինել նոցա 'ի պատնէշ[4]: Այլ նա բազում անգամ զրկեցին նոցա յինքեանց ձեռաց, վասն նախանձու մանրամասն ատենեցն ընկերակցութեան ատա-տեցուց քանն զնոցայն: Այս օրինակ ատեդասուցմանն 'ի նոցա մեծ արկեն զնոսա ատարաութեանց անդամասուտութեանց նոցա[5], եւ խորամանկութեամբ զխաբանս նոցա 'ի սահմանաց իւրեանց:

Ի ժամանակի խաղաղութեան Մեգարացիք ածեն զվաճառս առաւելոց յԱթէնս, եւ մեծամասամբ զաղ՝ զոր առատութեամբ ժողովեն 'ի ժայռից ծովեզր ափանց առ հանգստարանին: Ամփոփեալ եւ անձուկ է յոյժ երկիր նոցա եւ ապառաժոտ առ քերծովն մնացեալն ոչ զայս զԱթենացի, այլ բաղդ առ ին միայն մեծացեալք խոհականն անհաւանութեամբ[6], եւ կեղծ աշխատութեամբ[7] որով հանդուրժեն ոչ այլ ինչ 'ի

1 Թուկիդ. գիրք Դ. գլ. 74: Արիստոտ. յաղ. հաս. գիրք Ե. գլ. 3. հա. 2:

2 Դիոդ. գիրք ԺԵ. եր 357:

3 Ստրաբ. գիրք Է. եր 392: Պաւսան. գիրք Ա. գլ. 42. եր 101:

4 Դեմոսթ. 'ի Փիլիպպ. 3. եր 93:

5 Թուկիդ. գիրք Ա. գլ. 67: Արիստոփ. յԱքարն. տող 520:

6 Իսոկր. 'ի Խաղաղ. հա. 1. եր 480:

7 Դեմոսթ. 'ի Նէէր. եր 866:

դաշինս եւ 'ի տուրեւառս 'ի կիր ածանել՝ բազում զգաւ., զնենգութիւն եւ զգծշաքաղութիւն [1] :

Յանցեալ դարու կանոնեցին յաղթութիւնս իւրեանց աղայծառս · այլ իշխանութիւն նոցա այժմ անհետ եղեալ է, եւ մնացուցանութիւն նոցա բառ նուաղեալ զօրութեանն յաձախեալ · զի զայն առ առեալ յիշեն որ ինչ եղեւն՝ քան զոր են այժմ. Նոյն եղեւ աւուրն յորում Հռոմայք մեք անղղը-բազմեալ յանթրոփն ընդ զվխատ 'ի քաղաքաց-նոց, Հռոմայք փոխաս զծովականաց զօրութեանն իւրեանց, եւ աստեն. Յաւուրս պատերազմին Պար-սից՝ էին մեր քսան նաւք պատերազմիկ 'ի Ճակա-տամարտին առ Սաղամինա [2] : Ըստ Ը. Կորնթէ կազմեալ բանակ հզօր : Ըստ Ը. Յետ մեր երեք հա-զար զօրք 'ի Ճակատամարտին Պղատեայ [3] : Ըստ Ստրաբ. Նաւահանգիստ է երկիրդ : Ըստ. Նմանէ երբեմն էր մեծապատուէր, զի հարկ եղեւ մեզ զաղ-թականս առաքել 'ի Սիկիլիա [4], 'ի Պրոպոնտոս, 'ի Թրակեան Նաւա եւ յեւքսինեան Պոն-տոս : Իսկ արդ Ճանապարհ 'ի չքմեղս լինել զնեն-գութեանց իւրեանց զորովք չարաճշմարտութիւն, պատմե-ցին մեզ զիրս զայս ընծայեալ յազգաց, որ արժանի զրոյց է յիշատակի :

Նաւակցաց աշխարհին մեղապարտաց զէն առեալ ընդդէմ միմեանց, միաբանեցին՝ զի մի 'ի պատ-

1 Արիստոփ. յԱքարն. տող 738 : Սուիդ. 'ի բառն Μεγαρ.

2 Հերոդոտ. գիրք Ը. գլ. 45 :
3 Նոյն, գիրք Թ. գլ. 28 :
4 Ստրաբ. գիրք Զ. էջ 267 :

Ճաշու մեծագոյն լեռն դուռն վանատանց երկրպագու-
ծութեան ։ Ոխնուորի ուրուք գերի վարեալ զոք
յերկրպագողաց , ասեն զնա 'ի տուն խոր , և 'ի
ներքին խուր բազմեցուցանեն , և արձակեն զնա ա-
ռանց ատենից 'ի հանդէպ ղամբեալ փորձանաց ։ Այլ
գերեալն փութացոյն ասել զգործածնան ընդ բառա-
կան լինել ձեռին իւրոյ . և որ զգուշելով դարձին իւ-
րեամ, չզգոյր ինչ յորինաց 'ի վերայ նորա պատա-
հաս , այլ ամենեցուն ամենայն ուրեք ասելով էր
վասն առաքինութեանն և համբերութեանց[1] ։

Յայնժամ ասեմ . Նորա ուրեմն ոչ այժմ ինչ
առ մեզ գործին ելեր ։ Այլ նորա ասեն . Ոչ ,
այլ յաւուրսն առաջինս ակնառութեանն մերոյ գոր-
ծէին ։ Այլ ես ասեմ . Ո՞չ ինչ կասկածեն , զի
'ի դաւր անպիտանութեան այդոքիկ 'ի Ճաւն զան ։

Ի վայրն անդր , և յաւուրսն որ զկնի , յաւէտ
մեղ անուրին բազմամն . է որ փոխանակեալ[2] կա-
րի յայտ վայրեցեալ , և է որ ակնեղէն և փորա-
կերեալ[3] ոչ յայտ դեղեցիկ , և այլ կճեալ և
պղնձին քանդակեալ 'ի Պղնձաքանդեաց և 'ի
Ակոպոյ[4] ։ Տեսաք մեք և զխաչ հրաշագործ աւագա-
նայն[5] , և այլ չինուածս քարաշէնս 'ի այլխառնկա-
փայլ ղէկրատառ կճոյ , յորում կերտեալ և խո-
րանաձեւ երկնքին կոյտք վիմատաւեալք[6] ։

1 Պղատ. խնդ. յուն. հա. 2. էջ 295 ։
2 Պաւսան. գիրք Ա. գլ. 42. էջ 102 ։
3 Նոյն անդ, գլ. 40. էջ 97. գլ. 42. էջ 101 ։
4 Նոյն անդ, գլ. 43. էջ 103 ։
5 Նոյն անդ, գլ. 42. էջ 101 ։
6 Նոյն անդ, գլ. 44. էջ 107 ։

Եւ 'ի քաղաքի անդ դպրոց իմաստասիրութեան հռչակաւոր[1]*, հիմնեալ յԵւկղիդեայ, որ մի 'ի բազմանշան աշակերտացն էր Սոկրատայ: Ոչ էր ոչ տարակուսութիւն ունելոյ, և ոչ պատուհաս մահու ապառնացեալ յաթենացւոց՝ զի մի ոք Մեգարացի յանդգնեսցի կոխել 'ի սահմանս նոցա, խափանեցին զնա 'ի գնալոյ առ վարժապետն. այլ գիշերայն 'ի ձև կանանցի երթեալ առ նա, և վայրկեան մի ընդ նմին ճառս արկեալ, առաւ ընդ այգն դառնայր անդրէն[2]: Խնդրելին նորա ընդ միմեանս, թէ յոր լինի կատարած բարութեան հաստատեալ կայցէ: Սակայն որ զամենայն խոյզ և խնդիրս յայն եւեթ ուղղէր, հնարս պարզել 'ի կերպս առ 'ի հասանել այնմ. այլ Եւկղիդէս բազմեալ 'ի գիրս Պարմենիդեայ և ընթերցեալ Եղէականն աղանդոյն[3], յիմանալեացն աստուածն եղև ուղղի բազմանուանեան և յաճախագոյն ևս անգնալի: Ճիրք նորա համանմանք են պղատոնեան կանոնացն. զի ասէր՝ թէ ճշմարտութեանն պարտ է գոլ մի և միշտ նոյն և անյեղլի 'ի ինքն իւր նմանն[4]: Ճարտ էր առաւ սահմանել զայլ և այլ յատկութիւնքս. այլ կարևորագոյնն 'ի գիտութիւն զատազժուարիմանալի քան զամենայն:

[1] Պրուքբ. պատմ. իմաստ. հտ. 1. էջ 610:

* Զայլոց դպրոցաց զգոյսն խնդրողք տեսցեն 'ի ԻԹ գլուխ գրոցս:

[2] Աւլ. Գել. գիրք Զ. գլ. 10:

[3] Դիոգ. Լայերտ. գիրք Բ. յօդ. 106:

[4] Կիկեր. ակադ. 2. գլ. 42. հտ. 2. էջ 64:

'Նմանութեան գիտութեան այսորիկ առիթ եղև կարգն վարդու եւ մեծեալ՝ առաւելոյ խորա-քանչելի զհանդիսականն մերձ գնելոյ, և վիճելոյ եւեթ զայնոցանէ ընդ եղկալ։ Մտաւորաց իմն 'ի ժա-մանակին յայնմիկ 'ի վերը երկուսն, յանձնախնդրաց 'ի բաղդում միջոս զչփոխն. զհաւաստատութեան ամեն կանոնս, որոց հարուանց ու(հ)աւորք և ան-ակնկալք զգեստներն զհանդիսականութիւնն՝ որոց չեղէ ու-Ջողականութիւն 'ի բայց զարդծուցանելոյ գնալ։ Նա վարդապետքն ընդդիմացականն նոյնաստատութեանցն զորդանապատանականն խորհրդականութիւն պատմա-պարսն զանեալ, բարք գերայն կարգն զանեալ, և մանկանցն ոչ յայլ ինչ 'ի զարդարս վարժեալ՝ այլ 'ի զժտութիւն և 'ի հանդիսութիւն։

Նա կղերդէս եւնցժ զայն 'ի զաղքոց խալ, այլ թեր-եւս անկանոն խոկ. զի ինքն ընտրիք հեղ էր և անհականոյ։ Որոյ եղբայր նորա պատմառա-նօք ինչ զժդմեալ ընդ նմա, յառաջ մնամ առնէ ցնա ցանականք. Որ և մն աղատայեն իմն զիք, եթէ ոչ խնդրեցից 'ի քէն վրէժ։ Նա Նակղերդես առէ. Նա իմն մն և մն աղատայեն, եթէ ոչ ձգեցից զքեզ 'ի հաշտութիւն'։ Մայն յանձնախառադոյնս անեղի եւս ախորժական բաղկնացուցանելոյ զերկ-բայութիւնս և հերքելոյ զնոսա, ոչ ածեալ զմը-տաւ՝ զի խմաստք սաէպ խառնուածք անկանոնին յեղանական իմն 'ի հաստատութենէ։

Նաբողերդէս միլեսացի յաջորդ նորա ած զա-

¹ Կղեմ. յղ. եղբայրսիրութեան, հա. Գ. էջ 189։

շահերտոս նորա ընդ շահիւք առաւել ևս լքեալս և աղաւաղեալ. քանզի Նիկոկղէս հրամայէր զնե-րոս, [illegible] Նիկոկղէս ուժգին տաղտկանէր զնոսա. այլ երկրպագանելիք ներհակք ի զխատութիւն և բարեխնամութեան էին. և զայս հայել էր [illegible] աղա-ւանել առատապէս, մինչև զՆիկոկղէս ձա-նեալ:

Տեսաք մեք զնոս այսր առնել ի մեծամեծաց, որք յանձնիւս կալեալ՝ մեծ զենքն ամենայն բա-նիւ նոցա, և ևս և անձնաշխատութեամբ: Իբրև զաւ-նս ընդ մեզ նոցին զգեստակս՝ սպառ կիթելին զանձն կարգին. և ի մեծ առաւ, զի անբաժ ելք էր [illegible] ժառանգիս բանն զարդահրաշանականն մեծագոյն: Այլ աղա-չեցաք առնանել զհանգէս ձեռնտուութեանն. և [illegible] պատուականութեան հանդերձանաց մեծարին, սպառնեսցի մեզ զի բարոյական աղէտ աղէտ հաւասա-րանութիւն էր ինչ հնազանդել ի կարգէն իմն արդ-ծանութիւն խմբագրութեան մեծաց. ամն քաղաքաց, այլ ամն ձաղանաւ, մինչ այլ խռովութեան, և այլք այլ աղաղ անձամանակաց իւրայք[1]:

Այս առել. Մայժմ իսկ յանդիմանէն ձեր զանձնա ի նոցանէ առնիւ ի հանգիստ. և այսպէս զհետ եկեղեցի ձեռնասրանապատէն զայն խնդրելք առնանել: Միթէ մեր ի մերոյ զառաւելքն. զի են ի նոցանէ այսք և զմիտս հանձարելոյ կարգելեն, և ապականեն զնոսա ի ներ-քուստ յոյժ զժուարին է նոցա ի բաց երթալն[2]:

1 Դիոգ. Լայերտ. գիրք Բ. գիրք Ի. գլ. Չ. հա. 2. էջ յօդ. 108: Մենանդ. անդ: 87: Սենեկ. առակ. Յ. գլ.
2 Արիստոտ. յղ. բարոյ. 30. հա. Չ. էջ 40:

Այլ աՀա երեւեցաւ կերպարանաւ մանրադրաց պզօ-ղեալ յաւուրց ցգլուխ, եւ ասէ ցնա Այսրապիոն. Դա-նաչեցեր զիս։ Այլ նա ասէ. Ոչ։ Այլ նա ասէ. Նոյն աւրեւոն ընդ քեզ պառապոց խնամակալութեան. Դու ոչ ձանաչեր զայդոր. խաւ ուրդ այդոր այլ բա-րեկամ քո էր, ասա դու ոչ ձանաչեր զբարեկամ քո։ Այլ 'ի բաց եկաւ գլխոյն, եւ տեսի զի էր ար-զարեւ մի 'ի մանկանց աւթեւանացս. ընդ որում կատարեալ էին մանկութեան։ Այլ ապա զայրացեալ Այսրապիոն 'ի Փիլոստոս, ասէ. Ո՞րքան է ձա-ղածդ։ Այլ Փիլոստոս ասէ. Ոչ ամենեւին գլխոյ խորհին։ Այսրապիոն ասէ. Խաւ եթէ մնաց մի 'ի նոցա կայցէ, ասկայն խղէ ձառաւոն։ Փիլոստոս ասէ. Այլ կարէ խաւ քաղ։ Այսրապիոն ասէ. Խաւ եթէ երկու կամ երեքս կամ չորս։ Այլ մի բան մնացէ յաւեւելով զԹիւ Հերացն, մինչեւ խառնակեալ Փիլոստոսի՝ զի պղծն, զորմէ խնդրերն էր, ոչ էր ձառաւոս։ Այլ հեռանալ ասպա Այսրապիոնեալ ասէ. Մնաս աւրեւոն մնալ մի եւեթ բարուսկան է առ 'ի չ բնեաց ձառաւոն, այլ զա-զՀակառակն ասէիր նմա[2]։ Մնալ 'ի մեա ասացես խնձ, զի բան ամեն օրինակի եւ ոչխար մի բարուսկան է 'ի կարգն զՀօտ՝ եւ Հաստ մի ցորենոյ զգլխու առ-բաղձ։ Խաւ մեք զարմանալեալ կայաք ընդ երկեակ մնալ Թիւ բանիցն նորա զձուձ, եւ այնուհետ Թուեցաք աւաչեալ եւ զուարթեալ՝ մինչեւ Համբառնալոյն առե-նեցուն զբերկն բաանալ։

1 Ղուկիանոս. յաւելուած լայերս. գիրք Բ. յօդ. 108. Վարուց, Հտ. 1. եէ 863։ եէ 123։

2 Մենաւք. առ. Դեղոգ.

Իսկ իմաստասէրն անխոնջ կրկնեալ անդրէն ասէ. Ահաւասիկ կնճիռն քան զամենայն հանգոյցս դժուարալոյծ. Կրետացիք հանապազաստուտք, ասաց Եպիմենիդէս. իսկ այրդ և ինքն կրետացի էր, ապա ուրեմն ստեաց. ապա ուրեմն կրետացիք չեն հանապազաստուտք. ապա ուրեմն Եպիմենիդ ոչ ստեաց, ապա ուրեմն կրետացիք հանապազաստուտք են[1]: Եւ ընդ ասելն զայս, գոչեաց. Ի զէն 'ի զէն, արիք, կալէք պահ ստութեան Եպիմենիդեայ:

Յայն բարբառ կողմանք երկոքին, հրընկէց աւօք սպառնականութ 'ի մէջ անցեալ բաղխէին ընդ իրեարս, և զդէմ ունէին, և ածէին զկիմեամբք տարափս հաւաքաբանութեանց և իմաստակութեանց և թիւր տրամաբանութեանց: Հուպ ընդ հուպ թանձրանայր խաւարն, չփոթէին ռազմք, և յաղթօղք և յաղթեալք ընդ իւրեանց զէնս եղանէին՝ 'ի նոյն ըմբռնեալք յորոգայթ: Աչնամանեաց բանք ընդ օրս երկուսաւք պաշակէին, մինչև խափանեալ կացին մեծաձայն աղաղակաւն՝ յորմէ սրահն դղրդեցաւ:

Եւ իբրև անդրէն ակնդէտ լինէր մարտին, Փիլոտաս ասէ ցՆաւզողիդէս. Այդ է բարւոք օրինակ մարտից, զոր կողմն երկաքանչիւր ձգնի առաւել յեղծանել կարծեաց հակառակ կողմանն քան 'ի հաստատել զիւրն: Յաւելի և ես, և ասեմ. Ար

1 Գասենդ. յղ. տրամաբ. հտ. 1. գլ. 3. էջ 40: Պայլ. բառարան յօդուածն Եպիմենիդեայ:

նմանակար լինել թուի տալրալ մանրախոյզ, զի համ-բակեք արխազոյնք մտրամունքին 'ի յաղթանակ մը-ղրսւթեանց քան ճշմարտութեան[1] : Այս իրրև պատրաստէր պատասխանի տանել, այդ եղև մեզ ջու կառուացն մերոց . և տուեալ նախ ողջոյն հրա-ժարական, մեկնեցաք 'ի նմանէ՝ ողբալով զդըժ-պատեհ զառածանս իմաստակացն, որ զերծանեին հանճարովն իւրեանց և ազնուութեանն մտաց մանկութոյն :

Մինչ 'ի նեղուցն Կորնթոսի ածեալ գնայաք . զառապանանս ընդ քիւ ժայռի միոյ, ընդ շաւիղ ան-ձուկ և զժուարին կարկառեալ 'ի ծով առ զաղա-թանք երկնածայր լերին : Աստ է կիրճն հըռ-չակաւոր, ուր յաղագս Սկիրոնի ասին զրոյցք՝ թէ աւազակեալ զուղեւորս հոսէր զնոսա 'ի ծով, և զի նովին մահուամբ կորոյս զնա անդ Թեսևս[2] :

Զինչ աւելի քան զուղղոյն զայնորիկ նախ-կին տեսիլս . ոչ իսկ իշխեաք աչնարկել յանդուն-դըս խորոցն . զոչիւն ալեացն զոգցես իմն զաւժէ-լին անդադար, զի ընդ կեանս և ընդ մահ դեղե-ւէաք : Այլ վաղ ընդելացեալք վտանգին, ընդ-կրուեթե 'ի զնելն կայաք մեծապանչ ասեղեանն : Հովիւք սատակաշաւինչք սահեին զկառաձանս ժայ-ռից որ յանձին կային, խուժելին զմեզ, և մըրր-կեալ անկանելին զառ 'ի թափ այար անդր 'ի մկա-նուսն ծովու, և վեր 'ի վայր վերալեալ զայլոս՝

1 Պլուտ. յղ. Ստոյիկ. հտ. 2. եր 1036 :

2 Նոյն 'ի Թեւս. հտ. 1. եր 4 :

փորփրադէզ ասա անդ բլուրս գործելն ամխտակս, հարթ և խաղաղ ծաւալեալ ջուրցն 'ի միջոց վայրս ։

Շաւիղն ընդ որ գնայաք՝ երկարաձգի ընդ առապարէզս լեռն քառասուն և ութ', խիտ առ խիտ եղեւնիւք մինչև 'ի Կրօմիօն նաւահանգիստ և ամրոց կորնթացւոց, հեռի 'ի միջաքաղաքէ նոցա հարիւր և քսան ասպարիզաւ[1] ։ Ուր ընդ երբ ծովուն յառաջ խաղացեալ ընդ ճանապարհ գիւղին և գերեզմանին, հասանք 'ի վայրս՝ ուր ընդարձակութիւն նեղցին ոչ լինչ աւելի է քան զքառասուն ասպարէզ[2] ։ Ուստի ընծայեալք 'ի Պերգամոնեա անուն երբեմն երբեմն ասխանակալին, 'ի գիւղ 'ի մերոյ նոցա հեռեաց Թշնամեաց[3] . անդ և խաթամեանք կատարեին ամենք խաղալ առ մեհեանն Պիտիոնի մերձ յանտառն սոճեաց նուիրեալ նմին[8] ։

Աշխարհին կորնթացւոց անձուկ էին յոյժ սահմանք . զի ծովեզերք նոցա, որ առաւել ընդարձակին, առաւել գնային էին նաւու[6] ։ Այն 'ի նոսա անդաստանք բերրիք, այլ բաղձանայինք էին ատապարք և անբերք[7] . և կարծեք երկրին յոյժ էին յոյժ[5] ։

1 Պլին. գիրք Դ. գլ. 7. 1. էջ 166 ։
5 Պինդ. ողիմպ. աւագերգ.
էջ 196 ։
13. տող 5 ։ Պաւսան. գիրք
2 Թուկիդիդէս, գիրք Դ.
Բ. գլ. 1. էջ 112 ։
գլ. 45 ։
6 Սկիւղաքս, անդ, էջ 15
3 Սկիւղաքս յաշխարհագր.
և 21 ։
հա. 1. էջ 15 ։ Ստրաբ. գիրք
7 Ստրաբ. գիրք Ը. էջ 382 ։
Ը. էջ 334 ։
8 Աղեքս. յԱթէն. գիրք
4 Եւրոգոտ. գիրք Ը. գլ.
Ա. գլ. 25. էջ 30 ։
40 ։ Իւսեբ. հաւաքեա. հա.

Ի ստորոտ բարձու լերին կառուցեալ կայ քաղաքն, և միջնաբերդ 'ի կատար նորին [1]: Ի հարաւոյ պարսպէ զնա նոյն մեքն լերանն, դժուարագոյն ընդ այն կողմն սեպացեալ. իսկ ընդ այլ կողմանս պատնէշք ամուրք և բարձրաբերձք պատսպարեն զնա: Շրջապատ նորա է քառասուն ասպարէզ. այլ զի պարիսպքն զկողիւք լերինն տարածեալ՝ պարփակեն զմիջնաբերդն, մարթ է բովանդակ զշրջապատն համարել ութսուն և հինգ ասպարէզս [2]:

Առ ոտս նորա կրիսականն և սարոնեան եզերին ծովք, իբր խոնարհեալք առաջի երեսաց նորա: Կրիսականին նաւահանգիստ Լեքէա կցորդի ընդ քաղաքին կրկնակ պատուարաւ, որ ընդ երկոտասան ասպարէզս երկարաձգի [3]: Իսկ սարոնականին նաւահանգիստ Կենքրէ հեռի է 'ի Կորնթոսէ ասպարէզս եօթանասուն:

Շինուածք բազումք սրբազանք, և այլք վազեմիք և արդիք զարդարեն զքաղաքն: Տեսաք նախ զհրապարակն՝ պար առեալ որպէս զայլոց քաղաքաց բազմաց մեհեանօք և անդրեօք, և ապա զթէատրոնն ուր ժողովուրդն գումարի խորհել զիրաց աշխարհին, և ուր երաժշտութեան և այլոց մրցութեանց լինին գումարք՝ կցորդք տօնիցն [4]:

1 Ստրաբ. գիրք Ը. էջ 379: Պաւսան. գիրք Բ. գլ. 4. էջ 121:
2 Ստրաբ. անդ. էջ 379:
3 Քսեն. պատմ. Յուն. գիրք Դ. էջ 822: Նոյն յԱգես. էջ 661:
4 Պլուտ. յԱրատ. հտ. 1. էջ 1034: Պողիբ. յաշխա- խաղաղ. գիրք Դ:

Տեսանք մեք անդ և զգերեզմանս երկոցունց որ-դւոցն Մեդեայ ; զորս կորնթացւոց քարկոծ արա-րեալ էր, յափշտակեալ 'ի բագնաց՝ ուր մնայցեն թշուառականն աւանդելոց փոսս ։ Ի պատուհաս անպարկեշտութեան ասեն ժամու կորուսանէր զման-կունս նոցա 'ի խանձարուրս, մինչև հնազան-դեալք զկնդակեան հրամանին՝ ուխտեցին տանել ամի ամի զյիշատակ սպանելոցն, որ մնկեղծու-թեան նոցա լեալ էին ճարակ[1] ։ Նոյն ես լսեմ Եւրիպիդեայ բանսիցն կարծէի, ասեմ, եւրոպէ իսկ դշխոյին խողխողեալ զորդիսն[2] ։ Այլ մի ոմն յորոց անդէն կայլին ասէ ցիս. Լուեալ է իմ զի յասպանմանն մերձ կաշառեալ էր քերթողն հինգ քանքարաւ[3] ։ Նոյն այս որպէս և է, զինչ օգուտ իցէ ծածկել. 'ի հնաւանդ սովորութէն իսկ յայտ է, զի մեղան հարքն մեր. զի 'ի յի-շատակ և 'ի քաւութիւն մեղաց նոցա մանկունք մեր մինչև 'ի հասակ և 'ի միտս լինել՝ զերծ զգե-նուլ և թխագգեացք կան[4] ։

Շաւիղն որ 'ի միջնապարիսպն տանէ՝ կամակոր է յոյժ, երեսուն ասպարիզօք ցկատար լերինն ա-ռանձնեղելոյն գործեալ[5] ։ Այս հասանք մեք յաղբե-րակն որ կոչի Պիրենէ, ուր Բելլերոփոնի զՊե-

1 Պաւսան. գիրք Բ. գլ. 3. էջ 115 ։ Եղիան. զան. պատմ. գիրք Ե. գլ. 21 ։

2 Եւրիպ. 'ի Մեդ. տող 1271 ։

3 Պարմէն. 'ի պարապ. Եւրիպ. 'ի Մեդ ։

4 Պաւսան. գիրք Բ. գլ. 3. էջ 118 ։

5 Ստրաբ. գիրք Ը. էջ 379 ։ Սփոն, Ճանապարհորդ. հատ. Զ. էջ 178 ։

զաս երկվարն ասեն զտեալ։ Յուրտ են յոյժ և վճիտ ջուրք նորա[1]. և վասն զի չերևին եւք ջուրցքն, կարծի ջրանցս անձրևագործս վիմափոր ընդ ժայռս գործելով իջանել նոցա 'ի քաղաքն, և բղխել աղբիւր՝ որոյ ջուր նորա անուանի է Թեթեւութեամբն, և բաւական 'ի պէտս բնակչացն, առանց իսկ յոլով բազմութեան ջրհորոցն որ են նոցա ամենայն ուրեք գործեալ[2]։

Դժուարամատոյց է յոյժ միջնաբերդն և պատնէշք նորա, և առանց մատնութեան[3] կամ սովոյ անառիկ։ Տեսաք 'ի մուտս նորա զմեհեան Մատրդկան, որոյ պատկեր լուսաճաճանչ զինուք պարածածկի. և առ նմին պատկեր Եչոտի և Արեգական, որք յառաջագոյն 'ի տեղւոջ անդ պաշտէին, մինչ չև Մատրդկանն պաշտամանն մուծեալ անդր։

Ի բարձրադիտակ տեղւոջէն Թուի ածուհւոյն Թեւարկեալ իմն տիրել ընդ ծով և ընդ ցամաք, ամբարհաւաճ տեսլեանն կախարդելով զաչս մեր։ Ի հիւսիսոյ մինչև ցՊարմնաս և ցԵղիկոն ձգէին աչք. ընդ արևելս ցԵգինա կղզի, և մինչև 'ի միջնաբերդն քաղաքին աթենացւոց և 'ի հրուանդանն Սունիոն. և յարևմտից ընդ դաշտս պտղաբերս Սիկիոնի[4]։ Յանձէաք զաչս մեր զուար-

1 Ստրաբ. գիրք Ը. էջ 379։ Աթեն. գիրք Բ. գլ. 6. էջ 43։
2 Ստրաբ. անդ։
3 Պլուտ. յԱրատ. հտ. 1.
էջ 1034։,
4 Ստրաբ. անդ։ Սփոն. հտ. 2. էջ 175։

Ճանկեցք ընդ երկաքանչիւր ծոցս, որոց ափք բա-խեալ խորտակելն 'ի նեղուցն՝ զոր Պոնտոս նաւա-նապորտս հանգունակէ կամրջի, ընդ ութեանն 'ի մէջ երկուց ծովուց կառուցեալ զայն՝ առ 'ի կցոր-դել ընդ միմեանս զերկոսին զլխաւոր մասունս Եւրոպայ [1]։

Այլ նովլին իսկ անհնարին թուի երկուց ցա-մաքացն ունել ընդ երկար կցորդութիւն՝ ա-ռանց թողութեան կործանմանց [2]. և յիրաւի է համարել զԿորնթոս պատնէշ Պեղոպոնեսայ, և մի 'ի պահակաց Եւրոպայ։ Բայց նախանձայու-զութիւն այլոց ազգաց չեթող երբէք կործանու-ցւոց արգելուլ զանցս նեղցին, և նոցա զպատե-հութիւն տեղւոյն յօգուտ արկեալ՝ մթերեցին պանծս բազում։

Որպէս զոյգ ընդ աղամանեաց եղեն անգերքս յաշ-խարհի, համգոյն իմն և ընդ երեւել նաւարդաց 'ի վեր երևեցան հէնք 'ի ծովու։ Այս վասն զի ընդ ցամաքս միայն էր Յունաց 'ի սկզբան վաճառակա-նութիւն, ընդ նեղուցն ևեթ Կորնթոսի էին նաւա-մուտք 'ի Պեղոպոնես, ընդ նոյն և ելք. և կորն-թացիք 'ի մաքսից անտի երթևեկի վաճառաց ճոխացան ոչ սակաւ [3]։ Այս յեղծանել իսկ հինից ծովականաց, նաւք զեռ ևս 'ի տկար հմտութենէ ղեկավարեալք՝ ոչ իշխէին դիմադրաւ լինել մրր-

[1] Պլին. խաթմ. տաղերգ. 4. տող 34։ Պարապ. անգ.։
[2] Պլուտ. յԱրատ. հտ. 1. էջ 1044։
[3] Հոմեր. Եղիակ. գիրք Բ. տող 570։ Թուկիդ. գիրք Ա. գլ. 13։

կաց ծովուն, որ 'ի կղզւոյն Կրետայ տարածանի մինչև 'ի գլուխ Մալեայ 'ի Լակոնիա[1] ։ Որպէս զի առէին յայնժամ յառակս. Մոռա զգանկալիս քո 'ի պատել զՄալեաւ[2] ։ Նմին նոր դիմէին նաւք 'ի ծովս, որ 'ի նեղուց անդր սահմանին ։

Սաձառք Խոսալոյ և Միկոնոյ և այլոց արևմտեայց գային 'ի նաւահանգիստն Պերեայ, և վաճառք կղզեաց եղեան ծովուն և ծովեզերաց փոքուն Ասիոյ և փիւնիկեցւոց[3] 'ի նաւահանգիստըն Աթենքերաց ։ Այս յետ ժամանակաց սկսան 'ի միջէ 'ի միւս նաւահանգիստն անցանել ընդ ցամաք, քարշեալ ընթելով զնաւս[4] ։ Այլ Կորնթոս ընդ Ասիա և ընդ Եւրոպա առևտրականաց կայեալ[5], ոչ դադարէր 'ի մաքսելոյ զվաճառս օտար ազգաց . և ծածկեաց զծով բազմութեամբ նաւաց իւրոց, և կազմեաց տորմիղ պատերազմիկ նաւաց 'ի պաշտպանութիւն վաճառականութեան ։ Յաջողութեամբքն յաւելեալ 'ի ճարտարութիւն, նաւաձև զնաւս կառոյց. և եռաթիք նաւակառոյցք 'ի նմանէ ճարտարապետեցան[6] ։ Այլ ծովականութ զօրութիւն մեծարոյ եղեալ, 'ի ծոց իւր ձգեաց զերրո այլոց աշխարհաց ։ Տեսաք մեք անդ 'ի ծովեզրն

1 Հոմեր. Ոդիս. գիրք Թ. տող 80 ։ Սոփոկլ. 'ի Տրաքին. տող 120 ։

2 Ստրաբ. գիրք Ը. էջ 378 ։

3 Թուկիդիդէս, գիրք Բ. գլ. 69 ։

4 Նոյն, գիրք Գ. գլ. 15 ։ Ստրաբ. անդ, էջ 335 ։

5 Արիստոփ. խաղ. 'ի Նեղ. հա. 1. էջ 41 ։ Որոս. գիրք Ե. գլ. 3 ։

6 Թուկիդիդէս, գիրք Ա. գլ. 13 ։ Դիոդ. գիրք ԺԴ. էջ 269 ։

հանճարիւն ¹ բեռլինս Թղթոց պրուսեայց և առագաստիցնաւաց ածեալ յԵգիպտոսէ, փղոսկրր 'ի Հնդկաց, և 'ի Սկիւթենեայ մաշկս, խունկս յԱրաբացւոց, արմաւ 'ի Փիւնիկեայ, գորգս 'ի Կարքեդոնէ, ցորեան և պանիր 'ի Սիրակուսայ ², տանձ և խնձոր յԵւբեայ, և ստրուկս 'ի Փռիւգիոյ և 'ի Թետաղիոյ ։ Թող զայլ ամենայն առխամանդիս վաճառաց՝ որ զօր հանապազ գնդան 'ի նաւահանգիստս Պղադայ ³, և մանաւանդ 'ի Կորնթեայն ։ Վաճառականք տարաշխարհիկք՝ մանաւանդ փիւնիկեցիք՝ անդր ցանկութեամբ շահու ածեալ ձգէին ⁴, և 'ի տեսիլ համաղխի խըմբան խաղուցն անհամար բազմութիւն տեսողաց ⁵ ։

Իսկ վասն զի այս ամենայն յաճախէին զմեծութիւնս ազգին, ձեռագէտք որ 'ի գործ արկանէին զայնս՝ գտին օգնականութիւն ⁶, և յաւելին յորդորել զմեծեանս 'ի նախանձ՝, որք վաղ իսկ անուանիք էին հնարագիտութեամբք պիտանեօք, որպէս ունէին զբոյցք ցնոցանէ ⁷ ։ Այլ չկարեմ մանրապատում առնել, քանզի չգիտեմ իսկ հաւաստեաւ որ ինչ 'ի նոցանէ հնարեցանն ։ Արուեստք 'ի դուգնաքեայ փորձոյ առնուն սկիզ-

1 Անտիփ. և Հերմիպ. առ. Աթենէոսի, գիրք Ա. գլ. 21. էջ 27 ։
2 Արիստոփանէս յԻփն, տող 834 ։
3 Աթէն. անդ ։
4 Պինդ. պիւթ. ասողերգ. Զ. տող 125 ։
5 Ստրաբ. գիրք Ը. էջ 378 ։
6 Եւրոդոտ. գիրք Բ. գլ. 167 ։
7 Որոս. գիրք Ե. գլ. 3 ։
8 Պաւսան. Պինդ. ողիմպ. ասողերգ. 13. տող 17 ։

բըն, ուրեք ուրեք 'ի կիր արկանելով. իսկ իբրեւ 'ի կատարումն գան, գտիցեք նոցին հաւանորէն այնոքիկ՝ որք յաջողութեամբն 'ի նոսին դիւրեն զնոցայն պիտառութիւն: Օրինակ իմն զդրգանէ, որով անօթս բոլորշիս գործէ բրուտն, Եփորոս պատմիչ հնուտ սովորութեանց նախնեաց ասէր գիւտ՝ իմաստնոյն Անաքարսեայ մուծեալ զայն 'ի Յոյնս[1]: Այլ մինչդեռ էր նա 'ի Կորընթոս, 'ի պանծալ իմում ընդ այն, կորնթացիք Իպերբեայ քաղաքակցի իւրեանց ետուն զպարծանս հնարագիտութեան[2]. եւ մեկնիչ ոմն Հոմերի եցոյց մեզ 'ի տողից ինչ քերթողին, զի անուն այն գոյր յառաջ իսկ քան զԻպերբիոս[3]: Պարծեալ եւ Փիլոստաս պնդէր, Տաղոսի ումեմն երիցագունի ժամանակաւ քան զՀոմեր՝ թոռին Դեդաղեայ աթենացւոյ[4] հնարեալ զայն: Արդ դժոյն է իմանալ եւ զբազմագունից այլոց հնարագիտութեանց; զորոց Յոյնք իւրեանց տան զպարծանս՝ հակառակ միմեանց բերելով վէճ: Այլ այս եւեթ յայտ է 'ի վիճիցն, զի 'ի վաղնջուց ժամանակաց զարգացուցին նոքա զարուեստս՝ որոց կաչինն հնարագիտք:

Բազումք են 'ի Կորնթոս խանութք եւ գործարանք[5]. ընդ ձեռակերտս քաղաքին ցանկալիս

1 Եփոր. առ. Ստրաբոնի, գիրք Է. եր 303:

2 Թէոփր. 'ի Պարաւաղ: Պինդ. ողիմպ. տաղերգ. 13. տող 25: Պլինիոս, գիրք Է. գլ. 56:

3 Հոմեր. Եղիակ. գիրք ԺԸ. տող 600:

4 Դիոդ. գիրք Դ. եր 277:

5 Ստրաբ. գիրք Ը. եր 382: Որոս. գիրք Ե. գլ. 3:

խնդրին վերմակք անկողնոց յամենայն ազգաց[1] ։ Կանանս յոլովս ծախեալ հաւաքէ նա պատկերս նկարեալս և անդրիս՝ ձեռագործս ճարտարաց[2]․ այլ ինքն չև ևս եցոյց զոք ’ի ձեռագիտաց՝ որ զայնպիսի փառսն յաճախեն Եգիպտոյ ։ Ոչ կամ առ ’ի պերճանս ևեթ զհետ լինի նա հրաշակերտից արուեստին, և կամ զի բնութեանն անհաղորդական. ունելով զիշխանութիւն բաշխելոյ զհանճարս՝ զխնդրելն ևեթ զայնոսիկ և զյառաջ մատուցանել թողու իշխանաց ։ Սակայն ’ի յարգի են կերտուածք ինչ կորնթականք պղնձիք և խեցեղէնք թրծեալք ։ Չեն բոլք պղնձահատք ’ի Կորնթոս, այլ գործածոյք ընդ օտար պղնձին խառնեն խունս ինչ ոսկի և արծաթ[3], և գործեն հրահալ փայլուն և զրեթէ անարատ ’ի ժանգոյ[4] ։ Այլ զարդնեն ’ի նմանէ զրահս և սաղաւարտս, պատկերս փոքրիկս, բաժակս և անօթս արկղս առաւել վասն նիւթոյն ազնուութեան քան վասն ճարտարութեան արուեստին․ և բազմազգոյնք ’ի նոցանէ տերևազարդք յօրինեալ, և բազմաքանդակք ։ Յովլին ճարտարութեամբ և յանօթս խեցեղէնս զնոյն գործեն զարդս[5]․ և նուաստագոյնն ’ի նիւթս ’ի վայելուչ ձևոյն և ’ի զարդուցն զրովք յօրինի՝ առեալ զյարգ, լինի նախապա-

1 Հերմիպ․ առ Աթենեոսի, գիրք Ա․ գլ․ 21․ էջ 27 ։

2 Պոլիբ․ առ Ստրաբ․ գիրք Ը․ էջ 381 ։

3 Պլին․ գիրք ԼԴ․ գլ․ 2․ էջ 640 ։ Որոս․ գիրք Ե․ գլ․ 3 ։

4 Կիկեր․ տուսկուլ․ գիրք Դ․ գլ․ 14․ հա․ 2․ էջ 340 ։

5 Ստրաբ․ անդ ։

տես քան զքարինս և զհրահանգս ցանկալիս ։

Կանայք կորնթացիք անուանի են գեղով[1], և այլք չարահամբաւութեամբ և զեղխութեամբ ։ Իսկան-դրքեն զառողջութիւն իւրեանց շռայլութեամբ 'ի կերակրոցս[2], իսկ ոսկր առ նոսա բնաւ իսկ ապաե-րասան ցածութիւն է[3] . և ոչ միայն չառնուչեն ընդ-այն, այլ և հնարին բարեքել զայն օրինաւորու-թեամբ իմն՝ որ պարտ առնէ նոցա զայն ։ Ահա-գայն 'ի գլուխ նոցա է Աստղիկն, և նուիրեն նմա կանոնայս պոռնիկս հայցել զգնացականութիւն նոցա, որք յանձնկութիւնս մեծամեծս և 'ի մե-տաղուտ վտանգս առաջի կան զոհից, և երանեն 'ի թատրոն ընդ այլ քաղաքացիս՝ երգելով օրհնու-թիւնս ։ Ի գալ հասանել Քսերքսեայ, ամենե-քին 'ի մաղթանս նոցա ապաւինեցան . և առօք են զպատկեր նկարագործ ուղերձելոյ նոցա ուխտս դիցուհւոյն, և նորքնագրոշմն տողք Սիմոնիդեայ նոցա մաղթանացն ընծայեն զփառս փրկութեան Յունաց ։

Զքնաղ յաղթանակաւն բազմանցաւ ազգ քըր-մուհեացն . և զարդիս որք անշուշտ յաջողութեան իղձս իւրեանց ցանկան, ուխտեն նուիրել Աստղ-կան պոռնիկս թուով, յայլ և այլ կողմանց ածեալ զնոսա[4] ։ Այն 'ի նոցանէ աւելի քան զհազար 'ի Կորնթոս . որք անուն զվաճառականս ստարս ա-

1 Անակր. տաղերգ. 32 ։

2 Պղատ. յղ. հաս. գիրք Գ. հա. 3. էջ 404 ։

3 Արիստոփ. 'ի թեսմոփ. տող 655 ։ Ստեփ. 'ի Kόρινθ.

4 Աթէն. գիրք ԺԳ. դլ. 4. էջ 573 ։

ծեալ ձգեն, և 'ի տանկաւ առուրս զհնաւորութ ող- ջոյն ապականեն. ուստի յառաջ եղև, Թէ ոչ սահմանեցաւ է զնալ 'ի Կորնթոս[1]:

Սակայն պարապոտ է և ոչ զայն անյիշատակ առնել, զի ընդ սահմանն Աքայեցւոց կանայք անձնատուրք յայտնապէս պղծութեան ոչ ևս իշխեն խառնել զպարտիս. և անդ իսկ 'ի Կորնթոս, ուր բերկրու- թեանք իմն ցուցանեն մեհեանց զշիրիմ հանա- նոյն Լայիսի[2], 'ի տնանն զոր պարկեշտ կանայք խտրեին Տրոգլական' ոչ ունէր 'ի պատանեաց օրէն է մտանել[3]. և կորնթացիք որք զայնպիսի պղծու- թիւնս քաղցրութեան ցուցին 'ի պատերազմին Պղատէացն[4], մեղկեալք առաւ 'ի զրգանս' անկանին ընդ ընծայ աղախնացն, և առնուեցան խառնել զօգնութիւնս մերթ 'ի պատերազմաց, մերթ յա- թենացւոց և մերթ 'ի թեբայեցւոց[5]. և յայն վաս- թարութիւնս զառածեալք' զի ոչ այլ ինչ մնացին նոցա պարծանք, բայց ձրխութիւն և մեղկու- թիւն և կնատութիւն քան զամենայն ազգս Աքայոյ:

Սոյն իմն առնել ասել ինչ և զփափկութեանց կարգի տեսչութեան աշխարհին. վասն որոյ հարկ է իմն յետուկս յառաջին զալոս 'ի վերջ ընթանալ, այլ ոչ ընդ երկար զեկայ աւելց անդ:

1 Ստրաբ. գիրք Ը. էջ 378:
2 Պաւսան. գիրք Բ. գլ. 12. էջ 115:
3 Աղկեբ. առ. Աթենէոսի, գիրք ԺԳ. էջ 574:
4 Երոդոտ. գիրք Թ. գլ. 104: Պլուտ. յղ. գիւղին Ե- րոդոտոսի. հայ. Չ:
5 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Դ. էջ 521:

Յամին իբր հարիւրերորդի տասներորդի զկնի տրովադեան պատերազմին, երեսուն ամաւ յետոյ քան զդարձ Հերակղեանց, Մյետաս 'ի զաւակէ Հերակղեայ կալաւ զթագաւորութիւն Կորնթոսի, և զաւակ նորա ժառանգեաց զայն ընդ ամս չորեքհարիւր եօթնևտասն, անընդմիջաբար միշտ յաջորդելով զհայրն[1]: Այս բարձաւ թագաւորութիւն, և անց գերագոյն իշխանութիւն 'ի ձեռս երկերիւր քաղաքացւոց, որոց ընդ միմեանս կեթ մարթէր ամուսնել խնամութիւն[2], և պարտ էր ամենեցուն նոցա լինել յարենէ Հերակղեանց[3]: Մի ամի մի 'ի նոցանէ ընտրանաւ վերակացու լինէր նոցա աշխարհին, և անուն կոչէր նմա՝ Նահապետ: Նորա արկին մաքս վաճառաց անցաւորաց ընդ նեղուցն, որով ճոխացեալք չարաչար զեղխութեամբքն կորեան: Յետ իննսուն ամաց իշխանութեան նոցա Կիփսեղոս զաւամբքն զօրս ածեալ*, յինքն գրաւեաց զիշխանութիւն նոցա. և կանգնեաց անդրէն զթագաւորութիւն, որ եկաց 'ի տան նորա զամս եօթանասուն և երիս և զվեց ամիս[4]:

Զկնի թագաւորութեան իւրոյ արար նշանաւոր հալածանօք և անգթութեամբք, բռնացեալ յամենայն քաղաքացիս՝ որոց համբաւ կառ-

1 Դիոդ. առ Սինկեղեայ, էջ 179:

2 Երոդոտոս, գիրք Ե. գլ. 92:

3 Դիոդ. անդ:

* Ն. Ք. 658 ամբ:

4 Արիստոտ. յղ. հաս. գիրք Ե. գլ. 10. հտ. 2. էջ 403:

կասկածելի էր նմա, զկէսս աքսորեաց, զայլոց զըրա-ւեաց զինչս, և զբազումս եւս սպանանել[1] ։ Այլ առ 'ի տկարացուցանել և ևս զկողմն մեծատանց՝ զամս տասն էառ տասանորդս յամենայնէ, պատ-ճառանօք իբր թէ ուխտեալ էր նախ քան զթա-գաւորելն[2], և պարտ էր նմա կատարել զուխտն, կանգնելով առ ողիմպիական մեհենին անդրի հսկայաձև ոսկիազօծ[3] ։ Այլ իբրև բարձաւ 'ի նը-մանէ երկիւղ, ապա այնուհետև հնարէր սիրելի լինել, և առանց թիկնապահաց և պատրաստու-թեան արտաքս ելանէր[4] ։ Այլ ժողովուրդն վստա-հութեամբն նորա քաղցրացեալ, ներեաց դիւրա-բար անիրաւութեանցն որոց չէր իւրն լեալ նշա-նակ, և եթող նմա խաղաղութեամբ վճարել զկեանսն՝ թագաւորեալ զամս երեսուն[5] ։

Պերիանդրի որդւոյ նորա սկիզբն թագաւորու-թեանն եղև իբրև զվախճան հօրն, աւետելով աւուրս բարեկենդանութեան և խաղաղութիւն անշարժ ։ Օրինաւոր էր հեզութիւն նորա և իմաստութիւն և խոհեմութիւն, և օրէնք զորս սահմանեաց 'ի վերայ այնոցիկ որոց բազմութիւն ստրկաց էին, և որոց ելք յաւելուին քան զմու-տըս, և 'ի վերայ այնոցիկ որք անկղզիտանային 'ի

1 Հերոդոտ. գիրք Ե. գլ. 92 ։ Պողիէն. 'ի մարթանսն, գիրք Ե. գլ. 31 ։

2 Արիստոտ. յղ. խնամոց ընտանեաց, գիրք Բ. հտ. 2. էջ 501 ։

3 Պղատ. 'ի Փեդր. հտ. 3. էջ 236 ։ Ստրաբ. գիրք Ե. էջ 378 ։

4 Արիստոտ. յղ. հաս. գիրք Ե. գլ. 12. էջ 411 ։

5 Հերոդոտ. անդ ։

դժնդակ ոճիրս և 'ի զեղծ բարս ։ Ցուցոյց նա ա-տեանն խորհրդոյ , և ոչ ինչ յաւել հարկս՝ շատ հանճարեալ զմեզքս վաճառացն . կառոյց նաւս բա-զումս , և առ 'ի բարգաւաճանս վաճառականու-թեանն խորհեցաւ հատանել զնեղուցն , և զծով 'ի ծով խառնել[1] ։ Յուժկալ եղև պատերազմաց , և յաղթութիւնք նորա զերահռչակ արարին զքաջութիւն նորա[2] ։ Այլ որոց ուղղութեանց չէր օրէն անին ունել 'ի թագաւորէ , որոյ շրթունք նորա թուէին գործա-րան իմաստութեան ։ Մաքրութիւն խակ էր նորա ասել , թէ առաւելագունից ևէր մեծութեանց զըր-պարտիչ է բնութեան . և թէ անգամանէն հա-ճոյք , խակ առաքինութիւնք կան և մնան յաւի-տեանն[3] . և թէ ազատութի ճշմարիտ յամենայն խիղճ մնաց է[4] ։

Ի կարևոր վտանգի խնդրեաց նա խորհուրդ 'ի Թրասիբուղեայ որ թագաւորէրն 'ի Միլետոս , և զիտ որում էինն նորա զօրք բարեկամութեան[5] ։ Թրասի-բուղ ած զհրեշտակ նորա 'ի դաշտ , և ճեմ առեալ ընդ որայս բազմահունձս , հարցանէր զնա վասն որոյ իրաց եկեալն էր . և 'ի զգնալն իւրում հարկանէր զհասկս 'ի վեր քան զայլսն ամբար-ձեալս ։ Այլ հրեշտակն ոչ ինչ իմացաւ , զի Թրասի-բուղ յանգիտման առնէր նմա ակներև զօրէնս յուսալից կարգաց պետութեան , եւ և տամկացուե-

1 Դիոգ. լայերտ. գիրք Ա. յօդ. 99 ։
2 Արիստոտ. գիրք Ե. գլ. 12. եր 411 ։
3 Ստոբ. ճառ. 3. եր 46 ։
4 Նոյն , ճառ 25 . եր 192 ։
5 Հերոդ. գիրք Ա. գլ. 20 ։

տակամանին, յորս չէ օրէն խուզարկանչիւրոց ամենայն կարգի պայծառանալ և գերապանծայս լինել¹ ։ Բայց Աշխարհախմբով քաջք 'ի մէջոյ եկեղց բանակացն, և յաւել 'ի չափս ունել զմահն² ։

Այսպէս յաղթութիւնք, և փառաբանչացն զամէնայն ընդդատուցին յերաց աւրենն զգանութեան բարուց նորա, զոր մեծոյն սահմանահարեալ ունէր. և 'ի ժամ բարեկամութեանն, սրտանեալ թերեւս առ մոլեռնախանձ սիրոյ, սպանին զԱրեղիսա կինն իւր զոր ողջուսյ չափ սիրէր³. և անդ մախանձն եղև բարեկենդանութեան նորա և առաքինութեանց։ Պատմնուցեալ ընդ եղկար արմ յաւել և եւս 'ի նոյն, իբրև զխոսաց զի ժողովուրդն փոխանակ կարեկից լինելոյ ընդ նմա՝ ամբաստանէր զնա պղծեալ եղբաւն զանկողինս հօրն⁴ ։ Այլ առ կասկածանաց ոչ եւս մեծարելոյ 'ի ժողովրդենէ, բնաւ խակ իշխեաց արհամարհել զմեծարանս նորա. և ոչ զինուս ածեալ, զի են անխորսութիւնք զորոց պատրաստ է թագաւորի զթութեանք եւեթ խոնարհել զմիրէժ; ծանրացուցց զձեռն իւր 'ի վերայ ամենայն ժողովրդեանն, կացոյց զիւրև թիկնապահս⁵, բռնանացաւ յանկարծ յորս հօր նորա խնայեալ էր, կազմաքրեաց մնացի պատժապարտս 'ի ամբխեաց կողմն թագուոյ զչքնաղ զարդս և զնոյն որ ինչ ցանկալի

1 Արիստակ. յղ. հատ. 50։ Դիոն. լուսերոս. գիրք Ա. գիրք Գ. գլ. 13. էջ 355։ յօդ. 94։

2 Զոնար. 'ի կոչումն, հտ. 2. էջ 147։

3 Եւագրոս. գիրք Գ. գլ.

4 Դիոն. լուսերոս. անդ։

5 Նոյն անդ, յօդ. 98։

էր նոցա[1], և չարչարէր զժողովուրդն 'ի խիստ գործըս ծառայութեան ։ Նաև ինքն անդադար 'ի կասկածանս և յարհաւիրս կայր, և տառապէր ընդդէմ քաղաքացւոցն որ նստէին խաղաղ 'ի հրապարակի[2], և դատապարտէր որպէս մեղապարտ զամենայն ոք որ կարէին մեղանչել նմա ։

Մշէտք առանձին յաճախեցին զարհաւիրս նորա ․ քանզի Լիկոփրոն՝ հաւսկ կրտսերագոյն յորդւոց նորա՝ զայրացեալ 'ի հայր իւրմէ զաղագս մահմօր իւրոյ, այնպէս ոխայր ընդ սպանողին՝ մինչև չհանդուրժել տեսոյ նորա, և ոչ պատասխանել բանից նորա ։ Պաղատանք և թախանձանք ընդունայնք վաստակեցան, և հարկ եղև Պերիանդրի արտաքսել զնա 'ի տանէ ․ և արգելուլ քաղաքացնոց՝ մի ումեք ընդունել զնա 'ի տուն, և մի խօսել ընդ նմա, և որ ոչ հնազանդեսցի հրամանին՝ տուժեսցի տուգանս մեհենին Ապողոնի ։ Արքայորդին պատսպարեցաւ 'ի կամարակապս գաւիթըս հասարակաց անօթևանական և անապաստանից, հանդուրեալ կրել զամենայն վիշտս՝ քան մատնել զհայրենական իւր 'ի մոլեգնութիւն բռնաւորին ։ Այլ յետ աւուրց դէպ եղև հօրն տեսանել զնա, և յուզեցան գութքն հայրենի ․ և ընթացեալ առ նա, զամենայն ողոքանս 'ի կիր էարկ, այլ 'ի զուր ․ զի պատասխանի ետ նմա որդին և ասէ ․ Հակա-

[1] Երոդոտ․ գիրք Ե․ գլ․ 92 ։ Դիոգ․ Լայերտ․ գիրք Ա․ յօդ․ 97 ։ Պղուտ․ հատ․ Զ․ էջ 1104 ։

[2] Նիկոլ․ Դամասկ․ 'ի ծաղկաքաղ․ Վալեզեայ, էջ 450 ։

ռակ հրամանիդ քում գործես, և պատրաստական ես տուգանաց: Այսմ իրի խորհուրդ կալաւ հայրն աքսորել զնա 'ի Կորկիւրա կղզի, զոր ընդ իւրև նուաճեալ էր[1]:

Արտմտութիւն ոխցն ետ նմա երկայն աւուրս, որպէս զի 'ի խղճէ չարեացն ընդ երկար տանջեսցի: Այլ և ժամանակ էր նմա ասելոյ որպէս յառաջն, թէ լաւ իցէ նախանձ արկանել յայլս քան ըզգութ[2]. վշտակրութիւնք հարկեցուցին զնա խոստովանել՝ զի լաւ է ռամկապետութիւն քան զբռնաւորութիւն[3]: Այլ 'ի խորհրդակցելն առըուք նմա հրաժարել յաթոռոյ, ասէ. Աղաւեմ ես, զի հաւասար վտանգ է բռնաւորի իջանել յաթոռոյ և անկանել[4]:

Այլ իբրև բեռն իւրոց աշխարհին ևս քան զևս ծանրանայր 'ի վերայ նորա, և անզգամութիւնն նորա ապիկար էր ձեռնտու լինել նմա[5], խորհուրդ կալաւ կոչել առ ինքն զԼիկոփրոն. այլ նա մերժեաց ցասմամբ զամենայն հրաւէրս նորա: Այլ նորա յանհնարս լեալ՝ եդ 'ի մտի հրաժարել 'ի թագաւորութենէ, և ինքնահաւան գնալ 'ի Կորկիւրա, որպէս զի որդի նորա մեկնեալ անտի գնասցէ թագաւորել 'ի Կորնթոս: Այլ մինչդեռ խորհուրդն 'ի կատարումն գայր, Կորկիւրա-

1 Երոդոտոս, գիրք Գ. գլ. 52:

2 Նոյն անդ:

3 Ստոբ. ճառ. 3. էջ 46:

4 Նոյն, ճառ. 41. էջ 247:

5 Երոդոտոս, անդ. գլ. 53:

էր նոցա¹, և չարչարէր զժողովուրդն 'ի խիստ գոր-
ծըս ծառայութեան : Եւ ինքն անդադար 'ի կառ-
կածանս և յարհաւիրս կայր, և պատուհասէր
զանմեղ քաղաքացիսն որ նստէին խաղաղ 'ի հրա-
պարակի², և դատապարտէր որպէս մեղապարտ
զամենայն ոք որ կարէին մեղանչել նմա :

Նշէտք առանձին յաճախեցին զարհաւիրս նո-
րա . քանզի Լեկափրոն՝ հուսկ կրտսերագոյն յոր-
դիս նորա՝ դիտացեալ 'ի հաւաս իւրմէ զողորմ մահ
մօր իւրոյ, որպէս ոխայր ընդ սպանողին՝ մինչև
չհանդուրժել տեսոյ նորա, և ոչ պատասխա-
նել բանից նորա : Պաղատանք և Թախանձանք
ընդունայն վատնեցան, և հարկ եղև Պերիանոսի
արտաքսել զնա 'ի տանէ . և արգելել քաղաքայ-
նոց՝ մի ումեք ընդունել զնա 'ի տուն, և մի խօ-
սել ընդ նմա, և որ ոչ հնազանդեսցի հրամա-
նին՝ տուժեսցի տուգանս մեհենին Նշողանի : Նր
քայորդին պատապարեցաւ 'ի կամնորակայ զաւե-
Թըս հասարակաց անօգնական և անտրտունջ, բա-
հանիրեալ կրել զամենայն վիշտս՝ քան մատնել
զբարեկամս իւր 'ի մոլեգնութիւն բռնաւորին :
Այլ յետ աւուրց դէպ եղև հօրն տեսանել զնա,
և յուզեցան գութքն հայրենի . և ընթացեալ առ
նա, զամենայն ողոքանս 'ի կիր էարկ, այլ 'ի զուր .
զի պատասխանի ետ նմա որդին և ասէ . Հայկա-

¹ Երոդոտոս . գիրք Ե . գլ. 1104 :
92 : Դիոգ . Լայերտ . գիրք Ա . ² Նիկող . դամասկ . 'ի ծաղ-
յօգ . 97 : Պղուտ . հա . Զ . էջ կողքալ . Վալեզի, էջ 480 :

ռակ հրամանիդ քում գործես, և պարտապան ես տուգանաց : Նմին իրի խորհուրդ կալաւ հայրն աքսորել զնա 'ի Կորկիւրա կղզի, զոր ընդ իւրև նուաճեալ էր[1] :

Արտմտութիւն դիցն ետ նմա երկայն աւուրս, որպէս զի 'ի խղճէ չարեացն ընդ երկար տանջեսցի : Այլ եւս ժամանակ էր նմա ասելոյ որպէս յառաջն, թէ լաւ իցէ նախանձ արկանել յայլս քան ըզգութ[2]. վշտակրութիւնք հարկեցուցին զնա խոստովանել՝ զի լաւ է ռամկապետութիւն քան զբռնաւորութիւն[3] : Այլ 'ի խորհրդակցելն ուրուք նմա հրաժարել յաթոռոյ, ասէ. Աղուկ եմ ես, զի հաւասար վտանգ է բռնաւորի իջանել յաթոռոյ և անկանել[4] :

Այլ իբրև բեռն իրաց աշխարհին եւս քան զեւս ծանրանայր 'ի վերայ նորա, և անդրանիկն նորա ապիկար էր ձեռնտու լինել նմա[5], խորհուրդ կալաւ կոչել առ ինքն զԼիկոփրոն. այլ նա մերժեաց ցասմամբ զամենայն հրաւէրս նորա : Այլ նորա յանհնարս լեալ՝ եդ 'ի մտի հրաժարել 'ի թագաւորութենէ, և ինքնահաւան գնալ 'ի Կորկիւրա, որպէս զի որդի նորա մեկնեալ անտի գնասցէ թագաւորել 'ի Կորնթոս : Այլ մինչդեռ խորհուրդն 'ի կատարումն գայր, Կորկիւրա-

1 Երոդոտոս, գիրք Գ. գլ. 52 :

2 Նոյն անդ :

3 Սառ. Ճառ. 3. էջ 46 :

4 Նոյն, Ճառ. 41. էջ 247 :

5 Երոդոտոս, անդ. գլ. 53 :

ցիք դարհուրեալ յերերալոց բռնաւորին՝ կարծե-
ցին զկեանս որդւոյ նորա [1] ։ Այնհետ հայր նորա
և ոչ սփոփանաց 'ի լրումն ամենայն զարմանի մեծ-
ձեռնութիւն վասն դառնաձանութեանն ։ Զի
իբրև պատանիս երեքարիւր յազգաց կորկիւրա-
ցւոց հանեալ 'ի մի 'ի նաւաց իւրոց յոբէր ար-
քայլին ընդդացւոց, 'ի հասանել նաւուն 'ի Սա-
մոս՝ ըմբռնեցեք կղզւոյն զԹադեալ 'ի Թշուառու-
Թիւն եղկելեացն, զերծուցին զնոսա հնարիւք
մեր իւրաքանչիւր ընտանեաց [2] ։ Պերիանդրոս առ դայ-
րայն ամբիկոր արատնութեանն մեռեալ, մեծա-
ւորաց զկեանս իւր անձաց իբրև ուԹանից, Թագա-
ւորեալ զանձն քաղաքամանեաց [3] * ։

Նոր իմնալ նորա զայն՝ բարձմամբ յիշատակա-
րանք և հերք իսկ բռնաւորութեան 'ի մեջ [4] ։
Իսկ ամենաօԹի ուրումն զհետ նորա յաջորդեալ,
զերեամ եւեԹ Թագաւորեաց [5] . քանզի յետ սուղ
ժամանակին դաւաճանեալ կորնԹացւոց ընդ աղաղա-
տացիս [6], կանգնեցին զկարգ ռամկութեանն՝ որ
մինչեւ ցժամ եկաց մշտատեւ, զի նուազութեք 'ի
նախս իշխանն քան Թէ ռամիկն, և իրք կարեւորք
ոչ 'ի միաւորական մեծիւ ամբոխին հաստատեալ
կային անդ [7] ։ Նշանել քան յայլ ամենայն քաղաքս

1 Հերոդ. գիրք Գ. գլ. 53։
2 Նոյն անդ, գլ. 48։
3 Արիստոտ. յղ. հատ. գիրք Ե. գլ. 12. եջ 411։
* Ն. Ք. 588 ամաւ։
4 Պլուտ. յղ. չար. Հերո-զաւակայ, հա. Զ. եջ 860։
5 Արիստոտ. անդ։
6 Պլուտ. անդ, եջ 889։
7 Նոյն 'ի Դիոն, հա. Ա. եջ 981։

Ելլադայ կացին 'ի Կորնթոս արք քաջք յառաջնորդութիւն¹. Եւ նոքա իմաստութեամբն իւրեանց եւ հմտութեամբ այնպէս հաստատուն կալան զսահմանադրութիւնն, զի նախանձայուզութիւն ամենեկին ընդդէմ ազատամունոյն չկարաց երբէք դղրդեցուցանել զայն²։

Զխտիր զանազանութեան երկոցունց դասուցս քաղաքայնոց եբարձ Լիկուրգոս 'ի Սպարտայ. իսկ Փիդոն մի յօրէնսդրացն կորնթացւոց, եւ որպէս թուի՝ ժամանակակից Լիկուրգեայ կացեալ, պարտ վարկաւ պահել զայն 'ի Կորնթոս։ Ըստ նմին քաղաքի կառուցելոյ 'ի տեղւոջ՝ ընդ որ արահետն ճանապարհն էր վաճառականութեան, եւ որում հարկ էր համապազ ապառնջականել զհիւրս, ոչ էր պարտ զնոյն ունել զգուշութիւն՝ որ ինչ քաղաք մեկուսի յանկեան ուրեք Պեղոպոնեսայ կացեալ։ Նա Փիդոնի թողեալ զանհաւասարութիւն բաղդի նոցա, զնոյն հող զգուշութեան կալաւ 'ի սահմանել զթիւ ազգատոհմից եւ քաղաքայնոց³։ Օրէնքս այս 'ի ձեռն գալոյն վաղնջուց դարուցն, յորս մարդիկ 'ի սակաւաւոր միաբանութիւնս բաժանեալ էին, եւ ամենայն պէտք նոցա սահմանեալ 'ի պարզ կենաց, եւ ամենայն ցանկութիւն նոցա յապահովութիւն անձանց. շատ էր ազգաց իւրաքանչիւր ունել բաւական բա-

1 Ստրաբ. գիրք Ը. էջ 382։ Պլուտարք. 'ի Դիոն. հտ. 1. էջ 981։

2 Գոգէէն. 'ի մարթանոն, գիրք Ա. գլ. 41. յօդ. 2։

3 Արիստոտ. յղ. հատ. գիրք Բ. գլ. 6. էջ 321։

Սիկիոնացիք զհիմնարկութիւն քաղաքին իւրեանց յոյժ 'ի վեր անձեալ երիցացուցանեն հակառակ իմն աւանդութեանց այլոց ազգաց։ Կաստորայ՝ առ որում իջեւանեալն էաք, եցոյց մեզ զցուցակս բազմութեան թագաւորաց որ կալան զաթոռն ընդ այն հազար, եւ կրտսերագոյնն 'ի նոցանէ եկաց գրեթէ ժամանակակից տրովական պատերազմին[1]։ Այլ մեք աղաչեցաք զնա՝ մի յոյժ անդուստ 'ի վերուստ առնել սկիզբն պատմութեանն, այլ յերիս կամ 'ի չորս դարս եւեթ 'ի վեր ընթանալ. իսկ նա ասէ. Յայնու ժամանակօք կացին կարգ թագաւորացն՝ որ բռնաւորքն կոչին, զի անձնեւին ինքնիշխանք էին. եւ ոչ գտին նոքա այլ հնարս հաստատուն ունելոյ զիշխանութիւն իւրեանց ընդ դար մի, բայց 'ի չափու ունել զայն՝ պատուհաս կալով օրինաց[2]։ Որթագորաս առաջին 'ի նոցա եկաց, եւ Կլիսթենէս վերջին։ Դիք որք դեղս սատանիկս ուրեք ուրեք 'ի սատակման չարեաց 'ի կեր արկանեն, յարուցին զնոսա զերկուսին թագաւորս՝ առ 'ի բառնալ 'ի մէնջ զազատութիւնն դժնդակ քան զծառայութիւն։ Որթագորաս հեզութեամբ եւ խոհականութեամբ իւրով սանձահարեաց զմոլեգնութիւն խռովարարաց պառակտելոց[3]. իսկ Կլիսթենէս

1 Կաստոր, 'ի Ժամանակագր. Եւսեբ. գիրք Ա. էջ 11։ Պաւսան. գիրք Բ. գլ. 7. էջ 127։

2 Արիստոտ. յղ. հաս. գիրք Ե. գլ. 12. էջ 411։

3 Պղուտ. յղ. յամր վրէժուց դից, հտ. Զ. էջ 553։

սիրելի եղեւ առաքինութեանցն, եւ քաջութեան իւրում ահարկու :

Ամփիկտիոնեան աշխարհաժողովն 'ի գումարել զազգս Յունաց ընդդէմ կիւռացւոց* ամպարշտելոց 'ի մեհեանն Դեղփեայ՝ կացուցին մի 'ի զօրավարաց զԿլիսթենէս, որ մեծախոհութեանն իւրով խոնարհէր յաճախ 'ի խորհուրդս Սողոնի՝ որ 'ի բանակի անդ էր¹ : Այլ 'ի կատարած մարտին Կլիսթենէս զմասն աւարին որ նմա անկ էր՝ ծախեաց 'ի կառուցանել զաւիթս բազմանկարակերտս մեծաբերձս 'ի մայրաքաղաք թագաւորութեան իւրոյ² :

Դէպք իմն յաճախեցին եւ եւս զհամբաւ թագաւորութեանն նորա : Ի կառապարշաւս ողիմպիականս տօնից յաղթեալ նորա 'ի քառաձին, եւ այն ինչ անուն նորա հռչակեցաւ, քարոզ 'ի մէջ անցեալ՝ լոր 'ի լու ամենայն բազմութեան 'ի զնին կացելոցն հրաւիրակեաց, զի որոց ոք արժան էր ցանկալ հարսանեաց Ագարիստեայ դստեր Կլիսթենեայ՝ գայցեն ամենեքին 'ի Սիկիոն մինչեւ ցաւուրս վաթսուն, զի յայնժամ եւս յայտնեսցի փեսայ արքային³ :

Ապա վաղվաղակի յամենայն կողմանց Յունաց եւ Իտալիոյ դիմեցին [illegible] ամենեքին, որ պատ-

* Իբր 596 ամօք Ն. Ք. :

¹ Պաւսան. գիրք Ժ. գլ. 37. էջ 897 : Պոլիեն. 'ի մարթանս, գիրք Գ. գլ. Ե :

² Պաւսան. գիրք Բ. գլ. 9. էջ 133 :

³ Երոդոտ. գիրք Զ. գլ. 126. էջ 496 :

Ճառամնօք ինչ արժանի հանճարեղին զանձինս փառաց խնամածութեամն : Նոյն նոսա էր և Սմինդիրիդէս փարթամագոյնն և բարեկեցիկ քան զամենայն սիբարացիս. և եկն նա պատերազմիկ նաւաւ միով որ իւրն էր, ածեալ ընդ իւր հազար մի 'ի ստրկաց իւրոց՝ ձկնորս, հաւորս և խոհարարս[1] : Սա թէ տեսանէր շինականի ուրուք ձգեալ ուժգին զբրիչն, թուէր նմա թէ կեղեքէին աղիք իւր. և ոչ կարէր 'ի քուն լինել, եթէ մի 'ի թերթից վարդենեաց՝ որովք ծածկէին պաստառակալք անկողնոց նորա՝ գտանէր ծալեալ[2] : Փափկութեան նորա ոչ ինչ այլ հաւասարէր՝ բայց մեծափառ պերճութիւն նորա, և ոչ ինչ այլ մեծափառութեան նորա՝ բայց յանդգնութիւն իւր : Յաւուր յորում եհաս նա 'ի Սիկիոն, ընդ երեկս 'ի ժամ ընթրեաց չկամէր թէ ոք առ իւր բազմեսցի, բայց միայն 'ի դատարկէ աղքայի՝ եթէ լցի նաւ իւր 'ի հարստութիւն :

Ընդ սոսին նորա էին Լաւկեդէս արգիւացի 'ի վաղնջուց ազգատոհմէ, Ամիանտ արկադացի 'ի զաւակէ Եւփորիոնի՝ զորմէ ասեն զդիոսկուրացիսն ասպնջականեալ զԿաստոր և զՊողիդեւկէս, Մեգակղէս 'ի տանէ Ալկմէոնեանց՝ որ հզօրագոյնն էր յԱթէնս, Իպպոկղիդէս ծնեալ 'ի նըմին քաղաքի՝ երեւելի հանճարով և մեծութեամբք

1 Դիոդ. 'ի ծաղկաք. Վաղես. էջ 230: Աթէն. գիրք Զ. գլ. 21. էջ 273:

2 Սենեկա, յղ. բարկ. գիրք Բ. գլ. 25: Եղիան. զան. պատմ. գիրք Թ. գլ. 24:

և գեղով[1], և այլք ութեքին պէսպէս բարեմաս-
նութեանցն բաւականք 'ի մրցանել ընդ այնպի-
սի ատոխս :

Զօր հանապազ տօնք և խրախուճք էին յար-
քունիս Սիկիոնի, և բաց էր ասպարիզին առաջի
ախոյանացն՝ մրցել 'ի հեռի ընթացս և յայլ ազ-
գի ազգի մրցութիւնս : Կլիսթենէս տեղեկացեալ
նախ ազգապատճանց նոցա իւրաքանչիւր, 'ի միւսն
կայր մարզից նոցա, և խնամով միտ դնէր բուսոյ
բարուց նոցա, մերթ 'ի հասարակաց զբօսանու-
թիւնս, և մերթ 'ի խօսելն ընդ նոսա առանձինն :
Զանխուլ իմն բերմամբ ձգէր զառաջինն յեր-
կուցին ևս աթենացւոցն, այլ ապա շնորհք և վայ-
ելչութիւն Իպոկղիդեայ բովանդակ զբաւեցին
զսիրտ նորա[2] :

Յաւուր յորում զընտրութիւնն առնելոց էր,
ընդ առաւօտն արջառք հարիւր մատուցան 'ի զոհ,
և ապա եւ ճաշ մեծ՝ յոր հրաւիրեցան սիկիո-
նացիք ամենեքեան ընդ հանդերձեալսն 'ի փե-
սայութեն : Յարեան 'ի սեղանոյ, այլ չև ևս վախ-
ճան եղև գինեբրուաց. և լինէին վէճք երաժշ-
տականք և այլ ևս մրցմունք : Իպոկղիդէս որ յա-
մենայնսի գեր 'ի վերոյ գտանէր, յամեաց 'ի զրոյ-
ցըս. և ապա յանկարծ պատուէր եւ նուագա-
ծուին ածել յայանի ինչ նուագ, և սկսաւ կայ-
թըս տուփականս հարկանել այնու խնծղանօք՝ զի

[1] Երոդոտ. գիրք Զ. գլ. 127 :
[2] Նոյն, գլ. 128 :

'ի ցասումն դրդէր զԿլիսթենէս ։ Այս եւս 'ի մէջ բերել բեմ, եւ անդր ընդոստուցեալ՝ նախ զսպարտականս յօրինէր կաքաւս եւ ապա զաթենականս ։ Իսկ Կլիսթենէս զայրացեալ ընդ անճառ գործս նորա եւ ընդ թեթեւամտութիւն, ժոյժ ունէր ․ այլ իբրեւ ետես զնա գլխ'ի վայր յախս 'ի թերս յեցեալ՝ շարժուածս առնելով ոտիւքն ակնարկէս, գոչեաց առ նա եւ ասէ ․ Ո՜ աւակդ Տիսանդրի, 'ի լուծումն հարսանեաց քոց կաքաւեցեր ։ Եւ աթենացւոյն պատասխանի տուեալ, ասէ ․ Երդուեալ 'ի դիս, տէր արքայ, զի Իպպոկղիդէս ոչ կարի ինչ հոգայ ընդ այն ։ Յայն բանն՝ որ յառակս իսկ պատշաճեցաւ[1], Կլիսթենէս ընծեցոյց զամենեսին, եւ պատուաւորեալ զընկերս նորա՝ պարգեւեաց իւրաքանչիւր նոցա քանքար մի արծաթոյ, եւ ծանոյց փեսայ իւր զՄեգակղէս որդի Ալկմէոնի ։ Եւ 'ի զաւակէ սոցա ծնաւ մեծն Պերիկղէս ըստ մայրենի ազգին[2]։

Յաւել Արիստոտէլ, զի յետ Կլիսթենեայ մեռանելոյ ատելութիւն մեծատանց եւ ռամկին ընդ միմեանս*, ախտն այն անբուժելի հասարակապետութեանցն Ելլադայ, ոչ դադարէր պատուականել զհայրենիսն, եւ զի 'ի յետին ժամանակս Եւփրոն ոմն սիկիոնացի, ճարտարութեամբ զռամիկն ածեալ զամենայն իշխանութիւնն[3], կալաւ զայն առ ժա

[1] Պլուտ. յղ. չար. Երոդոտ. հտ. 2. էջ 867 ։

[2] Երոդոտոս, գիրք Զ. գլ. 131 ։

[3] Քանն. պատմ. Յուն. գիրք Է. էջ 623 ։ Դիոդ. գիրք ԺԵ. էջ 582 ։

մանուկ մի, և առաս կորոյս. և սպանեալ յանդի-
մանն առաջնորդին Թեբայ, ուր երթեալն էր խնդ-
րել 'ի նոցանէ զօգնութիւն։ Ոչ իշխեցին Թեբա-
ցիք խնդրել զվրէժ 'ի սպանողաց ամբարտաւանե-
լոյն 'ի բռնաւորութիւն. իսկ ժողովուրդ Սիկիո-
նի, որում Եւփրոն թևարկեալ միշտ, կանգնե-
ցին նմա շիրիմ 'ի հրապարակի, և պատուեցին զնա
ցարդ որպէս գերազանցեալ 'ի քաղաքացիս և մի
յախոյանաց իւրոց[1]։ Իսկ ես ոչ գովեմ զԵւփրոն,
ասէր Արիստրատոս, զի 'ի նեղութիւնս բազում
անզգամ ապստամբեցաւ, և ոչ ջանացաւ հաճել
զկողմն ազնուականաց. բայց սակայն յընկերա-
հաշտ ազատութեան կարևոր է պետ։ Ի բանից
սորա յայտնի եղեն միտք նորա. և յետ ամաց
ինչ զխոստացաք՝ զի զգերագոյն իշխանութիւն զօր-
ավարն ածեալ էր[2]։

Ըղձեցաք մեք ընդ քաղաքն և ընդ նաւահան-
գիստն և ընդ միջնաքաղաքն[3]։ Սիկիոն պանծացի
'ի վէպս ազգաց ընդ խնամոյն 'ի բարգաւաճութի
արուեստից։ Ցանկալի է ինձ ասել հաւաստեաւ՝
որչափ ինչ օգնեաց նա 'ի ծնունդ նկարչութեան
և 'ի զարգացումն քանդակագործութեան. այլ
որպէս վաղ իսկ ասացի, արուեստք ընդ դարս
բազումս զնան 'ի տուներս, և գիւտք նորանշանք
ոչ այլ ինչ են՝ բայց պարտութիւն բազմաց ան-

1 Քսենոփ. պատմ. Յուն. գլ. 7. եր 632։

2 Պղուտ. յԱրատ. հտ. 1. եր 1032։ Պլին. գիրք ԼԵ. գլ. 10. հտ. 2. եր 700։

3 Քսենոփ. անդ, եր 620։

նշանաւոր գիւտից կարապետեանց։ Այս վասն զի անհնար է զշաւիղս նոցա հետազօտել, շատ լինի նկատել զերեւելիսն, և յերր խրացն անմխիթարել ըղձաւանս։

Աշխարհիս 'ի դիպաց կարու պատճառս, քանդակ 'ի կոճոց, և նկար 'ի զարդարագործութենէ այլոց արուեստից։

Ի վաղնջուց ժամանակաց ուշ 'ի կարծս անկեալ ոմանք զծագրել 'ի դեմանի կամ 'ի վերայ ոսկոյ զծիր տոռուերաց մարմնոց հանդիսակայից արեգական կամ որ և պէտ լուսոյ, մանր հնարեցաւ զպատկեր նիւս ծրագրութեամբ յանդիման առնել աչաց։

Նորատին դարձեալ 'ի վաղ ժամանակաց, վասն եւանեզն կրօնից ածելոյ ժողովրդեան՝ յանդիման առնելով նմա զնշանակ կամ զպատկեր պաշտամանն, 'ի սկզբան վէմ ինչ՝ կամ կոճղ ծառոյ ածաւ 'ի պաշտօն. ապա վերին ծայր նոցա 'ի ձև գլխոյ կոկեալ, և ապա գիծք 'ի նոսա զգուշեցան 'ի աչաց ոտից և բազկաց։ Այս վայր քանդակագործութեանն ժամանեալ էր արուեստ առ Եգիպտացիս՝ յորժամ աւանդեցին զայն Յունաց[2]. որք ընդ բազում ժամանակս շատ համարեցան զնախատիպն ևեթ նմանութիւն։ Ապա առ գ. առ գ. [illegible]գրեացն՝ որ յաճախ ուրեք զտանեին 'ի Պերդոպոնէս 'ի ձև չիրմաց և սեանց և բրգանց[3], վեր-

1 Պաւսան. գիրք Է. գլ. 22. էջ 579։
2 Հերոդոտ. գիրք Բ. գլ. 4։
3 Պաւսան. գիրք Բ. գլ. 9. էջ 132։

բերելով զկերպարան մարդոյ, և ոմանք զձեռաց ևս զօրութեան ինչ բերելով զախտս, և զզար-ձից առ մեռեալս կցելոց: Ընդդէմն անուանեալ Հերմեանք զնշանարանս վաճառականին այսորիկ բերեն սովորութեան:

Եգիպտացիք հաւանօրէն յառաջ քան զամենայն ա-ւելի քան զայլս ժառանգեալ զպարծանս հնա-րից քանդակագործութեան[1]. և զնկարչութեան 'ի նմին իսկ ժամանակի, և կամ գէթ վեց հա-զար ամօք նախ քան զերևումն նորա առ Յոյնս[2]: Իսկ Յոյնք թէպէտ և զքանդակագործութեանն զգիւտի զպարծանս թողեալ, այլ զնկարչութեանն հանճարին իւրեանց ածեն[3]: Արդ 'ի միջասահմանին զհա-կառակ մեծեանց պարծանս առեալ, կրկին ազգս զանազանեալ է նկարչութեան. մի՝ որ զծրագիրն և եթ պատկեր ներկէր համակ միագոյն, և միւս ևս՝ որ յոլով ձգամբք բուսական երևել տալ ճշգրի-տիւ զկերպարանս բնութեան:

Առաջինոյն Եգիպտացիք եղեն գտիչք. զի և գը-տանին 'ի Թեբայիդ երանգք պայծառք և անխա-պարտք 'ի վաղնջուց ժամանակաց ներկեալք յո-րմս քարանձաւաց՝ որ թերևս զամենայնադարք նոյն էին, և 'ի ձեղունս մեհենաց, 'ի մեհենական տաճարս նոցա, և 'ի ձևս մարդկան և կենդանեաց: Արդ յերանգաց սատի, յորս և թխթղունք ա-

1 Գոգուէ. յղ. օր. գիրք Բ. հտ. 2. էջ 681: հտ. 2. էջ 686:
2 Պլին. գիրք ԼԵ. գլ. 3. Ը. էջ 382:
3 Նոյն անդ: Սարգաւ: գիրք

կայ զտաճարն յունաց յետնեալք մեծավայելս 'ի զարդ, քանզի պատշաճ է՝ զի յԱշխիստոս զայր արուեստ նկարակուածոյ, եթէ այսպէս հաճոյ թուեսցի ասել, քան թէ արուեստ նկարելոյ ։

Յաւուրս տրովականն պատերազմին ոչ ինչ զառաւել թուի Հելլենաց զարգացեալ յարուեստին¹. այլ զառաւելով ողիմպիադին* ձևարարք սիկիոնացիք և կորնթացիք, որոց վաղ խակ զգիտոյն առաւելագոյն հանճարոյ խորհեալ տաւեալ էր², նշանաւորք կացին վարպետականք՝ որոց աշխէնն յիշատակք, և որք նորաձևութեանցն ածեն զարմանս ։ Մինչդեռ Պոզաղոս սիկիոնացի** զուռս և զձևս անդրեաց զատուցանէր³, Կղէոփանտ կորնթացի զտիպս դիմաց նկարագրեալ՝ զփոշի աղիւսոյ թրծոյ 'ի կիր արկեալ⁴ ։ Յորմէ 'ի միտ առնուլ է, զի անծանօթք էին յայնժամ տա. Յոյնս գերչէ երանգոց՝ որովք արդ նկարէին զայնք մարմնոյ ։

Ի ժամանակօք մարաթոնականն մարտին նկարչութիւն և քանդակ գեղագեղծամանակաց տղայութիւնս 'ի բաց եղեալ, առեալ զարգացմանք հասին 'ի կատարեալ չափ հասակի և գեղոյ յորում արդ տեսանեմքն զնոսա ։ Գրեթէ յաւուրս մեր եկաց 'ի Սիկիոն Եւպոմպոս վարժա-

¹ Հոմեր. Եղիակ. գիրք Բ. տող 637 ։

* Իբր 776 ամաւ Ն. Ք ։

² Պլին. գիրք ԼԵ. գլ. 3. հտ. 2. էջ 681 ։

** Ի յետկոյս մատենիս 'ի տեղեկութիւնս. թիւ ԺԲ ։

3 Դիոդ. գիրք Դ. էջ 276. Սուիդ. 'ի բառն Δαιδάλ.

4 Պլին. անդ, էջ 682 ։

տեաց, երրորդ իմն հաստատեալ վարժարան նը-կարչութեան. զի յառաջ քան զնա յԱթէնս եւեթ եւ 'ի Յոնիա գոյին վարժարանք։ Այլ իսկ 'ի վարժարանէ նորա ելին նկարիչք ճարտարք, որպիսի ոք եւ Պաւսիաս էր, եւ Պամփիլոս՝ որ վար-ժապետեաց անդ՝ մինչդեռ էաք մեք 'ի Սիկիոնա։ Յաջողութիւնք մնաց նորա եւ համբաւ ձգէին առ-նա բազմութիւն յոյժ աշակերտաց, որք նախ քան զաշակերտելն նմա հաստատեալ էին մէն մի քան-քար. եւ ինքն խոստանայր վարժել զնոսա զամս տասն 'ի ներհուն հմտութիւն արուեստին, որում վկայէին վաստակք նորա պանծալիք։ Իսկ յորդո-րէր զնոսա 'ի վարժս բանասիրութեան եւ գիտու-թեանց, յորս ինքն ներհակրթեալ էր[1]։

Ըստ ազդանելն Սիկիոնի խորհրդով նորա հրա-մայեաց, զի յայնմհետէ վարժք գծագրութեան ընդ մտանելոյ դաստիարակութեան մանկութեան ազհմանեսցին, եւ մի եւս գեղարուեստք թողցին 'ի ծառայական ձեռս. եւ օրինակաւ նոցա այլ եւս քաղաքք Յունաց յորդորեալ, սահմանեցին առդ նը-մանող լինել նոցա։ Տեսաք մեք զերկուս յաշա-կերտաց նորա, որք առաւել անուանի եղեն յոյժ, Մելանթոս եւ Ապելլէս[2]։ Ազնուականութիւն մե... էր նորա յառաջինն, այլ մեծագոյն եւս յեր-կրորդն. եւ սա բարեբախտ զանձն համարէր, զի այնպիսում վիճակեցաւ վարժապետի. այլ վաղ

[1] Պլին. գիրք ԼԵ. գլ. 10. էջ 691։
[2] Պլուտ. յԱրատոս. հտ. 1. էջ 1032։

ղութիւնն՝ յորում կեցին բարեբաստք. և միաբանեցին նոքա մերթ ընդ սպարտացիս¹, և մերթ ընդ աթենացիս՝ յորս առաւել միտէին²։

Ի ժամանակին յայնմիկ Ալկիբիադ յորդորէր զբնակիչս Պատրայ՝ ածել երկայնաձիգ պարսպիւ զքաղաքին մինչև 'ի նաւահանգիստն, որպէս զի տիրողք նաւացն աթենացւոց կարասցեն հասանել անդր յօգնութիւն. և մի ոմն 'ի մէջս խորհրդեանն ազատականաւ ասէ. Եթէ զայդ առնիցէք, կլցեն զձեզ աթենացիք։ Եւ Ալկիբիադ ասէ. Մարթի իսկ թէ կլանիցեն, այլ աթենացիք ընդ ոտս, իսկ սպարտացիք ընդ գլուխ սկսանիցեն կլանել³։ Աքայեցիք և ընդ այս ամենայն յետ այնորիկ միաբանեցին. և յետ ամաց ինչ ուղևորութեանս մերոյ առաքեցին երկաս հազար այր յօգնութիւն փոլկիսացւոց, և 'ի Խերոնամարտին Փիլիպեայ նշանաւոր եղեն զունդք նոցա⁴։

Պելլենէ քաղաք, փոքրիկ որպէս զայլ ամենայն քաղաքս Աքայիոյ⁵, կառուցեալ կայ 'ի կող բլրի միոջ. որոյ այնակիսի անձև է կերպարան, զի երկուքին կողմանք քաղաքին՝ առաւ և անառ բլրոյն կացեալք՝ անկցորդք են միմեանց։ Նաւահանգիստ նորա հեռի է վաթսուն ասպարիզաւ. քանզի 'ի

1 Թուկիդ. գիրք Բ. գլ. 9։
2 Նոյն. գիրք Ա. գլ. 111։ Պաւսան. գիրք Է. գլ. 6. էջ 837։
3 Պլուտ. յԱլկիբ. հտ. 1. էջ 198։
4 Պաւսան. անդ։
5 Պլուտ. յԱրատ. հտ. 1. էջ 1031։

վաղ ժամանակս բնակիչք կողմանս միոյ երկրի յահէ հնուց ծովային միաբանեալ ամբառնային 'ի բարձունս, առաւել կամ նուազ հեռի 'ի ծովէ․ և ամենայն քաղաքք հնոց Ֆլանդրայ ըստ այսմ օրինակի կառուցան։

Յեղանակէն 'ի Պելլենեայ տեսանք զԴիոնիսեայ մեհեանն, ուր ամի ամի զ. Ջ. հազարաց տօնան զիշերային կատարեն՝ ղամբարս բազում յոյժ լուցեալ, և մատռուակեալ ամենեցուն առատապէս զինի[1]։ Համդէպ նորին պահպանողին Արտեմեայ կայ անտառն դիցանուէր, ուր ոչ է օրէն մտանել՝ բայց միայն քրմաց։ Եւ մերձ անդր 'ի մեհենին Աթենասայ տեսանք զպատկեր դիցուհւոյն յոսկւոյ և 'ի փղոսկրէ հրաշակերտ, զոր 'ի Փիդիասայ ասեն դրօշեալ։

Եւ չոգաք յԵգիրա, հեռի 'ի ծովէ ասպարիզօք իբր երկոտասան։ Եւ մինչդեռ 'ի զնին յիշատակարանացն շրջէաք՝ պատմէին մեզ, զի յառաջ ժամանակաւ բնակչաց երկրին ոչ ունելով զօրութիւն զդէմ ունելոյ սիկիոնացւոց՝ որք 'ի վերայ նոցա զիմեալ գային, կալան հօրանս այծից, և կապեալ ջահս բորբոքեալս յեղջերս նոցա՝ յառաջ մատուցին զնոսա զիշերային համդէպ թշնամեաց։ Որոց կասկածեալ՝ թէ զունդք օգնականք եգիրացւոց գային, խորհուրդ կալան դառնալ յետս[2]։

1 Պաւսան. գիրք Է․ գլ․ 27․ էջ 595։
2 Նոյն անդ գլ․ 26․ էջ 591։

ղութիւնն՝ յորում կեցին բարեբաստութք. և միա-
բանեցին նոքա մերթ ընդ սպարտացիս², և մերթ
ընդ աթենացիս՝ յորս տաաւել միտէին²:

Ի ժամանակին յայնմիկ Սփիրիդոն յորդորէր զբնակիչս Պլատեայ՝ ածել երկայնել զպարիսպս քաղաքին մինչև 'ի նաւահանգիստն, որպէս զի տորմիղք նաւացն աթենացւոց կարասցեն հասանել առնուլ յօգնութիւն. և մի ոմն 'ի մեծաց խորհրդեանն աղաղակեալ՝ ասէ. Եթէ զայդ առնիցէք, կլլեն զձեզ աթենացիք: Եւ Սփիրիդոն ասէ. Մարթի իսկ թէ կլանիցեն, այլ աթենացիք ընդ ոտս, իսկ սպարտացիք ընդ գլուխս սկսանիցեն կլանել³: Աքայեցիք և ընդ այլս ունեմս յետ այնորիկ միաբանեցին. և յետ սակաւ ինչ ուղևորութեանս մերոյ առաքեցին երկու հազար այր՝ յօգնութիւն փոկկիսացւոց, և 'ի Ճակատամարտին Քերոնեայ նշանաւոր եղեն զունդք նոցա⁴:

Պելլենէ քաղաք, փոքրիկ որպէս զայլ ամենայն քաղաքս Աքայիոյ⁵, կառուցեալ կայ 'ի կող բլրի միոջ. որոյ այնպիսի անձև է կերպարանն, զի երկոքին կողմանք քաղաքին՝ աստի և անտի բլրոյն կացեալք՝ անկցորդք են միմեանց: Նաւահանգիստ նորա հեռի է վաթսուն ասպարիզաւ. քանզի 'ի

1 Թուկիդ. գիրք Բ. գլ. 9:
2 Նոյն. գիրք Ա. գլ. 111: Պաւսան. գիրք Է. գլ. 6. էջ 537:
3 Պլուտ. յԱգիսիս. հտ. 1. էջ 198:
4 Պաւսան. անդ.
5 Պլուտ. յԱրատ. հտ. 1. էջ 1031:

վաղ ժամանակս բնակիչք կողմանս միոյ երկրի յահէ հինից ծովայնոց միաբանեալ ամբանայրն 'ի բարձունս , աւարել կամ նուաղ հեռի 'ի ծովէ . և ամենայն քաղաքք հինք Եղիպտայ ըստ այսմ օրինակի կառուցան :

Յեղանակն 'ի Պեղենեայ տեսաք զԱփոնիսեայ մեհեանն , ուր անդ անդ զ.Դ. ահապաց տոնան զիշերայն կատարեն՝ զամենայն բազում յոյժ լուցեալ , և մատուցեալ ամենեցուն տատապէս զինի[1] : Հանդէպ նորին պահպանողին Սկրտեմեայ կայ անտառն զեցանուէր , ուր ոչ է օրէն մտանել՝ բայց միայն քրմաց : Այլ մերձ անդր 'ի մեհենին Աթենասայ տեսաք զպատկեր զեցուհւոյն յասկւոյ և 'ի փղոսկրէ հրաշակերտ , զոր 'ի Փիդիասայ ասեն դրոշեալ :

Այլ չոգաք յԱնդիրա , հեռի 'ի ծովէ ասպարիզօք իբր երկոտասան : Այլ մինչդեռ 'ի զնին յիշատակարանացն շրջէաք՝ պատմէին մեզ , զի յառաջ ժամանակաւ բնակչաց երկրին ոչ ունելով զօրութիւն զդէմ ունելոյ սրկհնացւոց՝ որք 'ի վերայ նոցա գիմեալ գային , կալան հօրանս այծից , և կապեալ ջահս բորբոքեալս յեղջերս նոցա՝ յառաջ մատուցին ընդդէմ զիշերայն հանդէպ թշնամեաց : Որոց կասկածեալ՝ թէ գունդք օգնականք եգիպտացւոց գային , խոյս տուեալ կալան դառնալ յետս[2] :

1 Պաւսան գիրք Է · գլ · 27 · էջ 595 :
2 Նոյն անդ գլ · 26 · էջ 591 :

Անտի յառաջ խաղացեալ՝ մտաք 'ի քարայր մի, ուր վիճակաւ հարցուածն պատմէր զհանդերձեալս: Որ դրօշելովն Հերակլեայ կուտեալ կան քուէայք, 'ի դէմս իւրաքանչիւր այլ և այլ բերելով նշանս. առնու անտի ըստ դիպի քուէական քուէայս, և արկանէ զնոսա 'ի տախտակի՝ ուր նոքին դրոշմեալ կան նշանակք, համանդերձ մեկնութեամբքն[1]: Այս ևս ազգ պատգամաց որպէս զայլոն յաճախեալ է, և համօրէն նոցին հաւատարիմ:

Յառաջ ևս անցեալ՝ շրջեցաք յաւերակս Աղկես քաղաքի, հեռի երբեմն 'ի ծովէ տապարիզօք երկոտասան, որ յաւուրս մեր 'ի սասանութենէ երկրի կործանեցաւ: Այս ահագին յեղափոխութիւք յաճախագոյն պատահեն 'ի վայրս մերձակայս ծովու[2], և բազում այն է՝ զի նշանք ահաւորք կարապետեն այնոցիկ. քանզի հեղեղք անձրևաց զամիսս յոլովս ողողանեն զերկիր, կամ փակին երկինք առ անձնկալութի երաշտոյ. նուաղի փայլումն ճառագայթից արեգականն, կամ շառագունի իբրև զհրատ բորբոքեալ. հողմք սաստկաշունչք խամրեն զանդաստանս, բոցք փայլականաձևք ցոլանան ընդ օդս, և այլ ևս երևոյթք յառաջընթացք ահեղ պատահարաց[3]:

Յետ կործանման Աղկես քաղաքի պատմէին

1 Պաւսան. գիրք Է. գլ. գիրք Բ. գլ. 8. էջ 567:
25. էջ 590: 3 Պաւսան. անդ, գլ. 24.
2 Արիստոտ. Նշանք օդ. էջ 585:

սքանչելիս բաղուամն գուժկանս արկածիցն լեալ․ զԱնեղոս կղզի սասանեալ, և սիւն մեծ հրեղէն մինչև յերկինս ամբարձեալ[1]։ Այլեւ զայս որպէս ոք և ախորժէ․ բայց սուղ ինչ յառաջ քան ըզԼեւկտրայ ճակատամարտն[2]* գիշերայն 'ի ձմեռանի[3], առատ հողմն հիւսիսոյ և անտի հարաւահողմն շնչեալ, յետ ուժգին և արագ արագ սասանութեանց' որ յաճախէին մինչև ցառաւօտ, կործանեցաւ քաղաքն հիմնայատակ, և հուպ ընդ հուպ ծածկեցաւ ընդ ալեօք' ընդարձակելով ծովուն զսահմանս իւր[4]։ Այլ այնպէս 'ի խոր ընկլուզեալ, զի մինչև ցծայրս մայրեաց անտառին նաւիրականի Պոսիդեայ ամբարձան ջուրքն։ Այլ ապա տակաւ զիջան ջուրքն, այլ դեռ ևս ծածկեն զաւերակս քաղաքին, և հազիւ հետք ինչ նորա նշմարին[5]։ Ընակիչք քաղաքին կորեան առ հասարակ, և ընդունայն եղեն ջանք ամփոփելոյ 'ի վաղիւ անդր և յաւուրս որ զկնի' զդիակունս նոցա 'ի թաղումն[6]։

Այլ որպէս լուաք, ոչ հասին սասանութիւնքն Այգիոն քաղաք[7], որ քառասուն ևեթ ստադա-

1 Կալլիսթ․ առ Սենեկայ խնդ․ բն․ գիրք Զ․ գլ․ 26։

2 Պօղիբ․ գիրք Բ․ էջ 128։ Ստրաբ․ գիրք Ը․ էջ 384։

* Ի կատարած ամին 273 Ն․ Ք․ կամ 'ի սկիզբն յաջորդին։

3 Հերակղ․ առ Ստրաբոնի, անդ։ Դիոդ․ գիրք ԺԵ․ էջ 363։

4 Արիստոտ․ յղ․ աշխարհի; գլ․ 4․ հտ․ 1․ էջ 608։ Դիոդ․ անդ, էջ 364։

5 Պաւսան․ գիրք Է․ գլ․ 24․ էջ 587։ Պլին․ գիրք Բ․ գլ․ 92․ հտ․ 1․ էջ 115։

6 Հերակղ․ անդ։

7 Սենեկա, խնդ․ բն․ գիրք Զ․ գլ․ 25։

ըրդաւ հեռի է 'ի տեղւոջէն[1] . այլ ընդ միւս կողմն ձգեցան, և 'ի Բուրա քաղաք՝ որ ոչ ինչ աւելի քան զԵգիոն մերձ է յԵլիկէս՝ պատուարք . և տունք և մեհեանք և անդրիք և մարդ և անասուն եղծան կամ յերկիր կործանեցան։ Քաղաքացիք որ 'ի բացեայ կային 'ի քաղաքէն, դարձեալ անդր կանգնեցին զքաղաքն՝ որ կայ մինչև ցայսօր[2] . իսկ 'ի տեղւոջ Ելիկէս քաղաքի կառուցաւան փոքրիկ, ուստի մտեալ 'ի նաւակ մի՝ շրջեցաք տեսանել 'ի մօտոյ զմնացուածս քաղաքին աստ անդ առ ափն ծովուն։ Այլ առաջնորդքն մեր 'ի հեռուստ շրջան առեալ ածէին զմեզ, առ երկիւղի բախելոյ նաւուն ընդ պղնձի պատկեր Պոսիդոնի՝ որ մինչև 'ի մկանունս ծովուն հասանէ, դեռ ևս կանգուն կալով 'ի խարսխի[3]։

Եգիոն յետ կործանման Ելիկէս քաղաքի ժառանգեալ զսահմանս նորա, եկաց գլխաւոր 'ի քաղաքս Աքայիոյ։ Անդր գումարին ժողովք դաւառին 'ի մերձակայ անտառն նուիրական Ամամագդայ առ մեհենաւ նորին զծովեզերբն[4]։

Աքայիա անդստին 'ի վաղնջուց ժամանակաց յերկոտասան քաղաքս բաժանի, որոց իւրաքանչիւր եօթն կամ ութ աւանք են շուրջանակի։ Ամենեցուն նոցա օրէն է արձակել հրեշտակս 'ի սահմանեալ ժողովն, որ գումարի 'ի սկիզբն տա

1 Պաւսան. գիրք Է. գլ. 24. էջ 585։

2 Նոյն անդ, գլ. 25. էջ 590։

3 Երատոսթ. առ Ստրաբ. գիրք Ը. էջ 384։

4 Ստրաբ. անդ, էջ 385։ Պաւսան. անդ. էջ 584։

րոյ նոցա ՚ի հաստատակել զաղմնայնոց։ Ընդ սահմանելին կարգք ըստ հարկի իւրաց ժամանակին, անդ ընտրելին իշխանք ՚ի կատարել զսահմանեալ կարգսըն, և ՚ի գումարել ժողովս ըստ ոչ սովորութեն յորժամ պատերազմ ՚ի վերայ կայցէ կամ խորհուրդ նիզակակցութեան այլոց ազգաց[1]։

Տեսչութիւն իւրաց աշխարհին, եթէ այսպէս ՚ի դէպ իցէ ասել, իւրովի ուղղի. և է կարգ տեսչութեանն ընկերահաշտ ազատութիւն, զսկիզբըն և զպահպանութիւն իւր ՚ի բարեպատեհ հանգամանաց ունելով։ Քանզի աղքատ է երկիրն և վերջացեալ ՚ի վաճառականութենէ, զըրթէ և յարուեստից իսկ ճարտարութենէ, քաղաքացիք առ հասարակ ժառանգեն խաղաղութե̃ զհաւասարութիւն և զազատութիւն՝ զոր մատուցանեն նոցա օրէնք։ Եւ զի չէ յարուցեալ ՚ի միջի նոցա անխաղաղասէր ոք[2], ցանկութիւն աշխարհակալութեանց անծանօթ է առ նոսա. և զի սակաւ է նոցա կցորդութի̃ ընդ ազգս զեղծս, հեռի է ՚ի նոցանէ ստութիւն և նենգ, և առ թշնամիսն իսկ ոչ վարէին նովաւ[3]. և վասն զի ամենայն քաղաքաց նոցա նոյն օրէնք են և նոյն իշխանութիւնք, ամենեքին զմի կատարեն մարմին և միակ պետութիւն. և տիրէ յամենեսին ՚ի նոսա միաբանութիւն, ծաւալեալ և ՚ի զանազան դասս քաղաքայնոց[4]։ Գերազանցութիւն կար-

1 Պոլիբ. ծաղկաք. հրեշտ. էջ 855։

2 Նոյն, գիրք Բ. էջ 125։

3 Նոյն, գիրք ԺԳ. էջ 672։

4 Յուստին. գիրք ԼԴ. գլ. 1։

գաց նոցա և ուղղութիւն աւանդանւոյն այնպէս վկայեալ է յամենեցունց, զի քաղաքաց Յունաց կամ Իտալիոյ պարտաւորեալ երբեմն 'ի գժտութեանց՝ դիմէին յԱքայիա գտանել զխաղաղութիւն, և ոմանք 'ի նոցանէ հանգոյն նախնի կաղմէին միաբանութիւն: Այլ բազում ինչ ժամանակք են, զի և սպարտացիք և Թեբացիք վիճեալք ընդ միմեանս զպատճառաց յաղթութեան Լեւկտրայ ճակատամարտին, զնա կացուցին իրաւարար վճռին՝ յոր հաստատեալ կային փառք նոցա, և անաչառութիւն զերծ յամենայն կողմնաւոր բարուց խնդրէր առ վճռան:

Տեսանէաք յաճախ առ ծովեզերբն մանկունս, զի գայլախաղիւք պարապէին. քանզի աքայեցիք յօժարագոյն 'ի հրահանգս յայս տան զանձինս, և այնպէս աջողեալք յայն, զի զնդակ կապարեայ ճարտար 'ի պարսատրիկն զետեղեալ՝ ձգի սլանայ հարկանէ 'ի քթթել ական զկէտ նպատակին [1]:

Եւ 'ի գնալն մերում 'ի Պատրա, անցաք մեք ընդ քաղաքս բազումս և ընդ աւանս. քանզի բազմամբնակ է յոյժ Աքայիա [2]: Ի Փարա տեսաք մեք 'ի հրապարակի վէմս երեսուն քառակուսի, որ պաշտէին փոխանակ դից՝ զորոց ոչ ես յիշեմ զանուանսն [3]: Մերձ առ այնոսիկ է անդրի Հերմեայ չորմաձև երկայնամօրուս, և 'ի

1 Լիւ. գիրք ԼԸ. գլ. 29:
2 Ստրաբ. գիրք Ը. էջ 386:
3 Պաւսան. գիրք Է. գլ. 22. էջ 579:

հանդիպոց նորա պատկեր Յուսեայ՝ պար առեալ 'ի կանթեղաց պղնձեաց: Այլ պատմեցաւ մեզ՝ զի Հերմէս անուն տայր պատգամն, և զի յունկանէ ևեթ առնելով նոսա հարցուածոց՝ նոյնհետայն տայր զհրամանն պատասխանւոյն: Այսնվայր եհաս ումն չքնակոնն հարցանել զնա. նախ մատոյց խունկս դիցուհւոյն, արկ իւղ 'ի կանթեղսն և ելից զնոսա, եդ 'ի վերայ բագնին դրամ մի արծաթի փոքրիկ, և ապա մատուցեալ առ Հերմէս՝ եհարց զնա անձայն, և ունկնախից լսելափակ 'ի բաց եկաց 'ի նմանէ. և ապա մնայր ազդելոյ նախաբարբառ պատասխանւոյն[1]: Ժողովուրդն էր զհետ նորա, և մեք դարձաք 'ի բնակութիւն մեր:

Մինչ չև հասեալք 'ի Պատրա, զկնի առաք 'ի դաշտավայրեղ ուրեք անտառի՝ ուր մանկտւոյ բազմութիւն հրահանգէին յարշաւ[2]: Ի մի 'ի ծառաստանէ ձեմելեացն ընդ առաջ եղև մեզ մանուկ երկոտասանամեայ կամ երեքտասանամեայ, զգեցեալ հանդերձս գեղեցիկս, և հասկօք պսակեալ: Հարցաք զնա, և ասէ ցմեզ. Տօն է այսօր Դիոնիսի Եսիմնետեայ, քանզի այս անուն է նորա*. մանկունք քաղաքիս առ հասարակ ժողովեալ յեզր գետոյն Միլիքեայ, անդ յօրինեմք Թափօր, գնալ 'ի մեհեան Դի-

1 Պաւսան. գիրք Է. գլ. 22. էջ 579:

2 Նոյն անդ. գլ. 21. էջ 577:

* Եսիմնետ 'ի վաղեմւոյ ժամանակս նշանակէր Թագաւոր: (Արիստոտ. յղ. հաւ. գիրք Գ. գլ. 14. հա. 2. էջ 356):

տեմեայ՝ որ 'ի տաճարն կայ. դնեմք զպսակքս զայտուփն առ ոտս աստուածածնուհւոյն, և լուացեալք 'ի վտակն և պսակեալք բաղեղամբք՝ գնամք անտի 'ի մեհեանն Դիոնիսեայ, որ անդր ևս կայ: Հարցի զնա և ասեմ. Իսկ առ ինչ պատկեր այդ 'ի հասկաց: Ասէ. Զի այսպէս երբեմն 'ի բագինս Արտեմեայ մատչէաք 'ի զենումն: Ասեմ. Իսկ որպէս, զմեզ 'ի զենումն ածեալ: Ասէ. Չգիտիցես ուրեմն զիրս զերդանուոյն Մելանիպպեայ և զչքնաղագեղին Կոմեթոյ քրմուհւոյն Արտեմեայ. արդ լուր.

Սիրելիք էին նոքա յոյժ միմեանց, որպէս զի միշտ 'ի խնդիր լինել իրերաց, և 'ի բացեայ ևս կալով 'ի միմեանց՝ յանդիման աչաց ունել զիրեարս: Խնդրեցին ապա 'ի ծնողաց իւրեանց ամուսնանալ ընդ միմեանս, և ծնողքն անգգամք չետուն նոցա հրաման: Յետ սակաւ ժամանակի սով սաստիկ եղև յաշխարհին, և ախտք ժանտք ճարակէին: Հարցան դիքն, և եղև հրաման պատասխանւոյ՝ զի ծանրացաւութիւնք էր Արտեմիս վասն Մելանիպպեայ և Կոմեթոյ լինելոյ ընդ միմեանս անօրէն 'ի մեհենի իւրում 'ի գիշերի իսկ տօնիցն. և զի առ 'ի հաշտ առնել զնա՝ հարկ էր ամի ամի զոհել նմա պատանեակ մի և օրիորդ 'ի կարի չքնաղագեղիցն: Այս ապա խստացաւ մեզ հարցուկն զի խուժադուժ սովորութիւնն դադարեսցէ 'ի բերել անծանօթի ուրուք այսր զպատկեր Դիոնիսեայ: Այն անծանօթն, և դրօշեալն կանգնեցաւ 'ի մեհենին,

և փոխանակ զոհիցն Թափօրս այս և արարողուԹիւնքս սահմանեցան ։ Նոյն խաղաղուԹեամբ, հիւրդ[1] ։

Նուէրս այս, վկայեալ և յիմաստնոց, ոչ ինչ անհաւատարիմ Թուեցան մեզ. զի և ընդ բազում ժամանակս զօրաւորագոյն հնարք անցուցանելոյ զցասումն երկնաւոր համարէին ձայնալիք մարդկեղէն արեանց զեղմանց, և մանաւանդ արեան օրիորդաց ։ Ոչ ինչ անտեղի էր ընտրուԹիւնն, այլ յանկարծակի իմաստից յառաջ ածեալ՝ իբր Թէ ղեկ տուեալ հաճոյ լինել զինչ զոհիցն քան զյօժարուԹիւն մատուցանելեացն ։ Որանզի 'ի յանձն առնուլ զդժնդակ մեղրուԹիւնս զայս, հարկ է ապա զընտիրս 'ի բերոց երկրի և զպատուականագոյնս 'ի զենլեաց մատուցանել նոցա. և վասն զի արիւն մարդոյ պատուականագոյն է քան զկենդանեաց, հեղանէր արիւն օրիորդի՝ յորում հասակ մանկուԹեն և գեղ և ազնուաԹիւն առհմի, և անձնայն բարեմասնուԹիւնք մեծարեալք 'ի մարդկանէ՝ պարառեալ կցորդէին ։

Այս շրջեալ 'ի զնին հինաւուրց աւանդիցն 'ի Պատրաս, և 'ի միւս եւս քաղաք 'ի Պրիմէ, անցաք ընդ Լարիսա, և մտաք յՍողիս ։

1 Պաւսան. գիրք Է. գլ. 19. էջ 571 ։

ԳԼՈՒԽ ԼԲ.

Ուղևորել Անաքարսեայ յԵղիս, և յաղագս ողիմպիական խաղուցն:

ԵՂԻՍ գաւառ է անձուկ, զոր յամփոփական ծովուն բախեն ալիք, և բաժանի յերբեակ հովիտս: Ի հիւսիսային մասն է քաղաքն Եղիս կառուցեալ յեզր գետոյն որ կոչի Պենէոս, համանուն Թեսաղականին, այլ ոչ որպէս զնա նշանաւոր: Հովիտն միջին հռչակաւոր է վասն Ողիմպիայ մեհենին որ է ՚ի նմա յեզր գետոյն Ալփեայ. և հովիտն երրորդ կոչի Տրիփիլիա:

Բնակիչք գաւառիս վայելեցին ՚ի բազում խաղաղութեան ընդ երկայն ժամանակս. զի ամենայն ազգք Յունաց համարէին զնոսա նուիրեալս Ողիմպիայ, և այնպէս մեծարէին զնոսա, զի զունդք օտարք ՚ի մտանելն անդր՝ դնէին զզէնս ՚ի բաց, և յելն անտի դարձեալ զինուորէին[1]: Իսկ զարդիս դուն ուրեք պատիւս այս ընծայի նոցա. բայց թէպէտ և բազում պատերազմունս համառօտս ՚ի յետին ժամանակս կրեցին, և դեռ ևս ՚ի քաղաքս քաղաքս նոցա ճարակին հերձուածք, սակայն Եղիս բարեկից և մարդաշատ քան զամ գաւառս է ՚ի Պեղոպոնեսս[2]: Անդաստանք նորա,

1 Ստրաբ. գիրք Ը. էջ 358:

2 Պօղիբ. գիրք Դ. էջ 336:

զրեթէ առ հասարակ արդաւանդահողք[1], ծածկեալ են 'ի սորկաց աշխատաւորաց։ Երկրագործութիւն բարգաւաճէ անդ, զի պետութիւնն ընծայէ միջակաց գլխոց՝ որում արժանի է ազգն այն քաղաքացւոց պիտանի։ Բնակիչք առանձինն են նոցա, զատել զվէճս անբողոքելի. և ոչ է հարկ նոցա թողուլ զվաստակս ձեռաց իւրեանց, և գալ 'ի քաղաքս՝ խնդրել 'ի դրունս դատաւորաց վճիռս անիրաւս կամ տարաժամեալս։ Ազգատոհմք բազումք փարթամք վարեն զկեանս իւրեանց յանդորրու 'ի գաւառս. և տեսի ես ազգատոհմս շուրջ զԱղիս քաղաքաւ երկուք և երիւք ծննդովք իջեալս 'ի խոնարհ, ոչ ուրուք 'ի նոցանէ կոխեալ զմայրաքաղաքն[2]։

Ի բառնալ միապետութեան յաշխարհէն՝ ուխտ նիզակակցութեան եղեն ընդ միմեանս քաղաքք. այլ Աղիս քաղաք հզօրագոյն քան զայլսն՝ տակաւ նուաճեաց զնոսա ընդ իւրև[3], և զարդիւք զկերպարանս ևեթ ազատութեան թողեալ է նոցա։ Ամենեքին նոքա միահամուռ յութ ցեղս որոշին[4], և իշխէ նոցա աւագանին ծնունդն այր՝ որոց իշխանութիւն մինչև ցկեանս է, և 'ի պակասել ուրուք՝ ինքեանք ինքեանց ընտրեն իշխանակից։ Որով իշխանութեանն 'ի կարի նուազունս ամփո-

[1] Ստրաբ. գիրք Ը. էջ 344։ Պաւսան. գիրք Ե. գլ. 4. էջ 381։
[2] Պոլիբ. գիրք Դ. էջ 336։
[3] Երոդոտոս, գիրք Դ. գլ. 148։ Թուկիդիդէս, գիրք Ե. գլ. 31։
[4] Պաւսան. գիրք Ե. գլ. 4. էջ 397։

փեալ, 'ի կարգ անդր սակաւապետութեան սպըր-դեալ եմուտ սակաւագունից պետութիւն, որ մի 'ի յոռութեանցն է ապականչաց կարգին այսորիկ տեսչութեան ¹ : Այլ նոքա 'ի յետին ժամանակս ձգնեցան հաստատել ըռնկերահաշտ ազատութիւն ² :

Ողիս ոչ վաղեմի ինչ քաղաք է, այլ նորակերտ, ըստ օրինակի բազում քաղաքաց Աքայեայ և մանաւանդ պեղոպոնեսականաց՝ 'ի յոլովից անապատական տանց կազմեալ ³ : Ուր 'ի դարս անգիտութե բնակութիւն մարդկան էր 'ի գիւղս անպատսպարս և դիւրամատոյցս . իսկ 'ի յաճախել գիտութեց 'ի քաղաքս պարսպաւորս ամրացան մարդիկ :

Ի հասանել 'ի քաղաք անդր, դէպ եղև մեզ տեսանել զհանդէս բազմութեան որ երթայր 'ի մեհեան Միներուայ . և էր մասն արարողութե մրցանաց եղխացի մանկտւոյն զգեղոյ, և ածէին յաղթանակաւ՝ որոց զմրցանակ գեղեցկութեան տարեալ էր : Յաղթողն ամենեցուն, վարսակալ 'ի գլուխ, ածէր զզէնս՝ նուիրել դիցուհւոյն . երկրորդն ածէր զցուլ, իսկ երրորդն զայլ նուէրս ⁴ :

Մէձն հանգոյն ամին բազում ուրեք եղև ինձ տեսանել յԱքայեա, ոչ միայն մանկտւոյն մրցելով զգեղոյ, այլ և կանանց և օրիորդաց : Այլ առ աղ-

¹ Արիստոտ . յղ . հաս . գիրք Ե . գլ . 7 . հտ . 2 . էջ 394 :

² Քսենոփ . պատմ . Յուն . գիրք Է . էջ 635 :

³ Ստրաբ . գիրք Ը . էջ 336 : Դիոդ . գիրք ԺԱ . էջ 40 :

⁴ Աթէն . գիրք ԺԳ . գլ . 2 . էջ 565 : Թէոփր . առ Նղմին, էջ 609 :

զբս իսկ հեռաւորս տեսի զկանանսն 'ի հանդէս մտեալ. այլ այս խորհր զանազանութեան է 'ի նոսա՝ զի Յոյնք գեղեցկագունին տան զմրցանակն, իսկ այլ ազգք տռփանագունին[1]:

Մեհեանք և շինուածք մեծամեծք զարդա-րեալ պայծառացուցանեն զքաղաքն, և բազմութիւն անդրեաց՝ յորոց ոմանք ձեռակերտք են Փիդիա-այ: Նչին յանդրիս անդ, յորս ոչ ինչ նուազ քան զճարտարութիւն հանճար ձեռագիտին ե-րևէր. որպէս կիցք անդրեաց Շնորհացն, զոր 'ի մեհենին նոցա տեսաք: Բեհեզ նուրբ և փայ-լուն արկեալ է զնոքօք. միւսն 'ի ձեռս ունի մըր-տենի 'ի պատիւ Աստղկան, միւսումն վարդ գար-նայնոյ նշանակ, և երրորդին լիցք խաղալիկ մանկ-կրտւոյ. և 'ի լրումն գեղոյ յօրինուածոյն պատկեր Սիրոյ յաւելեալ 'ի նմին պատուանդանի աստու-թեր Շնորհաց[2]:

Սակայն քան զամենայն ինչ յաճախեն շուք և պայծառութիւն գաւառիս խաղքն ողիմպիա-կանք որ 'ի լրումն քառից ամաց կատարին անդ 'ի պատիւ Արամազդայ: Վաղաքաց Յելլադայ իւ-րաքանչիւր տօնք են, յորս խմբին բնակիչք նո-ցա 'ի միասին. այլ քառեակ մեծահանդէս տօնք զամենայն ազգս Յելլադայ 'ի մի վայր ածեալ հա-մախմբեն, որ են պիւթեան խաղքն կամ դեղփա-կանք, իսթմեանքն կամ կորնթականք, նեմեանքն

[1] Թէոփր. առ Աթէն. գիրք ԺԳ. գլ. 2. էջ 609:

[2] Պաւսան. գիրք Զ. գլ. 24. էջ 514:

և ողիմպիականք ։ Զաւաշինոյն ասացի 'ի վերայ ուղեւորութեան իմոյ ընդ Փովկկիա . մինչ ինձ ասել աստ զլեռնոյն՝ թողեալ զայլս 'ի բաց , զի գրեթէ զնոյն տեսարանս յանդիմանն կացուցանեն ։

Խաղք ողիմպիականք սահմանեալք 'ի Հերակլեայ , և խափանեալք ընդ երկայն ժամանակս , դարձեալ վերստին նորոգեցան խրատու Լիկուրգեայ և խնամովք Իփիտոսի՝ որ իշխէրն մասին 'ի կողմանց Եղիս գաւառի [1] ։ Յետ հարիւրոց և ութից ամաց 'ի գլուխ հասարակաց մատենի եղիսացւոց արձանագրեցաւ անուն Կորիբեայ , որոյ առաջին յընթացս ասպարիզին տարեալ էր զմրցանակ [2] ։ Եւ 'ի յաջորդելոյ սովորութեան կազմեցան գաւազանք արձանագրութեան զուպարայաղթ նահատակացն , որոց անուանք այլ և այլ ողիմպիադից լեալ նշանակք , կացուցանեն թուականս 'ի ժամանակագրութեան ։ Ի հարիւրորդի վեցերորդի նուագին կատարելոյ խաղուցն հասաք մեք յԵղիս* ։

Բնակիչք գաւառին առ հասարակ պատրաստին 'ի մեծափառ հանդէսն , և վաղ իսկ հրատարակեալ էր հրովարտակն 'ի բաց դնելոյ զամենայն թշնամութիւն [3] ։ Զօրաց մտելոց յայնժամ

1 Արիստոտ. առ Պղուտարքեայ 'ի Լիկուրգ. հատ. 1. էջ 39։

2 Փրերէ , Ջառագով. ժամանակագր. էջ 162 ։

* Յամարայնի 356 ամին Ն. Ք. ։

3 Եզքին. յղ. վերայ հրեշտ. էջ 397 ։ Պաւսան. գիրք Ե. գլ. 20. էջ 127 ։

յերկիր անդր սուրբ[1], տուգանք 'ի վերայ կային իւրաքանչիւր զինուորի մնացք կրկին[2]։

Ի չորից դարուց հետէ եղիսացիք ունէին զտեսչութիւն ողիմպիական խաղուց, և յաւելին 'ի տեսարանին յայն զամենայն որ ինչ մարթէրն յաճախել զշուք հանդիսին, մուծանելով 'ի նոքս նորանոր ազգս մրցութեանց, և 'ի բաց բառնալով որ ինչ ստորև քան զակնկալութիւն ժողովելոցն էր[3]։ Նոցա անկ է մերժել անտի 'ի բաց զամենայն հնարս և զխորամանկութի, կացուցանել զիրաւունս 'ի դատաստանի, և խափանել զնենգս մրցութեանցն առ ազգս սոսա[4], ևս և առ Յոյնս՝ զորոց ամբաստանութիւն լեալ իցէ ստուգանելոյ օրինաց բարեկարգութե տօնիցն[5]։ Ոչ ի այնպէս մեծ թուին նոցա օրինադրութիւնքն, զի արձակեցին երբեմն հրեշտակս առ եգիպտացիս՝ հարցանել զիմաստութեան նոցա զի մի թերի ինչ յայնս կայցէ։ Նոցա կարեւոր յոյժ թուեցաւ յաւելուլ և զայն, զի ցորչափ դատաւորք 'ի խաղսն եղիսացիք կային՝ մի մտցէ եղիսացի 'ի մրցմունսն[6]։ Բայց թէպէտ և նոքա զայս պատուիրանի եդուն, այլ մինչև ցայժմ եղիսացիք մտանէին 'ի խաղսն, և բազումք 'ի նոցանէ տանէին զմրցանակն, առանց

1 Դիոդ. գիրք ԺԴ. էջ 248։

2 Թուկիդիդէս, գիրք Ե. գլ. 49։

3 Պաւսան. գիրք Ե. գլ. 8. էջ 394։

4 Երոդ. գիրք Ե. գլ. 22։

5 Թուկիդ. անդ։ Պաւսան. անդ, գլ. 21. էջ 431։

6 Երոդոտ. գիրք Բ. գլ. 160։ Դիոդ. գիրք Ա. էջ 85։

կասկածանաց ինչ աչառութեան զդատաւորացն լինելոյ[1]: Սակայն վասն անկասկածելի եւ առնելոյ զդատաստանն, օրէնն է նահատակաց զրկելոց 'ի պատկէն բողոքել յաւագանին Սղիմնիկիայ[2]:

Յողիմնիկիաղս իւրաքանչիւր ընտրին վիճակաւ դատաւորք կամ համաղխաղիրք խաղուցն[3]. եւ են ութ թուով, զի մէն մի յութից ցեղից ընտրին[4]: Մինչեւ զխաղսն հրատարակեալ՝ ժողովին նոքա յԵղիս եւ զամիսս տասն վարժեալ 'ի միաւանուն զպարշտամունս զոր պարտ է նոցա լինել. եւ վարժապետք նոցա են դատաւորք աւանդապահք եւ մեկնիչք օրինադրութեանցն՝ զորոց առացի[5]: Նա առ 'ի յաւելուլ զփորձ 'ի գիտութիւն, հրահանգէն 'ի նմին ժամանակի զմրցողիկս եկաւորս առ 'ի մտանել 'ի համար ատախելոցն յարշաւահանդէս եւ 'ի բազմամբ այլ եւս հետի մրցութիւնս: Յետ յորդորմա 'ի նահատակացն էին աղջամկանք եւ բարեկամք նոցա, եւ մանաւանդ մարտաւորց վարժապետք նոցա: Նոքա մրցանակին փայլատակէին յաչաց նոցա, եւ եղխացիք առհասարակ հըրճուեալ ցնծայլին: Յետ այնպիսի փոյթ նոցա 'ի կատարումն խաղուցն զարմանալ էր ինձ, եթէ ոչ ունեալ գիտէի զեռանդն թատերախրութեան Յունաց, եւ զշահ օգտին՝ զոր հանդէսն այն մա-

1 Դիոն. ատկիար. 'ի Ռոդ. էջ 344:

2 Պաւսան. գիրք Զ. գլ. 3. էջ 458:

3 Փիլոստր. վարք Ապոլ. գիրք Գ. գլ. 30. էջ 121:

4 Պաւսան. գիրք Ե. գլ. 9. էջ 397:

5 Նոյն, գիրք Զ. գլ. 24. էջ 514:

տուցանէր եգիպտացւոց ։

Այս շրջեալք 'ի գնդին ամենայնի որ ինչ ցանկալի իցք էին 'ի քաղաքն Ռաշիդա, և 'ի Աբուքիրէ՝ որ ոչ ինչ աւելի հեռի է 'ի քաղաքէն քան զհարիւր և քսան ասպարէզս, և է նմա փոխանակ նաւահանգստի[1], յուղի անկաք գնալ յԱղեքսանդրիա ։ Երկու էին ճանապարհք որ ածէին անդր. մին ընդ դաշտ, և երկայնութիւն նորա իբր երեքհարիւր ասպարէզ[2]. իսկ միւսն ընդ լերինս և ընդ աւանն Արսինէոս, ուր ամի ամի լինին տօնք վաճառաց մեծահանդէս[3] ։ Զառաջինն ճանապարհն կալեալ, և գնացեալ ընդ անդաստանս բազմաբերս և քաջ մշակեալս, ոռոգեալս յայլ և այլ գետոց ։ Տեսաք զճանապարհայն զքաղաքն Պիսպոնա և Լետկինն, և ապա հասաք յԱղեքսանդրիա ։

Քաղաքս այս որ կոչի Միսր[4], կառուցեալ կայ յաջոյ եզր գետոյն Նեղեայ, 'ի տորոսս բլրին՝ որ Մոկաթնեայ լեառն կոչի* ։ Նեղէոս բղխէ յԱբկաղիա[5], և մերթ անտես լեալ և մերթ անդրէն երևեալ[6], և զյոլովից գետոց ջուրս յինքն ընկալեալ[7], թափի 'ի ծով անդր միջերկրեայ[8] ։

1 Պաւսան. գիրք Զ. գլ. 26 ~ էջ 518 ։

2 Սաւարի. գիրք Ը. էջ 367 ։ Պաւսան. անդ, գլ. 22. էջ 510 ։

3 Սաւարի. անդ, էջ 341 ։

4 Երոդոտ. գիրք Բ. գլ. 7 ։ Պլին. ոսկեմկ. 2, 3, 8, և այլն ։

* Զայսմանէ գայցէն խորագրոցք 'ի համառօտ աշխարհագրութեան Ոգեհ պետայ ։

5 Պաւսան. գիրք Ե. գլ. 7. էջ 790 ։

6 Նոյն, գիրք Ը. գլ. 54. էջ 709 ։

7 Նոյն անդ ։ Սաւարի. անդ, էջ 344 ։

8 Սաւարի. անդ, էջ 343 ։

Ջ ընտիրս 'ի ցանկալեաց ընծայէ Ալտիս 'ի տեսիլ. և է Ալտիս անտառ դիցանուէր[1] ընդարձակ յոյժ, պատեալ շուրջանակի որմով[2]. և են 'ի նմա մեհեանք Արամազդայ և Հերայ, տաճար խորհրդոց աւագանւոյն, տեսարանն[3], և բազում այլ եւս շինուածք գեղեցկակերտք, և բազմախուռն անհամար անդրիք :

Մեհեանն Արամազդայ յանցեալ դարու կառուցաւ յաւարէն՝ զոր առին Եղիացիք յաղթողաց ունելոց վտարանդելոց 'ի նոցանէ[4] : Դարպասն կարգաւ ճարտարապետեալ է շուրջանակի սեամբք, 'ի մերձակայ քարահատից զվէմն շինուածոյն ածեալ. որ թէպէտ և թեթևք են, այլ փայլունք և արատոյք քան զկիրճն պարոսեան[5] : Բարձրութիւնն նորա վաթսուն և ութ ոտնաչափ, երկայնութիւնն նորա երկերիւր և երեսուն, և լայնութիւն ութսուն և հինգ :

Լիբոն քաջ ճարտարապետս կացուցաւ վերակացու գործոյն, և քանդակագործք երկու ոչ ինչ նուազ ճարտարք զարդարեցին համաճարեղ յօրինուածովք զկատար երկուց ճակատուցն տաճարինն : Ի միումն դրոշեալ կան պար առեալ 'ի բազմութենէ մարդկան Ինոմաոս և Պեղոպս, կազմեալ յընթացս ասպարիզին յանդիման Արամազդայ.

1 Վինդ. ողիմպ. 8. տող 12 : Գարասլ. անդ. : Գաւսան. գիրք Ե. գլ. 10 :
2 Գաւսան. անդ, էջ 441 :
3 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Ը. էջ 639 :
4 Գաւսան. անդ, էջ 397 :
5 Նոյն անդ, էջ 398 : Վինդ. գիրք ԼԶ. գլ. 17. հա. 2. էջ 737 :

'ի միւսումն ճակատամարտն Կենտաւրացն ընդ Լափիթայս[1]: Պղնձի է դուռն մեհիցն, հանդերձ նմին և համաղխաբարեալ կողմանն. և յերկայքանչիւրսն մի 'ի նահատակութեանցն Հերակլեայ քանդակեալ[2]: Այնպէս կղմինդրաձեւք ծածկեն զտանիսն, և 'ի ծայր եռանկեանց ճակատուցն պատկեր յաղթութեան պղնձի ոսկեզօծ կանգնեալ, և յերկայքանչիւր ծագս անկեանցն անօթք մեծամեծք պղնձիք դարձեալ ոսկեզօծք:

Ներքին խորանն բաժանի մեհեանն սեանսք[3]. նուէրք բազումք 'ի նոյնս և յանդաստանս մեհենին զետեղեալ կան ընծայեալք աստուածոյն 'ի կրօնաւորք և 'ի չքնաղհաստատ ժողովրդենէ[4]. այլ ոչ ուրեք 'ի նոսա գեղոյ տնեալ ալք, այլ արեալ 'ի պատկեր և 'ի դահոյս Յուպիտերայ բերին: Վասնզի հրաշակերտս այս զլուխ գործոց Փիդիասայ և քանդակագործութեան այնորիկ նոյն ընդ նախկինն տեսիլն գործէ ազդումն 'ի տեսօղս, որ առակաւ զմտութեանն խորհրդոյն են առարուրի:

Այս է նիւթ պատկերին ոսկի ընդ փղոսկր յեռեալ. և թէպէտ բազմեալ կայ, այլ գրեթէ 'ի յարկ մեհենին հասանէ բարձրութիւն նորա[5]: Յաջմէ ձեռինն նորա է պատկեր յաղթութեան՝ դարձեալ յոսկւոյ և 'ի փղոսկրէ, և 'ի ձախումն

1 Փաւստոս. դիրք Ե. գլ. 10. եջ 399:
2 Նոյն անդ, եջ 400:
3 Նոյն անդ:
4 Նոյն անդ, եջ 405: Սոկրատ. դիրք Ը. եջ 353:
5 Սոկրատ. անդ:

գաւազան գեղեցկակերտ յօրինեալ յազգի ազգի հրահալից, և արծուի 'ի ծայր գաւազանին[1]: Կօշիկք նորա ոսկեղէնք են, նոյնպէս և կրկնոց նորա յորում քանդակեալ կան կենդանիք և ծաղկունք, մանաւանդ շուշանք[2]:

«Բազմատանի է աթոռն, և 'ի մէջ չորեցունց ոտիցն սիւնք չորք զուգաչափք ամբարձեալ: Մխեթք մեծագինք և ազնուականագոյնք յարուեստից մրցեալ 'ի յօրինուած նորա. նշանեն 'ի նմին ոսկի, փղոսկր, ակնեայ և գոհար ակունք, և այլ ինչ աներ-նուաստ նկարուք և բարձր քանդակօք:

Չորք 'ի բարձր քանդակաց 'ի դէմս միոյ միոյ յառաջոյ ոտիցն դրօշեալ կան, բերելով 'ի բարձու պատկերս չորս յաղթութեանն իւր 'ի կռիւս, այսպէս ասփինգայն՝ որ յափշտակեն զորդիս Թեբացւոց, և այսպէս զԱպողոն և զԱրտեմիս՝ զՆիոբեայց մանկունսն նետահար առնելով, և հուսկ 'ի վերջ երկուս այլ ևս պատկերս յաղթութեանն:

Այլ ոչ դոյզն ինչ անեղի եթող Փիդիաս 'ի վերայ աթոռոյն անզարդ. զչորիւք զօտւոքն որ կապեն զոտս աթոռոյն ընդ միմեանս՝ երևեան եօթն թուեցի պատկերս, յորոց կէսք զօտեմարտիկս, և կէսք զՀերակլեայ պատերազմն ընդ Ամազոնս ընծայեն 'ի տեսիլ*: Ի վերայ գլխոյն Արամազդայ 'ի կատար թիկանց աթո-

1 Պաւսան. գիրք Ե. գլ. 11. էջ 400: Պլին. գիրք ԼԴ. գլ. 8. հա. 2. էջ 648:

2 Պաւսան. անդ, էջ 401:

* Յետակոյս մատենիս 'ի տեղեկութիւնն. թիւ ԺԳ:

ռոյն, առաւել դրոշմեալ կան երկքեան Շնորհք՝ զորս Եւրինոմէ ետ նմա, եւ անտի երկքեան Եղանակք՝ զորս Թեմիս մատոյց նմա [1] : Բազում այլ եւս բարձրը քանդակք են ՚ի պատուանդանի աթոռոյն եւ ՚ի խարսխին կամ յատակաձանի՝ որ զանհեթեթ կերպարանն ՚ի վեր ունի. բազմապատիկք ՚ի նոցանէ ոսկեղէնք, զոյգն ողկուզաքանդակաց ընդերելով զպատկեր : Առ ոտս Արամազդայ դրոշմեալ կայ արձանագիր. Փիդիայ աթենացւոյ որդւոյ Քարմիդեայ ձեռակերտ եմ [2] : Այլ ոչ շատացեալ ճարտարին զիւր անունն դրոշմելով, յաւելու եւ զՊանտարկեայ անունն պատանւոյ զիւրոյ մտերմի [3], առ ՚ի յաւերժ յիշատակ գեղոյ նորա, ՚ի վերայ մատին ՚ի մատանւոյն Արամազդայ * :

Այլ է մարթ մատչել հուպ ՚ի պատկեր անդր, զի ՚ի բացէ սիւնակք խիտ առ խիտ պարունակեալ պահեն զանդս [4], զարդարեալք հրաշազան նկարուք ՚ի Պանենեայ՝ յեղբօրէ եւ յաշակերտէ Փիդիայ : Այն ինքն Պանենոս, ՚ի միասին ընդ աշակերտակցի իւրում Կողոտեայ աշխատ եղեւ ՚ի գլխաւոր մասունս հրաշակերտ պատկերին [5] : Այլ

1 Պաւսան. գիրք Ե. գլ. 11. էջ 402 : Եսիոդ. ծննդաբ. դից, տող 800 :

2 Պաւսան. անդ. գլ. 10. էջ 397 :

3 Կղեմ. աղեքս. յորդոր. առ հեթ. էջ 47 :

* Եւ արձանագիրն էր այս. Պանդարքէս գեղանի. զոր ոմանց ՚ի յանցանս համարելով Փիդիայ, նա զանձն արդարացոյց՝ Արամազդայ գեղեցկութիւնն յարելով, քանզի Պանտարկէս նշանակէ ամենաբաւական :

4 Պաւսան. անդ, գլ. 11. էջ 401 :

5 Նոյն անդ, էջ 405 : Ստրաբ. գիրք Ը. էջ 353 : Պլին. գիրք ԼԳ. գլ. 8. հատ. 2 :

պատմէն, զի 'ի կատարել այնորիկ՝ 'ի բաց եհան Փիլիպոս զառաջատան որ ազօղէրն զայն. և խըն-դրեալ զդատաստան հասարակաց, ըստ հաճոյից բաղձանութեանն յերկուբերաց զայն[1]:

Օտարացան ամենեքեան ըստ մեծափառու-թիւն գործոյն, ըստ փառաւորութեան նորութեան, ըստ վաստակոցն ճարտարութեան, և ըստ գե-ղապատշաճ յարմարութեան ամենայն մասանցն. այլ առաւել ես զարմանայեն ըստ փոխել կեր-պարանին, յոր ճարտարեն կերպարանեալ էր զդէմն Մաքսենդեայ. զի աստուածապետականն 'ի նմա զօրութիւն, հանդերձ մեծատառ իշ-խանութեամբն և խորհին իմաստութեամբն և ներքին քաղցրութեամբն տպաւորեալ երևէր: Յառաջ քան զնա ճարտարք զմեհեն աստուածոց կերպարանէին 'ի տիպս հասարակաց մարդկան, առանց տալոյ նմա գերաշխարհիկ ինչ և աստուած-նաւոր տիպս կերպարանաց. Փիլիպոս նախ զար-գեր հատու ըստ աստուածային մեծվայելչու-թեանն, յաւել պատշաճ երկիւղածութիւն ժո-ղովրդոց՝ զծնելի ամենայն նոցա զոր երկրպա-գէինն[2]: Այլ ուստի՞ արդեօք զայնպիսի բար-ձրագոյն տիպս յղացեալ երկնեաց: Պատասխանե-ցէն քերթողք՝ թէ զի յերկինս ել, կամ թէ դիքն առ նա իջին 'ի յերկիր[3]. այլ նա ինքն պատրգա-

1 Ղուկիան. յղ. պատկ. գլ. 14. հա. 2. էջ 492:
2 Կուինտիլ. հրահ. ճարտ. գիրք ԺԲ. գլ. 10. էջ 744:

Լիւ. գիրք ԽԵ. գլ. 28:
3 Ծաղկաք. գիրք Դ. գլ. 6. էջ 301:

զոյն ևս և ազնուագոյն տալով պատասխանի որոց հարցմանն մեր[1], զՀռոմերանեն 'ի Նեղքս ած զառողս՝ ուր քերթողն ասէ, թէ Կապադովկացին յօնօքն ակնարկեաց Օրուանդեանն, և մեծապէս շարժեալ տասնամեակաւ Միհրդատայ[2]: Վասնզի տարեալ պատանեկի ապաստանեալ 'ի յարքունիս Փռիգիոյ զպատանեկեր տառյդ գերդեցեալն, այն որ քաղաքահանաձայր մնացեալ է աղգեկի, զողբերգականն ասեղծէն զՄ՚րաւոնդայ[3]: Այս որ լինէ կրօնքս և անդրեացեն յԱպպատա, ողբերգականն պատկերն Մ՚րաւոնդեայ կացցէ Նախատառոյն Ձարտարաց՝ որք բուռն վազեալ էն արժանեաց զդեբարաւն էն յանդիմանն առնել կասկեցին:

Այժմացիք քաջ Ճանաչեն զյարգ ասմանդոյն զոր ժառանգեն, և ցուցանեն զեռ ևս Հինդոյ զգործարան Փռիգիոյ[4]. որք և զասաւկի լինել քաջէ Ճարտարանն բարերարեալ, յանձնեցին Նոռա զՀոգ պատկերին՝ առնել միշտ զայն 'ի բնիկ պայծառութեանն[5]: Այս վասն զի մեհեանն այն և շրջափակ մեհենին 'ի Ճախաճախուտ վայրս է, մի և զայս առնեն զգուշութիւ առ 'ի պահել զփղոսկրն 'ի խոնաւոյ, զի հեղում յաճախ շուրջ զանթոռովն ձէթ՝ առաւ 'ի զետնի զործեալ[6]:

1 Ստրաբ. գիրք Ը. էջ 384: Պլուտ. յԵռակ. հա. 1. էջ 370:
2 Հոմեր. Եղիակ. գիրք Ա. տող 530:
3 Կիկեր. յղ. Ճառրս. գլ. 2. հա. 1. էջ 421:
4 Պաւսան. գիրք Ե. գլ. 15. էջ 413:
5 Նոյն անդ, էջ 412:
6 Նոյն անդ, գլ. 11. էջ 403:

Ի մեհենէն Երասմնազդայ անցանք 'ի Հերայեան¹, որ և այն դորացի կարգաւ ճարտարապետեալ շուրջ պատի 'ի սեանց. այլ վաղեմի է յոյժ քան զԵրասմնազդայն: Արձանագոյնք յանդրեաց որ են անդ ոսկեղէնք և փղոսկրեայք, զեռ ևս անհարթ յանդրիանս անձեռն զարդուեոյն, թէպէտ և չիցեն քանդակեալ յառաջ քան զասն աւերի քան զե-րեքհարիւր: Յուցին մեզ անդ զարկղն², յորում Կիփսեղոս արքայ՝ որ ապա տիրեաց 'ի Կորնթոս՝ փակեցաւ 'ի մօրէն, պահեալ 'ի ձեռաց հալած-չաց տան իւրոյ: Ի մայր փայտից կազմեալ է արկ-ղըն, և 'ի վերայ նորա և 'ի չորեսին դէմս են բարձր քանդակք, կէսք անդստին 'ի մայրւոյն, և կէսք յոսկւոյ և 'ի փղոսկրէ. և յանդրիանս անձեռն մարտս պատերազմաց և խաղս և զայլ իրս դարուց դիւցազանց, հանդերձ արձանագրութեամբք 'ի տառս վաղնջականս: Մատենագրին ոչ եղեալ զննէ այք զգործածն, զի ցուցանեն եթէ քանի ան-կերպարան էին արուեստք յՅեղլադա յառաջ քան զերկու դարս:

Ի մեհենաւս այսուիկ կատարին խաղք³, որոց հանդիսադիրք կան ուխտաւորք վեշտասան ընտրեալք յութեցունց ցեղից եղիացւոց, մե-ծարոյք առաքինութեամբ և տոհմիւ: Կրկին պարք են նոցա երաժշտականք, որ նուագեն

¹ Պաւսանիաս, գիրք Ե. գլ. 17. էջ 418:

² Նոյն անդ, էջ 419:

³ Նոյն անդ, գլ. 16. էջ 417:

օրհնութեանս Հերայ. և զմեծաշուք վարագոյրն որ յաւուր տօնի պարզի ձգի՝ նոքա ասղնագործեն, և նոքա սահմանեն զմրցանակս արշաւահանդիսի օրիորդացն եղիացւոց: Ի տալ նշանակին՝ յարձակին օրիորդքն ախոյեանք ընդ ասպարիզին գրեթէ կիսամերկք, և վարսք նոցա զուսովքն ծփեալք. և որ յաղթեն՝ առնու պսակ ձիթենի, և հրաման՝ որ ցանկալին ևս է նոցա՝ դնելոյ զկենդանագիր իւր 'ի մեհենին Հերայ:

Ելեալք 'ի մեհենէն, շրջեցաք ընդ ամենայն շրջափակն սուրբ. ընդ մէջ սօսեաց և ձիթենեաց որք հովանի առնեն վայրացն [1], ամենայն ուրեք յանդիմանս լինէին աչաց մերոց սիւնք և ախոյեանք և կառք յաղթականք և անդրիք անհամարք պղնձիք և կճեայք դից և յաղթօղաց [2]. քանզի 'ի մեհեանն անդր փառաց չիք մուտ, բայց միայն որոց արժանի են անմահութեան:

Բազումք յանդրեաց աստի յեցեալ կան 'ի սիւնս, կամ 'ի խարսխի զետեղեալ, հանդերձ իւրաքանչիւր արձանագրութեամբք վասն որոց իրաց նուիրեալ են: Տեսաք անդ զդրօշեալս Արամազդայ աւելի քան զքառասուն, ձեռակերտս այլ և այլ ճարտարաց, նուիրեալս 'ի ժողովրդոց կամ յիւրաքանչիւրոց անձանց. և են 'ի նոցանէ բարձունք մինչև ցքսանևեօթն ոտնաչափ [3]: Իսկ նա-

1 Պաւսան. գիրք Ե. գլ. [illegible]:
27. էջ 430:   3 Նոյն անդ, գլ. 24. էջ
2 Նոյն անդ, գլ. 21. էջ 440:

հաստատկացն անողորմաց անթիւ է բազմութիւն, և են 'ի մեհենի անդ կանգնեալ 'ի նոցունց իսկ[1], կամ 'ի քաղաքաց ծննդեան նոցա[2], կամ 'ի ժողովրդոց բարերարելոց 'ի նոցանէ[3]։

Պատկերքս այսոքիկ 'ի չորից դարուց հետէ տակաւ բազմապատկեալք՝ յանդիմանին ստանեն յետնոց փառաւորութեան, 'ի շրջան քառից ամաց ածեալ մնան 'ի տեսիլ անթիւ բազմութեան եկելոց յամենայն աշխարհաց 'ի գնալն փառաց յաղթականացն, և 'ի լաւր պատուութեան մնալով նոցա, և 'ի ցուցանել միանգամ խնդութեանն զայնմանիկ՝ յորս պատճառն հայրենիքն նոցա։ Նահա-տակութեան կարի յոյժ մեծ էր մարդկութեան, եթէ 'ի սրբարան անդր՝ առաքինեաց ևեթ էին մուտք։ Այլ սխալեմ. զի ոչ յամէին խառնա-կուի ատենել զայն դաս և կեղծաւորութիւն, որք յանձախադոյն յոյժ քան զառաքինութիւն մեծա-րին 'ի ժողովրդոց։

Մինչդեռ զարմանայաքն լինէր մատակոյ քան-դակագործութեան, և հետազօտեալ տեսանելաց զկարգ բարեպաշտութեան և զմեռելոցն ձիոյն ա-րուեստին, աստուածոցքն մեր մէջս երկայնս, և խոս որ ոչ յանկանխչալաւր եկեալ էին՝ պատմէին մեզ զայնցանէ, զորոց զարտուղերան ցուցանէին։ Այս յանկնկառոյց լինել մեր 'ի կառս կողմն արքու-նին, յորոց 'ի միւսն բազմէր Պետղոն արքայ սի-

1 Պաւսանիաս, գիրք Զ. էջ 497։

2 Նոյն անդ, էջ 493։

3 Նոյն անդ, էջ 480։

ըանկուսացւոց, և 'ի մխտումն Հերոնի եղբայր Նոռ_րաս և յաջորդ[1], առեալ ցմեզ. Տեառնանքբ մերձ 'ի կառան Պետրոնի զանձրնին. Աղէքսանդրեայ է զա ըմբշի, որ ըստ ապիկանծեց ինն սպան 'ի գաւռէտնարտի զատոփն. և զրկեալ 'ի պատակէն առ 'ի պատուհաս, խեղդապրեցաւ առ մշտին։ Այլ յետ աւուրց անեալ 'ի վարժոց ուրեք մանկուեայ, բաւան եհար զանձնէ յորոց վերայ տունն համապատեալ կայր, և կործանեաց զայն. և կորեան մանկունք ինչ վաթ_սուն ընդ աւերակօքն[2]։

Այլ մնաց այդ անգղի Տիմանթեայ ընգշին է պատկեր, այն որ 'ի ծերութեանն իւրում հրահանգէր զօրհանապարզ յարգեղնաւորութիւն։ Այլ զարդարեալ առ ժամանակ մի 'ի հրահանգացն վասն ազնուութեան, և 'ի զարձին իւրում անգղէն կանգնեցեալ համապատազարդեալ 'ի նոյն, ինքն եւեւս զի նուաղեալ էր 'ի զօրութենէ, արար իւրովի խարոյկ, և ընկէց զինքն 'ի բոց[3]։

Զանգիկեղ զոր տեսանեմք, վասն Թեթև ըն_թացիցն Հողմն կոչէր։ Զընթանալ զորս յառ_աջարկելն, Փիլատոս վերբերեալն իւր անկաւ յեր_կիր. եւկ ինքն ոչ կասեալ յընթացից՝ պատաե_ցաւ փառապատականն, և եկն եկաց առաջի զատաւո_րաց։ Արդ զոէր նորա պատկեալ, հրամանն եռուն նմա կանգնել իւր անգղի համանգէրձ յաղթական երիվարաւն[4]։

1 Պաւսան. գիրք Զ. գլ. 9. էջ 473։
2 Նոյն անդ, էջ 474։
3 Նոյն անդ, գլ. 7. էջ 471։
4 Նոյն անդ, գլ. 13. էջ 484։

Ըմբիշդ այդ Պողուկոս է[1], և էր դա պատանի, և գործէր զերկիր : Հայր դորա զպարտեցեալ, տեսանելով զի փոխանակ ուռան բուռն 'ի գործ արկանէր 'ի մխել անդրէն զխոփն քերցեալ յարօրոյն, ած զդա այսր, և եմոյծ 'ի մրցանս բռնամարտակաց : Պողուկոս խուճապեալ յերեսաց ոսոխին՝ որ մերթ զաճողակութիւն և մերթ զկորով 'ի կիր արկանէր, մինչդեռ ահա նկուն լինէրն՝ աղաղակեաց հայր նորա. Հա՛ր որպէս զխոփ արդեակ իմ : Նա մանկանն կրկնեալ վաղվաղակի զհարուածն, յաղթող հռչակեցաւ :

Ահաւասիկ Թէագենէս, զորմէ հազար և երկերիւր մրցանակս ասեն կալեալ յազգի ազգի խաղս Ելլադայ, 'ի հետի ընթացս, 'ի գօտեմարտի և յայլ մրցմունս : Նա յետ մահուն իսկ անդրի նորա կանգնեալ 'ի հայրենիսն իւր 'ի Թասոս, դրդէր զնախանձ միոյ յոսոխացն՝ որ հանապազօր եկեալ գիշերի զգայրացուկս իւր ընդ անդրին պղնձի հանէր. և այնքան դղրդուեալ զայն հարուածովք, մինչև անկաւ 'ի վերայ նորա, և ջախջախեաց զնա : Ածաւ անդրին 'ի դատաստան, և ընկեցաւ 'ի ծով : Յետ այսորիկ նեղէր Թասոս 'ի սովոյ, և բնակչացն հարցեալ զգէս՝ ընկալան հրաման պատասխանւոյ, զի զԹէագենեայ տարապարտուց անարգեալ էր նոցա զյիշատակն[2] : Նա հանեալ զանդրի նորա 'ի ջրոյ՝ կանգնեցին անդրէն յիւրում տեղւոջն, ատ-

1 Պաւսան. գիրք Զ. գլ. 13. էջ 475 :
2 Նոյն անդ, գլ. 11. էջ 479 :

տուածական սահմանեալ նոցա պաշտօն* ։

Իսկ ընթերցողդ այդ քարոզեալ 'ի յուս զիւր անգղի եւեթ կանոնեալ զայն սաստ խորհրդի ։ Այս է զա հռչակաւորն Մելիտոն, այն որ 'ի մեծանուն քաղաքա- կացուցն իւրոց կրօնաւորացն ընդ սրբազանացն զօրա- վառ կացեալ՝ կանոնեալ յաղթութե մեծ, երեւեալ 'ի Ճակատամարտին լուսաւորն եւ այլովք զինուքն Հե- րակլեայ՝ զորոյ նորոգեալ զյիշատակ[1] ։ Նոյնպէս անգամ 'ի խաւար մեր եւ 'ի դէպ փախստեան աստուա- ծոյ զյաղթութիւն, եւ փառաբանչուն զօրութեանն իւրոց յաւիտենից սոցա անոր զփառս ։ Այդ զի զկայս սա- նոյր 'ի վեհմ կոր զխուրասան ըմբշամարտն գործեալ զայն խուզով, եւ ընդդէմ նոր ուժգին մրմանց կայր անողորմութեան[2] . եւ էր զի նուաճ 'ի բանս կազմեալ, եւ սուտանց բերկրանաց զայն 'ի Ճշմարտեն՝ այնուհետ այլնոց ունէր, զի ընթերցք կարդացողք ոչ կարէին փութանակել զհաստատութիւն նորա առ 'ի կորզել զայն. այլ միայն սիրուհոյն նորա կարէր[3] ։ Պատմեմն փոր- ձանօք երգն բան ամենայն քերթուած ընթացեալ ընդ առաքելականն[4] . եւ զի յաւուր միում 'ի տանն ուրեք համեմատեալ ընդ աշակերտաց Պիթագորայ, 'ի սա- պալեր սեղանն յորոյ վերայ շինուածն հաստա- տեալ կայր՝ կալաւ զայն, եւ կեցոյց զնոսա 'ի մա-

* Ծանուցեալ սոցա պաշտ- ման Թէոդեկնեայ, եւ մանա- ւանդ ախոյեան կարգացին զնա յօգնութիւն ։ (Պատմութ. գիրք Զ. գլ. 11. էջ 479) ։

1 Դիոգ. գիրք ԺԲ. էջ 77 ։

2 Պատմութ. անդ. գլ. 14. էջ 486 ։

3 Եգիպտ. զամ. պատմ. գիրք Բ. գլ. 24 ։

4 Աթենէոս, գիրք Ժ. էջ 412 ։

հուանէ[1] . և զի 'ի ծերութեան իւրում եղև որս գազանաց վայրենեաց, կաշկանդեալ ձեռաց նորա 'ի կոճղ ծառոյ ճեղքեալ 'ի սեպոյ` մինչ կամէր հերձուլ զայն[2]:

Տեսաք աստ զսիւնս, յորս դրոշմեալ կային զդաշինս նիզակակցութեան այլ և այլ ազգաց Ելլադայ[3], և աւանդեալ անդ առ 'ի պահպանել: Նոյն այն ամենայն ուխտք լուծեալ էին, և զօրժեալ երդմունքն առ հասարակ` որ անլուծանելիք զնոսա առնէին. և սիւնքն որ դեռ կան պահին անդ` վկայեն ահագին ճշմարտութեան, զի ազգք բարդաւաճեալք հաւատարմութք և յայնժամ դաւանէին` յորժամ ուխտ դնէին կալ հաշտք ընդ միմեանս:

Ի հիւսիսոյ մեհենին Հերայ 'ի ստորոտս Կրոնինեայ լերինն[4] է թումբ երկայնաձիգ. մինչև զասպարէզն, յորոյ վերայ յազգաց բազմաց 'ի Յունաց և յօտարաց կառուցեալ կան անուանեալ գանձատանքն: Հանգոյն սոցին և 'ի Դելփիս կան, այլ դելփականքն են նաւախրօք ցանկապատօք, իսկ յողիմպիականսն գրեթէ չէք ինչ այլ բաց յանդրեաց և 'ի հին ատտանգից` որ և ոչ բնաւ կերթ ախորժական և մեծարգոյք ինչ են: Այս իսկ զպատճառն կամեցայ գիտել այսր զանազանութեան, մի յառաջնորդացն մերոց ասէ. Ի մեր

1 Ստրաբ. գիրք Զ. էջ 263:
2 Պաւսան. գիրք Զ. գլ. 14. էջ 487:
3 Նոյն, գիրք Ե. գլ. 12. էջ 407:
4 Նոյն անդ. գլ. 19. էջ 497:

տաս հարցանել մի, այլ ոչ յոյժ հաւատարիմ, և Թերևս դադարեսցէ նա ըստ հաւսյ 'ի պատասխանելոյ. իսկ առ դերփականս հարցուկն երկուց կամ երից դաւշակութեանց ըստ դիպուածոյ իմն ըստամի' ձգեցին զվստահութիւն Թագաւորաց օտանց, և աստուածեանութիւնք նոցա յարդարեցին 'ի նոյն զաղղս ամենայն.

Այլ ոչ դադարէր ժողովուրդն գալ խռնել յՈղիմպիոս[1] ըստ ծով և ըստ ցամաք յամենայն կողմանց Ելլադայ և 'ի հեռաւոր աշխարհաց, փութացեալք 'ի տաճարն' որոյ պայծառութիւն անցանէ զանցանէ զեր 'ի վերոյ քան զամենայն հանդիսից, այլ պակասէ 'ի նմա ինչ' որում մարթէր արդեօք պայծառագոյն զարդել զհանդէսն. Քանզի չիք անդր կանանց մուտ, վասն մերկանդամութեան մրցութեանն նահատակացն' որպէս ոչ ինչ է երկբայելի. Այլ այնպիսի խստական օրէնք սպառնացեալք ամենայն նոցա, զի որք իշխեն անցանել զօրինօքն' ընկեցեալ լինին զահավէժ 'ի ժայռէ բարձանէ[2]. Բայց քրմուհեաց միոյ 'ի մեհենից է անդ առանձնեալ տեղի[3], և օրէն է նոցա կալ 'ի մէջն իրիք իրիք մրցութեանց.

Ակիդեան տօնից հանդիպի 'ի մերձաւորաստաներորդի ատուր ամենեան երկատասնմեկերորդի, որ սկսանի ըստ ծննդեան լուսնի յետ ամառնային յերկարադարձին.

1 Փիլոստր. վարք Ապոլ. էջ 389. գիրք Ը. գլ. 18. էջ 361.
2 Պաւսան. գիրք Ե. գլ. 6.
3 Նոյն, գիրք Զ. գլ. 20.

Զաւուրս հինգ տեւեն տօնք, եւ 'ի կատարած աւուրն հնգերորդի յորում լրումն է լուսնի՝ քաբողին յաղթողք[1]: Սկիզբն եղեւ տօնիցն յերեկոյէ* բազմ պատարագօք, որ մատուցան 'ի բագինս կանգնեալս այլ եւ այլ դից 'ի մեհենին Արամազդայ եւ շուրջ զնովաւ[2]: Այլ եւս բագինքն առ հասարակ զարդարեալք սագարթօք եւ բոլորիւք ծաղկանց[3], եւ ամենեքին մի ըստ միոջէ ոռոգեցան արեամբ զոհից[4]: Վասն յաւագ բագնին Արամազդայ մատուցաւ, որ կանգնեալ կայ 'ի մէջ ընդ մեհենին Հերայ եւ ընդ բագին Պեղոպայ[5]: Նա է գլխաւորագոյն տեղի հանդիսից կրօնաւորութեան ժողովրդոց. անդ Եղիացիք հանդիսապարօք մատուցանեն զոհս, եւ օտարք յամենայն ժամանակի: Ի խարիսխ քառակուսի կանգնեալ կայ բագինն, ուր ընդ աստիճանս քարեղէնս են ելք: Այլ է ամբարտակ իմն անդ, յորում զենմանցն լինելին. 'ի միջի անդ ամբառնայ բագինն, բարձրութիւն նորա քսանեւերկու ոտնաչափ. եւ ելանեն անդր 'ի վեր ընդ աստիճանս կազմեալս 'ի մոխրոյ զոհիցն, զանգեալ զայն ջրով Ալփեայ:

1 Պինդ. Ողիմպ. 3. տող 33:

* Յառաջնումն ամի 106 ողիմպիադին՝ առաջին օր ամսեանն եկատոմբէոնի հանդիպէր յերեկոյն 17 աւուր յուլիսի 356 կանխաթուականն յուլեան ամին Ն. Ք. եւ մետասաներորդ օր եկատոմբէոնի սկսանէր յերեկոյէ 27 աւուր յուլիսի:

2 Պաւսան. գիրք Ե. գլ. 14. էջ 411:

3 Պարրաւ. Պինդ. Ողիմպ. 8. տող 13:

4 Պաւսան. անդ:

5 Նոյն անդ, էջ 409:

Երկարաձգեցան պաշտամունքն մինչև ցխոր գիշեր, և կատարէին 'ի ձայն արուեստականաց 'ի լուսնակի, զի էր լուսինն մերձ 'ի պատարումն. և բարեկարգութիւն և շուք հանդիսին պակուցումն և պատկառանս միանգամայն ածէին տեսողաց: Այլ 'ի մէջ գիշերի ընդ կատարել պաշտամանցն, բազմագոյնք 'ի հանդիսատեսաց փութով մեծաւ, որ ընդ ամենայն աւուրս առնիցեն ուխտ[1], ընթացան յառաջագոյն առնուլ դիպողագոյն տեղի 'ի զնլին խաղուցն՝ որ ընդ արշալոյսն հանդերձեալ էին սկսանել:

Նպատակեցն ողիմպիական տօնի յերկուս մասունս, որ են ընթացարանն և ձիընթաց[2]: Ընթացարանն է երկար զթումբ վեց հարիւր ոտնաչափ յերկայնութիւն[3], և համեմատ 'ի լայնութիւն. անդ կատարէին արշաւահանդէսն և բազմագոյնք յայլոց մրցութեանց: Իսկ 'ի ձիընթացն առնէին կառարշաւք և ձիարշաւք: Նստի ընդարձակի կողմն ասպարիզին ընդ բլուր մի, և միւսի երկայնագոյն ևս որպէս զթումբ[4], լայնութիւն նորա վեցհարիւր ոտնաչափ, և կրկնապատիկ երկայնութիւն նորա[5]. և բաժանէ ընդ նա և ընդ ասպարէզն շինուած՝ որ արձակարանն կոչի:

1 Ցիշատ. բանաս. կաճառ. հա. 13. էջ 481:
2 Պաւսան. գիրք Զ. գլ. 20. էջ 502.
3 Երոդոտ. գիրք Բ. էջ 149: Կեննոր. յղ. աւուր ծննդ. գլ. 13:
4 Պաւսան. անդ, էջ 504:
5 Նոյն անդ, գլ. 16. էջ 491: Պղուտ. 'ի Սողոն, հա. 1. էջ 91:

Այլ է գաւիթ կամարակապ. բակ ընդարձակ առաջի ունելով 'ի ձև առաջից նաւու, որոյ որմք շրջապատք մերձեալ առ միմեանս՝ խորոց մեծ 'ի միջի թողուն յանդս կառաց բազմաց միանգամայն ։ Ի բակի անդ կայարանք են կառաց և ձիոց ուղղորդ անջրպետեալք, և վիճակաւ բաշխեն կայք. զի այլք քան զայլս դիւրօգտագոյնք են ։ Ընդթացարանն և 'ի ձիընթաց են անդորրք և բազկոնք և այլ ևս ձեռակերտք¹, յորս կախեալ կայր կարգ և ցուցակ մրցանացն՝ որ 'ի տօնսն անդ ածելոց էին 'ի հանդէս²։

Կարգն մրցանացն յայլ և այլ ժամանակս փոփոխումն եղև*. այլ ըստ այժմու յանձնս սովորութեանն, ընդ առաւօտս կատարէին թեթևքն անուանեալ հրահանգք, որպէս աղջի աղջի արշաւք. և յետ միջօրէի ծանունքն կամ բռունք, որպէս զօտէմարտն և բռնամարտ այլովքն հանդերձ ։

Յառաւօտուն ընդ արևածագըս փութային յասպարէզն. ուր վաղ իսկ խռնեալ նահատակաց՝ նախաձեռն առնէին մրցութեանցն³, պար առեալ 'ի բազմութենէ տեսողաց. և բազմագոյնք ևս կային 'ի վերին խառն 'ի խուռն 'ի բլրին, ուրերև զգեստակ տեղիս կրկեսից շուրջ տեսանելեաց

¹ Պաւսան. գիրք Զ. գլ. 20. էջ 503։

² Դիոն. գիրք ՀԹ. էջ 1359։

* Ցեակայս մասնեխս 'ի անդեկութիւնն. Թիւ. ԺԴ։

³ Փաւր. յղ. ընդհանրական. գիրք Բ. գլ. 34։

հայէր յառաջադրէք անդր ։ Սուրբայնք կայք ՚ի դիւցազանց , շաւիղաց փողոց , խորհրդեան երկնայնոց խառն ընդ աղաղակի բազմութեանն հնչէին ։ Այլ իբրև վայրկեան մի ՚ի տեսարանէ անտի զայս ՚ի բաց դարձուցեալ , և բազմամբոխ աղմկի հասարակաց ցնծութեան հանդիսականք զանազանք և զանազան-շունչ բարութեան տիեզերաց , զոր աստուածն շարաւորէին ՚ի սիրտս մեր ջինջ պարզութեան երկնից , և օդոց հեշտալի զովութեան , տեսակ Նափեայ՝ որոց մեծավայելուչ զհետն անդ ալիք [1] , և անդադարականք արտաղալիքք որք ՚ի սկզբնածաղ ձառագայթից արեգականն աղձկեն ։

Այրեակ մի յեսայ դադարեցին նաւահանգիստ ՚ի հրահանգացն , և յաւելի անկեալ երթային ՚ի շքեղափակն մեհենականն ։ Պատեցաք և մեք զկնի , և զտաք ՚ի սենեակ ապարանացն զութեալին հանդիսագիրս խառնուցն , զզեցեալ համազգեստ շքեղս , և զամենայն օրէնս պատուոյ առեալ զանձամբ [2] ։ Նոյն նաւահանգիստ առ ոտս Արամազդայ պատուերին , ՚ի վերայ ձառագայթեայ ապրեան զուհիցն [3] կոչեցին զգլխս ՚ի վկայութիւն՝ զի զավելան տաճն հրամացեալ էին ՚ի մեղանչմանն , որ աստուծոյ կայքին նոցա . և երդուան չատենել ինչ նենգութիւն , այլ ամենայն ուղղութեամբ վարել ։ Զնոյն երդուան և ազգականք նոցա և վարժիչք երդուան [4] ։

1 Պաւսան. գիրք Ե. գլ. 7. էջ 389 ։

2 Փարոս. յղ. ընթեշանոր. գիրք Ա. գլ. 19 ։

3 Պաւսան. անդ. գլ. 24. էջ 441 ։

4 Նոյն անդ ։

Նա 'ի կատարել արարողութեանն զարձանս յաստապարէն. Նա նաւահանգստին մտեալ յարձակարանն 'ի գլուխ ասպարիզին, մերկացան յամենայն զգեստուցն, և ածէին կօշիկս յոտս, և ետուն օծանել իւղով զանդամս իւրեանց[1] ։ Պաշտօնեայք սպասաւորիւք ամենայն ուրեք հասանէին, յարձակմանցն և ընդ կարգս բաշխութեանն խառնելոյ 'ի զինն, առ 'ի զգուշութիւն բարեկարգութեանն[2] ։

Նա իսկ և հանդիսադիրք կալեալ գլխոյ իւրեանց, քաղաքին սպասաւորեալ ․ Յառաջ անցեալն ընթացողք[3] ։ Նա վաղվաղակի 'ի մէջ անցեալ բաշխութիւն յայծ Հերակլեայ, կարգեցան կարգին ատղարար՝ իւրաքանչիւր վիճակաւ կալեալ զտեղին[4] ։ Նա քաղաքին կարգադրաց զանխուական հոգս և զհոգաբենեացն ․ որք յառաջագոյն պարծանացեալքն էին յաղթութեանն, առաւելագոյն կայթիւք ցնծութեանն ընդունելի եղեն ։ Նա յաւել քաղաքին Հացանել, եթէ ուրուք զոք 'ի նաւահանգստին ամսեալ էր 'ի կատարանս, կամ մեկայէր զեղծ կենաց նորա ․ և եղև լռութիւն խոր ․ և զգացի 'ի ներքս յիս զկնիս՝ որ 'ի սիրտս ամենեցուն յուզէին, և զոր առեստուածքն այլոց ազգաց ոչ ազդեն ։ Ոչ ևս առեալ էր 'ի գլուխ ասպարիզին արար ռամկին յանկըն խէն յառաջ մատուցեալ առ 'ի մրցել զայդն

1 Թուկիդ. գիրք Ա. գլ. 6 ։ Պօղիկեա. գիրք Գ. յօդ. 155 ։

2 Սոուդաս. 'ի բառն Αὐταρχ.

3 Պլատ. յղ. օր. գիրք Ը. հտ. 2. էջ 833 ։

4 Պաւսան. գիրք Զ. գլ. 13. էջ 482 ։

ինչ [illegible] ձիթենեաց, այլ արս պզտաս որք 'ի [illegible]թէ կամաց ամենայն[illegible]ղաղաց տառանձ-նեալք զփառս կամ զամօթ հայրենեացն, դի-մագրաւէին 'ի նախատինս կամ 'ի պարծանս յանդիմանն թագաւոր բիւրուց ականատեսից, որք յաշխարհ հիւրեանց տանելոց էին զանուանս յաղ-թողացն և զպարտելոց: Այս և երկիւղ նկա-րեալ էին յանհանդարտ հայեցուածս անեսողաց, և յայտնագոյն ևս երևէին ընդ մերձենալ պահուն որ զնոսա լուծանելոցն էր: Որ իբրև եհաս, փոխ հարաւ 'ի նշան մարտին[1], յարձակեցան քաջըն-թացք, և 'ի քթթելական հասին 'ի նպատակն՝ ուր հանդիսադիրք խաղուցն կային: Այլ քարոզն կարդաց զՊորոս կիւրենացի[2], և բիւրք բիւրուց ձայնից կրկնեալ անդրէն հնչեցին զանունն:

Պատիւն զոր կալաւ, գերագոյն և պայծառա-գոյն յողիմպիական խաղսն է. քանզի հեռի ըն-թացք յասպարիզին՝ է հնագոյն քան զամենայն հանդէսս պաշտամանց մեծերաց 'ի տօնսն: Բաց անցանել ժամանակաց բազմայեղանակ փոփոխե-ցաւ այն, այլ մեք ըստ այսմ յեղանակի տեսաք զայն. Նախ մանկանց ահա հասելոց 'ի տիս երկո-տասան ամաց, և ապա արանց զընթացսն կա-տարելով, սաղաւարտ 'ի գլուխ, ասպար 'ի ձեռին, և մերկք իմն կօշկաձևք յոտս[3]:

1 Սոփոկլ. յԷլեկտր. տող էջ 406:
713: 3 Պաւսան. գիրք Զ. գլ.
2 Դիոգ. կեանք ԺԶ. գլ. 2. 10. էջ 478:

Այս յաւուրսն որ զկնի՝ ձայն տուաւ[illegible] նաւահատակաց յընթացս կրկնակ տապարակիցն, զի 'ի հասանել 'ի նաւահանգիստն՝ պարտ էր նոցա պատել զնովաւ, և դառնալ անդրէն ուստի մեկնեցանն[1]։ Այս տեղս յաղթողացն նաւահանգստակք, որոց երկոտասանեկի պարտ էր զընթացս ասպարիզին կատարել[2]։ Այլեն որք 'ի բաղանս 'ի հանդիսից ասոր մնացեալ, տարրան բազմապատիկ մրցանակս[3]։ Իսկ պատահաւոր, որ երբեք երբեք ընդոստուցանէին զուշ հանդիսատես ժողովրդեան, դէպ լինէր նաւահատակաց ոմանց յանկարծ 'ի մէջ 'ի բաց ելանել խոյս տուեալ 'ի պարտասմանց տեռողաց, և այլոց հուպ 'ի լրումն ընձիցն՝ սահեալ անկանել ընդ լայնած զետինն։ Զուգանէին մեզ զայլս, որոց հազիւ հեռք 'ի փոշւոյն նշմարէին[4]։ Այսպիսինացն երկու յերկրայս կալեան ընդ երկար զմիտս, յառաջեալք կարի յոյժ քան զտախանս. այլ 'ի մղել միոյ 'ի նոցանէ զմիւսն և յընկենուլ, բողոք եբարձ ամենայն բազմութիւնն ընդդէմ նորա, և զրկեցաւ նա 'ի փառաց յաղթութեանն։ Քանզի խստիւ արգելեալ են հնարք այսպիսիք առ 'ի յաղթութիւն[5]. բայց միայն օրէնն է 'ի զնին կացելոց խրախուսել աղաղակաւ զնաւահատակս, որոց ցանկան յաղթութեանն[6]։

1 Պաւսան. գիրք Ե. գլ. 17. էջ 420։

2 Յիշատ. բանիս. կաճառոյն, հտ. 3. էջ 309։

3 Պաւսան. գիրք Զ. գլ. 13. էջ 482։

4 Սոփոկ. գլ. 1. էջ 9։

5 Ղուկիան. յղ. անաքարս. գլ. 12. հտ. 3. էջ 141։ Պաւսան. գիրք Ե. էջ 441։

6 Պղատ. 'ի Փեդրոն. հտ. 1. էջ 61։ Իսոկր. յԵւագ. հտ. 2. էջ 111։

Պատրաստ էր յաղթողացն 'ի վերջնում աւուր տանելն պսակել[1]. այլ 'ի կատարել անդ զընթացսն՝ ընկալան, կամ մանաւանդ յափշտակեցին զոսա յաղթանակին՝ որ իւրաքանչիւր նոցա սահմանեալ էր[2]. և այն եղև նոցա սկիզբն բազմապատիկ յաղթանակաց: Զանազի ամենայն բազմութիւնն փութայր 'ի տեսանել զնոսա, և ուրախ լինել ընդ նոսա. ազգականք նոցա և բարեկամք և զաւառակիցք արտասուելով առ խանդաղատանացն և խնդութեն, 'ի վերայ ուսոց իւրեանց բարձեալ բերէին զնոսա 'ի տեսիլ շրջակայից, և 'ի դղրդատիս ամենայն ժողովրդեան՝ որ բռնալիր ածայէին ծաղիկս զնոքօք[3]:

Ի վաղիւ անդր չորսք վաղ քաջ ընդ առաւօտն 'ի ձիընթացսն, ուր արշաւահանդէս ձիոցն և կառաց լինելոց էր: Փարթամաց պահեալ էին մրցաթիւնքս վասն ծանունց ծախուցն՝ որոց պէտք էին առ այն[4]: Զբօսանք իմն և պարծանք են ընդ ամենայն Ելլադա՝ յանձանձել իւրաքանչիւր ումեք ազգս ազգս ձիոց քաջընթացից, մարզել զնոսա, և ածել 'ի գուպար 'ի տօնս խաղուց[5]: Այս վասն զի ցանկացողաց մրցանակին ոչ է պարտ իւրովի մտանել 'ի հանդէս, բաւական այն է զի և

1 Պօրտաց. Պինդ. ողիմպ. 3. տող 33:
2 Պլուտ. խորհրդ. դիրք Ը. խնդ. 4:
3 Պաւսան. դիրք Զ. գլ. 7. էջ 469:
4 Իսոկր. յղ. Հելլենաց. հտ. 2. էջ 437:
5 Պինդ. իսթմ. 2. տող 55: Պաւսան. անդ, գլ. 1. էջ 153:

թագաւորք և պետութիւնք զոյնս առնէք, առա-
տանեալ զփառս խորհրդոց ՚ի հեռաւոր ձիարձակարս : Ի տեսանել ՚ի կարգս յաղթողաց զԹերոն արքայ Ակրագանդացւոց, զԳելոն և զՀիերոն արքայս Սիրակուսացւոց[1], զԱրքեղայոս արքայ Մակեդոնացւոց, զՊաւսանիաս արքայ Սպարտացւոց, զԱրկեսիղաոս արքայ Կիւրենացւոց, և զայլ բազում թագաւորս և քաղաքս Յունաց : Այլ ոչ է հարկ ասել՝ թէ ատոնք այսպիսիք քանի՜ եռանդն նախանձու արծարծանիցեն : Որքա՜ն հանդէս անեն սպասուց պերճութեան, և իւրաքանչիւր ոք ջանայ հաւասարել նոցին, եթէ ոչ և գերազանցել :

Տակաւին պատմի, զի ՚ի խաղս՝ յորում Ալկիբիադ պատկերցաւ՝ եօթն կառք անցին յասպարէզ յանուն բազմահարուստ աթենացւոյն, և երեքին ՚ի նոցանէ կալան զառաջինն և զերկրորդ և զչորրորդ մրցանակսն[2] :

Մինչ դեռ աչքն ունէաք նշանակին տեղւոյ, առաջամեզ դիտակն կալեալ հայել ՚ի դրախտն մի պղնձի՝ որ կայր ՚ի գլուխ ասպարիզին, և յարձիւ մի անղրանեղն ՚ի նմին նիւթոյ զարդեալ ՚ի բազին ՚ի մէջ արձակարանին : Այլ առհա տեսաք զոյգ ձիւնն ընկղզեալ ծածկեալ ընդ երկրաւ, և զարծուին ամբարձեալ սաւառնեալ ՚ի տեսիլ ամենեցուն[3] . և

[1] Պինդ. ողիմպ. 1, 2 : Պաւսան. գիրք Զ. գլ. 1. էջ 473 : Պլուտ. առած. լակոն. հտ. 2. էջ 230 :

[2] Թուկիդ. գիրք Զ. գլ. 16 : Իսոկր. յղ. ձիընթաց. էջ 437 : Պլուտ. յԱղկիբ. հտ. 1. էջ 196 :

[3] Պաւսան. գիրք Զ. գլ. 20. էջ 503 :

ահա բազմութիւն հեծելոց յարձակեալ 'ի ձիընթաց անողր, անցանէին զառաջեաւ մերով հանգստարանաւ փախչականս. և պատեալք զնպատակաւն՝ որ է 'ի ծայր ասպարիզին, կէսք զանդադեին, այլք և եւս երագէին, մինչև միումն 'ի նոցանէ կրկնապատկեալ զձիգն՝ եթող զհետ իւր զամենայն մրցանակիցսն սիտուրս:

Այս յաղթականին մնեալ էր 'ի մարտ յանուն Փիլիպպեայ արքային Մակեդոնացւոց, որ ամենայն ազգի ազգի փառաց հետամուտ էր. և այնպէս յեղակարծում յափշտակեալ նորա փառօք, զի խնդրէր 'ի Բախտէն արկանել ինչ ընդ անչափ բարերարութեանն խառնել[1]: Քանզի 'ի սուղ ինչ աւուրս ոչ միայն զյաղթութիւնս զայս յողիմպիական խաղուն տարեալ, այլ և Պարմենիոն մի 'ի զօրավարաց նորա՝ եբեկ զԻլլիրիկեցիս, և Ողիմպիաս կին նորա ծնաւ նմա որդի զմեծն Աղեքսանդր[2]:

Յետ ասպարիզելոյ նաւհատակաց ամանց, որ այն ինչ յարգունս հատեալ էին[3], զկնի առաջ ասպարէզն բազմութեամբ կառաց, որք զհետ միմեանց անցին 'ի հանդէս:

Կառք երկձիք[4], որպէս 'ի կրկէսն յոլովակաց լծեալ, և հուսկ յետոյ քառաձիք՝ որոց հանդէս

1 Պլուտ. առակ. հտ. 2. էջ 177:

2 Նոյն յԱղեքս. հտ. 1. էջ 666: Յուստին. գիրք ԺԲ. գլ. 16:

3 Պաւսան. գիրք Զ. գլ. 2. էջ 455:

4 Նոյն. գիրք Ե. գլ. 8. էջ 395:

շքեղագոյն է և մեծափառ քան զամենայն արշաւահանդէսս :

Նա 'ի քաջ տեսանել զհանդերձանսն, մնայք յարձակարան անդր . և կային անդ կառք բազումք մեծաշուքք, արգելեալք 'ի պարանաց որք ընդ կարգս իւրաքանչիւր ձգտին, և հետ զհետէ անկանին 'ի վայր[1] : Նաւաւարացն կերպաս ինչ ևեթ թեթև արկեալ էր զիւրեամբք . և երիվարք՝ զորոց. հազիւ նուաճել կարէին զամբոխոյժս՝ ձգէին յիւրեանս զամենեցուն զտեսանելիս գեղովն իւրեանց, ոմանք և կանխակալ յաղթութիւնս[2] : Ի տալ նշանին, յառաջ մատեան մինչև ցերկրորդ կարգն[3], և համանկարգեալ ընդ այս կացին տողաբար առ սեամն թողարանին : Յե- ահա տեսաք զնոսա ծածկեալս փոշւով[4], զմիմեանց զառաջս կալեալ, բախեալ ընդ իրեարս, և այնպէս սաստիկ զկառսն ձգեալ՝ զի հազիւ զհետ նոցա ժամանէին աչք : Սաստկանայր և ևս թափ յարձակմանն նոցա առ դղրօշելով մէջ յանմահից «Բաջացն, զորմէ ասեն սպասու իմն զանխաւ 'ի նոսա ազդել[5] . և բազմապատկէր 'ի հնչել ահաւորագոյն փողոցն[6], որ առ նպատակաւն զետեղեալ կան, 'ի վայրն հուշակաւոր վասն կառապետու-

1 Պաւսան. գիրք Զ. գլ. 20. էջ 503 :
2 Երոդոտոս, գիրք Զ. գլ. 103 :
3 Պաւսան. անդ :
4 Սոփոկլ. յԵլեկտր. տող 716 : Ովրատ. տաղերգ. 1 :
5 Պաւսան. անդ. էջ 504 :
6 Նոյն անդ, գլ. 13. էջ 484 :

թեանց անդ գործելոց ։ Բանզի ըստ լայնութիւն ասպարիզին կառուցեալ կայ՝ գոյզն ինչ կիրճ յանկս կառացն թողլով, ուր վարչացն. յաճախ վտանգի ճարտարութիւն ։ Իսկ այնչափ եւս առաւել ահագին է վտանգն, որչափ զի պարտ է երկոտասանեկի պատել զնպատակաւն. քանզի հարկ է երթեւեկս երկոտասան գործել կառաց ընդ երկայնութիւն ձիընթաց ասպարիզին¹ ։

Ի Նուագս իւրաքանչիւր պատերոյ նոցա՝ արկանէք ինչ կամ դէպք պատահէին, որք 'ի գութ կամ 'ի ծաղր երգիծական շարժէին զբազմութիւն ժողովելոցն ։ Դէպք 'ի կառաց արտաքոյ քան զկրկէսն վազէին, այլք ընդ իրեարս բաղխեալ խորտակէին. և ցան և ցիր ընդ ասպարէզն սփռեալ կային բեկորք խորտակելոց կառացն, բազմավտանգ եւս գործելով զարշաւանս ։ Հնգեակ եւեթ մնացին մարտակիցք, մին թեսաղացի, միւսն լիբեացի, այն սիրակուսացի, և միւս այն կորընթացի, և հինգերորդն թեբացի. երրեակ առաջինքն մերձ էին 'ի պատել զվերջին շրջանն. բայց թեսաղացին հարաւ ընդ նպատակն, խորտակեցան կառք նորա², և ինքն ընդ սանձն պատատեալ անկաւ թաւալգլոր ։ Իսկ մերձեցեալ ձիանն կործանէին 'ի վերայ ձիոց լիբեացւոյն՝ որ կից առ երկ[illegible]շաւէին, և եր[illegible]ք սիրակուսացւոյն հո-

1 Պինդ. ողիմպ. 3. տող 2 Սոփոկլ. յԵղեկտր. տող 59 ։ Պաւսան. անդ, ողիմպ. 747 ։ 6. տող 126 ։

սեւին 'ի խոխոմին՝ որ զայնու տեղեաւն շուրջ կային¹, և հնչէր ձայրն առ հասարակ 'ի բազմա-գոյն ձիչ աղաղակի, հաւին կորնթային և թե-բայլին, և որորոյ զոռեալ՝ ձախող առին ղնդրա-տակաւն, և մորակ 'ի կուշտ ամեհի երիվարացն արարեալ՝ եկին կացին առաջի դատաւորացն. զա-ռաջին մրցանակն կալեալ 'ի Նոցանէ կորնթա-ցւոյն, և Թեբացւոյն զերկրորդն։

Յաւուրս անդ տօնիցն 'ի պարապոյ ժամանակս մեկնեաք 'ի տեսարանէն, և շուրջ զքաղաքաւն ողիմպիացւոց դեգերեաք, մերթ 'ի զնին կայաք համողխից նուիրակութեանցն՝ որ գային գրեթէ յամենայն ազգաց Ելլադայ սպաս մատուցա-նել Արամազդայ², և մերթ զարմացեալ կայաք ընդ համձար և ընդ ժրութիւն տաղաշխարհիկ վաճառականացն՝ որ գային բանալ սփռել զվաճ-ռօքն զվաճառս իւրեանց³։ Նա էր զի ականատես լինէաք հարկի մեծարանացն՝ զոր ընծայէին մե-ծամեծ քաղաքք⁴, հրովարտակօք առհամանեալ ի-բերայ ամպփոխս կամ պսակս, տալով ընթեռնուլ զայնոսիկ 'ի խաղսն ողիմպիականս՝ վասն շնոր-հակալութեանն ոչ ինչ նուազ քան զբարերա-րութիւնն աշխարհահռչակ հրատարակելոյ։

Ի միում աւուրց 'ի զբօսանս մերում զափաւանք

1 Ցեշատ. բանաս. կաձատ. հտ. 9. էջ 384։

2 Դինարք. 'ի Դեմոսթ. էջ 100։ Պաւսան. գիրք Ե. գլ. 15. էջ 414։

3 Կիկեր. տուսկ... Ե. գլ. 3. հտ. 2. ...62։

4 Դեմոսթենէս. յղ. պսակ. էջ 487։

զետոյն Եփրատայ, [illegible]ոյ եղելոց յամենայն ազգի ազգի ծառայից հաւանութեամբ' 'ի գունդագոյն վրանաց Թուլին ծածկեալ [1], ուստի պատուհանակ մի զեզեցիկ, զոր մանուկեալ ընկենոյր 'ի գետ անդր զոստ արմաւենւոյ' զոր 'ի ձեռին ունէր, խղձս անհնարինս ընդ նուէրան կցորդեալ։ Այլ էր նորա այն խինչ յընթացս տապարիզին կալեալ մեծամեծ, զհրեշգեղատաճեմաձեւութք ուրեմն զօրով։ Հարցաք մեք զնա, և ետ մեզ պատասխանի. Պատմա այս Ափեստա, որ յորդառատ և ազնիւ ջրովն արդասաւորէ զգաւառս, էր որդուոյ յԱրկադիա [2]. և տարփաւոր նա Արեթուսայ, այլ նա փախուցեր 'ի նմանէ. և նա 'ի խուսել յերեսաց նորա' զերծաւ 'ի Սիկիլիա, և այլակերպեցաւ անդ յաղբիւր. և Ափեստ կերպարանափոխ եղև 'ի գետ։ Այլ զի բաց բաղձիցն ոչ շիջաւ 'ի նմա, զկնի նա 'ի պատկեր զանյեղ լի հասարակութեն նորա ետոն նմա անդր ընդ ծով ծովաց, զնալ խառնել ընդ Արեթուսայ։ Այս զայս ասացեալ, յոյժ եհան պատանեակն։

Բայց տարեալ 'ի շրջափակին մեհենականն զարդ անձեռք։ Այս ուրեմն մնացորդք, չև են մնացեալք յաստուածոց, յընդերս զորհից խնդրեկին զկախման որ մեծայր նոցա [3]. և անդ փողք զետեղեալք 'ի բագլին մեծ, ընդ հակառակս միմեանց հնչէին վասն

1 Անդրոմեդա յԱղէկս. էջ 33։ 3 Պլին. տեղեկ. 8. տող
2 Պաւսան. գիրք Ե. գլ. 3։ Պասկալ. անդ։
7. էջ 390։

մրցանակին՝ որ միակ ցանկալին էր նոցա ։ Այլ հետագոյն ուրեք բազմութիւն եկաց խառնեալ մերձ 'ի մի 'ի կամարակապից, ունէին ընկեր ձայնի արձագանգաց՝ որ մինչև ցեօթն անգամ կրկնեալ՝ վերստին հնչէին զաւանդեալ նոցա զբարբառսն[1] ։ Նմանայն ուրեք յանդիմանն լինէին մեզ ցոյցք ակներեւք մնացուած պերճանաց . քանզի 'ի խաղս անդր ածեալ ձգլին առ հասարակ, որք մրցանգամ համբաւեալքն էին կամ ցանկան համբաւոյ աշխազօրութեամբքն իւրեանց կամ գիտութեամբք և կամ մեծութեամբք[2] . զի ամենեքին զան անդր 'ի տեսիլ աշխարհաժողով բազմութեան, որ միտըն փութայ զհետ գերազանցելոցն արդեամբք կամ կարծեօք ։

Զհետ ճակատամարտին Սաղամինայ յերևել Թեմիստոկլեայ 'ի մէջ ատեան, հնչեաց ասպարէզն 'ի ձայն ծափոց 'ի պատիւ նորա ։ Այլ ամենեցուն զաչս 'ի բաց դարձուցեալ 'ի խաղուցն՝ 'ի նա և եթ աչուցեալ հայէին, ցուցանելով օտարաց ձայնիւ ցնծութեամբ և զարմանալեօք զփրկիչն Յունաց ։ մինչև խոստովան լինել Թեմիստոկլի, զի բարերաստագոյն 'ի կեանս իւր եղև նմա օրն այն[3] ։ Պղուտարքոս զի և Պղատոն 'ի նախորդ ողիմպիադին հանդէսն իւր ընծայեալ էր

1 Պղուտ. յղ. Հաղփոնդի. Հտ. 2. էջ 802 ։ Պաւսան. գիրք Ե. գլ. 21. էջ 434 ։

2 Խոսկր. յղ. Ձիրնթայ. Հտ. 2. էջ 436 ։

3 Պղուտ. 'ի Թեմիստ. Հտ. 1. էջ 120 ։

յաղթանակ ։ Զի յերեւել նորա 'ի խաղս անդ՝ ամենայն բազմութիւնն ակնկառոյց եղեւ 'ի նա, եւ բարբառովք կարի յոյժ ախորժելեօք եցոյց ըզ- խնդութիւն իւր ընդ տեսիլ երեսաց նորա¹ ։

Դէպ եղեւ մեզ տեսանել միւս եւս այլ խանդաղատելի եւս տեսիլ ։ Ծերունի ոմն խնդրէր իւր տեղի, եւ անցեալ ընդ բազում կարգս կայից, եւ ամենայն ուստեք մերժեալ կատականօք, եկն 'ի կայս սպարտացւոց ։ Յոտն կացին ամենայն մանկունքն եւ բազմագոյնք եւս յարանց մեծարանօք, եւ ետուն նմա տեղի ։ Անդ էր լսել զկայթիւն ձեռաց անհամար բազմութեանն ։ եւ ծերունւոյն գոչեալ, ասէ ։ Հելլէնք հմուտք կարգաց բարեձեւութեան, սպարտացիք ուղղիչք նոցին² ։

Նկարիչ զոմն տեսի 'ի շրջափակի անդ աշակերտ Զեւքսեայ, որ համագոյն վարժապետին իւրում՝ զգնայր արկեալ զիւրեաւ շքեղ ծիրանի՝ յորում ոսկեգիր դրոշմեալ էր անուն իւր ։ Այլ ամենայն ուստեք ասէին ցնա ։ Սնափառութեանն Զեւքսեայ նմանեալդ, դու ոչ ես Զեւքսիս ։

Տեսի եւ կիւրենացի զոմն եւ զայլ ոք կորնթացի, զի մին զմեծութիւնս իւր թուէր, միւսն զնախնիս ։ Այլ ցասնոյր կիւրենացին ընդ սնապարծութիւն կորնթացւոյն, եւ սա ընդ կիւրենացւոյն ծիծաղէր ամբարհաւաճութիւն ։ Տեսի եւ զոմն

¹ Նէանթ. առ Դիոգ. հա. 2. էջ 235 ։
Լայէրտ. գիրք Գ. յօդ. 25 ։ ³ Պլին. գիրք ԼԵ. գլ. 9.
² Պլուտ. առակ. լակոն. հա. 2. էջ 691 ։

որոց միտք վաղ իսկ մեծաշուք հանդերձանօքն գրաւեալ էին. այլ նոյն հետայն պատրաստեալ 'ի լուր անհամ տաղիցն, արձակեցին երգիծանս կարի յոյժ դառնինս ընդդէմ Դիոնեսեայ. և ոչ անդ զկայ առեալ արհամարհանաց նոցա, կործանեցին իսկ ոմանք զխորանս նորա և աւար հարին: Այլ 'ի լրումն արկածից թշուառութեանն թագաւորին, կէսք 'ի կառաց նորա 'ի դուրս ոստեան յասպարիզէն, այլք ընդ միմեանս հարեալ խորտակեցան. և նաւն որ բարձեալ բերէր զհանդիսականսն և զսպասս հանդիսին, վարեցաւ 'ի մրրկէ 'ի ծովեզերս Իտալիոյ: Այլ մինչդեռ հռչակ հարկանէր 'ի Սիրակուսա՝ թէ 'ի տաղիցն Դիոնեսեայ հասին արկածք արտասանողիցն և ձիոց և նաւուն, դրանիկքն ասէին ցթագաւորն՝ թէ նախանձ հալածէ միշտ զհանճար[1]: Յետ չորից ամաց դարձեալ առաքեաց թագաւորն այլ քերթուածս և զուսանս աջողակագոյնս, այլ սոքա առաւել քան զառաջինսն գտան ամաչեցեալք: Ջոյժ առեալ Դիոնեսեայ, խելաց ծփումն առնէր. և ոչ այլ ազգ կարացեալ զթախծութիւն մտացն փարատել՝ բայց բռնաւորական սփոփանօք, զոմս աքսորել և զոմս գլխատել հրամայեաց 'ի ժողովրդենէն[2]:

Բայց հանապազորդէաք մեք 'ի լուր ընթերցուածոցն յՈղիմպիա. էր զի և հանդիսադիրք

[1] Դիոդ. գիրք ԺԴ. էջ 318:

[2] Նոյն անդ, էջ 332:

խաղուցն առ[illegible]թեր կային անդ , և ժողովուրդն փութայր անդր անձկանօք ։ Ի միում աւուրց մինչդեռ յակձինս կայր 'ի լուր, հնչեաց յամենայն կողմանց անուն Պողիդամայ . և վաղվաղակի բազմագոյնք յորոց անդն կային չոգան զհետ նորա ։ Այս էր նա ըմբիշ Թեսաղացի , անձոռնի հասակաւն և կորովով ։ Պատմէին զնմանէ , յՈղիմպոս լերին անզէն՝ ընկճեալ ընդ հարուածովք զառիւծ վիթխարի . և զի 'ի բուռն հարկանել նորա զոտից զուարակի մոլելոյ , չկարաց գազանին զերծանել՝ առանց թողլոյ զկճղակսն 'ի ձեռս ըմբշին . և զի կասեցուցանէր զերիվարս ամեհիս՝ կալեալ ձեռամբ միով զյետուստ կառաց ։

Բազմապատիկ 'ի տօնս խաղուց տարեալ էր նորա մրցանակս . այլ յողիմպիականսն տարաժամ հասեալ , չկարաց մտանել ։ Այս գիտացաք աստ զեղերական վախճան նորանշան առնս այսորիկ . զի մինչդեռ ընդ ոմանս 'ի բարեկամացն յայրի ուրեք մտեալ կայր զովանալ 'ի տօթոյ , հերձան ժայռք կամարին . խոյս ետուն բարեկամք նորա , այլ նորա զքարաժայռն լեռնաձև 'ի վեր կամելով ունել՝ ճմլեցաւ ընդ նովաւ [1]* ։

Որչափ դժուարին է ա[illegible]ուանի լինել առ բազգաւաճեալ ազինս , նոյնչափ ևս առաւել խորտի փառասիրութիւն և 'ի ծայրայեղ անչափութիւնս զառածանի ։ Ի միւսանգամ ուղևորելն իմում յՈ-

1 Պաւսան. գիրք Զ. գլ. Ե. էջ 463 ։

* Յետակոյս մատենիս 'ի տեղեկութիւնս. Թիւ ԺԵ ։

զինմիրամ տեսի անդ զՄենեկրատ[illegible]ժիշկ սիրակուսացի, զի ընդ իւր ածեալ ձգէր զբազդուածս 'ի բժշկելոցն յիւրմէ, նախ քան զպատմանելն խոստումն առեալ 'ի նոցանէ՝ շրջելոյ ամենայն ուրեք զհետ իւր ։ Մի 'ի նոցանէ զնայր 'ի կերպարանս Հերակլեայ, և միւս ոմն Ապողոնի, և այլք Հերմեայ և Ասկղեպեայ. իսկ ինքն զգեցեալ ծիրանի, և պսակ ոսկի 'ի գլուխ, և գաւազան առքունի 'ի ձեռին, յանուն Արամազդայ տալով զանձն 'ի տեսիլ, շրջէր ընդ երկիր՝ առաջնորդեալ 'ի նորաձև դիցն ։ Գրեաց նա առ Թագաւորն Մակեդոնացւոց այսպէս.

Մենեկրատ Արամազդ առ Փիլիպպոս ողջոյն. Դու 'ի Մակեդոնական աշխարհին Թագաւորես, ես 'ի բժշկականին. դու զառողջս 'ի մահ մատնես, ես զհիւանդս կեցուցանեմ. քեզ Մակեդոնացիքն թիկնապահք, ինձ դիքն զինուորին ։ Իսկ Փիլիպպոս հակիրճ ես նմա պատասխանի. Ողջամիտ լինել քեզ ըղձանամ* ։ Այլ յետ ժամանակի լուեալ՝ եթէ Մենեկրատ 'ի Մակեդոնիա եկեալ է, կոչեաց զնա առ ինքն և հրաւիրեաց յընթրիս ։ Այլ էին Մենեկրատ և ընկերք նորա բազմեալք 'ի բաստեռանս շքեղս և բարձրագահոյս, և կայր առաջի նոցա բագին, և 'ի վերայ բագնին երախայրիք հնձոց ։ Այլ մինչդեռ խորտ-

* Պլուտարքոս (Առակ. Ագեսիղայոսի, առ որ գիրն լակոն. հտ. 2. էջ 213.) այն ուղղեալ էր ըստ նորին զպատասխանիս զայս համարի պատմութեանն ։

մեծք ազնուաց պաշտօնէին այլոց բազմականաց, նուէրք խնկոց և քաւութեան ընծայէին նոցունց դիցն. որոց չհանդուրժեալ ընդ նախատինս, ելին զնանացեալ ՚ի սրահէն, և ոչ դարձան անդրէն։

Այլ ինչ նուազ զգայր Յունաց և զթեթևութիւն բնաւորութեան նոցա յանդիմանեն ամենեն իրքս այս։ Յառաջ քան զամն ութ ՚ի տօնս ողիմպիականս խաղուցն եղև պատերազմ ՚ի մեհենական շրջափակի անդ։ Մանզի պիսացւոց յափշտակեալ յեղիացւոց զվերակացութիւն խաղուցքն [1], և սոցա կամելով թափել զիրաւունս իրեանց, կողմանք երկաքանչիւր համաշերձ նիզակակցօքն խուժեցին ՚ի շրջափակ անդր, և եղև անդ մարտ սաստիկ, և բազում ձիապարզք անկեան։ Այս բազմութիւն յոյժ եկեղեց ՚ի տօն անդր, զի եթէ առ հասարակ պատկերաւք ծաղկանայք, կային պճնեալ ՚ի գնեին շուրջ զատեղեաւ ճակատամարտին՝ որպէս զի եթէ ՚ի մրցանս ընթացից զարմանալով, և ծափս հարկանելով ՚ի համայն իմն յօյժս կրից ընդ յաղթութիւն մերթ այսր և մերթ այնր կողմանն [2] *։

1 Պաւսան. գիրք Զ. գլ. 4. էջ 460։

2 Քսէն. պատմ. Յուն. գիրք Է. էջ 639։ Դիոդ. գիրք ԺԵ. էջ 387։

* Համգոյն իմն անտարան, այլ սակաւուք են յոյժ, ցուցան ՚ի Հռոմ ՚ի սկզբան նիքնակալութեան։ Վանկի զորք Վեսպասիանոսի և Վիտելլիոսի ետուն ընդ միմեանս մարտ սաստիկ ՚ի անդուոջն անուանեալ գաւառ Արիսի. և ժողովուրդն շուրջ զերկոքումբք բանակօքն ՚ի վերին կացեալ, կայթս հարկանէին ձեռամբք ընդ յաղթութիւն մերթ ընդ այսր և մերթ ընդ այնր կողման (Տակիտ. պատմ. գիրք Գ. գլ. 83)։ Այլ ՚ի զուգակշիռ երկոցունց

Մնայ ինձ ասել զՀռահանգաց, առ որս խնդրէ առաւելագոյն կորով քան յայլսն․ զգօտեկռուացն ասեմ և զբռնամարտէն և զամենախումբ և զՀրէն զամարտիկ մրցութեանցն ։ Սրանց ամենայն զկարգըն՝ որով մարտքս այսոքիկ հանդիսացան, 'ի գօտեմարտէն սկիզբն կալայց ։

Սոյն գօտեմարտկին է զգետնել զոսոխն, և ստիպել զնա 'ի յանձն առնուլ զպարտութիւն ։ Մարտիկք՝ որոց առաջի կայր ոսոխել, կային 'ի մերձակայ ուրեք գաւթի․ և ձայն տուեալ նոցա 'ի միջորէի [1] ։ Յոթն էին թուով, և արկան վիճակք եօթն 'ի սափորի որ կայր առաջի հանդիսադրաց խաղուցն [2] ։ Յերկուս 'ի վիճակաց անուն գրոշմեալ էր տառս Ա. յերկուս յայլս Բ. և յերկուս յայլս Գ. և յեօթներորդումն Դ ։ Տատանեցին զսափորն, և իւրաքանչիւր ոք 'ի մարտկաց եհան իւր վիճակ․ և մի 'ի հանդիսադրաց զուգեաց երկուս երկուս՝ որոց նոյն տառ վիճակեալ էր ։ Իսկ եղեն երրեակ զոյգ գօտեմարտկաց, և եօթներորդն պահեցաւ մենամարտել ընդ յաղթականս այլոց [3] ։

տեսարանացն՝ խոսիր մեծ զանազանութիւն տեսանի ։ Քանզի յՈղիմպիա ցանկութեամբ եւեթ տեսութեանն ձգեալ ժողովուրդն կայր 'ի գնին․ իսկ 'ի դաշտ Արիանն տեսողք զեղուլին խուժադուժ խնդութեամբ ։ Եւ թէպէտ զնոտիր զանազանութիւն բարուց և բնաւորութեան, մարթ է ասել՝ զի 'ի գեղան յայնոսիկ ստար էր մարտն յՈղիմպիա տեսողաց․ իսկ 'ի Հռոմ՝ ընտանի պատերազմացն նոցա մնան ։

1 Փիլոստր. վարք Ապոլ. գիրք Զ. գլ. 6. էջ 238 ։

2 Ղուկիան. 'ի Հերմոտ. գլ. 40. հտ. 1. էջ 783 ։ Փաւս. յղ. ընդհանրապէտ. գիրք Ա. գլ. 24 ։

3 Ցուլյեոս Կեսար. էջ 317 ։

Մ՚երկացան յամենայն զգեստուցն . և օծեալք իւղով[1], Թաւալեցան յաւազի լինել դժուարակալու ՚ի ձեռաց ոսոխացն[2]:

Նոյն վաղվաղակի կացին յասպարիզին ախոյեանքն, մին Թեբացի և միւսն արգիւացի: Մ՚ատեան առ միմեանս, և վայրիկ մի յածեալ զաչս զիրերօք՝ քուռն հարին զբազկաց միմեանց: Մ՚երթ ճակատ ընդ ճակատ հարեալ[3] մղէին զիրեարս հաւասար զօրութեամբ անշարժք, և պարտասէին ՚ի ձիգն ընդունայն. և մերթ զգլղորդէին զիրեարս ուժգին հարուածովք, զալարեալք զմիմեամբք որպէս զօձս, ձգտեալք, ամփոփեալք, յետս և յառաջ և առ ՚ի կողմն՝ յաջ և յահեակ ընդդձեալք[4]: Քիրտն յորդեալ իջանէր ընդ անդամս նոցա վաստակեալս . իսկ նոցա վայրիկ մի ոգի առեալ, ապա քուռն հարին զմիջօք միմեանց . և երկաքանչիւր զամենայն ոյժ և հնարս ՚ի կիր արկեալ, ամբարձ Թեբացին զասոխ իւր ՚ի վեր . այլ ընդ քեռամբն ընկճեալ անկաւ հանհկործան ընդ ոսոխին, և թաւալէին ՚ի փոշւոջ՝ ելեւելս զմիմեամբք առնելով: Ապա Թեբացւոյն պատատեալ զոսոխին ծնգօք և բազկօք, արգել զնա անշարժ ընդ իւրև . և կալեալ զփողոցն, հարկեցոյց զնա աջ ՚ի վեր ամբառնալ ՚ի

1 Փաւր. յղ. ըմբշամարտ. գիրք Բ. գլ. Ե:

2 Ղուկիան. յԱնաք. հտ. 2. էջ 910:

3 Նոյն անդ, էջ 884:

4 Ստատ. Թեբայ. կաճառ. հտ. 3. էջ 237:

նշանակ պարտութեան[1] : Այլ և այս չէ բաւականն առ 'ի ստանալ զպսակն . պարտ է յաղթականին զէթ երկիցս զգետնել զոսոխն[2], զի ըստ յաճախ սովորութեան՝ երիցս դառնան առ միմեանս 'ի կռիւ[3] : Զօրացաւ արգիլացին յերկրորդումն մարտի , և թերացին կալու յերրորդումն զյաղթութիւնն :

Այս իսկ մին ևս զոյգք երկու կատարեցին զմարտն , մեկնեցան պարտեալքն տխուր կորակոր[4] : Այս կացին յաղթողք երեք , մին ամբաստանադացի , միւսն եփեսացի , և թերացին՝ զորմէ յառաջ ասացի . կայր և եօթներորդն պահեալ վիճակաւ՝ հաղացի : Որ թէպէտ և անխափան մնացեր 'ի կռիւսն , այլ երեքկին մարտիւ պարտ էր նմա առնուլ զմրցանակն[5] : Զօրացաւ նա 'ի վերայ ախոյեանդացուոյն , այլ զգետնեցաւ յեփեսացւոյն . և զնա թերացուցին ընդ իւրև տապալեալ , կալաւ զյաղթանակն : Քանզի առաւելումն յաղթութեան պարտ է զայլսն զհետ բերել . և է ուրեք՝ զի 'ի զուգար եօթանց ախոյանաց հարկ լինի յաղթողին ընդ քառեակ ասոխս մենամարտել , և ընդ իւրաքանչիւր 'ի նոցանէ երեքկին տալ մարտ[6] :

1 Փաբր. յղ. ընծայամարտ. գերք Ա. գլ. 8 :

2 Յիշատ. բանաս. կաճառ. հա. 3. էջ 280 :

3 Եսքիլ. յԵւմեն. տող 392 : Պարապ, անդ : Պղատ. յԵւթիդ. հա. 1. էջ 277 :

4 Պինդ. ողիմպ. 8. տող 90 :

5 Եսքիլ. 'ի Քոյեփ. տող 866 :

6 Պինդ, անդ :

Ի գօտեմարտի ոչ է օրէն հարկանել զոսոխն, իսկ 'ի բռնամարտի հարկանել ևեթ օրէն է։ Մրցահատակք ուժ բռնամարտիկք յառաջ կացին, և իբրև զգօտեմարտիկսն վիճակաւ զուգեցան։ Պոռակ պղնձի՝ ծածկէր զգլուխս նոցա, և ձեռէս պահպանակս ձեռացն՝ փոկս պատ 'ի պատ ամենուստ զմիմեամբք ածեալ էր[1]։

Բազմայեղանակք եղեն յարձակմունք և պատահարք մարտին։ Ոչ զի ոստիւք ձգտման ոգւովչափ գործէին՝ առ 'ի չկալոյ հանդէպ ճառագայթից արեգական, և ժամս ձիգս դէտ կային առ 'ի գտանել մասն ինչ անպատսպար 'ի մարմինս իրերաց[2]. Ձգտեալ զբազուկս իւրեանց ունէին 'ի վեր յամրութիւն գլխոյ իւրեանց, և տրագ տրագ շարժէին զնոսա՝ առ անմատոյց լինելոյ յոսոխացըն[3]։ Մերթ և յարձակեալ յիրեարս մոլեգին տեղատարափ հարուածոց զմիմեամբք ածէին։ Այլք՝ որոց բազկարձակ 'ի վերայ ոսոխացն դիմելով, 'ի խուսել նոցին 'ի բաց՝ սաստկապէս յերկիր կործանեալ ջախջախեցան. և այլք անկեալք պարտասեալք և կարեվէրք՝ յանկարծ յոտն կանգնէին, յուսահատութեամբ արծարծեալ 'ի նոսա զկռիւ։

Տեսաք և զայլս 'ի տեղւոջէ մարտին 'ի բաց

1 Եւստաթ. յԻղիակ. 23. էջ 1324. տող 38։
2 Յիշատ. բանաս. կաճառ. հտ. 3. էջ 267։
3 Ղուկիան. յղ. Անաքարս. հտ. 3. էջ 139։
4 Յիշատ. բանաս. կաճառ. հտ. 3. էջ 273։

ածեալ[1], ոչ ունելով 'ի դէմս տիպս կերպարանաց. և ոչ այլ ինչ ցոյց կենդանութեան, բայց զուրիւնն որ 'ի բերանոյ նոցա գունդագունդ հոսէր:

Մռնչէր 'ի սրտէ ընդ ողորմ տեսարանն, և ասղմկեալ յուզէին գութք իմ, տեսանելով զմանկրտին հրահանգեալ յանգթութիւն[2]. զի նախ քան զարս՝ զնոսա յառաջ մատուցանէին 'ի գօտեմարտն և 'ի բազկամրցութիւն[3]: Իսկ Յոյնք զբօսնուին 'ի զնին սոսկալի իրացն, և խրախոյս բարձեալ յորդորէին զհէքսն զայրագնեալս ընդդէմ միմեանց[4], Յոյնք բարեգութքն և մարդասէրք: Ապաքէն դիք դժնդակ իմն և կորանաց արժանի ետուն մարդկան կար կրթելոյ առ ամենայն ինչ, մինչև զգազանութիւն և զյոռութիւն առնել մեզ զբօսանս:

Ի տարաժամ հասակի հիւծի մանկտին յանագորոյն հրահանգացն յորս մարզի. որպէս զի 'ի դիպրութիւնս յաղթականացն 'ի խաղս ողիմպիականս հազիւ գտանին երկու կամ երեք ոմանք, որոց 'ի մանկութեան միանգամայն և յերիտասարդութեան տարեալ իցէ մրցանակ[5]:

Յայլս 'ի հրահանգաց դիւրաւ ճանաչի յաղթութին, իսկ 'ի բազկամրցութեն հարկ է զի մի 'ի մարտակցաց խոստովանեսցի զպարտութիւն.

1 Ծաղկաքաղ. գիրք Բ. գլ. 1:

2 Պաւսան. գիրք Ե. գլ. 8. էջ 395:

3 Պղուտ. խրախճ. գիրք Բ. գլ. 5. հտ. 2. էջ 639:

4 Փաւր. յղ. ըմբշամարտ. գիրք Բ. գլ. 30:

5 Արիստոտ. յղ. հաս. գիրք Ը. գլ. 4. հտ. 2. էջ 453:

և ցուցանի է 'ի նմա խումն ինչ զօրութիւն՝ չյուսահատի 'ի յաղթութենէ, զի մարթի ճգամբքն իւրովք և հաստատութեամբ ստանալ զայն մինչև 'ի սպառ ։ Պատմեն զոմանէ ումեմնէ, զի զատամունսն խորտակեալս յահագին հարուածոյ ոսոխին եկուլ. և ոսոխին տեսանելով 'ի դէրև լեալ զյարձակումն իւր, համարեցաւ անխուսափելի 'ի վերայ իւր հասեալ կորուստ, և յանձին կալաւ զպարտութիւն[1] ։

Սովին յուսով թագուցանեն մարտիկք զցաւս իւրեանց ընդ սպառնալեօք դիմօք և ընդ վայրագ ժուժկալութեամբ, որ ածէ յաճախ 'ի վերայ նոցա վտանգ կորստեան, և է ուրեք զի կորուսանէ իսկ զնոսա[2], թէպէտ և զգուշանայ կենաց նոցա յաղթականն. զի խոտի արգելուն օրէնք հարկանել 'ի մահ զոսոխն, պատուհաս սպառնալով զրկումն 'ի պսակէն[3] ։ Նոյն բազմադոյնք, թէպէտ և զերծեալք 'ի վտանգէն, զամենայն աւուրս կենաց իւրեանց կեան խեղանդամք, կամ զպակաս ողջութեան 'ի կերպարանս բերելով[4] ։ Յայն սակս արգելօք քան զամենայն հրահանգս մրցութեանց անարգագոյն թուի սա, և զրեթէ սինլքոր խուժանին պահեալ[5] ։

Սակայն բիրտ և վայրագ մարդկանն դժոխըմ-

1 Եղիան. զան. պատմ. գիրք Ժ. գլ. 19։
2 Պարտալ. Պինդ. ողիմպ. Ց. տող 34։
3 Պաւսան. գիրք Զ. գլ. Ց. էջ 474։
4 Ծաղկաքաղ. գիրք Բ. գլ. 1։
5 Խռակր. յզ. ձիրնթայ. հտ. 2. էջ 437։

բեր քան զհարուածսն զայնոսիկ և զվէրս է տօթըրն՝ որ ընկճէին զնոսա[1] . քանզի մրցութիւնքս այսոքիկ յայնպիսում ուրեք կողմանս Եղիադայ ; և յայնպիսում յեղանակի և 'ի ժամու կատարին , յորում բոցակիզագոյն է տապ արեգական , մինչև 'ի զմին իսկ կացելոցն հազիւ հանդուրժել[2] :

Իսկ ամենախումբ մարտն 'ի սաստիկ ևս տօթաժամու ածաւ 'ի հանդէս : Այս է մարտս այս խառն յերկուց , 'ի գօտեկռուոյն և 'ի բռնամարտէն[3] . այսու ևեթ զանազանեալ , զի ոչ է օրէն 'ի սմա մարտիկաց կռուել յերեսս , և ձեռաց նոցա ասպազէն 'ի քեմխտապատ ձեռնոցն զոլով՝ ոչ յոյժ վտանգաւոր են հարուածք նոցա : Փութով վախճանի եղև մարտն . յերեկոյէ եկեալ էր անդր Սոստրատ անուն սիկիոնացի , հռչակաւոր բազմութեամբ ամբարելոց պսակացն , և ահաւորութեամբքն որովք զայնոսիկ առացեալ էր[4] : Ախոյեանքն յառաջացն խոյս ետուն յերեսաց նորա , և այլք ընդ նախաձեռն առնել նորա 'ի մարտ . զի 'ի նախաշաւիղ մրցութեան անդ , որովք ըմբիշք ալ տուեալ միմեանց՝ պատրաստին 'ի մարտ , այնպէս ուժգին սեղմէր և պրկէր զմա-

1 Կիկեր. յղ. երև. Ճառ. տասանելից. գլ. 69. հա. 1. էջ 394:

2 Արիստոտ. առաշարկ. 38. հա. 2. էջ 837: Եղիան. զանազան պատմ. գիրք ԺԴ. գլ. 18:

3 Արիստոտ. յղ. Ճառ. տասան. հա. 2. էջ 524: Պղուտ. խորհրդ. գիրք Բ. գլ. 4. հա. 2. էջ 638:

4 Պաւսան. գիրք Զ. գլ. 4. էջ 460:

տուծոս տախայն, զի նոյն հետայն տայլն նմա զյաղթութիւն ։

Մարտիկք, զորոց ցայս վայր ասացի, 'ի հրահանգս այսոցիկ եւեթ մրցութեանց մարզեալ էին. իսկ զորոց առաջի կայ ինձ ասել, յամենայն ազգի ազգի յոգնամրցիկ հրահանգս կրթին ։ Քանզի հնգամարտիկն մրցութիւն բովանդակէ յինքեան ոչ միայն զհետի ընթացս, զզօտէկռիւ, զգաղկամրցութիւն եւ զամենախումբ մարտն, այլ եւ զվազս եւ զբոլորակաւ խաղն եւ զարգընըմկէց տէգընկէց խաղարկութիւնս [1] ։

Ի վերջնումս շատ է դիպեցուցանել զգեղարդն 'ի նպատակն ։

Սկաւառակն կամ բոլորակ՝ է վէմ մեծ կամ 'ի հրահալական նիւթոյ ստակաձեւ բոլորշի, տասն թաղոյն ընդ մէջ քան զեզերսն, ծանր յոյժ եւ կարի ողորկ, որով եւ դժուարակիր [2] ։ Բոլորակք երեք պահեալք յՍղիմպիա, 'ի հանդէս խաղուց ածին 'ի մէջ [3]. եւ 'ի միումն 'ի նոցանէ ծակ գործեալ է՝ անցուցանել փոկ ընդ այն [4] ։ Ըմբշին կացեալ 'ի բարձրաւանդակի՝ զոր յառաջարկեցի անդ գործեն, բառնայր զբոլորակն ձեռամբ կամ կալեալ զփոկոյն. եւ շրջանակեալ զայն [5], արձակէ ամենայն զօրութեամբ ուժոյ ։ Նոյանայ բոլորակն

1 Ցիշոս. բանսս. կաձառ. հա. 3. էջ 320 ։

2 [illegible], էջ 334 ։

3 Պաւսան. գիրք Զ. գլ. 19. էջ 498 ։

4 Եւստաթ. յԻղիական. 8. էջ 1591 ։

5 Փիլոստր. պատկեր. գիրք Ա. գլ. 24. էջ 798 ։

ընդ օդս, և անկեալ յերկիր՝ թաւալի ընդ կրկէսն. և ուրանօր զկայ առնու՝ նշանակի տեղին, և այլք 'ի մարտկաց մի ըստ միոջէ անտի և անդր ձգնին հաստատանել զբոլորակն ։

«Այն օրէնք են յաղթութեան և 'ի վազս, ամենայն շարժմանց նորա 'ի ձայն սրնգի կատարելով[1] ։ Աշխու 'ի ձեռին ունին աստղք, որով հեղաղայն և զվազսն առեն գործել նոցա[2]. և են որք անդր ևս քան զյիսուն ոտնաչափս վազեն ։

Որ 'ի տանել զմրցանակ հնգամարտին՝ պարտ է մարտկաց յաղթանակել գէթ յերիս նախամարտիկ մրցութիւնս, զորս յանձն առնուն[3] ։ Այլ թէպէտ ոչ զօրեսցեն կալ առաջի ընթացից 'ի մարտս իւրաքանչիւր կրթելոց, սակայն յայժ մեծարեն[4] այնու՝ զի հրահանգեալք որքան է հնար 'ի կորով և յաջողակութի և 'ի թեթևութիւն, կատարեն զամենայն սահմանադրեալ խաղս և զմրցութիւնս միանգամայն ։

Ի վերջնում աւուր տօնին սահմանեցաւ պսակել զյաղթողս[5]. և կատարեցաւ հանդէսն որ պանծալին էր նոցա 'ի շքեղափակն մեհենականն[6], մատուցանելով նախ զոհս բազում ջերևելի սպասուք ։ Այլ 'ի վախճան լինել պատարագացն՝ ահա

1 Հոմեր. Եղիակ. գիրք ԻԳ. տող 840 ։

2 Արիստոտ. առաջնորդ. Ե. հտ. էջ 709 ։

3 Պլուտ. խորհրդ. գիրք Թ. հտ. 2. էջ 738 ։

4 Ցիցեր. բանաս. կաձնա. հտ. 3. էջ 322 ։

5 Պարսայ. Պինդ. յաղթեմ. 3. տող 33 ։

6 Փիլոստր. վարք Ապոլ. գիրք Ը. գլ. 18 ։

գայլին յաղթողք ընդ հանդիսադիրս խաղուցն 'ի տեսարան անդր, զգեցեալք հանդերձ շքեղ[1], և ոստ արմաւենի 'ի ձեռին[2]: Այլ զնոյն զմայլեալք ուրախութեամբ 'ի ձայն սրնգաց, պար առեալ յանթիւ բազմութենէ ժողովրդոց՝ որոց կայթք ձեռացն դղրդէին զօդս: Զհետ նոցա գային այլ նահատակք հեծեալք 'ի կառս և յերիվարս. ձիաներն նոցա ահիպարանոց զխրոխտումն յաղթութեանն 'ի դէմս բերէին. և էին զարդարեալք ծաղկամբք որպէս փառակիցք յաղթանակին:

Իբրև հասին 'ի տեսարանն, հրաման ետուն հանդիսադիրք խաղուցն՝ նուագել զօրհնութիւն տարեալ երգեմն յԲակիւղեայ քերթողէ 'ի պայծառութիւն փառաց յաղթող նահատակացն և շքոյ հանդիսին: Այլ 'ի ծայրայանգս խուրաքանչիւր՝ ձայնակից լինէր երաժշտաց ժողովուրդն առհասարակ. և ապա քարոզ՝ 'ի մէջ կացեալ, կարդայր զՊորոս կիւրենացի՝ որոյ յաղթացս ասպարիզին տարեալ էր զմրցանակն. և նահատակին յանդիման եղև առաջ հանդիսադրին[3], և նա եդ 'ի գլուխ նորա պսակ 'ի վայրի ձիթենւոյ, հատեալ որպէս զայլսն ամենայն որ բաշխէին յՈղիմպիա 'ի ծառոյն որ կայ յետկոյս մեհենին Արամազդայ[4], և մեծարեալ պաշտի 'ի ժողովրդենէն վասն

1 Ղուկիան. 'ի Դեմոն. հա. 2. էջ 382:

2 Պլուտ. խորհրդ. գիրք Ը. գլ. 1. հա. 2. էջ 723:

3 Պինդ. ողիմպ. 3. տող 21:

4 Պաւսան. գիրք Ե. գլ. 15. էջ 414:

որոյ իրաց սահմանեալն է ։ Դարձեալ վերըստին նորոգեցան անդէն ամենայն ցնծութիւնք և դըրուատիք՝ որք 'ի յաղթութեանն պահու ա-րարան յաղթողին . և այնպէս յամենեցունց ամենայն զօրութեամբ յաճախեալ, զի 'ի ծայր փառաց թուէր ինձ Դորոս ամբարձեալ[1] ։ Այլ ստուգիւ իսկ 'ի յամին բարձրութեան նկատէին զնա ամենայն աչընթերակացք հանդիսին . և ոչ եւս զարմանայի ընդ անհնարին ձգուանն՝ զորս յանձն առնունէին հաստատակէք, և ոչ ընդ յեղակարծ արգասիսն՝ որոց համաշխարհական դըրուատիքն ետուն բազում անգամ պատճառս ։ Պատմէին մեզ, զի իմաստնոյն Մխիթարի 'ի դէպս անդ զրաւեալ էր 'ի կենաց առ խնդութեն, զիրկս արկանելով որդւոյն՝ մինչ գայր նա 'ի յաղթութենէ[2], և թէ հանդիսատեսք խաղուցն առ հասարակ պարտ համարեցան աչընթեր կալ դամբանական հանդիսի նորա ։ Յաւելին և զայս . ասեն . Պարովագոյն եւս տեսարան յառաջ քան զայս զարտեսին հարքն մեր .

Պիսագորաս հռոդացի, որոյ զշուք ազգատոհմի յաղթանականն իւրով 'ի խաղս մեր աստ պայծառացուցեալ էր[3], ած այսր զերկուս յորդւոց իւրոց, որք մարտեան և պսակի արժանի եղեն[4] ։

[1] Պինդ. ողիմպ. 3. տող 77 ։ Պարապ. անդ ։
[2] Դիոգ. լայերտ. գիրք Ա. գլ. 72 ։ Պլին. գիրք Ե. գլ. 32. հտ. 1. էջ 394 ։
[3] Պինդ. ողիմպ. 7 ։
[4] Պաւսան. գիրք Զ. գլ. 7. էջ 169 ։

Այլ ընդ առնուլ նոցա զայն՝ եդին 'ի գլուխ հօր իւրեանց, և 'ի վերայ ուսոց իւրեանց բարձեալ բերէին զնա յաղթանակաւ 'ի տեսիլ ամենեցուն: Որոց ուրախ լեալ ընդ նմին՝ ցանէին զնովաւ ծաղիկս, և կէսք առնէին. Ոչ էր և կեաս Պղիագոր, զի չէր այլ ևս ինչ քեզ ցանկալի[1]: Այս ծերունոյն ոչ կարացեալ զդեղումն բարեբաստութեան բերել, եհան զոգի յանդիման ժողովոյն որ պարուէր ընդ տեսիլն, և 'ի գիրկս որդւոյն՝ որ թանային զնա արտասուօք[2]:

Այս ուրեք, զի դրուատիքս այսուքիկ տուեալք յաղթողաց՝ ազգակին կամ մեծամեծ պատուէին 'ի մրցողութեանն նախանձու: Որ ընդ աղաղակս ցնծութեան հասարակաց լսէր երբեք երբեք և զշչիւն սուլելոյ բազմաց, որք 'ի քաղաքս հակառակորդս հայրենեաց յաղթականացն ծնեալ էին[3]: Այս զոյգ ընդ արդարախոս նախանձու տեսի և զհանդոյն իմն նորանշան արդարախոս մարդահաճութեան և առատութեան. զի ոմանք յայնցանէ, որոց 'ի ձիընթացս կամ 'ի կառավարչաւս տարեալ էր զմրցանակ, փոխանակ անձանց տային քարոզել զայլս՝ առ 'ի ձգել զխնամս նոցա յիւրեանս և առ 'ի տածել զբարեկամութիւն: Իսկ յաղթականացն յայլ մրցութիւնս ոչ կարելով փոխանակել զայլս ընդ անձանց, զօշաքաղու-

1 Կիկեր. տուսկուլ. գիրք Ա. գլ. 46. հտ. 2. էջ 272: Պլուտ. 'ի Պեղոպ. հտ. 1. էջ 297:

2 Աւլ. Գել. գիրք Գ. գլ. 15:

3 Պլուտ. առակ. լակոն. հտ. 2. էջ 230:

թէ իւրեանց հայթայթեն ճարակ. զի 'ի քաղա-
քին ազգմանն պահու՝ ընծայեցուցանեն զկնքեանս
ընտիկս քաղաքաց, յորոց առնուն կաշառս[1]. և
արկանեն զանձինս 'ի վտանգ տարադիր լինելոյ
'ի հայրենեաց, խորամանկելով զփառս նոցա[2]:
Նմանաւորն Դիոնեսիոս դիւրագոյն համարեալ
պայծառացուցանել զմայրաքաղաք իւր քան յար-
դարել զբարեկենդանութիւն նորա, բազում
անգամ պատուիրակս յՍիկիլիա առաքեաց՝ յոր-
դորել զյաղթող նահատակս, զի քաղաքացիս Սի-
րակուսայ ցուցցեն զանձինս[3]: Այլ պատիւ ոչ
ստացանի արծաթոյ. և ամենեքին առ հասա-
րակ, որք կաշառաբեկեն եղեն 'ի նմանէ, և որք
մերժեցինն զկաշառս նորա, եղեն նմա 'ի նախա-
տինս:

Նաղաւմք զհրապարակս զայստնիկ 'ի կիր արկա-
նեն և առ 'ի նահանջել զատոխս ահարկուս, կամ
առ 'ի համոզել զնոսա յանձն առնուլ զպարտա-
թիւն՝ թուլութեամբ մարտնչելով[4], և կամ առ
'ի փորձել զուղղութիւն դատաւորաց. այլ մար-
տիկք պարտեալք 'ի հրապուրանաց ատեն՝ զանա-
կոծ լինին[5], կամ 'ի տուգանս ծանունս դատա-
պարտին: Այն աստ աւասիկ անդրիք բազումք
Արամազդայ 'ի տուգանաց անտի ձուլեալք, որոց

1 Պաւսանիաս, գիրք Զ. էջ 459:
2 Նոյն անդ, էջ 497:
3 Նոյն անդ, էջ 456:
4 Պաւսան. գիրք Ե. գլ. 21. էջ 430:
5 Թուկիդ. գիրք Ե. գլ. 50: Պաւսան. գիրք Զ. գլ. 2. էջ 454:

արձանագիրք յաւերժացուցեն զյիշատակ յան-
ցանացն և զյանցաւորաց [1]։

Յաւուր յորում պսակեցան յաղթողք, ման-
ուացին զոհս գոհութեան. և անուանք նոցա
դրոշմեցան յարձանագրութիւնս եղխացելոց, և
տուաւ նոցա ձայն մեծ 'ի միում ուրեք 'ի սրահից
նախապատուանացին [2]։ Իսկ յաւուրսն որ զկնի՝ ին-
քեանք ետուն ընթրիս, յորս երաժշտութիւն և
պար յաճախեցին զխրախտսն [3]։ Բայց յետ այնո-
րիկ քերթողաց յանձն եղև անմահացուցանել
զանուանս նոցա, և անդրիագործաց յանդրիանս
առնել զնոսա 'ի վէմ կամ 'ի պղինձ, և զոմանս 'ի
նոյանէ 'ի նմին կերպի՝ յորում կալեան զյաղ-
թութիւն [4]։

Ըստ նախնին սովորութեան նահատակքս այսո-
քիկ ցեալք փառօք 'ի տեղւոջ մարտին, դառ-
նային 'ի հայրենիս իւրեանց ամենայն սպասուք
յաղթանակին [5], պար առեալ 'ի բազմութենէ,
զգեցեալք ծիրանիս [6], և մերթ եւս հեծեալք 'ի
կառս երկձիս կամ 'ի քառաձիս [7], մտանելով ընդ
խրամատ գործեալ 'ի պարիսպս քաղաքին [8]։ Տա-
կաւին յիշի Եքսենետ սիկիլիացի յԱկրագանդ-

1 Պաւսան. գիրք Զ. գլ. 2. էջ 434։

2 Նոյն, գիրք Ե. գլ. 18. էջ 416։

3 Պինդ. ողիմպ. 9. տող 6։

4 Պաւսան. անդ, գլ. 27. էջ 450։

5 Ցիշատ. բանաս. կաճառ. հտ. 1. էջ 274։

6 Արիստոփանէս յԱմպսն, տող 70։

7 Վիտրուվ. յառաջաբ. գիրք Թ. էջ 173։ Դիոդ. գիրք ԺԳ. էջ 204։

8 Պլուտ. խրախճ. գիրք Բ. գլ. 5. հտ. 2. էջ 639։

քաղաքէ, որ եմուտ անդր հեծեալ 'ի մեծաշուք կառս՝ պար առեալ յայլոց կառաց բազմաց, յորս էին երեքարիւր սպիտակաձիք:

Ուրեք ուրեք 'ի գանձուց աշխարհին երևեալ հնացս ռուձիկ լաւ վայելչուչն պայմանի, այլ ուրեք աղատք կեանս 'ի բաց արձակեալք յամենայն հարկաց: Ի Սպարտա պահի հնոցս պատուի 'ի միում ուրեք Ճանապարհահանգստի կալ պատերազմականաց աընթեր աղքայի. գրեթէ ամենայն ուրեք հնախօզահք բազմին 'ի տեսարանս խաղուց[1]. և մեծարանաց անուանս ողիմպիայաղթ յաւելեալ 'ի հնոսա՝ պատուականս և պատկառելիս առնէ զնոսա առաւել ամենեցուն, երանաւէտեալ զկեանս հնոցս[2]:

Սանձք 'ի հնոցանէ փառաւոր իւրեանց հաղորդս առնելով և դձիանն՝ որք զօրաւորքն եղեն հնոցս 'ի սուանաւոր զայնս, ծերատածեն զնոսս 'ի հանդրդատեանս, և թաղեն զնոսս պատուով[3]. են որք և բրգունս 'ի վերայ գերեզմանաց հնոցս կանգնեն[4]:

1 Քսենոփ: առ Աթենեացի, գիրք Ժ. գլ. Ձ. էջ 414:

2 Պղուտ. յղ. հաս. գիրք Ե. հա. Ձ. էջ 465:

3 Երոդոտ. գիրք Զ. գլ. 103: Պլուտ. 'ի Կատոն. հա. 1. էջ 339:

4 Պլին. գիրք Ը. գլ. 42:

ԳԼՈՒԽ ԼԹ.

Շարայարութիւն ուղեւորութեանն Անաքարսեայ յԵղիս, և երթ նորա 'ի Սկիւղոն քաղաք առ Քսենոփոն :

ՔՍԵՆՈՓՈՆԻ էր բնակարան 'ի Սկիւղոն քաղաք փոքրիկ, հեռի յՈղիմպիայ քսան ասպարիզաւ¹ : Սակաւ ամօք ինչ յառաջ՝ 'ի յառնել խռովութեանց 'ի Պեղոպոնէս՝ հարկ լեալ էր նմա մեկնել անտի² և գնալ բնակել 'ի Կորնթոս, ուր և գտի զնա 'ի հասանելն իմում յԵլլադա* : Այլ իբրև դադարեցին խռովութիւնք, դարձաւ նա 'ի Սկիւղոն** . և 'ի վաղիւ անդր յետ տօնին չոգաք առ նա ընդ Դիոդորի որդւոյ նորա, որ ընդ մեզ էր 'ի տօնին անմեկնելի :

Ընդարձակ էր յոյժ կալուած Քսենոփոնի. զմասն ինչ նորա 'ի սպարտացւոց անտի ընկալեալ էր նորա 'ի պարգև³, և զմիւսն գնոց ստացեալ նուիրել Արտեմեայ, որպէս ուխտեալն էր 'ի դառնալն իւրում 'ի Պարսից : Զտասանորդս բերոց երկրին ծախէր 'ի պահ մեհենին՝ զոր 'ի պատիւ

¹ Քսենոփ. արշաւ. Կիւր. գիրք Ե. էջ 350 :

² Դիոդ. լայերտ. գիրք Բ. յօդ. 53 :

* Տես 'ի Թ. գլուխ գրոցս :

** Ցեակոյս մնացեալս 'ի տեղեկութիւնսն. Թիւ ԺԶ :

³ Պաւսան. գիրք Ե. գլ. 6. էջ 388 : Դինարք. առ Դիոգինեայ լայերտ. գիրք Բ. յօդ. 52 :

աստուածուհւոյն կառուցեալ էր . և ամի ամի մատուցանէր անտի զոհ մեծահանդէս ։

Առ մեհենանն է ծառաստան, որ բերէ պտուղս ազգի ազգի . և Սելինոս վտակ՝ առատաբեր ձը-կանց, ականակիտ ալեօքն գնայ խաղաղաւ ստո-րոտով արգաւանդի միոջ բլրոյ ընդ արօտս՝ ուր ճարակին յանդորրու կենդանիք պատրաստեալք 'ի զոհ ։ Ներքոյ և արտաքոյ սրբազան երկրին անտառք 'ի դիւրի և 'ի զառ 'ի վայրս տնկեալք, ապաւէնք են այծեմանց և եղջերուաց և վարա-զուց[1] ։

Նոյն յերանաւէտ վայրսն զյոլովագոյն 'ի մատենագրութեցն գրեաց Քսենոփոն[2], և անդ 'ի բազում ամաց հետէ պարապէր յիմաստա-սիրութիւն, 'ի բարերարել այլոց, 'ի մշակու-թիւն երկրի, 'ի սթափուածն որսոց, և յամենայն հրահանգս՝ որ մատուցանեն ազատութիւն մտաց և առողջութիւն մարմնոյ ։ Նախ քան զամենայն խնամ կալաւ 'ի հայթայթել զամենայն զբօ-սանս պատկանաւորս մերոյ հասակիս, և որ ինչ ընծայէ երկիր կատարելագոյն տնոց զբաղմանց ։ Ցուցանէր մեզ զձիանսն իւր և զձեռնասունս և զտնտեսութեանն իւրոյ կարգս իւրաքանչիւր . և գրեթէ ամենայն ուրեք տեսանէաք զարդիւնս հրահանգացն, զորս յաճախ ուրեք 'ի մա-

1 Քսենոփ. արշաւ. Կիւր. գիրք Ե. էջ 350 ։ Պաւսան. գիրք Զ. գլ. 6. էջ 388 ։

2 Պլուտ. յղ. աքսոր. հա. 2. էջ 605 ։ Դիոգ. Լայերտ. գիրք Բ. յօդ. 52 ։

տեանս իւր աւանդէ[1] ։ Այր զի և յորդորէր զմեզ գնալ յորս , զոր և համապատապ պատուիրէր մանկտւոյ՝ իբր դիպողագոյն քան զամ հրահանգս 'ի կրթել զնոսա յաշխատութիւն մարտի[2] ։

Նա ածէր զմեզ Պփոզոր ստէպ յորս լեռամարգեաց և կաքաւուց և այլոց ազգի ազգի հաւուց[3] ։ Հանեալ զոմանս 'ի լերանոցաց կապէաք 'ի մէջ վարմից . և համագգեաց նոցին թռչնոց ձգեալ անդր 'ի ճճուռղելոյ նոցա՝ անկանէին 'ի ծուղակն , զրկեալք 'ի կենաց կամ յազատութենէ[4] ։

Օհետ զբօսանացս այսոցիկ յաջորդէին այլք զուարթագոյնք և բազմազանք ։ Պփոզորի էին հոյլք բարակաց , կէսք որսականք նապաստակաց , այլք եղջերուաց , և այլք լակոտնացիք կամ լեկրեցիք վարազաց[5] , զորոց գիտէր նա զանուանսըն իւրաքանչիւր* , զյոռութիւնն և զքաջութիւնս[6] ։ Մանահմուտ էր նա հրահանգաց մարտիս այսորիկ , և այնպէս բարւոք ճառէր զայնմանէ որպէս հօր նորա գրեալն էր[7] ։ Նա էր նապատակացն որսոյ օրինակ այս .

Թակարդք մեծամեծք և փոքունք լարեալ կայ-

1 Քսենոփ. յիշատ. գիրք Ե. էջ 818 ։ Նոյն յղ. հեծելոց , էջ 932 ։

2 Նոյն յղ. որսոյ , էջ 974 և 995 ։

3 Նոյն յղ. յիշատ. գիրք Բ. էջ 734 ։

4 Արիստոփ. 'ի Հաւսն , տող 1083 ։ Պարաբոլ. անդ ։

5 Քսենոփոն , յղ. որսոյ , էջ 991 ։

* Անուանս սուղս ըստ կարի և երկավանկս կոչէին շանցըն , որպէս Թիմոս , Լոքոս , Փիլաքս , Փոնիքս , Բրիմոն , Փակէս , Իբէ , այլովքն համագերձ ։ (Քսենոփ. յղ. որսոյ , էջ 987) ։

6 Նոյն անդ էջ 987 և 996 ։

7 Նոյն անդ էջ 972 ։

լին ընդ ուղիս և ընդ արտաուղի եւս, ընդ որս մար֊ թէր երէոցն խոյս տալ [1]. և մեկնահանդերձ, ցուպ 'ի ձեռին ելաք յորս [2]: Որսականքն արձա֊ կեաց զմի 'ի բարակաց. և իբրև եւես զնա ընդ շաւիղս որսոյն հետաղօտեալ, արձակեաց և զայլսն զհետ. և նոյն հետայն 'ի դուրս յարձակեցա֊ նապաստակն: Նոր ամենայն լինէր յաճախէր զգրա֊ սանս տեսլեանն. հաջիւն բարակացն, բարբառ որ֊ սորդացն որ խրախուսէինն զնոսա [3], խուճապք և հնարք երէոյն՝ որ 'ի քթթել ական ընդ դաշտն և ընդ բլուրս սրացեալ, վազեալ ընդ փոսս, և ընդ թաւուտս սուզեալ, մերթ երևէր, մերթ դանատես լինէր, յետոյ ապա շաղեալ 'ի թակարդ֊ սըն՝ որ մնայինն նմա յանցսն: Իսկ գէտ 'ի տեղւոջն կացեալ եհար 'ի վերայ որսոյն, և ձայնիւ և նշանացի ազդ արարեալ որսորդացն՝ առանգեալ զայն նոցա [4]: Ի հրճուանս յաղթութեան նորագե֊ ցաւ ձակատամարտն, բազումն նոյնօրինակ մերկեալ մեր ձակատս [5]: Այց էր զի զերծանէր նապաս֊ տակն 'ի հաղբից, անցեալ ընդ Մեղիսսա 'ի լող [6]:

Ի հանդէս զոհին, զոր Քսենոփոն ամի ամի մատուցանէր Արտեմեայ [7], գայրն 'ի Սկիլղոն արք և կանայք՝ որք շուրջ բնակեալ էին: Զբարե֊

1 Քսենոփոն, յղ. որսոյ, էջ 984:
2 Նոյն անդ, էջ 984:
3 Նոյն անդ, էջ 985:
4 Նոյն անդ, էջ 984:
5 Նոյն անդ, էջ 986:
6 Նոյն անդ, էջ 980:
7 Նոյն արշաւ. Կիւր. գիրք Ե. էջ 350:

կամն իւր ինքն ասպնջականէր[1]. իսկ այլոց եկաւո-րաց 'ի գանձուց մեհենին ելանէր առձիկ[2], գինի, հաց, ալիւր, միրգ, և մսոյն 'ի զոհիցն: Բաշխէին 'ի նոսա և կինձք և եղջերուք և այծեամունք՝ հարեալք 'ի մանկտւոյն շրջակայ վայրաց, որք աւուրբք ինչ յառաջ քան զտօնն եկեալ էին 'ի Սկիլղոն 'ի զբօսանս ազգի ազգի որսոցն[3]:

Յորս վարազաց էին մեզ շամփուրք և գեղար-դունք և զանգք սատարք: Հետք կճղակաց գազա-նացն այն ինչ տպաւորեալք յերկիր, ազդմունք ժանեաց նոցա դրոշմեալք 'ի կեղևս ծառոց, և այլ ևս ցոյցք առաջնորդեցին մեզ 'ի թաւուտս ուրեմն մացառախիտս[4]: Արձակեցաք բարակն մի լակոտացի, որ ընդ հետս գազանեին հասեալ յանձաւացն՝ ուր որջանայր, ազդ արար մեզ զգիւտ որսոյն հաչելովն: Յետոյ կոչեցաք բարակին, երա-գագք ձգեցան ընդ եր փախստի, և մեք կայաք 'ի դարանի: Պահեաց կինձն առ իւր կոյս, և 'ի բացեայ 'ի թակարդիցն զկայ առեալ՝ վայրիկ մի զդէմ կալաւ յարձակմանն շնոցն բարակացն առ հասարակ՝ որոց հաչիւնն դուշեցուցանէր զանտառն, և որսորդացն՝ որ մօտէին 'ի նա ձգել նետս և քարինս: Նա յարձակեցաւ 'ի վերայ Մոսքիո-նի, որ կազմ կայր 'ի շամփրել զնա. այլ սա-

1 Դիոգ. Լայերտ. գիրք Բ. յօդ. 52:

2 Քսենոփ. արշաւ. Կիւր. գիրք Ե. էջ 350:

3 Քսենոփ. արշաւ. Կիւր. գիրք Ե. էջ 350:

4 Նոյն յղ. որսոյ, էջ 992:

հեալ շամփրոյն ընդ թիկունս գազանին՝ զերծաւ 'ի ձեռաց որսորդին, և որսորդն մնաքերեաց անկանել 'ի վերայ երեսաց իւրոց յերկիր[1]:

Համարէի անշուշտ 'ի վերայ հասեալ նմա զկորուստ. և վարազուն ոչ ինչ զամնագխտլեալ 'ի նմա առ 'ի բառնալ զնա 'ի վեր, կոխէր զնա առ ոտն: Բայց Պփողորի տեսեալ զնա, եհաս յօգնութիւն որսակցին. և 'ի նա ևս նոյն հետայն յարձակեցաւ կինճն: Բայց նորոյ ոտխին [illegible]ողակագոյն զտեալ կամ բախտաւորագոյն, անցոյց զշամփուրն ընդ անրակ նորա: Ընդ էր տեսանել զահագին կատաղութիւն գազանին. զի մահացու հարուածովն կարեվէր, տակաւին յարձակեալ դիմէր զայրագին 'ի Պփողոր. և ինքնին իսկ նստոյց զերկաթն խորամուխ 'ի մարմնի իւր մինչև ցերախակալն[2]: Նազուկք 'ի բարակաց մերոց անկան 'ի մարտի անդ մեռեալք կամ վիրաւորք, այլ բազմագոյնք ևս յերկրորդումն մարտի՝ որում զօրն ողջոյն ժուժկալեաց գազանն: Եւայլ ևս կինճք հալածեալք 'ի բարակաց՝ անկան յորոգայթս որ ընդ սաղարթիւք թագուցեալ կային[3]:

Ի վաղիւ անդր և 'ի միւս վաղիւն եղջերուք բազումք ըստ նմին օրինակի հարան[4]: Զբազումս ևս յորջոցն արտաքս ձգեցաք, և հոյլք բարակացն

1 Քսենոփոն, յղ. որսոյ, էջ 993:

2 Նոյն անդ:

3 Նոյն անդ, էջ 994:

4 Նոյն անդ, էջ 990:

մերոց այնպէս պատրաստեցուցին զնոսա, զի զկայ առնել նշաւակք նետից մերոց լինէին, և կէսք 'ի լերինս և կէսք 'ի ծով դիմեալ անկանէին[1]:

Ընդ նոյն ժամանակս որպէս ոչ ոք զայլ ինչ իրաց խօսէր. Ճառս արկեալ պատմէին միմեանց զհնարս այլ և այլ ազգաց յորս առիւծուց, յովազաց, արջուց, և այլոց ազգի ազգի գազանաց վայրի: Ի տեղիս տեղիս խառնեին թոյն 'ի լերինս և 'ի ճարակս, յորս գազանքն մեզզայլեալ յագեցուցանեն զքաղց և զծարաւ իւրեանց. այլուր շուրջ պատին հեծեալք զիշերային զգազանսն, և ընդ այգն յարձակէին 'ի վերայ նորա՝ 'ի վտանգ իսկ յաճախ դնելով զկեանս: Եւ այլուր փոս հատեալ խոր և ընդարձակ, թողուն 'ի մէջն բլրակ մի հողոյ, և 'ի վերայ նորա կապէին այծ, ցցապատնէշ զխորխորատիւն ածեալ անել անթափանց. գազանին 'ի բառաչ այծուն ձգեալ՝ վազէ զձողեզքն, և անկանի 'ի գուբն, և ոչ ևս ելանել կարէ[2]:

Պատմէին և զայն իմն նիզակակցութեան եղեալ բազէից ընդ բնակիչս միոյ 'ի կողմանց Թրակիոյ, հալածել ինքեանց զձնձղուկս և իջուցանել զնոսա յերկիր, և որսակցացն սպանանել զնոսա բրօք կամ 'ի վարսս ըմբռնել, և ապա բաժանել զորսն յիւրեանս[3]: Նշանակեք իրքն թուքին. սա-

1 Քսենոփոն, յղ. որսոյ, էջ 991:
2 Նոյն անդ էջ 995:
3 Արիստոտ. պատմ. կենդան. գիրք Թ. գլ. 36. հա. 1. էջ 940: Եղիան. յղ. ծննդ. կենդանեաց, գիրք Բ. գլ. 42:

կայն ոչ նորանշան ինչ է անհաշտ թշնամեաց միաբանել ընդ միմեանս 'ի հաստատել զան- ւագն անձողալրելի:

Չիք ինչ առաւել ցանկալի քան նկատել 'ի միայնութեան զայր ազգ: Զմանն ինչ աւուրն 'ի զբօսցաւորութիւնս պարապէաք ընդ Քսենո- փոնի, լսել 'ի նմանէ և հարցանել զնա, և ուսա- նել զամենայն հանգամանս առանձնականս կենաց նորա: Ոճ բայց նորա էր քաղցր և պերճ որպէս զմատենագրութիւնս նորա. զերկայնմտութիւն յիւր մեծամեծս, և որ յայժ առաւել չքնաղա- գոյնն է և կարևորագոյն՝ զերկայնմտութիւն 'ի դուզնաքեայս, միայն յանձն իւր ձգեալ բե- րէր. մինչև զարիութիւն անվրդով և միւսումն զհամբերութիւն անպարտելի ուղղեալ:

Ինքն ինչ յառաջ արիութիւն նորա մատու- ցաւ 'ի փորձ դժուարին յայժ կարևոր պատի: Գրիղոս անդրանիկն նորա, որ զինուորէրն 'ի հե- ծելազնդին աթենացւոց, անկաւ 'ի ճակատա- մարտին Մանտինեայ. և զայժ մահու նորա ե- հաս առ Քսենոփոն 'ի պահուն՝ յորում պատ- առնալ 'ի բարեկամաց և 'ի ծառայից՝ զոհ մա- տուցանէր: Ի մէջ զեռ 'ի պաշտամանն անդ էր, շշուկն լինի և ողբոց ձայն խառն 'ի խուռն լսելի լինէին. և զուժկանն յառաջ մատուցեալ, ասէ. Յաղթեցին Թեբայեցիք, և Գրիղոս... և այն ինչ նորա բանքն 'ի բերան կային, յորդեալ արտա- սուքն չետուն նմա յանել հանել զբանն: Իսկ

հայրն տառապեալ կորզելով զպսակն 'ի գլխոյ իւրմէ, ասէ. Այս Պորփիւրն մեռաւ, և որպէս։ Այս զուժկանն ասէ. Յետ չքնաղ աղաւթեանց, 'ի տխրութիւն ամենայն քահանայիցն։ Զայն իբրև լուաւ Քսենոփոն, վերստին զպսակն 'ի գլուխ իւր եդեալ, կատարեաց զհանդուցմունս զոհին[1]։ Այս 'ի յիշելն խնամ երբեմն առ նմա զՊորփիւրա, ոչ ինչ ետ պատասխանի. այլ յոգւոց հանեալ, ասէ. Ա՛հ, գիտէի զի մահկանացու էր[2]. և այլ ինչ խօսս 'ի մէջ մեռանոյց։

Այս այլ երբեմն հարցաք զնա՝ թէ որպէս 'ի ծանօթութիւն եկեալ էր Սոկրատայ, և ասէ ցմեզ. Մանուկ էի, և հանդիպեցաք ընդ նմա յանձուկ ուրեմն ուղւոջ Աթէնս. նա արգել գաւազնաւն զճանապարհն, և ասէ ցիս. Ո՞ւր վաճառի- ցին կարևորք առ 'ի կեանս։ Այս ես ասեմ. Ի շուկայն։ Այս նա ասէ. Իսկ կարևորքն առ 'ի ստա- նալ զլաւութիւն։ Այս 'ի տարակուսանս իմում, ասէ ցիս. Եկ զկնի իմ, և ուսցիս զայն[3]։ Չո- գայ զհետ նորա, և ոչ ևս մեկնեցայ 'ի նմա- նէ մինչև ցերթն իմ 'ի բանակն Կիւրոսի։ Այս 'ի դարձին իմում գիտացի, զի աթենացւոց սպանեալ էր զարդարագոյն քան զամենայն մարդիկ. և ոչ այլով իւիք կարացի սփոփել զտրտմութիւն

1 Դիոգ. լայերտ. գիրք Բ. յօդ. 54։ Էլիանոս. յաղ. պատմ. գիրք Գ. գլ. 3։ Սենեկ. ճառ. 7. էջ [illegible]։

2 Վաղ. Մաքս. գիրք Ե. գլ. 10։

3 Դիոգ. լայերտ. անդ, յօդ. 48։

խմ, բայց աւանդելով 'ի գրի զգոյգս անմահու-
թեան նորա առ ամենայն ազգս Յունաց, թեր-
եւս եւ որոց առ յապայս գալոց են: Այլ զարդիս չէր
ինձ մեծ եւս սփոփումն, քան յիշատակել զնա եւ
զառաքինութիւնս նորա ածել զմտաւ:

Այլ վասն զի 'ի միասին ընդ նմա կարեկցեալ
կցորդէաք 'ի զութ զորովոյ, մանրապատում ա-
րար նա մեզ զկարգ կենացն Սոկրատայ, եւ զվար-
դապետութիւն նորա առաւել արար մեզ հաւաս-
տեաւ՝ որպէս եւ էին, 'ի բարոյականին եւեթ
սահմանս ամփոփեալ, առանց խառնելոյ յայն
օտարոտի կարծիս, եւ առանց ամենայն բնաբա-
նական եւ բնազանցական խնդրոցն՝ զորս Պղատոն
'ի դէմս վարդապետին իւրոյ աւանդէ[1]: Ոչ կա-
րեմ իսկ պարսաւել զՊղատոն, զայրն ինձ յոյժ
մեծարոյ. այլ հարկ է խոստովանել, զի յոյժ
առաւել 'ի զրուցատրութեանցն Քսենոփոնի
քան 'ի նորայոցն է ուսանել զվարդապետու-
թիւնս Սոկրատայ. զոր եւ ջանացայց պատմել
'ի գիրս յայս, յեռեալ խիտ ընդ խիտ զտեղե-
կութիւն՝ զորս ընկալայ 'ի Սկիլղան 'ի խօսակցելն
ընդ նմա ստէպ:

Քսենոփոն քաջահմուտ կարեւոր գիտու-
թեանց, եւ պատրաստեալ զբազում ժամանակս

[1] Արիստոտ. բնազանց. գիրք Ա. գլ. 6. հա. 2. էջ 847: Թէոդորետ. առ Աթե-նեաց, գիրք ԺԱ. էջ 508: Դիոգ. Լայերտ. գիրք Գ. յօդ. 35: Պրուքք. պատմ. իմաստաս. հա. 1. էջ 11 եւ 697: Մոշեմ. 'ի Քուտուորթ, հա. 1. էջ 241:

'ի խափանումն, գրեաց ապա զիրս առ 'ի լաւագոյնս յարդարել զմարդիկ ուսուցանելով զնոսա ։ Այլ ճշմարտութեան 'ի նմա սէր այնքան, զի առ 'ի գրել զքաղաքավարութենէ՝ քաջ տեղեկացեալ ուսաւ նախ զկարգս ազգի ազգի տէրութեանց ․ եւ առ 'ի պատմագրել՝ զիւրոյ ժամանակին էառ զիրս, որոց մեծի մասին լեալ էր ականատես ․ եւ զհրահանգաց մարտի, յետ զինուորելոյ եւ զօրավարելոյ փառօք մեծաւ, ապա գրեաց ․ եւ զբարոյականին մասանց, մինչեւ իւրովք կատարեալ զխրատումն զոր այլոցն տայր՝ ոչ գրեաց ։

Սակաւս ծանեայ յիմաստասիրաց հանգոյն նմին առաքինիս, եւ նուազունս 'ի մարդկանէ իբրեւ զնա սիրելիս ։ Բանի հեզութեանն եւ վայելուչս առնէր պատասխանի հարցուածոց մերոց ։ Ի միում աւուրց Պրոդոր եւ Փիլոտաս եւ ես ձեմէաք յեզր գետոյն Սեղինեայ, եւ վէճք սաստիկք եղեն մեզ զառնաւորութենէ կրից ․ նոքա վիճեալ պնդէին՝ զի եւ ոչ սէր կարող է բռնակալել 'ի մեզ, իսկ ես զհակառակն պնդէի ։ Այլ առհա եհաս անդր Քսենոփոն, եւ զդատաստան նորա հարցաք ․ իսկ նա պատմեաց մեզ եւ ասէ ․

Յետ ճակատամարտին, յորում մեծն Կիւրոս յաղթեաց Ասորեստանեայց, 'ի բաժինս աւարին պահեցան նմա խորան մի շքեղ, եւ 'ի գերւոյն երիտասարդուհի չքնաղագեղ քան զամենայն՝ Պանթէա զշխոյ Սուժաստանի[1] ։ Այլ էր Արաս-

[1] Քսենոփ․ կարգադր․ Դպր․ գիրք Ե․ եջ 114 ։

դատ այր նորա երթեալ յաշխարհն բանտարկա-
ցուց՝ խնդրել օգնութիւն բանակին Ասորեստա-
նեայց ։

Ոչ կամեցաւ Կիւրոս տեսանել զՊանթէա. և
կացոյց պահապան նմա զդայեկորդի իւր զԱրասպ,
պատանի ազատորդի Մար ազգաւ ։ Նա պատմեաց
Արասպ՝ թէ յորպիսի կորանս կայր դշխոյն յոր-
ժամ ետես զնա, և ասէ. Նստեալ էր 'ի խորանին
իւրում 'ի գետնի՝ շուրջ պատեալ 'ի նաժշտաց իւ-
րոց, զգեցեալ որպէս զաղախնին մի աղքատ, խո-
նարհեալ զգլուխն և ծածկեալ քօղով ։ Աղաչեցաք
նմա յառնել, և ամ̃ նաժիշտքն յառն կացին ընդ
նմա ։ Ո՛ի ոմն 'ի մէնջ սփոփելով զնա, ասէ. Ա[illegible]
քէն այր քո արժանի իսկ է սիրոյ քո՝ պերճացեալ
բարեմասնութեամբք, այլ Կիւրոս՝ որում զքեն հան-
դերձեալ ես լինել կնութե՛ գերազանցեալ զամե-
նի յամենայն թագաւորս արևելից[1] ։ Այնժամ
դշխոյն պատառեաց զքօղ իւր, և հեծութիւք նորա
խառն ընդ ձիչս նաժշտացն իւրոց զաղէտս թշուա-
ռութեան նորա յայտ առնէին. և մինչ եղեւ
մեզ պարապով տեսանել զնա. և գիտասցէ տէր
արքայ՝ զի չծնաւ ուրեք երբեք Ասիա գեղ այն-
պիսի. այլ ինքն տէր արքայ իւրովի ընդ հուպ ա-
րասցէ զնմանէ դատաստան ։

Նա Կիւրոս ասէ. Նա աւանդակ այդ իսկ յաճախէ
զպատճառս զգուշութեան. խոյս առ 'ի չտեսանելոյ
զնա. զի 'ի տեսանելն զնա մեծանգամ, ցանկացայց

1 Քսենոփ. կարգադր. Կիւր. գիրք Ե. էջ 115 ։

[redacted]

ստէպ տեսանել զնա . և յերեսաց նորա չիջցէն յիւրեանց փառաց և աշխարհականութեանց : Արիստոս ասէ . Այլ իցէ գեղոյ այնքան զօրութիւն , որպէս զի խոստովանեցուցանել զմեզ բանի 'ի պարտուց մերոց . և ընդէ՞ր ապա ոչ զամենեցուն սիրտս առհասարակ նուաճէ . առ իմէ՞ չիշխեմք աչս մծղնեայս ածել 'ի նոսա՝ յորոց ընկալաքն և որոց տուաք՝ զդէս : Քանզի օրէնք տրգեղեան զայն , ապա օրէնքն զօրաւորագոյնք են քան զսէր : Սակայն եթէ հրամայեսցէն լինել անզգայ քարշի և ծառաւոյ կամ ցրտոյ և տօթոյ , արհամարհեալ լինէին 'ի զգայութեանց անձնայն հրամանք նոցա . քանզի հզօրագոյն քան զօրէնս է բնութի՛ : Արդ ոչ ումեք մարթէր հակառակ կալ սիրոյ , եթէ էր նա անպարտելի 'ի բնէ . ապա ոչ ոք սիրէ , բայց զի սիրել կամի [1] :

Սիւրոս ասէ . Եթէ 'ի կամս մարդոյ էր յանձն առնուլ զկուծն , մարթէր նմա և ընկենուլ զայն յորժամ կամէրն . այլ ես տեսի տարփողս , զի հեղուլին արտասուս ցաւագինս ընդ կորուստ ազատութեան իւրեանց , և խլրտէին 'ի շղթայսըն՝ զորս ոչ խորտակել և ոչ տանել կարէին :

Պատանելին ասէ . Դորա վտարանդիք զվաստարութեանն իւրեանց մեղս զսիրոյ արկանեն . այլ քաջասիրտք զկիրս իւրեանց նուաճեն ընդ պարտեօքն :

Յայնժամ Սիւրոս ասէ . Արասպ Արասպ , մի

[1] Քսենոփ . կարգադր . Կիւր . գիրք Ե . էջ 116 :

ստէպ 'ի դշխոյն Հայոց[1] ։ Նա զայս առաջեալ, եթող զնա և գնաց ։ Բայց Պանթէա ընդ գեղ կերպարանացն բերէր յանձին և այլ բարեմասնութիւնս, որք 'ի թշուառութեանն առաւել յուզէին զգութ ։ Պարտ համարէր Արասպ խնամ ունել զտիկնոջէն, և յաճախէր տակաւ զխնամսն յանզգաստից ․ և վասն զի հարկ էր Պանթէայ մեծարանս փոխանակ շնորհացն առնել նմա, նա զցոյցս շնորհակալութեանն համարէր իղձս հաճոյ լինելոյ[2], և տակաւ այնպէս 'ի նմա բորբոքեալ բոց սիրոյն՝ զի ոչ ևս կարաց թագուցանել զայն ։ Պանթէա բացէ 'ի բաց մերժեաց զհրապուրանս նորա, այլ ոչ ինչ զգացոյց զայնմանէ Կիւրոսի մինչև 'ի մտաբերել պատանւոյն 'ի բռնաբարութիւն[3] ։

Իսկ Կիւրոս առաքեաց ասել ցպատանեակն ․ Յորդորանօք և ոչ բռնութեամբ է քեզ վարել ընդ տիկնոջն ։ Որպէս 'ի շանթէ իմեմնէ հարաւ 'ի բանէ սաստի Արասպայ ․ շառագունեցաւ ընդ գործ իւր, և երկիւղ թագաւորին յաչաց ելանելոյ՝ ծածկեաց զնա ամօթով և տրտմութեամբ ․ մինչև Կիւրոսի գթացեալ ընդ կորանս նորա, կոչեաց զնա առ ինքն և ասէ ․ Ո՜ երկնչիս գալ առ իս ․ քաջ իսկ գիտեմ՝ զի սէր զիմաստութիւն մարդկան և զզօրութեամբ դիցն խաղ առնէ ․ և ես

1 Քսենոփ․ Կարգադր․ Կիւր․ գիրք Ե․ էջ 117 ։

2 Նոյն անդ, էջ 117 ։

3 Նոյն անդ․ գիրք Զ․ էջ 153 ։

խայս եւեթ տալով զերծ կամ 'ի հարուածոց նո-
րա ։ Զմեղադրեմ քեզ զմտաց՝ որում ես ինք-
նին եղէ պատճառ . զի 'ի յանձնել քեզ զդշխոյն ,
արկի զքեզ 'ի վտանգ առաւել քան զկար քո ։

Յայնժամ գոչեաց պատանին , եւ ասէ . Ոա-
քէ , մինչ թշնամիքն իմ ոտնհար լինին ինձ , եւ
բարեկամք աՀաբեկեալք խրատ տան ինձ փախ-
չել յերեսաց բարկութեան քո , եւ ամենեքին
ընկղմեն զիս 'ի յուսահատութիւն , անմահ բա-
րերարութիւնդ քո զիս մխիթարէ ։ Ո՛վ Կիւրէ ,
դու միշտ նոյն ինքն ես , ներող միշտ թերութեց՝
յորոց դու անմասն ես , այլ անքաւոր զնուա
առնես՝ Ճանաչելով զմարդ ։

Եւ Կիւրոս ասէ . Ոչ այլ աղէ յօգուտ 'ի կիր
արկցուք զպատրաստութիւն սրտի նոցա . կարեւոր
է ինձ զխոտել զզօրութիւնս թշնամեաց եւ զխոր-
հուրդս . արդ անց 'ի բանակ անդր նոցա , եւ
կեղծ փախստեամբ որպէս անկեալ 'ի պատուոյ՝
անկասկածելի լեցիս նոցա ։ Եւ Արասպ ասէ .
Ահաւասիկ կամ . եւ համարիմ զանձն երանելի ,
զի առաջի կայ ինձ դոյզն ինչ վաստակս ընդ ի-
մումն վնասու փոխարինել ։ Կիւրոս ասէ . Ոչ
կարիցես մեկնել 'ի չքնաղագեղն Պանթեայ[1] ։
Պատանին ասէ . Ոչ դադարէ սիրտ իմ կեղեքելի , եւ
կարի իսկ զգամ արդ՝ զի կրկին ոգիք հակառակք
երերաց են 'ի մեզ , մին յորդորիչ հանապազ 'ի
բարին , միւսն առ 'ի չարն հրապուրիչ ։ Սմա

1 Քսենոփ . կարգադր . Կիւր . գիրք Զ . էջ 184 ։

մինչեւ ցայժմ ըսէր . այլ՝ արդ քոյով օժանդակութեամբդ խրախուսեալ՝ երկրորդն յիս յաղթանակէ ընդդէմ ոսոխին[1] : Նա առեալ Աբրադատայ պատուէրս գաղտնիս, յուղի անկաւ գնալ ՚ի բանակն Ասորեստանեայց :

Նա զկայ առեալ առ Քսենոփոնի, ըսեաց . և իբրև մեք զարմացեալ կայաք , ասէ . Լուծան արգելք խնդրոյն : Նա փիլասոփայ ասէ . Այս ամենեքին , այլ թերի է պատմութիւնն , և այն առաւել քան զլուծումն խնդրոյն ցանկալի մեզ : Ժպտեցաւ Քսենոփոն , և յառաջ ածեալ զբանսն՝ ասէ .

Ազդ եղև Պանթեայ՝ եթէ Արասպ փախստեայ գնաց առ Թշնամիս , և առաքեաց խոստացաւ Կիւրոսի զայլ ոք բարեկամ ՚ի տեղի նորա փոխանակել , զեւս հաւատարիմ, և ազնուանագոյն թերևս քան զնա : Քանզի կամէր հանել զԱբրադատաս ՚ի ծառայութենէ արքային Ասորեստանեայց , վասն անիրաւութեան իւրոյ կելոյ նորա ՚ի նմանէ : Նա ՚ի հաւանել Կիւրոսի ընդ այն , եկն Աբրադատաս երկու հազարաւ հեծելոց և մտեալ ՚ի բանակն Պարսից . և Կիւրոս ետ վաղվաղակի ածել զնա առ Պանթեայ[2] : Զայն տեսումն չփոթի խարհրդոց և կրից՝ զոր ներգործէ բարեբախտութիւն բաղձացեալ ընդ երկար և գրեթէ յեղակարծ , պատմեաց զՔսե-

1 Քսենոփ . կարգադր . Կիւր . գիրք Զ . էջ 154 :
2 Նոյն անդ , էջ 155 :

խոյն կարճ 'ի կարճոյ զգերութիւն իւր , և որ ինչ մինչաս կրեաց , և զխոս Արասպեայ , և զբարերարութիւն Կիւրոսի : Իսկ Աբրադատ դիմեալ շնորհապարտ գոհութեամբ առ Կիւրոս , և բուռն հարեալ զձեռանէ նորա , ասէ . Ընդ ամենայն բարերարութեանց քոց , Կիւրէ , զի՞նչ կարեմ քեզ ընծայել՝ բայց զանձն և զվաստակս իմ և զզօրս : Այլ վստահ լեր , զի ամենայն խորհրդոց քոց հզօրագոյն զօրավիգն լիցի միշտ Աբրադատ : Այլ Կիւրոս ընկալեալ զնա ցնծութեամբ , և խորհուրդ կալեալ ընդ միմեանս՝ կազմեցին զկարգ ճակատամարտին [1] :

Զօրք Ասորեստանեայց և Լիւդացւոց , և առաւելագոյն մասն Ասիոյ կայցին 'ի ճակատ բանակին Կիւրոսի : Աբրադատայ անկ էր յարձակել յահեղ փաղանգն եգիպտականն . զի ինքն իսկ խնդրեաց զառաջնամարտութեան տեղին , և այլք 'ի զօրավարաց չթողուին նմա զայն , այլ վիճակաւ եհաս խնդրոյն [2] :

Այլ մինչդեռ համարձակէր նա հեծանել 'ի կառս , եկն եբեր նմա Պանթէա զզրահ՝ զոր գործ պատրաստեալ էր , և երևէին 'ի նմա կողոպատք զարդուցն՝ որովք ինքն երբեմն պճնէր : Իբրև ետես զայն Աբրադատ , խանդաղատեալ 'ի նա՝ ասէ . Այլ ո՞չ 'ի զարդուց քո խնայեցեր : Այլ տիկինն ասէ . Ո՛չ է , և զի՞նչ պիտոյ իցեն ինձ այլ

1 Քսենոփ . Կիւրոպեդ . 2 Նոյն անդ , էջ 168 :
Կիւր . էջ 155 :

զարդք, եթէ դու այսօր երևեցիս ամենեցուն որպիսի երևիս ինձ համապազ: Այլ զայս ասելով՝ զաստուածպաշտ զէնսն զգեցուցանէր նմա. և արտասուք յաչաց նորա հեղուին, թէպէտ և ջանայր ծածկել[1]:

Այս իբրև բուռն եհար նա զամենայնից կասառայն, 'ի բաց արար Պանթէա զամենեսեան որ անդն կային, և խօսեցաւ ընդ նմա և ասէ. Այթէ եղև ոք երբէք ուրուք կին՝ բիւրապատիկ առաւել քան զմեզն սիրօղ առն իւրոյ, իցէ քոյդ ամեներկբայելի. և գործք նորա առաւել վկայեն այսմ քան զբանս: Այսպէս հակառակ բռնութեան սիրոյս այսորիկ, երդուեալ 'ի կատարմանն որ կցորդեն զմեզ, լաւ իցէ ինձ մեռանել ընդ քեզ փառօք քան թէ կեալ ընդ առն՝ որոյ նախատանօքն հարկ իցէ ինձ կցորդ լինել: Յուշ լիցի քեզ թէ քանի՛ց շնորհապարտ եմք Կիւրոսի. յիշեա զի 'ի կապանս էի, և նա արձակեաց զիս. 'ի վտանգ թշնամեաց կայի, և նա եղև ինձ պաշտպան. և զի դարձեալ զըկեցի զնա 'ի սիրելւոյն, և նա յուսացեալ 'ի բանս իմ՝ անկն ուխի զատանել զբաջարոյն զօք և արդարև հատանեալ քան զնա յինէն Աբրադատա[2]:

Իսկ Թագաւորն զարմացեալ ընդ այսպիսի բանս տիկնոջն, ձգեաց զաջ իւր 'ի գլուխ նորա, հայեցաւ յերկինս, և ասէ մեծաձայն. Ո՜նանհ

1 Քսենոփ. կարգադր. 2 Նոյն անդ:
Կիւր. գիրք Զ. եր 169:

դիք, տուք ինձ լինել յաւուր յայսմիկ արժանի բարեկամ Կիւրոսի, և մանաւանդ արժանի ամուսնոյն Պանթեայ։ Նա վաղվաղակի հեծաւ 'ի կառս. իսկ դշխոյն խռովեալ՝ ոչ ժամանեաց ողջունել զնա, այլ զկառսն ևեթ զողջոյն շրթամբք համբուրեաց։ Նա խելայեղեալ իմն զհետ կառացն արշաւակի ընթանայր 'ի դաշտին. զոր տեսեալ Աբրադատայ, աղաչէր զնա յետս կալ. և քաջալերել արիաբար։ Յայնժամ մատեան առ նա ներքինքն և նաժիշտք նորա, և տարան զնա 'ի բաց յաչաց ամբոխին. որ 'ի նա ևեթ աչացեալ, ոչ կարէաց նկատել զգետ Աբրադատայ, և զշքեղ սպառազինութիւնս նորա [1]։

Յետոյ Պակտողեայ գետոյ մղեցաւ Ճակատամարտն. բանակն Կրեսոսի բեկաւ 'ի սպառ, փլուզաւ լիւդականն լայնածաւալ պետութիւն 'ի միում վայրկեանի ժամանակի, և պարսկայինն յաւերակս նորա ամբարձաւ։

Ի վաղուն անդր յետ յաղթութեանն խնդրէր Կիւրոս զԱբրադատ, և ոչ ևս տեսանէր զնա։ Նա 'ի հոգս լեալ, եհարց զնմանէ [2]. և մի ոմն 'ի սպասաւորացն պատմեաց նմա, զի զերեթէ անդէն 'ի սկզբան մարտին կէսք 'ի զօրաց նորա թօթափեալ էին 'ի նմանէ. սակայն նորա մեծաւ քաջութեամբ յարձակեալ 'ի փաղանգն եգիպտականն, և յետ տեսանելոյ շուրջ զիւրև զամենայն բարե-

1 Քսենոփ. կարգադր. Կիւր. գիրք Զ. էջ 170։

2 Նոյն անդ, գիրք Է. էջ 184։

կանն իւր անկեալս դիտապաստ՝ որպէս և նմին անկեալ էր, և զի Պանթէայ ածեալ զդի նորա յեզր Պակտողեայ՝ պատրաստէր նմա գերեզման։ Տրտմեցաւ յոյժ Կիւրոս, և հրամայեաց վաղվաղակի ածել անդր առատս 'ի թաղումն դիւցազինն։ Ինքն յառաջեալ եհաս անդր, և ետես զՊանթէա բազմեալ 'ի գետնի առ արիւնաշաղախ դիակն առն իւրոյ։ Լցան աչք նորա արտասուօք. բուռն եհար զաջոյն որ փոխանակ իւր մարտուցեալն էր, և այն մնաց 'ի ձեռին իւրում. զի բազմախողխող երկաթոյն հատեալ էր զայն 'ի խառն մարմնին։ Այլ եւս խռովեցաւ սիրտ Կիւրոսի, և Պանթէա սրտառուչ ողբովք ձիչ բարձեալ լայր։ Այլ առեալ զձեռատակն՝ ողողանէր արտասուօք, և խանդաղակաթ համբուրէր զայն, և զետեղեալ անդրէն կամէր զօդել 'ի բազուկն. և այսպէս հեկեկելով ասէ ցԿիւրոս. Տեսանես, Կիւրէ, զաղէտս որ հալածեն զիս. և ընդէ՞ր կամիս ականատես լինել թշուառութեան իմոյ։ Սա ընդ իմ և ընդ քո եղ զկեանս իւր. եւ ես անմիտ, ցանկացայ առնելոյ նորա անուան քաջութեն առաջի քո. և ինքն կարծի հլու 'ի լուր խրատուց իմոց՝ զանձն 'ի վերայ քո փոխանակեաց։ Նա՛յո՝ մեռաւ նա փառօք, այլ նա մեռաւ, և ես տակաւին կենդանեմ զարկ։

Իսկ Կիւրոս վայրենի մի արտասուեալ ընդ նմայն, այսպէս ասէ. Յաղթութեան պսակեալ զկեանս նորա, և չ[illegible]էր փառաւորագոյն եւս առնել նմա վախ-

ձան ։ Որք ընկալան զպարգեւս 'ի ձեռս գերեզմանի նորա , եւ զզօրհքս 'ի զենումն առ 'ի պատուիլ անուան նորա . եւ լիցի ինձ հող կանգնեալ նմա շիրիմ յանմահ յիշատակ ։ Զակ զքեզ ոչ թողից 'ի ձեռանէ . ինձ յոյժ մեծարոյ են առաքինութիւնք քո եւ աղէտք . բայց միայն ցոյց ինձ ուր հաճոյ իցէ քեզ գնալ ։

Եւ Պանթէա խոստացաւ ցուցանել նմա ընդ հուպ . եւ իբրեւ մեկնեցաւ 'ի նմանէ Թագաւորն , 'ի բաց արար նա զներքինիս իւր , եւ կոչեաց առ ինքն զդայեակ իւր նաժիշտ , եւ ասէ ցնա . Ի փակել աչաց իմոց , ընդ նմին քօղով զգլխակն իմ ընդ առն իմում ծածկեսցես ։ Եւ նաժիշտն Թախանձեալ յոյժ զնա շրջել 'ի խորհրդոյն , իբրեւ ետես զի առաւել եւս յաճախէին Թախանձանօքն իրաւացի մերժոյք տիկնոջն , նստեալ առ նմա լայր ։ Յայնժամ Պանթէայ առեալ զդաշոյն մխեաց 'ի սիրտ իւր . եւ մինչդեռ զօրն եւ ոգիքն 'ի նմա կային , հանգոյց զգլուխ իւր 'ի սիրտ առն իւրոյ , եւ մեռաւ [1] ։

Նոյն էր լսել զկոծ աշխարհախառնաց դառն եւ ողորմելի զնաժշտացն , եւ զամենեցուն որ ընդ նմայն էին ։ Երեքն անձինք 'ի ներքինեաց նորա զենին զանձինս 'ի վերայ տիկնոջն իւրեանց՝ եղեալ զոհք սատակելոյ նորա , եւ Կիւրոս ընդ գոյժ աղէտիցն անդր ընթացեալ , ելաց անդէն զԹագա-

1 Քսենոփ . Կիւրոպեդ . Կիւր . գիրք Է . 185 ։

ւորին և գեղջկային միանգամայն զթշուառութի̃․ և ետ կանգնել նոցա շիրիմ, ուր աճիւնքն նոցա խառն 'ի միասին եղան[1]։

ԳԼՈՒԽ Խ․

Ուղևորել Անաքարսեայ 'ի Մեսսենիա։

Եւ մեկնեցաք 'ի Սկիղոնէ․ և անցեալք ընդ Տրիփիղիա, հասաք յեզր գետոյն Նեդայ՝ որ բաժանէ ընդ Արկադիա և ընդ Մեսսենիա[2]։ Եւ խորհուրդ կալեալ շրջել ընդ ծովեզերս գաւառին Մեսսենիացւոց, չոգաք 'ի Կիպարիսեայ նաւահանգիստն՝ մտանել անտի 'ի նաւ․ և 'ի վաղիւ անդր հասաք 'ի Պիւղոս, որ առ Եգաղեաւ լերամբ[3]։ Ծովեզրն անդ զրեթէ բոլորովին շուրջ պատեալ 'ի Սփակտերեայ կղզւոյ, է անդորր և խաղաղ հանգրուան նաւաց[4]։ Ոչ այլ ինչ է տեսանել շուրջանակի, բայց մայրիս և ժայռս սեպացեալս և երկիր ամուլ, և խոր ամայութիւն[5]։ Սպարտացւոց, որոց էր երկիրն յաւուրս պեղոպոնեսական մարտին, անտես արարեալ էր զայն 'ի սպառ․ բայց աթենացւոց տիրեալ անդ, փու-

1 Քսենոփ․ կարգադր․ Կիւր․ գիրք Է․ էջ 186։

2 Պաւսան․ գիրք Դ․ գլ․ 20․ էջ 327։ Ստրաբ․ գիրք Ը․ էջ 348։

3 Ստրաբ․ անդ, էջ 359։

4 Թուկիդ․ գիրք Դ․ գլ․ 8։ Դիոդ․ գիրք ԺԲ․ էջ 113։

5 Թուկիդ․ անդ։ Պաւսան․ գիրք Դ․ գլ․ 36․ էջ 372։

թացան ամբոխացուցանել զայն , և հալածեցին ընդ ծով և ընդ ցամաքս զզօրս սպարապետացն և զնիզակակցաց նոցա ։ Այլ յայնմհետէ Պիւռոս , որպէս զամենայն վայրս յորս նախճիրք մարդկեղէն արեանց գործէին՝ ցանկալի եղև ուղևորաց 'ի տեսանել [1] ։

Ցուցին մեզ անդ զՅաղթութեան պատկերն զոր աթենացւոց կանգնեալ էր անդ [2] , և 'ի հին աւուրց աւանդութենէ պատմէին մեզ՝ անդ խոհականքն Նեստորի թագաւորեալ ։ Այլ Հոմերոս , ասեմք , 'ի Տրիփիլիա ասէ զնա թագաւորեալ [3] ։ Այլ փոխանակ պատասխանւոյ ցուցանէին մեզ զապարանս նորա և զկենդանագիր , և զգոմ արջառոց նորա [4] ։ Իսկ մեք զհակառակն վճռեալ պնդէաք ․ այլ վաղ խելամուտ եղաք , զի և ազգաց առ հասարակ և իւրաքանչիւրոց մարդկան դժպհի է յերկբայս արկանել զնախնիս նոցա՝ յորս պանծան ։

Այլ նաւարկեալ զծովեզերբն մինչև 'ի խորս Մեսենիականն ծոցոյն , տեսաք 'ի Մոթոն * ջրհոր մի՝ որոյ ջուր կպրատեսակ ունելով յինքեան մնացկուն , բերէ զհոտ և զգոյն կիզիկեան բալսամոնի [5] ։ Այլ 'ի Կորոնիդ տեսաք բնակիչս , որոց ոչ զլեզու և ոչ զզգեստ աթենացւոց ունելով

1 Պաւսան․ գիրք Դ․ գլ․ 36․ էջ 372 ։
2 Նոյն անդ ։
3 Ստրաբ․ գիրք Ը․ էջ 350 ։
4 Պաւսան․ անդ , էջ 371 ։
* Որ այժմ կոչի Մոդոն ։
5 Պաւսան․ անդ , գլ․ 35․ էջ 369 ։

համբաւելին 'ի նոցանէ սերեալ. զի է մերձ յԱ.,
Թէնա աւան մի՝ որոյ անուն կոչի Կողան¹ ։ Նմա
եւս տեսաք զմեհեան Նաբողոնի հաշակաւոր ոս-
պէս ընտանիւ, ուր զինեն ախտաժէտք 'ի խորա-
ղիր բժշկութեան, եւ համբաւելին զտանել զայն ։
Այլ անդրադարձ եւս զԿորոնեա* քաղաք՝ զեւ եւս
կառուցեալ հրամանաւ Եպամինոնդայ², եւ առաջ
զերկան Պամիսոս գետոյ՝ ուր մնաք հոգեւորաց ու-
ռատուութիւք, զի է նաւագնաց մինչեւ ցտանն աս-
պարէզս³ ։

Մեծագոյն քան՝ զամենայն գետս 'ի Պեղո-
պոնէս է Պամիսոս. Թէպէտ եւ յանկանէ նորա մին-
չեւ 'ի տեղին ուր բերանացեալ յանդի 'ի ծով՝
ոչ ինչ աւելի է քան զհարիւր ասպարէզ⁴ ։ Սոլ-
են զնացք նորա, այլ ոչ անմշան. զկարձառաւ
կենաց բերէ զնանձնութիւն, որ իցէ ըն աւարք
բարութեան ։ Զուրք նորա ախտանակիրք երա-
նաւետեն զվայրս ընդ որս հոսեն, եւ ձկունք ընդ
տիրք ծովու յաձախեն անդր յամենայն ժամա-
նակս, եւ 'ի դարձ զարնայնոյ փութան 'ի վեր
կոյս գետոյն արկանել զձուս⁵ ։

Ի մնացեալն 'ի ցամաք անդր, տեսաք նաւս
առաջաչխաբհիկս նորաձեւս՝ որ զայլն Թիակք եւ ա-
ռատաւորք ։ Մատեան յառաջ, եւ ուղեւորք ծերք
եւ տղայք, արք եւ կանայք խուժեալ 'ի ցամաք,

¹ Պաւսան. գիրք Դ. գլ. 34. էջ 365 ։
* Որ արդ կոչի Քորոն ։
² Պաւսան. անդ ։
³ Նոյն անդ, էջ 363 ։
⁴ Ստրաբ. գիրք Ը. էջ 361 ։
⁵ Պաւսան. անդ, էջ 363 ։

փախչելոյ աղաղակին, և ձայն բարձեալ ասէին. Այսա֊
նիք և բնակիչս երանելի աւուրն, որ դիտեալ ըղձից
նմերոց շնորհէ. Թագաւորք դիտեալ արտասուօք, եր֊
կնէր ցանկալի՝ զոր հայրքն մեր ժառանգեցին, եր֊
կնէր սուրբ՝ որ զանձինս հարցն մերոց ծածկես.
Մատեայ առ մի ոմն 'ի նոցանէ ծերունի՝ որում
անուն էր Պասնոկղէս, և թուէր առաջնորդ
քաղաքականութեանն, և ասէ. Ո՞ էք դուք, և ուս֊
տի գայք: Եւ նա ասէ. Սերունդք եմք մեծե֊
նիացւոցն, որք յաղթութեամբ արարածոց եր֊
բեմն համբաւեալք՝ թողին զհայրենիսն, և առաջ֊
նորդութեամբ հօրն իւրոյ Արամենի ապաստա֊
նեցան 'ի ծայրս Լիբիոյ, յերկիր ուր չէք կցոր֊
դութի ընդ ազգս Նիւսագոյ: Եւ ոչ դիմացաք ընդ
բազում ժամանակս, զի Նաբուքոդոնոսորայ յառաջ
քան զամն իւր հնգետասան յաղթութեան զաւր֊
ձուցեալ էր զՄեսենիա, և զնախնի բնակիչսն
անողորմ հալածեալ[1]: Եւ յետ համանեբոյ իրացն
առ մեզ, խոյզ անյաղթելիք արդեօքն զմեզ. և
մահ ես Նաբուքոդոնոսոր յամեցոյց զդատաստ մեր.
այլ արդ անհատական զանք փայփայել 'ի բարերա֊
րութիւնս նորա:

Եւ մեր ընդ տարաշխարհիկսն ուղեկից լեալ,
և անցեալ ընդ պաշտօն բերրիս, հասաք 'ի Մե֊
սինէ քաղաք՝ որ համագոյն Ակրոնթայի կառու֊
ցեալ կայ 'ի սարաւոր լերին միոյ, [illegible]անէշ կա֊

[1] Պաւսան. գիրք Դ. գլ. 26. էջ 342:

ցեալ որպէս զնոա աշխարհին պելոպոննեսացւոց [1]:

Պարիսպք քաղաքին 'ի կոփածոյ քարանց շինեալ, պսակեալ մահարձանօք, և խիտ առ խիտ աշտարակօք ամրացեալ*, հզօրագոյնք են յոյժ և բարձրագոյնք քան զԲիւզանդեայն և զՀռոդոսին և զայլոց քաղաքաց Ասիոյ [2]. և շուրջ անձեալ պարփակեն զլեառն Իթոմ: Տեսանք մեք 'ի ներքս անդ հրապարակ մեծ, զարդարեալ մեհենիւք և անդրեօք, և աղբիւր յորդառատ 'ի նմին: Շուրջանակի ամբառնային շինուածք գեղեցիկք, և 'ի սենից անտի յայտնի էր՝ որ ինչ 'ի քաղաքամիջի անդ մեծագործութիւնս ճարտարք մեզ ուսանել [3]:

Սորեկ բնակիչքն մեծարանօք և բաղում խնամովք ընկալեալ եղեն. և 'ի վաղիւ անդր շրջան յերկրպագութիւն 'ի մեհեանն Արամազդայ կառուցեալ 'ի ծայր լերինն [4] 'ի միջնաբերդի, յորում հնարք արուեստին և ամրութիւն տեղւոյն օգնէին իրերօք:

Իթոմ մի 'ի բարձրաբերձ լերանց է [5], և մեհեանն մի 'ի վաղեմի մեհենից աշխարհին պելոպոննեսացւոց [6]. զորմէ այսպէս ունէին զրոյցք, անդ

1 Պօղիբ. գիրք Է. էջ 505: Ստրաբ. գիրք Ը. էջ 361:

* Երեսունեւութ յաշտարակաց տասն կայրին գետ ևս յառաւելքան զերկու յիւրում. և Ֆուրմոն ետես զնոսա. (Յիշատ. բանասիրական կաճառոյն, հա. 7. էջ 335):

2 Պաւսան. գիրք Դ. գլ. 31. էջ 356:

3 Յիշատ. բանաս. կաճառոյն, հա. 7. էջ 355:

4 Պաւսան. գիրք Դ. գլ. 33. էջ 361:

5 Նոյն անդ, գլ. 9. էջ 301:

6 Նոյն անդ, գլ. 3. էջ 287:

յաւերժահարսանց դայեկեալ զԱրամազդ : Պատկեր աստուածոյն, յԱգեղադայ դրօշեալ, պահի 'ի տան միոյ 'ի քրմաց՝ որ տարեւոր ժամանակաւ վարէ զքահանայութիւն, ընտրութեամբ կալեալ զայն[1] : Այլ որ յայնժամ զքահանայութիւնն ունէր՝ անուն կոչէր նորա Աղեղնոս . և էր նորա կեցեալ զամագուած աւուրս կենաց իւրոց 'ի Սիկիլիա :

Ի նմին աւուր կատարէր մի 'ի տօնիցն տարեկանաց Արամազդայ, յոր դիմէին անդր բազմութիւն ժողովրդոց 'ի մերձակայ գաւառաց : Ծածկեալ էին կողք լերինն յարանց և 'ի կանանց, որք 'ի կատար անդր փութային հասանել : Այլ տեսաք մեք զբազմազան պաշտամանցն արարողութիւնս, և կացաք 'ի լուր երաժշտացն մեղեդւոյն՝ որ 'ի վաղնջուց ժամանակաց աւանդեալ է անդ[2] : Ցնծութիւն մեսեմփողացն լեռնականաց զամենայն զթատրոն շարժէր 'ի գութ, և դէպք իմն յեղակարծ յաւելին զտրամադրութիւն եւս առնել զանեսիլն . քանզի Աղեղնոս քուրմ Արամազդայ ծանեաւ զղեղապատեալ տառապեալ ազգատոհմիցն, զի եղբայր իւր էր, և զիրկս արկեալ նմա՝ չկարէր մեկնել 'ի նմանէ : Ողջերեցուցանէին միմեանց զդժնդակ աղէտսն, որ զնոսա բաժանեցին երբեմն 'ի միմեանց : Այլ կացաք մեք զաւուրս ինչ ընդ երկոսին պատկառելի ծերունին, ընդ բա-

1 Պաւսան . գիրք Դ . գլ . 2 Նոյն անդ :

33 · էջ 361 :

ղուսն յազգականաց նոցա և 'ի բարեկամաց ։

Ի տանէ Կեղեներայ տեսանէաք զՄեսեմբրիա ողջոյն, և ընդ սահմանս նորա շուրջանակի ձգեն աչք մինչև ցասպարէզս ութհարիւր [1]. 'ի հիւսիսոյ ընդ Արկադիա և ընդ Աչլիա, յարևմտից և 'ի հարաւոյ ընդ ծով և ընդ կղզիս մերձաւորս, և յարևելից ընդ զօտիս աշխարհագրական լերանցն՝ որ բաժանեն ընդ Մեսեմբրիա և ընդ Ակոնիա ։ Այս ասպս գեղջրէին աչք 'ի տեսարանն 'ի շրջափակի անդ ամփոփեալ ։ Յուցանէին մեզ անդաստանս պտղաբերս որ մերձ և որ հեռի, անջրպետեալս 'ի բլրոց և 'ի գետոց, և ծածկեալս խաշամբք և մորկօք՝ որ են մեծութիւնք բնակչացն [2] ։ Յայնժամ ասեմ. Աստուած տեսաք մեք աչօք 'ի գաղն մերում այսր. և ինձ թուի զի բնակիչք գաւառիս նուաղ են յոյժ առ արդասարութիւնս երկրին ։ Պատասխանի ետ Մերենեկզէս, և ասէ. Այս մի այլ ինչ հանգուցեալ այդմ պատճառս, բայց գլխաւորագոյնն՝ զորոց լերինքս այսոքիկ ծածկեն յաչաց մերոց զգժտէի տեսիլ ։ Ընդ դաշտս չորս անդադար առասպելակերպ ապարատացիք 'ի Մեսեմբրիա, թողլով բնակչացն բաժնիս պատերազմ կամ աւարս, մահ կամ գերութիւն ։

Այս քանզի սող ինչ զգաստանալէր խաւսէա-

1 Մարտը. գիրք Ը. էջ 362 ։
2 Եւրոպա. և Տիրաս. առ. Մարտարոսի, գիրք Ը. էջ 366 ։ Պղատ. յԱպէնի. հատ. 2. էջ 193 ։ Պատասխ. գիրք Դ. էջ 288 և 316 ։ Պլուտ. յԱպէնս. հատ. 1. էջ 618 ։

Թեանցն գնացեալ , Աշխենակին յորդւոց Հանեալ՝ դարձեալ առ որդին իւր և ասէ . Ո՞ր քնար , և նուագեա զորըս պաշտեալ առ մեզ . երկուս 'ի Կրամնէ և մեւս սլղ 'ի հօրէ իմմէ Աւշկղեանց երգեալ 'ի սիրոյն մշտաց իւրեանց , և 'ի յաւէժ յիշատակ ազերողն որ Հասիկն Հայրենեաց քոց * : Այս լուաւ պատանին , և սկսաւ նուագել այսպէս .

ՄՂՈՒԲ

Ցուցակին պատերազմին Մամիկոնեան ** :

ՏԱՐԱԳԻՐՔ Մշակաց սահեալք նժդեհութեանք առ աղջս օտարս , կարեկցութեանք լուսով կցորդէաք ընդ մարդկան որ դժոյլին 'ի մեզ : Ո՞ հաւատայը , զի յետ աղէկոծելոյ զայդքան ժամանակս ընդ ծով միայր մեզ հատանել 'ի նուաճանգիստ այսր յետեսպերեան¹ , 'ի զաւառ՝ զերդեալ ցանկալի պարգևօք ընութեանն և խաղաղութեան : Այս երկիր յագեցուցանէ զկեղծս մշակին , հատուցանելով հարիւրապատիկ զհասն ասանդեալ նսեմս . զեռք խաղաղածաւալք զեռան 'ի դաշտին , մերձ 'ի հովիտ ուրեմն ընդարձակ՝

* Ցեակայս մատեանս 'ի ամէ հանդ յամին 723 նորին Թուաբիկութեանց . Թիւ Ժէ :

** Սկիզբն եղև պատերազմիս 743 ամաւ Ն . Ք . և վախճան կատարութեան :

¹ Գուսան . գիրք Դ . գլ . 26 . էջ 342 :

որում ղամփնիք և մրտենիք և հոյլք նռնենեաց և այլ ևս ազգ ազգ ծառոց հովանի առնեն[1] ։ Նոյն ևս քան զնա են աւազուտք հրաշալիք, ազգք խուժադուժք, գազանք վայրենիք. այլ չիք անտի մեզ երկիւղ, չեն 'ի նոսա ապարտացիք ։

Մնակիչք գեղեցիկ ապաստանացն ողողմեալ 'ի թշուառութիւնս մեր, յօժարութեամբ ետուն մեզ ապաւէն. այլ տրտմութիւն մաշէ զաւուրս մեր, և թերի բերկրանք յաճախեն զդառնութիւն անձկութեանս մերոյ ։ Նշամ, քանի արտասուս 'ի մէջ ծառաստանացս դեգերելով հեղի 'ի յիշել զՄեսենիա ։ Ով երանաւէտ ափունք Պամիսեայ, մեհեանք վեհավայրք, մայրիք դիցանուէրք, դաշտք ոսկեալք յաճախ յարենէ հարցն մերոց, մի ևս, մի լիցի երբէք մոռանալ զձեզ ։ Նաև քեզ, ո՛ վայրագ ապարտացիդ, երդնում յանուն մեսենիացւոցն հինգ բիւրուց՝ զորս ցրուեցեր ընդ երեսս երկրի, երդնում թշնամութիւն անհաշտ հանգոյն անգթութեանդ քում, յանուն նոցա և զաւակի նոցին, և որ յամենայն տեղիս և 'ի ժամանակս իցեն մարդիկ բարեպաշտ յանուն նոցա ամենեցուն երդնում ։

Թշուառականք թշուառագունից քաջազանց որդիք, իցէ՞ թէ եղբայրութիւնքս իմ այսպիկ նուագեալք 'ի տեղ Տիրտեայն և Արքիղոքեայ՝ հնչեսցեն 'ի լսելիս ձեր որպէս զփող որ գոչիցէ

[1] Սկիւղաքս, յաշխարհագրին, հտ. 1. եր 46 ։ Պլին. գիրք Ե. գլ. Յ. եր 249 ։

'ի պատերազմի, և հրդե զԹնդիւն որոտման որ ընդդոստուցանիցէ զվատ 'ի քնոյ ։ Այլ́ Թէ զցայգ և զցերեկ յանդիմանն առնելով աչաց ձերոց զըն- տանիս հարց ձերոց սպառնալեացս, գործեսցեն 'ի սիրտս ձեր խոց մշտահաս ալեան ։

Ի խորքն խաղաղութեան 'ի գարուց բազմաց կէին մեսսենեայք, յերկիր՝ որ զբերութիւն բա- ւականին նոցա մատուցանէր, և ընդ երկնաւ՝ որ միշտ արփաւոր զքաղցր աղդմանմանն 'ի նոսա ներգործէր ։ Ազատք էին, և օրէնք համաձայնեալք նոցա, բարք անկեղծք, պարզայք ժողովրդականք[1], և տօնք բազմապայծառք 'ի հանգիստ վաստա- կոց նոցա ։

Ուխտին նիզակակցութեան, որ կցորդէրն զնոսա ընդ սպարտացիս, հասին յանկարծ հա- րուածք հասարակք. յարեան բողոք և զայրոյթ ատոր և անոր, և բողոքանացն յաջորդեցին սպառնալիք ։ Փառասիրութիւն որ կաշկանդեալն կայր ցայնժամ օրինօքն Լիկուրգեայ, զայն ժամ պատեհ գտեալ խորտակէ զշղթայսն, կոչէ առ ինքն բարձրաձայն զանիրաւութիւն և զբռնու- թիւն, և սանձարձակական արբանեկօքն սպըռ- դեալ մտանէ 'ի սիրտ սպարտացւոց, և մղեալ ածէ զնոսա 'ի բազմիս յերդումն՝ մի 'ի բաց դնել զզէնս մինչև ծառայեցուցեալ զՄեսենիա[2] ։ Այս խորհրդածեալ յաղթանականն՝ ածէ զնոսա

1 Պաւսան. գիրք Դ. գլ. 2 Յուստին. գիրք Դ. գլ. Ա ։
3. Էջ 286 ։

'ի մի 'ի զարհուրանօղից Տաջկաստանի լերինն, և անտի ցուցեալ նոցա անհնարին զձորս դաշտօրայս, մուծանէ զնոսա 'ի գիւղակ մի աւանք որ էր նախնի նախգաւառակցացն նոցա, և՛ բաժանէր ընդ սահմանս երկաքանչիւրոցն պետութեանն ¹:

Ի լուր համբաւոյն չհանդուրժեալ հարքն ձեր թշնամանացն, զինեալ խուռն բազմութեամբ յարքունիս թագաւորացն մերոց: Այլ փութայր յաղժամ՝ թագաւորէր· լուաւ նա զկորուստ զգնալույց աղքին, և շրթունք նորա եղեն դողդղալոց խոնարհութեան: Օտարոց զեռանդն մեծամեծաց, և անձնեայց զայն մինչև ցժամ՝ բարերարական վերատեսին արծարծանելոյ նորա առ 'ի յաղթանակ ²: Այլ ին անք առ 'ի մարդիկ 'ի հարահանգս մարտի զաղջն կարի ընդդիմացեալ զբռնանայ ընդ երկար խաղաղութեան. և սակայն նա յաղժամ՝ կալ անճանաչ 'ի յառաջաւորել ապարատացուց զհունձս իւր, և 'ի հաստատութեան նոցա զհաստատութիւն ապարանկօք 'ի Սանդխտա:

Այնկից ժամանակէ մերձ ժխտողութեան թուէր եկեալ հասեալ, և երկկիւս-զօրութիւնք երկաքանչիւրոց պետութեանցն մարտնչեցան ընդ միմեանս, այլ յաղթութիւն չերևեալ սահմանել զվէճն մեծ, և տարտամութիւն նորա ձևակցոյց զկործանումն մեծամեծաց: Բանակ նոցա որ լուա որէ տեղապահ իւր կողմանեւանք բաղկաց 'ի

¹ Պատմութ. գիրք Դ. ԳԼ. Տ. էջ 293: ² Նոյն անդ:

պատերազմողացն , սակայն յամուրս հատուցանելով , ատրկացն դատապարտեալք վատառողջութեանց , և սրածութեանց որ ակնածելի իմանէին զերկիւղն երբեմն յոյժ բարգաւաճ :

Ի վաղուցն տարակուսանօք խորհուրդ կալեալ ամրանալ յԻթամ լերինն¹ , և խնդրել հրամանս ապատախանաց ՚ի Պտղեմայիս : Փութացին , և ոչ զիք , ետուն զայս պատասխանի . Որոշող արքայական ընտրելոյ մեծարանաց ՚ի զօրս , փոխարէն զՄեծրիկս² : Կանխաւական մեծահաճութիւնք անտես արարին զհնազանդութեանն զժողովրդութիւն : Ցած ՚ի մէջ մեծահաւատ տարածեալ , և զատապատերազմ մեծճակ զզուարոյն ՚ի Կիլիկեայ . և անդէն ՚ի Կիլիկաս անտերունջ զնա արարեալ , խոյս ետ ընդ նմա ՚ի Սամարիա : Ի մէջ ժամանա Արիստոդեմ քաջ պատերազմողին , և զհեծութիւն ծնեալ զթոյն ընտրելոյն ՚ի սրտի մտացն զզուարս իւր ՚ի բազմին : Որիւրդն խօսեցեալ էր մեամ ՚ի սիրելեաց արքայի . ա հատեալ նմա յօժարութիւն , ցուցանէ զի չէր որէն յանկարծակի փետուրն մատուցանել զհարանն ՚ի զօրս : Այլ ոչ անդ զկայ առեալ , և զանձնեղութիւնն արարէ առ ՚ի կեցուցանել զնա . յայս առնէ կատարեալ զհարանուն : Սոսկումն ընդ զօրապատութիւնն , երկիւղ նախատանացն , զորով հայրագութ , փրկութե հայրենեաց իղձք , սրբութիւն խոստմանն , յոյզք

¹ Գաւառն. գիրք Դ. գլ. 9. էջ 301 :

² Եւսեբ. պատմութ. աւետ. գիրք Ե. գլ. 27. էջ 23 :

բազմախուռն ներհակակիրք այնորիկ դղրդեալ շարժեն զոխոր Արիստոմենեայ, մինչև մնացեալ նոցա յաղէտս ըմբռնալեր խնդրել սփոփումն: Չգէ ըմբռնան իւր 'ի դաշտն, և անձկանի դաւառոն առ ասս նորա դիւականացեալ. հեծէ տեառնաքն: Իսկ քաջամն անդադարութ և անպարտապրն զօրէ. Ոչ բարեպաշտութեան, այլ զայրոյթ զօրաերց զաւրուկ սաստկագին. մինչ եւ խնդրի դահ 'ի դէց: Այլ ամենոխոն աղաղակելով զազրագին, Ահառուրկ մինչ այլ զահ, ղեկէ 'ի վերայ թշուառականն առաջփառծուլին. և փոքր մինչ եւս և կորուսանէր զնա, եթէ ոչ թագաւորն ողորմաբար ցուցանէր նմա դհրամանիւ զեղծն լռեալ:

Այս քան զեւս խստանայր Մաքսիմոս 'ի խորհուրդս աշխարհակալութեան, և հանճարձակէր զեղբորհուրդն սորա թշնամանօք և Ճնշալերօք արեան: Ի միում ուրեք 'ի Ճակատուց Ակուիլեայ սպանեալ, և թագաւորեաց փոխանակ նորա Արիստոդեմ[1]. յայլում ուրեք Ճակատու, ուր այդք բազումք պետրապանեաայք կային 'ի թիկունս մեսսենիացւոց[2], հալածն թշնամիքն մեր. և երկհարիւր 'ի նոցանէ զէն 'ի ձեռին զերեալք, թացին զնագլխոս մեր արեամբ իւրեանց[3]:

1 Պաւսան. գիրք Դ. գլ. 10. էջ 304.
2 Նոյն անդ, գլ. 11. էջ 305:
3 Միրոն, առ Պաւսանիայ, գիրք Դ. գլ. 6. էջ 294: Կղեմ. աղէքս. յորդոր. առ հեթանոս, հա. 1. էջ 36: Եւսեբ. պատրաստ. աւետ. գիրք Դ. գլ. 16. էջ 157: Դիոն. 'ի Հռովմայ. հա. 1: էջ 33:

Դեռ ևս պատեալ պաշարեալ կայր Իթոմ, և Արիստոդեմ իմաստնովն իւրով և արիութեամբ և վստահութեամբ 'ի զօրսն, և դժնդակ յիշատակաւ դստերն ձգէր երկարէր զպաշարումն. այլ հրամանք դիցն խաբուսիկք և հրաշք ահաւորք տատանեցուցին զհաստատութիւն նոցա: Նա յուսահատեալ 'ի փրկութենէ Մեսսենիոյ, չոգաւ զիւրովին՝ հեծեծելով 'ի վերայ գերեզմանին դստերն զվերջին հեծութիւնն[1]:

Պաշարեալքն ժուժկալեցին այլ ևս ամիս բազումս. այլ 'ի կորնչել զօրականաց նոցա և քաջաց պատերազմողաց, և 'ի սպառել հանդերձից, յանհնարս մնեալ եռան գերագոյն 'ի ձեռս թշնամեաց. Կէսք խոյս տուեալ առ ազգս շուրջ բնակեալս, և այլք յառաջին բնակութիւնս իւրեանց: Այլ յաղթականացն 'ի վերայ հասեալ, երդմնի արարին զնոսա՝ մի ևս հակառակ Սպարտացւոցն իշխանութե անձնել ինչ. գործել զերկիր իւրեանց, այլ զկէս արդեանցն ամի ամի մատուցանել նոցա. և 'ի վախճանել ուրուք 'ի թագաւորաց կամ յաւագանւոյն Սպարտայ, զգենուլ զհանդերձ սգոյ արանց և կանանց[2]: Այս պայմանք են, զորս յետ քսանամեայ մարտին եդ Լակեդեմոն հարցն ձերոց 'ի նախատինս:

1 Պաւսան. գիրք Դ. գլ. 13. էջ 311: Նէպոյ, գիրք Դ. գլ. 14. էջ 313: Եզեկան. գահ. ապառամ,

2 Տիրտէոս, առ Պաւսան. գիրք Զ. գլ. 1:

ՍՄ ՐՈՒՔ

Յերկրորդ պատուերացն Մանանիսացւոց *

ԳՈՒԱՐՁԵԱԼ 'ի ձայն ողբերգակաց եղերերգեալ զփառս զխուցաւորեանն՝ որ ընդ երկար 'ի վերայ աւերակաց հայրենեացն իւրոց պատսպարեցաւ : Այլ և , որէն էր մահկանացուաց փոխել զաշխարհ Ճանապարհորդքն . այլ նորա յաղթական կանոննէր ամուշուշտ զկորանս մնորանն և խաղաղութեան՝ որ երկրաքն եւս եղեն զժահհի :

Նոյէ , որպիսի ինչ էր խաղաղութիւնն այն : Նոյն ամն երեւոյն և ինն ոչ զադարէր 'ի ծանրացուցանելոյ զլուծն երկաթի եղեալ 'ի վերայ պարանոցի պատաւէրացն [1] , պատրաստեցուցեալ ընհանրութիւն նոցա ամենայն ազգի ազգի ծառայութեանքը : Այսպէս 'ի սաստկանալ աշխատութեան , կորուսեալք ընդ բեռանց հարկաց՝ որ զմեղքն 'ի Սահերիբեան , բռնադատեալք 'ի լեալ զանձ բռնաւորաց իւրեանց [2] , և ոչ կարելով յագենալ զապիկար ատելութիւն իւրեանց , ոչ այլ ինչ Թողուին որդւոց իւրեանց 'ի ժառանգութիւն՝ բայց զաղէտս 'ի վշտակրութիւն , և

* Սկիզբն երկ. պատուերացն 684 ամաւ Ն. Ք. և վախճան յամին 668 Նորին Թուականութեան :

1 Պաւստ. գլուխ Դ. գլ. 15. էջ 315 :

2 Տեսո. ստ. Պատմութեան , գլուխ Դ. գլ. 14. էջ 313 : Գուիտ. գլուխ Զ. էջ 300 :

զԹշնամանս 'ի վեհ-ժխտողուԹեն։ Նա եւ յայն ծայր չարչարեաց հասանելոյք, զի ծերք ոչ են 'ի մահուանէ զարհուրեցին, եւ ոչ երկրպագուացք յաւուրն 'ի կեանս։

Այլ Նոյա հանապազորդ յերկինս խնդրեցեալ, անձնապահս յերաց ուրեմն հայեր յԱնդրաստանն՝ որ 'ի Նախինի Թագաւորացն մերոց ասեմք, եւ որոց անդրադարձն յայտնէ կենացն իւրոց ցուցեալ էր 'ի դէմս իւր, 'ի բանս եւ 'ի գործս զանձն եւ զիւրոյն վեհագոյնս։ Նա որոյ առեալ յաշխարհ պատմեաց, զորոց մեծ արծարծանէր եւ մեծԹանգէր զեւանիսն, հետեւողութեան զօրավարուԹի ազգաց մերձաւորաց. եւ զխոստացեալ զի ազդմացիք եւ արիագոյնք պատերազմ էին առաջ նոցա ասպանդաւուԹեն, յայտնեալ ազդուածք', եւ յաջողեց հետէ ըստ իւր եղեն հեծուԹիւնք հաստատահաւատուԹեան, եւ խորախորհ առաքինուԹեան։

Ճակատամարտեան աստուածն մեծեաց 'ի մերում ուրեք յաւանաց Մեհենից, եւ երկոց երկրպագուացք անպարտելի։ Նոյ Արտաշեսեանց պայծառացեալ քաջուԹեամբ, երկրի անհնարին մարտապետաց անդէն 'ի Տիգրանակերտ տանելոց կարողացին զնա Թագաւոր, նա հրաժարեաց 'ի պատուոյն՝ որ վասն ազգատոհմին, եւ առաւել եւս վասն առաքինուԹեանցն անձն էր նորա։

Այսպես 'ի դէպս բանակին, խորհեցաւ Նորանշանն աշխուԹեամբ ահաբեկ առնել զպարս.

1 Գաւառն. գիրք Դ. գլ. 14. էջ 314։

տացիս, և 'ի մնացորդաքաղաքն ամենայն նոցա 'ի բաց առանձնել զառհաւատչեայ ատելութեանն՝ զոր 'ի մանկութենէ ուխտեալ էր ընդդէմ նոցա: Դիմէ 'ի Սպարտա, և մտեալ գաղտ 'ի մեհեանն Աթենասայ, կախէ զորմոյ ասպար՝ զգրոշմեալ 'ի նմին զայս. «ՅԱրիստոմենեայ առ դիցուհին յաւարէ սպարտացւոց»¹:

Սպարտացիք պատգամ ընկալեալ 'ի Դելփիս, խնդրեն յայնժամ յաթենացւոց առաջնորդ զօր պատերազմին: Նոքա երկուցեալ զօրանալիցն մենել 'ի մեծութիւն ատախին խուրեանց՝ առաքեն արանձն նոցա զՏիւրտէոս², քերթող անշանաւոր, որ զթերութիւն զծնեալ կերպարանացն և զաղկածից դժբաղդութեանն ծոյլ արգասեօք վսեմ հանճարոյն, զոր աթենացիք զառանձնայատուկ խնն ցնորից համարէին³:

Տիւրտէոսի հրաւիրեալ յօժարութիւն պատերազմող ազգին՝ որ նոյն հետայն հանդիսատեալ քաղաքացիացն զնա արար⁴, անմիջապէս մեծարեցին. և եւս զանձն բարերարն 'ի բարձր աստիճանութիւնն: Տաղք նորա եռանդութիւնք ազդէին 'ի սիրտ զօրհանրահաւաքման վտանգաց և մահու. 'ի

¹ Պաւսան. գիրք Դ. գլ. 15. էջ 316:
² Լիկուրգ. 'ի Լեոկր. էջ 162: Յուստին. գիրք Գ. գլ. 5: Պլուտ. 'ի Կղէոմ. հտ. 1. էջ 805: Պաւսան. անդ: Յիշատ. բանաս. կաճառ. հտ. 8. էջ 144:
³ Դիոդ. լուսաբ. գիրք Բ. յօդ. 43:
⁴ Պղատ. յղ. օր. գիրք Ա. հտ. 2. էջ 629:

իւր աշխարհին յարձակեցան աւարառութիւք 'ի պա-տերազմ¹ :

Նորաստեղծ դերբոյ խոհեմութեան պէտք էին աստանօր, և չէ իսկ մարթ այլ ազգ նախարարացն զարմանալի կառավարութիւնն՝ որ զերկպառակեալս-ներս ազգին միւսը 'ի Ճշմարտ : Աստուծոյ որպէս ընդ առաջ բայց եթէ 'ի վեհս Արշակայ ամենայն՝ բարբառեցին զնոսա, գորովոյ հրապուրանօք և մեծարէ, և նուա-ճեալ փոփոխականս միաբանեցին ընդ նմա, ընդ Հեր-ձուածոյ կողմանն ժամանեալ նմանօ, և խոնարհեցոյս հանդերձ հրովք ընկեցեալ 'ի վերայ ընդդէմ երկնից խորհրդական. և շահեալ զարմացեալ վերադարձն հրամանն 'ի յառաջոյ ծառայութեամբ ընդ ժողովրդեան նո-րա՝ արդար քանի զմիաբանեալս եկեալ, խիստ առ խիստ հարկաւորէ դժուար բերելեաց, և հատուցանէ ժողովոյ ծխա-շունչս 'ի բաց տարակուսէ, և ընդունելով զգուշու-թեան մեծին՝ ծածկէ զայն յամենայն և յաւելուած-յանկարծակի. ըստ նախնի օրինակի Արշակունեաց, առնելով զհետ իւր զմնացորդս մեծամեծացն, ան-կանիս առաջակայոց 'ի վերայ ընտրելոց արքայա-ցուցց՝ որոց զօրավարական Հայաստանեայց : Օրէնս քա-ղաքավարութեան օրինակ նոցա իմաստութեան, յաղ-թեալ արդէն առաւածութիւն զայլազգականսն . այլ Ճգնութեամբ նոցա խորհրդական ընդդէմ նախարարութեան առնելով զնոյն, որ կերպ բանակցին ըն-դեալ բարբառելն, և ուստի նոցա մահապարտ առա

¹ Պրոկ. յՈնդիս. հտ. 1. էջ 805 : Թէոփան. ժամանակ քերթ. տող 402 :

նոցին անընդմիջհատ : Այս էին նոցա արքունականք
և վիրաւորք անկանէին 'ի յաւուր յաղթութեան ,
Մրմռնջմամբ խորախորատեալ զանձինս և զիւրեանս 'ի
փախուստ գործածութեամբ զօրքն Միաբանեալք և ըն-
դիմամարտական նոցա ուժեղ[1] . և Ճաւիր տատեալ ընդ
դունդս Թշնամեաց , զերեսս բազկաւ՝ զալըս ուժե-
րեսացն 'ի բաց վանէ . և ցիր և ցան կացուցեալ
զնոսա , և զհետ փախստէիցն մտեալ մինչև 'ի բա-
նակետեղ անդր , ընկղմէ զնոսա յարհաւիրս խոր :

Ղփանայք մեռելոցն նուագէին զյաղթու-
թիւնն երգովք , զորս ցարդ յերգարանկեսք[2] . և
այր նոցա բարձր 'ի գլուխ ապառաժին , վեհա-
խնդրութիւն և յանդգնութիւն 'ի տապանակէ Ճա-
կատու նոցա սպառնացեալ 'ի գետոյն զօրութեանց :

Պատմեն այսպ , աստուածահէր յիշատակաց ,
որպէս զառաջինն ըստ աստուածոյ ծածկեալ յանկարծ
քող նախեմ և տխուր : Նայլ բարբառեալ այն է՝ զի
անհեթեթաբանութեան խոնք և ժամանակ ընծայեա 'ի ներքոյ
զօրավարներս . զբարբարոսաշունչ խռովեն զմիշխանութեան Անթ-
հասուցանէին մեզ անձ , հանգոյն ալեաց որք զդե-
կորս վարելն 'ի ծովեզերս զնաւաց ապրողաց եր-
բերեան ընդ ծովը : Լուսապայծառք ; Ճնճղուկանք Մեսե-
նիոյ , ահա վիպաց հաստատութիւն և զերկրպագոյ . սե-
ուէ եւ զնա , և բնակ զձայն նոցա 'ի մէջ մերկա-
ց դիւցազանց որ ցրուեաց զնաւատորմն , յածելն
խաղալ զայն 'ի Լէբէա :

1 Պաւսանի . գիրք Դ . գլ . 16 . էջ 318 :

2 Նոյն անդ , էջ 319 :

[illegible]

մանկունք Ճակատագրին¹ ։ Ա՛րդ, և առ զինուորա-
կերպս քո որ ճեմեն քեզ 'ի Լիկիոն՝ զայգատակել առաջ
նոցա զօրաց ։ Մնամ խաղաղութեամբ ։

Այս եւ սակայն. փայլեսցի մի եւս, հողի մեհեանն,
կայց ձեռս [illegible] փայլեսցի մի եւս. և 'ի թերեւերացս յայս
առեւանեացդ յաւէտ և զքաղաքս սփռեսցես ։ Մնացէք
հարցն մեր Թշուառացուն, մինչ մեզ ձայնապարհ
ելին. ժամանակս զանձնագրութեան նոցա ծաղկեցան
զփառս, և անձանցն ուրեք աղբեւր բերելն զմեծի
կամակածանս 'ի կորստեան մեր ։ Մարդասպանեն սպան-
նեալ, և Թագաւորականն քաղաքք 'ի քաղաքէ շըր-
ջեալ, և ամենայն 'ի հրապարակս զբօսնեալ 'ի կենաց,
անեստրանն Թշնամանաղէր մեռանելոյ արժա-
նացեալ կայ ։

Զայնժամ զիւրայինն բարձեալ զձայն իւր,
ասէ ցիս. Մնոթա, Արթ, փառաւորեա ողջունել
իմ. առաւ ընդ անձնայն երկիր, զի եւ անդր քաղաքա-
Թէ հարցն ձերոց բոլոյ [illegible] քան զԸնկեն
զատար, և առաքինութեանց նոցա պայծառագոյնք
քան զարդիս ։ Այլ եթէ զուցէ ինչ առակութեան
գԹութեան 'ի մարդիկ, շարժեսցես զնոսա յազգս
'ի լուր Թշուառութեանց մերոց ։ Մնաք ընդ իմ.

Զհանդուրժեալ Ապաշտատայ ընդ նախատանս
պարզութեանն, կոչեաց զպատերազմս իւր 'ի
վրէժխնդրութիւն, զատելս յօդնութիւն². և
զայլ մի փառս քան զառակս իւր որ Թաղ 'ի

¹ Պաւսան. գիրք Դ. գլ. 26. էջ 312 և 343. գլ. 31. էջ 359 ։
² Նոյն անդ. գլ. 16. էջ 319 ։

զլուխս պերճանայր՝ հրաւիրելոց ՚ի մտանել զնիզակակիցս իւր¹ . զԱրիստոկրատ ասեմ, որ հզօր անզգլին Արկադացւոց թագաւորէր, և զուամսրեալ էր նորա ընդ մեզ ՚ի պատերազմ։

Մատեան առ միաբանս քաղաքացիքն երկրորդին որպէս մրրիկք, որ զօրահանանաց երկինից վիճեալ մարտիցեն : Ի տեսիլ յաղթականացն ընդունայն Ջանայինն թշնամիք սրտապնդել, և ՚ի տարմնայ աչաց նոցա նկարեալ կայր վտանգաւոր երկիւղ մահուն : Ընդ Տիրտէոս յառաջ մատեաւ վրդովահութեամբ և առատիւ, որպէս որք զի ՚ի ձեռին իւրում ունիցի զփրկութիւն հայրենեաց . և տեսիլն սպայծառ և յորդորականն ցուցացոյց խիտ առ խիտ յաջս նոցա² : Պատկեր ոգեցուցին՝ որ յերեւաց նորա հալածին թշնամիք, խառնաձայն աղաղակ ցնծութեան և գոռոցից՝ որ զյաղթանակին նորա յաճախեն զփառս, մեծապանծք ընծայեալ նմա յամենեցունց ամենայն ուրեք, և ծերութիւն պատուական ՚ի խաղաղութեան, և խանդաղատելի եւս պատկեր քաջամարտիկ պատանւոյ մեռելոյ յառաջադրեալ փառաց, առաքինութիւնք . վերջք յաղթականութեան նորա, սուգ և հեծութիւնք ժողովրդեանն առ հասարակ ՚ի տեսիլ դագաղացն, ծերք և կանայք և որդայք թաւալեալք արտասուօք զգերեզմանօք նորա, պատիւք յաւերժականք յիշատակի նո[illegible]

¹ Պաւսան. գիրք Դ. 17. էջ 321։

² Տիրտ. առ Ստոբ. Ճառ. 49. էջ 354։

[redacted]

այս ամենայն ազգի ազգի ուսուցանիք եւ կերպ նկարագրեալք սատանի եւ արուեստ ճարտարախօսութեանն՝ եռանդն իմն անընդդիմակտան ամենն զօրութեանն։ Արդեւն զօրքն զրադիլու զանձամբ իւրեանց եւ զարդարաՀամբն, երանելի զանձինս Համարեալ եթէ ցուցցի զերեւելեան նոցա, եւ անուանեացեն զնոսա յետինք եւ առաջինն. ՚Հաւատիկ անկեալքն ՚ի վերայ Հայրենեաց ՚։

Մինչդեռ քերթողն զայսպիսի եռանդն ՚ի սպարապետական բանակին արծարծանէր, ՚ի մերումն զՀաւատարմութիւն ՚ի լքումն ամէնք թագաւորն ՚։ Հանճարք չարեաց սերմանեալք Հրամանաւ նորա, պատրաստեցին զերդս աՀաբեկ զօրականին նորա ՚ի լքումն. եւ նշան մարտին եղեւ նոցա ՚ի նշանն փախստեան։ Արիասիրտ իմքնին ամ զնոսա ընդ ուղին նախատանաց՝ Հատեալ անցեալ ընդ գունդս մեր ՚ի գծուղակ պաՀուն, մինչ մեք բանակադրեալ զօրութեան փաղանգին թշնամեաց զգէմ ունէաք։ Իսթթեղ ակամն ընդ ոտիւք ՚ի մարտակաց մերոց գունն խողխողեալ, եւ Մեսենիա ՚ի ծառայութիւն մատնեալ, այլ ոչ ՚ի սպառ. զի ազատութիւն եղիտ իւր առաւել յԱրգս ընդ իմս ՚։ Անդր առաջնորդեցաւ նա, եւ զերծեալքն ՚ի կատարածէ զօրք, եւ քաղաքացիք խուսափեալք ՚ի ծառայութենէ անդր ընդ նմին ապաստանեալ։ Օտարութեանք ընդ իմն ամենին յաղ-

[1] Յուստին. գիրք Գ. գլ. Ե. 17. էջ 322։
[2] Պաւսան. գիրք Դ. գլ. [3] Նոյն անդ, էջ 323։

Թագաւորք պատանէն. և տեսանելեն զմեզ ահիւ զեր 'ի վերայ խրեանց, որպէս նաւավարք 'ի մահահատիկ զոյն զալկան՝ տեսանելով ընդ երկիւս զնեաւ անկ մրրկալից ։

Նոր սկիզբն եղև պաշտաման, ոչ որպէս զԱն զխոնեխն հռչակաւոր՝ այլ համազոյն նմին հռչակելոյ արժանաւոր ։ Նոր էր տեսանել զքաջայաղթ արութիւնս նախնի դիւցազանցն նորոգեալ կամ մանաւանդ յարդիւնս աճեալ. և ձմերայնոյ զարձաղարձք մեռասան ոչ կարացին մեղկել զվայրագ յամառութիւն պաշտողացն, և ոչ զանդրդուելի հաստատութիւն զպաշտարելոցն [1] ։

Նշխարաբուր մեսենիացիք, նշանաւորք քաջութեամբ, ընկերէին ինձ յարշաւանս [2]. հերձանէաք սոսէպ զպատնէշսն աճեալս շուրջ զատորատովք լերինն, և աճէաք արհաւիրս մինչև մերձ 'ի Սպարտա ։ Ի միում նաւագին լցեալք աւարաւ, պաշարեցաք 'ի զօրաց թշնամեաց. յառձակեցաք 'ի նոսա ասանց յուսոյ յաղթութեան, և իմ անողէն հարեալ կարեվէր՝ զատոյ անզգայեալ. և երանի թէ ոչ անդրէն դարձուցանէին զիս դիք 'ի զգայութիւն ։ Օարթեայ, և զինչ էր, բարբէ, զոր տեսի. եթէ սանդարամետք հանդէն առաջի աչաց իմոց բանային, ոչ ազնուապար ազդէր յիս սոսկումն ։

Պատայ 'ի զբաւանս [illegible]լոյ ընդ վերաւորս

1 Հաւսան. առ Պաւսանիայ, դիրք Դ. գլ. 17. էջ 323 ։

2 Նոյն անդ, գլ. 18. էջ 323 ։

կիսամեռս շեղջակուտեալս յաղջամղջին վայրի՝ ուր ձիչք աղխողողմք լսելի լինէին, և նուաղ հեծութիւնք. և էին զինուորակցացն իւրոց և բարեկամաց առ հասարակ։ Թշնամւոյն զնոսա 'ի վեհ անդր 'ի խոր հոսեալ էր, և զիս 'ի վերայ նոցա. կոչէի զնոսա յանուանէ, և ողբակիցք լինէաք միմեանց. և թուէր ինձ սփոփել նոցա 'ի վիշտսըն, տեսանելով զիս առընթեր։ Այլ որ առաւել քան զամենեսեան սիրելին էր ինձ, ո՜վ դառն յիշատակ, ո՜վ պատկեր դժպհի. որդեակ իմ, դու ոչ կարիցես առանց հեծութեան լսել զայն. էր նա մի 'ի կարևոր ազգականաց քոց. և գիտացի 'ի հեկեկանաց ինչ նորա՝ զի անկանելի իմով վաղվաղեալ էր նորա մահ։ Փարեալ զնովաւ բազկօք, թանայի զնա յարտասուս ջերաջերմ. և ոչ կարելով խափանել զեռ շնչոյ վախճանելին՝ որ 'ի շրթունս նորա հասեալ կայր, սիրտ իմ երիթացեալ առ վշտին սաստկութեան՝ արգելոյր յինէն և զսփոփանս ողբոց և արտասուաց։ Մ'ի ըստ միոջէ անշնչանային զինև բարեկամք իմ, և ըստ նուաղել ձայնից նոցա գուշակէի զնշխարեալ վայրկեանս կենդանութեան նոցա, և անխռով տեսանէի հասեալ զվերջինն՝ որ զրաւէր զվիշտս նոցա։ Լուայ ապա զյետին հառաչ զհուսկ յետին անշնչացելոյն, և լռութիւն գերեզմանի եղև 'ի վեհն։

Այրիցս արփւոյն զասպարէզ իւր ընթացեալ էր, յորմէհետէ ընդ մեռեալս համարէի[1]։ Այլ

1 Գաւառն. գիրք Գ. գլ. 18. էջ 324։

մինչդեռ անշարժ տարածեալ կայր 'ի մահճին ցաւոց՝ պատեալ 'ի կրկնոց իւր, և միայն անձկանօք մահուն՝ որ յոյժ ծանրագոյնն զշնորհսն ընձեռէր, աղաչեցաւ յուսովն իւր շշնջէ. զի երբէ վայրի* ընդ գոռոցի գետնափոր 'ի փոս անդր հասեալ էր: Այսպէս մնայ, և նա խուսափէր. զհետ նորա տրորեալ զնայն. չգիտեմ որպիսի խորհուրդք մղէին զնա, քանզի կեանք ողորմ դակագոյն 'ի տանջանս թուէր նմա յայնժամ: Ի դիցն սմն անշուշտ ուղղէր զշարժմունս իւր, և տայր նմա զօրութիւն: Ընդ կանանոր շաւիղս ընդ երկար սողեալ, տեսի այսպէս նշոյլ ընդ աղօտ. Թողի յայնժամ զառաջնորդն իւր, և նմանէ բաժանեալ նմա անտի՝ եկի 'ի լոյս: Այլ զանի զմտանսրացիս յոգնա, զի լայնն զնա իբրև զմեռեալ: Յերևել իմում անդ՝ հնչեաց վտանգն 'ի ձայն ցնծութեան, և 'ի պատմել զվիշտս իմ՝ հնչեաց դառնեալ 'ի գոչիւն սրտմտութեան:

Մեծախոհութիւն հօր ընդ հօր յաղթահարեաց զհետ, մեծախոհութիւն իբրև զգլխոյն մեծասասան: Մեսենիոս և Լակեդեմոն զատիւ և զգիշեր էին Տարսակ թշնամեաց սովլեալ սորեանն միմեանց. սպառնացիք որպէս զգաց 'ի հուսկ ծառայէին 'ի դաշտի, իսկ մեք որպէս զօրքն՝ որ զհուսկ և զգաց սպառնացին: Այդ երբ մեզ 'ի ծածուկ, զի կորնթացիք զայլոն յօժարութիւն Սպարտայ. և զիշխանութիւն սպրդեալ 'ի քաղաք

* Մի յաղուեսուց:

անզգը նոցա, 'ի քնոյ 'ի մահ զնոսա յուղարկե-
ցաք¹ ։ Այլ ընդունայն վաստակք, յորս մտաք ։
Յանապատ զանձուց ամաց և դարուց եհան ժա-
մանակն 'ի հասանել պահուն զմեծամեծ յեղա-
փոխութիւնս երկնեալս 'ի ծոց յաւիտենից, և
գուշակեալս երբէք երբէք պատգամօք ։ Որ ինչ
դեղ փափկան հարցկին նշանս տուեալ էր նախա-
գեկոյցս կործանման մերոյ՝ կատարեցան. և
Խենոկղոս ըղձապատառում ինձ իսկ զեկոյց յառա-
ջագոյն, զի մօտալուտ հասեալ կայր 'ի վերայ
մեր կատարած բազմաղէտ տեսարանի² ։

Ո՛ի ոմն 'ի հովուաց, երբեմն ստրուկ Աչնկե-
րամեայ զօրավարին սպարտացւոց, ածէր հա-
նապազօր զխաշինս իւր արածել յեզր 'Աեղայ'
որ հոսէ առ ստորոտս Իդրայ լերին³ ։ Այլ սիրէր նա
զմի 'ի մեռեխնուհեաց բնակեալ 'ի զառ 'ի վայր
լերինն, առ որում ազանէր՝ յօրժամ առն նորա
հասանէր պահ 'ի բանակի մերում ։ Ի գիշերի
միում եղեալ մերձիկ աւհագին, զայս յանկարծ
այրն մեռեխնիայցի 'ի տուն իւր. և 'ի սպանանել
կնոջն ընդ յեղակարծ դարձ նորա, սպառնայր զի
մութն և մերձիկ յապահովքին զամբոցն, և չգոյր
վտանգ հինից Թշնամեաց, և ոչ ևս կային 'ի
կարգեալ պահսն, և զի մերձաւորեալ ևս էի, և
հարկ էր ինձ կալ 'ի մահրիձս. Իսկ հովիւն Թա-

¹ Պաւսան. գիրք Դ. գլ. 19. էջ 325 ։
² Նոյն անդ, գլ. 20. էջ 327 ։
³ Նոյն անդ, էջ 329 ։

զուցեալ յերեսաց նորա , լնելով զայս ամենայն՝ անդէն վաղվաղակի զնոյն և պատմեաց զիրսն զօրավարին սպարապետացուց :

Պարտասեալ 'ի վշտաց և յաշխատութենէ՝ մինչդեռ քաղցր 'ի քուն թմրեալ կայր , երևեցաւ նմա Տահապետն Սեբենխոյ զգեցեալ հանդերձ սգոյ պճղնաւոր , քող զգլխով արկեալ , և ասէ ցնա . Յիշե՞ս զու , Արիստոմէն . ահա սանդուղքն սպառնալիցք յեցան զպարսպայոցն . ահա անանկատին սպարապետացի ընդ խարխուլ նեցուկսն մերելակէ . Տահապետն Սպարապայ յաղթանակէ 'ի վերայ իմ , տեսի զնա զի 'ի բարձունս պարսպացն ձայն տայր պատերազմողացն իւրոց ամեհեաց , աջ կարկառէր նոցա , և սահմանէր զիւրաքանչիւր կայեան :

Զարթեաւ ընդոստ 'ի քնոյ սրտաբեկ և մտաթափ , ապշեալ որպէս որ զիւրև շանթք թօթափիցին : Պղձեցի 'ի զէնն , և եհաս որդեակն իմ առ իս . Արդեակ , ո՞ւր իցեն թշնամիքն : — Հանուրան , ասէ , մերձ 'ի պատնէշս . պահպանեալք 'ի բարձրութենէ նոցա , ոչ եւս իշխեն յառաջ խաղալ : Այլ ես ասեմ . Տաա է , անոց զինքն իմ : Այլ յուղղոջ Թեոկղաս թարգմանն զինչն , և կորովին Մանդրիկլաս որդի նորա , և այլք 'ի զօրագլխաց հանդիպեցան՝ յաւելան ընդ մեզ[1] : Այլ ասեմ ցնոսա . Փութացարուք , 'ի զէնն կարգացէք ,

[1] Պաւսան . գիրք Դ . գլ . 21 . էջ 330 :

այդ արարէք մեսենիացւոց, զի ընդ ծառայել տառա-ւոտոռ տեսցեն զզօրավարս իւրեանց 'ի մէջ Թշնամեաց ։

Հասանէ պահն անհրաժեշտ [1]. պողոտայք, տունք և մեհեանք ողողեալք արեամբ, հնչեն ահագին կանչիւք. մեսենիացիք ոչ ևս լսեալ զբարբառ իմ, մոլեգնութեան ևեթ իւրեանց լսեն ։ Կանայք նոցա խրախուսեն զնոսա 'ի մարտ, և ինքեանք բիւր ազգի ազգի մահացու գործեօք զինուորեալ խուժեն 'ի Թշնամիս, և տապաստ անկանէին 'ի վերայ դիականց արանցն իւրեանց և որդւոց ։

Զաւուրս երիս անդադար տեսարանս այս անողորմ 'ի քայլափոխս իւրաքանչիւր և յիւրաքանչիւր վայրկեանս գործէր յաղօտանշոյլ բոց փայլատակմանց, և յանընդհատ դղորդմանն որոտընդոստ շանթից ։ Սպարտացիք բազմագոյնք էին թուով, և հետ զհետէ հասանէին նոցա օգնականք զունդք յառնուլ նոցա պարապ. իսկ մեսենիացիք պատերազմէին անդուլ անդադար, կռուելով միանգամայն ընդ քաղց ընդ ծարաւ ընդ քուն և ընդ սուսերս Թշնամեացն [2] ։

Նոյն երեկս երրորդի աւուրն Թէոկղոս ըղձա-պատառում դարձաւ յիս, և ասէ. Թող ամենայն 'ի բաց, զի՞նչ օգուտ է քեզ յայդքան արիութենէդ և 'ի նահատակութեանց. կորուստ 'ի վերայ հա-

1 Պաւսան. գիրք Դ. գլ. 21. էջ 331 ։
2 Նոյն անդ. էջ 332 ։

ուտալ կայ Մեսենիոյ, զիք սահմանեցին զայն։ Փախիր Արիստոմէն, ապրեցո զանձն քո եւ զհէք բարեկամն մեր. ինձ ընդ աւերակօք հայրենեացն իմոց լաւ իցէ թաղիլ։ Նա զայս ասացեալ՝ մխըա-մուխ եղեւ ՚ի խուռն մարտին, եւ անկաւ ազատ-օրէն լի փառօք։

Դիւրին էր եւ ինձ զհետ նորա տալ զանձն ՚ի մահ. այլ ես ՚ի կամս դիցն ապաստանեալ, զմտաւ ա-ծի՝ զի մարթէր կենօք իմովք զերծանել բազմու-թեն անպարտ սպանելոցն, որ սրոյ ճարակ լինէին թշնամեաց։ Ի մի վայր ժողովեցի զկանայս եւ զմանկունս, եւ շուրջ զնոքօք կացուցի պահ։ Կար-ծեցին թշնամիք զի ՚ի փախուստ խորհէաք, լու-ծին զռազմ, եւ ետուն մեզ անցս՝ գնալ խաղա-ղութեամբ յերկիր արկադացւոց*։ Լուեմ զխոր-հուրդն զոր երկնեցի, դիմել ՚ի Սպարտա եւ առ-նուլ զայն յեղակարծում, մինչ զօրականք նորա աւարաւ Իրայ լերինն մեծամնայինս. եւ ոչ զգուշանա Արիստոկրատայ արքային պատմեալ, որ զաղտ-նեացն մերոց մատն եղեւ առ սպարտացիս։ Հաւա-տադրուժն դատապարտեցաւ յատենի համազ-գեացն, խշխեցեալքն ՚ի նախնէ զահիճք եղեն նո-րա, ընդ տարափով նետից անշնչացաւ, եւ դիակն նորա յերկիր օտար ընկեցեալ, սիւն ՚ի վերայ

* Առումն Իրայ լերին եղեւ յառաջնումն ամի քսաներոր-դի ութերորդի ողիմպիադին, 668 ամաւ ՚ն. Ք.։ (Պաւսան. գիրք Դ. գլ. 23. էջ 336։ Քորսինի տարեգր. ատտիկ. հտ. 3. էջ 46։ Փրէրէ Ջատա-գով. ժամանակագր. էջ 174։)

նորա կանգնեցաւ վկայ նախատանաց նորա և պատուհասին [1] ։

Անակնկալ հարուածովն համարձակ յայտնեցան բախտին կամք․ ոչ ևս ժամանակ էր ողոքելոյ զնա, այլ մենամարտելոյ ինձ ընդ նմա, և խոնարհելոյ ընդ հարուածովք նորա ։ Հեղի արտասուս 'ի վերայ մեսենիացւոց՝ որք ոչ կարացին գալ ընդ իս, և ոչ լուայ արտասուաց եկելոցն՝ որք 'ի տար աշխարհ կամէին անձել զիս [2] ։ Բանզի խոստանային արկադացիք բաժանել ընդ նոսա զերկիր իւրեանց [3] ։ Հրաժարեցի յամենայն պարգևաց, զի մի 'ի խառնել ընդ բազմամարդ ազգին՝ կորիցէ անունն հաւատարիմ զինուորակցացն իմոց, և յիշատակ աղետիցն զոր կրեցին ։ Այլ ետու նոցա զորդեակն իմ, զմիւս այլ զիս․ և առաջնորդեաւք 'ի նմանէ չոգան 'ի Սիկիլիա, ուր կացցեն աւանդ մինչև ցօրն վրէժխնդրութե [4] * ։

Այս յետ դառնակսկիծ բաժանմանն՝ ազատ յամենայն երկիւղէ, 'ի խնդիր թշնամեաց սպարտացւոց շրջեցայ ընդ ազգս մերձաւորս ։ Ի մտի եդեալ էր իմ գնալ ապա յԱսիա, և զԼիւդացիս և զՄարս զազգս հզօրս շարժել 'ի գութ ընդ աղէտս մեր [5] ։ Այլ օրհաս մահուան կանխեալ 'ի

[1] Պողիբ. գիրք Դ. էջ 301 ։ Պաւսան. գիրք Դ. գլ. 22. էջ 335 ։

[2] Պաւսան. անդ, գլ. 23. էջ 335 ։

[3] Նոյն անդ, գլ. 22. էջ 333։

[4] Նոյն անդ, գլ. 23. էջ 335 և 336 ։

* Ցեակոյս մասենիս 'ի տեղեկութիւնս. թիւ ԺԸ ։

[5] Պաւսան. անդ, գլ. 24. էջ 338 ։

վերայ իմ 'ի Հռոմայ, ապրել զխորհուրդս՝ որ կերպարանափոխ արդեօք առնէին զՊետրոսեանս, ձգեալ ածեալ անդր զազգսն զայնոսիկ:

Նա զայս ասացեալ՝ բարեաց զիւցազնն, և էջ 'ի գիշեր շիրմին. և 'ի վաղիւ անդր մեկնեցաւ անտի գնալ 'ի Լեբիա:

ՈՂՋՈՅՆ

Յերրորդ պատերազմին Մանանիայեցւոց*:

ՊԻԱՌՆ է ինձ և դժոխքմեր յիշատակ հայրենեաց. դառն իբրև զօշինդր, և հաստ իբրև ըղձաւր մայր սուսերի. ոչ զի և զքաջանաց և վտանգաց առնել զիս անզգայ: Այլ այսպիսեաց նախ քան զծագել արեգականն, թափառեալ շրջէի ընդ այգն 'ի դաշտին տարածեալ 'ի Ճեմ, և զով աչազգեացն ոչ եւս բերկրէի զգացուածս իմ: Այլ ահա առաւօտունք երկու վիրթխարկը յարձակեցան 'ի մերձակայ անտառէն, և տեսիլ նոցա ոչ զարհուրեցոյց զիս. ոչ լինէ թշնամանեցի զնոսա, և նոքա մեկնեալ 'ի բաց գնացին: Նախաստրոյն սպասաւորացիք, զինչ չար արարին ձեզ հայքն մեր: Տերեալք Արայ ընդին՝ բաշխեցէք նոցա պատիժս պատուհասից, և արքեալք յաղթութեան՝ կամեցայք ընդ թշուառութիւն ամենեցուն 'ի բերկրանս ձեր:

* Սկիզբն պատերազմին եղև յամին 484 նորին Յուստիա- 484 ամաւ Ն. Ք. և վախճանն նոյն թուին:

Արիստոմենէս բարեբաստագոյն եւս մեզ յոյս․ այլ ենէր իցէ մեզ չզգալ աղէտիցն որ պատահեցան մեզ, և որ հասին 'ի վերայ մեր ։ Երանի քեզ Արիստոմենէս, որ ոչ ականատես եղեր չարեաց․ դու 'ի քարշ ոչ տեսեր ածեալ զմեսսենիացիս որպէս զյանցաւորս 'ի մահ, և վաճառեալս զնոսա որպէս զխաշինս անարգս ¹ ։ Դու ոչ տեսեր զաղէտս զաւակի նոցա որք ընդ դարս երկուս ոչ այլ ինչ թողին որդւոց իւրեանց 'ի ժառանգութիւն, բայց զհայրենի նախատինսն ² ։ Հանգիր խաղաղութեամբ 'ի շիրմիդ, սուրբդ վեհագունին 'ի մարդիկ, և ներեա ինձ աւանդել յետնոց զվերջին ոճիրս սպարտացւոց ։

Դատաւորք նոցա, թշնամիք երկնի և երկրի, մատնեին 'ի մահ զաղաչաւորս կորզեալ 'ի մեհենէ Պոսիդոնի ³ ։ Աստուածն ծանրապատուէն հարկանէ երկրաժանեաւն զծովեզերս Լակոնիոյ․ սասանի երկիր, անդունդք պատառին, և 'ի զառհաւանգէն Տայգետայ լերին 'ի հովիտն տարապարհի․ կործանի Սպարտա 'ի հիմանց՝ 'ի համակործանն աւերածէն հնգեակ եւեթ տունք ապրեալ, և առաւել քան զերկուս բիւրս մարդկան ընդ աւերակօքն կորնչին ⁴ ։ Ահաւասիկ նշան ազատու-

1 Եղիան. զան. պատմ. գիրք Զ. գլ. 1։
2 Պաւսան. գիրք Դ. գլ. 24. էջ 338։
3 Արիստոփ. յԱքառն. տող 509։ Պաւսան. անդ։ Սուիդ. 'ի բառն Ταίναρ.
4 Դիոդ. գիրք ԺԱ. էջ 48։ Կիկեր. յղ. հմայ. գիրք Ա. գլ. 50. հա. 3. էջ 41։ Պլին. գիրք Բ. գլ. 79. հա. 1. էջ 111։

թեան մերոյ, զոչէին առ հասարակ ամենայն ատըր-կաց: Եկեղայե՛ղ յանդգնութիւն. դիմեն խառն 'ի խուռն անաստուածորդ 'ի Տակերդեմն. Եւ յերեսաց փնդի միոջ սպառնացեալ, զոր Մ՛րքերդանայ արքայի զումարեալ էր, կամէին որպէս հողմք արձակեալք յԱչւողեայ՝ յերեսաց ծովապետին Պիսիդեայ: Այլ 'ի հասանել աթենացւոց եւ այլոց ազգաց յօգնութիւն սպարտացւոց[1], ցրուէին բազմագոյնք 'ի նոցանէ որպէս 'ի սկզբնածագ Ճառագայթից արեգական ստուերք թանձունք ամբարձեալք 'ի լերէ: Այլ ոչ 'ի տարապարտուց զէնն առին մեսենիացիքն. երկարժամանակեայ տոկութիւն ոչ ապականեաց զարիւնն ազնուական յերակունս նոցա. Եւ որպէս արծուի ըմբըռնեալ 'ի վարուն 'ի կողել զկապարանոն խոյանայ բարձրաթռիչ, այսպէս ամբոխեան նոքա 'ի լեառն յԻթոմ[2], եւ անդր վանէին զօրութեամբ զխոտ առ խոտ յարձակմանս սպարտացւոց, մինչեւ ստիպել նոցա կոչել զնիզակակիցս իւրեանց յօգնութիւն:

Ընդ հասին աթենացիք քաջավարժք 'ի պաշարումն, եւ Կիմոն առաջնորդ նոցա: Կիմոն զոր բազում անգամ յաղթութիւն անթառամ սարդիւ պսակեաց. Ճանաչեն փառաց նորա եւ քաջու-

1 Դիոդ. գիրք ԺԱ. էջ 48: Թուկիդ. գիրք Ա. գլ. 101 եւ 128: Պաւսան. գիրք Դ. էջ 233. գիրք Դ. էջ 339: Պլուտ. 'ի Կիմոն, հա. 1. էջ 489: Եղիան. զան. պատմ. գիրք Զ. գլ. 7: Պօլիէն. 'ի մարթանսն, գիրք Ա. գլ. 41:

2 Պաւսան. գիրք Դ. գլ. 24. էջ 339:

թիւն զօրացն արհաւիրս արկանէին 'ի սիրտս պաշարելոցն, և պակուցանէին 'ի սպառնալիս։ Յանդուգն կասկած մատնութեան եղև զատանէն մեծէ. և հրաւիրեալ սնոտի պատճառանօք ածել զզօրսն յԱտտիկէ, չու առնէ։ Տարաձայնութիւն որ շուրջ զբանականաւն ճախր առեալ սաւառնէր, զկայ առնու դիտելով յանձկութիւնսն՝ որ ահա անկանէին 'ի վերայ Հելլադայ[1]. և շարժեալ զգլուխ իւր օձապատ, արձակէ ղօղանջ խնդութեան և բարբառ ահարկու.

Սպարտաս Սպարտաս, որ թշնամանս ընդ վաստակոց մինչ հասուցանես, հայեաց 'ի պատերազմողդ որ դիմեալ գնան 'ի հայրենիսն, նախատինս 'ի ճակատ իւրեանց բերելով, և մխիչս 'ի սիրտ։ Գործ էին որ ընդ քոյդ գումարեալ բեկին զՊարսիս յառաջ քան զսակաւ մի 'ի Պղատիէս։ Փոխանակ զի դոքա քեզ 'ի թիկունս դիմէին, և զու ծածկեցեր զնոսա նախատանօք, ոչ ևս տեսցես զդոսա ընդ բարեկամս քո՝ այլ ընդ թշնամիս։ Աթէնք կարեվէր լեալ յամբարհաւաճութիւն իւր, զինուորեսցէ ընդդէմ քո զազգս[2]*. և զու գնոսա ընդդէմ նորա յարուսցես։ Օրութիւն քո և նորայն բաղխեսցին ընդ իրեարս անդադար, որպէս հողմք սաստկաշունչք որ խորտակին յամպս։ Պատերազմ զպատերազմ դրդեսցէ, և

[1] Թուկիդ. գիրք Ա. գլ. 101։ Դիոդ. գիրք ԺԱ։
[2] Թուկիդ. անդ, գլ. 102։

* Ի պատերազմն պեղոպոննեսական անուանի է։

զուր մի՛ լիցի զննոյդ՝ բայց որչափ կատարողանայց հան-գիստ ։ Ընդ ժամուս ուժոյոյ ընդ Ամենեանեանն եր-թայց ես առաջի բանակաց . բոլորածաւալ ջահիւք մերովք տեղացուցուք 'ի վերայ ձեր զպարծութիւն , զսով , զբռնութիւն , զղրժանս և զամենայն իսկ զհարուածս ամենասաստ բարկութեան և զմոլեգնու-թեան մարդկան ։ Խնդրեցից զվրէժ զնախնի առաքի-նութեանց քոց , և ցնծացայց ընդ պարտութիւնս քո և ընդ յաղթութիւնս . բարձրացուցից և խոնարհեցուցից զսուրս քո ։ Տեսից զքեզ առ ոտս նորա 'ի հող խոնարհեալ . խնդրեսցես 'ի նմանէ զխաղաղութիւն , և խաղաղութիւն քեզ մի՛ տացի [1] ։ Նուաճեսցես զամուրս նորա , առ ոտն կոխեսցես զնա , և 'ի միասին անկջիք երկաքանչիւր որպէս վագերք որ զմիմեանս պատառեալ՝ առ միմեամբք սատակեսցիք ։ Այս այնպէս հարթայատակ զքեզ արարից , զի առ 'ի նշմարել զհետս քո՝ հարկ լիցի անցաւորաց խոնարհել ։

Այս ահա քեզ յայտ յանդիմանն առհաւատ-չեայ ճշմարտութեան բանից իմոց ։ Այլ գիտես դու զԱթէնս 'ի տասնեւերորդում ամի պաշարմանն , և խորհեցին բնաջինջ առնել զմեանենեացն . այլ դիք որ պահեին զնա առ 'ի վաղվաղել զկործա-նումն քո , խափանեսցեն զարիւնաուշտ խորհուր-դըս քո [2] ։ Շնորհեսցես նոցա զկեանսն , բայց

[1] Թուկիդ . գիրք Դ . գլ . 41 ։ Արիստոփ . վասն խաղա-ղութեան , տող 637 և 664 ։ Պղուտարք . անդ ։

[2] Պաւսան . գիրք Դ . գլ . 24 . էջ 339 ։

միայն զի 'ի տաք աշխարհս բնակեցելն․ և որ կո֊խեսցէ ոք 'ի նոցանէ անդրէն 'ի հայրենիսն՝ արկ֊ցի 'ի շղթայս¹ ։ Պալով չափ բանիս այսորիկ, յի֊շեսջիր զայլսն և սարսեսջիր ։

Օ այսուհետև խօսեցաւ այսն չար, որոյ իշխանու֊թիւն յերկնից մինչև 'ի սանդարամետս դժոխոց․ և վաղ ընդ փոյթ մեկնեցաք յԻթոմէ ։ Էի ես յայնժամ դեռ ևս մանուկ մատաղ․ և պատկեր հաղաշտուաց փախստեանս այսորիկ տպաւորեցաւ 'ի միտս իմ անջնջելի, և յաչս իմ են հանապազ առակայք և ողորմելի տեսարանքն զորս տեսի․ զազգ մի ողջոյն վտարանդի 'ի հայրենի բնակու֊թենէն², պանդխտեալ թափառական առ ազգս պակուցեալս ընդ աղէտս նորա՝ ոչ իշխելով սփո֊փել զնա, զօրականս վերակացս՝ որք զծնօղս ի֊րեանց 'ի վերայ ուսոց բարձեալ բերեին, կանայս բազմեալս 'ի գետնի ոգեսպառ զլուեալս 'ի կե֊նաց՝ հանդերձ որդեկօքն 'ի գիրկս իւրեանց․ աստ արտասուք և հեծութիւնք և սրտառուչ յուսա֊հատութեան բարբառք, անդ կսկիծ անհնարինք և լռութիւն քստմնելի ։ Այլ թէ անողորմութեանն 'ի սարսռացուցանող առաջի կայր նկարագրել զպատ֊կերքս զայսոսիկ, առ սուղ ինչ հեռոյ զթութեան սրտի անկանէր գրիչն 'ի մատանց ։

Ես յետ երկայն և տաժանաւոր ուղեգնացու֊թեան, վարեցաք 'ի Նաւպակտոն քաղաք՝ կա֊

¹ Թուկիդ. գիրք Ա. գլ. 103։
² Պոլիբ. պատմ. գիրք Դ. էջ 300 ։

ռուցեալ յեզր Կրիսայ ծովուն: Աթենացիք տի-րեցին անդ, և ետուն մեզ զայն 'ի բնակութիւն[1]. և մեք բազում արութիւնս ընդդէմ թշնամեաց քաջի ազգին գործեցաք: Յամ իսկ 'ի պեղոպոնե-սական մարտին Ջոկատիւ միով 'ի ծովեզերս Մե-սենիոյ հասեալ՝ ասպատակեցի զերկիրն, և ար-տասուս զայրագինս քամեցի յաչաց անագորոյն հալածչացն մերոց[2]: Այլ դեռ դառնութիւն ընդ-շնորհս իւրեանց խառնեին միշտ, և բազում այն է զի յոյս որոգայթ 'ի նոցանէ լարի թշուառաց: Մինչդեռ սկսանէաք վայելել 'ի խաղաղութե, և ահա տարմից նաւացն սպարտացւոց յաղթա-նակեաց 'ի վերայ աթենական նաւատորմին, և եկն թշնամանել զմեզ 'ի Նաւպակտոն: Թափա-ռեցաք 'ի նաւս մեր, ոչ զայլ ոք 'ի դից երկուս-տեք յօգնութիւն կարդալով՝ բայց զվրէժխնդրու-թիւն: Յաղթութիւն երբեք ուրեք ոչ ար-բեցաւ յայնքան զազիր արենէ և յայնքանեաց անպարտ արեանց: Այլ զինչ զօրէ անվեհեր քաջութիւն ընդդէմ անչափ բազմութե: Պար-տեալք հալածեցաք յԱքայիայ որպէս երբեմն 'ի Պեղոպոնեսայ. և բազմագոյնք զերծան յԻտա-լիա և 'ի Սիկիլիա: Այլք հազար այր յիս ապաւի-նեցան[3], և առի զնոսա ընդ մերովս և ընդ

[1] Թուկիդ. գիրք Ա. գլ. 103: Պաւսան. գիրք Դ. գլ. 25. էջ 339:

[2] Թուկիդ. գիրք Դ. գլ. 41: Պաւսան. գիրք Դ. գլ. 26. էջ 342:

[3] Պաւսան. անդ: Դիոդ. գիրք ԺԴ. էջ 263:

ժայռս 'ի ծովեզր այսր, որ 'ի նաւացն եղերերգութեանց մերոց հնչեսցէ յաւէրժ ։

ԱՅՍՊԷՍ կատարեցան երջանիկ նուագք աղքայոյն։ Այլ ընկեց պատուանօքն զքնարն . իսկ հայր նորա Քսենոկղէս յաւելու և զայն՝ զի սակաւուք մի յետոյ քան զհասանելն իւրեանց 'ի Սպարտա, 'ի յառաջնել խռովութեան 'ի Կիւրենէ մայրաքաղաքն աշխարհին՝ յաւելան մեռանելեացն ընդ աղքատութեան, և բազմաբազմոյնք 'ի նոցանէ անկան 'ի ձեռակատամարտի ուրեք¹ ։ Ահարց ապա ցԱկեղեմոս . Այլ զու-որպէս եկիր այսր, և զի՞նչ անցք խռովութեանն եղեն ։ Այլ նա ասէ .

Թեբացիք առաջնորդութ. Եպամինոնդայ հարին զսպարտացիս 'ի Լեւկտրա յաշխարհին Բիովտացւոց* ։ Այլ առ 'ի նկուն առնել զիշխանութիւն նոցա մինչև 'ի սպառ, որպէս զի մի ևս կարասցեն 'ի տար աշխարհ ածել պատերազմ, խորհեցան այլն մեծ կացուցանել մերձ առ նոսա թշնամի զոք՝ որոյ ոխք ծանունք մթերեալ կայցեն 'ի սրտին . և առաքեաց հրաւիրել յամենայն կողմանց զՄեսսենիացիս, դառնալ 'ի յարկս իւրեանց հայրենի² ։ Դիմեցաք 'ի հրաւէրն . և տեսի ես զնա 'ի գլուխ ահեղ բանակին, շուրջ պատեալ 'ի ճարտարապետաց որ զծա-

¹ Դիոդ. գիրք ԺԴ. էջ 263. 26. էջ 343 ։ Պլուտ. յԱգես. Հտ. 1. էջ 615 ։
* Ն. Ք. 371 ամբ ։
² Պաւսան. գիրք Ի. ԴԼ.

գրեհին զօրինակ քաղաքին 'ի սաստիկ լերին : Այլ ահա զօրավար արգիացւոց եկեալ մատոյց նման սափոր պղնձի, զոր յայտնութեամբ տեսլեան հանեալ էր յերկրէ, և 'ի վերայ նորա բաղեղն և մրտենի խառնէին յիւրեանս զաղկաղկ ոստս իւրեանց : Այլ բացեալ զայն Եպամինոնդայ, եգիտ 'ի նմա թիթղանս կապարեայս գալարեալս իբրև զմագաղաթ, յորս 'ի վաղնջուց ժամանակաց դրոշմեալ կային արարողութիւնք պաշտամանց դիցն Դեմետրեայ և Պերսեփոնեայ : Այլ գիտաց զի յարձան անդր յեցեալ կայր բախտ Մեսսենիոյ, և զի Արիստոմենի թաղեալ էր զայն յամայի ուրեք վայրի Իթոմեայ լերին[1] : Գիւտքս այս և համահամայիցն աւետաւոր գուշակութիւնք յաւելլին զդրոշմ կրօնից յառաջարկութ̄ն նորա, որում հզօր զօրավիգն էին և շուրջ բնակեալ ազգք միշտ ոսոխք Սպարտայ :

Յաւուր նուիրանաց քաղաքին 'ի գումարել զօրացն առ հասարակ, արկադացիք մատուցին զոհս, և Թեբացիք և արգիացիք և Մեսսենիացիք ուրոյն զպաշտամունս կատարեցին առ դիս խնամակալս իւրեանց. և ամենեքին միանգամայն կարդացին առ դիւցազունս աշխարհին, պաղատելով գալ մնանել նոցա 'ի ժառանգութիւն բնակութեան իւրեանց[2] : Յանուանց որ ցանկալի էին ազգին, Արիստոմենեայն շարժեաց

[1] Պաւսան. գիրք Դ. գլ. 26. էջ 343 :
[2] Նոյն անդ, գլ. 27. էջ 345 :

'ի կայթս ցնծութեան զամենեսին. և 'ի զոհս և 'ի պաղատանս էանց օրն առաջին: Ի վաղիւ անդր 'ի ձայն սրնգի սկսան արկանել զհիմունս պարըսպացն և զմեհենաց և զտանց. և 'ի սուղ ժամանակի կատարեցաւ շինուած քաղաքին, և անուանեցաւ քաղաքն Մեսենէ:

Եւ յառաջ ածեալ զբանսն Կեղենոսի, ասէ. Եւ այլ ազգք վտարանդի 'ի հայրենեացն թափառեցան ընդ երկար, այլ ոչ ոք կրեաց աքսորանս երկարատեւ որպէս զմերն. սակայն մեք զբարբառ և զսովորութիւնս նախնեացն մերոց անփոփոխ կալաք[1]. և իշխեմ իսկ ասել, զի արկածք բարեգործս ևս զմեզ յարդարեցին: Սպարտացւոց զոմանս 'ի քաղաքաց մերոց տուեալ էր օտարաց[2]. և սոքա 'ի դառնալն մերում խնդրէին 'ի մէնջ գթութիւն. և թերևս էին նոցա իրաւունք խնդրելոյ զայն. այլ եթէ չէին իսկ, զիա՞րդ էր չգթալ 'ի տառապեալս:

Յայնժամ Քսենոկղի յոգւոց հանեալ, ասէ. Աւա՛ղ. դոքին իսկ գթած և մարդասէր բարոյիւք ածաք 'ի վերայ մեր կորուստ: Հարքն մեր սահմանակիցք բնակեալ Սպարտայ և Արկադիոյ, ոչ վասն այլ ինչ իրաց ընկճեցան ընդ քինու սպարտացւոց, բայց զի անփոյթ առարին զբարեկամութեանն արկադացւոց[3]. անզգուշանային արդեօք, զի որոց խաղաղութեան ցանկան՝ ոչ ինչ նուազ

1 Պաւսան. գիրք Դ. գլ. 27. էջ 346:

2 Նոյնանգ. գլ. 24. էջ 338:

3 Պօլիբ. գիրք Դ. էջ 300:

խնդրի 'ի նոցանէ ժրութիւն քան 'ի ցանկացելոցն աշխարհականութեան ։

Խնդիրս բազում արարի մեսենիացւոց զզարգաւաճութենէ զգիտութեանց և արուեստից, և գիտացի զի չէր լեալ նոցա ժամանակ պարապելոյ յայնս. խնդրեցի զկարգաց տեսչութեան նոցա, և չև ես հաստատուն ինչ կալեալ էր նոցա կարգ. հարցի զկարգաց որ էին նոցա յաւուրս պատերազմաց իւրեանց ընդ սպարտացիս, և էր Թագաւորութիւն խառն ընդ սակաւապետութեան[1], և իբր աշխարհին 'ի ժողով ամենայն ազգին սահմանէին[2]. հետազօտեցի զնախնեաց արքունի զարմին' յորմէ վերջին Թագաւոր նոցա եկաց, և իմացայ զայն 'ի Կրեսփոնէ' որ ընդ այլ հերակլեանսն եկն 'ի Պեղոպոնես ութսուն ամաւ յետոյ քան զտրովականն պատերազմն ։ Մեսենիա անկաւ նմա բաժին, և ած նա կնութիւ զՄերոպէ դուստր արքային արկադացւոց, և դաւեցաւ ամենայն որդւովք իւրովք գրեթէ առ հասարակ 'ի գլխաւորաց դրանն վասն կարի ժողովրդասէր բարուցն[3] ։ Սրբազանեցին վերջք զյիշատակ նորա, զդաւողաց նորա յիշատակ դատապարտեալ յանէծս ։

Չու արարաք 'ի Մեսենեայ, և անցեալք ընդ Պամիս, շրջեցաք ընդ արևելեան ծովեզր զաւա-

1 Պոլիբ. գիրք Դ. էջ 300 ։ Պաւսան. գիրք Դ. գլ. 24. էջ 338 ։

2 Պաւսան. անդ, գլ. 6. էջ 294 ։

3 Նոյն անդ, գլ. 3. էջ 286 ։

ախն ։ Աստանօր որպէս և ամենայն ուրեք յԱշ-լաղա , զդիցախառն ազգաբանութիւնս բնակչացն է լսել յամենայն քայլափոխս ։ Չիք քաղաք կամ գետ կամ աղբիւր կամ անտառ կամ լեառն , որ ոչ զյաւերժահարսին ուրուք կրիցէ զանուն , կամ զդիւցազին , կամ զգերահռչակելոց ումանց արանց՝ որ առ ժամանակօք իւրեանց ոչ այնպէս հռչակաւորք էին ։

Ի յոլով ցեղից որք երբեմն իշխէին 'ի Մեսենիա պետութիւնք սակաւաւորք , Ասկղեպեայն մեծարի յոյժ յամենեցունց ։ ՅԱբիա քաղաք տեսաք զտաճար նորա[1] , 'ի Գերենիա զշիրիմ Մաքաւոնի որդւոյ նորա[2] , և 'ի Փերէ զմեհեան Թոռանց զՆիկոմաքեայ և զԳորգասայ[3] , որ հանապազ զոհիւք և նուիրօք պաշտէին 'ի խըռնելոց անդր ազգի ազգի ախտաժետաց ։

Մինչ դեռ զաքանչելիս յոլովս բժշկութեանց պատմէին մեզ գործեալ 'ի տեղւոջն , մի 'ի տառապելոց ախտաժետաց յոգնիս ապաստան՝ ասէր. Ադաստին 'ի ծնէ իմմէ յաղբերակն Պամիս գետոյ չոգան ծնողք իմ բնակել , ուր զջուրս գետոյն ասեն լինել առողջարարս ախտակրելոց մանկանց[4] . անցուցի զկեանս իմ առ դիս բարերարս՝ որ բաշխեն բժշկութիւնս մահացուաց , մերթ 'ի մեհեան Ապողոնի մերձ 'ի Կորոնեա քաղաք[5] ;

1 Պաւսան. գիրք Դ. գլ. էջ 353 ։
30. էջ 353 ։
2 Նոյն անդ, գլ. 3. էջ 284 ։
3 Նոյն անդ, էջ 287. գլ. 30.
4 Նոյն անդ, գլ. 31. էջ 356 ;
5 Նոյն անդ, գլ. 34. էջ 365 ։

և մերթ ՚ի վայրս յայտնիկ, կատարելով զամենայն օրհնաւոր պաշտամունս, ոչ ինչ խնայեալ ՚ի զոհից և ՚ի նուիրաց. և ամենեքին քաջայոյս առնէին զիս ՚ի բժշկութիւն, և ես մեռանիմ աւասիկ: Այս ՚ի վաղիւ անդր մեռանէր:

ԳԼՈՒԽ ԽԲ.

Ուղևորել Անաքարսեայ ՚ի Լակոնիա:

Ի ՓԵՐԵԱՑ ելաք ՚ի նաւ, որ երթայր ՚ի Սկանդեայ նաւահանգիստն ՚ի Կիթերա կղզեակ ՚ի ծայր Լակոնիոյ: Անդր յաճախեն արկանել խարիսխ նաւք վաճառականք եկեալք յԵգիպտոսէ և յԱփրիկեայ, և ընդ այն է ճանապարհ ՚ի քաղաքն՝ ուր պահնակք սպարտացիք նստին. և ամի ամի դատաւոր ՚ի Սպարտայ ՚ի կղզի անդր արձակի ՚ի տեսչութիւն[1]:

Մանկահասակք դեռ ևս էաք, և ընդ հասակակից մանկտին ուղեկից մեր ընտելացեալք, ՚ի լուր անուանն Կիթերայ խորհուրդք զուարթք ՚ի միտս մեր զարթնուին: Անդ ՚ի սկզբանց ժամանակաց և այսր պահի մեծաշուք հնագոյնն և գերարգոյ քան զամենայն մեհեանս Աստղկան[2]. զի անդ նախ երևեցաւ նա մահկանացուաց[3], և տարփանք

1 Թուկիդ. գիրք Դ. գլ. 53: Սկիւլաքս. Կարիանդ. յաշխարհագիրս, հա. 1. էջ 172:

2 Պաւսան. գիրք Գ. գլ. 23: էջ 269:

3 Եսիոդ. Ծննդաբան. գից, տող 198:

ընդ նմա ժառանգեցին զերկիրն զայն մշտափթիթ մինչև ցայժմ պճնեալ ծաղկամբք՝ որ ’ի ձեռն ոտին նորա ծաղկեցին ։ Այնմ հետէ ծանուցան անդ հրապոյրք ողջք շրթանց և մեղմիկ ժպտելոյն[1]. և ասէաք ցմիմեանս. Աւա՛բէ, ’ի բարեբաստիկ գաւառի աստ կցորդել ընդ միմեանս քանի՜ տարփալի լիցէ սրտից, և իբր արդեօք բնակիչք երկրիս յառատութեան և ’ի բարեկենդանութեան անցուցանիցեն զաւուրս իւրեանց ։

Իսկ նաւապետն որ կայր զարմացեալ և լսէր մեզ, ասէ հանդարտութբ. Թուզ է կերակուր նոցա և պանիր եփեալ. է նոցա և գինի և մեղր[2]. այլ առանց քրտանց երեսաց նոցա ոչ ինչ բերէ երկիրն, զի անջրդի է և բազմաժայռ[3]։ Պարձեալ և այնպէս արծաթասէրք են[4], զի և ժպիտ մեղմ ոչ ելանէ նոցա ։ Տեսեալ իսկ է իմ զպաղեմի մեհեան նոցա կառուցեալ ’ի փիւնիկեցւոց Աստղկան տիկնոջ երկնից[5]. դրօշեալ նորա բնաւ իսկ և անազդեցող է ընձից, պարածածկեալ զինուք յոտից մինչև ցգլուխ[6]։ Ասացաւ և ինձ որպէս ձեզդ զնմանէ, զի յելանելն ’ի ծովէ ’ի կղզի անդր լիցէ իջեալ, այլ լուայ և ես զի անտի վաղ ’ի Կիթերոս խոյս տուեալ իցէ[7]։

1 Եսիոդ. Ծննդաբան. գլխ, տող 198 և 205 ։

2 Հերակղ. պոնտ. յղ. քաղաքական. նախնի Ցուն. հա. 6. էջ 2830 ։

3 Սփոն. Ճանապարհ. հա. 1. էջ 97 ։ Ուէլլէր, գիրք Ա. էջ 47 ։

4 Հերակղ. անդ ։

5 Հերոդ. գիրք Ա. գլ. 105 ։

6 Պաւսան. գիրք Գ. գլ. 23. էջ 269 ։

7 Եսիոդ. անդ, տող 193 ։

Ի բանից սորա 'ի միտ առաք, զի փիւնիկեցւոց անցեալ ընդ ծով, և 'ի նաւահանգիստ անդր Ականդեայ մատուցեալ, ածին անդր զպաշտօն Աստղկան, ուստի տարածեցաւ յաշխարհս մերձաւորս. և աստի առասպելքն անտեղիք ծննդեան Աստղկանն, և ելից նորա յալեաց ծովու, և զալստեանն 'ի Կիւթերա:

Այլ եւս կամեցեալ 'ի կղզի անդր իջանել, աղաչեցաք զնաւապետն թողուլ զմեզ 'ի Տենարոն քաղաք 'ի Լակոնիա, որոյ է ընդարձակ նաւահանգիստ՝ հանգրուան նաւաց բազմաց[1], առ համանուն հրուանդանաւն՝ յորոյ վերայ կառուցեալ կայ մեհեան, որպէս յամենայն տարաւանդս երևելիս Լակոնայ, 'ի յորդոր կոծնից նաւաստեաց՝ որք յաճախեն առնել նոցա ուխտս և նուէրս: Մեհեանն որ անդ 'ի Տենարոն՝ նուիրեալ է Պոսիդոնի, և շուրջ զնովաւ անտառ սուրբ՝ ապաստան յանցաւորաց[2]. 'ի մուտս անդ կանգնեալ կայ պատկեր աստուածոյն[3], և 'ի խորշն քարայր լայնատարր անուանի յոյժ առ Յոյնս:

Համարին խշտի լեալ զայն 'ի սկզբանէ վիշապ օձի՝ զոր Հերակղէս հարեալ սպան, և թէ այլ ընդ այլոց կարծիցի որջ չարաժամնւոյ շանն Պղու-

1 Թուկիդ. գիրք Ը. գլ. 19:

2 Ստեփ. 'ի բառն Ταιγ. Պարապ. Ապողոն. արգոնաւ. գիրք Ա. տող 102:

3 Թուկիդ. գիրք Ա. գլ. 128 և 133:

4 Պաւսան. գիրք Գ. գլ. 25. էջ 275:

տոհմի՝ որոց մնացու էին խաժամուժք[1]: Այլ այս կանխակալ կարծեացն 'ի ձայն գայր՝ թէ քարայրն այն 'ի նսեմաստուեր սահմանս սանդարամետաց անցիցէ ընդ գետնափոր շաւիղս, զորոց անհնարին եղեւ մեզ գտանել զելսն հետազօտելով[2]:

Ասէ ցմեզ քուրմն. Ահաւասիկ մի 'ի մտիցն դժոխոց[3]. են եւ այլք ուրեք ուրեք, որպէս յԵր-միոն քաղաք յԱրգողիս[4], յԱրակլիա 'ի Պոնտոս[5], յԱոռնոն յԵպիրոս[6], եւ 'ի Կումա մերձ 'ի Նէա-պօլիս. որք թէպէտ եւ ամենեքեան վիճեալ ախոյին զրաւել յիւրեանս զպարծանսն, այլ ընդ քար-այրս ընդ այս անցուցեալ Հերակղէս զԿերբեր՝ եւ Որփէոս զկին իւր:

Պատմեցից ինչ ձեզ ցանկալի եւս արդեօք քան զաւանդութիւնս զայսոսիկ:

Է զօրութիւն ինչ 'ի քարայրս յայս, զոր եւ այլք բազումք 'ի քաղաքաց ժառանգեն[7]. զի դիւթք աստանօր կոչէին զստուերս խաղաղաւէտս մեռելոց, եւ հալածէին 'ի սանդարամետս դժոխոց զխռովարարս կենդանեաց, սրբազան պաշտա-մամբք զսքանչելիսն գործեալ: Ուսուցանեն

1 Եկատ. մելես. առ Գաւ-սանեայ, գիրք Գ. գլ. 25. էջ 375:
2 Գաւսան. անդ:
3 Գինդ. պիւթ. 4 տող 79: Գարաալ. անդ: Եւստաթ. յԵ-զիակ. հա. 1. էջ 286 և 287: Մելա, գիրք Բ. գլ. 3:
4 Ստրաբ. գիրք Ը. էջ 373:
5 Քսենոփ. արշաւ. Կիւր. գիրք Զ. էջ 375: Դիոդ. գիրք ԺԴ. էջ 261:
6 Հերոդոտ. գիրք Ե. գլ. 92: Գաւսան. գիրք Թ. գլ. 30. էջ 769:
7 Եւրիպ. 'ի Հերակղ. տող 23: Ստրաբ. գիրք Ը. էջ 363.
8 Գաւսան. գիրք Գ. գլ. 17. էջ 252:

պոհս, հեղուն նուէրս քաւութեան, առնեն պաղատանս, ընթեռնուն ձևս խորհրդաւորս բանից, և զգիշերն 'ի գլուխ հանեն 'ի մեհենին, մինչև ստուերքն երևութանան նոցա 'ի տեսլեան անվրիպելի, որպէս պատմեն[1]:

Այլ փութան ողոքել մանաւանդ զհոգիս սրով կամ դեղով սպանելոցն: Սմին իրի Կաղոնդաս երբեմն պատուիրանաւ դեղփական հարցկին եկն այր հաշտ առնել զպայրագին ստուերս Արքիղոքեայ քերթողի, զոր զրաւեալն էր 'ի կենաց: Ի մօտոյ ևս տաց օրինակ. Պաւսանիաս զօրավար զօրացն Յունաց 'ի Պղատիէս դժնդակ վրիպանօք արկ զդաշոյն 'ի սիրտ Կղէոնիկեայ սիրուհւոյն իւրոյ, և խղճիւ չարեացն տագնապէր հանապազ. տեսանէր զնա յանուրջս, և զամ գիշերս զաղաչագին սպառնալիսն նորա լսէր՝ թէ մնայ քեզ պատուհաս[2]: Չոգաւ նա յԱրակլեա 'ի Պոնտոս, և ածին զնա դիւթք 'ի քարայրն ուր զմեռելահարցութիւնսն առնեն. և երևեցաւ նմա ստուեր Կղէոնիկեայ, և ծանոյց նմա զի 'ի Սպարտա հանդերձեալ էր լինել տանջանաց նորա վախճան: Նոյնհետայն գնաց նա անդր. և դատապարտեալ յատենի, ապաստանեցաւ 'ի տնակ մի, և անդ սովամահ եղև: Հնչեաց ապա համբաւ զի ստուեր նորա հեծէր 'ի սուրբ տեղիս. և կոչեցան իղձք

1 Պղուտ. յղ. մխիթ. հա. 2. էջ 109:

2 Նոյն. յղ. յամր վրէժուց գից, հա. 2 էջ 555. և 'ի Կիմոն, հա. 1. էջ 482:

Մեսաղինայ, և օրինաւոր արարողութեանցն հաշտ առարկին զնա¹ ։ Այս յաւել քուրմն․ Ոչ իւր հաւատի զհրաշս զայսոսիկ պատմեմ․ զի թերևս ոչ կարելով այլ ազգ զարժանի արհաւիրս ազդել առ 'ի զգուշանալոյ 'ի մարդասպանութենէ, իմաստութեամբ հնարեցան զխիղճ չարեացն անել հեծութիւնս ստուերաց՝ որ հալածեն զեղեռնագործս ։

Յայնժամ Փիլոտաս ասէ․ Չգիտեմ թէ մինչև ցոր վայր լաւ իցէ ժողովրդեան յաւելուլ 'ի գիտութիւն, այլ գէթ պարտ է պարապել զնոսա 'ի ծայրայեղ մոլորութենէ ։ Մեսաղացիք յառաջ քան զայս դար առին զդառն փորձ ճշմարտութեանս ։ Բանակեալ կային ընդդէմ փոկկիսացւոց, և ահա թշնամիք 'ի լռալուսին գիշերի յառաջ մատուցին վեց հարիւր այր թաթաւեալս 'ի գաճ ։ Մթանձր էր յոյժ դաւն․ այլ Մեսաղացիք սովորեալ 'ի մանկութենէ 'ի վէպս ճիւաղաց երևելոյ, համարեցան զզօրականն՝ հոգիս իջեալս յերկնից յօգնութիւն փոկկիսացւոց․ և սուղ ինչ դիմամարտեալ, քան խողխողեցան որպէս զոհք ածեալք 'ի սպանդ² ։

Յաւել և քուրմն․ Համգոյն ինձ պատմեանք զնոյն երբեմն և 'ի բանակի մերում գործեցին ։

¹ Պլուտ․ յղ․ յամր վերժուց դից, հա․ 2․ էջ 560 ։ Նոյն 'ի Պարալլ․ Եւրիպ․ յԱգկեստ․ առղ 1128 ։ Պայլ․ պատասխանի առ խնդ․ հա․ 1․ էջ 345 ։

² Երոդոտ․ գիրք Ը․ գլ․ 27 ։ Պաւսան․ գիրք Ժ․ գլ․ 1․ էջ 801 ։ Պոլիեն․ 'ի մարթանան, գիրք Զ․ գլ․ 18 ։

Ի վն̃ զօրք մեր 'ի Մեսենիա, և Թուէր նոցա տեսանել զԿաստոր և զՊողիտևկէս երևեալս 'ի պայծառութեան տօնին որ կատարէր 'ի պաշտօն նոցա: Նոյն էին նոքա մեսենիացիք երկու պայծառացեալք առոյգ հասակաւ և գեղով, որք 'ի գլուխ բանակին երևեալ յերիվարս ահիպարանոցս, նիզակք կազմք 'ի յեցկի, զգեցեալք բաղէնս, և Թիկնոց ծիրանի, և խոյր 'ի գլուխ եդեալ սրաձև՝ աստղ 'ի գագաթան, յար և նման երկոցունց դիւցազանց Դիոսկուրացւոց՝ որպէս դրօշմն առ 'ի պաշտօն: Մտին նոքա, և անկեալ 'ի վերայ զօրացն որ առ ոսս նոցա խոնարհեալ կային՝ արարին ահագին կոտորած, և դարձան խաղաղութեամբ[1]: Բայց դիցն ցասուցեալ ընդ դրժանմն, հեղին զսրտմտութիւն իւրեանց ընդ հուպ 'ի վերայ մեսենիացւոց:

Իսկ ես ասեմ. Բա՛մբէ, առ այս անիրաւս և անկդիտացեալս իբրև զձեզ յո̄մ ոճիրս փառամոլութեան և դրժանք համարիցին ինչ: Պերաշխարհիկ իմն օրէնքդ ձեր Թուէին ինձ, այլ պատերազմունքդ ձեր ընդ մեսենիացիս կեղծ անջնջելի նախատանաց ածեն զձեզ: Բուրմն ասէ. Սալուեալ իցէ քո 'ի հաւատարիմ ումեքէ զհաւաստին. զի ոչ նոր ինչ է պարտելոց զյաղթողս իւրեանց ամբաստանել յանիրաւութիւն: Արդ լուր ինձ վայրիկ մի:

Ի դառնալ զաւակին Հերակլեայ 'ի Պեղո-

1 Պաւսան. գիրք Դ. գլ. 27. էջ 344:

պոնես, Կրեսփոն բռնակալեաց 'ի Մեսենիա[1]. յետ ոչ բազում ժամանակի սպանեալ նա դաւով, և որդիք նորա ապաստանեալք 'ի Սպարտա՝ թողին 'ի մեզ զնմ իրաւունս հայրենի ժառանգութեան: Այս թէպէտ օրինաւոր էր պարգևն հրամանաւ պատասխանւոյ դեղփական հարցկին հաստատեալ[2], այլ մեք ընդ բազում ժամանակս զիշխանութիւն ոչ 'ի գործ արկաք:

Ապա առ թագաւորութեամբն Տելեկլեայ՝ արձակեցաք ըստ սովորութեան զպար օրիորդաց ընդ նմա, տանել նուէրս 'ի մեհեան Արտեմեայ Լիմնատեայ պահպանի նաւահանգստից, 'ի մէջ սահմանաց Մեսենիոյ և Լակոնիոյ: Որիորդքն բռնադատեալք 'ի մեսենիացի մանկտւոյն, դաւեցին անձանց՝ զի մի կեցցեն 'ի նախատինս. և թագաւորն ինքնին սպանեալ, կամեցեալ պաշտպանել նոցա[3]: Մեսենիացիք առ 'ի ծածկել զվատթար ոճիրն՝ բարուրս անտեղիս հնարեցան. և Սպարտա համբէր ընդ թշնամանսն առ 'ի չխռովելոյ զխաղաղութիւն: Այլ իբրև յաւելին նոքա պարտասեցուցանել զերկայնմտութիւն նորա[4], արկ զկանխակալ իրաւունս իւր 'ի գործ, և համարձակեաց զթշնամութիւն: Ոչ փառամոլութեան էր պատերազմն այլ վրէժխնդրութեան.

1 Պաւսան. գիրք Դ. գլ. 3 և 4:

2 Իսոկր. յԱրքիդ. հտ. 2. էջ 20:

3 Ստրաբ. գիրք Ը. էջ 362: Պաւսան. անդ. գլ. 4. էջ 288:

4 Պաւսան. անդ. գլ. 4 և 5:

Եւ այս յայտ իսկ յերդմանէն է, որով մանկտին սպարտացի երդուաւ չդառնալ անդրէն 'ի հայրենիսն՝ մինչեւ նուաճեալ զՄեսենիա, եւ 'ի նախանձուէն՝ որով ծերակոյտ բազմութիւնն յառաջ վարեաց զգործ մարտին[1] ։

Ի կատարել առաջնոյ պատերազմին՝ մարթէր մեզ ըստ օրինաց Լիկուրգայ վարել զպարտեալս 'ի ստրկութիւն. այլ մեք հարկս եւեթ արկաք նոցա ։ Ապստամբութիւնք՝ որովք խռովէին նոքա ստէպ զգաւառն, ստիպեցին զմեզ յետ երկրորդի պատերազմին արկանել զնոսա 'ի կապանս. եւ յետ երրորդին՝ հալածել զնոսա հեռի 'ի սահմանաց մերոց ։ Եթէ ոչ ըստ պատշաճի հասարակաց օրինաց ազգաց արարեալ էր զայս 'ի դաշինսն՝ որ նախ քան զճակատամարտն Լեւկտրայ կնքեցան, պահանջէին 'ի մէնջ Յոյնք եւ Պարսք դարձուցանել յազատութիւն զՄեսենիա[2] ։ Այլ ես խաղաղութեան եմ պաշտօնեայ. եթէ հայրենեացն իմոց հաճանէ հարկ զէնն առնլոյ, ողբամ զնա. իսկ եթէ անիրաւի, դատապարտեմ զնա ։ Ի սկսանել մարտի, հեծեմ ընդ անգթութիւնս զորս գործեն մարդիկ ընդ նմանեալք, եւ երբ իսկ անգթանայցեն՝ ոչ գիտեմ. այլ գաղտնիք դիցն են անդ, հարկ է խոնարհել առաջի նոցա եւ լռել ։

1 Պաւսան. գիրք Դ. գլ. 4 եւ 5 ։ Յուստին. գիրք Դ. գլ. 4. եւ 5 ։

2 Իսոկր. յԱրքիդ. հտ. 2. էջ 24 ։

Այլ մեկնեցաք 'ի Տենարայ, շրջեալ նախ 'ի մերձակայ քարահատամն՝ ուստի հատանի վէմ սեաւ ազնիւ իբրեւ զկիծ[1] : Այլ չոգաք 'ի Գիւթիոն քաղաք ամուր պարսպաւոր, եւ դիպող 'ի նաւահանգիստ, հանգրուան նաւացն սպարտացւոց, ուր ոչ ինչ 'ի կարեւորաց պակասէ նոցա[2] . եւ է նա հեռի 'ի քաղաքէն երեսուն ասպարիզօք[3] :

Անձուկ է գաւառն յորում բնակեն սպարտացիք . այլ այնպէս հռչակեալ 'ի վէպս Սպարտայ, զի եւ ընդ քաղաքս փոքրիկս եւ ընդ աւանս նորա այց ելեալ շրջէաք շուրջ զլակոնական ծոցովն եւ ընդ միջերկրայս նորա : Ամենայն ուրեք տեսանէաք մեհեանս եւ անդրիս եւ սիւնս եւ այլ արձանս, յորոց բազմագոյնք անհարթք, եւ կէսք 'ի նոցանէ էին պատուականք հնութեամբն[4] : Յասոպ քաղաք 'ի կրթարանի էին կմախք մարդկեղէնք հսկայաձեւք անձոռնիք, ուր 'ի զնին նոցա զկայ առաք[5] :

Այլ ապա դարձ արարեալ յեզր Ակրոսայ, ուղեւորեցաք ընդ վեր կոյս գետոյն նախ ընդ հովիտ մի ոռոգեալ անդաստին 'ի նմին գետոյ[6], եւ ապա ընդ դաշտս որք տարածանին մինչեւ 'ի Լա-

1 Պլին. գիրք ԼԶ. գլ. 18. հտ. 2. էջ 74. գլ. 22. էջ 752 : Ստրաբ. գիրք Ը. էջ 363 :

2 Քսենոփ. պատմ. Յոյնաց, գիրք Զ. էջ 609 : Լիւ. գիրք ԼԴ. գլ. 29 :

3 Պօղիբ. գիրք Ե. էջ 267 :

4 Պաւսան. գիրք Գ. գլ. 22. էջ 205 :

5 Նոյն անդ, էջ 267 :

6 Ստրաբ. գիրք Ը. էջ 343 : Լիւ. գիրք ԼԴ. գլ. 28 :

կեդեմոն ։ Այս հոսէր գետն յաջմէ մերմէ, և յա- հեկէ ամբառնայր լեառն Տայգետոն. անձաւք թաղումք էին և մեծամեծք առ ստորոտով նորա անձեռագործք խառնչացեալք 'ի ժայռս ։

Ի Բրիսէ քաղաք տեսաք զմեհեան Դիոնի- սեայ, անմոռանելի արանց, ուր կանանց ևեթ անկ է մատուցանել զոհս. և զպաշտամունս. զորս կա- տարեն անդ՝ ոչ է օրէն նոցա յայտնել ումեք[1] ։ Ըստ սմին օրինակի և 'ի միում 'ի քաղաքաց Լա- կոնիոյ տեսեալ էր մեր յառաջագոյն զմեհեան Արեայ, ուր ոչ էր օրէն կանանց լինել պաշտօ- նեայ զոհից[2] ։

Ի Բրիսեայ քաղաքէ ցուցին մեզ 'ի ծագ մեր- ձակայ լերին զվայրն կոչեցեալ Տաղետ, ուր ընդ այլ անասունս զոհեն ձիս արեգական[3] ։ Ոչ ինչ կարի հեռի 'ի տեղւոջէն բնակիչք միոյ 'ի փոքրիկ աւանաց պանծան գտիչք լեալ երկանի աղօրւոյ[4] ։

Անդէն և անդ յանդիման եղև մեզ Ամիկղէ քաղաք յաջ կոյս Եւրոտաս գետոյ, հեռի 'ի Լա- կեդեմոնէ ասպարէզս իբրև քսան[5] ։ Ընդ հա- սեալք տեսաք 'ի վերայ սեան զանդրի միոյ 'ի Նա- հատակաց, որոյ այն ինչ զյաղթողականն ընկ[ալ]- եալ պսակ յողիմպիական խաղս՝ զրաւեալ էր [...] կենաց ։ Շուրջ զնովաւ կային եռոտանիք թա-

1 Պաւսան. գիրք Գ. գլ. 20. էջ 261 ։
2 Նոյն անդ, գլ. 22. էջ 267 ։
3 Նոյն անդ, գլ. 20. էջ 261 ։
4 Նոյն անդ, էջ 260 ։
5 Պողիբ. գիրք Ե. էջ 367 ։

զունդք հաւիրեալք այլ և այլ ղնց 'ի սպարտացւոց
անտի վասն յաղթութեանց իւրեանց ընդդէմ
աթենացւոց և մեսենիացւոց[1] ։

Իղձք լինէաք 'ի մեհեանն Ապողոնի համաանե-
նելոյ, որ մի 'ի բազմահռչակ մեհենացն է Լակլա-
դայ ։ Պատկեր նորին իբր երեսուն կանգնոց 'ի
բարձրութիւն[2], անհարթ իմն է, զեգիպտական
քանդակաց բերելով զնշմարանս ։ Ունէր սիւն
իմն պղնձի, և գլուխ զնովաւ ծածկեալ սաղա-
ւարտիւ, և ձեռք զինուորեալք յաղեղն և 'ի նի-
զակ, և ծայրք ևեթ ոտիցն տեսանելի ։ Սաղեմի
յոյժ է արժանն . զոր ապա Բաթիկղէս ոմն անուն
անդրիագործ զետեղեաց 'ի բազմաձև խարսխի,
'ի գահոյս՝ զոր 'ի վեր ունին Ժամք և Շնորհք ։
Նոյն ինքն Բաթիկղէս դրուագեաց ապա զե-
բեսս խարսխին և զամենայն մասունս գահոյիցն
բարձր քանդակօք, այնչափ ազգի ազգի իրս և
կերպարանս 'ի նոսա 'ի տեսիլ ածեալ՝ զոր ասել
մի ըստ միոջէ տաղտուկ է դժոխըմբեր ։

Արմուհիք պաշտօնեայք են մեհենին, որոց
գլխաւոր նոցա կոչի Մայր . և 'ի մեռանել նորա
արձանագրեն 'ի վիմի զանուն նորա և զթիւ
ամաց քրմութեանն ։ Տեսաք մեք զգաւազանս
կայծորդութեան նոցա կարևորս ժամանակա-
գրութեան, և ընթերցաք 'ի կարգս նոցա զանուն
Լաւդամեայ դստեր Ամիկղայոսի որ թագա-

1 Պաւսան . գիրք Գ . գլ . 18 . եջ 254 ։
2 Նոյնանդ, գլ . 19 . եջ 257 ։

ւորէր յաշխարհին յառաջ քան զամս աւելի քան զհազար[1]: Են և այլ արձանագրութիւնք առ 'ի պատիւ տեղւոյն աւանդեալք անդր , յորս են պայմանք նուիրականութեանց ազգաց ընդ միմեանս[2] , և հրովարտակք բազումք ապարտացւոց զարարողութեանց կրօնից կամ զզինուորութեանց , և ուխտք ուղերձեալք առ դիս 'ի թագաւորաց կամ յիւրաքանչիւրոց ումանց[3]:

Մերձ 'ի մեհեան անդր Ապողոնի է և միւս այլ , որոյ երկայնութիւն ըստ բովանդակ թանձրութեան շինուածոյն ոչ ինչ աւելի է քան զեօթնևտասան ոտնաչափ , և լայնութիւն քան զտասըն ոտնաչափ և կէս[4]: Հնգեակ վէմք անհարթք և թուխք , հինգ ոտնաչափք 'ի թանձրութիւն , կազմեն զչորեսին որմն և զյարկ մեհենին , և 'ի վերայ յարկին այլ ևս վէմք կրկին ատաղձանաձև եդեալ կան . և պատուանդանք երեք զշինուածն բովանդակ 'ի վեր ունին վէմք միապաղաղք : Ի վե՛ր դրանն դրոշմեալ կան 'ի տառս վաղեմիս . ԵՒՐՈՑԱՍ ԱՐՔԱՑ ԻԿՏԵԻԿՐԱՑԱՑ ԱՌ ՈՆԳԱ : Եւ թագաւորեաց Եւրոտաս ամօք իբր երեքհարիւրովք նախ քան զտրովականն պատերազմն . իսկ Ակտեւկրատք են նախնի բնակիչք Լակոնիոյ , և Ոնգա մի 'ի դիցն փիւնիկեցւոց կամ եգիպտացւոց

1 Ցիշատ. բանաս. կաճառ. հտ. 23. էջ 406:

2 Թուկիդ. գիրք Ե. դլ. 18 և 23:

3 Ցիշատ. բանաս. կաճառ. հտ. 15. էջ 395. հտ 16. էջ 101:

4 Նոյն անդ, էջ 402:

պաշտեալ առ նոսա որպէս Աթենաս առ Յոյնս¹ :

Շինուածս այս, զոր ուրեք ուրեք յիշեցաք յուղևորել մերում յԵգիպտոսէ, բազում դարուք երիցագոյն է քան զհնագոյն շինուածս Աղլաղայ : Զարմացեալ կայաք ընդ պարզութիւն նորա և ընդ հաստատութիւն, և միտք մեր 'ի մեզ ամփոփեցան ընդ տեսիլն. զորոյ ապա զպատճառն հետազօտեալ խնդրեցաք, և Փիլոտաս ասէր 'ի հիացմանէ լեալ զայն. քանզի, ասէ, զբազմահոլով դարուն 'ի շինուածոյ մեհենին և այսր անցեալս զմտաւ ածէաք նովքն հիացմամբ, որ պատահէին մեզ բազում ուրեք առ ոտս լերանց 'ի կշռել ակամն զպակուցանողական բարձրութինց. զի երկայնութի բազմաժամանակեայ տևողութեան զնոյն գործէ զարմանս զոր երկայնածիգ տարածութիւն վայրաց : Նաև ես ասեմ. այլ առ ազդեաց 'ի մեզ տխրութի՝ որ 'ի տեսիլ լերանցն ոչ ազդէր. ապա ընդ տևողութիւնն քան ընդ մեծութիւն միտք մեր յառեցան : Քանզի այդ ամենայն վաղնջուց աւերակք՝ յաղթանակք են ամենածախ ժամանակին, և բռնի ձգեն զմիտս մեր 'ի խորհել զկենցաղականացս անհաստատութիւն իրաց : Հաւասիկ արձանագրութիւնդ առաջի առնէ զազգ անծանօթ քեզ և ինձ. անց նա, և մեհենեակդ ևեթ հեռք նաւաբեկութե նորա 'ի ծով կենցաղոյս՝ վկայէ երբեմն լինելութեան նորա :

¹ Սուիդ. 'ի բառն ὄγχ. Հեսիւք. 'ի բառն ὄγγα.

Արօտք գեղածիծաղք ՚ և ծառք ամբարձու-ղէշք շուրջ զԱմիկղեաւ յօրինեն զարդ, և պտուղք ազնիւք են յոյժ անդ[2]: Ընդարձակն է բնակութիւն նորա և բազմամարդ, և լի օտա-րականօք[3], որք դիմեն անդր զօրհանապազ ՚ի պայծառութենէ տօնիցն ձգեալք կամ ՚ի կրօնից: Անտի մեկնեցաք գնալ ՚ի Լակեդեմոն:

Դամոնաքս, որում ՚ի Քսենոփոնէ յանձ-նեալն էաք, առաջնորդականեաց զմեզ: Բայց Փիլո-տայ գտեալ առ նմա նամականի, հարկեցաւ ՚ի վաղիւ անդր դառնալ յԱթէնս: Մինչ չև խօսե-ցեալ արդ զապարտացուց, տեղեկութիւնս ինչ զգաւառէն առ հասարակ ՚ի դէպ է ինձ տալ:

Յարևելից և ՚ի հարաւոյ սահմանէ զնա ծով, յարևմտից և ՚ի հիւսիսոյ լերինք բարձրաբերձք և կամ բլուրք՝ որք ՚ի ծինս նոցա գործեն հովիտս զուարճալիս: Լերինք արևմտից կոչին Տայգե-տականք. ուստեք ուստեք ՚ի ծագաց նոցա որ յամպս ծրարին, ձգին աչք ընդ Պեղոպոնեսս առ հասարակ. և լանջակողմանք նոցա զրեթէ հա-մակ ծածկեալք ՚ի անկախիտ մայրեաց, ապա-տանք են այծից և արջուց և կնճից և եղջե-րուաց[4]:

Բնութեանն հաճոյ լեալ բազմացուցանել անդ զհօյլս էրէոց, թուի և ՚ի սպառումն նոցին առա-

1 Ստատ. Թեբայիդ, գիրք Թ. տող 769: Լիւ. գիրք ԼԴ. գլ. 28:

2 Պողիբ. գիրք Ե. էջ 367:

3 Ֆուրմոն ստորագր. ար-քունական մատենադար:

4 Պաւսան. գիրք Գ. գլ. 20. էջ 261:

տարածեալ զազգս բարակաց ցանկալիս ամենայն ազգաց [1], և դիպողագոյնս յորս վարազուց [2]. քանզի շոյտք են և սթափիք և ամեհիք [3], և սուր հոտոտելեօք [4]: Բաջաւուր ևս քանիցս են հոտոտելիք [3]. և միւս ևս յոլովութիւն է նոցա, զի երկարակեացք են, և բազումք այնոքիկ են՝ որ կեանս զամս երկոտասան, իսկ արուաց դուն ուրեք տասնամեայ երկարաձգին կեանք [6]: Այլ առ 'ի տալ նոցա աշխոյժ ևս և անհագոյն ցնկնել կորիւնս, զուգաւորեն զնոսա ընդ գամփռունս մողոսացիս [7]: Ասեն և ընդ աղուեսուց երբեք երբեք խառնել նոցա, և թէ 'ի խառնից անտի ծնանի ազգ իմն տկար և տգեղ և լերկ շանց, ցուկ նոցա սուր, և նուաղեալք յայլոցն աջողութեանց [8]:

Ի շունս լակոնացիս սեաւքն սպիտակախայտք երևելիք են գեղով [9], խարտեաշքն զգօնութ՟բ [10], և կաստորեանքն և մենեղաւեանք անուանակրութեամբ Կաստորի և Մենեղաւեայ՝ որք զսերունդ

1 Թէոփր. Նկարագիրք, գլ. 5: Եւստաթ. յՈդիսականն Հոմերի, էջ 1822:

2 Քսենոփ. յղ. որսոյ, էջ 991:

3 Կալլիմ. առ յԱնահիտ, տող 94: Սենեկա ողբերգ. Իպպողիդեայ, տող 35: Վիրգիլ. մշակ. գիրք Գ. տող. 405:

4 Պլատ. 'ի Պարմեն. հա. 3. էջ 128: Արիստոտ. յղ. ծննդ. կենդան. գիրք Ե. գլ. 2. հա. 1. էջ 1139:

5 Արիստոտ. պատմ. կենդան. գիրք Թ. գլ. 1. հա. 1. էջ 922:

6 Նոյն անդ, գիրք Զ. գլ. 20. էջ 878: Պղին. գիրք Ժ. գլ. 63. հա. 1. էջ 578:

7 Արիստոտ. անդ, գիրք Թ. գլ. 1. էջ 922:

8 Քսենոփ. յղ. որսոյ, էջ 976: Թեմիստ. ճառ 21. էջ 248:

9 Գրաշ. յղ. նախճ. Լակեդ. հա. 1. էջ 199:

10 Ովիդ. առակերգ. 6. տող 5:

Նոցա բազմացուցին[1]. քանզի որք զբօսանք Նախնի դիւցազանցն էին յետ դադարելոյ 'ի Նոցանէ հարկի որսորդութեան : Որ 'ի սկզբանէ հարկ էր Նոցա 'ի պէտս անձանց ընդ գազանս ահագինս դիմամարտել. և ընդ հուպ վտարեցին զնոսա 'ի սահմանս վայրի : Այլ խաղս անգործ զնոսա կացուցին 'ի վնասակարութիւն, առ 'ի չյուլանալոյ յանգործութեան՝ թշնամիս խուրեանց հնարեցան անդրէն, զբաղել ընդ Նոսա 'ի մարտ : Այլ արիւն իսկ անպարտ աղաւնոյ հեղանէր, որպէս զի որոցն զպատերազմին հաւաստեաւ բերել զկերպարանս :

Ի ցամաք կուռէ դժուարամատոյց է Լակոնիա[2], և չէ մարթ մտանել անդր առանց անցանելոյ ընդ բլուրս սեպացեալս և ընդ կիրճս դիւրապահս[3] : Ի Լակեդեմոն ողորտածաւալ ընդարձակի դաշտն[4], և յառաջ կոյս ընդ հարաւակողմն են գաւառք բերրիք[5], թէպէտ և ուրեք ուրեք առ անհարթութեան երկրին տաժանաւոր է յայժ մշակութիւնն : Ի դաշտի անդ ցանի և ցիր սփռեալ կան բլուրք բարձունք ձեռագործք, յաճախաւորք քան 'ի մերձակայ գաւառս կանգնեալք Նախ քան զհնարս արուեստից, 'ի շիրիմ աւա-

1 Պօլիբեակ. գիրք Ե. գլ. Ց. յօդ. 38 :

2 Եւրիպ. առ Ստրաբ. գիրք Ը. էջ 366 : Քսենոփ. պատմ. Յոյն. գիրք Զ. էջ 607 :

3 Քսենոփ. անդ : Պօլիբ. գիրք Բ. էջ 150 : Լիւ. գիրք ԼԴ. գլ. 28 :

4 Ռոսս յղ. աւերակաց Եղլադայ, հտ. 2. էջ 31 :

5 Երոդոտ. գիրք Ա. գլ. 66 : Գլաւ. յԱղեք. հտ. 2. էջ 122 : Պօլիբ. գիրք Ե. էջ 367 :

դադոյն խշխանաց ազգին * :

Հաստատի թուի՝ ընդ հողաբլրոցս այսոցիկ հառուցելոց 'ի շիրիմ փոխանորդեալ բրգանցն յԵգիպտոս : Նմանապէս անձնայն ուրեք և յանձնայն ժամանակի յանձնապատասխանութիւն մարդկան իրաւն դաշնակից եղև ընդ ուրոյնքն :

Յաղագս բերոց Լակոնիոյ գիտելի, է զի են 'ի նոսա բոյսք բազումք պիտանիք 'ի բժշկութիւն[1]. և ցորեան երկրին ազազուն է, ոչ յոյժ սնուցիչ[2]. և զթզենիս հարկ է անդ յաճախ տնկանել, և չիք անտի յուռութեան պտղոցն վնասեալ[3], և թուզք կանխագոյն ժամանակաւ անդ քան այլուր[4]. և զի դարձեալ ընդ անձնայն ծովեզերս Լակոնիոյ, որպէս և Կիթերայ, գիւտք են առատք խխունջեաց՝ յորոց զծիրանանաներկն հանեն զազնիւ[5], ստորի երկրին կարմրութեան վարդից հարկանի[6] :

Սահմանութիւն երկրի յաճախ պատահէ 'ի Լակոնիա[7]. քաղաքս հարիւր անեն երբեմ̃

* Են հանդոյն սոցին բլուրք և բազում ուրեք 'ի գաւառս բնակեալս 'ի նախնի գերմանացւոց :

1 Թէոփր. պատմ. բուս. գիրք Դ. գլ. 6. էջ 367 :

2 Նոյն անդ, գիրք Ը. գլ. 4. էջ 932 :

3 Նոյն անդ, գիրք Բ. գլ. 8. էջ 92 :

4 Նոյն յղ. պատճ. բուս. առ Աթենէոսի, գիրք Գ. էջ 77 : Պլին. գիրք ԺԶ. գլ. 26. հտ. 2. էջ 20 :

5 Արիստոտ. առ Ստեփ. 'ի բառն Κύθηρ. Պաւսան. գիրք Գ. գլ. 21. էջ 264 :

6 Պլին. գիրք ԻԱ. գլ. 8 :

7 Ստրաբ. գիրք Ը. էջ 367 : Եւստաթ. յԵզլիակ. Հոմերի, գիրք Բ. էջ 294 :

լեալ 'ի նմա[1], այլ 'ի ժամանակին յայնմիկ և աւանք փոքրիկք զմեծարանաց անուննն կրէին. բայց հաւաստի այն է, զի բազմանմանորդ է յոյժ աշխարհն[2]: Ընդ ամենայն տարածութիւն նորա հօսէ Եփրատաս, զվտակս և մանաւանդ զուղխս որ 'ի մերձակայ լերանցն իջանեն՝ յինքն ընդունելով: Բազում այն է զի չիք 'ի նմա հուն անցի, և զնաւ հանապազ ընդ ձոր անձուկ. և 'ի փքացեալ առատութեանն իւր՝ 'ի խորութեան քան 'ի լայնածաւալ ընդարձակութեան են նորին պարծանք: Եւ երբէք զի ծածկեն զմկանունս նորա կարապք ակնախտորդք, ձիւնաթոյր սպիտակութեամբքն[3]: Եւ շամբք եղեգանց են 'ի նմա, և եղեգունքն ուղղորդք և բարձունք և գունազգեղք՝ խնդրեալք 'ի բազմաց[4]: Ապարտացիք 'ի բազում ինչ զթուփս զայս 'ի կիր առնուն, այլ և փախաթըս 'ի նմանէ հիւսեն, և 'ի տնկս ուրեք նովաւ պսակեալք շրջին[5]: Յիշեմ աստանօր զոր ոմն յաթենացւոց 'ի Ճառէն երբեմն զմնափառութենէ մարդկան՝ ասէր ցիս, թէ Եղեգունք տկարք բաւական եղեն նուաճել զմարդիկ և 'ի գիտութիւն և 'ի զգօնութիւն ածել զնոսա: Եւ յաղաչել իմում մեկնել ինձ զառակն, յաւել.

1 Ստրաբ. գիրք Ը. էջ 362: Եւստաթ. 'ի Դիոնիս, տող 419:

2 Երոդոտ. գիրք Ա. գլ. 66: Պոմպ. գիրք Բ. էջ 128:

3

4 Եւրիպ. 'ի Հեղ. տող. 388 և 500: Թէոփր. պատմ. բուս. գիրք Դ. գլ. 13. էջ 470:

5 Ստոբ. առ Աթենէոսի, գիրք ԺԵ. էջ 674:

Զի 'ի բեկանուտ ցօղնոցդ կազմեցան նետք և գրիչք և նուագարանք [1] *։

Յաջ կոյս Եւրոտայ ոչ ինչ կարի հեռի 'ի գետ եզերէն [2] բնակէ քաղաքն Լակեդեմոն, անուանեալ և Սպարտա ։ Չեն նորա պարիսպք [3], այլ քաջութիւն եւեթ բնակչացն պարսպէ զքաղաքն [4], և բլուրք ոմանք՝ ուր պահ ունին զօրք 'ի յարձակել թշնամեաց ։ Բարձրագոյնն 'ի բլրոց անտի՝ է նոցա փոխանակ միջնաբերդի․ և 'ի գագաթան նորա սարահարթ, ուր բազում մեհեանք են [5] ։

Շուրջ զբլրովն կան հնգեակ աւանք, տարակացեալք մերձ կամ հեռի յիրերաց, յորս բնակեն հնգեակ ցեղք սպարտացւոց իւրաքանչիւր ուրոյն**։ Այս է քաղաքն Լակեդեմոն․ Թաղք նորա ոչ որպէս զքաղաքին աթենացւոց կցորդին միմեանց [6] ։ Ի սկզբանէ և քաղաքք աշխարհին պեղոպոնեսացւոց կազմէին 'ի շինից․ որոց ապա 'ի միմեանս կցորդեալ՝ 'ի մի շրջապատ պարսպեցան [7] ***։

1 Պլին․ գիրք ԺԶ․ գլ․ 36․ հա․ 2․ էջ 272։

* Բազում այն էր, զի յեղեգանց կազմէին սրինգս։

2 Պողիբ․ գիրք Ե․ էջ 369։

3 Քսենոփ․ պատմ․ Յունաց, գիրք Զ․ էջ 608։ Նոյն յԱգես․ էջ 662։ Լիւ․ գիրք ԼԹ․ գլ․ 37։

4 Յուստին․ գիրք ԺԴ․ գլ․ 5։

5 Պաւսան․ գիրք Գ․ գլ․ 17․ էջ 250։

** Յեռակայս մատենիս 'ի տեղեկութիւնան․ Թիւ ԺԹ։

6 Թուկիդ․ գիրք Ա․ գլ․ 10։

7 Նոյն անդ․ Ստրաբ․ գիրք Ը․ էջ 337։ Դիոդ․ գիրք ԺԱ․ էջ 40։

*** Յեռակայս մատենիս 'ի տեղեկութիւնան․ Թիւ Ի։

Հրապարակն մեծ, յոր բազումք 'ի Ճանապարհաց յանգին, զարդարեալ է մեհենօք և անդրեօք. երևելագոյնք 'ի շինուածս անդ են խորհրդարանք՝ յորս գումարին ուրոյն աւագանին և պարէտք և այլ ատեանք[1], և գաւիթն կամարակապ՝ զոր կանգնեցին սպարտացիք յետ Պղատեայ Ճակատամարտին յաւարէ պարտելոցն: Զյարկ գաւթին ոչ սիւնք 'ի վեր ունին, այլ անդրիք հսկայաձևք պարսիկք սատակ հանդերձիւք[2]: Բազում և այլ արձանք ընդ ամենայն քաղաքն կանգնեալ կան դիցն և դիւցազանց նախնեաց:

Ի վերայ բարձրագունի 'ի բլրոցն կայ մեհեան Աթենասայ, ապաստան յանցաւորաց հանդերձ շուրջանակի անտառաւն և յարակից մեհենիւ և փոքրիկ տամբ, յորում Պաւսանիաս արքայ արգելեալ՝ սովամահ եղև[3]: Բայց 'ի մեղս համարեցաւ այն սպարտացւոց, և հրամանն ետ նոցա հարցուկն առ 'ի հաշտ առնել զաստուածուհին՝ կանգնել արքայլին անդրիս երկու, որ դեռ ևս կան մերձ առ բագնին[4]: Պղնձակերտ է մեհեանն[5], որպէս երբեմն դեղփականն[6]. և 'ի ներքին կողմն նորա դրուագեալ կան բարձրաքան-

1 Պաւսան. գիրք Գ. գլ. ԺԱ. էջ 231:
2 Վիտրուվ. գիրք Ա. գլ. 1:
3 Թուկիդիդէս. գիրք Ա. գլ. 134:
4 Պաւսան. գիրք Գ. գլ. 17. էջ 253:
5 Թուկիդ. անդ: Լիւ. գիրք ԼԵ. գլ. 36: Սուիդ. 'ի բառն Χαλχ.
6 Պաւսան. գիրք Ժ. գլ. [illegible] էջ 810:

դակաւ նահատակութիւնքն Հերակլեայ, և Տինդարեանցն արութիւնք, և այլ եւս կերպք անդրեաց [1]։ Յաջմէ շինուածոյն կանգնեալ կայ պատկեր Արամազդայ, հնագոյն Թերեւս քան զամենայն պղնձի պատկերս նորին՝ որ կան արդ, ժամանակակից գոլով ողիմպիական խաղուցն վերստին հաստատութեան։ Այս է պատկերն ոչ միաձոյլ, այլ 'ի յօդուածոյից մասանց հեղուսիւք կազմեալ [2]։

Շիրիմք երկոցունց ազգատոհմիցն, որ Թագաւորեն 'ի Սպարտա, են յայլ և այլ Թաղս [3]. ամենայն ուրեք կան յիշատակարանք դիւցազանց, զի այսպէս կոչին շինուածք և մատունք նուիրեալք նախնի դիւցազանցն [4]։ Նոյն սրբազան պաշտամամբք առնուն յիշատակք Հերակլեայ, Տինդարեայ, Կաստորի և Պողիտեւկեայ, Մենեղաւոսի, և այլոց բազմաց՝ որ առաւել և որ նուազ հռչակաւորք 'ի վէպս, և որ առաւել կամ նուազ արժանիք յիշատակի։ Շնորհակալութի ժողովրդեան և յաճախ եւս հրամանք պատասխանւոյ վաղ ուրեմն հայթայթեցին նոցա զպատիւս զայսոսիկ. այլ պատճառք վեհագոյնք ետուն կանգնել մեհեան Լիկուրգեայ [5]։

1 Պաւսան. գիրք Գ. գլ. 17. էջ 250։

2 Նոյն, գիրք Ժ. գլ. 5. էջ 251։

3 Նոյն անդ, գլ. 12. էջ. 237. գլ. 14. էջ. 240։

4 Նոյն անդ, գիրք Գ. էջ 230 և այլուր։

5 Երոդոտ. գիրք Ա. գլ. 66։ Պաւսան. անդ, գլ. 16. էջ 248։ Պղուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 55։

Սակաւուց յետ այնորիկ այնպիսի պատիւք սահմանեցան. տեսչի եւ սինէս եւ անդրիս կանգնեալ գուպարայաղթ նահատակացն սպարտացւոց յաղթանակական խաղուն պանկերլաց[1], իսկ յաղթականացն ընդդէմ թշնամեաց աշխարհին՝ ոչ ուրեք. քանզի ըմբշացն վայելեն անդրիք, իսկ զօրականացն մեծարանք հասարակաց։ Յամենեցունց ոյք յառաջ քան զայս դար նշանաւորք եղեն 'ի մարտի ընդդէմ Պարսից եւ Աթենացւոց, չորք կամ հինգ եւեթ ընկալան ուրոյն 'ի քաղաքէն պատիւ դամբանական. եւ այն եւս հազիւ արդեօք շնորհեալ նոցա։ Քանզի յետ քառասուն ամաց 'ի վերայ անցանելոյ մահուն Լեւոնիդայ, ածան ոսկերք նորա 'ի Լակեդեմոն, եւ եդան 'ի շիրիմի առ տեսարանաւն։ Ի նմին ժամանակի եւ երեքարիւրոցն սպարտացւոց՝ որք ընդ մեծի առնն անկեալ էին, դրոշմեցան անուանքն 'ի սեան՝ անդ նախ արձանագրեալք[2]։

Նազմագոյնք յարձանաց սոտի ազգեն պատկառանս տեսողաց, այնչափ եւս առաւել՝ որչափ զի ոչ հանդէս ամենեն պերճութեանց, եւ զրեթէ առ հասարակ անհարթք են արուեստիւ։ Ամենայն բազում այն էր՝ զի արուեստ եւեթ ճարտարին ածէր ինձ զարմանս. իսկ 'ի Լակեդեմոն դիւցազնն եւեթ. մէմ անհարթ բաւական էր առ 'ի յուշ ածել զնա ինձ. բայց կից ընդ յիշատա-

1 Պաւսան. գիրք Գ. գլ. 2 Նոյն անդ, գլ. 14. 240։
13. էջ 240. գլ. 14. էջ 241։

կի՛նորա էր գեղանշոյլ պատկեր առաքինութեանց նորա կամ յաղթութեանց ։

Տունք 'ի Սպարտա փոքրկունք էին և անպաճոյճք . էին անդ սրահք և դաւիթք կամարակապք , ուր ժողովելոն քաղաքացիք խօսել զիրաց իւրեանց կամ զբուցատրել ըստ միմեանս [1] ։ Ի հարաւակողմն քաղաքին է Ձիընթացն , ուր հեծելոց և հետևակաց լինէին արշաւահանդէսք [2] ։ Նաւի 'ի Պղատանիստա էին անցք , 'ի կրթարան մանկտւոյն հովանաւոր 'ի սօսեաց առ ափն Եւրոտայ և միւս ևս փոքրիկ գետոյ , որք առաւիւ ըստ միմեանս հաղորդեալ՝ պատէին զնովաւ ։ Կամուրջք կրկին ածէին անդր . 'ի խելս միոյն կանգնեալ կայ անդրի Հերակղեայ կամ զօրութեն՝ որ նուաճէ զամենայն . և 'ի խելս միւսոյն պատկեր Լիկուրգեայ կամ օրինաց՝ որ բարեկարգէ զամենայն [3] ։

Հանճարաստագիծս այս ցուցանէ պատկեր , թէ քանի հիացեալ զարմանացի գեղարուեստիցն ցանկացող , որ ձգեալ 'ի Սպարտա 'ի գերահռչակ համբաւոյ բնակչացն՝ փոխանակ մեծակառոյց քաղաքի գտցէ աւանս գծուծս , փոխանակ հոյակապ ապարանից հիւղս մթինս յարդածածուկս , և փոխանակ զառ պատերազմողաց անհանդարտից արս խաղաղասէրս և թաղեալս 'ի կենկղաւոր խա-

1 Պաւսան. գիրք Գ. գլ. 14 և 15.

2 Քսենոփ. պատմ. Յունաց, գիրք Զ. էջ 608։ Լիւ. գիրք ԼԴ. գլ. 27։

3 Պաւսան. անդ, գլ. 14. էջ 242։ Ղուկիան. յղ. մրց. հա. 2. էջ 919։

րաղն կրկնոցին՝ որ սովորական վերարկուն է նոցա : Այլ որչափ ևս առաւել յաճախեսցեն զարմանքն, եթէ քաջ ևս ծանիցէ զՍպարտա, և տեսցէ 'ի նմա հիացմամբ զմի յաւագագունից աշխարհի, և զմի 'ի չքնաղագունից գործոց մարդկան, զԼիկուրգոս և զսահմանադրութիւն նորա :

ԳԼՈՒԽ ԽԳ.

Զբնակչաց Լակոնիոյ :

ԶԱՒԱԿՆ Հերակղեայ օգնականութեամբ զնդի միոջ դորացւոց տիրեալ 'ի Լակոնիա, խառն ընդ հին բնակիչս երկրին կեայր անդ : Յետ սակաւ ժամանակի եդ 'ի վերայ նց հարկս, և կապտեաց զիրաւունս ինչ 'ի նոցանէ : Որք 'ի քաղաքաց հնազանդեցան նմա, կացին մնացին յազատութեան . իսկ եղոսացիք հակառակ կացին, և վաղ բռնադատեալք 'ի զօրութենէ՝ նուաճեցան զրկեալ 'ի պայմանս ստրկութեան¹ :

Նոյնպէս և սպարտացիք երկպառակեալ յիւրեանս, հզօրագոյնք 'ի նոցանէ հալածեցին զանուագն 'ի դաշտս և 'ի մերձակայ քաղաքս² : Որով զանազանեցին ցարդ և սպարտացիք բնակիչք մայրա

1 Ստրաբ. գիրք Ը. էջ   2 Իսոկր. համաթ. հա. 2.
365 : Պղուտ. 'ի Լիկուրգ. էջ 274 :
հա 1. էջ 10 :

քաղաքին 'ի գաւառայնոցն, և ողբա և մայրաքա-ղաքացիք 'ի բազմախուռն ամբոխէ ստրկաց՝ որ համասփիւռ ցրուեալ կան ընդ գաւառն։

Առաջինքն՝ զորս յաճախ անուանեմք սպար-տացիս, են ազգն պատերազմող՝ յոր հաստա-տեալ կայ բախտ Լակոնիոյ։ Թիւ նոցա, որպէս լուայ, հասանէր երբեմն ցբիւր[1]. յաւուրս ար-շաւանացն Քսերքսեայ՝ էր ութ հազար[2]. և պատերազմունք յետինք նուազեցուցին զնոսա յոյժ, մինչև սակաւուց ումանց 'ի հնոց ազգա-տոհմիցն գտանել սորդ 'ի Սպարտա[3]։ Եր զի տե-սանէի 'ի հրապարակի բազմութիւն չորեքհազարի արանց, և հազիւ 'ի նոսա քառասուն այր սպար-տացի հանդերձ երկոքումբք թագաւորօք նո-ցա ընդ պարէտս և ընդ աւագանին[4]։

Տանուտեարք բազմաց 'ի նոցին ազգատոհմիցն են եղոտացիք ազատացեալք 'ի ստրկութենէ, և համգիտապատիւ քաղաքայնոցն կարգի գտեալք արժանի։ Սակայն ոչ կոչին նոքա սպարտացիք, այլ ըստ զանազան ազատութեանցն յորջորջին այլ և այլ անուամբք՝ զառաջնոյ կենացն պայ-մանի պահեալ զնշանակ[5]։

Այլք երեք աւագք, Կալլիկրատիդաս, Գիլիպպոս

1 Արիստոտ. յղ. հաս. գիրք Բ. գլ. 9. հտ. 2. էջ 329։
2 Երոդոտ. գիրք Է. գլ. 234։
3 Արիստոտ. անդ։ Պլուտ. յԱգիս. հտ. 1. էջ 797։
4 Քսենոփ. պատմ. Յոյ-նաց. գիրք Դ. էջ 494։
5 Թուկիդ. գիրք Ե. գլ. 34։ Հիսիւք. 'ի բառն Νεοδαμ. Պոլիւքս. գիրք Գ. գլ. 8. յօդ. 83։

Եւ Լիւսանդր, ծնեալք 'ի սմին պայմանի[1] անանդակիցք եղեն ընդ մանկունս սպարտացւոց, որպէս զամենայն տղայս եղոտացւոց ազատելոց 'ի ստրկութենէ[2]. այլ յետ քաջայաղթ արութեանց զամենայն ազատութիւնս քաղաքացւոց ժառանգեցին:

Քաղաքացւոց անուն դուն ուրեք շնորհէր երբեմն այնոցիկ, որք ոչ 'ի հօրէ և 'ի մօրէ սպարտացւոյ ծնեալ էին[3]: Նաև աւագութեան կամ զօրավարութեան հասանել առանց այսր ոչ է հնար[4]. և որ գործովք ինչ անարժանութեան չարահամբաւեալ իցէ, ոչ զամենայն նախապատուութիւնս քաղաքացւոյ ունի: Ի պահպանութիւն նախապատուելոցն առ հասարակ հսկէ պետութիւնն, և երիցագոյնն խնամ ունի կենաց քնիկ սպարտացւոց: Որ ազատելոյ զսակաւս ոմանս՝ որ 'ի կղզւոջ ուրեք պաշարեալ կային 'ի նաւաստորմղին աթենացւոց, խոնարհեցաւ յաղերս կորանաց՝ խնդրել 'ի նոցանէ խաղաղութիւն, թողլով 'ի նոսա զպետութիւն ծովու[5]: Այլ միշտ իսկ նուազունս ոմանս մատուցանէ ընդդէմ հարուածոց թշնամեաց. և յաւուրս յայսոսիկ յե-

1 Եղիան. զան. պատմ. գիրք ԺԲ. գլ. 43:

2 Աթեն. գիրք Զ. գլ. 20. էջ 271: Կրագ. յղ. հասա. Սպարտայ. գիրք Ա. գլ. Ե:

3 Երոդոտ. գիրք Թ. գլ. 33: Դիոն. ալիկ. հնութիւնք հռովմայեցւոց, գիրք Բ. գլ. 17. հտ. 1. էջ 270:

4 Պլուտ. առակ. լակեդ. հտ. 2. էջ 230:

5 Թուկիդ. գիրք Դ. գլ. 18 և 19:

տինս Ագեսիլայոս և Ագեսիպոլիս արքայք 'ի պատերազմունս ուրեք ոչ առեալ քան զայս երեսուն անձինն ընդ իւրեանս ։

Քաղաքք Լակոնիոյ, թէպէտ և 'ի նախնի ազատութեանցն զրկեալք, համարին նիզակակիցք սպարտացւոց. և վասն այնորիկ պարտ է նոցա 'ի պատերազմի գումարել զզօրութիւն իւրեանց ընդ նոսա, և 'ի խաղաղութեան ունել անկարօտ զիրաւունս իւրեանց ։ Եթէ զիրաց համօրէն ազգին խնդիրք ինչ լիցին, յղեն նոքա հրեշտակս յաշխարհաժողովն որ գումարի միշտ 'ի Սպարտա[1]. և անդ սահմանին զօրապահանջք և հարկք զորս պարտ է նոցա հատուցանել ։

Բնակչաց նոցա դաստիարակութիւն ոչ իբրև զմայրաքաղաքացւոցն է. և թէպէտ չմնականագոյնք կենցաղով[2], այլ 'ի պայծառ քաջութենէ նոցա նուաղեալ գտանին ։ Ամին իւր քաղաքն սպարտացւոց եկաց նախիշխան 'ի մէջ այլոց, որպէս Եղիս յեղիսական գաւառի, և Թեբէ 'ի քաղաքս Բէովտիոյ[3]։ Այս գահերիցութիւն զրգռէ զնախանձ նոցա և զատելութիւն. և յարշաւանս ուրեք Եպամինոնդայ բազումք 'ի քաղաքաց Լակոնիոյ յաւելան 'ի Թեբացիս[4] ։

Չիք ուրեք 'ի քաղաքս Եղլադայ այնչափ բազ-

1 Քսենոփ. պատմ. Յունաց, գիրք Զ. էջ 579 ։
2 Լիւ. գիրք ԼԷ. գլ. 27 ։
3 Հերոդոտ. գիրք Դ. գլ. 148 ։ Թուկիդ. գիրք Ե. գլ. 31 ։
4 Քսենոփ. անդ, գիրք Զ. էջ 494 ։

մութին ծառայից ստրկաց, որչափ 'ի Սպարտա[1] ։ Նոքա սպասաւորեն 'ի սեղանի[2], նոքա զգեցուցանեն զտեարս իւրեանց և մերկացուցանեն[3], առքանեկեն հրամանաւ տերանցն, մաքրեալ յարդարեն զապարանս. այլ և 'ի բանակի բազմութիւն ստրկաց գնային ընդ կարասեաւն[4] ։ Այլ վասն զի կանանց սպարտացւոց ոչ է արժան աշխատել, աղախնայց ստրկաց տան նուեթել զասր[5] ։

Նշանակեցէք Ամողոս քաղաքէ ունելին զկողշուածն[6]. բայց մի ոք բնաւ ունենց 'ի մանուենադրաց[7] այլ ընդ այլոյ ընդ ընկել ստրուկս ասացէ զնոսա[8] . զի նոքա 'ի միջասահմանին իմն կան ընդ ստրուկս և ընդ ազատս[9] ։ Պայքէն մեկնոցն զոր կրեն, և զխարկ մաշկեայ, և խստութիւն տերանցն ընդ նոսա, և դատակնիքն մահու առ թեթև իմիք կասկածանաց ածեալ երբեմն զնոքօք, յիշեցուցանեն նոցա հանապազ զպայման իւրեանց[10], բայց և ոչ դոյզն իմիք փոխարէնք քաղցրացուցանեն զկեանս նոցա ։ Համազոյն ծառայիցն 'ի Թեսաղիա[11] 'ի վարձու ու-

1 Թուկիդ. գիրք Ը. գլ. 40 ։
2 Կրիտ. առ Աթենէոսի, գիրք ԺԱ. գլ. 3. էջ 463 ։
3 Պղատ. յղ. օր. գիրք Ա. հա. 2. էջ 633 ։
4 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Զ. էջ 586 ։
5 Նոյն յղ. հասա. Սպարտ. էջ 675 ։
6 Հեղլան. առ Հարպոկր. 'ի բառն Ε'ιλωτ. Պաւսան. գիրք Գ. գլ. 20. էջ 261 ։
7 Իսոկր. յԱրքիդ. հա. 2. էջ 23 ։
8 Պղատ. յԱղկիբ. հա. 2. էջ 122 ։
9 Պողիւքսի. գիրք Գ. գլ. 8. յօդ. 83 ։
10 Միրոն. առ Աթեն. գիրք ԺԴ. էջ 657 ։
11 Սուիդ. և Հարպոկր. 'ի բառն Πενές.

նմին զերկիր սպարտացւոց . և տեսա առ 'ի յարե-ցուցանել զնոսա յիւրեանս խայծիւ շահու, չպահանջեն 'ի նոցանէ աւելի քան զառն փողընջուց սահմանեալ հարկըն՝ որ առ բերանք երկրին ոչ ինչ է, և անթէ հաճոյի անդրանց աւելի ինչ պա-հանջել[1] :

Ունէք 'ի նոցանէ 'ի գործիական արուեստս պա-րապեն, այնպէս յաջողեալք 'ի նոյնս՝ զի անե-նայն ուրէք խնդրին ձեռագործք նոցա, բանա-կք[2] , մահիճք , սեղանք և աթոռք պատրաս-կանք[3] : Նմանայեն նոցա և 'ի ծովամարտի նա-ւաստականութեան[4], և 'ի բանակս առ մէն մի սպառազէն արքանեակ մի կամ բազումք 'ի նո-ցանէ կան[5] : Ի Պղատեայ պատերազմին միում միում 'ի սպարտացւոց էին արքանեակք եօթն յերգուացւոց անտի[6] :

Ի վտանգս ծանունս արկանեն նոցա յուսով ազատութեան[7] . և տեսցեն երբէք երբէք զա-զատութիւն գունդք բազմեաթիւք 'ի վարձ արիա-կան քաջութեանցն[8] : Ի պետութենէ և եթ չնոր-

1 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. եղ 54 : Նոյն, տաւոկ. հտ. 2. եղ 216 : Նոյն, կարգադրք. լակոն. եղ 239 :

2 Արիստոփ. 'ի Թեսմոփ. տող 430 :

3 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. եղ 45 :

4 Քսենոփ. պատմ. Յու-նաց, գիրք Է. եղ 618 :

5 Թուկիդ. գիրք Դ. գլ. 8 :

6 Հերոդոտ. գիրք Թ. գլ. 10 և 28 : Պլուտ. յԱրիստ. հտ. 1. եղ 325 : Նոյն յղ. չար. Հերոդոտ. հտ. 2. եղ 871 :

7 Թուկիդ. անդ. գլ. 26 : Քսենոփ. անդ. գիրք Զ. եղ 608 :

8 Թուկիդ. գիրք Ե. գլ. 34 : Դիոդ. գիրք ԺԲ. եղ 124 :

հի նոցա պարգևս այս, զի առաւել աշխարհին են նոքա քան քաղաքայնոց՝ զորոց գործեն զերկիր. վասն որոյ և ոչ օրէն է տերանց նոցա ազատեցուցանել զնոսա կամ վաճառել 'ի տար աշխարհ[1]: Համշխիսիւ հուչակի ազատութիւն նոցա, զի ածեն զնոսա մեհենէ 'ի մեհեան ծաղկապսակս 'ի տեսիլ ամենեցուն[2]. և ապա օրէն է նոցա բնակել ուր և կամք իցեն[3]: Ու ապա այլովք ևս վաստակովք ամբառնան 'ի կարգ և 'ի պատիւ քաղաքացւոյ:

Նախատին 'ի սկզբանէ ծառայք չհամոզուրժեալք ընդ ընտին, բազում անգամ փորձեցան ընկենուլ զլուծ զայն. բայց յորմէ հետէ մեսենիացիք պարտեալք 'ի սպարտացւոց՝ 'ի կողմանս յայս նուաճեցան[4], յաճախեցին և ևս ապստամբութիւնք[5]. և բաց 'ի սակաւուց հաւատարմաց[6], այլք իբրև 'ի դարանի կացեալ 'ի մէջ աշխարհին՝ խնդրէին՝ պարապ 'ի դէպս արկածից տիրել յամենի ուրեք[7], կամ 'ի թշնամիս անդր անցանել: Իսկ պետութիւնն հնարէր 'ի հնազանդութեան աւ-

1 Ստրաբ. գիրք Ը. էջ 365: Պաւսան. գիրք Գ. գլ. 20:

2 Թուկիդ. գիրք Դ. գլ. 80: Պլուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 57:

3 Թուկիդ. գիրք Ե. գլ. 34:

4 Պաւսան. գիրք Դ. գլ. 8. էջ 297: գլ. 23. էջ 335: Եղիան. զան. պատմ. գիրք Զ. գլ. 1:

5 Արիստոտ. յղ. հաս. գիրք Բ. գլ. 10. հա. 2. էջ 333: Քսենոփ. պատմ. Յունաց, գիրք Ա. էջ 435:

6 Հեսիքիւս. 'ի բառն Ἀργεῖοι.

7 Թուկիդ. գիրք Ա. գլ. 101: Արիստոտ. անդ. գլ. 9. հա. 2. էջ 328: Պլուտ. 'ի Կիմ. հա. 1. էջ 489:

նել զնոսա պարգեւօք, և յաճախ ես տարապայ-ման խստութեամբ ։ Պատմեն երկուս հազարս 'ի նոցանէ երբեմն միանգամայն կորուսեալ, վասն արիագոյնս խրախուսելոյ նոցա, ոչ ուրուք գիտացեալ զնոցանէ թէ զինչ եղեն [1] ։ Բազում և այլ անգթութիւնս [2] պատմեն ոչ ինչ նուազ զարհուրելիս *, յորմէ յառակս եղև ասել. Ազատութիւն և ծառայութիւն 'ի Սպարտա ծայրայեղ [3] ։

Այսոցիկ չեղէ ականատես, այլ տեսի զապարտացւոց և զեղոտացւոց կասկածանս զմիմեանց, և զլրտեսել նոցա զիրեարս ահիւ ։ Տեսի զի սպարտացիք առ 'ի նուաճել զեղոտացիս առնէին ընդ նոսա խստութիւն՝ որք ըստ իւրաց ժամանակին կարեւորք թուէին. քանզի յոյժ իսկ դժուարին է վարել զեղոտացիս. բազմութիւն նոցա և քաջութիւն և մանաւանդ մեծութիւնք խրոխտս զնոսա և յանդգունս գործեն [4] ։ Այլն իրի և մատենագիրք քաղաքահմուտք երկպառակեալ, կէսք դատապարտեն զխստութիւն ծառայեցուցչաց նոցա, և կէսք անբասիր զնոսա առնեն [5] ։

1 Թուկիդ. գիրք Դ. գլ. 80։ Դիոդ. գիրք ԺԲ. էջ 117։ Պղուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 57։

2 Միրոն. առ Աթենէոսի, գիրք ԺԴ. էջ 657։

* Յետակոյս մատենիս 'ի տեղեկութիւնսն թիւ ԻԱ։

3 Պղուտ. անդ։

4 Արիստոտ. յղ. հասա. գիրք Բ. գլ. 5. հա. 2. էջ 318։

5 Պղատ. յղ. օր. գիրք Զ. հա. 2. էջ 776։

ԳԼՈՒԽ ԽԳ.

Տեսութիւն օրինացն Լիկուրգեայ առ հասարակ։

ՅԱՒՈՒՐՍ հետէ կայր 'ի Սպարտա, և ոչ ոք զարմանայր ընդ իս. քանզի օրէնք՝ որ յառաջագոյն դժուարաւ տային մուտս օտարաց անդր, թողացեալ էին։ Ինձ այս յանդիման թագաւորացն երկոցունց՝ որ յայնժամ ունէին զաթոռն, Կղէոմենէս թոռն Կղէոմբրոտեայ որ անկաւ 'ի ճակատամարտին Լևկտրայ, և Արքիդամոս որդի Ագեսիղայոսի. Երկոքեան ևս հանճարեղք։ Կղէոմենէս էր այր խաղաղասէր, իսկ Արքիդամոս պատերազմասէր և անուանի յոյժ։ Ծանեայ անդ և զԱնտալկիդաս, որոյ յառաջ քան զամս իբր երեսուն զուխտ խաղաղութեան ընդ Ելլադա և ընդ Պարսս հայթայթեալ էր։ Իսկ Դամոնաքս՝ առ որում իջևանեալն էի, թուեցաւ ինձ բազմահմուտ քան զամենայն սպարտացիս և յոժար 'ի տեղեկացուցանել. շրջեալ էր նորա ստէպ առ ազգս օտարս, և իրաց իւրոց ազգին ոչ ինչ նուազ էր հմուտ։

Ի յաճախել իմում երբեմն առ նա զհարցածըս, ասէ ցիս. Եթէ ոք զօրինաց մերոց յայժմու բարուցս կամիցի առնել դատաստան, այնպէս է որպէս թէ զշինուածոյ իրիք զգեղոյ՝ յաւերակաց նորա առնիցէ դատաստան։ Իսկ ես ասեմ.

Նոյնպէս իցէ. անցցուք ապա մտօք 'ի ժամանա-կըս յորս դեռ անեղծք էին օրէնքդ. համարիցիս թէ ընդ միմեանս յարմարեալ յօդիցին, և մարթ իցէ համօրէն 'ի վերայ կալ դիտաւորութեան նոցա. դիւրին ինչ թուիցի քեզ անքասիր առ-նել զանընդդիմական և զայլանդակ հրամանան որ 'ի նոսա բովանդակին: Պատճառքս առէ. Նկա ած յերկոց համձայնոյ, որոյ դիտաւորութիւնք անսովորք և խորամանկինք՝ թուին տարապայմանք այնու, զի այլոց օրէնսդրացն երկչոտք են և ան-ձուկք: Նոքա շատ համարեցան յարմարել զօ-րէնս իւրեանց բնաւորութեան ազգացն: Իսկ Լիկուրգոս իւրովքն փոխեաց զբարս ազգին. նո-քա հեռացան 'ի բնութենէ՝ մատչել կարծեցեալ առ նա, իսկ սա որչափ օտարացեալ 'ի նմանէ թուի՝ նոյնչափ մերձաւորագոյն գտանի:

Մարմին առողջ և հոգի ազատ սահմանեալ է 'ի բնէ մարդոյ մեծաւորի 'ի բարեկենդանութիւն. տղին և բառ Լիկուրգեայ են հիմունք բարո-րութեան մերոյ: Արդ դու քեզէն 'ի միտ առցես թէ ընդէ՞ր արգելեալ է մեզ ամուսնացուցանել զդստերս մեր 'ի տարաժամ հասակի, և թէ ոչ 'ի հովանի գեղջուկ յարկացն, այլ ընդ բա-ցակէզ տապով արեգական մնանիցին նոքա 'ի փոշւոջ կրթարանին, 'ի հրահանգս գօտեմարտին և աշխատանաց և արդնընկեց տէգընկեց խաղա-կութեանց[1]: Զի առ 'ի ծնանել քաղաքացիս

1 Քսենոփ. յղ. հաս. Սպարտ. էջ 675 և 676: Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 47: Նոյն 'ի Նում. էջ. 77:

կորովիս աշխարհին, պարտ է գոլ նոցա առողջս՝ անդամակաց, զի նոյնպիսիք և որդիքն ծնանիցին:

Ի միտ առցես դարձեալ՝ թէ ընդէ՞ր այն ինչ ծնեալ մանկունք 'ի դատաստան ածիցին, և տկարք կազմածով 'ի մահ դատապարտին[1]: Զի զինչ ձեռնհաս իցեն նոքա առնել վասն աշխարհին, և զինչ օգուտ իցէ նոցա 'ի կենաց՝ եթէ ցաւօք կեցցեն:

Նոյնպէս 'ի տղայութենէ վաստակք և մըրցութիւնք անընդհատք աջողակս յարդարեն զանդամնս մեր և դիւրաշարժս և կորովիս, և ժուժկալութիւն խիստ յորկորստենէ խափանէ կամ փարատէ 'ի նոցանէ զախտս՝ ընդ որով գլրաւեալ կան: Այս անձանօթք են եկամուտ պէտք, և զկարևորս հայթայթեն օրէնք: Զքաղց, զծարաւ, զվիշտս, զմահ և զամենայն դժնդակս այնու արիութեամբ նկատեմք, զոր 'ի զուր ջանայ իմաստասիրութիւն սատարել յանձին: Աստակրօնք յաղանդոց ոչ կարացին արհամարհել այնպէս զցաւս որպէս մանկտին սպարտացի:

Այլ համարիցիս թերևս եթէ մարդիկ՝ յորս Լիկուրգոս զանութեանն պարգև հնարի դարձուցանել, չվայելիցեն յայնս ընդ երկար. զի 'ի մեռանել նոցա առ իրեարս՝ կիրք 'ի նոսա զորդիցին, և բարօրութեանն անհարտակ անդէն և անդտապալեալ կործանիցի: Այլ ասա է յաղթա-

1 Պղուտ. 'ի Նում. հա. 1. էջ 49:

նակ համաձայնոյն : Պղատոնց օրէնսդիրն զի բանա-գոյն 'ի կրից նուաճէ զայլսն ընդ իւրև. և ես մեզ զհայրենասիրութիւն՝ հանդերձ ամենայն առաքի-ցութեամբն իւրով և խանդիւք և զեռանդեանքն, և զառանցանօքն իւր : Այս սէրս այս բուռն և մեծազօր յինքն զրաւէ զամենայն իղձս և զշարժ-մունս սրտից մերոց. և այնուհետև մի կամք լինին աշխարհին, նովին իսկ և մի միտք. զի որ համա-կամքն իցեն, նոյնք և համախորհուրդք զօրանային :

Յայլ գաւառս Ասիայ՝ մանկտին ազատորդի յանձնի 'ի խնամս տան անազատի, կամ որում ոչն է արժանի ազատութեան : Այդ ատորուկք և վարձկանք ոչ մուծանեն սպարտացիս. զկա-րևոր պաշտօնն հայրենիքն ունին յանձին. Օսկզբնաւորս հասակին մեր թողուն 'ի ձեռս ծնողաց՝ այլ ընդ բանալ մտաց մերոց՝ 'ի կէր արկանէ զիշխանութիւն իւր 'ի վերայ մեր : Մինչև ցայնժամ յիշատակ եւեթ սրբազան ա-նուանն նորա բազում ընձիւք սիրոյ և մեծարա-նաց յեղյեղի 'ի լսել մեր. իսկ այնուհետև առջ նորա ամենայն ուրեք հետապօտեալ արածէն զմեզ : Նա կերակրէ զմեզ և զգեցուցանէ. 'ի դէմս նորա աւազանին և ծերակոյտն և ամենայն քաղաքացիք առընթեր կան խաղուցն մերոց, յանդիմանեն զթերութիւնս մեր, խնդրեն բաղ-

1 Պղուտ. 'ի Լիկուրգ. հտ. Սպարտ. էջ 676 : Պղուտ. 1. էջ 55 : անդ, էջ 50 :

2 Քսենոփոն, յղ. հաս.

բոջս ինչ առաքինութեան 'ի բանս մեր կամ 'ի գործս գտանել, և գորովագութ խնամովն յայտ առնեն՝ զի չիք աշխարհին պատուականագոյն ինչ քան զմեզ. և զի մանկունքս, յայնժամ իսկ՝ պարտիմք 'ի ժամանակի լինել նմա 'ի սփոփումն և 'ի փառս :

Արդ խնամք որ յայսքան 'ի բարձունս ձգին զմեզ, եթէ ոչ ազդողագոյն և յարատևակ գործեսցեն 'ի մեզ տպաւորութիւն : Նա եթէ չիցեն մեզ պաշտելի օրէնք, որ զծայրագոյն բարութիւն կից ընդ բարձրագոյն իշխանութեան ուղերձեն 'ի շահ օգտի մերոյ, և վաղ քաջ ուսուցանեն մեզ մեծարգել զանձինս :

Այսքան բազմահոգ փութոյ հայրենեացս զմէնջ, և 'ի խանդակաթ սիրոյ մերոյ առ նա, ծնանի բնաւորապէս անաչառ խառնութիւն նորա, և միամիտ հլութիւն մեր : Բայց Լիկուրգեայ ոչ շատ համարեալ զինքնայորդորն, պարտս զայն 'ի վերայ մեր յաւել : Ի Սպարտա քան ամենայն ուրեք սաստկագոյն են օրէնք, նոյնք անայթաքելի պահեալք. դատաւորք խստագոյնք, նոյնք և մեծարեալք : Այս գեղեցիկ յարմարութիւն, որ առանց սորա անհնար է արանց մեռելոց յարհամարհանս մահու կալ ընդ իշխանութեամբ, արգասիք են դաստիարակութեանն որով նոքա կրթին համակ 'ի հնազանդութիւն, մանաւանդ թէ 'ի պարառութիւն առաքինութեանց : Ընդ ուսանին զի առանց հնազանդու-

թեան չիք քաղցրութիւն, ոչ պատիւ և ոչ ազատութիւն. և զի անհնար է հնազանդել՝ առանց իշխելոյ անձնիւր կամաց։ Նոյն խորասաք և որկնանկք և դժկամակաց հաճելութիւն և ամենախիստ հրահանգք պատուիրանին մեզ զիշխանութիւնս զայս՝ դժուարին 'ի տանել և 'ի պահել անկորուստ։

Մ՛ի ոմն յաւագագոյն զաստաւորաց տեսուչ կայ ժողովոյս մերոյ հանապազ. և եթէ հարկ լիցի մեկնել նմա վայրիկ մի 'ի մէնջ, ամենայն ումեք 'ի քաղաքայնոց օրէնն է կալ փոխանակ նորա 'ի վերայ մեր[1]. զի յոյժ կարևոր է սաստ իշխանութեան յահաբեկութիւն միոյ մերոց։

Յաճախեն պատուէք ըստ տիս, և վարժիցն ազգք կշռին ըստ զարգացման միոյ, և կերպք դեռածինք ընկձին 'ի բաղդմութէ հրահանգաց, կամ 'ի պէտս աշխարհին ուղղին ճարտարութէ։ Ի ժամանակի խոկ յորում սկսանին նորա մոլել, անմիւնչք երևին 'ի հրապարակի, և պատկառանօք զաչս 'ի խոնարհ ունելով, և զձեռս ըստ վերարկուաւ ծածկեալ[2], զձև և զգօնութի քրմաց եգիպտացւոց յանձին բերելով, և որպէս զնորընծայեալս 'ի պաշտօն առաքինութեան։

Հայրենասիրութիւն 'ի նոցա առնէ զյորդոր միաբանութեան 'ի քաղաքացիս, և խղճք հաճոյ լինելոյ հայրենեաց վասն՝ 'ի նոսա զնախանձ նախա

1 Քսենոփ. յղ. հաս. Սպարտ. էջ 678։
2 Նոյն անդ, էջ 679։

նութեանն ։ Ստատանօր զմխիթարանութի՞ն ոչ աղմկեն վտանգք , որ այլուր տապալեն զայն . քանզի Միկուրգոս զերեթէ զամենայն պատճառս մխիթարանաց 'ի բաց եբարձ , հաստատականաց առնելով և զերեթէ հաւատար զամենայն ինչ 'ի մէջ տարապարտացուոց ։

Հրաւիրինք զոր հանապազ 'ի ձայն հասարակաց , ուր տիրէ պարկեշտութիւն և սակաւապիտութիւն . և այսուիկ մերժէին 'ի բաց 'ի տանց իւրաքանչիւր կարօտութիւն և յղփութիւն , և որ յերկաքանչիւրոցն ծնեալ ախտք[1] ։

Օրէնք է ինձ ըստ հարկի պիտոյից 'ի կեր առնուլ զատորուկս , զկաթս , զերիվար և զինչ ինչ զքաղաքակցացն իմոց[2] . քանզի ամենայն ինչ հասարակաց է առ մեզ , որպէս զի և 'ի կանայս և 'ի մանկունս մեր յեղանակաւ իմն ձգել ազատութեանն[3] ։ Որոյ աղագաւ եթէ զօդ անպարգասաւոր զուգէ զծեր ընդ երիտասարդուհւոյ , պարտ է նմա փոխանակել ընդ իւր երիտասարդ զոք ընտիր գեղով և հանճարով , և զծնունդս նորոգ հարսանեացն առնել իւր յորդեգիրս[4] ։ Ամին իրի և ամուրւոյն , որ կամիցի կեալ 'ի յաշխարհս , օրէնք է վարել կնաւ բարեկամի իւրոյ , և մանկածնել 'ի նմանէ , խառնելով առն նորա զման-

1 Քսենոփ. յղ. հասար. Սպարտ. էջ 680 ։ Պղատ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 46 ։

2 Քսենոփ. անդ , էջ 681 ։ Արիստոտ. յղ. հաս. գիրք Բ. գլ. 5. հա. 2. էջ 317 ։

3 Պղատ. անդ , էջ 80 ։ Նոյն կարգադր. Լակոն. հա. 2. էջ 237 ։

4 Քսենոփ. անդ , էջ 676 ։ Պղատ. 'ի Լիկուրգ. հա. 1 , էջ 49 ։

կոչման ընդ որդիս իւր, առանց թողլոյ նոցա ժառանգութիւն[1]: Եթէ որդի իւր պատուհասեալ յումեքէ 'ի քաղաքացւոց բողոք կալցի առ իւ մեղապարտ զպատուհասօղն դատեսցես և արժանի պատժոյ, և դարձեալ պատուհասեսցի զորդի իւր վասն ընդդէմ գտանելոյ նորա հայրենի իշխանութեան որում ամենայն քաղաքացիք են բաժանորդք[2]:

Երկուորդս 'ի կապանսն զմեզ յիւրաքանչիւր ժառանգութենէ՝ յորմէ յաճախեն հերձուածք 'ի մարդիկ, հոգացաւ յաւելուլ 'ի մեզ զնախախնամ բարեաց. քանզի սա կարևոր էր առ 'ի խափանել զզաւակութիւնս խիստ միաբանութեան, և առ 'ի ընուլ զտեղի առանձին հոգոց յորոց անզատաք եմք, և առ 'ի քաջալերել զմեզ 'ի պատերազմի և 'ի խաղաղութեան և յամենայն ժամանակի և 'ի տիս:

Այս տենչ նախապատուութե և գերազանցութեան վաղ քաջ 'ի սիրտ մանկութեան 'ի վեր երևեալ, համարի բողբոջ իմն բարենախանձ հակառակութեան: Պաշտօնեայք երկք կացեալք յաւագանւոյն, ընտրեն պատանիս երեքարիւր նշանաւորս քաջութ. և կարգեալ նոքօք գունդ ուրոյն, հրատարակեն վասն որոյ իրաց ընտրեցանն[3]: Նոյէն արտաքսեալքն յընտրութե մաս-

1 Քսենոփ. յղ. հասար. կոն. հա. 2. էջ 237: Սպարտ. էջ 676:
2 Պղուտ. կարգադր. Լա-
3 Քսենոփ. անդ, էջ 679:

բանին ընդդէմ նախապատուութեանն, որ թուի անել նոցա նախատոնս. և աՀա կազմին գունդք կրկին, այր իւրաքանչիւր ընտանին կալեալ 'ի վերայ թերութեանց տոխին՝ ամբաստան լինել զմիմեանց դատաւորին, և Համարձակապէս մէծ բերելով զլաւութեանց և զառաքինութեանց, ելեալք ամենեն զանձամբք՝ կենք առ ամբաստանելոյ յատենական պատուոյ, այլք առ 'ի պիղծ կալ 'ի նմին: Ա՛յսր աղագաւ օրէն է նոցա միշտ 'ի Համդիպել միմեանց, յարձակել յիրեարս և Համդէս առնել քաջութեան իւրեանց: Ա՛յլ ոչ ինչ 'ի մարտից աստի ծնանին աղէտք. զի 'ի նշմարել 'ի նոսա Հետս ինչ սրտմտութեան, և գոյզն ոք 'ի քաղաքայնոց կարէ միով բանիւ առնել 'ի նոսա խաղաղութիւն: Օ՛ր եթէ երբէք Հեստեն, ձգէ զնոսա յատեան. և պատուՀասի սրտմտութիւն նոցա իբրև զօրինազանցութիւն[1]:

Սահմանադրութիւն Լիկուրգեայ անփոյթս յարդարէ զմեզ ընչից, յորոց 'ի ստացուած բազում յոյժ կրկին վիշտք քան զվայելչին բերկրութիւնս: Պղնձի եւեթ են մեզ դրամք. քանզի նոցա և ծանրութիւն մետաղին լինին պաՀանին, որ ծածկել զինչս իւր կամիցի յաչաց ստրկացն[2]: Սակի և արծաթ թուին յաչս մեր առաւել քան զամենայն թոյնս ապականիչք պետութեան. եւթէ առ ումեք 'ի ժողովրդենէ կայցէ 'ի տան ու-

1 Քսենոփ. յղ. Հաս. Սպարտ. էջ 680:

2 Նոյն անդ, էջ 682: Պլուտ. 'ի Լիկուրգ. Հտ. 1. էջ 44:

ըկք ծածկեալ, ոչ թափիցէ յանդգնաբար խուզարկութե խնդրակաց, և 'ի խստութե օրինաց ոչ զերծանիցի: Ծանօթք են առ մեզ արուեստք և վաճառաշահ և այլ ամենայն հնարք բազմապատկելոյ զպէտս և զարդէս ժողովրդեան: Ոչ ինչ մեծութիւնք գանձուցն իցեն մեզ ապաւանացու. այլք յօրէնսդրաց ջանացան յաճախել զշրջան նոցա, և խնամատարէրք 'ի չափու ունել զպիտանութի նոցա. իսկ Լիկուրգոս անօգտակարս զնոսա արար մեզ: Նա մեզ յարգ ծածկութեան և զգեստ և հաց, են մեզ սուսեր և բազուկ 'ի պաշտպանութիւն հայրենեաց մերոց և բարեկամաց, և մեզ սիրտ ազատ և արի անընկճելի 'ի բռնաւորութեանէ մարդկան և կրից. այսոքիկ են գանձք մեր:

Փառասիրութիւն առ մեզ 'ի խօթանաթեան սակի է, և առաւելագանց տենչ համբաւոյ՝ համարի ոճիր: Ոչ մեր վիպագիր, չիք ճարտարախօս, ոչ որք գովասան, և ոչ արձանք՝ մնայունութե եւեթ ազգաց յիշատակարանք: Ազգք որոց յաղթեցաքն, ուսանողեցեն յետնոց զյաղթանակս մեր, մեզ անկ է ուսանողել որդւոց մերոց զնախնութիւն քաջութեան և առաքինութե հարցն իւրեանց: Օրինակ Լեւոնիդայ մշտայուշ 'ի միտս նոցա, խրախուսեսցէ զնոսա զօրէ և զգիշեր. հարկ զնոսա, և սակաւք իցեն որք զերեքհարիւրոցն անկելոց ընդ նմա 'ի Թերմոպիլէ չգիտիցեն զանուանս Թուել 'ի քերթողս [1]:

[1] Հերոդոտ. գիրք Է. գլ. 224:

Զհամարի առ մեզ մեծութե՛, որ առ այլ ազգս ազատութե՛ աւազ որեւորոյն յօրինաց։ Ապերասա-նութիւն համարձակեալ անպատուհաս, է վա-տութիւն՝ որ արհամարհ առնէ զիւրաքանչիւր որք որ զատածանի յայն, և զպետութիւն որ թողա-ցուցանէ զայն։ Ոչ զայս յարմէ աշխարհէ և լցէ՞ և յոր ծայր ատագութե և բաղմիցի, և Սրեաց իսկ աշխարհին եթէ տէր լցէ, չհամարեսցէ ՚ի վեր քան զանձինս. այլ յարժամ օրէնք խօսի-ցին, նմ խորհրդուածն մեր ընկձի, և հզօրագոյն քաղաքայնոց մերոց զխմէ ՚ի կոչ զատաւորի նոցին հնազանդութե՝ որով տկարագոյնն[1]։ Զիք մեր երկիւղ, բայց միայն յօրինաց. քանզի Լիկուր-գոս դեղփականն պատգամաց հրամանաւ եա մեզ զօրէնսն, և որպէս զկամն զիցն ընկալաք մեք զայնոսիկ[2]. և զի Լիկուրգոս առ ՚ի ատոյգ պէտս մեր կարգեաց զնոսա, և ՚ի նոսա յեցեալ կայ բարեկենդանութիւն մեր։

Ի նախագիծ պատկերէ սորա զիւրին է քեզ ՚ի միտ առնուլ, զի ոչ օրէնսդիր լոկ համարելի է զԼիկուրգոս, այլ ներհուն իմաստասէր, և քա-ջահմուտ ուղղիչ բարուց. և զի սահմանադրու-թիւնք նորա են միանգամայն բարուց և քաղա-քավարութեանն կարգք, և զի օրէնք նորա ազ-դեն միշտ ՚ի բարս մեր և յիմաստս. և զի զար-ձեալ ուր այլ օրէնսդիրք շատ համարեին խափանել

1 Քսենոփ. յղ. հաս. 2 Նոյն անդ։
Սպարտ., էջ. 683։

զչարիս, սա առնուլ է զմեզ 'ի բարեգործութիւն և 'ի լինել առաքինի[1]:

Այս նախ խնդրանօք եղև զօրութեան և տէրութեան մարդոյ. և այնպէս միաբանեաց զայնօսիկ ընդ պատուոյ և ընդ այնու քաղաքացւոց, զի չափ օգտի իւրաքանչիւր արար է մեծա տամեզ խառն ընդ հասարակաց օգտին: Ո՛վ որ առաւել զարմանացի, զի մի 'ի կրօնաւորագունից ազատութեց Լիկուրգայ հզօրագոյն 'ի նոսա արար կայցէ. ամենայն ինչ առաւ յարդլի, և չիք մեծն ինչ զօրութեան՝ որ ոչ յօգուտ հասարակաց աղգէտի, և չիք գործ ինչ առաքինութեան որ անմասն լիցէ հայրենեաց:

Օրէնք Լիկուրգեայ յարդարեն զսա ազատս և խաղաղասէրս. այլ բուռն է ինձ ասել, զի եթէ չիցեն նոքա 'ի հեռաւոր և յանմատոյց կղզւոջ ուրեք պատսպարեալք՝ նուաճեսցին յախտից կամ 'ի զինուց զիրացի ազգաց: Այսմ որոյ օրէնսդիրն առ 'ի զառաջն առնուլ զկրկին վտանգացս, ոչ ներէ օտարաց մնանել 'ի Լակոնիա, բայց միայն 'ի յայտնի ինչ աւուրս[3]. և ոչ բնակչաց ելանել անտի[4], բայց միայն վասն կարևոր իրաց: Տեղին իսկ օգնէ 'ի կատարումն օրինացն. քանզի

[1] Քսենոփ. յղ. հատ. Սոկրատ. էջ 688:

[2] Թուկիդ. գիրք Ա. գլ. 18: Քսենոփ. անդ. էջ 675: Իսոկր. յԱրքիդ. հտ. 2. էջ 53:

[3] Արիստոփ. 'ի Հաւսն, տող 1014: Նոյն պարապ. 'ի խաղաղ. տող 622: Թուկիդ. գիրք Ա. գլ. 144. գիրք Բ. գլ. 39: Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 56: Նոյն յԱգիս, էջ 799:

[4] Պլատ. 'ի Պրոտագ. հտ. 1. էջ 342:

շուրջ պատեալ կային 'ի ծովուց և 'ի լերանց, և 'ի կիրճս նեղս ունէր սակս որոց երեւալ՝ կայարանք հանգչել պատսպարանութեան 'ի մէջ սահմանաց մերոց։ Օրէնքս այս երկրին խառնեալ վաճառականութեան և նաւարկութեան [1]. և 'ի խառնակմածոյ առանց դնելոյ երկիր անմերձենալի օտարաց անկարգութեան յանձնառնելոյ զօրէնս. զի քաղաքի յօրում չիք վաճառականութիւն, կեցեալ շատ հնազանդութեան ախորժէին օրէնքն՝ այն յայտ լինի է [2]։

Պժտաւորութիւն էր հնազանդել զոմեր քան զերծուցանել. յայտնել զերեկոյ և 'ի մանկութենէ ցծերութիւն զկենակեացս, կարդալ կանոն ընդդէմ թշնամեաց, խստացեալ զպաշտպանեալ հրահանգաց քան 'ի ճակատ մարտի։ Պատերազմ զարս քո նոր օրէնք, և թուեցի քեզ քաղաքս բանսակաց [3]։ Արանցք քո հնչեցին 'ի խորախորս յաղթութեանց կամ 'ի հանդիսա արքունական քաջութեանց. այլք քո ատեցին հանապազ պատերազմաց զօրաց և հովուական և յարձակմանց և բաղխմանց։ Այնքանին հաւատարմութիւնքս այսորիկ ոչ միայն զգաստացուցանէին զմեզ 'ի խաղաղութեան; այլ և կրթութեանէն զմեզ յանկարծակի, ամբարկու ամենեցուն և մեծամեծ մինչև 'ի սոսկ աշխարհս զանհունն դուրպատանական։

1 Դիոդ. Կատրուգաց. Լակոն. հա. 2. էջ 239։
2 Դիոդոր. յղ. հատ. գիրք Ը. հա. 2. էջ 842։
3 Նոյն յղ. որ. գիրք Բ. հա. 2. էջ 666։ Դիոնս. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 84։ Իսոկր. յԱրքիդամ. հա. 2. էջ 53։

Ի զինուորականս յայս պատականին զօրութիւն յոլովք յօրինաց մերոց ։ Ի մանուկ տիոց կանխեսցեն որ ըստ օրէ յորս [1], ՚ի նոյն և առաջս հանապազորդեսցեն յամենայն պատրաստ ՚ի կարեւոր զործոց մերոց [2] ։ Ո՛չ է առ ՚ի տիոյս իմն մանրունս և յաղթութէ զհրահանգս զայս ետ մեզ Լիկուրգոս ։

Այլ մանկտւոյն զակատելոց յորս՝ օրէն է տաղաստակել ՚ի դաշտս, և աւար առնուլ զամենայն որ ինչ ՚ի պէտս իւր է [3] ։ Այն օրէնք են նոցա և ՚ի քաղաքի․ և անպարտութք են և զգուշացեալք իսկ, որոց ոչ ըմբռնեին գործոյն․ իսկ որք ըմբռնեին ՚ի գողութեան, պատուհասեալք են և պատուհասաւորք պատուհասի ։ Օրէնքս այս, զոր յեղխապատացուց ամենի երևի առնել Լիկուրգեայ [4], յարուցին ընդդէմ նորա դատախազս [5]․ քանզի թուէին իմն ազդել ՚ի մանկունս ախորժակս խաբագործութեան և աւազակելոյ․ այլ ոչ այլ ինչ ներգործէ ՚ի նոսա բայց ճարտարութիւն և աջողակութիւն, և ՚ի քաղաքացիս յաւելուած զգուշութեան, և յամենեսին իսկ վարժս կանխատեսութեան խորհրդոց թշնամւոյն, և ըմբռնելոյ նմա թակարդս, և խուսափելոյ ՚ի նորայոցն [6] ։

1 Իսոկր․ Համաթ․ հտ․ 2․ էջ 291 ։

2 Քսենոփոն, յղ․ հաս․ Սպարտ․ էջ 680 ։

3 Իսոկր․ անդ ։

4 Դիոգ․ գիրք Ա․ էջ 72 ։ Աւղ․ Գելլ․ գիրք ԺԱ․ գլ․ 18 ։

5 Իսոկր․ անդ ։

6 Քսենոփ․ անդ, էջ 677 ։ Հերակլ․ պոնտ․ յղ․ հնութեց Յունաց, հտ․ 6․ էջ 2823 ։ Պղուտ․ ՚ի Լիկուրգ․ հտ․ 1․ էջ 51 ։ Նոյն կարգադր․ լակոն․ հտ․ 2․ էջ 237 ։

Մինչ չև վախճանն առաքեալ բանիցս , դարձայց անդրէն ուստի սկսայ ։ Մարդոյ մեռանելի մարմինն առողջ և ուժեղ և հզօր ազատ 'ի վշտաց և 'ի կարեաց սահմանի 'ի բնէ առ 'ի բարեկենդանութեն . իսկ մտաւորականութեն և բարեխնամականն հակառակութիւն 'ի քաղաքացիս յարգարեն զբարեբաստութիւն որում պարտին ցանկալ բնակեալ 'ի միասին մարդիկ ։ Արդ եթէ օրէնքն և կարգելոց լինէն զսահմանս բնութեն և զքաղաքաժողով միաբանութեան , ապա զ չքնաղագոյն քան զամենայն օրէնս ժառանգեսցէք ։ Այլ յորժամ տեսցես զայնոսիկ մի լաւ մոլէ , յայնժամ ասասցես զբանս . զի արդարև օրէն է մեզ պանծալ 'ի նոսին ։ Իսկ ես ասեմ ց¹ Ղակոնացիքս . Այլ իբր մարթի սահմանադրութեանց այդպիկ կալ . զի որով յենու զա յօրէնս և 'ի բարս առ հասարակ , հարկ է դնել զնոյն պատուհաս 'ի վերայ ածել յանցուցելոյն յերկաքանչիւրսն . արդ որ անսպատեհս ինչ գործիցէ , ասասցէ՞ք դուք զնա մահապարտ իբրև զեղեռնագործն ։

Ղակոնացիքս ասէ . Այո առաւել ևս . զի ներեսցէ նմա կեալ , այլ 'ի թշուառութեան ։ Ի պետութիս յառաջացեալս այս անուանարկ պարապանս յամենեցունց , և ամենայն ուրեք է ընդդիմանելի' . իսկ առ մեզ արհամարհանք զհետ նորա գնան , և խոշտանգեն զնա ամենայն ուրեք ։ Պատուհա-

¹ Քսենոփ . յղ . հատ . Սպարտա . եջ 684 ։

սեղմք զնա եւ յանձն եւ 'ի սիրելին իւր քան զամենայն ինչ. կլենոսա զատուածապաշտեալ յոգւս, չկարէ ելանել 'ի Հրապարակ. եւ մինչ եւս երթէ իշխեցէ երեւել անդ, հարկ է նմա զծուծ ձեւով բերել յանձին զհեշտական նախատանացն, մեծապանօք ունելի սար քաղաքացւոց համբերելոյ նմա զձանձրացուցիչ հայցն, եւ 'ի սոյն խաղուց կալ առաջակայ 'ի ամենայնի՝ որ նշանակ զնա կոչուցանէ աշխաց եւ նախատանաց անմտեցուն: Նիւր մահունք չհաստատալեն այսմ պատժոյ:

Ասեմ: Միթէ եւս խնդիր է ինձ. կառավարեմ, զի Լիկուրգոս յընկձել 'ի ձեռ կարի ինն զկնա եւ 'ի բառնալ 'ի բաց զպատճառս ցանկութեան փառաց եւ օգտի՝ որ այլոց ազգաց են ղեկնչք, 'ի յոյլ զատտապետութեն զանկոտս ձեր զաւածեցոյ. զի զինչ այլ մնաց 'ի նմա: Պատմնսնաբս ասէ. Ընդ ին քաջութեան, հայրենասիրութին մինչեւ 'ի զառամեցանս, նախանձ աղատութեան, խորշատութն բերելապահանն՝ որ խորտակտակեն զմեղ յանաքինութին, եւ մեծապանք բաղմնութեան քաղաքակցաց զերապատյից: Այլ համարեցին, զի 'ի ծովս այպքանեաց բաղմնապատիկ յուղանաց անշարժ կարկեցէ կալ սիրտ մեր եւ յուլանալ:

Արկանեալ անդուրէն ասեմ: Այլ ինչ մնաց ժաղովրդեանն առ Հասարակ 'ի մեհ խնամոյ թեւակոխել, եւ 'ի բարձմանս անոյ սաստանել կալ: Պասմնաբս ասէ. Նա 'ի կրթել զգաստս աղջկ, հարկ է յատապանեւյնս ոկիզան առնել. զերդեալ նոցա

միանգամ եւ մղեալ ՚ի գործս մեծամեծս, այլս աղխելով ընդ իւրեանս ձգեն զմնացորդ խուժանն՝ որ օրինակաւ քան իմաստութեամբ դրդի ։ Ոչ ի-նուազ որ զհետ երկչոտ զօրավարի վատասրտի, զհետ քաջազգին կանգնէ քաջայաղթ արութիւն։

Ամփոփեալ ամփոփէն ասեմ. Նախ ՚ի մերժել ՚ի բաց զփարթամութիւն եւ զպատուասէրս, ոչ սակա-ւքէն եւ ՚ի բերկրութեանցն՝ որ ՚ի նոցանէ հայթայ-թին՝ զգեցեալ զատանիցիք։ Նոյն իսկ զժուժկալու-հասանելի իրք թուին, թէ հրաժեշտ ՚ի բերկրա-նաց զերկրաւորս զդարբեկենդանութիւն յաղթա-րիցէ ։ Եւ դարձեալ ասէ ՚ի զատել թէ իցեն օրէնքդ ձեր բարի, հարկ է գիտել եթէ ասա-քննութեանցդ ձերովք այգորիւք իցէք զուգ-բարեբաստուք որոնէք զայլ ազգս Եգիպտոյ ։ Պա-մենաքս ասէ. Նահերասաստագոյն իսկ յոյժ քան զնոսա հանճարովք զանձինս. եւ այս եթէ կարծիք բաւականք են ՚ի յառաջադրել զմեզ այնուհետեւ ։

Եւ վախճանեալ զբանս իւր, ասէ. Նախ յաչս լիցին քեզ պայմանքս մեր, զի զդիտաւորութեանէ եթէ օրինաց Լիկուրգեայ են մեզ բանք, եւ զնախնեաց աստուածապաշտութեան բարուց ։

ԳԼՈՒԽ ԽԴ.

Զկենացն Լիկուրգեայ:

ԶԱՒԱԿՆ Հերակլեայ հալածեալ երբեմն ՚ի սահմանաց Պելոպոննեսեայ, որպէս ՚ի նախաշաւիղ գրոցս այսոցիկ պատմեցաք*, դարձան անդրէն ութսուն ամաւ յետոյ քան զաւերումն Տրովադայ: Տեմենոս, Կրեսփոն և Արիստոդեմ, որդիք Արիստոմաքեայ երեքին, գլխաւոր անդր զօրացուցեալք՝ նուաճեցին զկողմն զայն Լակոնիայ: Արգոլիս անկաւ բաժին Տեմենեայ, և Մեսենիա Կրեսփոնի՝. իսկ երրորդ եղբայր նորա զայնու աղմկաւն վրաւեալ ՚ի կենաց, որդիք նորա Եւրիսթենէս և Պրոկղէս ժառանգեցին զԼակոնիա: Ի սոցանէ սերեցան երկոքեան տոհմատոհմքն, որ յինն դարուց հետէ թագաւորեն ՚ի միասին ՚ի Սպարտա:

Յառաջնին հերձուածոց և ՚ի ծանուանց պատերազմաց յաճախ սասանեցաւ պետութիւն. և մինչ կործանումն մօտալուտ ՚ի վերայ կայր նմա, Պոլիդեկտես մի յարքայից նորա մեռաւ անորդի, և Լիկուրգոս եղբայր նորա յաջորդեաց նմա. զի չև ևս էր յայտ յղութիւն դշխոյին: Լիկուրգոս իբրև իրազեկ եղև, յայտ արար՝ զի ՚ի

* Յառաջնումն մատենի դրոցս. էջ 67 և 68:

2 Պղուտ. յղ. որ. դէրք Գ. հա. Զ. էջ 683:

ծնանել թագաժառանգ մանկանն, պատրաստ էր յինքն նախ 'ի թագաւորեցուցանել զնա. և 'ի հաւատարմութե՛ն բանիցն, որպէս խնամակալ արքայորդւոյն այնուհետև վարէր զթագաւորութիւնն։ Նաև դշխոյն առաքեաց առ նա, և խոստանայր կործանել զմանուկն, եթէ միայն առցէ զնա Ախուրգա կնութեան։ Այս առ 'ի խափանել զառակայքն եղեռնագործութիւնն, պատմեղեցոյց զնա 'ի յոյս մտաւ մինչև ծնաւ արու[1]։ Ինառեալ 'ի գիրկս իւր զմանուկն, յանդիմանն արար զնա առաջանւոյն Սպարապետայ, և ասէ. Ահա ծնաւ ձեզ արքայ։

Բայց ուրախութեամբն ընդ այն որով զբերկրեն յինքն 'ի թագաւորութենէ, և խնամատան տեսչութիւն մեծարոյ և սիրելի եղև բազմագունից 'ի քաղաքացւոց։ Առ առաքինութիւնս նորա խէթէին մնաց զլխաւորաց աշխարհին, որոց օժանդակէր դշխոյն՝ առ քէն վրիժու. Թշնամանացն գրգռելով ընդդէմ նորա զազգականս իւր և զբարեկամս։ Նախատակելին թէ վտանգ էր զկեանս արքայորդւոյն հաւատալ նմա, որում չգոյր մեծ ևս օգուտ քան զկորձնել զայն։ Շշունջք ազօրք 'ի սկզբանն՝ հնչեցին առաջ բարձրաբարբառ, մինչև հարկ լինել նմա մեկնել զնաղ 'ի բաց յաշխարհէն՝ առ 'ի լռեցուցանել զայնս։

Ի Վրետն զկայ էաա ժամանակս բազում 'ի խելամտութիւն օրինաց Սմբատայ հանճարեղ

1 Պլուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 40։

աշխարհի. և զարմանայր ընդ յարմարականն կարգն՝ որ նոքօք պահէր յաշխարհին և առ խուրասանչեւր ամէք։ Զխնամատանութիւն որ օգնեցին նախ հրամաւթեանքն՝ ընտրելոց իւր մեծերին զԹադէոս քերթող, արժանի դասեալ զնա 'ի զարծակցութեան մեծի խորհրդոյն զոր երկնէր 'ի մտի։ Յուսեալ խրատուցն նորա Թադէոսի, չոգաւ բնակել 'ի Սպարտա. և յօրինէր նաւազն՝ որ յարդարեցին և պատրաստեցին զմխիթար 'ի հզօրութեան և 'ի միաբանութեան։

Նա 'ի քաջ խելամուտ լինել որ էին 'ի զանազանութեան կարգաց տեսչութեան և քաղաքաց յառաջ զան առգաւէք, շրջեցաւ Լիկուրգոս ընդ ծովեզերս Ասիոյ, և եգիտ անդ ընտանի Թոյլ զօրէնս և զոգիս։ Այլ եւ տեղեացք խիստ և սակաւապէտ կենցաղոյն քաղաքացւոց էին. իսկ յոնիացիք պանծացեալք 'ի քաղաքավարութիւն՝ հեծէին տարկաւսութ ընդ ընթ բերկրանաց և հանճարեղութեան։ Ոմերոս զժողովի տեսարանին՝ որ ընծայէր աշխաց նորա, սփռեցին զիւանք իմցանկաւորի. քանզի ամփոփ 'ի ձեռս նորա քերթածք Հոմերոսի, և եգիտ 'ի նոսա անմահական զգեստհանճարոյ իմաստ բարոյականութեան և քաղաքականութեան պերճապես զերդոք բանաստեղծութեան, և եդ 'ի մտի ածել զզանազան զայն. 'ի Յունաստան[2]։

1 Սոքրատ. գիրք Ժ. ԽԸ 482։

2 Պղուտ. 'ի Լիկուրգ. հատ. Ա. ԽԸ 41։

Եւ մինչ դեռ շրջէր 'ի տար աշխարհս, պա-քսակեալ ամենայն ուրեք 'ի քննել զմիտս և զգիրս օրէնսդրաց, և 'ի ժողովել զանազանս բարեպաշ-տութեան արկեալ 'ի նոցանէ այլ և այլ ուրեք, տարապարտացիք պատրաստեալ 'ի հերձուածոց արձա-կէին հրեշտակս զհետ մոլեկանց, ստիպել զնոսա հաստատել յօգնութիւն հայրենեացն: Ոչ էր նորա միայն էր վարել զերասանակս աշխարհին տնտե-սեալ անդադրում 'ի ձեռս թագաւորաց և ամե-նայն[1]: Լիկուրգոս քաղաքումն հակառակն եկաց. այլ յետոյ տարաւ զինքն 'ի յաջողութիւնն իղձս ամե-նայն տարապարտացւոց:

Նայց 'ի զատանցն լուրում 'ի հայրենեացն՝ զի-տաց անողէն, զի ոչ խորամանկարկեալ ստանել զօրէն-սդիր տեսակի կայր նմա, այլ կործանել բովանդակ զշինուածն, և սկսել 'ի վերայ նորա անդամանալ նորամբ. և զամենայն խուշս զխնամակալս կանխում անզգաստին տեսեալ, ոչ լինչ զարհուրեցաւ: Ո՛ւան-զի օգնականք էին նմա մեծարանք ժողովրդեանն վասն աղգաստահմեն նորա և առաքինութեանցն, հանճարոյ և զխոհութիւնք, և արիութիւն մեծա-տասն՝ որ մերէ զկրակն, և ազդք յանկուցիչ որ յիմ-քըն ձգէ զանձանս[2]: Պատմեալ և հրամանք զինչն օգնէին նմա, զորս բուռ օրինակի այլոց օրէնս-դրաց հաղագաւ հայթայթել խեզ: Ժողովեցին զերեւելեանս եւ նմա հրամանին պատուականացն. Եր-

1 Պղուտ. 'ի Լիկուրգ. հատ. 2 Նոյն անդ:
1. ԿՉ 12:

կալան զկեք զզոհս քո, և շնորհօք նոցին տացես օրէնս քան զամենայն սահմանադրութիւնս քաղաքավարութեան զերագոյնս ։ Այս յայնմ հետէ Լիկուրգոս համախոհ իւր միշտ զհարցուկին կալաւ, որ վաւերականաւ աստուածպետական իշխանութեան տիրացուցանէր զամենայն օրէնս նորա[1] ։

Նախ քան զձեռն 'ի գործ առնել, եւ զօրէնսն 'ի քննութիւն ընտրելոց բարեկամաց իւրոց և քաղաքակցաց. և ընտրեաց իւր 'ի նոցանէ երեսուն այր, զնոսա ընդ նմա սպառազէնս 'ի ժողովս համախումբս ։ Այլ զումբարտակին այն Թիկնապահաց չքաւէր նմա 'ի խափանել զամենայն աղմուկս ։ Ընդդէմ նորաձև օրինաց ինչ նորա յազեցաւ ուրեք աղմուկ, և ձախք այնպէս զայրագինս՝ 'ի վերայ նորա յարեան, մինչև փութալ զերծանել նմա 'ի մերձակայ ուրեք մեհեան ։ Այլ 'ի խուսելն իւրում անդր՝ ասեն հարեալ զնա յամեմնէ սատակայպէս, և կորուսեալ զմի յաչացն ։ Այլ 'ի դարձուցանել զարիւնաթաթաւ դէմս իւր 'ի տեսիլ հալածչացն՝ յոլովք 'ի նոցանէ զամօթի հարեալ, տարան զնա առ իւրեանս մեծարանօք և կարեկցութեամբ, զարշեցեալք յեղեռնականէն, և մատնեալ 'ի ձեռս նորա զեղեռնաւորն՝ առնել ընդ նմա որ ինչ և կամք իցեն ։ Այլ էր նա պատանի բուռն և ամեհի ։ Ահ ինչ կշտամբեաց զնա Լի-

[1] Պողիբ. 'ի մարթանան, գիրք Ա. գլ. 16 ։

կուրծս, և ոչ յանողորմենեաց ձեռս. այլ կալեալ զնա առ իւր, և 'ի բաց կացուցեալ զբարեկամն և զպաշտօնեայս իւր, նախ ինքեան հրամայեաց սպասաւորել իւր և դարմանել զվէրսն : Յուսապատանեկին լռութեամբ. և զփոքր առեալ հանապազ զբարութեանն և զհամբերութեան և զմեծամեծ առաքինութեանցն Լիկուրգեայ, շըրջեաց զատելութիւնն 'ի սէր. և ըստ չքնաղ օրինակին՝ նուաճեաց զսանձութիւն բարուց իւրոց [1] :

Այլ առաւել ուրեմն ամենայն կարգաւորութեան ընկալեալն զնոսա սահմանադրութիւն Լիկուրգեայ. որոյ ամենայն մասունք նորա այնպէս ընդ միմեանս էին պատշաճեալ, զի ընդ առնուլ զփոքր իրացն՝ մկայեցին ամենեքին զի չզգայր ինչ 'ի նմա թերի [2] : Պատուագանեաց էին օրէնքն, այլ չև նա յարատևութիւն նոցա անխախտ. նախ քան զի Լիկուրգեայ զամենայն ազգն 'ի մի վայր ժողովեալ, ասէ. Մնայ ինձ զկարևորագոյն մասն սահմանադրութեանս ցուցանել ձեզ, այլ պարտ է ինձ հարցանել նախ զհրամանս դիցն 'ի Դելփիս. արդ խոստացարուք ինձ մի ինչ 'ի սահմանելոց աստի օրինաց փոփոխել մինչև 'ի դարձն իմ այսրէն : Եւ նոքա խոստացան : Լիկուրգոս ասէ. Տուք ինձ երդումն : Եւ արքայք երկոքին և աւագանին և ամենայն քաղաքացիք երդուան 'ի դիս [3] : Եւ էր աշխարհօրէն երդմանն նոցա պայ-

1 Պլուտ. 'ի Լիկուրգ. հատ. 1. էջ 45 :

2 Նոյն անդ :

3 Նոյն անդ, էջ 87 : Նիկող. Դամասկ. 'ի Վալեզ. էջ 446 :

մանն անպարտանալոյ, զի 'ի մնալ եղեալ էր Լիկուր-գեայ ոչ եւս աւետաւեալ զՀայրենիսն :

Ապա նորա հետայն 'ի Դելփիս, և եհարց զնորոց օրէնսդրին՝ եթէ իցէ թէ զբարեկարգու-թիւն սատարացուցին յաղթահարեսցեն : Նա հար-ցուածին եւ պատասխանի, թէ Սպարտա բարեբա-ւանձագոյն քան զամենայն քաղաքս կացցէ՝ ցոր-չափ ժամանակս զգուշասցի օրինացն : Զայն պատգամ Լիկուրգոս յղեաց 'ի Լակեդեմոն, և անձամբ զանձն զրաստապատեալ յաղաւոր¹, զպա-ւեալ զկեանս իւր հետի յաւզէն՝ պահել զբարե-կարգութիւնս եւր :

Բայց ոչ զարժանիսն պատիւ ասեն ընծայեալ յաւիտենի յիշատակի նորա². յայս իմն ապրելոց կամեցեալ ասանել, զի չընծայեցին իսկ բնաւ մայրեւիւն արժանեաց ընծայել նմա պատիւ : Ոմանք կա-ռոյց նմա ատեան մեհեան, ուր ամի ամի մատուցին նմա զոհս³. և ազգականք նորա և բարեկամք կարգեցին ժողովս⁴, որ կոչ մինչև ցայսօր, և ընդ ժամանակս ժամանակս զաւանցի, ատեանն զյիշա-տակ առաքինութեանց նորա : Ի հասանելն եւր-բեմն ժողովոյն 'ի մեհեանն անդ, Նա կոչեցաւ ան-ընդհատեալ անդ հոգին խոստովանող խօսեցաւ զձայնն զայս .

1 Պղուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 57 :

2 Արիստոտ. առ Պղուտար-քեայ, անդ էջ 80 :

3 Հերոդոտ. գիրք Ա. գլ. 66 : Պաւսան. գիրք Գ. գլ. 16. էջ 248 :

4 Պղուտ. անդ :

Ընկեալք 'ի տմնամախմեկել գայթակղութ քո , զի՞նչ անուն անուանեսցուք քեզ : Հարցուկն երկրպագեալ՝ թէ աստուած լինիս եթէ մարդ [1], կոչեաց զքեզ յերկրպագումն բարեկամ գղեց , զի դու բարեկամ եղեր մարդկան :

Յամենայնի սիրոյ քո , մեհեանն , եթէ քեզ 'ի քաղցրութիւն հանճարեսցուք զի ոչ յանձն առեր անօրէնութեան հատանել թագի . և ոչ ընդ այն ախտորժեցեր , եթէ զնուիրեալս զանձն քո և ըղձանգիտաս առ 'ի բարերարել մարդկան՝ տացուք 'ի գովեստ : Ո՞նակեր զբարեգործութիւնս անձն է գովել :

Նաղուածք յորէնադրաց մարդկեցան ընդ կուռպաշտանաց . խակ դու խեղանձեալ զատար ընդ արտաւզի զծառայս երանաւէլել զաղդէս [2] : Կոչեցաւ , զի 'ի խառաւրի աղխատութեան խաղաղաւորեաց ծանրանաւ զսիրտ մարդոյ՝ քան խոնարհեցուցք 'ի պայծառ գիտութեան յայտնեցի :

Կոչհաւատք զքեզ , զի եղեր սանձ խղճմտութեան ապրողաց , խելաւութեան տաղկին , անհաւահատութեան ճշմարտից , և կերակուր մարդոյ և սատաքնութեանց : Նր կացուցեր 'ի մէջ մեր խղճման անձնատուր անձնատուր և անկայշառ , և բաղմեցուցեր զօրէնս յաւթուռ , և զպատուադրու մեր եղեր առ սուն նոցա , մինչ այժմ մարդոյ բաղմե-

[1] Եբրայեց . գլուխ Ա . գլ 65 : [2] Քանինգեան , յղ . Հաւ Զօրաւորքոս , գլուխ Գ . գլ . Սաղմոս . Կ2 67Ե . 16 . Կ2 43 .

լով յաղթութ., ընդ ոտիւք նորա զնմին օրէնք ։ Չանս գոյն արմանենայ օրէնք զպտուղ խեր ջանքէ բազմելոց առ հասարակ ՚ի հովանաւոր իւրում. իսկ թանաւկայն որպէս ՚ի բարձու լերին ծառ, առ որով իժք և անգեղք բունին ։

Պահանմանք գքէն, որ թեթևաբերան զմիտս մեր արարեր՝ նուաղութեան թողեալ ՚ի անս ախտից իրաց ճշգրիտ և օգտակար, և չունել մեզ իշխա աւելի քան զայլս ։ Որ քաջայայտս զմեզ արարեր, չխնդրել ՚ի գլխոյ զարիութիւն սոյլ բազց առ ՚ի աստ- նել անխրատութեան [1] ՚ի գէթ ժամանակի ։

Որ տեսանելով զօրէնս քո վսեմ և գեղեցիկս զորդւս իմն խնդանաճեամ առանց բաղխելոյ ընդ մե- մեամս և քայքայելոյ, զուարճանայիր՝ որպէս ՚ի տուչութենէ ամեայ զխոսեանք՝ հանդգյն գերա- գոյն էին, որ զուարճանայր ՚ի տեսանել զարիւ- նեալս նաւապետեալ յերկրին՝ կատարելով բա- շարժմունսն գեղեցկայարմար կարգաւ [2] ։

Որ հեռու անցեալ քոյ ընդ երկիր զպատերազմու- թիւնս քո թողեր . երանեալ է մեզ, եթէ անմա- ռաց յիշատակաւ նոցին՝ կարասցուք թողուլ թո- ռանց մերոց զաւանդս զայս որպէս հայրենի մեր ընկալեալ ։

[1] Պօսու . կարգադր . լա- կոն . հտ . Չ . էջ 239 ։

[2] Նոյն ՚ի Սիկուրգ . հտր . 1 . էջ 57 ։

ԳԼՈՒԽ ԽԴ.

Կարգ տէրութեան սպարտացւոց :

ՅՈՐՄԷՀԵՏԷ քաղաքաժողով միաբանութիւնք հաստատեցան, Թագաւորք զօրն գործէին յաւելուլ զիշխանութիւն իւրեանց, և ժողովուրդք 'ի սեպհականացուցանել զայն : Սպարտէ՝ 'ի հակառակ ջանից սոցա դրդեալք, տատանեալ էր 'ի Սպարտա 'ի վերայ երկուցեան քան այլուր : Լիկուրգ Թագաւորք երկոքեան, յաձախ սպառնական, և կառավարեալ երկպառակութեան ունելով բաղդական, զարձեալ և ժողովրդական այլք սպառնալեօք և ասպահալ ոչ հրամանեցեալ ունեին և ոչ հնազանդեալ, վասնորոյ 'ի վասն ամենայն փոխանակարանց ընդդէմ տէրութեանն, մերթ 'ի չարաչար բռնաւորութիւն, և մերթ 'ի ծայրագոյն ազատութիւն անիշխանութեան[1] :

Այլ էր մարթ խառնութեանն Լիկուրգեայ Թողուլ 'ի յետ յետոյ կարգն ամբարշտին զանուղղութիւն հրաց աշխարհին[2], և ոչ բարեկարգեալ 'ի ձեռս երկուց ազգատոհմիցն արքայազանց . Նախ իւր խնդրէր նա հնարս ամենահաւասարս խառնութեանց զզօրութիւն, և եգիտ զայն 'ի Կրետէ : Գիտելի էր անդ ատեան ծերակոյտ 'ի վերայ

1 Պղուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. եղ 42 :

2 Նոյն առակաւքն. հտ. 2. եղ 228 :

իշխանութեան Թագաւորին [1]. և հանդերձ իւր այնմ առնէր կայսրն 'ի Սպաղարտա : Նորա քաջու-թեւ քաջահմուտք ընտրեցան բաժանորդք ար-քունի իշխանութեանն [2]. և առհասարակ իւրոյ կարևորաց աշխարհին 'ի մեհեանս ծերակուտի անդ դատէր՝ երկուց Թագաւորացն բարեխնամ անդ գահերէց, և զի լաւ բարեկամութեանն կայ-ծեաց առաջի վճիռ [3], և վճիռն առնէր 'ի հանրա-խուսէ ժողովոյ արքային՝ որում անձ կայ հաստատեալ կամ եղծանել զայն, ոչ ունելով իշխանութիւն ընդ և ոչ մի ինչ փոփոխմանն առնելոյ 'ի նմա [4]:

Նայց առ ազատ բարգաւաճութեան պայմանացն, և կամ զի ընդունելութեան վճռոյն ընդդիմադարձս բո-հեալ զանն իւրեք փոփոխմանցն առնելոյ 'ի նմա, առակաւ ժողովրդեանն յարաժամաբերաց իւր իրաւունս փոփոխելոյ զայն յաւելուածովք և զեղչմամբք: Նայլ զօրութեանցն գաւառ բարձին 'ի մասնա Կիլիկիոյ և Մեծամաղեկ, Թագաւորեալ անձն իւր հարկապահներեմնիւք յետոյ քան զՆ Լիկուրգոս [5]. քանզի եղաւն յաւելու զերդիախական հարցելին մեւ ևս պատուական 'ի հրամանատն. որով իշխանու-թիւնք ընդդիմանալեաց բաշխեցան [6]:

Նորականացն մինչև ցայնժամ 'ի կղզիս կայեալ

1 Սմբատ. յղ. հրտ. գիրք հաւաքմ. գիրք Բ. գլ. 14. հտ. Բ. գլ. 10. հտ. 2. եր 332: 1. եր 264:
2 Գլուխ. յղ. որ. գիրք Գ. հտ. 2. եր 692: Վահրամ. 'ի Լիկուրգ. հտ. 1. եր 42:
3 Դուրէն. ազգի. հնութեք
4 Վահրամ. անդ, եր 43:
5 Նոյն անդ:
6 Նոյն անդ:

էր՝ զիշխանութիւն Թագաւորաց և ռամկին. այլ քանզի ծերոյն իշխանութիւն և Թագաւորաց մինչև ցկեանս տևէր, վասն զի էր կարի իմն միաբանելոց նոցա ժամանակաւ, և ոչ ևս միմեանց ընդդէմ դառնալոց: Այլ իւր իշխանակիցք նոցա կացուցանէ դատաւորս հինգ՝ եփորոսք անուանակոչեալք կամ պարէտք, վրէժխնդիրք իրաւանց ժողովրդեան: Արիստոտէլ ասէ, նա զատեանս զայս միջնորդ կացոյց համաձայնութեանն ազգին [2]*:

Իսկ թէ իմաստասիրացն ընտրեալք բանից, Արիստոտէլ ամփոփեալ զիշխանութիւնն՝ համառօտագոյն զայն առաւ և տևողագոյն [3]: Այլ եթէ յետ կառավարածի իւրայն հայեցեալք, առ ՚ի [illegible]խանել զվնասն որ չէ ևս ՚ի վերայ կայր, պատրաստեաց նոա միւս այլ՝ որում հարկ էր վաղ կամ անսաման հաստանել: Ըստ առհամեմատութեանն Լիկուրգեայ՝ գեղեցիկ ընդ միմեանս խառնէին Թագաւորութիւն՝ ազնուապետութիւն և ընկերհասութիւն. Արիստոտէլ յաւել ՚ի նոսա զռամկապետութիւն [4], որ յաւուրս մեր ՚ի բռնաւորու-

[1] Պղուտ. ՚ի Լիկուրգ. հա. 1. էջ 43: Պոլիբ. գիրք Զ. էջ 459:

[2] Արիստոտ. գիրք Ե. գլ. 11. հա. 2. էջ 407: Պղատ. անդ: Վաղ. Մաքս. գիրք Դ. գլ. 1: Դիոն ոսկեբ. ճառ. 56. էջ 565: Պիկեր. յղ. օր. գիրք Գ. գլ. 7. հա. 3. էջ 164:

* Ցեսակայս մասնենս ՚ի անզեկութիւնս. Թիւ ԻԲ:

[3] Պղատ. յղ. օր. գիրք Գ. էջ 692: Արիստոտ. գիրք Ե. գլ. 11. հա. 2. էջ 407:

[4] Արքեա. առ Սոսոր. էջ 269: Արիստոտ. յղ. հաս. գիրք Բ. գլ. 6. էջ 321:

Թխուն զառածաւ [1]։ Տեսցուք արդ ՚ի հարևանցի զայլ և այլ մասունս կարգի տեսչութեանս որպէս այժմս են, և ոչ որպիսիք էինն երբեմն. զի այլ այլեալ են այժմ զրեթէ առ հասարակ [2]։

Թագաւորացն երկոցունց պատիւ է գոլ յազգէ Հերակղեայ, և ոչ օրէն է նոցա կին առնել օտարազգի [3]։ Պարէտք տեսուչք կան տոհմաց նոցա, զի մի գուցէ ծննանիցին ժառանգ խորթ՝ օտարասերմն ՚ի մեծափառ զարմէն [4]։ Իսկ եթէ ընդդրունեսցի ոք ՚ի նոցանէ ՚ի չնութեան, կամ կասկած ծանր եթէ լիցի զումեքէ, տարագրեն որդիք նորա ՚ի դասս ժողովրդեան [5]։

Յերկոքանչիւր ազգատոհմին արքունի՝ անդրանկին յորդւոց է ժառանգութիւն Թագին. և առ ՚ի չգոյէ որդւոյ՝ եղբօր արքային է անկ [6]։ Ի վաղամեռուիկ լինել անդրանկան քան զհայր իւր, կրտսեր եղբօրն է անկ. այլ եթէ անդրանկանն գուցէ որդի, նախապատիւ է քան զհօրեղբայրն [7]։ Իսկ առ ՚ի չգոյէ մերձաւոր ազգականաց՝ ընտրեն հեռաւորք, և ոչ ոք յօտար ազգատոհմէ [8]։

1 Պղատ. յղ. օր. գիրք Դ. էջ 712։
2 Քսենոփոն, յղ. հաս. Սպարտ. էջ 690։
3 Պղուտ. յԱգէս. հտ. 1. էջ 800։
4 Պղատ. յԱղկիբ. հտ. 2. էջ 121։
5 Երոդոտոս, գիրք Զ. գլ. 63։ Պաւսանիաս, գիրք Գ. գլ. 4. էջ 212։ գլ. 8. էջ 224։
6 Երոդոտ. գիրք Ե. գլ. 42։ Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Գ. էջ 493։
7 Պղուտ. անդ, էջ 796։
8 Նէպ. յԱգէս. գլ. 1։

Մեծք ժառանգութեան թագի դատերն եւ վըճռերն 'ի համախմբումբ ժողովոյ ազգին[1]: Եթէ թագաւորի ամուլ պատահէ կեալ, պարտ է նմա որձակել զնա 'ի բաց[2]: Սական որոյ զՆաքամանդրիդէս՝ որոյ զդուստր քեռ իւրոյ ածեալ էր կնութեան եւ յոյժ սիրէր զնա, կոչեցին պարէտք յատեան, եւ ասեն. Ոչ է մեզ արժան թողուլ, զի սպառեսցի տոհմն արքունի. այլ 'ի բաց արա ըզկին քո, եւ կալ քեզ զայլ ոք կնութեան, որ ծնանիցի ժառանգ աթոռոյն: Եւ 'ի ստուգանել թագաւորին՝ համախոհութեամբ ծերակուտին ասեն զնա. Արա զոր ասեմքն, զի մի հարկ լիցի սպառնացելոցս ձեռնարկել 'ի խռովութիւն. առանց խղճելոյ զկապանաց քեզ ըղձալիս, մինչ զքեւ միւս եւս՝ որ պատսպարան լիցի յուսոյ մերում: Ոգոյր էին հակառակ քան զայն օրինաց Սպարտայ, սակայն հնազանդեցաւ Նաքամանդրիդ, եւ առ միւս եւս կին՝ յորմէ ծնաւ նմա որդի, այլ ոչ եթող 'ի սիրոյ իւրմէ զառաջին կին իւր; յորմէ յետ սակաւ ժամանակի ծնաւ անուանեալն Լեւոնիդաս[3]:

Հանդերձեալ թագաժառանգն ոչ էր այլ մանեկրտին դաստիարակի[4], զի մի կարի ընտանութեամբն վերջացեալն նոքա 'ի մեծատանաց՝ զոր

1 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Գ. էջ 493: Նոյն յԱգես. էջ 652:

2 Հերոդոտ. գիրք Զ. գլ. 63:

3 Նոյն. գիրք Ե. գլ. 39: Պաւսան. գիրք Գ. գլ. 3. էջ 211:

4 Պլուտ. յԱգես. հա. 1. էջ 596:

պարտին առ յանպա ըերել նմա։ Այլ ոչ ինչ նուազ խնամքն լինէին 'ի դաստիարակութիւն նորա. խելամուտ առնեն զնա աղքունական փառացն, այլ առաւել ևս պարտուց իւրոց։ Մի ոմն 'ի սպարտացւոց ասաց երբեմն ցԿղէոմէն. Պիտոյցէս զի պարտ է թագաւորի լինել մարդասէր։ Այո նա ասէ. Պիտանեմ քաջ, այլ չէ պարտ նմա արհամարհ առնել զանձն[1]։ Այս այլ ոմն 'ի թագաւորացն սպարտացւոց ասաց ցազգականս իւր, որք անիրաւ ինչ խնդրէին 'ի նմանէ. Դուք ինքնին ուսուցիք զիս անհնազանդել ձեզ յիրս յայսմիկ[2], ուսուցանելով ինձ՝ զի պարտ է թագաւորի առաւել քան զամենայն քաղաքացիս հնազանդել օրինաց։

Լիկուրգոս կաշկանդեաց զձեռս թագաւորաց, այլ եթող նոցա զպատիւ և զազատութիւն՝ զոր ժառանգեն որպէս դենպետք և առաջնորդք իւրեանց աշխարհին և զօրավարք։ Նուման զարդաղութիւնս ինչ կատարեն, զքրմութիւն յանձին բերելով[3]. և զամենայն կարգս հասարակաց պաշտամանց ինքեանք սահմանեն, կատարողապետք կացեալ[4]։ Որ 'ի կարող լինելոյ նոցա ուղերձել ղեկ զուխտս իւրեանց և զաշխարհին[5],

1 Պղուտ. առակ. Լակոն. հտ. Բ. էջ 223։

2 Իսոկր. յղ. խաղաղ. հտ. 1. էջ 431։ Պղուտ. անդ. էջ 216։

3 Երոդոտ. գիրք Զ. գլ. 56։

4 Նոյն անդ. գլ. 57։ Արիստոտ. յղ. հասա. գիրք Գ. գլ. 14. հտ. Բ. էջ 356։ Դիոնէ. ալիկ. հնութիւնք հռովմ. գիրք Բ. հտ. 1. էջ 264։

5 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Գ. էջ 493։

տայ նոցա աշխարհն յառաջնումն և յեօթներորդումն աւուր ամենայն զոհ և զինի և ալիւր գարւոյ [1] ։ Օրէնք է երկաքանչիւրոցն ածել ընդ իւրեանս պաշտօնեայս երկու կամ հարցուկս, որք ոչ մեկնեին 'ի նմանէ, և կոչին նոքա պիւթեանք ։ զի ըստ պիտոյից արձակէ զնոսա թագաւորն հարցանել զՊիւթիա, և ունի 'ի պահեստի զպատգամսն զոր ածեն [2] ։ Մի 'ի կարեւորագունից արդեօք իշխանութեանց աշխարհին է սա . զի որք զիշխանութիւնս զայս ունին՝ խորհրդակիցք են ընդ դեղփականն քրմին տուօղս պատգամաց, որովք յաճախ սահմանի բախտ պետութեանն ։

Թագաւորն 'ի տեսչութիւն իրաց աշխարհին բազմեալ յաթոռ, կարող է թողուլ քաղաքացւոյ զպարտս՝ որ պարտիցի ինչ նախորդի իւրում կամ հասարակաց գանձուն [3] * ։ Ժողովուրդն սահմանէ նմա բաժինս վիճակաց [4], զորս օրէն է նմա մինչև ցկեանս յօգուտ ազգականաց իւրոց 'ի կեր արկանել [5] ։

Թագաւորք երկոքեան զահերեցք ծերակուտին բազմեալ, առաջի ածեն զիրս զորոց հարկ իցէ խորհել [6], և երկաքանչիւր տան զվարկ իւրեանց ։ Իսկ եթէ 'ի բացեայ իցեն, տան 'ի ձեռն

1 Երոդոտ. գիրք Զ. գլ. 57 ։ Քսենոփոն, յղ. հաս. Սպարտ. էջ 690 ։

2 Երոդոտ. անդ ։ Քսենոփ. անդ ։

3 Երոդոտ. անդ, գլ. 59 ։

* Այս օրէնք էին և 'ի Պարսս ։ Երոդոտ. գիրք. Զ. գլ. 59 ։

4 Քսենոփ. անդ ։

5 Նոյն, յԱգես. էջ 665 ։

6 Երոդոտ. անդ, գլ. 57. Դիոն. ալիկ. հնութիւնք հռոմ. գիրք Բ. հա. 1. էջ. 264 ։

միոյ ուրուք 'ի ծերոց ծերակուտին յազգականաց իւրեանց [1]. և վարկ նոցա զերկուց ունի զօրութիւն [2]: Ի դատս որ ածին 'ի համախօսութե ժողովս աշխարհին, ըստ բազմագոյն թուոյ ելանէ վճիռ: Յառաջարկել երկուց թագաւորաց միաբան խորհուրդ լինի, որ յայտնապէս յօգուտ իցէ աշխարհին, ոչ է օրէն ումեք հակառակ կալ այնմ [3]: Ի միաբանութենէ աստի նոցա չիք լինի վըտանգ հասարակաց ազատութեան. քանզի երկոքին ազգատոհմք արքունի նախանձընդդէմք են միշտ միմեանց [4], և դուն ուրեք պատահէ արքայիցն երկոցունց հաւասար ունել զխոհութիւն առ 'ի ճանաչել զստոյգ օգուտ աշխարհին, և հաւասար քաջութիւն առ 'ի կացուցանել զայն: Պատք ճանապարհաց յարդարելոյ, և կարգաց ուղեգրութեան, և ընտրութիւն ազգականին տուրչ զղաւստր որք և ժառանգ անկ իցէ առնուլ կնութեան, այս ամենայն 'ի նոցանէ սահմանին [5]:

Չէ օրէն թագաւորաց 'ի ժամանակի խաղաղութեան հեռանալ յաթոռոյ [6], և ոչ 'ի պատերազմի երկուցն միանգամայն [7], բայց եթէ բանակք կրկին կազմիցին: Զի անկ է նոցա իւրումի

1 Երոդոտ. գիրք Զ. գլ. 57:

2 Թուկիդ. գիրք Ա. գլ. 20: Պղուտարք. անդ: Ղուկիանո. Ներգաշնակ. գլ. 3. հա. 1. էջ 855: Մեւրս. յղ. պետութեան սպարտ. գլ. 23:

3 Պլուտ. յԱգիս. հա. 1. էջ 800:

4 Նոյն տուակ. Լակոն. հա. 2. էջ 215:

5 Երոդոտ. անդ:

6 Պլուտ. յԱգես. հա. 1. էջ 800:

7 Երոդոտ. գիրք. Ե. գլ. 75: Քսենոփ. պատմ. Յուն. էջ 562:

զօրավարին[1] . և սահմանեաց Լիկուրգոս երևել նոցա 'ի բանակի ամենայն շքով և իշխանութեամբ, որ յորդորեն զզօրականն 'ի մեծարանս և 'ի հնազանդութիւն ։

Ի չու առնել զօրականին, թագաւորն զոհս մատուցանէ Արամազդայ . և մի 'ի պատանեաց առեալ 'ի բագնէն խանձող բոցավառ, ածէ զայն առաջի զօրացն մինչև յեզր սահմանաց աշխարհին, ուր միւսանգամ զոհ մատչի[2] ։

Յաշխարհէն ելանէ ռոճիկ զօրավարին և իւրոցն, որ են Թիկնապահք նորա սովորականք . և Պիւթեանքն երկոքին կամ հարցուկք՝ զորոց վերագոյն ասացի, և մարտպետք կամ աւագ սպայք՝ ընդ որս հանապազ խորհրդակցի, և պաշտօնեայք երեք 'ի ձեռանէ՝ օգնականք նմա յամենայն 'ի պէտս[3] ։ Յորժամ զերծեալ զօրավարին յամենայն առանձին հոգոց, պատրաստ 'ի գործս պատերազմին անզբաղ ։ Նմա անկ է ռազմ կարգել, և տալ առնել մարտի[4], և ընդունել և արձակել զհրեշտակս օտար ազգաց[5] ։ Այլ պարետացն երկոցուն, որք ընդ նմա կան, ոչ այլ ինչ գործ է՝ բայց զգուշանալ անեղծութեան բարուց . և անհրաժեշտ 'ի զօրավարէն չխառնին յիրս ինչ[6] ։

1 Քսենոփոն, յղ. հասա. Սպարտ. էջ 690։ Արիստոտ. յղ. հաս. գիրք Գ. գլ. 14. հտ. 2. էջ 356։
2 Քսենոփ. անդ, էջ 688։
3 Նոյն անդ։
4 Թուկիդիդէս, գիրք Ե. գլ. 60։
5 Քսենոփ. անդ, էջ 689։
6 Նոյն պատմ. Յուն. գիրք Բ. էջ 477 և 478։ Նոյն յղ. հաս. Սպարտ. էջ 688։

Յառաջ քան զաւուրս զայսոսիկ եղեն կաս-կածք զզօրավարաց ումանց դաւաճանելոյ զազա-տութիւն հայրենեաց, և մատն լինելոյ օտարի նորա, կաշառակերութեամբ կամ ունկնդրու-թեամբ հրապուրողաց[1]։ Յանցանաց այսոցիկ պատուհասք ըստ հանգամանացն սահմանէին տու-գանք ծանունք, կամ աքսոր, և կամ անկումն յաթոռոյ և 'ի կենաց իսկ։ Ի թագաւորաց ամ-բաստանելոց ոմն փախուցեալ 'ի մեհեան ուրեք ապաստանեցաւ[2]. և այլ ոմն խնդրեաց շնորհս 'ի ժողովոյն, և եղև նմա թողութիւն՝ բայց միայն զի յայնմ հետէ զամենայն արասցէ ըստ խորհրդոց տասանց սպարտացւոց, զորս ինքն ժողովն կացոյց առ նմա 'ի բանակին[3]։ Տակաւ թուլանայր վստա-հութիւն ընդ թագաւորին և ընդ աւագանին, և ընդ հուպ 'ի պատերազմունս փոխանակ թիկնա-պահաց կացցեն զնովաւ լրտեսք և չարախօսք ընտրեալք 'ի թշնամեաց խմբոյ[4]։

Ի ժամանակի խաղաղութեան թագաւորք հա-մարին աւագագոյնք 'ի քաղաքացիս առաջին քաղա-քի. և հանգոյն քաղաքացւոց առանց թիկնապա-հաց և առանց շքոյ երևէին 'ի հրապարակ, և իբր աւագագունից քաղաքացւոց ընծայի նոցա

1 Երոդոտ. գիրք Զ. գլ. 82։ Թուկիդ. գիրք Ա. գլ. 132։ Պաւսան. գիրք Գ. գլ. 7. էջ 221։

2 Թուկիդ. գիրք Ե. գլ. 21։ գիրք Ե. գլ. 16։ Պաւ-սան. անդ։

3 Թուկիդ. անդ, գլ. 63։ Դիոդ. գիրք ԺԲ. էջ 126։

4 Արիստոտ. քղ. հաս. գիրք Բ. գլ. 9. հա. 2. էջ 331։

առաջին տեղին, և ամենեքին յառնեն առաջի նոցա, բայց 'ի պարետացն բազմելոց յառնէին[1] : Ի խափանել նոցա գալ 'ի ճաշ հասարակաց, առաքէր առ նոսա գինի և ալիւր[2] . իսկ 'ի հրաժարել նոցա 'ի գալոյ առանց ինչ հարկի, չառաքէր ինչ առ նոսա[3] :

Ի ճաշս յայսմիկ, և այլ ուրեք օրէն է նոցա ճաշել առ քաղաքացիս, դնէին առաջի նոցա կրկին բաժինս՝ առ 'ի բաժանակից առնելոյ նոցա զսիրելիսն ընդ իւրեանս[4] : Պատմութիւնք այսոցիկ մանրապատում ճառք մի աւելորդք թուեսցին. զի պատիւք ամենայն ուրեք ոչ միայն ինչ են, բայց նշանք պայմանեալք ըստ ժամանակի և ըստ տեղեաց, և նշանակք պատուոյ տուեալք թագաւորացն սպարտացւոց, ոչ ինչ նուազ պատկառելիք էին ժողովրդեան քան զբազմաձեռն ամբոխ թիկնապահաց արքային Պարսից :

Թագաւորութիւն յազատեաց 'ի Սպարտա. նախ զի բաժանեալ էր յերկուս ազգատոհմս, և զիշխանասիրութիւն միոյն վաղ սանձահարէր նախանձ հակառակութեան միւսոյն և վրէժխնդրութիւն աւագանւոյն : Եւ դարձեալ զի ոչ երբէք նկրտելով թագաւորաց յաւելուլ զիւրեանց

1 Քսենոփոն, յղ. հատ. Սպարտ. էջ 690 : Հերակղ. պոնտ. յղ. հնութեանց Յունաց, հտ. 6. էջ 2823 : Պղուտ. տաւակ. Լակոն. հտ. 2. էջ 217 :

2 Երոդոտ. գիրք Զ. գլ. 57 :

3 Պղուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 46 :

4 Երոդոտ. անդ : Քսենոփ. յԱգէս. էջ 668 :

իշխանութիւն, չեղեն երբէք կասկածելիք ժողովրդեան [1]: Այլ մանաւանդ 'ի չափոն կալեալ սիրելիք են նմա 'ի կենդանութեան [2], և սգալի է ամենեցուն մահ նոցա: Ընդ վախճանել Թագաւորի, կանայք ընդ փողոցս հնչեցուցանելով անօթըս պղնձիս զուժեն զհասարակաց սուգն [3]: Յարդ 'ի շուկայն սփռեալ տարածանեն, և ոչ ինչ գնի անդ 'ի վաճառ զաւուրս երիս [4]: Արձակին հեծեալք զուժել ընդ աշխարհն, և հրաւիրել յազգաց և 'ի սորկաց զայնոսիկ՝ որոց անկ է գալ 'ի հանդէս յուղարկաւորութեանն: Սպիւռք բիւրուց սորկաց խառնին անդ, կէսք զձայնկաւան ցուելով, այլք ողբս առեալ ձիգս, զկականս բարձեալ՝ Թէ զիա՞րդ բարձաւ լուսազոյնն 'ի Թագաւորս [5]: Սակայն բռնաւոր զնա հասանողին Թշուառականքն զորոյ սոփալինն աշխարհել զմահ: Գիտեն զայն սպարտացիք. բայց զի յինքեանց հարկ է ըստ օրինացն Լիկուրգեայ՝ ժոյժ ունել ողբոց և արտասուաց, կամին զի սորկացն և ծառայից իւրեանց աշխար կեղծաւոր զանկեղծիկ սուգ սրտից իւրեանց յեղանակաւ իմն ածցէ 'ի տեսիլ:

Յանկանել Թագաւորի 'ի մարտի, զնեն զպատ

1 Քսենոփ. յՍեղէս. էջ 651:

2 Խոսկր. ձառ. 'ի Փիլիպ. հա. 1. էջ 269: Նոյն յղ. խաղաղ. էջ 431:

3 Երոդոտ. գիրք Զ. գլ. 58: Պարսաւ. Թէոկր. 'ի գեղձան 2. տող 36:

4 Հերակղ. պոնտ. յղ. հրռութեանց. Յունաց, հա. 6. էջ 2823:

5 Երոդոտ. անդ: Եղիան. զան. պատմ. գիրք Զ. գլ. 1: Պաւսան. գիրք Դ. գլ. 14. էջ 313:

6 Պլուտ. կարգադր. Լակոն. հա. 2. էջ 238:

կեր նորա 'ի վերայ շքեղ անկողնոյ. և զաւուրս տաւոն ոչ ժողովք գումարին, և ոչ ատեանք դատաստանաց դնին[1]: Նա զգլխն 'ի մեղր կամ 'ի մոմ թաթաւեալ, և անապական ածեալ[2] թաղեն օրինաւոր կարգօքն 'ի թաղ մի քաղաքին՝ ուր գերեզմանք թագաւորացն են[3]:

Ծերակոյտն, որ յերկոցունց թագաւորացն և 'ի քանակութ ծերոց կազմի[4], է գերագոյն ատեանն[5]. և անդ սահմանին պատերազմ, խաղաղութիւն, նիզակակցութիւնք, և ամենայն իրք ծանունք և կարևորք աշխարհին: Յատեան անդըր մտանել այնպէս է, որպէս յաթոռ փառաց բազմել. ոչ ումեք շնորհին փառքն այն, բայց միայն որոց 'ի մանկութենէ պայծառացեալ խոհական խոհեմութեամբ և վեհ առաքինութեամբք[6], և 'ի վաթսնամեայ տիս հասեալ իցեն. և ժառանգեն զայն մինչև ցկեանս[7]: Քանզի չիք երկիւղ տկարանալոյ հանճարոյ նոցա. զի սպարտական կենցաղովն և միտք և մարմին նուազ քան այլուր զառամին 'ի Սպարտա:

Ի վախճանել ուրուք 'ի ծերոց ծերակուտին,

1 Երոդոտ. գիրք Զ. գլ. 58:

2 Քսենոփ. պատմ. Յունաց, գիրք Ե. էջ 564: Պլուտ. յԱգես. հտ. 1. էջ 618:

3 Պաւսան. գիրք Գ. գլ. 12. էջ 237: Նոյն անդ, գլ. 14. էջ 240:

4 Կրագ. յղ. հաս. սպարտ. գիրք Բ. գլ. 3:

5 Պաւսան. անդ, գլ. 11. էջ 231:

6 Դեմոսթ. 'ի Ղեպտին. էջ 556: Ուլպիան. անդ, էջ 589: Եսքին. 'ի Տիմարք. էջ 288:

7 Արիստոտ. յղ. հաս. գիրք Բ. գլ. 9. հտ. 2. էջ 330: Պոլիբ. գիրք Զ. էջ 489:

յառաջանանայց լինելին բազումք յաջորդել նմա . և պարտ է նոցա յայտ առնել անապատորդական զկրդ-ձըս իւրեանց ։ Ձեռնտու ուրեմն եղև Լիկուր-գոս փառասիրութեան [1] ։ Այլ կարի իսկ քաջ-այլ այնմ փառասիրութեան , որ փոխարէն առա-սաւորութեանն հայրենեաց խնդրէ պատուաւորել նմա և նա ։

Ի հրապարակի առնի ընտրութիւնն , անդր գումարեալ ժողովրդեան ընդ Թագաւորս և ընդ ծերս ծերակուտին և ընդ այլ և այլ դասս առա-ջանեայն ։ Իւրաքանչիւր որք յընտրելեաց առեալ զկարգն վիճակաւ [2] , շուրջ գայ անբարբառ զաչս 'ի խոնարհ ունելով , և բարբառք ղողանջեաց առաւել կամ նուազ հնչեն 'ի պատիւ նորա ։ Այլ արք Թագուցեալք 'ի մերձակայ ուրեք տան , ուստի ոչ ինչ տեսանեն , միայն զձայն բարբառոյ ղողանջեացն որ լսեն . և 'ի վճարել հանդիսին՝ յառաջանայուցեալ յայտ առնեն յորում նուագի իղձք ժողովրդեանն սաստկագոյն և երկարատև բարբառովն ծանուցան ։

Այլ զհետ այդր մրցութեան , ուր առաքինու-թիւն յառաքինութենէ ևեթ յաղթահարի , յաջորդէ ազգ իմն յաղթանակի ։ Ընծեն զյաղ-թանակն ընդ ամենայն Թագս քաղաքին պսակա-ւոր , և զհետ նորա բազմութիւն երիտասարդաց և երիտասարդուհեաց՝ որ երգեն զառաքինու-

[1] Արիստոտ. յղ. հաս. գիրք Բ. գլ. 9. էջ 331 ։
[2] Պղուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 55 ։

Թիւնս նորա և զյաղթութիւն ։ Այլ մեռեալ 'ի մեհեանսն՝ արկանէ խունկս, և 'ի տունս ազգականաց իւրոց՝ ուր կարկանդակք և միրգք 'ի սեղանի տարածեալ կան, և ընտանիքն ամեն ցնծա. Ո՞ւ ընկալ զընծայքս, որովք մեծարէ զքեզ աշխարհս 'ի ձեռն մեր ։ Այլ ընդ երեկս ամենայն կանայք ազգականք նորա ժողովին 'ի դուռն սրահին, ուր գայ նա ուտել ընթրիս. և հրաւիրեալ առ ինքն զմի 'ի նոցանէ, որ առաւել քան զամենեսին մեծարոյ է նմա, զմի յերկուց մասանցըն որ դնին առաջի իւր՝ մատուցանէ նմա, և ասէ. Քեզ յանձն առնեմ զմրցանակս պատուոյ զոր ընկալայ ։ Այլ այլք առ հասարակ գովեն զընտրութիւնն, և ածեն անդրէն զընտրեալն 'ի տուն իւր մեծարանօք ցանկալեօք[1] ։

Յայնմ հետէ պարտ է նորոյ ատենակալին նուիրել զմնացուած կենաց իւրոց 'ի գործս պաշտաման իւրոյ ։ Այսք պատկանին յիրս աշխարհին, որպէս վերագոյն ցուցաք. և կեանք 'ի դատս ինչ իւրաքանչիւրոց ոմանց, որ պահեալ են ատենի ծերակուտին ։ Յրի 'ի սմանէ են ոչ միայն կեանք քաղաքացւոց, այլ և ինչք նոցա[2], այս ինքն է պատիւ. զի ստոյգ տպարտացին ոչ գիտէ այլ մեծութիւնս ։

Յաւուրս բաղում քննին ոճիրք մահապարտութեան, զի 'ի սմա սխալանք՝ անուղղելիք են ։

1 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. եջ 56 ։
2 Նոյն անդ, եջ 55 ։

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

1 [illegible] Ա. [illegible] 132: [illegible] 2. [illegible] 217:

2 [illegible] 288:

3 [illegible] 5. [illegible] 215:

4 [illegible] 2. [illegible] 804: [illegible] Բ. [illegible] 8:

5 [illegible] Eφορ. [illegible] Ա. [illegible] 86:

6 [illegible] Ե. [illegible] 36: [illegible] 1. [illegible] 597:

որ սահմանեալ է 'ի ծնունդ լուսնին զկնի աշնայնոյն հաւասարականութեան, տանոյն զիշխանութիւնն [1]. և յանուն աւագագունին 'ի նոցանէ կոչի ամն [2]. զի 'ի ժամանակագրել զդէպս ինչ, շատ է ասել՝ յաւուրս այսր անուան պարետի անցին իրքս այս:

Ժողովրդեան անկ է ընտրել զնոսա, և յամենայն դասուց քաղաքայնոց օրէն է ամբառնալ յիշխանութիւնն [3]: Նոր աննուլ նոցա զիշխանութիւնն, այնուհետև ժողովուրդն համարի զնոսա պաշտպանս իւր. յայն սակս իսկ և յաճախէ օրըստօրէ զարտունութիւնս նոցա:

Եկուրգոս, որպէս յառաջ ասացաք, զատեանս զայս ոչ եմոյծ 'ի յօրինուած սահմանադրութեան իւրոյ. այլ երևի յետ իբր՝ հարիւր և յիսուն ամաց թողեալ թագաւորաց սպարտացւոց բազում ինչ 'ի կարևոր մասանց իշխանութեան իւրեանց 'ի պարէտս, և ապա ջանիւք Աստերոպեայ ուրումն աւագագունի նոցա զօրացեալ իշխանութեան ատենին [4]: Որ և յաւարէ իշխանութեան ծերակուտին և թագաւորացն տակաւ մեծացեալ՝ եբրէ արդ յինքեան զբարձրագոյն իշխանութիւնս, զդատաւորութիւն, զխոր-

1 Տոռուէլ, յղ. շըլանայ, Ճառ 8. յօդ. 5. էջ 320:

2 Պաւսան. գիրք Գ. գլ. 11. էջ 232:

3 Արիստոտ. յղ. հաս. գիրք Բ. գլ. 9. հտ. 2. էջ 330: Գիրք Դ. գլ. 9. էջ. 374:

4 Պլուտ. յԱգիս, հտ. 1. էջ 808:

նախանձայուզութիւն ուղղութեան բարուց և զօրէ-նաց, զուարթութիւն 'ի վերայ այլ ատենականացն, և զխստասրտութիւն մեղաց հանապազորդ ժողովոյ ազ-գին:

Նշանս տարբերաց գնէ 'ի Հրապարակի [1]. և զօր Հանապազ անցք զուարթին տալ վճիռ զամեն բաստանութեանց, և ամենանէն զմեծս իւրա-քանչիւրոց տանց [2]: Ազատութիւն այս յաւա-ջագոյն սահման էր Թագաւորաց [3]. այլ յաւուրս տասօրեան դատաւորացն Մեծնեայ Հարկ էր առնուլ կամ յանձինս 'ի բաջեաց, ամենազօրեղ զօրն պատ-րետաց [4]. այլ անկ է նոցա մեծն ատենին կալ դատաստանաց, և տալ զվարկ իւրեանց [5]:

Այս քանզի ստորադասացն ասկարք են օրէնք, և 'ի հասարակաց պետութեան Հանապազօր 'ի վեր երեւին յաւութիւնք նորանորք, Հարկ է դա-տաւորաց Թեւլարդութեամբ բանին ուղղել յա-ճախ զիրաւունս: Այնպէս իրի յորմէ Հետեւէ անփո-փոխ ամենայն սովորելոյ մտին 'ի կարգս դատաւո-րաց, յաճախեցին կամակամնք իրաւունսքը զանփո-փոխութեան վճռոց նոցա [6]:

Պարետաց Հոգ մեծ է զդատախազականութեան մանկութեան. Հանապազօր լրտեսեն անձանց զի մի

1 Պաւսան. գիրք Դ. գլ. 11. էջ 231:
2 Պլուտ. յՍոլոն, հտ. 1. էջ 807: Նոյն առակ. Լակոն. հտ. 2. էջ 21:
3 Պաւսան. անդ, գլ. 3. էջ 209:
4 Պլուտ. անդ. էջ 808:
5 Երոդ. գիրք Զ. գլ. 63:
6 Արիստոտ. յղ. հաս. գիրք Բ. գլ. 9. էջ 330:

մանկունս փափկասուն լեցի[1]. ընտրեն 'ի նոցանէ զվարժապետս առ 'ի զարթուցանել 'ի նոսա նախանձ[2]. և երևլին 'ի գլուխ նոցա 'ի համդէսի ուրեք զինուորականս և կրօնականս տօնի, որ կատարի 'ի պատիւ Աթենասայ[3] ։

Այլ աւագանին տեսուչք են կանանցն զնացից[4], իսկ պարէտք քաղաքայնոց ամենեցուն ։ Ամենայն որ ինչ կարէ իսկ միստակար լինել բարեկարգութեան հասարակաց և սովորութեանց հաստատելոց, ընդ դատաստանաւ նոցա է ։ Նաւգումք կոչեցան 'ի նոցանէ յատեան վասն վերջանալոյ 'ի պարտուցն իւրեանց[5], և բազումք վասն զթշնամանս յանձն առնլոյ անդիմադարձ[6]. առաջինքն կշտամբեալք վասն անմեծար առնելոյ զօրէնս, և վերջինքն վասն անփոյթ առնելոյ ըզմեծարանս անձանց ։

Բազում անգամ զհիւրս ընկալեալս 'ի համդէս խաղուց՝ արգելին չզեղծանել հանճարոյն իւրեանց։ Ոմն 'ի ճարտարախօսաց յառաջանանայց եղեճառել զօր և պէտ իրաց զօրն ողջոյն. և նոքա հալածեցին զնա 'ի քաղաքէն[7] ։ Հալածեցաւ երբեմն և Արքիղոքոս վասն աւանդելոյ իմաստ ինչ վատութեան 'ի գիրս իւր ։ Եւ Տիմոթէոս

1 Ագաթարք. առ Աթենէոս, գիրք ԺԲ. էջ 550 ։
2 Քսենոփոն, յղ. հաս. Սպարտ. էջ 679 ։
3 Պոլիբ. գիրք Դ. էջ 303 ։
4 Հեսիքիւս. 'ի բառն Ἁρμός.
5 Պարատ. Թուկիդ. գիրք Ա. գլ. 84 ։
6 Պլուտ. կարգադր. Լակոն. հա. 2. էջ 239 ։
7 Պլուտ. կարգադր. Լակոն. հա. 2. էջ 239 ։

երաժիշտ մինչ դեռ գեղգեղանօք նուագացն ըղ-մայլեցուցանէր զսպարտացիս զգեթէ յաւուրս մեր, մի ՚ի պարետաց մատուցեալ առ նա կոչից ՚ի ձեռին՝ ասէ. Դաստակնիք ՚ի վերայ քո ածա՝ հատանել զչորեսին ՚ի լարից քնարին, ընտրեա քեզէն զոր հատից [1]:

Աղքինքը ՚ի միտ առնուլ է թէ որպէս խոտիւ ատեանն այն պատուհասէր երգեմն զյանցանս, որ արդեանքը մխատակարգը էին օրինաց և բարուց: Այլ զարդիս իսկ, մինչ զեղծումն ամենայն ուրեք սպրդի մտանել, ոչ ինչ նուազ աչհառու է ատեանին այն՝ թէպէտ և ոչ որպէս յառաջին մեծարոյ. և խոտորեալքն յառաջնոց իւրեանց խնամոց՝ զամենայն հնարս հնարին խոյս տալ յերեւաց զատաւորացս այսոցիկ, որք այնչափ ես առաւել խիստք են առ այլս՝ զի ներողագոյնք երգեմն զատանին անձանց [2]:

Պարետաց անկ է պահանջել ՚ի բազմաց յաւագանւոյն զհամար տնտեսութեան իւրեանց [3], խափանել յիշխանութենէ զօրինապանցս յաւագաց, ձգել զնոսա ՚ի բանտ, մատնել բարձրագոյն ատենի, և զատապարտել զնոսա մինչև ՚ի վտանգ մահապարտութեան [4]: Այլ մեծամեծ ինչ իշխանութեան այսորիկ վարին ընդդէմ թագաւորաց,

1 Պղուտ. կարգադր. Լա- 330:
կոն. հա. 2. էջ 238: 3 Նոյն անդ:
2 Արիստոտ. յղ. հաս. 4 Քսենոփոն, յղ. հաս
գիրք Բ. գլ. 9. հա. 2. էջ Սպար. էջ 683:

նուաճեալ զնոսա ընդ իւրեանիւք յերկակարծ իմն եւ այլանդակ օրինակաւ ։ Զնոյն նախարարակս 'ի պայծառ եւ 'ի հողմախաղաղ գիշերի բազմեալ 'ի դիտ-րի, դիտեն զընթացս աստեղաց, եւ եթէ զոլոր-շի ինչ հրավառ ընդ օդս տեսանիցեն սլացեալ, համարէին ապա 'ի կրօնիցն խախտեալ վասն թա-գաւորացն յանցանելոց առ դիս ։ Այս քարոզեալ զնոսա յատեան, ընկենուն յաթոռոյ. եւ ոչ եւս դառնային նոքա յիշխանութիւնն, մինչեւ դել-փեան հարցմանցն արձակեալ զնոսա 'ի յանցա-նացն [1] ։

Թագաւորն ամբաստանեալ 'ի կասկածանս ծա-նուցման յանցանաց իւրոց ընդդէմ աշխարհին գործե-լոյ, կարող է ատեանն դատաւորաց մատնել եւ երկիցս կոչեցեալն յանդիմանութեան ընկերացն ատենի դատաւորացն. այլ յեփորոսացն երկրորդ կոչելի՝ հարկ է նմա հնազան-դել [2]. ապա թէ ոչ, օրէն է նոցա կալեալ ածել զնա 'ի դատաստան [3] ։ Եթէ ոչ յոյժ ծանունք իցեն յանցանքն, իւրովի տուգանեն նոցա պա-րէտք զգաստահաս. որպէս ոչ բազում ժամանակք են, զի զԱգեսիղայոս արքայ դատապարտեցին 'ի տուգանս վասն առաքելոյ նորա պարգեւս իւ-րաքանչիւր ումեք 'ի ծերոց ծերակուտին՝ 'ի մը-տանել նոցա յիշխանութիւն [4] ։

1 Պղուտ. յԱգիս, հա. 1. եղ 800 ։
2 Նոյն անդ, եղ 809 ։
3 Թուկիւդ. գիրք Ա. գլ. 131 ։ Նեպոս. 'ի Պաւսան. գլ. 3 ։
4 Պղուտ. յղ. եղբայրսիրութ-եան, հա. 2. եղ 482 ։

Այս իշխանութիւն իսկ մահու 'ի ձեռն է նոցա . քանզի կոչեն ժողով համախմբութեան[1], և առնեն թուարկութիւն[2] . և զզօրութիւն նոցա անդ մարթ է 'ի միտ առնուլ 'ի համեմատութենէ իսկ հրովարտակացն զոր հանեն անտի , ընդ մեծիս զոր յատենի իւրեանց տան ։ Վասնզի առա 'ի սկզբան դատաւորքն դնի . Հաճոյ թուեցաւ արքայից և պարետաց . իսկ անդ , Հաճոյ թուեցաւ պարետաց և համօրէն ժողովոյն[3] ։

Նոցա յանդիմանն լինին հրեշտակք ազգաց թշնամեաց և նիզակակցաց[4] ։ Նոցա է հող զօրաժողովոյ և չուոյ զօրականին[5], և նոքա յղեն զօրավարին զհրահանգս մարտին[6], ընդ որում և երկուս ոմանս յինքեանց կարգեն՝ լրտեսել ըզգնացս նորա[7] . և է ուրեք՝ զի դադարեցուցանեն զնոսա յառաջարկեղ յաղթութեանցն , և կոչեն զնոսա յետս 'ի շահ անձանց ինչ կամ օգտի աշխարհին[8] ։

Նոյնքան իշխանութիւն յաճախէ նոցա մեծարանս . որում արժանի իսկ են պատուելով ըզ-

1 Քսենոփ. պատմ. Յունաց, գիրք Բ. էջ 460 ։
2 Թուկիդ. գիրք Ա. գլ. 87 ։
3 Քսենոփ. անդ, գիրք Գ. էջ 491 ։
4 Նոյն անդ, գիրք Բ. էջ 459 և 460 ։ Պղուտ. յԱգիս, հտ. 1. էջ 801 ։
5 Քսենոփ. անդ, գիրք Գ. էջ 503 ։ գիրք Ե. էջ 556, 563, 568 ։ Պղուտ. ապոփ. Լակոն. էջ 215 ։
6 Քսենոփ. անդ, էջ 479 ։
7 Նոյն անդ, գիրք Բ. էջ 478 ։
8 Թուկիդ. գիրք Ա. գլ. 131 ։ Քսենոփ. յԱգես. էջ 657 ։ Պղուտ. անդ, էջ 211 ։

գործս առաքինութեան [1], և նախնեացն իմաստից պատուհաս կալով [2], և արիութեամբն՝ որով յառաջ քան զաւուրս զայսոսիկ ցրեցին զդաւաճանութիւնս, խափանելով զմնտալուտ 'ի վերայ համեալ խռովութիւն աշխարհին [3] :

Օչէմ կալան նոքա ընդ ամս բազումս իշխանութեան ծերակուտին և թագաւորաց, և ոչ դադարեցին 'ի կալոյ նոցա ոտսն մինչև ինասմակալք նոյ կացին : Երդ հնարքս այսոքիկ և յափշտատակութիւնք, որոց անմոլորթ էր յաղթողել այլուր առանց հեղեղս արեան զնացուցանելոյ, որպէս 'ի Սպարտա թեթև ինչ հերձուածովք մնացաբեցան : Բանզի պարէտք ազատութիւն առաջի դնէին ժողովրդեան. իսկ ոտնիք նոցա չքառատք իւրև զժողովուրդն, չկարէին խաստանալ նման մեծութիւնս : Իսկ զի դարձեալ սէր միաբանութեան մեծեալ օրինօքն Լիկուրգեայ այնպէս հզօր էր քան զատանձին իմաստ օգտի, զի նախինի առասպանելին նախանձաւոր յորդորելոյ որնակաւ իւրով զժողովուրդն 'ի հնազանդութիւն, պարտ համարէր հրաժարել յիրաւանց իւրոց՝ իշխանատորութեան պարտացն տեղի տալով [4] :

Ի նմին օրոց միաբանութեան յորդորեալ ժողովուրդն, ոչ երբեք վերջացաւ 'ի մեծարելոյ ըդ-

1 Պլուտ. յԱգէս. հա. 1. էջ 615 :
2 Քսենոփ. պատմ. Յունաց, գիրք Գ. էջ 496 :
3 Նոյն անդ, էջ 494 :
4 Քսենոփ. յղ. հաս. Սպարտ. էջ 683 :

թագաւորս և զծերակոյտն՝ թէպէտ և կապանեալ 'ի նոցանէ զիշխանութիւն։ Հանդէս ինն մեծաշուք, որ ամի յամենայն կատարի, յուշ ածէ նմա զպարտս մեծարանացն։ Դանակի Թ[illegible] ինքնագլխաբար, և պարտէին 'ի գլխոց ժողովրդեան երդնուն հրապարակաւ, ուստի յիշխել ըստ օրինաց, և սոքա 'ի պաշտպանել իշխանութեան արքունի՝ ցորչափ կայցէ յօրէնս [1]։

Սպարտացւոց են օրէնք ինչ հոգւոյն սերմանականք, և են որ հասարակաց այլ և այլ քաղաքաց Լակոնիոյ. նախնին իրի և կրկին աղքք ժողովոց են նոցա, յորս առանձինն էր կան միայն Թագաւորք և ծերակոյտն և այլ և այլ դասք ատենականացն։ ԵԹէ զժառանգութեան Թագաւորութեան խնդիրք առաջի կայցեն, կամ ընտրութիւն ատենականաց և կամ ընկերութիւն ուրուք յաւագութեան, կամ վէճ ինչ հրապարակականաց յանցանաց, կամ ատենադրութիւն կրօնական կամ օրինական, պարզատացիք և եթ գումարին 'ի ժողովս, և կոչի այն ժողովակ [2]։ Այլ գումարի ժողովս այն ըստ սովորութեան ամիս յամենայ 'ի լրման լուսնի [3], իսկ ըստ ոչ սովորութեան՝ յորժամ պէտք ինչ պահանջիցեն։ Նախ քան զխորհել ժողովոյն զերոց՝ պարտ է ծերակուտին տալ զայնցանէ վճիռ [4]. իսկ

1 Քսենոփոն, յղ. հաս. Սպարտ. էջ 690։
2 Նոյն պատմ. Յունաց, գիրք Դ. էջ 494։
3 Թուկիդ. գիրք Ա. գլ. 67։
4 Պղուտ. 'ի Լիկուրգ. հատ. 1. էջ 40։ Նոյն յԱգէս. էջ 798 և 800։

եթէ երկպառակութիւն կարծեաց խափանեսցէ զմձիւն, յայնժամ պարէտք ածեն զկրան 'ի ժողովս [1]:

Ժողովականացն ամենեցուն անցելոց զերեսնամենիւք անկ է յայտ առնել որ ինչ իւրաքանչիւր ումեք հաճոյ թուի. իսկ կրտսերագունից ոչ է օրէն խօսել յայտնապէս [2]: Հարկ է զի և բարք անստգտանելիք իցեն նոցա. զի յիշի առկալին ոմն, որոյ երբեմն զժողովուրդն ճարտարախօսութեամբ իւրով մոլորեցուցեալ, և այսպէս խորհուրդ քաջ առաջի առնէր, մի ոմն 'ի ծերոց ծերակուտին յառն եկաց պատմեալ ընդ ներողամտութիւն ժողովոյն՝ զի մոլորեցուցին բարբառոյ լեզր, եւ այլում ումեք առաքինւոյ զնոյն խորհուրդ առաջարկել, և ասէ. Մ՛ի լիցի սպարտացւոց խրատու խաբուսիկ ճարտարախօսին վարել [3]:

Եթէ խորհուրդ պատերազմի կամ խաղաղութեան և կամ ուխտի նիզակակցութեան առաջի կայցէ, զամենայն աշխարհաժողովն յոր հրեշտակք յամենայն քաղաքաց Լակոնիոյ ժողովին [4], յաձախ և 'ի նիզակակցաց ազգաց [5], և որք օգնականութիւն 'ի սպարտացւոց զան խնդրել [6]: Ընդ

1 Պղուտ. յԱգիս, էջ 799:
2 Արիստ. հռ. 1. էջ 558:
3 Եսքին. 'ի Տիմ. էջ 288: Պղուտ. յղ. ունկնդր. հտ. Զ. էջ 41:
4 Քսենոփ. պատմ. Յունաց, գիրք Զ. էջ 579:
5 Նոյն անդ, գիրք Ե. էջ 554, 556, 558, 590:
6 Նոյն անդ, էջ 554: գիրք Զ. էջ 579:

ընծայեն պատուհանդիմանիք իւրաքանչիւրոց եւ բարուք զմիմեանց, դրժել դաշանց միաբանելոց ազգաց, հնարք հաշտութեան, խորհուրդք պատերազմաց, եւ հարկապահանջութիւնք : Բազում այն է զի թագաւորք կամ ծերակոյտեան առաջնորդ են անդ բանին . զի իշխանութիւն նոցա յարդարել է յոյժ, եւս առաւել պատերազմին : Ի ընծայել խորայն բառ բառականին՝ մի 'ի պատերազմ հաղորդակ ըղկարծիս ժողովոյն, եւ անդէն բերէք բերոց հնչեն բարբառք հաւանականք կամ արգելականք : Այլ երբեմն պատրէան բազում անգամ փորձեալ եւ ոչ կարէ ընտրել զառաջնորդոյն կողմն, թուէ զերկաքանչիւր կողմանս՝ բաժանել զնոսա 'ի միմեանց [1] :

ԳԼՈՒԽ ԽԶ.

Զօրինաց սպարտացւոց :

ԲՆՈՒԹԻՒՆՆ գրեթէ միշտ հակառակ է օրինաց [2] . զի նա հնարի յարդարել զանարեկենդանութիւն իւրաքանչիւր ուրուք ինքնուրոյն, իսկ օրէնք զմիաբանութեանքն մարդկան յածեն . Բնութիւնն բազմակերպս յեղու զբարս մեր եւ զյօժարութիւնս . իսկ օրէնք միութեան ձեւեթ ուշանին, 'ի միաբանել ըստ կարի զամենեցուն իղձս

1 Թուկիդ. գիրք Ա. գլ. 87 :
2 Դեմոսթ. յԱրիստոգ. էջ 830 :

և զբարս ։ Հարկ է առաս օրէնսդրին, քանզի առաջի կայ նմա երծանել կամ զէթ միաբանել զներհակսն, հզօրագոյն յորդոր և կարևորագոյն մասն քաղաքականին համարել զբարոյականն, հաստանել 'ի վերայ ձեռակերտից բնութեան անդէն յելս նոցա 'ի լոյս, կատարել զձև նոցա և զհամեմատութիւնս, և առանց երծանելոյ զնախատիպ կերպարանսն՝ ամոքել զնոսա. որպէս զի մարդ անձնիշխան անցեալ ընդ կորզան կրթանի նորա՝ լիցի քաղաքացի ազատ ։

Ոչ իր արք իմաստունք ձեռնհաս եղեն երբեմն զվայրագաստան մարդիկ ցան և ցիր սփռեալ ընդ անտառս՝ ածել 'ի միաբանութիւն. և զի զօրհանապազ ուսուցինչք համձարեղք կրթեալ ըստ հաձոյից իմն կերպարանեն զբարս մանկութ՝ որ յանձն է նոցա, չէ ինչ զարմանալի. այլ քանի զօրութեան համձարոյ պէտք էին առ 'ի փոխակերպել զազգ կերպարանեալ, և քանի արիութեան՝ առ 'ի համարձակել ասել ցնա. Ո՜վ ամբոխեցից զախտոյս քո յանհրաժարելի կարևորսն, և զևս դժնդակագոյն ներհակս կրից քոց 'ի քէն պահանջեցից. մի ևս լիցին 'ի քեզ հրապոյրք հեշտութեան. փոխանակեսցես զգըրգանս կենաց 'ի տաժանաւոր և 'ի դառնաշխատ հրահանգս ։ Ոչ կիսոց կողոպտեցից զինչս առ 'ի բաշխել այլոց, և աղքատն բարձր 'ի գլուխ որպէս զմեծատունն ձեռնեսցի ։ Հրաժարեսցես 'ի կարծեաց քոց և յախորժակաց և 'ի սովորու-

թեանց և որ ինչ քեզ անկ թուին, ես և 'ի գա-
րավանդականաց գեղեցիկ զգայմանց՝ ըստ ըմա-
թեանն խոր 'ի սիրտ քո զդրոշմեալ է :

Նայց ահա Մխիթարքս ըստ ամենայն արար
աստուածաբանութեամբն ըմբռնել խոկ հայեցուածք
այլոց աղանդոց. մի՛ զի որոց ուղեղորմն 'ի Սարդ-
սաւ, ընդ նոր իմն երկնաւոր թագաւորաց շինել: Ո-
ստասուութիւն կրոնից յորդորել գնացոր 'ի նմանակել
զայնոս. և շղամանս անոքէն մխոր նոյս 'ի խորա-
զնեմն ուսուցմեան և 'ի վսեմութեան համաձայնցն՝
որ ցուցանեն յորէնս Մխիթարեանց :

Ոչ միմիայն օրինադրեաց ընդորել գաւառա-
նքն, այլ թագաւորութեանն [1]. կարգեաց զյարգ
'ի մեծութեանց [2], և զնախանձայուզութիւն 'ի
սիրոյ [3]: Խնդրէր և սահմանեաց նշանակս ինչ
պատուոյ, այլ պետութիւն մի նախանձու նորա
ոչ երբէք վասն եղեաց զայնս, և ոչ ըստ որեարն իշ-
խեաց հետևանա լինել այնմ. չընդդիմանայն 'ի
վարձս զատուռ գովլութիւն, և նախատինքս՝ գժբն-
դակացն 'ի պատուհասս: Տասս երբէք երբէք
և պատիժ մահու, այլ յետ խոխոռ յիմնութեանն. զի
չէք ինչ պատուականացն քան զկեանս քաղաքա-
ցւոյ [4]: Այս գաստակնիկըն զիշերայն 'ի բանակ կատա-

1 Խոսկր. համառօտ. հա. Զ. էջ 261: Արիստոտ. յղ. հատ. զենք Դ. գլ. 9. հա. Զ. էջ 374:

2 Պղուտ. կարգադր. Լակոն. հա. 2. էջ 239:

3 Նոյն 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 49:

4 Թուկիդ. գիրք Ա. գլ. 132: Պղուտ. առած. Լակոն. հա. 2. էջ 217:

րեցաւ [1], զի մի գուցէ արիութիւն յանցաւորին 'ի գութ զօրաւորս ածցէ. և սահմանեցաւ խեղդիւ զրկել նմա 'ի կենաց [2], զի անօգուտ թուէր յաճախել զտանջանսն:

Յուշիկ յետոյ զպատգամաւորսն 'ի կարգադրութեանցն Լիկուրգեայ. այլ տատանօր զբաշխից վիճակացն առաջի կայ ինձ տալ: Նաւճարկութիւն իրացն յայդս աղմուկ մեծ, այլ յետ զայրագին հակառակութեանց՝ բաժանեցան սահմանք Սպարտայ յինն հազար վիճակս [*], և մնացուած երկրին Լակոնիոյ յերեսուն հազար: Վիճակաց իւրաքանչիւր սահմանելոց միում միում 'ի տանուտեարց՝ պարտ էր պտղաբերել, բաց 'ի գինւոյ և 'ի ձիթոյ, եօթանասուն չափ գարւոյ տանուտեառն, և երկոտասան տիկնոջն [3]:

Յետ այսր սահմանադրութեան պարտ համարեցաւ Լիկուրգոս հեռանալ յաշխարհէն, մինչև դադարեսցեն յոյզք խռովութեան ոգւոց: Այլ 'ի դառնալն իւրում անդրէն՝ տեսեալ 'ի դաշտըս Լակոնիոյ զբարդս որայից հաւասարս, զբեթէ նովին խորհրդով հեռի 'ի միմեանց դիզեալս, թուէր նմա տեսանել կալուած իմն լայնածաւալ՝ հաւասարաբաժինս 'ի մէջ եղբարց զաւերան բաժանելով. և սոյնպէս թուէր տեսանել զՀայս, որ հա-

1 Եւրոտ. գիրք Դ. գլ. 146: Վալզ. Մաքս. գիրք Դ. գլ. 6:

2 Պլուտ. յԱգիս, հտ. 1. էջ 803 և 804:

* Ցեռնկոյս մատենիս 'ի տեղեկութիւնս. թիւ ԻԳ:

3 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 44:

ւսոսար զԹովլ բաշխէր պարգևս որդւոց իւրոց ¹ :

Մայլ գիտէրդ մարթէր հաստատութեամբ այս-մին կալ. Նախ քան զԼիկուրգոս օրէնսդիրն Կրե-տացւոց չէշխեաց սահմանել զայն, Թողեալ ազատ զստացուածս ². և յետ Լիկուրգեայ Փաղէաս Քաղկեդոնացի ³, Փիլոլայոս Թեբայեցի ⁴, և Պղ-ղատոն ⁵, և այլ ևս օրէնսդիրք և իմաստասէրք հնարս հնարեցան, այլ ոչ բաւական եղեն լուծա-նել զխնձիրն : Լիկուրգեայ պահեալ էր փորձ նորանշան փորձել, և միաբանել զնորհանս . քան-զի նա օրինադրէ ըստ Թուոյ տանուտեարց ժա-ռանգութիւնս ⁶, և այլով խուխք օրինադրութեամբ չնորհելով ազատութիւնս որոց իցեն ուստերք ե-րեք, և տուժել ևս՝ որոց իցեն չորք ⁷, հնարի եղ-ծանել զհաւասարութիւնն՝ զոր սահմանէ, և սահմանել ըստ ձոխս և ըստ աղքատս զխտիր զոր եղծանէ :

Ի ժամանակի յորում էի ես՚ի Սպարտա, այլ-այլեալ էր կարգ ժառանգութեան աղքատոհ-մից՝ հրովարտակաւ Եպիտադեայ պարետի, կա-մելով նորա այնու վրէժ խնդրել յորդւոյ իւրմէ ⁸ :

¹ Պղուտ. ՚ի Լիկուրգ. հա. 1. էջ 44: Նոյն առակ. Լա-կոն. հա. 2. էջ 226: Պոր-փիւր. յղ. ժուժկալ. գիրք Դ. յօդ. 3. էջ 300:

² Պողիբ. գիրք Զ. էջ 489:

³ Արիստոտ. յղ. հաս. գիրք Բ. գլ. 7. հա. 2. էջ 322:

⁴ Նոյն անդ, գլ. 12. էջ 337:

⁵ Պղատ. յղ. օր. գիրք Ե. հա. 2. էջ 740:

⁶ Պողիբ. անդ.:

⁷ Արիստոտ. անդ, գլ. 9. հա. 2. էջ 330: Եղիան. զան. պատմ. գիրք Զ. գլ. 6:

⁸ Պղուտ. յԱգիս, հա. 1. էջ 797:

Այլ վասն զի չեղեւ ինձ փոյթ ուսանելոյ զհին կարգս նոցա, չկարեմ ստուգանօր բացատրել զմիտս օրէնսդրին՝ եթէ ոչ ՚ի սկզբունս օրինաց նոցա անդրէն ՚ի վեր ընթանամ։

Ոչ էր օրէնն ստանուտեսան զնել կամ վաճառել մասն ինչ ՚ի միճակէ[1], ոչ տալ զայն ՚ի կենդանութեան և ոչ թողուլ կտակաւ ըստ կամիցն[2]. և ոչ օրէնն էր նմա բաժանել զայն որդւոցն[3], այլ անդրանկան նորա անկ էր ժառանգել զայն[4], որպէս յաղքունի զարմէ անդրանիկն ժառանգէ զթագ[5]։ Այլ որպէս ապա կէին այլ որդիքն. օրէնք որ առ կենդանութեանն հօր նոցա խնամէին զպէտս նոցա, ՚ի մեռանել հօրն անտէրս արդեօք առնէին զնոսա։

Ա. Ցուցի թէ օրէնն էր նոցա ժառանգել զըստրուկս և զինչս և զամենայն աղքի աղքի կահս։ Ի զնոց կարասւոյն մարթէր արդեօք առնել նոցա զգեստս խուրեանց. զի համդերձք զորս զգենուին՝ դիւրագինք էին յոյժ, որպէս զի և կարի-խակ չքաւորաց մարթել հայթայթել զայն անձանց[6]։

Բ. Նաղաքացւոց ամենեցուն օրէնն էր հաղորդել ՚ի սեղան հասարակաց, և հասանէր խուրա-

1 Արիստոտ. յղ. հատ. դիրք Բ. գլ. 7. էջ 329։

2 Պղուտ. յԱգիս, հա. 1. էջ 797։

3 Հերակղ. պոնտ. յղ. քաղաքականն. նախնիք Յունաց, հա. 6. էջ 2823։

4 Եմմ. սոսորապր. հատ. Սպարտ. ՚ի նախնիսն, հա. 4. էջ 483։

5 Երոդ. դիրք Ե. գլ. 42.

6 Արիստոտ. անդ, գլ. 9. հա. 2. էջ 374։ Քսենոփ. յղ. հատ. Սպարտ. էջ 682։

քանզի իւր հոգւոյ տալ չափ զարուոյ իւր երկրաւորան կեղծ։ Որով զի ստամոքսաւորաց սպասաւորեալք խոյս քանզի իւր առնուլին ՚ի մեծամեաց խորհրդոց եօթնանց սուն կեղծս, իսկ կանոնաց հոգւոյ երկրաւորան, սպաս յաւելեալն ՚ի ստամոքսաւորաց քանականն էր ՚ի կերակրոյ հոգւոյ արդեանց։ Այս քանզի չափաւորեալ էր Լիկուրգեայ բազմադրազին զստամոքսաւորաց վերկանել, ՚ի դէպ է կարծել՝ զի անագրականին պարտ էր խնամել զայնտս ոչ միայն արդեանց խորաց, այլ և զեզրաց։

Գ. Վարծելի է, զի կառավարութեանց ևեթ որդւոց որէն էր առնուլ կնութեան զզաւակս, որք առ ՚ի չգոյէ ուսանելոյ ժառանգելին զհայրենի մեծակս. զի առանց այսր զզուշութեան՝ մնացեալ էր ժառանգութեանց խառնել ՚ի մի։

Դ. Պատասխանք յետ քննութեան անգէն ՚ի ծնանել հոգւոյ առհամանէին հոգւոյ զմեծակս՝ առզատահմից՝ որ անձնեա լեալ էին։

Ե. Ի ժամանակս յայսոսիկ պատերազմաց յանձնարարք զատազոյծ ազգատահման անձինս արարին. իսկ յառաջ քան զայս զաղթականք ՚ի տար աշխարհս գնային։

Զ. Ոչ ինչ ծախք էին անուանացուցանելոյ զդրամեր, քանզի արգելեալ էր չպատերազմել հոգւոյ ոժիտ [3]։

[1] Պլուտ. ՚ի Լիկուրգ. հտ. 1. էջ 49։ Պլուտ. առակ. Լակոն. հտ. 2. էջ 227։
[3] Յուստին. գիրք Գ. գլ. 3։

է. Սէր միաբանութեան և անտեսութիւն անձնիւր օգտի՝ առնէր յերջանկաւ իւն զամե-նայն լինել հասարակաց 'ի քաղաքացիս [1], և բա-ղում այն էր զի ոչ այլով ինչ առաւելուր այր քան զընկեր, բայց միայն ձեռնհաս զօրով լինել զղէտս նորա կամ նպաստել աշխարհին :

Յորքան ժամանակս այսպիսի անեղծ կային, առհասարակութիւն Լիկուրգեայ զգէմ ունէր հա-բուածոց՝ որ սկսանէին առաւանել զնա : Այլ ո՞ այսուհետև կայլքի զնա անտառան, յորժամ հեռևէ հրովարտակաւ պայարեաց, որպէս ասացի, հրա-ման եղև քաղաքացւոց իւրաքանչիւր՝ տալ օժիտս զատերաց իւրեանց, և բաշխել իշխանաբար ըղ-միձանս իւրեանց : Հանապազօր ձեռաց 'ի ձեռս փոփոխին ժառանգութիւնք, և զաւագակզաւու-թիւն մեծութեանց և համեղինասպասուն հաւա-սարութեան ոչ ևս է :

Այլ անդրէն 'ի կարգադրութիւնս Լիկուր-գեայ դառնայցս : Մինակք երկրի, այլառք որպէս զմարդիկ, առանձնակք էին. ոչ զայլին զանձք աղ-խարհին [2], այլ 'ի զէնս ուրեք քաղաքացիք ձեռն տային լռա կարի [3], և էր ուրեք զի առաւատան լինէին 'ի հնարս, որ զանհնարին չքաւորու-

1 Քսենոփ. յղ. հաս. Սպարտ. գիրք Ա. գլ. 8 : Պլուտարք. առ. էջ 679 : Արիստոտ. յղ. հաս. գիրք Բ. գլ. 5. էջ 317 : Պլուտ. կարգադր. Լակոն. հտ. 2. էջ 238 :

2 Արքիդ. առ. Թուկիդ. գիրք Ա. գլ. 8 : Պերիկլ. առ. Նեպն, գիրք Ա. գլ. 141 : Պլուտ. առած. Լակոն. հտ. 2. էջ 217 :

3 Արիստոտ. անդ. գլ. 9. հտ. 2. էջ 331 :

թիւն նոցա յայս առնէր ։ Հրեշտակք 'ի Սամոսէ եկին երբեմն խնդրել դրամս 'ի փոխ . և համախմբեալ ժողով սպարտացւոց, առ 'ի չգոյէ հնարից, սահմանեցին պահս ամենեցուն՝ ազատաց և ստրկաց և անասնոց իսկ ընտանեաց . և որ ինչ 'ի խնայելոյ անտի յաւելուն, ետուն հրեշտակացն[1] ։

Մեծնայն ինչ աւերի այսր համձայնոյն Լիկուրգեայ . ընչասիրութիւն տակաւ անհետանայր, և կիրք բռնաւորք ոչ ևս ազդեցին զբարեկարգութիւն աշխարհին ։ Բայց խարդաղութիւնն այն յաւելոյր 'ի թշուառութիւն, եթէ ոչ օրէնսդիրն անշարժ հաստատէր զայն ։ Օրէնք մերժեալ զգործս զայս մեծ գործել ոչ կարէին . արհամարհութի ոչ յոյժ կարեւորացն, և զկարեւորս ընդ հուպ դնէ յարհամարհանս ։ Օրէնք եթէ կարի յոյժ բազումք իցեն, եթէ բազում ինչ լռիցեն, կամ նախանձայոյզս եթէ տայցեն պատգամս, եթէ դատաստանաց 'ի դէպ իցէ տալ զմեկնութիւն նոցա, և քաղաքայնոց տրտնջել զնոցանէ, և եթէ ամենայն ուրեք և 'ի դուզնաքեայս յաւելցին զօրատարբեկ սաստ պատժապարտեաց 'ի կործանել զազատութիւն մեր, 'ի զուր այնուհետև 'ի վէհս դղրդմանն՝ անդրդուելիք 'ի սիրտս ։

Լիկուրգոս խելամուտ լեալ անդիմադարձ զօրութեան տպաւորութեանց, որ ազդին 'ի մեզ 'ի մանկութենէ և յամենայն կեանս, ընտրեաց

[1] Արիստոտ. յղ. տնտես. հա. 2. եր 503 ։

զկատարգաւորութիւն օրհնացն՝ վկայեալ 'ի փորձոյ 'ի Արետէ ։ Քանզի մանկտին դաստիարակեալ 'ի միաւոյն նովին կրթութեամբ, յիմաստս անյեղլիս յանդիմանն աչաց աւագանւոյն եւ ժողովրդեան, ուսանին զպատիւս իւրեանց 'ի կատարել անդ զայնոսիկ, եւ ապա սիրեն զնոսա 'ի սովորելն 'ի նոսին, եւ միշտ պատկառելն 'ի նոցանէ՝ տեսանելով յամենեցունց զնոսա պաշտեալ ։ Սովորութիւնք ժամանակաւ առնուն զօրութիւն անյաղթելի, հնացեալ եւ աշխարհահալեալ. եւ մշտնջենաւորութեամբ օրհնակաց, զոր առնուն եւ մնացուցանեն միմեանց քաղաքացիք, այլ ընկերի իւրում օրէնսդիր լեալ՝ կացցեն իրերաց կանոն կենդանի[1]. եւ 'ի հնազանդութիւն համարեցին նոցա տեղի տալ զօրութեան սովորութեանն, եւ ազատաբար համարեցին զգործել՝ 'ի գործելն անձինն ։

Այս շատ իցէ օրէնսդրի սահմանել ըստ մանանց տեսչութեան սակաւ ինչ թուով օրէնս՝[2] որ զանազանս ցցեն զտեղի, հաստատուն ունելով զսովորութեանցն իշխանութիւն՝ հզօրագոյն յոյժ քան զօրէնսս ։ Արդ եթէ նա մի երբեք արձանագրել զօրէնսն[3] առ 'ի չհաստատելոյ սահմանս առաքինութեանց, զի մի զկատարելն որ ինչ ոք պատուիցէ՝ բաւական համարեալ, հրաժարեսցէ յառաւելագոյնէն զոր կարէ ։ Այլ եւ ոչ թագուսցէ

1 Պլուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 47 ։
2 Նոյն տաւակ. Լակոն. հա. 2. էջ 232 ։
3 Նոյն անդ, էջ 227 ։ Նոյն 'ի Լիկուրգ. անդ ։

զօրէնսն . ազգէ յազգ աւանդեսցին այնոքիկ՝ ըս-տէպ յամենայն դէպս յեղյեղեալ, և գիտասցեն զնոսա քաղաքացիք ամենայն՝ տեսօղք և դատաւորք 'գործոց իւրաքանչիւրոց ։ Զիցէ օրէն մանկըտւոյ պարսաւել զնոսա, և ոչ ընդ դատաստանաւ արկանել¹, որպէս երկնաւոր պատգամ ընկալեալ զնոսա . զի իշխանութիւն օրինաց հաստատեալ կայ 'ի պատկառանան զոր ածեն ։ Աւ ևս պարտ իցէ գովել զօրէնս և զսովորութիւնս այլոց ազգաց² . զի ազգ որ ոչ լաւագոյն քան զամենայն օրինաւորութիւնս զիւրն համարիցի, վաղ 'ի խնդիր այլոց օրինաց զառածանի ։

Նա և ոչ ինչ են զարմանք՝ զի առաջին յառաքինութիւնս սպարտացւոց է հնազանդութիւն³, և զի ազգն այն վայրագ ոչ դիմէ յառաւանս՝ ըստ-բամն օրինաց 'ի ձեռին՝ բողոքել զվճռոց դատաւորաց ։ Այլ մի ևս ոք զարմասցի, զի Լիկուրգոս կարևորագոյն քան զամենայն հոգս օրէնադրի ըղդաստիարակութիւն մանկտւոյ համարեցաւ⁴, և զի առ 'ի նուաճել զխիստ սպարտացւոց, անդստին 'ի մանկութենէ ներքոյ արկ զնոսա կրթութեցն՝ զորոց առաջի կայ մեզ ասել ։

1 Պղատ. յղ. օր. գիրք Ա. հա. 2. էջ 634 ։
2 Դեմոսթ. 'ի Ղեպտին. էջ 566 ։
3 Իսոկր. յԱրքիդ. հա 3. էջ 89 ։ Քսենոփ. յղ. հաս. Սպարտ. էջ 682 ։
4 Պղուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 47 ։

ԳԼՈՒԽ ԽԸ.

Զդաստիարակութենէ և զհարսանեաց սպարտացւոցն:

ՕՐԷՆՔ սպարտականք ծայրագոյն հոգովք հսկէին 'ի դաստիարակութիւն մանկտւոյն [1], ոչ ինչ խորհելով ըստ աղքատին և ըստ ձոխ, այլ զամենեցունց զնոյն խնամ հասարակաց կալեալ [2]: Նախ քան զծնունդ մանկանն ըստ յայտնել յղութեան մօրն՝ հրամայէին կախել 'ի սենեկի նորա կենդանագիրս, յորս փայլէ մանկութիւն և գեղ, որպէս զԱպողոնին, զՆարկիսեայն, զՀեակինթեայն, զԿաստորին, զՊոլիդեւկեայն, այլովքն համօրէն. որպէս զի տպաւորութեամբ կերպարանաց նոցա հանապազ 'ի միտս մօրն, նշանագրեսցի աղօտ ինչ նմանութիւն նոցա 'ի մանկանն զոր կրէ յարգանդի [3]:

Իսկ 'ի ծնանել մանկանն՝ յանձնէին առանձին զնա ժողովոյ ծերունեաց ցեղին, յորմէ էր ազգատոհմ նորա: Կոչի անդր դայեակ նորա, և փոխանակ ջրոյ՝ գինւով լուանայ զմանուկն, քանզի ասեն մահաբեր տկարաց գոլ զլուացումն գինւոյ: Իսկ քննութիւնս ևս 'ի փորձ անդր յաւելեալ, ապա տան վճիռ զմանկանէն. եթէ կեանք նորա չիցեն

1 Արիստոտ. յղ. հաս. գիրք Ը. գլ. 1. հտ. 2. էջ 450.
2 Նոյն անդ, գիրք Դ. գլ. 9. էջ 374:
3 Ոպպիան. յղ. որսոյ, գիրք Ա. տող 357.

յօգուտ իւր կամ հայրենեացն, արկանեն զնա 'ի վիհ ուրեմն մերձ 'ի Տայգետոն լեառն ։ Իսկ եթէ առողջ իցէ և պնդակազմ, ընտրեն զնա 'ի զինուց աշխարհին՝ լինել առ յապայ մի յախոյեանաց նորա ¹ ։

Դարձուցեալ զմանուկն 'ի տուն, հանգուցանեն զնա 'ի վերայ սապարի. և առ նորածնաւն ար-բանեան դնեն նիզակ, որպէս զի անդստին 'ի տղայութենէ ընդելասցի զինուն սովորութեամբն ² ։ Եւ կաշկանդեն խանձարուրք անշարժելի զմատաղ տղայոյն անդամս փափկիկս, ոչ արգելուն զինքնայորդոր արտասուս նորա, այլ և ոչ երբէք սպառնալեօք կամ գանիւ շարժեն զնոսա 'ի լաց ։ Սովորի տակաւ 'ի միայնութիւն, 'ի խաւար և յանխտրութիւն կերակրոց ³ ։ Ազատ յամենայն ազդմանէ զարհուրանաց, զերծ յամենայն անօգուտ բանադատութենէ և 'ի տարապարտ կշտամբանաց, և պատուաղեալ բոլորովին 'ի խաղս իւր անմեղս, վայելէ լիով 'ի բերկրանս կենաց, և վաղ 'ի բարեկենդանութեան բարգաւաճեն զօրութիւնք նորա և առողջութիւնք ։

Հասանէ 'ի տիս եօթն ամաց անզգէտ ծառայական երկիւղի. և անդ ըստ սովորութեան զկայ՝ առնու դաստիարակութիւն նորա առ ինքն ⁴ ։ Այսպէս հարցանեն զհայր մանկանն, թէ կամիցի

¹ Պլուտ. 'ի Լիկուրգ. հատ. կեդ. գիրք Բ. գլ. 39 ։
1. էջ 49 ։
² Նոյն. Դիոնիս. գիրք ԽԱ. էջ 1062 ։ Պարապս. Թուղ.
³ Պլուտ. անդ ։
⁴ Նոյն անդ, էջ 50 ։

մնանել նմա ըստ օրինաց ։ Եթէ հրաժարէ , զերկի և խնդին յիրաւանց քաղաքացւոյ[1] ․ իսկ եթէ յանձն առնու , այնուհետև ոչ ծնօղք ևեթ մանկանն տեարք լինին նմա , այլ և օրէնքն և աւագանին ․ և քաղաքայնոց ամենեցուն օրէնն է հարցափորձել զնա և խրատել և պատժել առանց երկիւղի բամբասելոյ ՚ի խստութիւն ։ Ո՛չ ի նոցին իսկ հասանէ պատուհաս , եթէ տեսանելով զմանուկ յանցուցեալ լռեսցեն խնայելով[2] ։ Վերակացու մանկութեան յես մեծարելոց որք կացեալ[3] , ՚ի դասս դասս դատէ զնոսա ․ և դասուց իւրաքանչիւր պատանի որք վկայեալ խոնարհութեամբ և արիութ̄ կայ դատապետս ։ Պարտ է նոցա հնազանդել անտրտունջ ամենայն հրամանաց նոցա , և պատժոց զորս սահմանէ նոցա , և որոց պաշտօնեայք են մանկունք ամենայն խարազանաւորք յարբուն հասեալք[4] ։

Որ ըստ օրէ խստամանն նոցա կարգք ․ զերծուն զհերս , և զնստան բոկ , անզգուրպայ և անկօշիկ ․ և սա ՚ի սովորել ՚ի խստութիւն եղանակաց , է զի և մերկք ամենեւին մնցին[5] ։

Ի տիս երկոտասան ամաց մերկացեալ զպատմուճան , վերարկուաւ ևեթ շրջին , զամ մի ողջոյն զնոյն կրելով հանդերձ[6] ։ Պուռն ուրեք հրա-

1 Պղուտ․ կարգադր․ Լակոն․ հա 2․ էջ 238 ։

2 Նոյն անդ , էջ 237 ։

3 Քսենոփ․ յղ․ հաս․ Սպարտ․ էջ 676 ։

4 Նոյն անդ , էջ 677 ։

5 Պղուտ․ ՚ի Լիկուրգ․ հա․ 1․ էջ 50 ։

6 Քսենոփ․ անդ ։ Պղուտ․ անդ , դեղք Գ․ գլ․ 3 ։

մանն է նոցա 'ի բազմանիս մտանել և խնկովք անուշիւք օծանիլ։ Խնձալիք նոցա յորս ննջէին խալամբոլինն՝ են ծայրք եղեգանց բուսելոց յԱչուրատա, զորս առանց երկաթոյ ծայրաքաղ առնեն [1]։

Ընդ սկսանելն մտերմութիւք սեփականք սպարտացուց, անծանօթք առ այլս յազգաց, անտապակք 'ի Լակեդեմոնն քան յայլ ամենայն քաղաքս Յունաց։ Բանզի օրէնն է նոցա առ 'ի հանապազորդ խնամն՝ ունել իւրաքանչիւր առընթեր պատանի զոք պարկեշտ, ընտիր գեղով, և առաւել առաքինութեամբք՝ որոց նշանակ իմն համարին զգեղեցկութիւն [2]։ Սոսա մանկանն սպարտացի յերկուս դասս թուի բաժանեալ, սիրողաց և սիրելեաց [3]։ Նախընտրեալն օրինակ հաստատեալք երկրորդի դասուն, մինչև 'ի զինուորական իմն առաքինութիւն զխանդաղան ձգեն՝ ազնուականապատճառի նախանձուն դրդիչս, որ զեղխանք սիրոյ զհայրենի խանդակաթ գթոյն և զկաթոգին եղբայրական զորովոյ բերեն զկիրս։ Յորժամ 'ի տեսիլ ուրուք 'ի նոցանէ՝ սատուածարեալ իմն զատանին բավուռք, քանզի այսպէս կոչեն նոքա զմանկան խանդիցն բերումն [4], ոչ նախանձընդդէմք միմեանց՝ այլ և սատառուել միացեալք համանձկանք, զսիրելւոյն իւրեանց խնդրեն զյառաջադիմութիւն ․

1 Պլուտ. 'ի Լիկուրգ. գիրք Դ. գլ. 3։
2 Նոյն անդ։
3 Թէոկր. 'ի գեղջկան, 12. տող 12։ Պարապ. անդ։ Մաքսիմ. Տիւր. Ճառ 24. էջ 284։
4 Քսենոփ. յղ. հաս. Սպարտ. էջ 678։ Նոյն 'ի խրախճ. էջ 873 և 883։ Եղիան. պատմ. գիրք Գ. գլ. 9։

զի ցանկութիւն նոցա այն է, առնել զնա մեծարոյ առաջի այլոց՝ որպէս մեծարեմն զնա ինքեանք[1]: Մի 'ի կարի համեստագունիցն 'ի նոցանէ պարտաւորեցաւ 'ի տուգանս վասն չյարելոյ յոք 'ի մանկտւոյն[2], և այլ ոմն վասն հեծութեան սիրելոյն իւրոյ 'ի մարտի ուրեք[3]:

Կցորդութիւնք այսոքիկ, որոց բազում և մեծամեծ եղեն արգասիք[4], հասարակաց էին ուստերաց և դստերաց[5]. և է զի ընդ կեանս նոցա ձգէին: Ի բազում ժամանակաց հետէ սովորութիւնս այս ունէր 'ի Սպարտէ[6]. և Լիկուրգոս յարգեաց զայն, այլ զվտանգաց նորա կալեալ զառաջս: Ո՛չ ի դոյզն ինչ արատ 'ի կցորդութիւնս յայն՝ որում պարտն է սուրբ լինել առնանէին և է իսկ զրեթէ միշտ[7], ծածկէ յաւէժ նախատանօք զյանցուցեալն[8], և մահապարտ իսկ 'ի դէպս ինչ առնէ զնա[9]. և ոչ վայրկեան մի դարձեալ օրէնք է մանկտւոյն հեռի կալ յաչաց երիցագունից. որոց պարտ յանձին կալեալ՝ առընթեր կան միշտ հրահանգաց նոցա և պատշաճիցն խնամ ունին,

1 Պղուտ. 'ի Լիկուրգ. գիրք Գ. հտ. 1. էջ 51:

2 Եղիան. զան. պատմ. գիրք Գ. գլ. 10:

3 Պղուտ. անդ: Եղիան. անդ:

4 Պղատոն, Խրախճ. հտ. 3. էջ 178:

5 Պղուտ. անդ:

6 Հերակղ. պոնտ. յղ. քաղաքական. Նախնի Յունաց, հտ. 6. էջ 2824: Ստրաբ. գիրք Ժ. էջ 483: Եղիան. յղ. կենդան. գիրք Դ. գլ. 1:

7 Քսենոփ. յղ. հաս. Սպարտ. էջ 678: Պղատ. Խրախճ. անդ: Մաքս. Տիւր. ճառ. 26. էջ 317:

8 Պղուտ. կարգադր. Լակոն. հտ. 2. էջ 237:

9 Եղիան. զան. պատմ. գիրք Դ. գլ. 12:

և ոչ յաչաց վեհագոյն վարժապետին և դաստապետաց իւրաքանչիւր ։

Պատապետք են պատանիք քահանայք, որք 'ի վարձ քաջութեան և խոհականութեան իւրեանց հասանեն պատուոյ վարժապետութեան դասուն յանձնելոյ 'ի խնամս իւրեանց [1] ։ Որք առընթեր կան մանկտւոյն 'ի հրահանգս մարտի, յանցանել նոցա ընդ Արտաքս 'ի լող, 'ի գնալ նոցա յորս, և 'ի կրթել 'ի զօրաշարս, յընթացս և յազգի ազգի ըմբշական մրցութիւնս ։

Մանկտին 'ի դառնալն իւրում 'ի բնակութիւն իւր՝ առնու կերակուր, պատրաստեալ զայն իւրովի առողջ և անպաճոյճ [2] ։ Օրաւորագոյնք 'ի նոցանէ ածեն փայտ, և տկարագոյնք բանջարս և այլ կերակուրս գողունիս, յարանելի մտանելով 'ի պարտէզս և 'ի ճաշարանս հասարակաց ։ Զըմբռնելոցն 'ի գողութեան կէսք գանին խարազանաւ, և կէսք 'ի վերայ գանելոյն և անօթեալ կան՝ անմասնոյցք 'ի սեղանն [3] . և ոմանք շուրջ ըզբագինաւ ձգեալ ածին, երգելով տաղս 'ի թշնամանս անձանց [4] ։

Այս յետ ընթրեացն հրամայէ դաստապետն կիսոյ նուագել, և այլոց խնդիրս առաջի արկանէ առ 'ի փորձ հանճարոյ նոցա և դատաստանի . զոր

[1] Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 50 ։
[2] Նոյն կարգաւոր. Լակոն. հտ. 2. էջ 237 ։
[3] Պլուտ. 'ի Լիկուրգ. անդ ։
[4] Նոյն կարգաւոր. Լակոն. անդ ։

ողմնակ, թէ ո՞ իցէ 'ի քաղաքիս լաւագոյն քան զամենեսին. կամ թէ զի՞արդ թուի քեզ այս ինչ կամ այս ։ Այլ պարտ է պատասխանւոյն լինել հակիրճ համառօտ պատճառօք, և որք առանց խորհելոյ ինչ բարբառիցին, թէ և ինչ պատիժս կրեն առաջի դատաւորաց և ծերակուտին՝ որք առընթեր կան խօսիցն. և է զի ոչ հաճոյ թուի նոցա վճիռ դատապետին, այլ զի մի արհամար-հեսցի առաջի իւրոցն՝ խնդրեն զնա միայնակ, և զկարի ներողութիւն նորա կամ զխստութիւն պատուհասեն [1] ։

Ի գիտութիւնս վեր 'ի վերոյ ինչ կրթի մանկը-տին, այլ ուսանին խօսել յստակ, և կերպարա-նել 'ի պարս կաքաւչաց և երաժշտաց, և անմա-հացուցանել 'ի տաղս զյիշատակ անկելոցն 'ի վե-րայ հայրենեաց, և զմատնչացն զնախատինս ։ Ի տաղսն յայնոսիկ իրս մեծամեծս պարզաբար ա-ռաջի առնեն, և իմաստս բարձրագոյնս լի եռան-դեամբ [2] ։

Համապազօր այց առնեն նոցա պարէտք, և երբէք երբէք ինքեանք առ պարէտս գնան՝ տալ հանդէս զդաստիարակութեանց իւրեանց, զի մի իցեն անխնամ, և մի փափկութիւն ինչ յանկո-ղինս կամ 'ի զգեստս նոցա մուծցի, և զի մի դար-ձեալ մտիցեն 'ի գիրութիւն [3] ։ Քանզի խստու-

1 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 51 ։
2 Նոյն անդ, էջ 53 ։
3 Եղիան. զան. պատմ. գիրք ԺԴ. գլ. 7 ։

թիւն մեծ է 'ի վերայ յօրացելոցն . և արք քաղաքացիք 'ի Սպարտա ձգեցան երբեմն 'ի դատաւորաց յատեան ժողովրդեան, զի յոյրք գոլով՝ զփափկամութեան տային կասկածանս [1] : Նամօթ համարին առն սպարտացւոյ դէմք կանացի. պարտ է մարմնոյ նորա գոլ աջողակ և կորովի, 'ի պատշաճ համեմատութեանն [2] :

Այն իրի մանկունն սպարտացի հանապազ 'ի վտանգակս կայ, դրեթէ զօրն ողջոյն 'ի նոյն պարապեալ : Զմեծ մասն աւուրն անցուցանէին յըմբշամարտս՝ յորս չէին ոսպէս յայլ քաղաքս մարտուսոյցք, որք ուսուցանէին մարտկաց գայթակղեցուցանել աջողաբար զոտխն [3] . անդ գաւ 'ի նախատինս է քաջութեան, և պարտ է յաղթութեն և պարտութեան լինել փառօք : Նման որոյ և 'ի մրցութիւնս ուրեք չէ օրէն սպարտացւոց 'ի պարտելն՝ աջ 'ի վեր ամբառնալ, զի համարի խոստովանել այնու զպարտութիւն [4] :

Բազում անգամ կացի 'ի զնին մարտիցն՝ զոր մանկունք սպարտացիք յութսուտասանամենից և 'ի վեր տան ընդ միմեանս 'ի Պղատանիստ : Հրահանգին նախ 'ի վարժարանի որ 'ի Թերապնէ աւանն, երկգնդեալք՝ մխուսն հերակղեան զոհե-

1 Ագաթարքէ. առ Աթենէոսի, գիրք ԺԲ. էջ 550 : Եղիան. զան. պատմ. գիրք Ժ'Ի. գլ. 7 :
2 Եղիան. անդ :
3 Պլուտ. առակ. Լակոն. հտ. 2. էջ 233 :
4 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 52 : Նոյն առակ. Լակոն. հտ. 2. էջ 228 : Սենեկա, յղ. բարեր. գիրք Ե. գլ. 3:

լով դաշնօք և միաբանութեամբ ընկերացեալ եան[1]. և գիշերի զինուան ՚ի միասին սկսեալ ՚ի քաղաքին Սպարտի, ա-րագունելին ՚ի դէպ հաճոյապատշաճ զոհ հաւանեցեալ զքաջողութեան յընտանեաց անտանելոյ: Իսկ յետ զոհէին զմանուկս երկաքանչիւր ածեն մերկ մի կինեան զգօնա-ցուցեալ, և արձակեն փոսասս ծանօթ քարքա-րոմն ՚ի վերայ միմեանց. և որոց կարգենն կեանս յաղթանակէ, յամենայն յաղթութեան հանա-րի նսին:

Ի վաղուց անտի զմիջամարմն յաղագս խաղան մանկանցն կոչեցեալ ՚ի ձակատուն տեղի ընդ այլ և այլ ձանտապատահ, որպէս երրանէ նոցա միձակ: Իսկ ՚ի տալ նշանակին՝ յարձակին ՚ի միմեանս, վանեն և վանին, և տակաւ զայրանայ մարտն: Մարտընկ-քին աքացի և բռնցի, և կեղեքեն զիրեարս ատա-մամբք և եղնգամբք, և պատառեալք և կարեվէր խոցեալք ոչ դադարէին ՚ի մարտէն՝ զինաւորեալ և ոչ տեղի տուեալ[2], այլ մանաւանդ ընդ նուա-ճել զօրութեանն յաւելեալ ՚ի յանդգնութիւն: Մի ոմն ՚ի նոցանէ ՚ի զգետնել զոստին՝ զայնեալ յանկարծ. Իսկ և զկին մի խածանէր զնա: Իսկ նա ասէ. Ոչ իբրև զկին, այլ որպէս զառիւծ[3]: Յանդիմանեն հնդից դատապարտեալ զործի պատե-րազմին[4], որոց իշխանութիւն է միով քարքառով

[1] Ղուկիան. յղ. մրց. հտ. 2. էջ 918:

[2] Կիկեր. տուսկուլ. գիրք Ե. գլ. 27. հտ. 2. էջ 383:

[3] Պլուտ. տուակ. Լակոն. հտ. 2. էջ 234:

[4] Պաւսան. գիրք Գ. գլ. 11. էջ 231:

ցածուցանել զգայրոյթ մարտկացն, և առաջի բազմութեան տեսողաց. որք յաճախեն դիտա-տիս յաղթականաց և երգիծանս պատուելոց: Այս վախճանն լինի մարտին՝ ի տապալել միոյ կողմանն, անցանել ՚ի լող ընդ Ալփէոս գետ, կամ ընդ վտակն որ կցորդեալ ընդ գետոյն, պարապէ զՊի-դաստանիստ [1]:

Տեսի և յայլ մեծութիւնս զանձնադրոյն ուխտ-թիւն ընդ դատանակուկիծ ցաւս մաքառելոյ: Ի տանս ուրեք տարեկանս՝ որ ՚ի պատուի Յորդորականն Արտահայ կատարի՝ կացուցանեն առ բազմու-նոր մանկունս մարտակցիս առ հա հասեալս յար-բունս, և ընտրեալս յամենայն կողմանց աշխար-հին, և հարկանեն զնոսա խարազանաւ ՚ի հա-րուածս սաստիկս մինչև ցհոսումն արեան: Այլ քրմուհին անդ առընթեր կացեալ՝ բարձեալ ըն-ընթեր զպատկեր դիցուհւոյն փայտակերտ փոքրիկ և թեթև, եթէ երբեք հարկանողք խնայի-ցեն, աղաղակէ ոչ ևս ժուժկալել բեռինն. յայն-ժամ և ևս սաստկանան հարուածք, և յա-ճախէ գութ տեսողացն: Ասեն լինին ծնողաց և ազգականաց ձիչք խնդալոյ, որք յորդորեն զատարապարտ զոհսն [2] չհեծել ընաւ. և մատու-ցեալքն խակ ՚ի զոհ ձայն տան և կոչեն ՚ի վերայ իւրեանց զխոշտանգանս: Տեսիլ բազմութեանն

1 Նոյն անդ, գլ. 14. եր 243:
2 Կիկեր. տուսկուլ. գիրք Բ. գլ. 14. հտ. 2. եր 288:

Սենեկա յղ. Նախախ. գլ. 4:
Ստատ. Թեբ. գիրք Ը. տող 437:

որ դէտ՝ կան ամենայն շարժմանց նոցա, և յոյս յաղթանակին որ պահէր առաջնորդութեանն ՚ի համբերել, այնուհետև խոստացուցանէին զնոսա, զի լուրջ զիմեք և դժպհի իմն զուարթութեանց կամ ՚ի քառանձնելոյ տանջանաց [1]:

Նաև իմ հիացեալ ընդ համառօտութիւն նոցա, ասէր զՊաւսանիաս որ էրն ընդ նոս. Նոցա ուրեմն պահէին ՚ի Սպարտա երկիւղածութեամբ օրէնք: Եւ Պաւսանիաս ասէ. Նա ասանիկ թշնամանին աստ չարաչար օրէնք: Հանդիպէր զոր անուանեն՝ կատարէր երբեմն ՚ի պատճառ դիցն խոստովանաց, զորոյ զպատկերն և զպաշտօն Արտեմեայ անեն ածեալ ՚ի Պաւրիժէ ՚ի Սպարտա [2]: Եւ հարցկէին պահանջելով նմա ՚ի զոհ զմարդիկ, Լիկուրգոս զօսեկարն ամրութիւնն եղծ. այլ առ ՚ի լըւեցուցանել զառողջս մտրակահարութեամբ՝ հրամանեաց սպարտացի մանկտւոյն դատապարտելոց զհաւն յանցանաց ՚ի գանս, մինչ առ բագնաւ Արտեմեայ կրել զպատուհասն [3]:

Պարտ էր իմանալից և զօրութեան օրինացն պատուիրան կալ, զի նա պատուհաս լինէր եթէ ղուղնալեաց ատհմանէր [4]. այլ անհանճար դիտաւորքն՝ մեր ասա և ՚ի Պղատոնիսա զարթուցանէին ՚ի մանկունսն ամբաւդ ամենայնքով: Տանջանք նոցա՝

1 Պլուտ. կարգադր. Լակոն. հա. 2. էջ 239:

2 Պաւսան. գիրք Ը. գլ. 23. էջ 642: Հեզիքիոս առակ. 261: Մեւրս. յղ. ան. Յուն. ՚ի բան Διαμαστίγ.

3 Պաւսան. գիրք Գ. գլ. 16. էջ 249:

4 Քսենոփ. յղ. հասա. Սպարտ. էջ 677:

ընծայեսն մեզ տեսիլ ցանկալի, և նոցա յաղթանակ ։ Անծանօթ էր հարցն մերոց այլ քաղքութիւն՝ բայց 'ի պատմութեանն հայրենեաց, և առաքինութիւնք նոցա ոչ 'ի վայր և ոչ 'ի վեր քան զպարտս իւրեանց էին. այլ յորժամ հեռանէ մեծափառութիւն տիրեաց մերոց առաքինութեանցս, այնպէս խեղթնացոյց զանխայս կերպարանաց նոցա՝ զի ոչ ևս ճանաչելի գան ։ Ազգափոխութիւնս այս, զհետ պերճապանծեանական մարտին գործեալ 'ի մեզ, անկանելի նշանակ է զերծմանն բարուց մերոց ։ Անչափութիւն չարեաց ածէ առհասարակ հանա, իսկ բարւոյն ծայրայեղ անչափութիւն կորզէ մեծարանս. և պայծառութիւն նորանշան գործոյն թուի իմն ածել պարտս փոխարինաց անուանանելիս ։ Եթէ անսարժանս այս սովորութիւն կացցէ, մանկունքն մեր վերջացեալ յամենայն քաղքութենէ՝ յանձնացոյց մեսապարծութիւն զառածանիցի 'ի սպառ. խիզախեսցէ ընդդէմ մեհու առ անհաստական բազմաց, և յերեսաց թշնամեաց խոյս տուեալ փախիցէ [1] ։

Յաւէտ լիցի քեզ պատուանելն զոր առաքեք յառաջ դէպ եղև մեզ տեսանել. որոյ զաղուէսն փոքրիկ 'ի ծոց իւր ընդ հանդերձիւն կրելով, համբերէր լռութեանբ կեղեքելոյ զազանին ըղկուրծս իւր՝ առ 'ի չխոստովանելոյ զգողօնսն [2]. զորոյ անընդդէմական յամառութիւն եպերեցին

1 Պլուտ. 'ի Լիկուրգ. հա. Լակոն. հա. 2. էջ 239 ։ 1. էջ 51 ։ Նոյն կարգաւոր. 2 Նոյն 'ի Լիկուրգ. անդ ։

և ընկերք նորա համարձակ ։ Այլ ես ասեմ. Նաև նա զօրէնսն կատարեաց, զի ետ նա պատասխանի՝ թէ լաւ է կորնչել 'ի տանջանս քան կեալ նախատանօք [1]. արդարամանն ուրեմն խնամատարքն, որք ասեն՝ հրահանգաց ձերոց տպաւորել 'ի սիրտ պատերազմող մանկտւոյն զվայրենութիւն [2] ։

Պղուտարքոս ասէ. Խնամատարութեանց այդոցիկ եպերանք այնպէս է, որպէս թէ 'ի վերայ զգեստնեւոյն որք յարձակիցի ։ Ընկուզեալ քաջ զատաջիս կալեալ էր յորդելոյ առաքինութեանցս մերաց, կանգնեալ նոցա թուղթս որ կայցին անշարժ դարս չորս, և որոց տակաւին կան և մնան հետք ։ Ո՞չ ապաքէն յառաջ քան զաւուրս զայսոսիկ ըղհետ քաջայաղթ արութեանցն պատուհասեցաւ սպարտացին վասն անապատ մարտնչելոյն [3] ։ Նաև ըստ զեղծանել բարուց մերոց՝ անափառութիւն ոչ ես սահմանահարի, տակաւ յամենայն կարգս աշխարհիս տարածեալ ։ Այժմ ուրեմն կանայք սպարտացիք, խնամատարգոյնք քան զորդիս և պարկեշտագոյնք, 'ի լսել զգոյժ մահու որդւոց իւրեանց անկելոց 'ի ճակատամարտի՝ շատ համարէին զեր 'ի վերոյ քան զընութիւն համբերութեան. իսկ այժըմ պարծանս համարին անհնար լինելն, և առ չերևելոյ տկարք՝ անազգային զանձինս ցուցանեն ։ Զայս ինձ պատասխանի ետ Պղուտարքոս.

1 Պղուտ. տաակ. Լակոն. Ը. գլ. 4. հտ. 2. էջ 452 ։ հտ. 3. էջ 234 ։

2 Արիստոտ. յզ. հատ. գիրք էջ 618 ։

3 Պղուտ. յԱգես. հտ. 1.

այլ եւ 'ի ձեռս դատախազականութեան մանկութեան ապարտացելոց անօրէն դատաւորի։

Ի բազում քաղաքս Եգիպտոյ մանկանցն յութուտասանամենից եւ 'ի վեր ոչ եւս ընդ դատաւորական են[1]։ Բայց Եկեղեցւոյ որ քաջ խելամուտն էր մարդկեղէն սրտի, չմարթէր թողուլ զնոսա անխնամ 'ի բարեխնամութեան. հասարակէին զորմէ կախեալ կայ դրեթէ միշտ բախտ քաղաքացւոց, եւ յաճախ եւս աշխարհին բոլոր։ Ի զարթնուլ 'ի նոսա կրկին նոր կարգս հրահանգաց եւ վարժակոց ընդդէմ նոցա առհանդէս. դատաւորեալք պահանջեն 'ի համբակացն առաւելագոյն պարկեշտութիւն, հլութիւն, ժուժկալութիւն եւ եռանդն։

Հիացումն է տեսանել զկայտառ մանկտին, զի փոխանակ պերճանալոյ ընդ քաջութիւն եւ ընդ գեղ խուրեանց՝ չէշխեն անգամ գոգցես բարբառել եւ ոչ զակն 'ի վեր ամբառնալ, այլ զնման հանդարտաքայլ պարկեշտք իբրեւ երկչոտ մի օրիորդ՝ նուիրաբեր դից[2]։

Սակայն եթէ ոչ հզօրագոյն իմն փոյթ յորդորէր զնոսա 'ի բարեկարգութիւնս, թէպէտ եւ պատկառանք 'ի դէմս նոցա տիրէին, այլ բռնակալէր ախտ 'ի սիրտս նոցա։ Սմին իրի Եկեղեցւոյ կացոյց 'ի վերայ նոցա զանօթ դիտողս եւ ատախաց, լրտեսել զնոսա հանապազ։ Զիք ինչ դիպողագոյն քան զհնարս զայս առ 'ի փորձել զա-

1 Քսենոֆ. յղ. հատ. 2 Նոյն անդ, էջ 679։ Սպարտ. էջ 678։

ալքնութիւն։ Եթէ մանկան 'ի հասակակցացն որք յօրինակ կացուցանիցես, առեալ զնա 'ի հասանելն նմին, և արհամարհէ եթէ զիւրաւ չերազանցէ քան զնա։ Իսկ եթէ գունդ առ գունդ կացուցանիցես, քանզի դիւրին է 'ի կշիռ կացուցանել զզօրութիւն նոցա և փոփոխել զկալ մութիւնս, պարծանք յաղթութեանն և նախատինք պարտութեան ոչ 'ի խրոխտանումն յոյժ և ոչ 'ի կարի իմն կորանս զիւրաքանչիւր ոք 'ի նոցանէ ածեն։ Հաստատի 'ի միջի նոցա նախանձընդդէմ հակառակութիւն համեղերձ մեծարանօք միմեանց. ազգականք և բարեկամք նոցա փութան կցորդել այնմ, և դուզնաքեայ հրահանգք թատրցանկալի այնուհետև ամենայն քաղաքայնոցն կացուցանեն։

Բազումք 'ի մանկութեան տպաւորեցուց լքեալ զխաղս, 'ի սաստկագոյն ևս հրահանգս թևակոխեն։ Քանզի հրամայի նոցա՝ վառեալ զինու և բոկոտն սփռել ընդ գաւառն, քացօթեայք ցըրտակէզք գոլով և տօթակէզք, առանց սարկաց 'ի սպասաւորութիւն, և ոչ ունելով ծածկոյթ առ 'ի ցրտոյ պահպանութիւն զցայգ[1]։ Երբեմն տեղեկանան վայրաց աշխարհին, և թէ որպէս պարտ է պահ ունել նմա 'ի հինից թշնամեաց[2], և մերթ զհետ մտանեն վարազուց և այլոց երէոց վայրի[3].

¹ Պղատ. յղ. օր. դիրք Ա. 763։
Հռ. 2. էջ 633։ 3 Քսենոփ. յղ. 'Հարս։
² Նոյն անդ. դիրք Զ. էջ Սպարտ. էջ 680։

և է զի առ 'ի փորձ զընտուորականսն զանազան շարժմանց՝ 'ի դարանի կամ 'ի տուրնջեան, և 'ի հասանել զինչերոյ՝ 'ի դուրս յարձակեալ զգետնեն ; ընդ հարուածովք զհեղոտացիս, որոց զխոցել զվտանգն՝ յանդգնեին ելեալ դեգերել զճանապարհս նոցա [1] * ։

Որինորդք ոչ որպէս Աթէնս դաստիարակէին 'ի Սպարտա. զի ոչ հրամայի նոցա արգելեալ կալ 'ի տան, զատր մնանել, հրաժարել 'ի գինւոյ և 'ի կարի սատածիչ կերակրոց. այլ ուսանէին յերգ և 'ի կաքաւ, 'ի մրցել ընդ միմեանս, յարշաւել թեթևընթաց յաւազի, և յարդարընկեց ամպընկեց խաղարկութեան [2]. զայս ամենայն հրահանգս առնել քօղընկեց և կիսամերկ [3] առաջի Թագաւորաց և դատաւորաց և ամենայն քաղաքացւոց, այլ և մանկաւոյն խակ զկնավիկն՝ զոր 'ի նախանձ վառաց զդղեն օրինակաւն խաղեանց և յարդարական զդուստերք կամ երգիծական հեղգնութեամբք [4] ։

Նա 'ի խաղս յայտնի սկսանէին երկոցուն պարուցն յարքունս հասելոց ընդ միմեանս ազե-

[1] Հերակղ. պոնտ. յղ. հա. 2. էջ 806 ։ Քսենոփ. քաղաքական. Նախինի Ցուն. նաց, հա. 6. էջ 2823 ։ Այս պաշտերագմական հնարից ազգ կոչէր Κρυπτεία այսինքն է գաղտնականութի ։ Յետկոյս մատենիս 'ի տեղեկութեան. Թիւ ԻԴ ։ Պղատ. յղ. գ. գիրք է. հա. 2. էջ 806 ։ Քսենոփ. յղ. հաս. Սպարտ. էջ 675 ։ Պղուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 47 ։

3 Եւրիպ. յԱնդրոմ. տող 598 ։ Պղուտ. առակ. Լակոն. հա. 2. էջ 232 ։

4 Պղուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 48 ։

խստամբութիւնք, որ պատրաստեն զնոյն առ յա-ւելյ բարեկենդանութիւն [1] * ։ Նաև նորաւէր տարփանացն իղձք ոչ պտակին վաղուանն հար-սանեաց ** ։ Միոյն ուրեք որ ազատութիւն է մանկութեան վաղվաղել 'ի սերունդ ազգատոհմի, փոքրկանայ ազգ մարդկան եւ վատթարի յայտ-նապէս [2] . բայց 'ի Սպարտա անվթարելի կայ, զի անդ մինչև մարմնոյ առեալ զաճումն եւ բա-նին զխոհականս ընտրութիւն՝ չէր օրէն ամուսնա-նալ [3] ։

Նոր բարեխառնութիւնս հողոյ ամուսնացն՝ խնդրի եւ մարմնոյն գեղ առնացի, կերպարան անձնեայ, եւ կայտառ առողջութիւն [4] ։ Եկուր-գոս եւ լաւ նմանէ իմաստասէրք համձայնեալք յոյժ զարմանագին, զի այսչափ հող եւ խնամս կալեալ մարդկան առ 'ի քաջատոհմ առնել ըզ-սերունդ ընտանի կենդանեաց՝ բնաւ անխնամ առնեն զմարդկան ազգի սերունդ [5] ։ Ըղձք նորա կատարեցան, եւ բարեբաստիկ տարւոյ ու ամուսնութեանց զօրաւորագոյն իմն, եւ մեծավայե-լուչ բնութիւն մարդկան երեւէր [6] . եւ չէք իսկ

1 Պլուտ. 'ի Լիկուրգ. հատ. 1. էջ 48 ։

* Ցեռակոյս մատեանս 'ի տե-ղեկութիւնս. թիւ ԻԵ ։

** Ցեռակոյս մատեանս 'ի տե-ղեկութիւնս. թիւ ԻԶ ։

2 Արիստոտ. յղ. հատ. գիրք Է. գլ. 16. հատ. 2. էջ 446 ։

3 Քսենոփ. յղ. հատ. Սպարտ. էջ 676 ։ Պլուտ. 'ի Նում. հատ. 1. էջ 77 ։ Նոյն առակ. Լակոն. հատ. 2. էջ 228 ։

4 Պլուտ. յղ. զաւակսա-րակ. հատ. 2. էջ 1 ։

5 Պղատ. յղ. հատ. գիրք Ե. հատ. 2. էջ 459 ։ Պլուտ. 'ի Լիկուրգ. հատ. 1. էջ 49 ։

6 Քսենոփ. անդ.

որպէս զսպարտականսն արիւն վճիռ և գեղեցիկ ։

Թողլով զմանրապատում ճառս արարողութեանց հարսանեացն աղաւաղացուցոց [1], յաւելից զարժանի յիշատակի զնարանշան իմն սովորութիւն նոցա ։ Ի հրատանել պահուն կատարմանն հարսանեացն , փեսայն յետ դպյզն իմչ ճաշուն 'ի հասարակաց ճաշարանի՝ յերևկայէ զնայ 'ի տուն խնամեացն, և գաղտագողացեալ զօրինորդն հարսնացու ածէ 'ի տուն իւր , և նոյնհետայն ղխմէ 'ի կրթարանն առ ընկերս իւր , և կայ ընդ նոսա որպէս յառաջն ։ Ի վաղիւ անդր և յետ այնորիկ ստէպ դառնայ որպէս յարն 'ի տուն հօր իւրոյ . այլ հազիւ վայրկեան իմն սուղ կարէ գողանալ 'ի զգուշութենէ՝ որոց շուրջ զնովաւ կան, և մտանել առ կին իւր . զի յամօթ համարի նմա , եթէ ոք տեսանիցէ զելս նորա յառագաստէ [2] ։ Այն որք զամս ողջոյն 'ի գողացիկ ամուսնութեանն կեան , գաղտնութեան յաւելլով քերկրանս մեծ 'ի պառաբանսն և 'ի գողօնս ։ Պփտաց Լիկուրգոս զի իղձք յառնուլ վաղվաղակի և ստէպ լրումն՝ թողանանն և 'ի տաղտկութիւն հասանիցին , և հոգացաւ յերկարաձգել զայնոսիկ , մինչև ամուսինք ընդելացին թերութեանց միմեանց , և սէրոյ նոցա տակաւ մերկացեալ 'ի ցնորից զգայութեան՝ հասցէ 'ի կատարումն իւր , փոխեալ 'ի բարեկամութին [3] ։

1 Աթէն. գիրք ԺԴ. էջ 646 ։ Պաւսան. գիրք Գ. գլ. 13. էջ 240 ։
2 Քսենոփ. յղ. հաս. Սպարտ. էջ 676 ։
3 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 48 ։ Նոյն տաւակ. Լակոն. հա. 2. էջ 228 ։

Նա՛յս է՝ որ զբարեյարմար համաձայնութիւնն յարդարէ առ տնին. ուր տանուտէրն և տիկինն զիջեալ 'ի խրոխտմանէ առ ձայն միմեանց, վերստին իւր հանապազօր հաստատեն զընտրութիւն իւրեանց, և ընծայեն հանապազ 'ի տեսիլ ցանկալի զծայրագոյն արիութիւն ըստ ծայրագոյն քաղցրութեան կցորդեալ:

Օրէնն է սպարտացւոյ վասն ծանուանց պատճառաց չամուսնանալ[1]. այլ այնպիսին 'ի ծերութեան ոչ որպէս զայլս 'ի քաղաքայնոց պատուի: Օրինակ իմն. Դերկիլղիդաս զօրավարեալ 'ի բանակս փառօք[2], իբրև մտանէր 'ի ժողով մի ոմն 'ի մանկտւոյն ասէ ցնա. Ոչ քեզ յոտն կամ, զի չթողուս մանկունս՝ որ յաւուր միում յոտին կացցեն ինձ[3]: Եւ ոչ այսչափ միայն, այլ և չէ օրէն ամուրեաց առընթեր կալ կիսամերկ մրցանաց օրիորդացն, և օրէն է դատաւորաց հրամայել նոցա 'ի խիստ ձմերայնի շուրջ գալ ըստ հրապարակն հոլանի, ցուցս բարձեալ Թշնամանագիրս անձանց՝ խոստովանելով զի յիրաւի ըստ օրինազանցութեանն կրեն պատուհաս[4]:

1 Քսենոփ. յղ. հաս. Սպարտ. էջ 676:

2 Նոյն պատմ. Յուն. գիրք Գ. էջ 490, և այլուր:

3 Պղուտ. 'ի Լիկուրգ. հա. Ա. էջ 48:

4 Նոյն անդ:

ԳԼՈՒԽ ԽԺ․

Զբարուց և զառաքինութեանցն սպարտացւոց ։

ՕՐԻՆԱՑՆ զաւանդեալն Հասա առատաձեռ շարայարեմ, զի դաստիարակութիւն սպարտացւոց զործեալ ընդ ամենայն կեանս նոցա յարաձգի [1] ։

Ի քսանամենից և անդր ոչ ևս զերծուն զՀերս և՝ զմօրուս․ զի Հերք յաւելուն զգեղ, և վայելուչք են արանց ազատաց և պատերազմողաց [2] ։ Փորձի Հնազանդութիւն նոցա․ և ՚ի կայծ իսկ դուզնաքեայս․ պաշտօնեայք ՚ի Համանել յիշխանութիւն, Հրաման Հանեն ՚ի ձայն փողոյ Հրովարտակաւ՝ զերծուլ ամենեցուն զընչաս, և Հնազանդել օրինաց [3] ։ Ամենայն ինչ անդ առ ՚ի խրատ սահմանեալ է․ սպարտացւոյ ուրումն Հարցեալ թէ ընդէ՞ր զերկայնանալ մօրուացն կրէր, ասէ․ Զի յորժամ Հեռուէ ալիք ՚ի սոսա անկանին, ազդեն ինձ Հանապազ՝ չառնել նախատինս ծերութեան իմոյ [4] ։

Սպարտացիք անզարդս ամենեւին զգենուլ, եղեն ՚ի զարմանս օտար ազգաց, այլ ոչ որ ՚ի նոցանէ նախանձաւոր եղև նմանել նոցա ։ Ոչ ինչ է

[1] Պլուտ․ ՚ի Լիկուրգ․ Հտ․ 1․ էջ 54 ։

[2] Երոդոտ․ գիրք Ա․ գլ․ 82 ։ Քսենոֆ․ յղ․ Հասա․ Սպարտ․ էջ 686 ։ Պլուտ․ ՚ի Լիւսանդր, Հտ․ 1․ էջ 434 ։

[3] Պլուտ․ յԱգէս, Հտ․ 1․ էջ 808 ։ Նոյն յղ․ յառակս լակոնացւոց գիրս, Հտ․ 2․ էջ 550 ։

[4] Նոյն տեղ․ Լակոն․ Հտ․ 2․ էջ 232 ։

խօսիր 'ի Սպարտա ընդ Թագաւորս և ընդ աւա-գանին և ընդ սինկլիտոս ռամկին ըստ արարողքին ձևոյն [1]. ամենեցուն նոյն պատուականն է կարգ [2] և առուլի խօշոր [3], և միաբանակեալ ընթրելու կամ կերակ-նոց մեծ կենդանութ [4]. և օղք կամ կօշիկք յատա, սովորաբար շառաւզոյն [5]: Լասասոր և Պաղիտեւ-կլես դիւցազունք Սպարտայ նկարագրին կրելով 'ի գլուխ խոյլա, որոց բերան 'ի բերան կցորդեալ՝ բերեն զձև ձուոյն յորմէ ծնեալք ընդա աւաս-պելեն. իբրև զմի յարատախուսնակաց աստի երեն ցայսօր սպարտացիք: Այնք 'ի նոցանէ անգեն զայն փոխանակ զանձկանկացն [6], իսկ այլք սկսան կրել ընդ այնր զԹաղհառ զարդարանէր կանանց Ալե-քսադայ. զորոց քերԹողն Նախիփանիս ասէր յաւ-ւսւրս իւր, Թէ ոչ են անապարանելիք են սպարտա-ցիք, զի վարսակալք ծիրանիք են նոցա [7]:

Յետ կրեստացւոց նորա ասաքինք եղեն 'ի մեր-կանալ զամենայն հանդերձս 'ի հրահանգս մըցու-Թեանց [8]. և սովորուԹիւնս այս եմուտ ապա 'ի

1 Թուկիդ. գիրք Ա. գլ. 6: Արիստոտ. յղ. հատ. գիրք Դ. գլ. 9. հտ. 2. էջ 374:

2 Պղատ. 'ի Պրոտագ. հտ. 1. էջ 342: Պղուտ. տրակ. Լակոն. հտ. 2. էջ 210:

3 Արիստոփ. յիժան, տող 474: Պոլլուքս. անդ:

4 Դեմոսթ. 'ի կոնոն, էջ 1113: Պղուտ. 'ի փոկիոն, հտ. 1. էջ 746:

5 Միւրոս. խոհարարն Լու-կիան. գիրք Ա. գլ. 18:

6 Նոյն անդ, գլ. 17:

7 Անաքրէ. առ ԱԹենէո-սի, գիրք ԺԵ. գլ. 8. էջ 681: Կասաուբ. անդ, հտ. 2. էջ 610:

8 Պղատ. յղ. հատ. գիրք Ե. հտ. 2. էջ 452: Դիոն. ալիկ. 'ի Թուկիդ. հտ. 6. էջ 858:

խաղս ողիմպիականս [1], և անպատեհութիւն յանձախութեանցն բարձաւ [2]։

Ի քաղաքամիջի լախտ 'ի ձեռին կրեն կռածաց [3], այլ ոչ է օրէն զնալ ուսմբք այնու 'ի ժողով. քանզի նոցա աշխարհին զօրութեանն փառաւորից և ոչ զինուք պարտ է սահմանել։

Տունք փոքրիկք են նոցա և անհարթք. 'ի կերտուած դրանց նոցա ոչ հայի գործի բաց 'ի սղոցէ, և ոչ 'ի գերանս յարկացն բաց 'ի տապարէ. զդրունս ծառոց վեր 'ի վերոյ ինչ տաշեալ հաստատեն նեցուկս [4]։ Այլ կահք նոցա, թէպէտ և գեղեցկակերտք, զնոյն բերեն պարզութիւն. և ոչ դարձեալ խառն 'ի խուռն զմիմեանց կուտակեն։ Միևնոյն ինչ առ ձեռն պատրաստ կայ սպասուցոյ 'ի պիտոյն, զի ամենայն ոք պատրաստ անձին հանարի դնել դարձեալ ուստի ինչ էառն [5]. և դուզնաքէից այսոցիկ փոյթ, պահէ 'ի նոսա զսէր բարեկարգութեան և հրահանգաց։

Ժուժկալք են յոյժ 'ի կերակուրս. այլազգւոյ ուրումն 'ի քաղաքի ուրեք տեսեալ զնոսա տապաստ անկեալս զսեղանով, լաւ համարեցաւ քան զայնպիսի կեանս նոցա զայնպիսի մահ [6]։ Սակայն

1 Թուկիդ. գիրք Ա. գլ. 6։ Պղատոն. անդ։

2 Պղուտ. յղ. հաս. գիրք Ե. հտ. 2. էջ 452։

3 Արիստոփ. 'ի Հաւուն, տող 1283։ Պղատոն. անդ։ Թէոփր. Նկարագիրք, գլ. 5։

4 Պղուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 47։ Նոյն աստ. Լակոն. հտ. 2. էջ 210 և 227։

5 Արիստոտ. յղ. տնտես. գիրք Ա. գլ. 6. հտ. 2. էջ 495։

6 Եղիան. զան. պատմ. գիրք ԺԳ. գլ. 38։ Ստոբ. Ճառ. 29. էջ 208։ Աթէն. գիրք Դ. էջ 138։

Յեկուրդս ոչ արգել նոցա, բայց միայն զաւե-լորդս. այլ նոքա առաքինութեամբ և ոչ 'ի հար-կէ էին սակաւապէտք: Ոչ պակասէր նոցա միս 'ի սպանդանոցս, և Տայգետեան լերանն մատակա-րարէր նոցա զազգս ազգս որսոյ առատութեամբ [1], և զաշունս աշխարհին նապաստակս և կաքաւս և զայլ ազգի ազգի որս վայրի, և ծով և Եւրո-տաս ձկունս [2]: Գովին է յոյժ պանիր Սպարտա-նի [3] *. և էին նոցա դարձեալ ազգ ազգ ընդեղոց և մրգոց և հացի և փոխինդոյ [4]:

Բայց խոհակերաց գործ է պատրաստել խոր-տիկս անպաճոյճս, և մի 'ի կիր արկանել այլ ա-մոքանս՝ բաց 'ի սեաւ համեմոյն [5]: Համեմոյս այսորիկ ոչ ևս յիշեմ զխառնուածն**. 'ի սմա սպար-տացիք թաթախէին զհաց, և քան զամենայն հա-մադամս թուէր նոցա գերազանց [6]: Որմէ Դիո-

1 Քսենոփ. յղ. հասա. Սպարտ. էջ 680: Պաւսան. գիրք Գ. գլ. 20. էջ 261:

2 Աթէն. գիրք Դ. էջ 141. գիրք ԺԴ. էջ 654: Մեօրս. խորհրդական Լակոն. գիրք Ա. գլ. 13:

3 Ղուկիան. յղ. պոռնիկ. հտ. 3. էջ 321:

* Պանիրս այս ցարդ իսկ ցանկալի է յաշխարհին: (Տեսցեն զայսմանէ Ինգլրոսք 'ի հինն Լակեդեմոն. հտ. 1. 63):

4 Մեօրս. անդ, գլ. 12 և 13:

5 Պղուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 46: Նոյն յԱգիս, էջ 810: Պոլլուք. գիրք Զ. գլ. 9. յօդ. 57:

** Մէօրսիոս խորհրդական Լակոն. գիրք Ա. գլ. 8:) կարծէ զսեաւ համեմն 'ի հիւթոյ խոզենւոյն հանդերձեալ աղիւ և քացախով: Եւ թուի իսկ այնպէս, զի խոհակերաց սպարտացւոց ոչ էր օրէն այլ ինչ ամոքանս բաց յաղէ և 'ի քացախոյ 'ի կիր արկանել: (Պղուտ. յղ. խնամոց առողջ. հտ. 2. էջ 128):

6 Պղուտ. կարգաւոր. Լակոն. հտ. 2. էջ 286:

ՙնեսխոս բանաւորն Միրաակաւսայ լուեալ, կամեցաւ զայն 'ի սեղան իւր : Կոչեաց խոհարարք զոմն բապարտացի, և հրամանն ետ նմա հանդերձել զայն՝ ոչ խմորեցեալ 'ի ծախս : Ոձաւ համեմն 'ի սեղանն, և Թագաւորին Ճաշակեալ, մերժեաց զայն յաւամանս : Արուամ խոհակերն ասէ . Տէր, քանզի պակասէ 'ի դմա ինչ 'ի կարեւոր հանդերձանաց : Թագաւորն ասէ . Եւ զի՞նչ այն իցէ : Եւ խոհակերն ասէ . Նշխարատութիւն սատարել նախ քան զՃաշ [1] :

Թագաւոր ազգք են զկնեալ 'ի Լանկոնիա . և որ 'ի Հինդբլուրսն, եօԹն ատաբարիզաւ հեռի 'ի Սպարտայ , . եկանէ զկնկին՝ ծաղկահատ է [2] : Եւ փեալ զկնեայն պարտ է եռալ 'ի հուր մինչև հինգերորդ մասն խաղմկին ցնդեսցի, և յետ չորից ամսոց ամանսն զայն յարբումն [3] : Ի Ճաշս նոցա ոչ որպէս առ այլս յազգաց ձեռաց 'ի ձեռս անցանէ բաժակ, այլ իւրաքանչիւր ոք զիւրն ապառէ, և ըստ զայն անդրէն սորուկն սպասաւոր իւր [4] : Նշաստութիւն է նոցա ըմպել ըստ չափոյ պիտոյից [5] . և անտրժաբար վարին նովաւ առանց

1 Պլուտ. կարգաւոր. Լակոն. հա. 2. էջ 236 : Կիկեր. տուսկուլ. խնդ. գիրք Ե. գլ. 34. հա. 2. էջ 389 : Ստոբ. Ճառ 29. էջ 208 :

2 Աղիմ. առ Աթենէոսի, գիրք Ա. գլ. 24. էջ 31 :

3 Դեմոկր. յղ. մէջսի. գիրք Ի. գլ. 4 : Պալլադ. առ մատենագիրս գեոպ. յուղ. գիրք ԺԱ. հա. 2. էջ 990 :

4 Կրիտ. առ Աթենէոսի, գիրք Ժ. էջ 432 . գիրք ԺԱ. գլ. 3. էջ 463 :

5 Քսենոփ. յղ. հասա. Սպարտ. էջ 680 : Պլուտ. առած. Լակոն. հա. 2. էջ 208:

զեղխելոյ [1] : Ըստ երեւելոյ սարկի դժպհի տեսիլ, զոր երբեք երբեք յանդիման ամենեցունց ՚ի մէնջ. կութեան, զարշելացուցանէ զնոսա յոյժ յարբե-ցութենէ [2]. եւ խրոխտ մեծամեծութեանցն չառ-նուն յանձն ՚ի նուաստութիւն անձն իջանել : Սովլոն մեծամեծութեան պատասխանեաց արքա-յացն. որոյ հարցեալ՝ թէ ընդէր չախորժ ըմ-պէր զգինի, ասէ. Որպէս զի մի միայն այլոց կարօտեցից [3] : Եւ այլ յընկերաց տարի, ամենայն եւ զչ իմաց կարթ յարբաւ ՚ի ծարաւս խմելոյ [4]* :

Եւ այլ եւ այլ ձաշք ենինոցա հասարակաց, յաձա-խագոյն Փիւլիստիացւոց ամուսնականք ** : Արքայք, աւագանին եւ քաղաքացիք առ հասարակ ժողո-վին ձաշել ՚ի միասին ՚ի սրահս՝ ուր պատրաս-տեալ կան սեղանք բազումք, մէն միոյ հնգետաս-սանն ունելով առաջաբար բազմոցս [5] : Բազմա-կանք միոյ ՚ի սեղանոյ ոչ խառնեին ընդ այլ բազմ-մականս, եւ յանկումն ամենայն սիրելեաց ոչ որք կա-

1 Պղուտ. յղ. ար. գիրք Ա. հա. 2. էջ 637 :

2 Պլուտ. կարգաւոր. Լա-կոն. հա. 2. էջ 239 : Աթէն. գիրք Ժ. էջ 433 :

3 Պլուտ. առած. Լակոն. հա. 2. էջ 224 :

4 Հիւսիւց. ՚ի բառն Κίρρος.

* Զընձրեցիս զոյս գիտ. ևս ՚ի կէր առնուն ընտանիք առ-խարհին : (Տես ՚ի հինն Լակե-դեմոն, հա. 1. էջ 64 :)

** Ոմանք զձաշս զայսոսիկ φειδίτιαι Փիդիտիայս կոչեն վասն սակաւապիտութեանն : Իսկ այլք բազմագոյնք Փիլի-տիայս, որ ուղղագոյն թուի՝ նշանակելով զանկումն սիրե-լեաց : (Տես Մեօրս. խնճարարան Լակոն. գիրք Ա. գլ. 9 :)

5 Պլուտ. ՚ի Լիկուրգ. հա. 1. էջ 46 : Պորփիւրյղ. ժուժ-կալ. գիրք Դ. յօդ. 4. էջ 308 :

րէ մնանել առանց հաւանութեան ամենեցուն նոցա [1] ։

Բազմին 'ի կարծր բազմոցս փայտակերտս 'ի կաղնւոյ, յեցեալ զարմկունս 'ի վէմ կամ 'ի կոճղ փայտի [2] ։ Պաշտին նախ համեմն սեաւ 'ի սեղան, ապա խոզենի խաշելոյ՝ հաւասարաբաժինս իւրաքանչիւր ումեք 'ի բազմականացն, և երբեմն 'ի կոտորակս փոքրիկս յոյժ՝ որ հազիւ կշռէին քառորդ մի մնասու [3] ։ Նմին գինի և փոխինդ կամ գարեհաց մատակարարի նոցա առատութեամբ ։ Ի զի յաւելան 'ի հանապազորդ բաժինս նոցա և ձուկն կամ ազգի ազգի որսք վայրի [4] ։ Որք զոհս դիցն մատուցանիցեն և կամ յորս երանեն, օրէն է նոցա 'ի դառնալ իւրեանց ճաշել 'ի տունս իւրաքանչիւր . բայց միայն պարտ է նոցա յղել առ սեղանակիցս իւրեանց մասն յորսոյն կամ 'ի զոհից [5] ։ Նա բազմոցս իւրաքանչիւր զնեն կոտորակս խմորոյ հացի առ 'ի սրբել զմատունսն [6] ։

Սովորութիւն է նոցա զրուցատրել 'ի ճաշի զքաղաքական խնդրոց, կամ օրինակս առաքինութեանց 'ի մէջ բերել ։ Գործք առաքինութեան համարին առ սպարտացիս ընդ զրոյցս արժանա-

1 Պլուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 46 ։

2 Աթէն. գիրք ԺԲ. էջ 518 ։ Մուրս. 'ի բառն Λυχ. և 'ի Φιλί ։ Կիկեր. Ճառ. վասն Մուր. գլ. 35. հա. 5. էջ 232 ։

3 Դիկէարք. առ Աթէն. գիրք Դ. գլ. 8. էջ 141 ։

4 Նոյն անդ ։

5 Քսենոփ. յղ. հասա. Սպարտ. էջ 680 ։ Պլուտ. անդ ։

6 Պողիւքս. գիրք Զ. գլ. 14. յօդ. 93 ։ Աթէն. գիրք Թ. էջ 409 ։

լուրս։ Ուրեք յաճախագոյնս արկանեն ճառս, յառակ բերելով զխօսսն. և այլք պատկառանօք լսեն նոցա։

Ի պատշաճն յաւելման և զգուարճալին [1], այսպէս պատուիրեալ Եկեղեցւոյ բազմակա-նացն. յայն սակս իսկ կարգոյ յանդիմանն նոցա զանօթի դիցն ծառու [2]։ Այլ 'ի զուարճութեան բանսն ոչ է պարտ նոցա խառնել երգիծանս. և եթէ յանկարծ զբոյց ինչ այնպիսի 'ի բերանոյ ուրուք 'ի խրախճանականաց ելցէ, ոչ է օրէն պատ-մել զայն ուրեք առաւօտոյ։ Վերագոյնն 'ի նոցա-նէ ցուցանելով մտելոց զդուռն ճաշարանին՝ ազդ առնէ նոցա, զի որ ինչ անդր մտանեն լսել՝ ոչ է պարտ թէ ելանիցէ ընդ այն [3]։

Դասք դասք համբակաց առընթեր կան սե-ղանոյն, առանց ինչ ճաշակելոյ. այլ մանկավարժու-նիցն 'ի նոցանէ գործ է բառնալ 'ի կերակրոց ան-տի ճարտարութեամբ, զորս բաժանեն ընդ սի-րելիս իւրեանց. և այլք կան անդ 'ի լուր խրա-տուցն իմաստութեան և զուարճախօսութեցն [4]։

Ճաշք համարակաց, թէպէտ 'ի բանակէ մու-ծեալք 'ի քաղաք, և թէ յայլմէ իմեքէ առեալ պատճառս [5], գործեն 'ի փոքու պետութեան

1 Արիստոփ. 'ի Լիւսիստր., տող 1228։

2 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 55։

3. Նոյն կարգադր. Լակոն. հտ. 2. էջ 236։

4 Նոյն 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 46 և 50։

5 Պղատ. յղ. օր. գիրք Ա. հտ. 2. էջ 628։ գիրք Զ. էջ 780։

զարմանալիս ՚ի պայծառութիւն օրինաց [1] . ՚ի ժամանակի խաղաղութեան զմիաբանութիւն , զժուժկալութիւն և զհաւատարմութիւն , իսկ ՚ի պատերազմի հզօրագոյն յաղթողաց հաստատելոյ յօգնութիւն քաղաքացւոց՝ հաւատարմութեամբն ընդ նոսա ՚ի զոհս և ՚ի հեղումն նուիրաց [2] : Սո-լոնեայ օրինադրեալ էր զայնս յերկրի իւրում , և Լիկուրգոս առնոյր ընկալեալ զսովորութիւնն՝ կարեւոր ինչ փոփոխմամբք : Ի Կրետէ ՚ի զանձանց աշխատութհին ինքն ծախիցն [3] . իսկ ՚ի Սպարտա ՚ի հասակէ իւրաքանչիւրոց . զի պարտ էր նոցա ամէն յամենայն տեղ պատրաստ ունել զօրաց և զինուց և պանիր և թուղ և դրամ իսկ [4] : Ի հարկապահանջութեանէ ասսուր փառաց էր շքանսորագոյնիցն արտաքս մնալոյ ՚ի հասարակաց ձայնէ . զոր Արիստոտէլ սուգանսնէ յօրէնս Լիկուրգեայ [5] : Պարսեաց և Պղատոնն զերկրպագանելութիւն իսկ զՄինոսի և զԼիկուրգոս եդեալ էր , վասն զիմանալոյ արտաքներոյ նոցա ՚ի հասարակաց կենաց [6] : Արդ ինձ ոչ է օրէնս դատել զկարծիս այսքաննեաց աւագ

1 Պղատ. յղ. օր. գիրք Զ. հա. 2. էջ 780. Պղուտ. ՚ի Լիկուրգ. հա. 1. էջ 48 : Նոյն առակ. Լակոն. հա. 2. էջ 236 :

2 Դիոն. աղիկ. յղ. հնութեանց հառոմ. գիրք Բ. հա. 1. էջ 283 :

3 Արիստոտ. յղ. հասա. գիրք Բ. գլ. 9 և 10. հա. 2. էջ 331 և 332 :

4 Պղուտ. առակ. Լակոն. հա. 2. էջ 46 : Քսենոփոն. յղ. ժուժկալ. գիրք Դ. յօդ. 4. էջ 305 : Դիկէարք. առ Աթենէոսի , գիրք Դ. գլ. 8. էջ 141 :

5 Արիստոտ. անդ :

6 Պղատ. անդ և գիրք Ը. էջ 839 :

արանց քաղաքավարաց և հանճարեղ օրէնսդրաց ։
Այն 'ի սպասաւորացն որք ոչ գիտեն զպարտութիւն [1], և կեսք զհաշիւ իսկ համրիւ թէ գիտիցեն [2]. և բնաւին անծանօթ են առ նոսա աշխարհագրութիւն և աստեղաբաշխութիւն և այլ գիտութիւնք [3] ։ Պիտանագոյնք 'ի նոցանէ զբօսնուն 'ի քերթածս Հոմերոսի [4] և Տերպանդրի [5] և Տիրտեայ, վասն վերաբերմանց նոցա զմիտս ։ Տեսարանք նոցա 'ի հրահանգս եւեթ սահմանեալ են [6]. ոչ ողբերգութիւնք և ոչ կատակերգութիւնք ընծայէին անդ 'ի տեսիլ, օրէնս եդեալ նոցա անձանց՝ մի երբէք մուծանել առ իւրեանս զթատերական բանաստեղծութիւն [7] ։ Ասկայք ունին 'ի նոցանէ պարապեցին քնարերգակ քերթութեան, և յաջողեցան 'ի նմա ։ Ալկմանն որ եկաց յառաջ քան զդարս իբր երիս, նշանաւոր գտաւ յարուեստին . քաղցունք են տաղք նորա . Թէպէտ և հարկ 'ի վերայ կայր նմա մաքսաուել ընդ խստութեան դորացի բարբառոյն՝ որով խօսէին սպարտացիք [8] . այլ կիրքն որ կրէին 'ի

1 Իսոկր. Համաժող. հա. 2. էջ 230 ։
2 Պղատ. յերէցն Իպպ. հա. 3. էջ 285 ։
3 Նոյն անդ ։ Եղիան. զան. պատմ. գիրք ԺԲ. գլ. 50 ։
4 Պղատ. յԱ. օր. գիրք Գ. հա. 2. էջ 680 ։
5 Հերակղ. պոնտ. յԱ. քաղաքականն. նախնի Յունաց. հա. 6. էջ 2823 ։
6 Երոդոտ. գիրք Զ. գլ. 67 ։ Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Դ. էջ 537 ։ Պղուտ. յՕրէնս. հա. 1. էջ 612 ։
7 Պղուտ. կարգադր. Լակոն. հա. 2. էջ 239 ։
8 Պաւսան. գիրք Գ. գլ. 15. էջ 244 ։

նոսա, ամենքեան զամենայն. զի զամենայն կեանս իւր նուիրեալ էր նորա սիրոյ, և յամենայն կեանս իւր երգեաց զնէր:

Մխործեալ է նոցա երաժշտութիւն որ ներգործէ 'ի հոգւոջ զխանդս առաքինութեան [1]. և անտեղեակք գոլով արուեստին՝ ըստ ազդեցութեան նորա 'ի բարս առնեն զնմանէ դատաստան, 'ի բաց մերժելով զնորաձևութիւնս՝ եղծիչս պարզութեան նորա [2]:

Օ Հակառակութիւն նոցա առ ճարտարախօսութիւն [3] յառաջիկայից իրացս 'ի մէջ առցես: Պղատոնեայ ուրումն սպարտացւոյ վարժեալ արուեստք աշխարհին յարուեստն՝ իբրև դարձաւ անդրէն, պատուհասեցաւ 'ի սպարտացւոց՝ որպէս թէ մտաբերէր խառնել զքաղաքացիս իւր [4]: Իսկ այլ ումն սպարտացի յաւուրս պեղոպոննեսական մարտին արձակեալ առ Տիսափեռն նախարար, յորդորել զնա զի թողեալ զԱթէնս՝ ընդ Սպարտայ միաբանեսցէ, սուղ ինչ բանիւ կատարեաց զպատգամաւորութիւնն: Իսկ տեսեալ զի պատգամաւորք աթենացւոց զամենայն շուք և պերճութիւն ճարտարախօսութեան 'ի ճառսն յանդիմանն առ-

1 Պլուտ. կարգադր. Լակոն. հա. 2. էջ 238: Քամէլ. առ Աթենեան, գիրք Դ. գլ. 25. էջ 184:

2 Արիստոտ. յղ. հաս. գիրք Ը. գլ. 8: հա. 2. էջ 454: Աթեն. գիրք ԺԴ. գլ. 6. էջ 628:

3 Կուինտիլ. հրահանգք ճարտ. գիրք Բ. գլ. 16. էջ 124: Աթեն. գիրք ԺԳ. էջ 611:

4 Սեքս. Եմպիրիկ. ընդդէմ ճարտ. գիրք Բ. էջ 293:

նէին, ձգեալ զինս երկուս 'ի մի կէտ աւարտեալ, մին ուղիղ, միւսն կամակոր. և ցուցեալ զայն նախարարին, ասէ. Անորեա [1]: Յառաջ քան զամս երկերիւր բնակիչք միոյ 'ի կղզեաց եգէական ծովուն [2] նեղեալք 'ի սովէ՝ դիմեցին առ սպարտացիս, նիզակակիցք գոլով նոցա: Նոքա ետուն պատասխանի առ պատգամաւորսն, և ասեն. Զօ-րութեան ճառից ոչ եղաք հասու, և ոչ ևս զըն-կիզն բանիցդ յիշեմք: Առաքեցաւ այլ հրեշտակ, պատուէր առեալ խօսել հակիրճ: Եւ նորա եկեալ ցուցանէր սպարտացւոց զպարկ ալեր դատարկ: Պիտոյ անդէն ժողովն, զի համբարք կարճեալ էին կղզւոյն. այլ խրատեաց դարձեալ ըզպատգամաւորսն՝ մի ևս երկայնախօս լինել, թէպէտ և պատգամաւորին ոչ աւելի ինչ ասացեալ նոցա՝ բայց ընուլ զպարկն [3]:

Այլ զհանճար արուեստին մեծարեն, թէպէտ և անգոսնեն զարուեստ ճարտարխօսութեան: Ոմանք առ նոսա ճարտարախօսք 'ի բնէ [4], ցուցին զհանճար իւրեանց 'ի ժողովս համազգեացն և այլոց ազգաց, և յարձանական հանդէսս՝ որ ամի ամի կատարէին 'ի յիշատակ Պաւսանեայ և Լէւոնիդայ [5]: Եւ Բրասիդաս զօրավար, այն որ 'ի պեղոպոննեսեանն մարտին պատսպարանն եղև փա-

1 Սեքս. Էմպիրիկ. ընդդ. դէմ ճարտ. գիրք Բ. էջ 393:

2 Երոդ. գիրք Դ. գլ. 46:

3 Սեքս. Էմպիրիկ. Ը. անդ:

4 Եպքին. 'ի Տիմ. էջ 288:

5 Պաւսան. գիրք Դ. գլ. 14. էջ 240:

ուաց հայրենեացն 'ի Մակեդոնիա, ընդ ճարտա-րախօսս համարէր առ աթենացիս իսկ՝ առ որս մեծարեալ պատուի ճարտարխօսութիւն [1] ։

Ճարտարխօսութիւն սպարտացւոց միշտ 'ի նպատակն դիմէ, և հասանէ անդր ընդ ուղիղ ճանապարհ ։ Իմաստակաց ումանց օտարաց եղև երբեմն հրաման մտանել 'ի Սպարտա, և հրա-պարակախօս լինել. որք 'ի նոցանէ օգտակարս ճառիցեն՝ ընդունելիք էն, իսկ ճամարտակողացն ոչ ոք ունկն մատուցանէ ։ Մ՚ի ումն յիմաստակաց ասոր հրաւիրէր զմեզ յաւուր միում՝ 'ի լուր ներ-բողենի Հերակղեայ. և Անտաղկիդայ լուեալ զայն, գոչեաց անդէն. Հերակղեա՞յ, և ո՞ պար-սաւիցէ զնա [2] ։

Ոչ ամօթ համարի առ նոսա աղքատութիւն, զի աւելորդ վարկանին զզեղխութիւնս. և 'ի կշտամ-բել աթենացւոյ ուրումն զանուսմնութիւն նոցա, մի ումն 'ի նոցանէ ասէ. Արդարև մեզ միայն չկա-րացիք ուսուցանել զյոռութիւնս ձեր [3] ։ Յան-հրաժեշտ կարևորսն ևեթ պարապելով նոցա, ճշգրտագոյնք են տիպք իրաց 'ի միտս նոցա, պատշաճագոյնք առ իրեարս և կարգաւորագոյնք. զի տիպք իրաց անհարազատք, են որպէս թեւք ապարանից անկանոնք՝ որոց 'ի գեղեցկայարմար շինուածս չիք տեղի ։

1 Թուկիդիդէս, գիրք Դ. գլ. 84 ։

2 Պլուտ. առակ. Լակոն. հա. 2. էջ 192 ։

3 Նոյն 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 52 ։ Նոյն առակ. Լակոն. հա. 2. էջ 217 ։

Վասն այսորիկ թէպէտ և տգէտ է ազգն քան զայլս, այլ յոյժ առաւել է ողջախոհ։ Թաղէսի, Պիտտակեայ և այլոց իմաստնոց Յունաց, 'ի նմանէ ասեն ուսեալ զարուեստ քաղաքավարելոյ զխրատս բարոյականին 'ի համառօտ վճիռս [1]։ Նոյն իսկ դէպ եղև յաճախ զփորձ առնուլ իրացն, և զարմացեալ կայի։ Ընդ արս տգէտս և թանձրամիտս կարծելով խօսել, լսէի անդէն 'ի բերանոյ նոցա պատասխանիս լի հանճարով, և թափանցիկս որպէս զնետ [2]։ Սովորեալք 'ի մանկութենէ խօսել ազդու և համառօտ [3], եթէ չիցեն ինչ նոցա կարևոր բանք՝ լռեն [4], և եթէ իցեն բազումք՝ ներումն խնդրեն [5]։ Մեծախոհք 'ի բնէ, զբազմաբանութիւն համարին ստրկի աղաչաւորի անձն. զի համգոյն նմին թուի փարել զոտիւք և խաղապատել զնորքօք՝ զորս համոզելն կամի։ Իսկ ընդ հակառակն համառօտութիւն խրոխտ է և մեծասաստ, և տերանց հրամայողաց անձն [6]. և պատկանի քարոզ սպարտացւոց, որք յաճախ վարէին նովաւ 'ի բանս և 'ի թուղթս իւրեանց։ Պատասխանիք նոցա երագունք իբրև զփայլակն, թողուն զհետ իւրեանց մերթ լոյս

1 Պլուտ. 'ի Պրոտագ. հտ. 1. էջ 343։

2 Նոյն անդ, էջ 342։

3 Հերոդոտ. գիրք Գ. գլ. 46։ Պղատ. յղ. օր. գիրք Ա. հտ. 2. էջ 641։ Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 51 և 52։ Պաւսան. գիրք Դ. գլ. 7. էջ 296։

4 Պլուտ. անդ, էջ 53։

5 Թուկիդիդէս, գիրք Դ. գլ. 17։

6 Դեմետր փաղեր. յղ. պերճախօս. գլ. 253։

պայծառ, և մերթ զբարձր կարծիսն՝ զոր բերեն նոքա զանձանց և զհայրենեաց իւրեանց ։

ԶՔարիլաւեայ արքայի զգովեստ մարդասիրութեանն լսելով՝ արքայակցի նորա, ասէ. Եւ համարիցի՞ք մարդասէր զայն՝ որ և առ չարս մարդասիրէն [1] ։ Ի միում ՚ի քաղաքաց Ելլադայ քարոզ ՚ի վաճառ գերւոյն աղաղակէր. Վաճառեմ զըսպարտացի ։ Եւ անդ ուրումն ըմբերանեալ զնա ձեռամբ, գոչէ. Մ՛ի զսպարտացի, այլ զգերի [2] ։

Զօրավարք արքային Պարսից հարցին ցհրեշտակս սպարտացւոց. Ի ձե՞նջ գայք խօսել ՚ի խաղաղութիւն, թէ պատգամաւորի՞ք ։ Եւ նոքա ասեն. Եթէ չյաջողէ՝ գամք իբրև ՚ի մէնջ, իսկ թէ յաջողէ՝ իբրև պատգամաւորք [3] ։

Զնոյն համառօտութիւն է տեսանել և ՚ի թուղթս աւագանւոյն և զօրավարացն առ աւագանին գրեալ ։ Պարետացն երկուցեալ զի պահակապանք Դեկեղիոյ յանկարծ պաշարեցին ՚ի թշնամեաց՝ թողացեալք ՚ի հանապազորդ հրահանգացն, այսչափ ինչ գրեցին առ նոսա. Մ՛ի զգօնոյք [4] ։ Զ բազմաղէտ պարտութիւնս և զպայծառ յաղթութիւնս նոցին պարզութե՛ ազդ առնեն ։ Ի պեղոպոնեսական մարտին ՚ի բեկանել նաւատորմին նոցա՝ որում հրամայէր Մ՛ին-

1 Պլուտ. ՚ի Լիկուրգ. հտ. 1. էջ 42 ։ Նոյն տրամ. Լակոն. հտ. 2. էջ 218 ։

2 Նոյն անդ, էջ 233 ։

3 Նոյն ՚ի Լիկուրգ. հտ. 1. էջ 55 ։ Նոյն տրամ. Լակոն. էջ 231 ։

4 Սոփան. զան. պատմ. գիրք Բ. գլ. Ե ։

զար, յերեսաց նաւատորմին աթենացւոց՝ որում առաջնորդէր Ալկիբիադ, մի 'ի սպայից գրեաց առ պարէտս այսպէս. Մարտն բեկաւ, Մինդար անկաւ, սպառեաց հացքար, չիք հնար [1]: Այլ յետ ոչ բազում աւուրց Լիսանդր զօրավար բանակին գրեաց առ նոսա զլուր յաղթութեանն՝ որ առաւել քան զամենայն յաղթութիւնս յաջախեաց փառս և օգուտ Սպարտայ, և պատճէն գրոյն էր այս. Աթէնք առան [2]:

Այլ մի ոք 'ի բանից աստի կարծեսցէ զսպարտացիս անծայլիտս գոլ և խստաբարոյս. զի ազատութիւն մնաց և առողջութիւն պատրաստագոյն առնէ զնոսա 'ի զուարթութիւն: Որպէս արծարծանի 'ի նոսա բերկրութիւն, զի սթափ է և բնական. և ճարակի զուարճախօսութեամբք, որք զերծ 'ի տգեղ և 'ի թշնամանող բանից՝ ամենեւին զանազանին 'ի խեղկատակութենէ և յերգիծանաց [3]: Ի մանկութենէ կրթին նոքա 'ի տուրեւառ այսպիսեաց բանից [4]. և ընդ խնդրել ուրուք խնայել յանձն իւր՝ լռեն [5]:

Այսպիսի բանիւք ցածուցանէին երբեմն զմնապարծութիւն և զցասումն: Որպէս եղև զի մինչ

1 Քսենոփ. պատմ. Յունաց, գիրք Ա. էջ 430:

2 Պլուտ. 'ի Լիսանդր. հա. 1. էջ 441: Նոյն առակ. Լակոն. հա. 2. էջ 239: Պաբաւզ. Դիոնի ոսկեբ. Ճառ 64. էջ 106:

3 Պլուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 55:

4 Հերակղ. պոնտ. յղ. քաղաքական. Նախնի Յունաց, հա. 6. էջ 2823:

5 Պլուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 46:

կայր եւ ընդ Արքիդամայ արքայի, Պերիանդր բժիշկ նորա մատոյց նմա տաղս զոր այն ինչ աւարտեալ էր: Այլ Թագաւորն առէ ցնա մեծարմութեամբ. Այլ ընդէ՞ր ճարտար բժիշկդ գոլով, քերթող հետեւակ զանձն քո առնես [1]: Այլ յետ ոչ բազում ամաց ծերոյ ուրումն զանգատելով առ Սգիս արքայ վասն օրինազանցութեանց ինչ, իբր թէ բռնաւորին օրէնք 'ի սպառ 'ի միջոյ, առէ Թագաւորն ժպտելով. Ո՛չ մարտիւ այդ այդպէս է, զի եւ հայր իմ վկայէր զայդ 'ի մանկութեան իմում, եւ նորա 'ի մանկութեան իւրում լուեալ էր զայն 'ի հօրէ իւրմէ [2]:

Արուեստք շահեկանք, եւ մանաւանդ առիթք զեղխութեան, բնաւ իսկ արգելեալ են սպարտացւոց [3]: Ոչ է օրէն առ նոսա խառնել ընդ իւղոյ անուշունս, եւ ոչ գունագեղել զասր՝ բայց միայն 'ի գոյն ծիրանւոյ. նմին իրի ոչ իւղեփեցաք են առ նոսա եւ ոչ ներկարարք [4]: Ոչ է պարտ նոցա ճանաչել զոսկի եւ զարծաթ, եւ ոչ զճարտարս նոցա [5]: Են նոցա 'ի բանակի արուեստագէտք պիտանիք, որպէս քարոզք եւ փողարք եւ խոհակերք. բայց միայն որդի 'ի հօրէ պարտ է նոցա ժառանգել զարուեստն, ոչ՛ առ եգիպտացիս [6]:

1 Պլուտ. առած. Լակոն. հտ. 2. էջ 218:
2 Նոյն անդ, էջ 216:
3 Նոյն 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 44: Եղիան. զան. պատմ. գիրք Զ. գլ. 6: Պոլլէն 'ի մարթանան, գիրք Բ. գլ. 1:
4 Աթեն. գիրք ԺԵ. էջ 686: Սենեկա խնդ. բն. գիրք Դ. գլ. 13. հտ. 2. էջ 762:
5 Պլուտ. 'ի Լիկուրգ. անդ:
6 Հերոդոտ. գիրք Զ. գլ. 60:

Այնպիսի իմն բերեն կարծիս զազատութենէ, զի զձեռնարհեստական արուեստս անըմբռնելի համարին ընդ այնմ ¹ : Մի ոմն 'ի նոցանէ 'ի դառնալ իւրում յԱթենայ՝ ասէր ցիս. Գնամ 'ի քաղաքէ, ուր չհամարի ինչ անպատեհ : Յայտ իմն այսպէս առնելով ոչ միայն զայնոսիկ՝ որք կապէին տայլին պոռնկաց, այլ և զպարապեալսն 'ի դուզնաքեայ տուրևառս շահից ² : Նաև այլ ոմն 'ի քաղաք անդր երթեալ, և լուեալ զմիոյ ուրումն 'ի քաղաքացւոց դատապարտել 'ի տուգանս վասն անգործութեան, խնդրեաց տեսանել զնա որպէս զարմանալի իմն, զի յընկերահաշտ պետութեան պատուհասէր քաղաքացին՝ վասն ազատ գոլոյ յամենայն ծառայութենէ ³ :

Իսկ զարմանաց նորա պատճառք, զի օրէնք սպարտականք թերևս յազատեցուցանել զմիտս յամենայն ջանահնար շահից և յառտնին հոգոց ⁴ : Որոց կալուածք գոն, պարտ է նոցա տալ զայն եղոսացւոց 'ի վարձու ⁵ . և որոց մեծք են, մշակել զայն բարեկամութեամբ. զի չէ օրէն ծախել նոցա զպատուական ժամանակն կենաց իւրեանց 'ի դատս ⁶ և 'ի գործառնութիւնս վա-

1 Արիստոտ. յղ. Ճարտ. գիրք Ա. գլ. 9. հտ. 2. էջ 532 :

2 Պղուտ. առակ. Լակոն. հտ. էջ 236 :

3 Նոյն անդ, էջ 221 :

4 Նոյն կարգադր. Լակոն. հտ. 2. էջ 229 :

5 Նոյն 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 64 : Նոյն առակ. Լակոն. հտ. 2. էջ 216 :

6 Նոյն 'ի Լիկուրգ. անդ : Նոյն առակ. Լակոն. հտ. 2. էջ 233 :

ճառականութեան [1], և յայլ հնարս զորս սովո-րութիւն է 'ի կիր արկանել 'ի յաճախութիւն մեծութեանց և 'ի զբաղումն ։

Սակայն ազատք են ամենևին 'ի տաղտկու-թենէ, զի ոչ երբէք միայնակ կան, և ոչ 'ի հան-գստեան [2] ։ Լոյղ, զօտէմարտ, ընթացք աս-պարիզականք, գնտակախաղ [3], և այլ ևս հրա-հանգք կրթարանին և զինուորական հոլովմանց զհարուստ մի մասն աւուրն գրաւեն [4] ։ Եւ ապա պարտ համարին և զբօսանս՝ կալ 'ի գնին խաղուց և մրցութեանց մանկտւոյն [5]. անտի գնան 'ի խօ-սարանս, որ են յայլ և այլ կողմանս քաղաքին կա-ռուցեալ սրահք՝ [6] ուր սովորութիւն է արանց յամենայն չափոյ հասակի գումարել անդր ։ Ո՛ ի յոյժ սիրողք են խօսակցութեան, և դուն ուրեք զշահից և զառաջարկութեանց ազգաց առնեն խօսս, այլ լսեն անձանձիր զխրատս ծերոց [7], և մտադիւրութեամբ ունկնդիր լեալ ուսանին ըզ-մարդկան և զդիւցազանց և զքաղաքաց [8] զուսումն և զզինարդն. և յաճախութեամբ զուարթարար բանից քաղցրանան 'ի լսելիս նոցա ճառք ծանունք ։

Ի ժողովս յայսոսիկ և 'ի ճաշս և 'ի հանդէսս

1 Քսենոփ. յղ. հաս. Սպարտ. էջ 682 ։

2 Պլուտ. 'ի Լիկուրգ. էջ 55 ։

3 Քսենոփ. անդ, էջ 684 ։

4 Եղիան. զան. պատմ. գիրք Բ. գլ. Ե. գիրք ԺԴ. գլ. 7 ։

5 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 54 ։

6 Պաւսան. գիրք Գ. գլ. 14. էջ 240. գլ. 15. էջ 245 ։

7 Պլուտ. անդ ։

8 Պղատ. յերէցն Իպպ. հտ. 3. էջ 285 ։

հրահանգաց առլնթեր կան միշտ ալիք պատուա-
կանք։ Պատուականք ասեմ, զի ծերութիւն այլ-
ուր արհամարհ՝ ամբառնայ 'ի Սպարտա զքա-
ղաքացին 'ի ծայրագոյն պատիւ [1]։ Այլք 'ի քա-
ղաքայնոց, և մանաւանդ մանկտին, ընծայեն նմա
զմեծարանսն զոր անկ է նոցա ընդունել ապա
յայլոց։ Հրամայեն նոցա օրէնք տեղի տալ նմա
'ի հանդիպելն, յոտն կալ առաջի նորա, և լռել
յորժամ նայն խօսի. և 'ի համախումբ ժողովս
և 'ի սրահս կրթարաններն ամենեքին լեն նմա։
Այսպէս քաղաքացիք բարերարք հայրենեացն ոչ
միայն չխոտին 'ի վախճան կենաց իւրեանց, այլ
մեծարեալ պատուին կէսք իբր աւանդապահք
փորձոյ, և այլք որպէս զարձանս՝ որոց նշխարք
պահին երկիւղածութեամբ։

Արդ եթէ սպարտացիք այսչափ ժամանակս
ծախեն 'ի պարապումն որսոց և 'ի համախումբ
ժողովս, 'ի կատարել զտօնս յաճախաւորս՝ զորս
յաւելուն պայծառացուցանել կաքաւ և երաժշ-
տութիւն [2], և զի դարձեալ զքօսանք հասարա-
կաց համօրէն ազգին զուարթագոյնք են յոյժ
քան զիւրաքանչիւրոց առանձինն, ապա ոչ միայն
չիցեն թշուառ կեանք նոցա, այլ և անընդհատ 'ի
զուարճութեան կան և 'ի տեսարանս ցանկալիս։
Ի տեսարանաց աստի երկուք զարմանալիք էին

1 Պլուտ. կարգադր. Լակոն. հատ. Ձ. եր 237: Յուստին. գիրք Գ. գլ. 3:

2 Պլուտ. 'ի Լիկուրգ. հատ. 1. եր 64:

յորժ Պլինդարայ . տեսանել զեռանդուն աշխոյժըս քաջամարտիկ մանկտւոյն ամրքեալ միշտ ծերակուտին գերակատար զգօնութեամբ, և զբազմապայծառ յաղթանակս Մուսայից կցորդեալ միշտ ընդ բերկրալից ցնծութիւն հասարակաց[1] :

Պսերեզմանք նոցա համգոյնատանցն անպաճոյճք, ցուցանեն զի չիք խտիր 'ի քաղաքացիս[2] : Օրէն է կանգնել զնոսա 'ի քաղաքամիջի, և առ մեհենօք իսկ : Ոչ 'ի յուղարկաւորութեան և ոչ 'ի ժամ վախճանին ողբք և աշխար[3] . զի սպարտացիք ոչ առաւել կրեն կիրս 'ի տեսիլ մահու քան 'ի ժառանգելն զկեանս . և զմնաւ ածեալ՝ զի մահուն է սահմանել զկեանս, հնազանդին հրամանի բնութեան նովին միամտութեամբ՝ որով պիտոյից աշխարհին հպատակ կան :

Կանայք նոցա անձնեայք են և հուժկուք, քաջառողջք և գեղաղէշք՝ պատկառելիք առնացի գեղոմն . որպէս զի մարթէր Փիդիայ դասանել 'ի նոսա նախատիպս բազում իւրումն Աթենասայ, այլ Պրաքսիտեղեայ դժուարաւ զոք 'ի նոցանէ առ 'ի պղծել զԱփրոդիտէն իւր : Զգենուն բաճկոնակ կամ շապիկս խիստ կարճ, և պճղնաւոր զնովաւ հանդերձ[4] : Օրիորդք որք զօրն ողջոյն պարապեն յըմբշամարտս, յարշաւ, 'ի վազս, և յայլ

1 Պինդ. առ Պլուտարքեայ 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 53 :

2 Հերակղիդ. պոնտա. յղ. Հնութեանց Յունաց, հտ. Ե. էջ 2823 :

3 Պլուտ. կարգադր. Լակոն. հտ. 2. էջ 238 :

4 Նոյն. յՆիգիս, հտ. 1. էջ 823 :

տաժանաւոր հրահանգս, միակ սովոր են զկենուլ հանդերձ թեթեւ եւ անթեզանի՝ կոճկէն զուսովք[1], զոր հանդուշն իմն մինչեւ ցծունկս 'ի վեր ժողովեն զօտւով[2]: Սոսորուք նորա հերձեալ են երկուստեք, որպէս զի անծածկոյթ զող նոցա կիտովի[3]: Դնե լեզի իմն անքասիր ատանել զսովորութիւնս զայս, այլ զպատճառս այնորիկ եւ զարգասիս յաւելում ըստ պատասխանելոյ իմն սպարտացւոց ումանց՝ 'ի ստգտանել իմում զայն:

Ալ էր մարթ Լիկուրգեայ զնոյն հրահանգս ուստերաց սահմանել դստերաց, առանց քաղնալոյ զամենայն խոչ խափանարար շարժմանց: Խորհէր արդեօք զի բնութիւնս մեր յապականելն իւրում ծածկեաց զմերկութիւն, եւ ըստ յաճախելոյ ախտից յաճախեցին զզեստք. եւ զի հրապոյրք զեղջ մոլորեցուցիչք՝ բազում այն է զի յաճախ տեսութեամբ անկանին 'ի զօրութենէ. եւ զի որք չիցեն վաղագոյն զեղծեալք, ոչ յոյժ դիւրին է նոցա տեսութեամբն զեղծանել: Սովորն խորհրդովք հնարէր դաշնակից միմեանց զառաքինութիւնս երկոցունց սեռիցն յարդարել ընկճելով զժպրհութիւն միոյն, եւ զանկարութիւն միւսոյն կազդուրելով: Նմին իրի պատուհաս մահու 'ի վերայ պղծագործին սահմանեալ[4], ամփո-

1 Եւսաթ. յԻլիակ. հա. 2. էջ 975:

2 Կղեմ. աղեքս. դաստիարակ. գիրք Բ. գլ. 10. էջ 238: Վիրգիլ. Ենէակ. գիրք Ա. տող 320, 324, և 408:

3 Եւրիպ. յԱնդրոմ. տող 598: Սոփ. առ Պղուտ. 'ի Նում. էջ 77:

4 Մեուրս. խմբաւորան Լակոն. գիրք Բ. գլ. 3:

րեցոյց զմանկտին ընդ չարիս եւեթ ամաչել[1] ։ Պարկեշտութիւն անդ ըստ մասին կնոջ քօղընկէց[2], պատկառելի եղեւ երկպաքանչիւրոցն, եւ կանանցն Սպարտայ ամբծութեամբ բարուցն զատա նշանաւոր ։ Նոյն զի եւ յիմաստասէրս եղիտ իւր համախոհ Պիւթագոր․ զի Պղատոն յիւրումն հասարակապետութեան ՚ի կանանց անդր ընկշայց եւ զանաւագ ՚ընութիւնն մուծանէ, առանց խտրելոյ զհասակ, զառաքինութիւն եւեթ ածեալ զնորքօք ծածկոյթ[3] ։

Որիորդք ՚ի Սպարտա բացաւ երեսօք շրջին ՚ի քաղաքամիջի մինչեւ ցհարսնութիւն․ իսկ յետ հարսանեացն, զի իւրաքանչիւր առն եւեթ իւրում պարտ է հաճոյ լինել, պքօղին[4] ․ եւ ոչ ումեք օրէն է զովութիւնս խօսել զնոցանէ, զի ոչ է պարտ նոցա այլում ումեք՝ բայց միայն արանցն ծանօթ գոլ[5] ։ Նայց քօղն այն նշանն եւ ամօթխածութիւն իբր հարկ իմն ընծայինն համեստութեան․ այլ ոչ ուրեք որպէս ՚ի Սպարտա ազատք էին կանայք եւ անարգելք[6], եւ ոչ ուրեք նուազագոյն զեղծեալք ազատութեամբն։ Դրժել առն եւ ոյզն իսկ սեթեւեթ ՚ի զարդս երեւելիս ընտա

1 Պղատ. յղ. հատ. գիրք Ե. հտ. 2. էջ 452 ։
2 Պլուտ. ՚ի Լիկուրգ. հտ. 1. էջ 48 ։
3 Պղատ. անդ, էջ 457 ։
4 Պլուտ. առած. Լակոն. հտ. 2. էջ 232 ։
5 Նոյն անդ. էջ 217 եւ 220 ։
6 Արիստոտ. յղ. հատ. գիրք Բ. գլ. 9. հտ. 2. էջ 328 ։ Դիոն. ալիկ. յղ. հնութեանցն հռովմ. գիրք Բ. գլ. 24. հտ. 1. էջ 287 ։

իսկ օտար էին երբեմն 'ի նոցանէ [1]. և Թէպէտ արդ ոչ նոյն զգաստութիւն և ոչ նոյն պարկեշտութիւն է նոցա, այլ հաւատարմագոյնք են քան զամենայն կանայս Ելլադայ:

Եւ բարք ևս նոցա զօրաւորք են, և այնու յաջողէ նոցա յիւրեանս նուաճել զարս իւրեանց, որք հարցանեն զնոսա մտադիւր զառտնին և զազգային իրաց: Ո՛չ ի ազգ պատերազմող դիւրամէտ է 'ի սէր, փորձ իրացն յայտ առնէ. վկայէ այսմ և Կրիսին ընդ Մսողկան զուգութիւն, և օրինակ սպարտացւոց հաստատէ զայն [2]: Ոմն յօտարաց ասաց երբեմն ցտիկին արքային Լեւոնիդայ. Դուք միայն 'ի կանանց իշխէք արանց: Եւ նա ասէ. Եւ կարի իսկ քաջ, զի մեք միայն արս ծնանիմք յաշխարհ [3]:

Յառաջ քան զամս ոչ բազումս արիութիւն կանանց սպարտուհեաց պակոյց զամենայն Ելլադա, զի 'ի տեսիլ բանակին Եպամինոնդայ լքին նոքա զքաղաքն աղմկաւ և արհաւրօք [4]: Իցէ՞ Թէ և բնաւորութիւն նոցա հանգոյն առաքինութեանցն սկսանիցի այլայլել. իցէ՞ և արիութեանն նոցա օրհաս, և վայրիկ մի վատութեան դրդուեցուցէ՞ զայնքան մեծամեծ և զգերաշխարհիկ նահատակութիւնս նոցա՝ որովք յամենայն ժա-

1 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 49: Նոյն առակ. Լակոն. հտ. 2. էջ 233:

2 Արիստոտ. յղ. հաս. գիրք Բ. գլ. 9. հտ. 2. էջ 328: Պլուտ. յԱգիս, հտ. 1. էջ 798:

3 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 48:

4 Արիստոտ. անդ:

մանաւկի պայծառացան եւ պայծառանման համա֊
պայ։ Պատիւ եւ ազատութիւն զեր 'ի վերոյ է քան
զամենայն ինչ 'ի միտս նոցա. եւ երբէք երբէք այն֊
պէս 'ի խորհուրդս յայս խորհատուզին, զի ոչ իսկ
է մարթ սահմանել զկիրսն որ մղեն զնոսա ։ Մ'ի
'ի նոցանէ գրէր առ որդին իւր անձնապատը 'ի ճա֊
կատամարտէ. Օրոց չար լսեմ զքէն, զաղաղարեցն
զդա կմ ղաղարեա 'ի կենաց [1]։ Իսկ յաղթենացւոց
կանանց ոմն զնոյն համբաւ զորդւոյ իւրմէ լուեալ,
գրեաց առ նա. Շնորհ ունիմ զքէն, որ պահե֊
ցեր զկեանս քո ինձ [2]։ Երդ այնոցիկ իսկ որք զեր֊
կրորդս զայս անգասիր առնիցեն, անմարթ է չը֊
զարմանալ ընդ առաջինն։ Նոքին զարձեալ զար֊
մացին ընդ պատասխանին Արգիղէանեայ մօր
երեւելւոյն Բրասիդայ ։ Օ'ի Թրակացւոց ամենց
պատմելով նմա զպանծալի մահ որդւոյ նորա, յա֊
ւելին՝ թէ ոչ ոք 'ի Սպարտա մեծ քան զնա զօ֊
րավար եկաց ։ Իսկ սպարտուհին ասէ. Խոյաքիք
հիւրք. ոչ զորդին իմ միայն՝ այլ յոգունս ունու֊
ցանէ Սպարտա 'ի ծոց իւր քաջագոյնս քան զնա [3]։

Յայս վայրենուանձի քնութիւնն, այլ ոչ հարըս֊
տահարի, եւ այս է ստոյգն արիութիւն. Նմին
իրի եւ պարէտք զերապանծ պատիւս սահմանե֊
ցին կնոջն այնմիկ [4]։ Նախ ոմ զայս լսել կարիցէ
առանց քստմնելոյ, զի իբրեւ զայժ եհաս միում 'ի

1 Պլուտ. կարգադր. Լակ. կին. հա. 2. էջ 241։
2 Ստոբ. Ճառ 106 էջ 576։
3 Պլուտ. առակ. Լակոն. հա. 2. էջ 219 եւ 240։
4 Դիոդ. գիրք ԺԲ. էջ 122։

սպարտուհեաց մարց՝ թէ որդին քո անկաւ 'ի մարտի առ 'ի չլքանել զդաս իւր, ասէ. Թաղեսցի անկեալն, և եղբայր նորա փոխանակեսցէ 'ի տեղի նորա [1]: Զնոյն սոսկումն ածեն լսելեաց և այլք ուրումն սպարտուհւոյ բանք. զի մնայր նա արտաքոյ քաղաքին՝ առնուլ զլուր զպատերազմէն, և իբրև եհաս սուրհանդակն՝ եհարց զնա. և սուրհանդակն ասէ. Հինգ որդիք քո անկան: Նմին ասէ. Ոչ զայն հարցանեմ, այլ զուցէ՞ ինչ վտանգ հայրենեաց: Սուրհանդակն ասէ. Յաղթանակեն հայրենիք: Եւ սպարտուհին ասէ. Գոհանամ ընդ կորուստն իմ [2]: Եւ ո՛ դարձեալ ոչ սոսկասցի տեսանելով զմարս, որք իւրովի զորդիս իւրեանց դասալիքս սպանանեն [3]. և զայլս դարձեալ, որք 'ի ճակատամարտին տեղի դիմեալ՝ խնդրեն տեսանել զդիակն միածնի իւրեանց, և դիտեալ հետադարձեն զվէրսն՝ քանի՛ք փառս և քանի՛ք անարգանս գործիցեն նմա. և զսոսկալի հաշիւն կատարեալ, ապա խրոխտագոյնք առաջի յուղարկաւորաց բազմութեան ընթանան, կամ խուսեն 'ի տուն իւրեանց՝ թագուցանել անդ զողբս իւրեանց և զամօթ [4] *:

Փառասիրութիւնս այս ծայրայեղ, մանաւանդ

1 Պլուտ. առած. Լակոն. հտ. 2. եջ 242:
2 Նոյն անդ, եջ 241:
3 Նոյն անդ: Ծաղկաքաղ, գիրք Ա. գլ. 5. եջ 5:
4 Եղիան. զան. պատմ. գիրք Ժ.Բ. գլ. 21:
* Վերջինս այս և որ ասցին ասելի իցէ թուին յետոյ գոլ քան զժամանակս, յորս օրէնք Լիկուրգեայ խառնիւ պահէին. յետ թողանալոյ նոցա՝ ապա ձախողակի արիութիւնս այս տիրեաց 'ի կանոնսն և 'ի մանկըւթին Սպարտայ:

թէ եղեռնաւոր, այնպէս 'ի բաց վարեալ անզգանէ քան զսահման մեծութեան որ անկ է մարդոյ, զի ոչ երբէք 'ի սպարտացւոց ոք արանց 'ի կարի իսկ փառամոլից եբեր զայն յանձին ։ Այլ պատճառք, զի 'ի նոսա հայրենասիրութիւն գործէ վսեմ արութիւնս. իսկ 'ի կանայս նոցա կիրք անընդդելական իրաց գործօնեայք ։ Վասնզի գեղ և զարդ, ազնուականութիւն և բարեմասնութիւնք մնաց ոչ ինչ զօրէն 'ի Սպարտա սահմանել նախապատուութիւնս 'ի կանայս, հարկ եղև նոցա հաստատել զգերազանցութիւն իւրեանց 'ի բազմութիւն և 'ի քաջութիւն որդւոց ։ Ըստ կենդանութեամբ որդւոցն վայելեն մարք 'ի յոյս պայծառութեան նոցա՝ փայլմամբ 'ի նոսա նշուլիցն, և 'ի մահուն նոցա ժառանգեն զհամբաւ անուան նոցա ։ Այլ այս գծնդակ ժառանգութիւն վայրենացուցանէ զնոսա, կցորդելով երբեմն հայրենասիրութեան նոցա զամենայն կատաղութիւն փառամոլութեան և մնապարծութեան ։

Այլ մեծախոհութեանս այսմիկ, զոր ցարդ ես երբէք երբէք բերեն յանձին, յաջորդեսցեն ընդ հուպ՝ առանց խափանելոյ զայն 'ի սպառ՝ իմաստք նկունք, և կեանք նոցա լցցին հիւսք իմն փոքրոգութեան և մեծանձնութեան, վայրենութեան և հեշտութեան ։ Այժմէն իսկ բազումք 'ի նոցանէ 'ի քարշ ձգլին 'ի ճաճանչ ոսկւոյ և 'ի հրապոյրս զրգանաց [1] ։ Աթենացիք ոք յայտ-

1 Արիստոտ. յղ. հաս. գիրք Բ. գլ. 9. էջ 328 ։

Նապարբաւ եպերէին զազատութիւն կանանցն սպարտացւոց, յաղթանակեն արդ տեսանելով զայն զառածեալ 'ի ցոփութիւն [1]: Այլ իմաստասէրք իսկ պարսաւեն զԼիկուրգոս, զի զաստիարակութեան արանց եւեթ ուշ եդ [2]:

Ամբաստանութիւնս զայս այլում լիցի մեզ քննել, ուր և զպատճառս եղծման բարուցն սպարտացւոց հետազօտեսցուք *. զի ոչ ևս են նոքա որպէս յառաջ քան զդար մի, զայս հարկ է խոստովանել: Կէսք ամբարտաւանեն մեծութեամբքն համարձակ, այլք զաւագութեան թեկն ածեն՝ որում հարք նոցա շատ համարէին արժանի յարդարել զանձինս [3]: Ոչ բազում ինչ ժամանակ է, զի շուրջ զքաղաքաւ նոցա ըմբռնեցաւ կին ոմն 'ի շնութեան [4]. և որ ոչ ինչ ընդհատ փնասակարագոյնն է, Կինիսկա քոյր արքային Ագեսիղայոսի արձակեաց յՈղիմպիա կառս չորեքերիվարեանս վասն մրցանակին անդ 'ի կառարշաւս, և քերթողք նուագեցին զյաղթանակ նորա, և աշխարհն կանգնեաց նմա արձան առ 'ի պարծանս [5]. այսոցիկ մեզէն իսկ ականատեսք եղաք:

1 Պղատ. յղ. օր. գիրք Ա. հտ. 2. էջ 637:

2 Նոյն անդ, գիրք Զ. էջ 781. գիրք Ը. էջ 806: Արիստոտ. յղ. հասա. գիրքԲ. էջ 329:

* Տես 'ի գլ. ԾԱ:

3 Քսենոփ. յղ. հասա. Սպարտ. էջ 689:

4 Նոյն պատմ. Յուն. գիրք Գ. էջ 495:

5 Պլուտ. տուակ. Լակոն. հտ. 2. էջ 212: Պաւսան. գիրք Գ. գլ. 8. էջ 222. գլ. 15. էջ 243:

Բայց թէպէտ և վատթարեալք, պահէին տա֊
կաւին զմնացուածս նախնի մեծութեանն ։ Ոչ
երբէք յանձն առնուին զկեղծիս և զվատութիւն
և զոր և պէտ հնարս անարգս որք նուաստացու֊
ցանեն զոգիս . ընչասէրք էին առանց ագահութէ,
և փառասիրեն առանց չարարուեստ հնարից։ Հր֊
զօրագոյնք իսկ 'ի նոցանէ ծածկէին դեռ ևս պատ֊
կառանօք զդժպատեհ կեանս իւրեանց ¹, որպէս
դասալիքք երկուցեալք յօրինացն զօրովք ան֊
ցին, և կարօտեալք ուղղութեանցն՝ զորս կորու֊
սին ։

Տեսի և սպարտացիս, որոց մեծանձնութիւն
նախանձելի էր . կային 'ի բարձու առաքինու֊
թեանն անձիգն և առանց սնապարծութեան, և
ոչ յերկիր հակամիտեալք 'ի ճաճանչ աւագու֊
թեանց կամ 'ի յոյս վարձուց ։ Ոչ 'ի կարօտու֊
թենէ երկնչէին, և ոչ 'ի մահուանէ զանգիտէին,
բայց միայն 'ի յանձն առնլոյ զվատութիւն ։ Ի
վերջնումն նուագի ուղևորելոյ իմոյ 'ի Սպարտա,
մինչ դեռ խօսէի ընդ Տաղեկրեայ որ յետին
չքաւորութեամբ տուայտէր, և ընդ Դամինդայ
որ բարեկեցիկն էր, 'ի վերայ եհաս մի 'ի պա֊
տուիրակաց՝ զորս Փիլիպպոս արքայ մակեդոնա֊
ցւոց 'ի վարձու ունէր առ 'ի յոլովել իւր կուսա֊
կիցս ։ Նա հարց նա զՏաղեկրոս . Ո՞րնչ մեծու֊
թիւնք են քեզ ։ Նա զթիկունս դարձուցեալ, ա֊

¹ Արիստոտ. յղ. հաս. գիրք Բ. գլ. Թ. էջ 330 ։

սէ. Կարեւորն [1]: Ապա միւսումն սպառնայր պա-տուիրակն մատնել ցասման Թագաւորին. իսկ նա ասէ. Ե՛րթ վատ արանց, զի՞նչ ձեռնհաս իցէ Թագաւորն քո առնել մարդկան՝ որք զմահ արհամարհեն [2]:

Խառն ընդ եկամուտ յոռութիւնսն զնախնի առաքինութիւնս նոցա տեսանելով, և ուշիւ ’ի նոսա յառեալ, թուէր ’ի հրդեհեալ ուրեք անտառի՝ ուր կէսք ’ի մայրեաց ածխինացեալք էին, այլք կիսայրեացք, և էին որ անկէզ զխրոխտ գագաթունսն երկնաբերձ յամպս ծրարէին:

1 Պլուտ. առակ. Լակոն. հտ. 2. էջ 232:
2 Նոյն անդ, էջ 219:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Ա. Զօխչանկ Մետոնեան շրջանին : (Էջ 64 :)

Օրն յորում Մետոն գտանէր զիւրն ժամանակագրական սահմանութիւն, համդիպէր 'ի քսանևեօթներորդ օր յունիսի ամսոյ յուլեան ամի. և օրն յորում սկիզբն եղև նորոյ Մետոնեան շրջանին՝ համդիպէր 'ի վեշտասաներորդ օր յուլիսի 1 :

Իննևտասներեակն Մետոնի արեգակնային ունէր 6940 աւուրս 2. իսկ իննևտասներեակն լուսնական, համդերձ եօթամսեայ աւելորդաց ամսովքն, ունէր 235 ամիս լուսնականս երեսնօրեայս, յորոց միահամուռ գումարին աւուրք 7050, առաւելեալ 110 աւուրբք : Մետոն առ 'ի հաւասարել զնոսա՝ նուազեցոյց զհարիւրևտասն ամիս լուսնականս երեսնօրեայս յաւուրս քսանևինն, և մնացին աւուրք 6940 յիննևտասներեակն լուսնական :

Բ. Չափ տարեաց արեգակնայնոյն և լուսնականին սահմանեալ, Մետոնէ : (Էջ 68 :)

Հնգեակ իննևտասներորդ մասունք աւուրն կազմեն ժամս 6, վայրկեանս 18, մանրերկրորդս 56, մանրերրորդս 50, և այլն : Վասն որոյ յարեգակնային ամն ըստ Մետոնի էին 365 աւուրք, 6 ժամք, 18', 56'', 50''' 3. իսկ ըստ արդի աստեղաբաշխից՝ 365 աւուրք, 5 ժամք, 48', 43'' կամ 45'' 4. որով ընդ մետասանեան ամ և ընդ միւս էր խանէր 30 վայրկենաց և իբր 12 մանրերկրորդաց :

Ցամսական շրջանն լուսնի, ըստ Մետոնի, էին աւուրք 29, ժամք 12, 45', 57'', 26''', և այլն 5. իսկ ըստ արդի գիտու-

1 Սկալիգ. յղ. ուղղ. ժամանակի, գիրք Բ. էջ 77 : Պետաւ. յղ. գիտ. ժամանակաց, հտ. 1. էջ 63 : Ռիչչիոլ. Ալմագ. հտ. 1. էջ 242 : Ցիշտա. բանաս. կաճառ. հտ. 18. էջ 144 : Տոռուեկլ :

2 Կենսոր. գլ. 18 :

3 Պետաւ. անդ : Ռիչչիոլ. Ալմագ. գիրք Դ. էջ 242 :

4 Լալանտ, աստղաբաշխ. հտ. 1. էջ 35 : Գայյ, պատմ. աստղաբաշխութեան. Նախին. էջ 448 :

5 Պետաւ. անդ :

Թեանց՝ 29 աւուրք, 12 ժամք, 44', 3'', 10''', և այլն 1: Ըստ Լուսնական, ըստ Մետոնի, ունէր աւուրս 354, ժամս 9, 11', 29'', 21'''. Նուազեալ քան զարեգակնայինն 10 աւուրս, 21 ժամս, 7', 27''. 29''' 2:

Գ. Ի ժամացոյց նախնեաց: (էջ 70:)

Զժամագիտակ գործեացն նախնեաց մարթ է առնուլ զկերպարանս յօրինակէ առաջի: Պալլադիոս Հռովկիլլոս, որ 'ի հինգերորդ դարու ըստ փրկչական թուականութեան եկաց, ճառս մշակականս աւանդելով 'ի վերջ կոյս ամսոց իւրաքանչիւր յաւելու զաւազանս համեմատութեան մասանց աւուրնջեան ըստ այլ և այլ երկայնութեան ստուերի ցուցակին 3: Բայց գիտելի է նախ՝ զի համեմատութիւնս այս նոյն է յամիսս, որ հաւասարապէս հեռի են 'ի յեղյեղակաց ամարայնոյ, և ձմեռայնոյ, որպէս յունուար և դեկտեմբեր, փետրուար և նոյեմբեր, և այլն: Երկրորդ՝ զի երկայնութիւն ստուերին նոյն է 'ի ժամս, որ հաւասարապէս յետ և յառաջ քան զմիջօրէայն իցեն: Ահաւասիկ զաւազանք ժամուց յունուարի.

Ժամք	Ա և ԺԱ . . .	Ոտնաչափք . .	29:
Ժ	Բ և Ժ . . .	Ո	19:
Ժ	Գ և Թ . . .	Ո	15:
Ժ	Դ և Ը . . .	Ո	12:
Ժ	Ե և Է . . .	Ո	10:
Ժ	Զ	Ո	9:

Ժամացոյցս այս վասն հռոմէական նահանգին Թուսկ կազմեալ: Ի վկայութեանց սոցա, զոր 'ի բնագրիս 'ի ներքս ածի, է 'ի միտ առնուլ զի և վասն աթենական նահանգին ժամացոյցս համագոյն ամին կազմեալ էր: Այլ որք զժամացուցից նախնեացն գիտել կամիցին, խնդրեսցեն առ քաջահմուտս՝ որոց այն իսկ է աշխատութիւն 4:

Դ. Ցուցնօրանիան Գղափանի 'ի Սիկիլիա: (էջ 95:)

Պղատոն երիցս ուղևորեցաւ 'ի Սիկիլիա. նախ առ Թագաւորութեամբ Դիոնիսեայ երիցուն, և ապա երկիցս յաւուրս կրտսե-

1 Լալանտ. աստեղաբաշխ. հտ. 2. էջ 291:

2 Պետաւ. յղ. գիտ. ժամանակ. հտ. 1. էջ 62:

3 Պալլադ. առ մատենագիրս գեղջ. իրաց, հտ. 2. էջ 908:

4 Սալմաս. հրաշ. 'ի Սողին. հտ. 1. էջ 632: Կասաւբ. յԱԹեն. գիրք Զ. գլ. 10. գիրք Թ. գլ. 17: Պետաւ. զան. ճառք, հտ. 3. գիրք Է. գլ. 8:

բոյն Դիոնիսեայ՝ որ Թագաւորեաց 367 ամաւ Ն. Ք.:

Առաջին ուղեւորութիւն Նորա հանդիպի 389 ամաւ Նախ քան զնոյն փոփոխական Թուականութիւնն. զի ինքն իսկ Պղատոն ասէ, թէ էին Նորա յայնժամ ամք քառասուն 1, և գիտեմք հաւաստի զի ծնաւ Նա 429 ամաւ Ն. Ք.:

Իսկ զժամանակ երկուց այլոց ուղեւորութեանցն ոչ ուղիղ հաշուէ Քորսինի, որ յարգի իմաստնոց ինքն միայն՝ որպէս կարծեմ՝ խօսի զայսմանէ: Առաջինկայքս շատ լեցին բանք 'ի ստուգել զժամանակագրութիւնս զայս:

Պղատոն չոգաւ 'ի Սիկիլիա առ 'ի համոզել 'ի մէջ Դիոնի և տղեային սիրակուսացւոց, և եղև անդ զամ մի կամ զամիս ինչ աւելի. և 'ի դառնալն իւրում հանդիպեցաւ Դիոնի յողիմպիական խաղսն, իբրազեկ արար զնա ձախողակի եղելոց իրացն. որով 'ի յայտնել ամին, յորում խաղքն կատարէին, գտցի ժամանակ վերջին ուղեւորութեանն Պղատոնի: Ի դէպ է արդ երկբայել՝ թէ յորում ողիմպիադի դարձ Նորա հանդիպի յերեցունց աստի 304,205 և 306 ողիմպիադից, որ պատահեն յամն 364, 360 և 356 Ն. Ք.: Այլ որ զկնիս գայ՝ բառնայ զամենայն երկբայութիւն:

Ցառաջին ամիսս բնակութեան Պղատոնի 'ի Սիրակուսա, պատահեաց անդ նուաղումն արեգական 2. և յետ երեւելոյ Նորա ընդ Դիոնի, խորհուրդ կալաւ Դիոն դիմել զօրօք 'ի Սիկիլիա. և մինչ հանդերձեալն էր նաւարկել 'ի Զակինթեայ 'ի խոր ամառայնի, պատահեաց խաւարումն լուսնի՝ յորմէ և զարհուրեցան զօրք Նորա 3: Այս ուրեմն պարտ է նախ, զի խնդրեալ ամն ողիմպիական իցէ յետոյ քան զնուաղումն արեգականն դիպեալ իբր ամաւ յառաջ 'ի Սիրակուսա. երկրորդ՝ զի կանխեսցէ միով կամ երկու կամ երիւք իսկ ամօք քան զխաւարումն լուսնի դիպեալ 'ի տօթագին ամառայնի 'ի Զակինթոս: Արդ 361 ամաւ Ն. Ք. յերկոտասաներորդում աւուր ամսեան մայիսի, 'ի չորրորդ ժամ երեկոյին նուազեցաւ արեգակն 'ի Սիրակուսա, և 357 ամաւ Ն. Ք. յիններորդում աւուր ամսեանն օգոստոսի խաւարեցաւ լուսին 'ի Զակինթոս. ապա ուրեմն երրորդ ուղեւորութիւնն Պղատոնի հանդիպի գարնայնոյ 361 ամին, և դիմումն Դիոնի 'ի Սիկիլիա ամսեանն օգոստոսի 357 ամին Ն. Ք.: Եւ քանզի 'ի թղթոցն Պղատոնի յայտ է 4, զի ոչ աւելի քան զերկուս կամ զերիս ամս անցին յետ

1 Պղատ. Թուղթք, հտ. 3. էջ 324:

2 Պլուտ. 'ի Դիոն. հտ. 1. էջ 966:

3 Նոյն անդ, էջ 968:

4 Պղատ. հտ. 3. Թուղթ 3. էջ 317. Թուղթք. էջ 338:

դարձին իւրոյ յերկրորդ ուղեւորութենէն մինչեւ յերրորդն, ապա մարթ է համարել զերկրորդն լեալ 364 ամաւ Ն. Ք.:

Առաջնորդ ինձ 'ի հաշիւս յայս կալեալ զցուցակ խաւարմանցն զոր Լալանտ երկասիրեալ շնորհեաց ինձ, յորում են ամ խաւարմունք արեգական երեւեալք 'ի Սիրակուսա, և լուսնի՝ երեւեալք 'ի Զակինթոս, յետ գահավիժութեան կրտսերոյն Դիոնիսեայ 367 ամաւ Ն. Ք. մինչեւ ցամն 350: Տեսանի 'ի նմա յայտնապէս, զի բաց յերեքարիւր վաթսներորդ ողիմպիականն ամէ՝ այլում ամի ոչ 'ի ճահ գան պայմանք առաջարկեալ խնդրոյս:

Տեսանի 'ի նմա դարձեալ և այլ իմն վրիպակ ժամանակագրութեն Քորսինեայ, որում մարթէր մշանջենաւորել յանուն նորա՝ եթէ ոչ աղէտ անձին առնէր հետազօտել զայն: Զի համարի այրն բազմահմուտ, Պղատոնի զելս իւրոյ վերջին ուղեւորութեանն իւրոյ պատահեալ Դիոնի 'ի տօնս ողիմպիական խաղուց 360 ամին Ն. Ք. որ և ինձ նոյնպէս թուի. այլ սխալէ 'ի պատճառուն, զի զխաւարումն լուսնի, որ եղև 357 ամաւ Ն. Ք. վարկուցեալ յիններորդ օր օգոստոսի 360 ամի նախ քան զնոյն փրկչական թուականութիւնն, ածէ 'ի նոյն ամ և գրեթէ 'ի նոյն աւուրս զդիմումն Դիոնի 'ի Սիկիլիա, և զխօսակցութիւն նորա ընդ Պղատոնի յողիմպիական խաղսն [1]: Ոչ է ինձ անկ եզծանել աստանօր որ ինչ զհետ բերէ վրիպակ հաշուի խաւարմանն, թէպէտ իւր արարեալ իցէ զայն և թէ յայլմէ ումեքէ ընկալեալ. այլ պարտ է յենուլ 'ի հաւաստիս: Խաւարումն լուսնի լեալ յիններորդ օր ամսեան օգոստոսի. հանդիպի հաւաստեաւ յամին 357 Ն. Ք. ապա դիմումն Դիոնի 'ի Սիկիլիա գտանի լեալ յամսեան օգոստոսի 357 ամին Ն. Ք.: Արդ հանդիպումն նորա ընդ Պղատոնի եղև 'ի յետին տօնս ողիմպիականս նախ քան զամն զայն. ապա Պղատոն 'ի դառնալ իւրում յերրորդ ուղեւորութեն՝ գտաւ յողիմպիական խաղս 360 ամին Ն. Ք.: Մարթ էր ինձ ցուցանել և ես 'ի ձեռն խաւարմանս, զի արդարութեամբ 'ի մասինս յայսմիկ ժամանակագրութեն Դիոդորի սիկիլիացւոյ [2]. այլ աստանօր զկայ առցէ բաւէս:

Ե. Զանուանց Մուսայից. (էջ 134:)

Երատո՝ նշանակէ սիրելի, Ուրանիա՝ երկնային, Կալլիոպէ՝ ընտրութիւն բարբառոյ, Եւտերպէ՝ հաճոյական, Թալիա՝ ցնծալից ուրախութիւն, մանաւանդ որ 'ի խնջոյս լինին, Մելպոմենէ՝ երգասէր, Պոլիմնիա՝ բազմերգութիւն, Տերփսիքոր կաքաւասէր, Կլիօ՝ փառք:

1 Քորսինի, Ճառ յղ. աւուր ծննդ. Պղատ. հտ. 6. էջ 114:

2 Դիոդ. գիրք ԺԶ. էջ 413:

Զ. Զփոխումն Իլիոյ 'ի տրոփոնեան այրն։ (էջ 135։)

Փոքր մի ինչ յետոյ քան զժամանակ ուղևորութեանն Անաքարսեայ 'ի Լեբադիա, մի 'ի պաշտօնէից արքային Դեմետրեայ եկն առնուլ հրաման պատասխանւոյ 'ի տրոփոնեան հարցկէն։ Բայց քուրմք կասկած կալան զգիտաւորութենէ մտաց նորա. և մտանել եմուտ նա յայրն, այլ ոչ ևս ել անտի։ Յետ աւուրց դի նորա ընկեցաւ արտաքս ընդ այլ ելս այրին, և ոչ ընդ որ յաճախ սովորութիւնն էր մտանել [1]։

Է. Զուգաբերութիւնք Խաղաղին Թեբացւոց։ (էջ 144։)

Ի քերթողական նկարագիր Ելլադայ, արարեալ 'ի Դիկէարքեայ [2], շրջապատ քաղաքին Թեբացւոց ասի լեալ 43 ասպարիզաց. իսկ յարձակ նկարագիր նորին մատենագրի (էջ 14.) ասի լեալ 70 ասպարիզաց. և համարի երկրորդս այս վրիպական գրչաց արարեալ 'ի բնագիրն։ Բայց մարթէ և ևս համարել, զի մատենագիրն յառաջնումն խօսեցի զշրջապատէ բուն քաղաքին, իսկ յերկրորդումն և զմիջնաբերդն 'ի միասին առեալ։

Դիկէարքս զԹեբէ ոչ յետ կործանմանն յԱղեքսանդրէ առաջի առնէ, որպէս եւ 'ի մատեանս յայս։ Այլ զի որպէս Պաւսանիաս վկայէ 3, Կասանդր 'ի կառուցանելն զայն, զհին պարիսպն վերստին կանգնեաց, թուի թէ հնոյն և նորոյն նոյն շրջապատ էր։

Ը. Զհամարոյ բնակչացն Թեբայ։ (էջ 145։)

Ոչ է մարթ ճշգիւ գիտել զհամար բնակչաց քաղաքիս, այլ վեր 'ի վերոյ ինչ։ Յառնուլ Աղեքսանդրի զԹեբէ՝ կորեան անդ աւելի քան զբիւր մի մարդկան, և աւելի քան զերիս բիւր վաճառեցան 'ի ստրկութիւն։ Եւ խնայեաց նա 'ի քուրմս և որոց միանգամ կցորդութիւն ասպնջականութեան և կամ այլ ինչ էին ընդ իւր և կամ ընդ հօր իւրում Փիլիպպեայ. և բազումք ևս արգելոց 'ի քաղաքայնոցն փախստեայք զերծան [4]։ Աստի ապա 'ի դէպ է գուշակել, զի բնակիչք քաղաքին և շուրջ զնովաւ էին բիւրք իբր հինգ, արք և կանայք, ծերք և տղայք,

1 Պաւսան. գիրք Թ. գլ. 39. էջ 792։

2 Առ աշխարհագիրս, հտ. 2. էջ 7. տող 94 և 95։

3 Գիրք Թ. գլ. 7. էջ 725։

4 Դիոդ. գիրք ԺԷ. էջ 497։ Պլուտ. յԱղեքս. հտ. 1. էջ 670։ Եղիան. զան. պատմ. գիրք ԺԴ. գլ. 7։

րաց 'ի ստորկաց ։ Մէնթքրուա աւելի իմն համարի զհաշիւս զայս 1 . այլ ինձ իշխելի է հաստատել զայն ։

Թ. Թէ ո՞յք յաղգաց արշաւէին հրեշտակս 'ի ծովուն Ատլէնտիկեանց ։ (էջ 170 ։)

Նախնի մատենագիրք ոչ միաբանին զաղգաց, որոց անկ էր արձակել հրեշտակս յաշխարհաժողովն ։ Եսքինէս, զոր 'ի բնագրիս 'ի ստորեւն նշանակեցի, և վկայութիւն նորա գէթ ըստ ժամանակին յորում եկեացն՝ հաւատարիմ է քան զայլոցն ամենեցուն, զի և ինքն իսկ անդր հրեշտակ արձակեցաւ, անուանէ զԹեսաղացիս, զբիովտացիս, զդորացիս, զյոնիացիս, զպեռեբացիս, զմագնեսացիս, զէտացիս, զփթիովտացիս, զմալիացիս և զփոկիսացիս ։ Բայց երկոտասաներորդն փոփոխակաւ գրչագրաց 'ի բաց անկեալ է, զոր քննաբանք համարին զԴոլոպս ։

Ժ. Զչափոյ Բարձրութեան Ողիմպեայ լերին ։ (էջ 203 ։)

Պլուտարքոս 2 արձանագիր ինչ վաղեմի 'ի ներքս ածէ, յորմէ երևի Քսենագորայ գտեալ զչափ բարձրութեան Ողիմպեայ լերին տասարէզս տասն, և քառեակ ոտնաչափ նուազ քան զերկայնութիւն միոյ արտավարի ։ Եւ էր արտավարն ըստ Սուիդայ վեցերորդ մասն ասպարիզի, հաւասար 15 ձողոյ, 4 ոտին և 6 մատանց ։ յորմէ բարձեալ զոտնաչափս 4, և զմատնաչափս 6, մնան 15 ձողաչափք ։ Արդ զսոսա 'ի վերայ 945 ձողաչափիցն յաւելեալ, որ հաւասար են 10 ասպարիզաց, լինին միահամուռ ձողաչափք 960, չափ բարձրութեան Ողիմպեայ լերին ։ Բայց Պեռնուլլի 3 համարի զայն ձողաչափս 1017 ։

ԺԱ. Զլուացական աղբերէն որ 'ի Դոդոնէ ։ (էջ 219 ։)

Այսպիսի ինչ վէպք պատմէին երբեմն և զկարծեցեալ լուսատու աղբերէն, որ երիւք գաղղիացի փարսախօք հեռի է 'ի Գրատիանուպօլսէ, և ընդ բազում ժամանակս համարէր մի յեօթն հրաշից վիճակի անդրանկան Թագաւորին ։ Այլ 'ի հետազօտելն զպատճառս իրացն, անյայտ եղեն աքանչելիքն 4 ։

1 Քննաբան. պատմ. Աղեքս. էջ 46 ։

2 Ի Պօղոս Եմիլ. հտ. 1. էջ 263 ։

3 Պիւֆոն, յղ. ժամանակաց բնութեան, էջ 303 ։

4 Յիշատ. բանաս. կաճառ. գիտութեանց, ամ 1699. էջ 23 ։ Պատմ. քննաբան. զաւելորդապաշտութենէ, հտ. 1. էջ 44 ։

ԺԲ. Զդեդաղեայ ոճխնացուայ։ (Էջ 268։)

Պատմիչք բազում ուրեք յիշատակեն զԴեդաղոս ոմն աԹե_նացի, որում և ընծայեն զգիւտս իրաց կարևորաց արուեստից և ձեռագործաց. յորոց սակի են սղոց, ուրագ, գչիր, ուինձ ձկան, առագաստք նաւու և Թիակք, այլովքն հանդերձ։ Ի Կրետէ ցուցանէին զբաւիղ նորա, ՚ի Սիկիլիա զմիջնաբերդն և զջերմուկս նորա, ՚ի Սարդենիա զշինուածս հոյակապս, և ամենայն ուրեք զբազմութիւն անդրեաց 1։ Յաւելուն և եւս, զի նախ քան զԴեդաղոս՝ փակ էին անդրեաց աչք, և Թեւք ընդ իրանն կցեալք ՚ի կախ, և ոտք ՚ի միմեանս յարեալք. նա ե_բաց զարուեստունս նոցա, և մեկնեաց զոտս և զբազուկս 2։ Սա ինքն և զանդրիս փայտակերտս գնացոյց ժիպակաւ, կամ մեքենաւոր ՚ի նոսա ծածկեալ զօրութեամբ 3։ Գիտելի է դարձեալ, զի ժամանակակից համարէր սա կացեալ Մինովսայ. և զի զբազմագոյնս ՚ի գիւտից, որոց պարծանք սմա ընծային, այլք ՚ի մատենագրաց ընծայեն ճարտարաց կրտսերագունից յոյժ քան զնա ժամանակաւ։

Արդ մերձ առ միմեանս եդեալ զառ ՚ի յիշատակարանաց տեղեկութիւնս և զորս մատենագիրք տան մեզ, ինձ Թուի՝ զի նկար և քանդակ սկսան բարդաւաճել առ Յոյնս ՚ի նախորդ և ՚ի հետևորդ դարս առաջնոյն ողիմպիադին, որ հանդիպի 776 ամաւ Ն. Ք.։ Զայս այսպէս յետ բազում խուզարկու_Թեանցն իմաստասիրեաց Նօզ զնկարչութենէ։

Վասն որոյ ՚ի դէպ Թուեցաւ զփոփոխումն զայն գործեալ ՚ի ձև վաղնջուց անդրեացն՝ սեփհականացուցանել առ Դեդաղեայ, զոր յաճախ ուրեք յիշատակէ Պաւսանիաս 4, և որ զայնու ժա_մանակաւն եկաց ընդ մէջ վեցերորդի և եօԹներորդի դարուն Ն. Ք. որում երաշխաւորեն վկայութիւնքս այս։

Եղեն, ասէ Պաւսանիաս 5, որք աշակերտս Դեդաղեայ համարեցան զԴիպենոս և զՍկիւղիս, զորս Պլինիոս 6 նախ

1 Դիոդ. գիրք Դ. էջ 235 և 276։ Պլին. գիրք Է. գլ. 56. էջ 414։ Պաւսան. գիրք Թ. գլ. 40. էջ 793։

2 Դիոդ. գիրք Դ. էջ 276։ Թեմիստ. ճառ. 26. էջ 316։ Սուիդ. ՚ի բառն Δαίδαλ.

3 Պղատ. ՚ի Մեն. հա. 2. էջ 97։ Արիստոտ. յղ. հոգ_ւոյ, գիրք Ա. գլ. 3. հա. 1. էջ 622։ Նոյն յղ. հաս. գիրք Ա. գլ. 4. հա. 1. էջ 299։ Սկալիգ. յԵւսեբ. էջ 45։

4 Պաւսան. գիրք Զ. գլ. 3. էջ 457. գիրք Ժ. գլ. 9. էջ 819։

5 Նոյն, գիրք Բ. գլ. 15. էջ 143։

6 Գիրք ԼԶ. գլ. 4. էջ 724։

քան զթագաւորել Կիւրոսի առէ կացեալ 'ի յիններորդում ողիմպիադի, որոյ սկիզբն համդիպի 580 ամաւ Ն. Ք. որով ժամանակ Դեգաղեայ կանխէ 610 ամաւ քան զնոյն թուականութիւն :

Արիստոտէլ, ըստ աւանդելոյ Պլինիոսի [1], համարէր Եւքիրեայ ազգականին Դեգաղեայ առաջին նկարիչ առ Յոյնս կացեալ: Այլ եթէ Եւքիրոս այս նոյն ինքն է անդրիանտագործն, որ ընդ Դեմարատայ կորնթացւոյ չոգաւ յԻտալիա [2], այս համդիպաւորութիւն ժամանակի հաստատէ զառաջին թուականութիւնն. քանզի Դեմարատ հայր էր Տարկուինեայ երէցոյն, որ գահակալեաց 'ի Հռոմ 641 ամաւ Ն. Ք :

Դարձեալ և Աթենագոր յետ յիշատակելոյ Ճարտարս բազումս կորնթացիս և սիկիոնացիս՝ որք կացին յետ Եւխոգեայ և Հոմերի, յաւելու և առէ. « Յետ սոցա կացին Դեգաղ և Թէոգոր միլետացիք, քանդակագործք և անդրիանտագործք » :

Ոչ միայն և զայլ ամն Դեգաղ 'ի վաղնջուց յոյժ կացեալ. այլ ինձ թուի՝ զի սկիզբն զարգացման քանդակագործութեան սիկիոնացւոյն է ընծայելի :

ԺԳ. Զզարդուց ողիմպիականին Արամազդայ աթոռոյն: (Էջ 292 :)

Մարթ է կարծել, զի երեսուն և եօթանեքին պատկերք այսոքիկ էին քերուածք դրուագեալք 'ի դոյնս գահոյից: Մարթի դարձեալ զքանդակս ոտից աթոռոյն զետեղել այլազգ 'ի կարգէն՝ զոր կալայ: Ի կամելն պարզաբանել՝ վասնզի սխալանաց ընդ առաջ ելանէ, իսկ 'ի Ճշգրիտն թարգմանել՝ վասնզի անիմանալի գոլոյ :

ԺԴ. Թէ որով կարգաւ յողիմպիական խաղսն 'ի հանդէս ածէին մրցութիւնս: (Էջ 306 :)

Բազում փոփոխմունք 'ի կարգս յայս եղեն յաւելմամբ և նուազմամբ թուոյ մրցութեանցն, և յաճախ ևս ըստ պատճառի իրաց ժամանակին այլայլելով: Կարգն զոր ես կալայ, ոչ համաձայնի բանից Քսենոփոնի [3] և Պաւսանեայ [4]. այլ սոքա և ոչ ընդ երկարս քաջ միաբանին. և դարձեալ զերից կամ զչորից ևեթ աւանդեն մրցութեանց. իսկ զկատարելութենէ այլոցն չիք ինչ նոցա ասացեալ: Զայսպիսի տարակոյս առաջի ունելով 'ի դէպ համարեցայ բացայայտութեանն հետևել կարգի, նախ զազգի ազգի արշաւանաց Ճառելով ըղ-

[1] Գիրք Ի. էջ 417 :
[2] Պլին. գիրք ԼԵ. գլ. 12. էջ 638 :
[3] Պաւս. Յուն. գիրք Ի. էջ 710 :
[4] Գիրք Ե. էջ 396 :

մարդկան և զձիոց և զկառաց, և այլս զմրցութեանց կրկէսականաց՝ զգօտեկռուոյն և զբռնամարտէն, այլովքն հանդերձ։ Կարգս այս գրեթէ յար և նման զաւանի այնմ, զոր Պղատոն 'ի գիրս օրինացն առաջին առնէ 1։

ԺԵ. ԶՊողիդամայ։ (Էջ 333։)

Պաւսանիաս և Սուիդաս 2 յաւուրս Դարեհի հարճորդւոյ առաջայրն Պարսից զսա ժամանակագրեն, ամբ իբր վաթսնիւք ամօք նախ քան զողիմպիականն խաղսն՝ յորս համարիմ մտեալ զնա 'ի հանդէս։ Սակայն պէլլենացիք համարէին զՊողիդամաս 'ի խաղսն ողիմպիականս պարտեալ 'ի Պրոմաքեայ քաղաքակցէ իւրեանց, որ կեայր յաւուրս Աղեքսանդրի 3։ Ոչ ինչ կարեւոր է ստուգութիւն 'ի մասինս յայսմիկ ժամանակագրութեան. այլ պարտ համարիմ զեկուցանել զերկբայսն, զի մի ոք զայն ինձ 'ի դէմս արկցէ։

ԺԶ. Զբնակութենէ Քսենոփոնի 'ի Սկիլլուն։ (Էջ 341։)

Սուղ ինչ յառաջ քան զճակատամարտն Մանտինեայ, որ եղև 362 ամօք նախ քան զԹուականութիւն փրկչին, եղիացիք աւերեցին զՍկիլլուն. և Քսենոփոն խորհուրդ կալաւ մեկնել 'ի Կորնթոս 4։ Զայս այսպէս ժամանակագրեմ յիններորդ գլուխ գրոցս։ Արդ մի ոմն 'ի հնոց մատենագրաց անդ 'ի Կորնթոս ասէ կատարեալ նորա զաւուրսն 5. բայց ըստ Պաւսանիայ՝ 'ի կողմն Սկիլլունի կայր շիրիմ նորա 6. և Պլուտարքոս հաստատէ՝ 'ի բնակութեան անդ իւրում գրեալ Քսենոփոնի զՎէպսն 7, որ իջանեն մինչև ցամն 357 Ն. Ք. 8։ Այսպէս 'ի դէպ է կարծել, զի կացեալ նորա առ ժամանակ մի 'ի Կորնթոս՝ դարձաւ 'ի Սկիլլուն, և անդ կատարեաց զաւուրս իւր։

ԺԷ. Զերգոց ողբոյն 'ի Մեսսենիական պատերազմունսն։ (Էջ 369։)

Պաւսանիաս 9 երկարապատում յոյժ առնէ զպատերազմ.

1 Գիրք. Ը. հա. 2. էջ 833։
2 Պաւսան. գիրք Զ. գլ. 5. էջ 464։ Սուիդ. 'ի բառն Πολυδ.
3 Պաւսան. գիրք Է. գլ. 27. էջ 595։
4 Դիոգ. Լայերտ. գիրք Բ. յօդ. 53։
5 Դեմետր. առ. Դիոգ. Լայերտ. յօդ. 56։
6 Պաւսանիաս, գիրք Ե. էջ 389։
7 Պլուտ. յղ. աքսոր. հա. 2. էջ 605։
8 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Զ. էջ 601։ Դիոդ. գիրք ԺԶ. էջ 418։
9 Պաւսան. գիրք Դ. գլ. 6։

մօտերս, 'ի Միւռոնէ պրիենացւոյ առեալ՝ յարձակ շարագրէ, և 'ի Հախանաւէ կրետացւոյ քերթողէ 1 ։ Ըստ օրինակի երկրորդիս 'ի դէպ թուեցաւ ինձ քերթողրէն պատմագրել ։ Բայց Հռիանոս գիւցազնական իմն յօրինէ քերթած, զԱրիստոմէն կացուցանելով 'ի նմա գիւցազն 2, իսկ ես զեղերերգական ընտրեցի եղանակ՝ յոր չմտանեն արարուածք դիւցազնականին, և զոր մատենագիրք հինք յաճախ 'ի կիր արկանէին 'ի նկարագրել զաղէտս ազգաց ։ Զի այսպէս Տիրտէոսի յեղերերգութիւնս իւր նկարագրեալ էր զմաոն ինչ պատերազմացն սպարտացւոց ընդ մեսենիացիս 3 ։ Կալլինոսի զպատերազմունս՝ որ յաւուրս նորա ներգեցին զՅոնիա 4 ։ և Միմներմեայ զզմիւռնացւոցն ընդ Գիւգեայ արքային լիւդացւոց 5 ։

Ցայտուսիկ հայեցեալ և իմ, համարեցայ՝ զերծելոցն 'ի Լիբիա մեսենիացւոց, յիշելով զնեղութիւնս հայրենեացն իւրեանց՝ արարեալ ողբս 'ի վերայ երից պատերազմացն, որ աւերեցին զաշխարհն ։ Անդր 'ի ներքս ածի զկարեւորագոյն մասունս իրացն ամենայն ստուգութեամբ, այլ ինչ ինչ և յիմոց մտաց յաւելի, զորոց ներել մաղթեմ ։

ԺԲ. ՉՀՆՃԱՐԿՈՒԹԵՆԷ ՄԵՍԻՆԱՅ 'Ի ՍԻԿԻԼԻԱ ։ (էջ 392 ։)

Պաւսանիաս ասէ՝ թէ յետ առման Իրայ լերին, երբ 668 ամօք Ն. Ք. մեսենիացիք առաջնորդութեամբ Գորգոսի որդւոյ Արիստոմենեայ չոգան յԻտալիա, և դաշնաւորեալ ընդ Անաքսիլայ բռնաւորին հռեգիոնացւոց՝ հալածեցին զբնակիչս Զանկլեայ քաղաքի՝ որ 'ի Սիկիլիա, և կոչեցին զքաղաքն զայն Մեսենա, որ այժմ կոչի Մեսինա 6 ։

Այլ այս հակառակ է ամենեցուն աւանդութեանցն Երոդոտոսի և Թուկիդիդեայ ։ Քանզի Երոդոտոս պատմէ, զի 'ի նուաճել Դարեհի որդւոյ Վշտասպեայ զՅոնիա զապստամբեալն յիւրմէ, բնակիչք Սամոսի առ հասարակ և կէսք 'ի միլետացւոց անցին 'ի Սիկիլիա, և ըստ խրատուն Անաքսիլայ բռնաւորին հռեգիոնացւոց՝ կալան զքաղաքն Զանկլէ 7 ։ Եւ այս եղև իբր 495 ամօք Ն. Ք. և իբր 173 ամօք յետոյ քան զնշանա-

1 Պաւսան. գիրք Դ. գլ. 6. էջ 293 ։

2 Նոյն անդ ։

3 Նոյն անդ, էջ 294. գլ. 13. էջ 312. գլ. 14. էջ 313. գլ. 15. էջ 318 ։

4 Ցիշատ. բանաս. կաճառ. հտ. 7. էջ 365 ։

5 Նոյն, գիրք Թ. գլ. 29. էջ 766 ։

6 Պաւսան. գիրք Դ. գլ. 23. էջ 335 ։

7 Երոդոտ. գիրք Զ. գլ. 22 և 23 ։

կեալն 'ի Պաւսանիայ ժամանակ Թագաւորութեանն Անաքսիղայ, և քան զփոփոխումն անուան քաղաքին Զանկլեայ 'ի Մեսսենա։

Իսկ Թուկիդիդէս աւանդէ, զի բազմութիւն բնակչաց Սամոսի և այլոց յոնիացւոց հալածեալ 'ի Մարաց տարաշխարհիկք եկին կալան զԶանկլէ քաղաք 'ի Սիկիլիա։ Յաւելու և ևս, զի յետ ոչ բազում ժամանակի՝ Անաքսիղաս բռնաւոր հռեգիոնացւոց տիրեաց քաղաքին այնմիկ, և կոչեաց զայն Մեսսենա, զի ինքն իսկ մեսսենիացի էր հայրենեօք 1։

Հայրն Քորսինի, որ նախ կասկածէրն՝ զի Անաքսիղասք երկու լեալ իցեն 2, յետ մերկոյն քննութեան հաւանի՝ Պաւսանիայ աղմկեալ զժամանակագրութիւն 3։ Քանզի 'ի բազում ինչ իրաց յայտ է՝ Անաքսիղայ յաւուրս մարաթոնական մարտին Թագաւորեալ, որ հանդիպի 490 ամաւ Ն. Ք.։ Երկու ինչ 'ի տեսութիւնսն Քորսինեայ յաւելում և ես։

Նախ զի յառաջ քան զպատերազմն զայն եղև 'ի Մեսսենիա խռովութիւն ապստամբութեան՝ զորմէ Պաւսանիաս ոչ ինչ յիշատակէ, որով ոչ կարացին սպարտացիք 'ի Ճակատամարտ անդր հասանել 4։ Այլ յաջողեաց յաղթութիւն ոչ ինչ ընդհատ յառաջնոցն. և յայնժամ արդեօք մեսսենիացիք յետ պարտութեանն ապաւինեցան առ Անաքսիղաս բռնաւոր հռեգիոնացւոց, և յորդորեցին զնա նուաճել զԶանկլէ քաղաք, որ յայնմհետէ կոչեցաւ Մեսսենա։

Երկրորդ՝ զի եթէ արդարև ըստ Պաւսանիայ իսկ և իսկ ընդ հետ երկրորդ պատերազմին Մեսսենիոյ լեալ էր փոփոխումն անուան քաղաքիս այսորիկ, հարկ էր դրոշմածաց՝ յորս տպաւորեալ կայ Դանկլէ՝ երիցագոյնս գոլ քան զամն 368 Ն. Ք. այլ զայս ոչ ներէ կարծել յօրինուածոյն նոցա տարազ։

ԺԹ. Զինուոյ ցեղիցն տարբերութեան։ (էջ 424։)

Գրեթէ յամենայն մեծամեծ քաղաքս Ելլադայ բաժանէին բնակիչք 'ի ցեղս. յԱթէնս էին տասն ցեղք, իսկ 'ի Լակեդեմոն համարի Կրագիոս 5 լեալ ցեղս վեց. Ա զհերակլեանս, Բ զեգեանս, Գ զլիմնեանս, Դ զկինոսուրեանս, Ե զմեսոմեանս, և Զ զպիտանեանս։ Բայց զառաջնոյն չիք յայտնի ինչ վկայութիւն. և Կրագիոս հաստատէ զայն երիւք գուշակութեամբք,

1 Թուկիդ. գիրք Զ. գլ. 4 և 5։

2 Քորսինի, տարեգր. ատտիկ. հտ. 3. էջ 140։

3 Նոյն անդ, էջ 155։

4 Պղատ. յղ. օր. գիրք Գ. հտ. 2. էջ 698։

5 Կրագ. յղ. հաս. գիրք Ա. գլ. 6։

որոց ակարութեանն և ինքն խելամուտ է. վասն որոյ ինձ 'ի դէպ թուեցաւ թողուլ զայն 'ի բաց ։

Հնգեքին այլ ցեղք յիշատակին յայտնապէս առ մատենագիրս կամ 'ի հին արձանագիրս. եգեանցն յՆերոդոտեայ 1, կինոսուրեանցն և պիտտանեանց 'ի Հիսիւքեայ 2, մեսովեանցն 'ի Ստեփանոսէ բիւզանդացւոյ 3, և լիմնեանցն յարձանագրի ուրեք՝ զոր Ֆուռմոն եգիտ յաւերակս Սպարտայ 4 ։ Պաւսանիաս զչորսին 'ի ցեղից առնէ յիշատակէ 'ի ձեռս զոհին՝ որ անդ ասէին 'ի վաղնջուց ժամանակաց մատչէր Արտեմեայ. և ասէ՝ թէ եղև զայնմանէ հակառակութիւն 'ի մէջ լիմնեանց, կինոսուրեանց, մեսովեանց և պիտտանեանց 5 ։

Ասիցէ ոք սաստանօք. Եւ ընդէ՞ր, զի աւելի քան զհինգ ցեղս ոչ յիշատակին, հնգեակ ևեթ համարիցին լեալ ցեղք ։ Բայց հզօր պատճառք 'ի միջի կան չյաւելլոյ զցեղակարգութիւնն ։ Աթենացւոց, որպէս յառաջագոյն ասացաք, էին ատեանք բազումք՝ իւրաքանչիւր 'ի տասանց դատաւորաց գումարեալ՝ ընտրելոց 'ի տասանց ցեղից. արդ գտանեմք և 'ի Սպարտա քաղաքում ատեանս՝ որոց հնգեակ ևեթ էին ատենակալք, որպէս զսպարտեացն զբիդեանցն 6, և զագաթոերգեանցն 7. ապա 'ի դէպ է կարծել, զի մի մի 'ի ցեղից իւրաքանչիւր կային հնգեքին ատենակալքն ։

Ի. Ի փեղակէր քաղաքին Լակեդեմոնացւոց ։ (էջ 424 ։)

Ըստ ադոտ ինչ տեղեկութեանցն, զոր աւանդեն մեզ նախնի մատենագիրք, համարձակիմ տալ տեսութիւնս ինչ զտեղագրութենէ Լակեդեմոնի առ հասարակ ։

Ըստ Թուկիդիդեայ՝ քաղաքս այս ոչ հանգոյն քաղաքին Աթենացւոց էր միակցորդ, այլ յաւանս բաժանեալ, ըստ զվաղընջուց ժամանակաց քաղաքս Եղլադայ 8 ։ Առ 'ի քաջ խելամուտ լինելոյ այսմ՝ գիտելի է, զի նախնի Հելլենք բնակեցին 'ի սկըզբանն յաւանս անպարիսպս, և ապա բնակիչք բազում աւանաց միաբանեալ ածին զիւրեանս հասարակաց պարիսպ. որպէս 'ի բազում քաղաքս է տեսանել զայս ։ Զի Տեգէա յինուեց աւանաց եկաց քաղաք մի 9, Մանտինէս 'ի չորից կամ

1 Երոդոտ. գիրք Դ. գլ. 149։

2 Հիսիւք. 'ի բառն Κυγός, և 'ի Πιτανάτ.

3 Ստեփ. բիւզանդ. 'ի Μέσσ.

4 Ֆուռմոն ստորագր. 'ի մատենագ. արքունի ։

5 Պաւսան. գիրք Դ. գլ. 16. էջ 249 ։

6 Նոյն անդ, գլ. 11. էջ 231։

7 Երոդ. գիրք Ա. գլ. 65 ։

8 Թուկիդ. գիրք Ա. գլ. 10։

9 Պաւսան. գիրք Ը. գլ. 45. էջ 692 ։

'ի հնգից 1, Պատրաս յեօթանց, Դիմէ յութից 2, այլովքն հանդերձ:

Բայց բնակիչք աւանացն կցորդեալք այսպէս իրերաց, ոչ խառնեցան ընդ միմեանս. այլ բնակեալ յիւրաքանչիւր թաղս, կազմէին այլ և այլ ցեղս: Նմին իրի և թաղիցն և որ 'ի նոսա բնակեալ ցեղիցն նոյն անուանք էին, որպէս է տեսանել զայս առաւել իսկ 'ի Լակեդեմոն:

Կինոսուր, ասէ Հիսիքէոս, է մի 'ի ցեղից Լակոնիոյ 3. և Մեկնիչն Կալլիմաքեայ ասէ՝ թէ է տեղի 'ի Լակոնիա 4: Մեսովա ըստ Սուիդայ՝ է տեղի 5, և ըստ Ստեփանոսի բիւզանդացւոյ՝ է տեղի և ցեղ 'ի Լակոնիա 6, իսկ ըստ Ստրաբոնի՝ 7 որք բնագիրն ըստ յաջորդուածոյ բանին ուղղագրեցաւ 'ի Սալմասեայ՝ 8 Մեսովա է մասն Սպարտայ. և Պիտան մերթ ցեղ 9, և մերթ աւան 10 անուանակոչի:

Աստի 'ի մէտ առնուլ է՝ թէ ընդէր զքերթողն Ալկման կեալ մեսովացի ասեն և կեալ սպարտացի 11. քանզի Մեսովա է մի 'ի թաղից Սպարտայ: Եւ զայն գարմեալ, թէ ընդէր Պղուտարքոս զԹրասիբուղեայ սպարտացւոյ անկելոյ 'ի պատերազմի զդիակն ոչ 'ի Լակեդեմոն ասէ ածեալ 'ի վերայ առապարին, այլ 'ի Պիտան 12, զի էր նա 'ի Պիտան աւանէ, և անդ պարտ էր նմա թաղել:

Արդ զի հնգեակ ցեղք էին սպարտացւոց, որպէս յառաջ քան զտեղեկութիւնս զայս ասացաք, ապա քաղաքն նոցա 'ի հինգ աւանաց կազմէր: Մնայ մեզ արդ զպատճառս գրիցն տալ, յորս զնոսա զետեղեմք:

Ա. Ասոն ի ցեղ Լիմնէանց. Անուն տեղւոյ ածանցի 'ի յոյն բառէս Λίμνη լիճն, որ նշանակէ լիճ կամ ճահիճ: Ըստ Ստրաբոնի՝ արուարձանք քաղաքին սպարտացւոց կոչէին Ճահիճք, զի էին երբեմն մօրուտք, արդ արուարձանացն Սպար-

1 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Ե. էջ 583: Եփոր. առ Հարպոկր. 'ի բառն Μαντιν. Դիոդ. գիրք ԺԵ. էջ 331:

2 Ստրաբ. գիրք Ը. էջ 337:

3 Հիսիքէ. 'ի բառն Κυνός.

4 Կալլիմ. առ յԱնահիտ, տող 94:

5 Սուիդ. 'ի Μέσσ.

6 Ստեփ. 'ի Μέσσ.

7 Ստրաբ. գիրք Ը. էջ 364: Կասաուբ. անդ:

8 Սալմաս. 'ի պարապմ. Պլին. էջ 825:

9 Հիսիք. 'ի Πίταν.

10 Պաւսան. Թուկիդ. գիրք Ա. գլ. 20:

11 Սալմաս. անդ: Մեօրս. խմբարան լակոն. գիրք Դ. գլ. 17:

12 Պղուտ. առակ. լակոն. հտ. 2. էջ 235:

տայ պարտ էր լինել 'ի հիւսիսոյ քաղաքին, զի յաճախագոյն ընդ այն կողմն էին մուտք :

Բ. Առան Ն ցեղ Կինոսուրեանց. Կինոսուրայ նշանակէ ագի շան, և կոչէին այսպէս հրուանդանք և լերինք 'ի ձևոյն առեալ յորձորձուածն : Թուղուկ մի Տայգետոն լերին 'ի նոյն ձև երկայնեալ ձգէր մինչև 'ի Սպարտա. և զի գոյր 'ի Լակոնիա տեղի անուանեալ Կինոսուր, զայն ցուցաք յառաջագոյն : Այլ 'ի դէպ է համարել 'ի սպառուած այսր տայգետականն բազկէն զԿինոսուր առան :

Գ. Առան Ն ցեղ Պիտանեանց. Պաւսանիաս մեկնեալ 'ի հրապարակէ քաղաքին, և գնացեալ ընդ արևմուտս՝ անցանէ ընդ տեսարանաւն, և հասանէ 'ի սրահն ուր ժողովէին կրտսերանք, որ են մասն պիտանեանց 1 : Պարտ էր արդ զետեղել զաւանս զայս հանդէպ տեսարանին. և տեսարանին տեղի ծանօթ իսկ է, քանզի հետք ինչ նորա դեռ ևս կան : Զայս և Հիսիւքիոս և Երոդոտոս հաստատեն, վկայեալ զի էր տեսարանն 'ի պիտանեանցն աւանի 2 :

Դ. Առան Ն ցեղ Մեսոյեանց. Ի պիտանեանցն աւանէ Պաւսանիաս անցանէ 'ի Պղատանիստաս 3, որ էր մերձ յաւանն Թերապնէ, և հուպ առ նմին առէ լինել զշիրիմ Ալկմանեայ քերթողի 4, որում հարկ էր թաղել անդ, քանզի մեսովացի էր :

Ե. Առան Ի ցեղ Եգեանց. Պաւսանիաս առաջնորդէ մեզ արդ 'ի Լիմնեանցն աւան 5, զոր 'ի հիւսիսակողմն քաղաքին ասացաք լինել. և զճանապարհայն պատահէ շիրմին Եգէոսի 6, յորմէ եգեանցն կոչումն կալաւ ցեղ 7 :

Այլ ես զաւանս զայսոսիկ ոչ փակեցի 'ի մի շրջապատ, զի առ ժամանակօք իւրաքանչիւր զորս վիպեմ՝ դեռ ևս անպարիսպ էր Սպարտա :

Իսկ զմեհեանս և զայլ շինուածս հասարակաց դրեթէ 'ի նոյն տեղիս ըստ Պաւսանիայ կարգեմ. զորոց և ոչ ճշգրտութիւն գրելի է զտեղագիր, այլ կարևոր այն է՝ զհռչակաւոր քաղաքին տալ համօրէն զտեսութիւն :

ԻԱ. Զխոփութենէ պարփակող ընդ Եղոտոյ : (էջ 436 :)

Սպարտացիք աՀաբեկեալք կորստեանն Պիւղեայ՝ զոր բարձին

1 Պաւսան. գիրք Գ. գլ. 14. էջ 240 :

2 Երոդոտ. գիրք Զ. գլ. 67 : Հիսիւքս 'ի բառն Πιτανάτ.

3 Պաւսան. գիրք Գ. գլ. 14. էջ 242 :

4 Նոյն անդ, գլ. 15. էջ 244 :

5 Պաւսան. գիրք Գ. գլ. 16. էջ 248 :

6 Նոյն անդ, գլ. 15. էջ 245 :

7 Երոդոտ. գիրք Դ. գլ. 149 :

'ի նշան աթենացիք, խորհուրդ կալեալ յաւելուլ յզէլ զունս առ Բրասիդաս զօրավար իւրեանց՝ որ կայր 'ի Թրակիա. որպէս զի բաժանեալ կացցէ զօրութիւն թշնամւոյն՝ բանադատելով աթենացւոց զօրահաւաքոյց լինել 'ի սոր աշխարհ անդր, և զի զարձեալ զինուորեալ և գունդ մի յեղոտացւոց առեալ՝ հեռացուսցէն զնոսա 'ի Թրակիա, զի առայգ հասակ նոցա և կորովի կասկածանս երկիւղի ոչ տարապարտ տային սպարտացւոց: Խոստացան սոցա ազատութիւն այնոցիկ, որ յառաջ քան զայն 'ի պատերազմունս արիացեալ էին. և բազմութիւն յոյժ յառաջ մատեան. ընտրեցան 'ի նոցանէ երկու հազար, և կատարեցաւ առ նոսա խոստացեալն, և ծաղկապսակք ածան հաշտակաւ 'ի մեհեանս. քանզի այս կարևորագոյն մասն էր հանդիսի ազատութեան: Եւ յետ սակաւ միոյ, ասէ Թուկիդիդէս, եղեն աներևոյթ, և ոչ ոք գիտաց թէ որպէս բարձան 'ի միջոյ 1: Եւ Պլուտարքոս անգամին 'ի Թուկիդիդեայ առեալ յաւելու, թէ ոչ ոք գիտաց յայնժամ, և ոչ յետոյ ծանուցաւ, թէ որպէս սպանան երկու հազարքն 2:

Բայց թէպէտ և Դիոդոր սիկիլիացի համարի ամբանց նոցա առեալ պատուէր խողխողել զնոսա լռելեայն 'ի տունս իւրաքանչիւր 3, այլ եթէ մարթէր նմա գիտել զհանգամանս զայս իրացն՝ զոր ոչ կարաց գիտել Թուկիդիդէս վիպագիր, որ կեայրն 'ի ժամանակին՝ յորում խուժադուժ նախճիրքս այս գործեցան:

Իցէ այս որպէս և է, այլ սա երկու ինչ 'ի դէպ է խնամով նկատել, որ յայլ և այլ պատճառաց ունին ակիզբն. մի զաղտնութիւն երկուց հազարաց եղոտացւոցն, և միւս եւս ըղմահ նոցա: Այսպէսն ազատութիւն հրամանաւ ատեանին և ժողովրդեան շնորհեցաւ նոցա, այլ ոչ հրովարտակաւ պետութեանն սպարտացւոց. ընդ այս չէք երկբայել: Ոչ ոք յաղագս յայդքան գժնդակ եղեալ նենգութեան անկերպարանութ, և մանաւանդ զի առաւելոր ատեանն սպարտացւոց առ 'ի զինուորել եւեթ զեղոտացիս 'ի Թրակիա՝ ազատեցոյց զնոսա: Յաւուրսն յայնոսիկ պարէտք արձակեցին յօգնութիւն Բրասիդայ հազար այլ եղոտացիս 4. և զի գնդացս այսոցիկ դէպ լինէր երբեմն գիշերայն չու առնել 'ի Սպարտայ 5, համարեցաւ ժողովուրդն՝ զի երկու հազարքն այնոքիկ ազատեալք 'ի ծառայութենէ՝ գնացին ուր պարտն էր նոցա գնալ: Եւ ապա 'ի յայտնել վերջակ կարծեացն՝ զիւրեին էր պատրել զնոսա, երբ

1 Թուկիդ. գիրք Դ. գլ. 80:
2 Պլուտ. 'ի Լիկուրգ. հատ. 1. էջ 56:
3 Դիոդ. գիրք ԺԲ. էջ 117:
4 Նոյն անդ:
5 Եղոդոտ. գիրք Թ. գլ. 10:

թէ աւազանւոյն 'ի վերայ հաստատել համախոհութեան նոցա ընդ Թշնամիս՝ տուեալ էր սպանանել զնոսա կամ հալածել 'ի սահմանաց աշխարհին ։ Անմարթ է մեզ արդ զհաւաստին գուշակել զերաց, որ յաւուրս նորին իսկ Թուկիդիդեայ անգիտելի եղև ։ Դիւր է գիտել՝ զի ոչ համօրէն ազգին էր ոճիրն, այլ ձախողակի քաղաքավարութն պարետացն՝ որ յիշխանութն կային ։ որ հզօրագոյնք քան զնախորդսն իշխանութք և նուազեալք յաւագութենէ նոցա, զամենայն ինչ որէն համարէին արգելոք՝ վասն փրկութեան աշխարհին ։ քանզի օրէնք արդարութեան և ուղղութեան՝ սկսանէին 'ի ժամանակին յայնմիկ զառածանել 'ի թիւրութիւն ։

Գամին և այլ անդթութիւնք 'ի Սպարտա ընդ եղոտացիս գործեալ ։ զի առ 'ի յիշեցուցանել նոցա զպայման ստրկութեանն, առէ Միւռոն ոմն պատմիչ, ամի ամի գանածեծ առնէին զնոսա՝ սահմանեալ նոցա թուով հարուածս խարազանի 1 ։ Բազում եղոտացիք ոչ ինչ նուազ քան զտեարս բնակ էին 'ի Լակոնիա և 'ի Մեսենիա ։ արդ տեսցէ ամենայն ոք զանտեղութիւն իրին, և զգժուարութիւն կառավարման իրացն, և զատեացի ։ Ցուցանէ նոյն ինքն Միւռոն, զի պատուհաս 'ի վերայ կայր տերանց՝ որք ոչ խեղդէին զկորովի ծնեալ մանկունս եղոտացւոց ստրկաց իւրեանց 2 ։ Այսպէս ուրեմն խեղանդամք էին առհասարակ եղոտացիք՝ որք զինուորէին, և երեւաւորք 'ի մարտս գտանէին ։

Բազում այն է՝ զի զբարուց ազգաց ըստ գործոց իւրաքանչիւրոց ոմանց յազգայնոց անտի առնէին զատաստանս, որոց ուղեորք ոմանք ականատեսք հանդիպեալ իցեն, կամ պատմիչք ոմանք զայնս աւանդիցեն ։ Վասն որոյ Թեպէտ և Պլուտարքոս պատմէ, զի սպարտացիք առ 'ի զարշեցուցանելոյ ըզմանկունս յարբեցութենէ՝ ցուցանէին նոցա եղոտացի զոք գինեհարեալ 3, այլ ոչ անտեղի թուի ինձ կարծել՝ զի նա զմիոյ ուրուք գործ զամենեցունց սահմանաբար ասիցէ, և կամ թէ տասանոր խառն 'ի խուռն զեղոտացիս ընդ այլ ստրուկս առնուցու, որ յոյժ նուաստագոյնք էին քան զնոսա ։ Իսկ ուր ինչ նոյն ինքն Պլուտարքոս պատմէ, զի արգելեալ էր եղոտացւոց նուագել զերգս Աղկմանեայ և Տերպանդրի 4, աներկբայելի համարիմ ։ քանզի տաղք նոցա խրախուսէին 'ի սէր փառաց և ազատութեան ։ և 'ի դէպ էր խոհական քաղաքավարու-

1 Միւռ. առ Աթեն. գիրք ԺԴ. էջ 657 ։

2 Նոյն անդ ։ Սպան. յԼի- րիաստփ ։ Պլուտ. առղ 4 ։

3 Պլուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 57 ։ Նոյն կարգադր. լակոն. հա. 2. էջ 239 ։

4 Նոյն 'ի Լիկուրգ. անդ ։

թեան խափանել 'ի նուաճելոյ զայնս զմարդիկ՝ յորոց արիութենէ յերկեալ էր երկնչել ։

ԻԲ. Յաղագս պարէտացն հաստատութեան 'ի Սպարտա ։ (էջ 465 ։)

Բազմագոյնք 'ի մատենագրաց զպարէտս 'ի Թէոպոմպայ ասեն հաստատեալ, որ Թագաւորեաց առաւել քան զդար մի յետոյ քան զԼիկուրգոս ։ Զայս այսպէս ասեն գեն Արիստոտել 1, Պղուտարքոս 2, Կիկերոն 3, Վալերիոս Մեծն 4 և Դիոն Ոսկեբերան 5 ։ Ի սոսա մարթ է յաւելուլ և զՔսենոփոն՝ որ զսկիզբն հաստատութեան առեալ Թուի ընծայել աւագաց ատենակալաց 6, և զԵւսեբիոս՝ որ 'ի ժամանակագրական իւր ածէ զայն յաւուրս Թագաւորութեան Թէոպոմպայ 7 ։

Երկու այլ ևս վկայութիւնք գտանին արժանի յիշատակի, վասն յայտնապէս 'ի նոսա նշանակելոյ ժամանակին ։ Զի ըստ Պղուտարքեայ, Կղէոմէն երրորդ՝ արքայ Սպարտացւոց 'ի համախումբ ժողովրդեան խօսեցաւ և ասէ ․ « Լիկուրգոս շատ համարեցաւ իշխանակից երկուց Թագաւորացն կացուցանել զատեան ծերակուտին ․ և ընդ ժամանակս բազում չերևեցաւ յաշխարհէին այլ ատեան ։ Պատերազմն Մեսսենիոյ (յաւուրս Թէոպոմպայ) ևս քան զևս երկարաձգէր, և հարկ եղև Թագաւորաց յանձնել 'ի պարէտս զհոգ ատենելոյ զիրաւունս ։ Որք 'ի սկզբանն պաշտօնեայք եղեն իշխանութեան արքայից, և ապա յաջորդք նոցա յափշտակեցին զիշխանութիւնն ․ և Աստերոպոս ոմն 'ի նոցանէ կացոյց զնոսա ինքնիշխանս » 8 ։

Պղատոն 9 երկու պատճառս ածէ չզատածանելոյ Թագաւորութեան 'ի բռնաւորութիւն 'ի Սպարտա, յորոց յետինք այսորիկ են ։ « Այր ոմն, ասէ զԼիկուրգեայ, 'ի դից ուրեմն ազդեալ, ամփոփեաց զիշխանութիւն Թագաւորաց՝ ծերակուտին իշխանութեամբ ։ Եւ ապա այլ ոմն փրկիչ՝ իշխանութեամբ պարէտացն քաղ 'ի կշիռ կալաւ զԹագաւորացն և զծերակուտին զիշխանութիւնս » ։ Արդ ո՞ այլ ոք իցէ փրկիչս այս, զորմէ խօսի Պղատոն, եթէ ոչ Թէոպոմպ ։

1 Յղ. հաս. գիրք Ե. գլ. 11. հտ. 2. էջ 407 ։
2 Ի Լիկուրգ. հտ. 1. էջ 43 ։
3 Յղ. օր. գիրք Գ. գլ. 7. հտ. 3. էջ 164 ։
4 Գիրք Դ. գլ. 1 ։
5 Ճառ 56. էջ 565 ։
6 Յղ. հաս. Լակեդ. էջ 683 ։
7 Եւսեբ. ժամանակագր. գիրք Բ. էջ 151 ։ Ֆրէրէ. Ջատագով. ժամանակագր. էջ 171 ։
8 Պղուտ. յԱգիս, հտ. 1. էջ 808 ։
9 Յղ. օր. գիրք Գ. հտ. 2. էջ 691 ։

Իսկ, զի Երոդոտ 1 և Պղատոն դարձեալ 2, և Ստրաբոն առն հին մատենագիր 3 համարին 'ի Լիկուրգեայ հաստատեալ զպարէտս, ասելի է ըստ Երակղիդեայ պոնտացւոյ՝ որ սակաւ ինչ կրտսերագոյն է ժամանակաւ քան զՊղատոն, զի ոմանք 'ի մատենագրաց զամենայն կարգս տեսչութեան սպարտացւոց ընծայեցին անխտիր Լիկուրգեայ 4 : Վկայեն այսմ յայտնապէս երկոքին հատուածքն, զորս 'ի վեր այսր ածի 'ի Պղատոնէ : Նա ինքն և յութերորդում Թղթին 5 ասէ անսահմանաբար, թէ զծերակոյտն և զպարէտս կացոյց Լիկուրգոս, ուր 'ի Ճառս օրինացն 6 մանրապատում առնելով զիրսն՝ յայլ և այլոց համարի զերկոսին ատեանսն հաստատեալ :

Ոչ կասեցուցանէր զիս առաւօտ վկայութիւն Ստրաբոնի, եթէ ոչ զօրավիգն լինէր այնմ Երոդոտ : Չասեմ ընդ Մարշամայ 7 թէ վրիպակաւ պարէտքն իցեն սպրդեալ 'ի բնագիր Երոդոտեայ, այլ թէ մարթ է զվկայութիւն նորա ընդ այլոց մատենագրացն միաբանել 8 :

Երևի իշխանութիւն պարէտաց 'ի բազում ժամանակաց հետէ լեալ առ ազգս բնակեալս 'ի Պեղոպոնես, և մանաւանդ առ Մեսսենիացիս 9, նոյն և առ հին բնակիչս Լակոնիոյ. քանզի պարէտք, 'ի սահմանել Լիկուրգեայ նոր օրէնս՝ յարուցին ընդդէմ նորա զժողովուրդն 10 : Դարձեալ զի Լիկուրգոս գրեցեալ իմն ըստ օրինակի սահմանադրութեան կրետացւոց զիւրն յերիւրեաց. արդ կրետացւոց էին Կոսմոսքն անուանեալ առաջնորդք, զորս Արիստոտէլ համաւարէ պարէտացն սպարտացւոց 11 : Դարձեալ և բազումք 'ի մատենագրաց, զորս յառաջագոյն յիշատակեցի, ոչ 'ի Թէոպոմպայ սահմանեալ ասեն զիշխանութիւն պարէտացն, այլ առանձ իշխանութեան թագաւորացն եդեալ զայն : Այսպէս յոյժ հաւանելի է, զի Լիկուրգոս եթող իշխանութիւն ինչ պարէտաց՝ որք յառաջագոյն իսկ կային, և Թէոպոմպ յաւել զօրացուցանել զիշխանութիւն նո-

1 Գիրք Ա. գլ. 65 :

2 Թուղթ. 8. հտ. 3. էջ 354 :

3 Դիոգ. լայերտ. գիրք Ա. յօդ. 68 :

4 Հերակղիդ. պոնտ. յղ. քաղաքական. նախնի Յունաց, հտ. 6. էջ 2823 :

5. Պղատ. Թուղթ 8. հտ. 3. էջ 354 :

6 Նոյն հտ. 2. էջ 691 :

7 Ժամանակագր. եգիպտ. էջ 509 :

8 Ֆրէրէ Հատուած. Ժամանակագր. էջ 170 :

9 Պօղիբ. գիրք Դ. էջ 273 :

10 Պլուտ. առակ. լակոն. հտ. 2. էջ 227 :

11 Արիստոտ. յղ. հաս. գիրք Բ. գլ. 10. հտ. 1. էջ 332 :

ցա, որով առաջս կարգ առաջութեանն զուածու 'ի սակաւապետութիւն:

ԻԳ. Ի բաշխս վիճակոյն օրէնսդրելոյ 'ի Լիկուրգեայ: (էջ 49:)

Պղուտարքոս երիս կարծիս զայսմանէ ածէ: Ըստ առաջնումն բաժանեալ Լիկուրգեայ զամենայն կալուածս Լակոնիոյ յերեսուն և ինն հազար վիճակս, յորոց ինն հազարք առան բնակչաց Սպարտայ: Ըստ երկրորդին՝ ոչ ինչ աւելի քան զվեց հազար վիճակս տուեալ սպարտացւոց. յորս Պողիդոր արքայ՝ այն որ յետ սակաւ ժամանակի վախճան արար առաջնոյ Մեսենիական պատերազմին, յաւել 'ի նոսա այլս երեքհազար: Իսկ ըստ երրորդին՝ յինն հազարիւրոց վիճակաց առաւ զկէս Լիկուրգոս և զկէսն կէսն Պողիդոր ետ սպարտացւոց 1:

Իմ առաջին կարծիքն ընդունելի թուին. քանզի Պղուտարքեայ մատեանս բազում առընթեր ունելով, որ արդ կորուսեալ են, թուինաղապատեալ զայն. բայց ոչ հերքեմ զայլսն: Երկի յաւուրս Պողիդորի յաւելուած ինչ լեալ 'ի վիճակսն բաշխեալս սպարտացւոց. զի 'ի հաստատուն ուրեմն առգից Տիրտէոսի՝ ժողովուրդ Սպարտայ խնդրէ վերստին առնել բաշխս վիճակաց 2. և ես պատճառ Պողիդորայ յերթալն իւրում 'ի Մեսենիա առասցեալ, թէ գնամ յերկիր չե ևս 'ի վիճակս բաշխեալ 3: Եւ դարձեալ, զի աշխարհակալութեամբն Մեսենիոյ յաւելան սպարտացիք 'ի մեծութիւն:

Այս ամենայն բազում խնդիրս զհետ իւրեանց ձգեն. զարմանք իմ զանց արարեալ, երկու ինչ 'ի դէպ համարիմ չասառնել անյիշատակ, խուսափեալս արդեօք 'ի տեսութենէ երկուց արանց՝ որք եղեն փառք դարուն իւրեանց և ազգին, ասեմ իսկ զԱրիստոտէլ և զՄոնթեսքիւ:

Քանզի Արիստոտէլ ասէ, թէ օրէնսդիրն սպարտացւոց բարւոք արար արգելուլ նոցա չվաճառել զվիճակս իւրեանց. այլ և զայն պարտ էր նմա արգելուլ, չտալ նոցա զայնս 'ի կենդանութեան, և ոչ կտակաւ թողուլ որոց կամիցին 4: Այլ ես ոչ կարծեմ թէ Լիկուրգեայ թողացուցեալ էր նոցա զայն. զի Եպիտադէս պարէտ անժառանգել կամելով զորդի իւր, նա զհրովարտակն զայն ետ հանել՝ զոր Արիստոտէլ ամբաստանէ 5: Եւ այն իսկ յաճախէ զզարմանս, զի Արիստոտէլ ոչ բազում

1 Պղուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 44:

2 Արիստոտ. յղ. հասա. գիրք Ե. գլ. 8. էջ 396:

3 Պղուտ. առակ. լակոն. հտ. 2. էջ 231:

4 Արիստոտ. յղ. հասա. գիրք Բ. գլ. 9. էջ 329:

5 Պղուտ. յԱգիս, հտ. 1. էջ 797:

ինչ ժամանակաւ յետոյ քան զնախատգէս զպատգամսն զայս գրէ ։

Սողոն հրաման ետ եղբօր զքոյր համահայր յայլմէ մօրէ ածել կնութե, այլ զհամամայր յայլմէ հօրէ՝ ոչ ես ։ Արդ Մոնթեսքիէօ քաջ ցուցանէ, զի Սողոն օրէնքն այնուիկ կամեցաւ արգելուլ զխառնումն երկուց ժառանգութեանց յերկոսին ամուսինս [1] . զի եղբօր ընդ քեռ համամօր և ոչ համահօր ամուսնաւորելով, միում մարթէր ժառանգել զաւաքին այր մօր իւրոյ . և միւսումն զերկրորդն ։ Եւ յաւելու Մոնթեսքիէօ, զի օրէնքն այն էին ըստ մտի հասարակապետութեանցն Յունաց, և հակառակն բանիցն Փիլոնի՝ որ համարի Լիկուրգեայ հրամանն տուեալ ուստեր և դստեր, որ համամայրք իցեն և ոչ համահայրք, ամուսնանալ ընդ միմեանս ։ Եւ առ 'ի լուծանել զկնճռեան դժուարութեն՝ պատասխանէ Մոնթեսքիէօ վկայութեամբ Ստրաբոնի [2], զի քոյր 'ի Լակեդեմոն լեալ եղբօր իւրում կնութե, ածէր յօժիտ զկէս միճակին՝ որ անկանէր եղբօր իւրում։ Այլ Ստրաբոն անդ յԵփորեայ վկայադրէ առեալ՝ զկրետական օրինաց խօսի և ոչ զսպարտականացն . և թէպէտ զսոսա մեծաւ մասամբ 'ի Մինովայ օրինացն համարի առեալ բայց նըմին իսկ վկայադրի, այլ չէ ինչ հարկ՝ զի Լիկուրգեայ և զօրէնս զայս, զորմէ մեր բանքս են, առեալ իցէ ։ Յաւելումն և ես, զի և չմարթէր իսկ նմա 'ի կարգս օրինաց իւրոց սահմանել յօժիտ քեռ զկէս ընչից եղբօրն, զի նորա բնաւ իսկ և զօժիտս արգելեալ է ։

Բայց թէպէտ և ընկալեալ իսկ էին 'ի Սպարտա օրէնքն յիշատակեալք 'ի Ստրաբոնէ, այլ ինձ ոչ թուի յայն ակնարկել բանիցն Փիլոնի ։ Զի Փիլոն ասէ՝ թէ 'ի Սպարտա օրէն էր ածել կնութեան զքոյր համամայր և ոչ զհամահայր . իսկ Մոնթեսքիէօ այսպէս մեկնէ զայն . առ 'ի խափանել զի մի ինչ աղքատասցի քեռն անցցէն յազգատոհմ եղբօրն, առնոյր քոյրն յօժիտ զկէս ընչից նորա ։

Արդ մեկնութիւն այս երկու ինչ յառաջադրէ . մի զի հարկ էր սահմանել օժիտ դստեր, այլ այս հակառակ է սպարտական օրինաց . և երկրորդ՝ զի հրաժարէր քոյրն 'ի ժառանգութենէ հօրն, առ 'ի ժառանգել զկէս հայրենի ընչից եղբօր իւրոյ ։ Սակայն եթէ միամօր էր դուստր, հարկ էր նմա ժառանգել զինչս հօրն, և չէր մարթ նմա հրաժարել անտի . իսկ եթէ գոյր նմա եղբայր համահայր, նմա անկ էր ժառանգութիւն . և յամուսնանալ նորա ընդ եղբօր համամօր և ոչ 'ի նմին հօրէ,

[1] Ոգի օրինաց, գիրք Ե. գլ. Ե ։
[2] Ստրաբ. գիրք Ժ. էջ 482։

չէր 'ի միջի վտանգ խառնելոյ երկուց ժառանգութեանց 'ի մի ։

Եթէ օրէնքն 'ի Փիլոնէ ակնարկեալք 'ի բաժանումն ընչից հաստատեալ էին, չմնայր կնճիռն դժուարութեան 'ի մեկնել զայն ըստ մասին. զի զոր օրինակ եթէ մօր յառաջնմէ առնէն էր դուստր միամօր, և յերկրորդէն ուստերք բազումք, մարթէր ապաքէն ամուսնացուցանել նմա զդուստրն ընդ միում 'ի կրտսերագոյն ուստերացն, որում ոչ անկանէր ժառանգութիւն ։ Այլ ըստ այսմ մարթէր սպարտացւոյ զքոյր համամայր յայլմէ հօրէ ածել կնութեան։ Եթէ Փիլոնի յայս ակնարկեցեն բանք, ոչ ինչ դժուարիմաց ինձ թուին. այլ զոր յաւելուն՝ թէ չէր օրէն սպարտացւոյ զքոյր համահայր յայլմէ մօրէ ածել կնութեան, ոչ ևս իմանամ զայն. զի չգտանեմ ինձ ըստ բաժանման ժառանգութեանց խափան այսր հարսանեաց ։

ԻԴ. Վասն հրահանգացն սպարտացւոց անուանելոց Κρυπτεία. (էջ 514 ։)

Զհրահանգացն աստանօր խօսիմ, որ դարանակալութիւն թարգմանի սովորաբար, և որ գրեթէ միշտ այլ ընդ այլոյ առեալ շփոթին ընդ հալածանս եղոտացւոց ։

Ըստ Հերակղիդեայ պոնտացւոյ՝ որ եկաց ուշ ինչ յետոյ քան զաւուրս ուղևորութեան կրտսերոյն Անաքարսեայ յՅելլադա, և ըստ Պլուտարքեայ՝ որ յետ սակաւ ինչ դարուց եկաց, ընդ ժամանակս ժամանակս հրաման լինէր մանկտւոյն ելանել ընդ գաղտ սուսերաւոր, և 'ի տուէ 'ի դարան մտեալ 'ի մացառս՝ գիշերայն 'ի դուրս յարձակել, և սրախողխող առնել զեղոտացիս՝ զորս գտանէրն զճանապարհաւն [1] ։

Դարձեալ և Արիստոտէլ 'ի հատուած ինչ բանիցն՝ պահեալ 'ի գիրս Պլուտարքեայ՝ աւանդէ, զի պարէտք յառնուլ զիշխանութիւնն՝ հալածանս 'ի վերայ եղոտացւոց ազդ առնէին, և օրէն էր ամենեցուն սպանանել զնոսա անպատուհաս [2] ։ Բայց չիք ինչ հաւաստի ցոյց հաստատութեան հրամանիս այսորիկ յօրինացն Լիկուրգեայ. այլ և ամենևին իսկ հաւանելի է՝ զի էին ինչ հանգամանք ուղղիչք հրամանին ։ Զի չմարթէր սպարտացւոց հրապարակել ատուգութեամբ պատերազմ մշտընջենաւոր 'ի վերայ մարդկան՝ որ մշակէին և 'ի վարձու ունէին զերկիր նոցա, որք զինուորէին նոցա ընդ ծով և ընդ ցամաք, և որք 'ի թիւս քաղաքացւոց յաճախ խառնէին ։ Այլ դիտաւորութիւն հրամանի պարետացն էր ազատ կացուցանել 'ի

1 Հերակղիդ. պոնտ. յղ. քաղաքական. Նախնի Յուն. հտ. 6. էջ 2823 ։ Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 56 ։

2 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 57 ։

դատապարտութենէ զերծ ապարտացի, որոյ զոք յեղանակաց ձախողակի պատահեալ էր: Եւ իշխանութիւն ունելով ոք 'ի վերայ կենաց և մահու այլոյ ուրուք, ոչ է հնար թէ վարիցի միշտ իշխանութեամբն:

Տեսցուք արդ նախ՝ թէ զինչ գործ հրահանգացն այնոցիկ էր, և երկրորդ՝ թէ ի՞նչ էին Լիկուրգեայ օրինագրեաց զհալածանս եղոտացւոց:

Ա. Պղատոն կարեւոր համարի 1 'ի բարեկարգութիւն պետութեան, զի մանկունքն յորժամ հասանեն՝ շրջիցին զերկրաւ մի ընդ աշխարհն վառեալ զինու, արհամարհելով զխստութիւն ձմերայնոյ և ամառայնոյ, և խիստ վարելով կեանս ընդ սաստիկ կրթանօք: Եւ յաւելու ասել. Ցինչ անուն և կամիցի ոք կոչել զմանկունս զայն՝ կոչեսցէ զնոսա, դարանակալս կամ ագարակագէտս, այլ նոքա անգէտանան վայրաց աշխարհին, և ուսանին պահ ունել նմա: Քանզի դարանակալութիւն առ սպարտացիս միայն վարէր, յայտ է զի Պղատոն զգործս այնորիկ ասատանօր պատուդապատուամ առնէ. և առաջինկայ վկայութիւնդ, առեալ անգամին 'ի նմին ճառէ 2, աներկբայելի զերան կացուցանէ: Զի մի ամն 'ի սպարտացւոց, զոր Պղատոն 'ի զրուցատրութիւն ածեալ մուծանէ, բարբառի այսպէս. « Են մեզ դարանակալութեանն հրահանգք քաջայդէպք յոյժ յանդեղացուցանել մեզ զհամբերութիւն. հարկ է մեզ բականի զնալ, ննջել անծածկոյթ, անհամբ անձին սպասաւորել անօգնական 'ի տարկաց, և այսր անդր ընդ դաշտս արշաւել գիշերի և զցերեկ »:

Միաբանութիւն երկուց այսոցիկ վկայութեանց ակներեւոյ ամենեցուն, և զգործս դարանակալաց բացայայտակի ցուցանեն, այլ ասա ինձ զի չէք անդ յիշատակ հալածանաց եղոտացւոց: Եւ ոչ դարձեալ 'ի մատեանն Արիստոտելի՝ որ պահին, և ոչ 'ի Թուկիդիդեայն, և ոչ 'ի Քսենոփոնին, ոչ յԻսոկրատայն, և ոչ 'ի գիրս այլոց մատենագրաց՝ որ 'ի նմին դարու կային, թէպէտ և յիշեն նոքա յաճախ զապստամբութիւնս և զդառնութիւնս եղոտացւոց, և բաղում ուրեք սադաւանեն զօրէնս Լիկուրգեայ և զառմորութիւնս սպարտացւոց: Եւ այնչափ առաւել թուի ինձ աներկբայելի պակասականս այս ցոյց, որչափ զի ոմանք 'ի մատենագրացս յայսցանէ աթենացիք են, և կեցեալք 'ի հասարակապետութեան՝ որ յոյժ քաղցր էր 'ի վերայ ստրկաց: Արդ՝ք ինձ 'ի դէպ թուի կարծել, զի մինչև 'ի ժամանակս՝ յորս Պղատոն զճառսն յաղագս օրինաց գրէր՝

1 Պղատ. յղ. օր. գիրք Զ. հա. 2. էջ 763:

2 Նոյն անդ, գիրք Ա. էջ 633:

գաղտնակալութեան հրահանգք ոչ յարմանհեղութիւն եղառացւոց սահմանեալ էին . այլ էին արշաւանք իմն , յորում մանկտին կրթէր 'ի գործ պատերազմի , ըսպասէր զպաշտավայրս , գաղտնակալ լինէր զէն 'ի ձեռին , և յարձակեալ գիշերայն 'ի Թագստենէ՝ հալածէր զեղոտացիս որոց հանդիպէր ։ Թուի ինձ՝ սուղ ինչ յետոյ քան զվախճան Պղատոնի տկարացել օրինացն , և յանդգնեալ այնուհետև մանկտւոյն սպանանել զեղոտացիս՝ որք հզօրագոյնս զդէմ ունէին նմա , և Թերևս վասն այնորիկ իսկ պարէտք ետուն զհրովարտակն՝ զոր վերագոյն յիշատակեցի ։ Եւ օրինադրութեանն որ ըստ օրէ յաճախեալ , այնուհետև հրահանգք գաղտնակալութեան խառնեալ շփոթեցան ընդ հալածանս եղոտացւոց ։

Բ . Անցցուք արդ յերկրորդ խնդիրն , Թէ արդեօք զհալածանս զայս ինքն Լիկուրգոս օրինադրեաց ։

Հերակլիդոս պոնտացի ասէ ևեթ՝ Թէ նորա համարէին օրէնքս այս . այլ սա կարծեօք ևեթ խօսի մատենագիրն , որ կրտսերագոյն իսկ էր ժամանակաւ քան զՊղատոն ։ Աւասիկ այս ևս վկայութիւն ոչ ինչ առաւել մեծարելի է . զի ըստ Պլուտարքեայ [1] , Արիստոտէլ Լիկուրգեայ համարէր զօրինադրութիւն հրահանգացն գաղտնակալութեան . և որպէս Պլուտարքոս ըստ մոլորութեան ժամանակին այլ ընդ այլոյ առնու սա զգաղտնակալութիւն ընդ հալածանաց եղոտացւոց , 'ի դէպ է կարծել՝ զի և Արիստոտէլ այլ ընդ այլոյ առնոյր զայն ։ Այլ այս կասկածանք են միայն ։ Անգիտանելի է մեզ՝ Թէ Արիստոտէլ անդ բացատրէր արդեօք զգործս գաղտնակալութեան . և Պլուտարքեայ ոչ առ այլ ինչ Թուի ածել զվկայութիւն նորա , բայց 'ի հերքել զայն . զի սուղ ինչ 'ի վայր [2] ասէ՝ Թէ սկիզբն գաղտնակալութեան , որպէս ես կարծեմ , յոյժ կրտսերագոյն քան զօրէնս Լիկուրգեայ գտանի լեալ ։ Պլուտարքոս ոչ միշտ ստուգապատում է 'ի հանգամանս իրաց , և մարԹէր ինձ ցուցանել զմոռացութեան նորա փոփոխակս յերկս յայսմիկ յաճախաւորս ։ Այսպիսի են վկայութիւնքն , առ որս պարտ էր ինձ տալ պատասխանի ։

Ի քաջ զանազանել զժամանակն , ամենայն ինչ բարւոք միաբանի . զի Արիստոտէլ զհրահանգս գաղտնակալութեան 'ի Լիկուրգեայ համարի օրինագրեալ , և Պղատոն զգործս այնորիկ բացատրեալ՝ պիտանի յոյժ համարի զայն ։ Իսկ յայլայլել սովորութեանց սպարտացւոց , զեղծաւ մանկտին հրահանգացն՝ յանագորոյն ոճիրս անկարգացեալ , որպէս աւանդեն ։ Այլ

[1] Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 56 ։

[2] Նոյն անդ , էջ 57 ։

եւ չհաստատեալ զայն, և կառակածեալ իսկ առաջի իմն զկրան տուասորագացուցեալ. զի միթէ չգայր Հռոմ եղծանացն խուսափելոյ յերեսաց մանկութեան: Նախ՝ զի սահմանեալ էր արգելուլ ժամանակ զարմանակալութեանն. երկրորդ՝ զի դժուարին էր մանկութեան ափսել զազդ ընդ երկիր խառնեալ եղծացուածս, որք զդուշակոյնս գէտ կային նոցա. և երրորդ՝ ոչ ինչ նուազ դժուարին էր ապարոասցոց իւրաքանչիւր, որք յարգեանց երկրի իւրեանց կէին, չսանձել ազգ եղծասցոց՝ որոց զերկիր իւրեանց տուեալ էր նոցա 'ի վարձու, զվաստակն՝ որ հասեալ կայր 'ի վերայ նոցա: Որովք մարթէր եղծասցոց ամրացեալ կալ 'ի տունս իւրեանց պայազ, և թողուլ մանկութեան տանել զշրջանս իւրեանց:

Ի դէպ համարեցայ տեղեկութեամբս այսուիկ տալ զաղաձանս, վասն որոյ այնպէս բազմապէսցի զպարանակալութիւն 'ի գիրս յայս. զի ինձ աւելորդ թուի՝ չարագոյնքան զոր ենն ցուցանել զմարդիկ, և հաստատել առանց հաւատալեաց՝ անգթութիւնս հանճարեղ օրէնսդրին սահմանեալ:

ԻԵ. Ցաղագս ընտրութեան հարսին առ սպարտացիս: (Էջ 515:)

Աւելորդ 'ի միմեանց աւանդեն մատենագիրք զսովորութիւնս ազգացս Ելլադայ. զի ըստ փոփոխել ժամանակաց՝ փոփոխեցան և սովորութիւնք: Հարսանիք 'ի Սպարտա ըստ ընտրութեան ամուսնոց կամ ծնողաց նոցա կատարէին, որպէս թուի. զի ահա Լիւսանդր նախ քան զմեռանել իւր՝ եւս զերկուսին դստերս իւր երկուց ոմանց սպարտացւոց կնութեան 1. և օրէնք իսկ պատուաւոր առնէին առնել զանպատշաճ հարսանիս 2: Սակայն ըստ Երմիպպեայ 3 ումեմն հին մատենագրի, փակէին 'ի խաւարի զօրիորդս հարսնացուս, և որ 'ի նոցանէ իւրաքանչիւր ումեք 'ի մանկութեան հանդիպէրն՝ զնա առնոյր կնութեան: Այլ 'ի միաբանել զաւանդութիւնս զայսոսիկ, մարթ է կարծել զի Լիկուրգեայ այնպէս օրինագրեալ էր, որպէս և աւանդէ Երմիպպոս, և զի յետոյ փոխեցին սպարտացիք զսովորութիւնն: Զնոյն և Պղատոն 'ի հասարակապետութիւն իւր յեղանակաւ իմն մուծանէ 4:

1 Պլուտ. 'ի Լիւս. հտ. 1. էջ 431:
2 Նոյն անդ:
3 Երմիպպ. առ Աթեն. գիրք ԺԳ. էջ 555:
4 Պղատ. յղ. հաս. գիրք Ե. հտ. 2. էջ 460:

ԻՁ. Թէ յոր փէս ուղղութիւն էր ամուսնանալ 'ի Սպարտա :
(Էջ 515 :)

Զվաղամուսնութեան վասն կանուխ ծանեան Յոյնք: Եսիոդ 1 ոչ յոյժ կրտսեր քան զերեսնամեայն խնդրէ լինել փեսային. իսկ հարսին զհնգետասանամեայն երևի սահմանել տիս., թէպէտ և մթին է բնագիրն: Պղատոն 'ի հասարակապետութեանն իւրում 2 սահմանէ արանց յերեսնամենի և կանանց 'ի քսանամենի ամուսնանալ: Արիստոտէլ 3 ամս իբր երեսուն և եօթն սահմանէ արանց, և կանանց իբր ութուտասն: Իսկ թուի զի 'ի Սպարտա արանց յերեսնամենի, և կանանց 'ի քսանամենի սովորութիւն էր ամուսնանալ, պատապարան կարծեացս այսոցիկ երկուս ունելով պատճառս: Մի՝ զի Պղատոն, որ բազում ինչ յօրինացն Լիկուրգեայ 'ի կիր առնու, զնոյն սահմանէ աստ տիս. և երկրորդ՝ զի չէր օրէն սպարտացւոց, մինչչև լեալ երեսուն ամաց, յառաջ բերել զկարծիս իւրեանց 'ի համախմբութեան ժողովս 4. յորմէ երևի՝ թէ նախ քան զայն չհամարէին 'ի տանուտէրս:

1 Եսիոդ. գործք և տիւք, տող 695:

2 Պղատ. յղ. հաս. գիրք Ե. հտ. 2. էջ 460:

3 Արիստոտ. յղ. հաս. գիրք Է. գլ. 16. հտ. 2. էջ 446:

4 Լիբան. Նախագր. արտասան. 24. էջ 558:

ԷՋ	ՏՈՂ	ՎՐԻՊԱԿ	ՈՒՂԻՂ
20	7	ցնծութիւն	թախծութիւն
78	17	կիւթացիք	սկիւթացիք
148	21	ոստ գաւինոյ և'ի ձեռին	ոստ գաւինոյ 'ի ձեռին
174	7	փակէինն	փակինն
207	23	'ի սարգենեաց հովտին	'ի սարգենեայ հովտէն
220	21	'ի ճարճատիւն	զճարճատիւն
265	10	իւրոց	իւրեանց
289	18	կառուցեալ րայ	կառուցեալ կայ
312	6	սիրագուսացւոց	սիրակուսացւոց
344	14	Գանտես	անտես
404	15	Թոռանց	Թոռանցն
415	8	զպաշտամունս.	զպաշտամունս՝
444	8	քաղաղացիք	քաղաքացիք
488	14	բաժանել	բաժանեալ

[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]